



ΟΜΗΡΟΥ



ΟΔΥΣΣΕΙΑ

ΑΡΜΕΝΙΚΗ ΜΕΤΑΦΡΑΣΙΣ
Υ Π Θ
ΑΜΑΖΑΣΗ ΑΜΠΑΡΤΣΟΥΜΙΑΝ

ՀՈՄԵՐՈՍ



ՈՒԻՍԱԿԱՆ

Հին հունարենից թարգմանեց
ՀԱՄԱԶԱՍԳ ՀԱՄԱՐԶՈՒՄՅԱՆԸ

2660



Քննարկի հետ համեմատեց և խմբագրեց ԱՐԱՄ ԹՈՓՉՅԱՆԸ

«ՈՒՍԱՆՈՂԻ ԳՐԱԳԱՐԱՆ» ՄԱՏԵՆԱՇԱՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՄԱՐՉՈՒՄՅԱՆ Ս. Ա. (նախագահ), ԱՂԱՅԱՆ Է. Բ., ԱՆԱՆՅԱՆ Գ. Գ., ԹԱՄՐԱԶՅԱՆ Հր. Ս., ՄԿՐՏՉՅԱՆ Լ. Մ., ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Բ. Հ.

Ե Ր Գ Վ Ա Ն Ա Ջ Ի Ն

ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ, ԱԹԵՆԱՍԸ
ՔԱԶԱԼԵՐՈՒՄ Լ ՏԵԼԵՄԱՔՈՍԻՆ

Հոմերոս

Հ781 Ողիասկան /Հոմերոս, Հին. հուն. թարգմ. Հ. Համբարձումյանը, (քննարկի հետ համեմատեց և խմբ. Ա. Թովչյանը).— Եր.: Երևանի համալս. հրատ., 1988.— 416 էջ.— (Ուսանողի գրան /Երևանի պետ. համալս., խմբ. հանձնաժողով՝ Համբարձումյան Ս. Ա. (նախագահ) և ուրիշ.)

4704020000
Հ 704(02)—88 32—87

ԳՄԴ 84(0)3

ГОМЕР

ОДИССЕЯ

(На армянском языке)
Издательство Ереванского университета
Ереван—1988

Պատմի՛ր, մուսա, այն բազմափորձ քաջի մասին, որ սրբազան
Իլիոն քաղաքը կործանեց և թախտեց ապա երկար
Ծառ քաղաքներ, տեսա՛վ մարդկանց վարքն ու բարքը, փորձեց նրանց:
Նա ծովերում բյուրաբազում աղետ ու վիշտ հոգով կրեց,
Ծգնեց փրկել կյանքն իր, հոգալ վերադարձը ընկերների,
Բայց չփրկեց ընկերներին, թեպետ փափագն այդ միշտ ուներ.
Քանզի նրանք իրենք իրենց մատնեցին ժանտ կործանումի,
Երբ լափեցին անմտաբար եզներն Արև-Հիպերիոնի.
Ուստի նրանց վերադարձը անբիժ Հելիոսը խափանեց:
10 Օ՛ն, դիցունի՛դ, դատրիկ Ջևսի, այդ ամենը պատմիր և ինձ:
Փրկված ծովից և մարտերից՝ իրենց տան մեջ էին արդեն
Բոլոր քաջերն: Միայն նրան, որ կարոտ էր վերադարձի
Եվ իր կնոջ, դեռ պահում էր քարանձավում իր խորափոր
Գերամեծար այն Կալիպսոն՝ վեհ դիցունի՛ն աստվածագոր,
Ու փափագում էր տենչագին, որ լինի նա ամուսինն իր:
Սակայն հասավ այն տարին, երբ աստվածների հոժար կամքով
Պիտ կատարվեք վերադարձն իր դեպ Իթակե, դեպի իր տուն,
Ուր սիրելի մարդկանց մեջ էլ զերծ չմնաց նա տանջանքից:
Այնժամ բոլոր աստվածները դարձան նրան խիստ կարեկից,
20 Բացի միայն Պոսիդոնից. Ողիսեսի դեմ դիցակերպ
Սա, դիակալ, մեծ քեն ուներ, մինչև նա էտ կղաղմար տուն.
Բայց Պոսիդոնը հեռացել էր դեպ հեռավոր եթովպացիք,
Որ ապրում են երկրի ծայրին, միշտ բաժանված երկու մասի.
Մի մասը՝ մոտ արևմուտքին, մյուս մասն այնտեղ, ուր արեգակն է
միշտ ծագում:

Գնացել էր, որ ընդունի հարյուրեզնյա ու գառների շքեղ զոհեր:

Եվ հրճվում էր անդ նա բազմած խրախճանքի: Մինչ այլ անմահ
աստվածները

Եկել խմբվել էին արդեն ասարանքում Օլիմպասեր Ջևս աստծու:
Այնժամ նրանց իր խոսքն ուղղեց աստվածների և մարդկանց հայրն,
Իր հոգու մեջ վառ հիշելով Էգիսթոսին փառապաակ,

30 Որին սպանեց Ագամեմնոն քաջի որդի Օրեստեսը գերահռչակ:

Նրա մասին մտածելով՝ Ջևսը խոսեց և այս ասաց աստվածներին.

«Ավա՛ղ, մարդիկ մահկանացու աստվածներին ամբաստանում են

անտեղի

Եվ պնդում են, թե մեզնից է ծագում չարիք: Մինչդեռ ընդդեմ

ճակատագրի

Իրենք են միշտ անմտաբար իրենց մատնում աղետների,

Ինչպես արեց Էգիսթոսը: Բախտին ընդդեմ ամունացավ Ատրիդեսի

Օրիանական կողակցի հետ և նրան էլ տուն դառնալիս նա սպանեց,

Թեպետ գիտեր նա անխուսափ իր կորուստը. մինչ մեր կողմից դեպ

նա այնժամ

Ողարկված էր Արգոսասպանը սրատես՝ բարյացակամ բաներն՝

Հերմես,

40 Որ չսպանի Ատրիդեսին և կնոջ հետ չամուսնանա,

Թե ոչ՝ հանուն Ատրիդեսի՝ Օրեստեսից դաժան պատիժ նա կստանա,

Երբ սա մի օր հասակ առնի և իր երկրի կարոտն զգա ու տուն դառնա:

Աղապես նրան Հերմեսն ասաց: Բայց Էգիսթի սիրուն այդ խոսքով

չհամոզվեց

Եվ փոխարենն, ահավասիկ, հատուցեց նա ժանտ վրեժով»:

Պատասխանեց իսկույն նրան Աթենասը՝ պայծառաչյա

աստվածուհին.

«Ով դու մեր հայր Կրոնոսյան, իշխանավոր դու գերագույն,

Արժանի էր միանգամայն նա այդ պատժին ու ժանտ մահվան.

Թող որ այդպես միշտ կործանվի չարագործը, ով այդպիսի գործ

կատարի:

Սիրոս սակայն խորտակվում է Ռիսևսի համար դժբախտ ու իմաստուն,

50 Որ տանջվում է վաղուց ի վեր, հեռու սիրած իր մարդկանցից,

Ծովապարսիակ կղզու վրա, որը կենտրոնն է ծովերի,

Կղզու վրա անտառախիտ, որ սպրում է ասարանքում իր դիցունհին՝

Դուստրը կախարդ և դավադիր Ատըլասի, որը գիտի

Խորունկ խորքերը ծովերի և պահում է իր ուսերին

Երկինքն, երկիրը բաժանող սյուներն հուժկու և վիթխարի.

Ահավասիկ, դուստրը դրա կաշկանդել է այն վշտաբեկ տարաբախտին

Եվ իր խոսքով սիրատենչիկ ու փաղաքուշ ճգնում է նա

Նրան բերել գայթակղության, որ հայրենի իր Իթակեն նա մոռանա:

Մինչ Ռիսևսն, որ կարոտ է տեսնել գոնե քույա-քույա վեր բարձրացող

60 Ծուխն հարազատ իր ափերի, մահ է ուզում միայն սրտանց:

Մի՞թե քո մեջ, Օլիմպացի, գեթ չի հուզվում սիրող սիրող, կամ Ռիսևսն

Քեզ չի՞ տվել միթե հաճույք պերճ զոհերով նավերի մոտ արգիական,

Անդ, Տրոյայում լայնատարած: Կամ ինչո՞ւ ես դու գայթացած,

Ջևս երկնատեր»:

Նրան իսկույն պատասխանեց և խոսք ասաց աստվածահայր Ջևսն

ամպացիր.

«Ի՞նչ խոսք էր այդ, ո՛վ իմ զավակ, որ դուրս թռավ քո բերանից,

Եվ կամ ինչպե՞ս կարող եմ ես մոռացման տալ Ռիսևսին

աստվածակերպ,

Որն իր խելքով գերագույնն է մարդկության մեջ և որն անբավ

Ջոհ է բերել անձայրածիր երկնքի տեր աստվածներին:

Բայց Պոսիդոնն երկրասասան գայրագնաբար հալածում է նրան

աստիկ

70 Հանուն հզոր մեծ Կիկլոսի, որին նա ժանտ կուրացրել է մի ժամանակ,

Ի սեր հարգո, աստվածակերպ, Պոլիփեմի, որը բոլոր կիկլոպներից

Կորովագույնն է, հիրավի: Նրան ծնեց հավերժահարսը՝ Թոոսան,

Խոր անձավում, Պոսիդոնի հետ տոփանքով իր միացած,

Դուստրը հավերժ պեկոծվող ծովերի տեր Փոբկիսի:

Ահավասիկ՝ Ռիսևսին Պոսիդոնը երկրատառան, թեպետ նրան

Անկարող է նա սպանել, վանում է միշտ իր հայրենի երկրից հեռու:

Ուստի եկե՛ք մենք բոլորս վերադարձը նրա քննեմք,

Ինչպե՞ս պիտի նա տուն դառնա: Մինչ Պոսիդոնը իր գայրույթը

կը թողնի.

Քանզի չե՞ որ անկարող է նա միայնակ, դեմ-հանդիման,

80 Դուրս գալ, մարտել բոլոր անմահ աստվածների ցանկության դեմ»:

Նրան իսկույն պատասխանեց Աթենասը՝ աստվածուհին պայծառաչյա.

«Կրոնոսյան, ո՛վ դու մեր հայր, իշխանավորդ գերագույն.

Եթե իրոք հաճելի է գերերջանիկ աստվածներին,

Որ Ռիսևսն ամենագետ վերադառնա իր սիրելի հայրենի տուն,

Ապա իսկույն պիտ առաքենք մենք բաներինն արագալվազ՝

Բարյացակամ ժիր Հերմեսին, դեպի կղզին այն՝ Օգիգիե, որ նա այնտեղ

Գեղազանգուր աստվածուհուն հայտարարի մեր վճիռը ու կամքն անշեղ՝

Բազմահամբեր Ռիսևսի դարձի մասին, թե պետք է նա վերադառնա:

Իսկ ես էլ արդ կը պանամ դեպ Իթակե, որպեսզի անդ նրա որդուն

90 Ոգեշնչեմ խիզախությամբ և մեծապես քաջակերեմ,

Որ ժողովի իսկույն կանչի նա արգիյանց երկայնամազ

Եվ դուրս վանի ասարանքից իր հայրական խոսնայրներին,

որ անխափ

Կոտորում են մանր անասուն ու շատ եզներ դանդաղաքայլ ու

կորեղջյուր:

Ապա նրան դեպի Սպարտա եւ կառաքեմ, դեպի Պիլոսն ալազածիր,
Որ նա այնտեղ սիրելի հոր դարձի մասին տեղեկանա, բան իմանա
Եվ որպէսզի մարդկանց առաջ վսեմական փառք վաստակի»:

* * *

Ասաց այդպէս, ապա իսկույն իր ոտքերին հագաւ անեղծ,
գեղգեղափայլ,

Ոսկյա մուշկերն, որոնք նրան թոցնում էին հողմանման արագութեամբ
Լայն ծովերի և անասնման երկրի վրա: Վերցրեց հետո իր հաստաբեւտ
100 Նիզակն հզոր, ծանրածանր ու ամրապինդ, որը ունէր

Պղնձե սայր, որով գեղերը մեծագոր հերոսների
Զախջախում էր նա, դատրիկը անպարտելի մեծ աստըծու:

Այդպէս զինված՝ նա արնթաց թուով գլխից Օլիմպական բարձունքների
Եվ շուտ հասավ անդ, Իթակե, այնտեղ, ընթեր Ռիսուսյան

Մեծ դարբասի, նա կանգ առավ՝ ձեռքին բռնած իր նիզակը պղնձաձուլ,
Նմանվելով եկվոր հյուրին՝ տափուսացի իշխանագոր քաջ Մենտեսին:

Անդ նա տեսավ խոսնայրներին անբարտալան, որոնք այնժամ
դռների մտ,

Իրենց մորթած գեր եզների կաշիների վրա նստած՝
Վեզ խաղաղով՝ փնտրում էին սիրտը շոյող զվարճալի մի բերկրություն:

110 Ծորջը անդով շարժվում էին սպասարկու ծառայողներ ու բանբերներ.
Ոմանք հապճեպ խառնում էին սարկարանում ջուրն ու գինին

անապական,
Ոմանք էլ անդ նուրբ, ծակուտկեն սպունգներով մաքրում էին սեղանները,
Մաքրում արագ և մոտ քաշում. իսկ ոմանք էլ բրդում էին միսը առատ:

Ամենից շուտ նրան տեսավ Տելեմաքոսն աստվածակերպ,
Որը, բազմած խոսնայրների միջև այնժամ, սրտակոտոր ու տխրամած

Միտք էր անում ազնվամեծար իր հոր մասին, թե ե՞րբ արդյոք
նա պիտի գա

Եվ տեր դառնա փառք ու պատվին, իշխանատեր իր սեփական
այս օջախին:

Այդ մտքի մեջ, սեղեխների շարքում նստած, նա նկատեց Աթենասին,
Ծուռ վեր կացավ, արագ քայլեց դեպի դուռը և իր հոգում խորտնջաց,

120 Որ եկվոր հյուրը դուան մոտ գոր սպասեց այդքան երկար:
Մոտենալով՝ նա աչ ձեռքը նրա սեղմեց, վերցրեց տեղը պղնձակոտ

Եվ, դառնալով իսկույն նրան, խոսքերն ասաց այս թևավոր.
«Ողջո՛ւյն, եկվոր, մեր հարկի տակ մենք կընդունենք քեզ սիրալիր,

Իսկ երբ ուտեստը վայելես, նոր կը պատմես, ինչ պետք է քեզ»:
Ասաց այդպէս, առաջ անցավ, և հետևեց նրան Պալլաս Աթենասը:

Արդ, երբ նրանք այդպէս մտան դահլիճի մեջ այն բարձրաշեն,
անօրեն,

Տեղը դրեց նա մի ողորկ դարակի մեջ, մեծ պուճի մոտ,
Որտեղ կային բազմահամբեր Ռիսուսի նաև բազում տեղ-նիզակներ:

130 Ապա խնդրեց նրան նստել բազկաթոռին գեղեցկակերտ,
Դրեց նաև ոտքերի տակ, իբր հեմարան, մի աթոռակ:

Իսկ իր համար հետո բերեց գեղաքանդակ մի բազկաթոռ
Եվ այն դրեց խոսնայրներից մի փոքր հեռու, որ աղմուկից

Հյուրն անհանգիստ անդ չը լինի անբարտալան այդ մարդկանց մեջ,
Որ որպէսզի հենար լինի հարցմունք անել իր հոր մասին հազաձական:

Աղախինը, գեղեցկափայլ ու ոսկեղեն մի գավի մեջ
Լվացվելու ջուր բերելով՝ այն արծաթյա կոնքը լցրեց,

Եվ այնուհետ քաշեց, դրեց նրանց առջև նա տաշածո մի կոկ սեղան:
Մասնապէս կինն հարգելի՝ պատրաստի, ճոխ պաշարներից

140 Սիրահոծար բերեց, դրեց հաց, կերակուր բազմապիսի.
Իսկ մատովակն հապճեպ շարեց նրանց առաջ և՛ ափսեներ, և՛ սկոտեղ՝

Լի մսեղեն ուտեստներով ու ոսկեղեն պերճ բաժակներ:
Բանբերն հաճախ մոտենում էր, որ հոգատար գինին լցնի նրանց համար:

Ու ներս մտան այդ ժամանակ խոսնայրները անբարտալան,
որոնք իսկույն

Ծարք ու կարգով նստոտեցին աթոռներին, բազմոցներին.
Բանբերները ջուր բերեցին, որով նրանք պիտի ձեռքեր լվանային,

Զամբյուղներով ստատորեն հաց բերեցին ստրկուհիք,
Իսկ պատանիք սպասարկող բաժակները լցրին գինով բերնեքերան,

Ապա նրանք ձեռք մեկնեցին այդպէս պատրաստ ուտեստներիս:
150 Եվ երբ արդեն կերուխումով նրանց փափագը հագեցավ,
Խոսնայրների սրտում այնժամ ծագեց մի նոր վտ ցանկություն,

Երգ ու պարի մի ցանկություն, որ հաճույքն է, զարդարանքը
խնջույքների:

Բանբերն իսկույն բերեց կիթառը գեղաշուք և այն հանձնեց Փեմիոսին,
Որն ակամա պիտի երգեր կամքով նպերտ խոսնայրների.

Եվ նա զարկեց նուրբ լարերին, հնչեց երգը իր քաղցրաձայն:
Տելեմաքը, իր գլուխը պայծասաչա Աթենասի կողմը թեքած,

Որ այդ ոչ ոք չնկատի, նրան դիմեց այս խոսքն ասաց.
«2ը նեղանա՛ս, հյուր սիրելի, եթե եւ քեզ մի խոսք ասես.

Միակ հոգը սրանց համար երգն է, իրավ, և կիթառն այդ:
160 Հե՛շտ գործ է դա, քանզի միայն այժմ ուրիշի գույքն են վատնում

անօրեն,
Գույքն այն քաջի, որի ներմակ ոսկորները թերևս ծյուրում են արդեն

Երկրի վրա, անձրևի տակ կամ ծովի մեջ ալիքներից տարուբերվում:
Մինչդեռ սրանք, եթե աչքով գեթ տեսնեին դարձը նրա դեպ Իթակե,

Ավելի շուտ կը ցանկային ճարպիկ ու ժիր ոտք ունենալ
փախուստ տալու,

Քան թե լինել ունեոր և հարուստ ոսկով ու հագուստով:
Սակայն հիմա էլ նա չկա, կործանված է բախտի կամքով:
Եվ սիրտանք մեզ չի տրված, թեկուզ հայտնվի երկրաբնակ որևէ մարդ
Ու մեզ ապի, թե նա կը գա: Ավա՛ղ, կորսվ օրը նրա վերադարձի:
Բայց դու ասա և ճշմարիտն ինձ դու պատմիր. ո՞վ էս արդյոք,

170 Ո՞ր ցեղից ես կամ ո՞րտեղ եմ ծնողներդ, քաղաքը քո:
Ի՞նչ նավ էր այն, որի վրա այստեղ եկար և կամ ինչպե՞ս քեզ
նավաստիք

Ապի հանեցին դեպ Իթակե, ինչպե՞ս էին կոչվում նրանք:
Քանզի բնավ ես չեմ կարծում, որ հետիոտն եկած լինես դու այստեղ:
Այդ ամենը ճիշտ ինձ ասա, որ ճշմարիտն իմանամ.
Սա առաջի՛ն գալուստն է քո, թե հյորն ես դու իմ հայրական.
Չէ՞ որ մեր տանն միշտ եղել են և բազմաթիվ ուրիշ մարդիկ,
Քանզի հայրս արտանց կապված էր շատ ու շատ այլ մարդկանց հետ»:
Եվ Աթենասն՝ աստվածուհին պայծառաչյա, պատասխանեց
և խոսքն ասաց.

«Ահավասիկ, ես կը պատմեմ ճշմարտաբար քեզ ամեն բան.
180 Ամենագետ Անքիալոսի զավակն եմ ես, և Մենտես է անունը իմ:
Իշխողն եմ ես տափուսացի թիավարող նավորդների:
Ես այժմ ահա նավիս վրա ընկերներես հետ միասին այստեղ եկա՝
Մութ ծովերում պանալով դեպ երկիրներն օտարազգի ու հեռավոր:
Փայլուն երկաթ եմ տանում ես և գնում եմ դեպ Տեմեսե,
Որ անդ գնեմ պղինձ, արույր: Նախ կանգնած է շատ հեռու
այս քաղաքից,

Դաշտի կողքին, նավակայան Հոթթրոնում անտառապատ Նեյոնի մոտ:
Մենք վաղեմի ու պապական ծանոթներ ենք և բարեկամ.
Եթե կուզես, դու այդ մասին հարցրու ազնիվ, ծեր Լաերտին,
Որն, ասում են, գյուղում է այժմ ու չի գալիս քաղաքն այլևս

190 Եվ կրում է այնտեղ նա իր տատապանքը ծեր օրերի:
Անդ նա ապրում է գտնամյալ իր աղախնի հետ միասին,
Որը նրան կեր և խմիչք է պատրաստում, երբ խոնջանքից մարմինը իր
Թուլանում է խաղողի ճոխ, բազմապտուղ այգիներում աշխատելիս:
Այժմ ես այստեղ եկա, քանզի ինձ ասացին, որ քո հայրը տանն է արդեն.
Թերևս նրա վերադարձը խափանում են աստվածները:
Ողիսւը երկրի վրա չի մահացել. կենդանի է նա տակավին.
Բայց երևի լայն ծովերում դեռ մնում է նա արգելված,
Ծովապարտիակ կղզու վրա, կաշկանդել են թերևս այնտեղ նրան մարդիկ
Խիստ վայրենի ու անողորմ և պահում են անդ իր կամքին հակառակ:

200 Բայց կարող եմ քեզ գուշակել, ինչպես սրտիս ներշնչում են
անմահները,

Այն, որ, կարծեմ, կը կատարվի, թեպետ իրոք գուշակ չեմ ես,
Եվ, ճիշտն ասած, հավանա գործերին ես անտեղյակ եմ.
Այլևս երկար նա չի մնա իր սիրելի հայրենիքից այսպես հեռու,
Նույնիսկ էթե նրան երկաթ շղթաներով պինդ կաշկանդեն.
Բազմահնար է, կզունի նա միշոցը վերադարձի.
Սակայն հիմա դու ինձ ասա, պատմիր միայն ճշմարտացի.
Մի՞թե դու ես, ինչպես որ կաս, ճիշտ զավակը Ողիսուսի,
Եվ չափազանց նման ես դու նրան գլխով և նազվածքովդ գեղագույն:
Չէ՞ որ սուսջ հաճախակի հանդիպել ենք մենք իրարու,

210 Նախքան մեկնեց նա դեպ Տրոյա, որ լայնանիստ նավերի մեջ
Արշավեցին նաև հզոր ու լավագույն բազում քաջերը արգիլանց:
Այն օրվանից Ողիսուսին չեմ տեսել ես, ոչ էլ նա ինձ»:
Նրան իսկույն պատասխանեց և խոսքն ասաց Տելեմաքոսը խորիմաց.
«Ես քեզ կասեմ, հյորդ բարի, գործն իսկությունք ու բացահայտ
Մորքս խոսքով՝ ճիշտ որ զավակն եմ ես նրա, բայց չը գիտեմ
ես ինքքս այդ,

Քանզի ոչ ոք լավ չը գիտի ծագումն՝ հորից իր իսկական:
Ա՛խ, երանի ես լինեի զավակն ուրիշ, երջանկավետ, մի այլ մարդու,
Որը հասներ խոր ծերություն՝ իր սեփական գույքի վրա դեռ իշխելիս:
Պետք է ասեմ, երբ հարցնում ես. խոսք կա արդեն, որ այն մարդու
որդին եմ ես,

220 Որն, հիրավի, մահկանացու մարդկանց շարքում դժբախտագույնն էր
ամենքից»:
Իսկույն նրան պատասխանեց Աթենասը՝ աստվածուհին պայծառաչյա.
«Աստվածները շնորհել են քեզ ոչ պակաս փառավոր ցեղ և լավ սերունդ,
Եվ քեզ որպես հենց այդպիսին ծնել է պերճ Պենելոպեն:
Սակայն հիմա դու այս ասա ու պատմիր ինձ ճշմարտացի.
Ի՞նչ խնջույք է սա իսկապես կամ ի՞նչ ժխոր, խառնածողով է այժմ
այստե՛ղ.

Կարո՞տ ես դու միթե սրան, հարսանի՞ք է, թե խրախճանք.
Երևում է, վճարովի խնջույք չէ սա: Սրանք, կարծեմ, ուրիշի տանն
Ամբարտավան, անիրավ գործ են կատարում: Եթե ներս գա վսեմ
մի մարդ,

Պիտ վրդովվի, երբ նկատի այսօրինակ խայտառակ բան»:

230 Եվ Տելեմաքը բանիմաց պատասխանեց ու խոսք ասաց.
«Հյուրամեծար իմ եկվորդ, երբ դու այդպես հարց ես տալիս,
որ իմանաս,
Ահա ես քեզ ճիշտ կը պատմեմ. վիճակված էր տանն այս լինել
մի ժամանակ,

Երբ քաջն էր դեռ իր հարկի տակ, հարուստ ու լի և փառունակ:
Սակայն այլ կերպ սահմանեցին աղետն ու վիշտը հորինող
աստվածները.

Նրանք նրա կորուստն այնպես ստեղծեցին, ինչպես ոչ ոք մարդկության
մեջ

Դեռ չի տեսել: Ես այսքա՛ն վիշտ չէի զգա, եթե միայն նա մահանար,
Կամ սպանվեր Տրոյայի մոտ իր ռազմական ընկերների հետ միասին,
Կամ վախճանվեր կովից հետո՝ միշտ սիրելի մարդկանց կողքին
իր հարկի տակ.

240 Նրան, անշուշտ, արեացիք կը կանգնեին արժանավոր դամբան-բլուր,
Եվ կը թողնե՞ր նա իր որդուն լավ սպազա, մեծագույն փառք:
Մինչդեռ հիմա նրան, ալա՛դ, անփառունակ ժանտ հարպիաները
փախցըրին,

Եվ նա կորավ այսպես անհայտ ու անհնաց՝ թողնելով ինձ ջայլանք
ու լաց:

Բայց ոչ միայն նրա համար է, որ այսպես հեծեծում եմ ես դառնադառն.
Այժմ իմ գլխին աստվածները թափում են այլ կրակ ու ցավ, հոգսեր
ու վիշտ.

Ահա սրանք, որոնք բոլորն իշխաններ են մեծամեծար
Դուլիքիոնում և Սամեում, կղզիներում անտառախիտ Զակինթոսի,
Սրանք բոլորն, որ իշխում են Իթակեում այս ժայռապատ,
Բոլորն ահա փեսացուն են դարձել իմ մոր և քանդում են տունն այս
հիմա:

250 Մայրս սակայն ոչ ժխտում է ամուսնությունն այդ ատելի,
Ոչ էլ մի կերպ վերջ է տալիս այս վիճակին: Մինչ, լափելով գույքն իմ,
սրանք
Ավերում են տունն իմ այսպես, թերևս և ինձ շուտով պիտի մատնեն
մահվան»:

Այնժամ Պալլաս Աթենասը ցասկոտ սրտով պատասխանեց
և խոսք ասաց.

«Միշտ է, ալա՛դ, և չափազանց զգալի է, որ բացակա է Ռիսևան,
Որն անամոթ խոսնայրներին իր ձեռքն հզոր ցույց պիտի տար:
Ա՛յս, եթե նա ետ գար հիմա և հաղթ կանգներ դոների մեջ իր օջախի.
Գլխին շքեղ սաղավարտն իր, ձեռքին վահան և գույք նիզակ,
Այնպես, ինչպես տեսա մի օր ես առաջին անգամ նրան՝
Մեր հարկի տակ, լի բերկրանքով, երբ թնդում էր խնջույքը վառ.
Այն ժամանակ էփիրեում Մերմերիդես Իլոսին էր նա այցելել.

260 Ռիսևաը գնացել էր իր ճեպրնոցս նալի վրա,
Որպեսզի անդ նա ձեռք բերի մահաբեր թո՛ւյն և այն քսի՝
Պղնձակոտ սլաքների: Բայց մերժել էր նրան Իլոսն,
Վախենալով հավերժակյաց աստվածների ոխից անել:

Մինչդեռ հայրս թույնը տվեց, քանզի նրան նա միշտ սիրում էր
չափազանց,

Եթե հանկարծ այդ վիճակում Ռիսևաը խոսնայրների դեմ հանդես գար,
Մահը պետք է նրանց հասներ, և թանկ նստեր իրենց կիրքը
փեսայության:

Սակայն գործն այդ, հարկավ, միայն աստվածներից է միշտ կախված,
Պե՛տք է արդյոք, որ ետ գա նա և իր տան մեջ խոսնայրներից
վրեժն առնի,

270 Թե՛ քնավ ոչ: Մինչդեռ ես քեզ խորհուրդ կը տամ. լավ մտածիր,
Ինչպե՛ս արդյոք սեղեխներին պետք է տնից դուրս վորճել:
Իսկ դու հիմա ինձ լավ լսիր, խոսքիս եղիր դու ուշադիր.
Վաղը ևեթ ժողով կանչիր դու գերազնիվ արեացոց
Եվ գործն ամբողջ պատմիր նրանց. թող քեզ լինեն աստվածները
այնժամ վկա:

Դու պահանջիր, որ խոսնայրները ցրիվ գան իրենց տներն:
Իսկ քո մայրը, եթե, իրավ, կամենում է նա սրտալի
Ամուսնություն, թող մեծագոր իր հոր տունը վերադառնա:
Նրա համար նա կը սարքի պերճ հարսանիք. կը տա հարուստ
այնքան բաժինք,

Որքան պետք է և պատշաճ է տալ սիրելի իր զավակին:
Բայց քեզ անձամբ ես բարերար խորհուրդ կը տամ, միայն լսիր.

280 Պատրաստիր նավն ամենալավ և քսան հոգի քաջ թիավար,
Ծանապարհվիր, գնա շուտով հարցուփորձի՝ անհայտ կորած
քո հոր մասին,

Գուցե մի բան քեզ մարդկանցից մահկանացու մեկը ասի,
Գուցե լսես մարդկանց համար ամենից շատ փառք ստեղծող
Զևսի լուրը:

Նախ և առաջ գնա Պիլոս, հարցում արա դու Նեստորին աստվածափառ,
Հետո կանցնես դեպի Սպարտա, դեպի հերոս, խարտիշագեղ,
Մենելաոսն,

Որն արեյանց պղնձագեղն մեծ քաջերից ամենից ուշ է տուն դարձել:
Եթե լսես, որ հայրը քո կենդանի է ու ետ կը գա տունն հայրենի,
Մեկ տարի էլ պիտ սպասես, չը նայած որ քեզ կտանջեն:
Սակայն եթե լսես մի կերպ, որ մեռած է հայրդ արդեն և էլ չը կա,

290 Վերադարձիր դու հայրենիք, երկիրը քո սիրատենչիկ,
Ծիճիր նրա հիշատակին վայելչագեղ դամբան-բլուր
Եվ կատարիր նրան պատշաճ մի մեծարանք, ապա մորդ դու
մարդու տուր:

Ահավասիկ՝ երբ ամենն այդ դու կատարես, գրոխ բերես,
Այն ժամանակ ինքդ քո մեջ և քո սրտում դու միտք արա, խորհիր
ու տես,

Տանդ ինչպե՛ս պիտ կոտորես խոսնայրներին. խարդախորեն,
Թե՛ ընդհարման մեջ, բացահայտ. քանզի հիմա այն հասակում չես
դու արդեն,

Որ վայելի մանկան նման քեզ զբաղվել դատարկ գործով:

Գեո չը գիտես, թե ո՞րպիսի փառքի հասավ մարդկության մեջ
Աստվածակերպ քաջն Օրեստեսը, զի սպանեց իր հայրասպան

300 Ու նեղագաղալ Էզիաթոսին, որ սպանել էր գերագնիվ հորը նրա:
Մինչ դու, ինչպես տե՛սնում եմ քեզ, որ և՛ մեծ ես, և՛ գեղեցիկ,
Պետք է այնքան կարճնել լինես, որ գովք անեն քեզ սերունդները

միշտ գալիք:

Ես էլ արդեն դեպի նավն իմ արագընթաց, դեպ ընկերներն իմ ուղեկից
Պիտ հեռանամ. նրանք այնտեղ սպասում են ինձ անհամբեր:
Իսկ քո մասին ինքդ հոգա և ասածն իմ մի մոռանա»:

Պատասխանեց նրան իսկույն և խոսք ասաց Տելեմաքոսը բանիմաց.
«Հյուր սիրելի, այդ ամենը դու ասացիր, որպես ազնիվ ինձ բարեկամ,
Ինչպես հայրը իր զավակին, իսկ ես երբե՛ք չեմ մոռանա խորհուրդը քո:
Եվ թեպես դու շտապում ես ճանապարհվել, բայց սպասիր փոքր-ինչ,
այստեղ

310 Գեթ լողացիր, և քաղցրությամբ սիրած սիրտդ թող հագենա,
Որ ետ գնաս դու դեպի նավն, ստանալով պերճ ընծաներն

իմ թանկարժեք,

Որով սիրող պիտի խնդա և որն ինձնից միշտ կը մնա քեզ հիշատակ.
Այդպիսիներն հյուրընկալն է հյուրին տալիս, իբրև նվեր արժանագով»:

Պատասխանեց իսկույն նրան Աթենասը, աստվածուհին պայծառաչյա.

«Ոչ, դու այլևս ինձ մի պահիր. շտապում եմ ճամփա գնալ,
Իսկ ընծաներն, որ ուզում ես սիրով, արտանց, պարգևել ինձ,
Դու կը տա՛ս ինձ, որ տուն տանեմ, այն ժամանակ, երբ ետ դառնամ.

Բայց լավն ընտրիր, որ քեզ տալիք իմ ընծային արժան լինի»:

Այդպես ասաց ու հեռացավ վեհ Աթենասն, աստվածուհին

պայծառաչյա

320 Երդկից թույլ ինչպես արժիվ: Նա ներշնչեց նրա սրտին
Խիզախություն և քաջության բարձր ոգի: Առաջվանից ավելի վառ
Հիշեց նա իր սիրելի հորն, ապա սրտանց խորունկ խորհեց
Եվ զարմացավ նա իր հոգով ու հասկացավ, որ աստված էր

եկվորը այդ:

Ապա քաջն այդ աստվածագոր իսկույն քայեց, գնաց դեպի

խոսնայրները.

Նրանց դիմաց վսեմ երգիչն երգ էր երգում: Ծուրջը նստած և լույսյակ
Լսում էին նրանք նրան: Երգում էր նա բազմատխտոր դարձն արեյանց,
Վերադարձը սուրբ Իլիոնից, որ սահմանել էր վեհ Պալլասն Աթենասը:
Վերնատան մեջ՝ ոգևորիչ, աստվածունակ երգն այդ հանկարծ

Լսեց դուստրը Եկարիոսի՝ Պենելոպեն իմաստախոհ
330 Եվ ցած վազեց իր սենյակից նա սանդուղքով բարձրաստիճան,
Բայց ոչ մե՛նակ, այլ նրա հետ եկան նաև երկու նածիշտ:

Երբ նա՝ կանանց գեղեցկափայլ վեհ դիցունհին, եկավ, հասավ
խոսնայրներին՝

Քողարկելով այտերը իր փայլենագարդ մի ծածկոցով,
Կանգնեց իսկույն դահլիճի մեջ, ամրակառույց հաստ սյունի մոտ,
Իսկ նածիշտները մեծարող կանգնեցին անդ երկու կողմից:
Եվ երգչին աստվածաձայն ասաց այնժամ Պենելոպեն արտասվազոչ.
«Փեմիոս, չե՛ որ դու շատ գիտես մարդկանց սրտին բերկրանք բերող
ուրիշ երգեր

Աստվածների և քաջերի գործոց մասին, որ երգիչներն երգում են միշտ:
Գեթ նրանցից մեկը երգիր, որ սրանք էլ զհնին խմեն և լուռ լսեն,

340 Եվ ընդհատիր դառնակակիժ ու տխրագին երգն այդ շուտով,
Քանզի վշտով լցնում է նա սիրած սիրտս իմ կրծքի տակ:
Չե՛ որ ինձ է ամենից շատ վերաբերում վիշտն անմոռաց.
Ես հեծում եմ հույժ դառնալի, երբ հիշում եմ զլիսի մասին այն մեծ քաջի,
Որի փառքն է լայն որոտում Արգոսի մեջ և բովանդակ Հելլադայում»:

Եվ Տելեմաքոսը խորիմաց նրան իսկույն իր խոսքն ասաց.
«Մա՛ր իմ, ինչո՞ւ թույլ չես տալիս գերհաճելի այս երգչին
Զվարճագեղ երգը երգել, ինչպես նրան ոգեշնչում է իր հոգին:
Երգիչները մեղավոր չեն այստեղ բնավ, Ջևսն է միայն
Մեղապարտը. աշխատանքով կեր հայթայթող մարդկության մեջ

350 Նա ամենքին այն է տալիս, ինչ որ ինքն է միայն ուզում:
Չե՛ որ բնավ մեղք չունի սա, երբ երգում է դաժան բախտը Դանայացոց.
Մինչդեռ մարդիկ սովորաբար հրապուրվում են այն երգով,
Որն իսկապես նորագույն է, ազդեցությամբ քաղցրահնչեղ:
Սրտիդ հուզմունքը դու զսպիր և սրտալի երգն այդ լսիր:

Ոչ թե միայն Ոդիսևսն է, որ կորցրեց օրն երջանիկ վերադարձի,
Այլ Տրոյայում կոտորվեցին բազմաբազում այլ հերոսներ:
Բայց դու գնա շուտ քո սենյակն ու քո գործով անդ զբաղվիր
Ու գործի դիր ծառաներին: Հսկիր ջանքին ճախարակի և իլիկի,
Իսկ ճառելու գործը պետք է թողնել միայն տղամարդկանց,
մանավանդ ինձ,

360 Քանզի այս տան իշխանագոր տերը միակ ես եմ այսօր»:
Այդպես ասաց: Նա զարմացած վերադարձավ, գնաց իսկույն
դեպ իր սենյակ.

Որդու խոսքը իմաստալի խորունկ ազդեց նրա սրտին:
Իսկ երբ մտավ վերնատունը՝ ծառաների հետ միասին,
Իր ամուսին Ոդիսևսին սկսեց ողբալ, լալ ու երկար արտասվել,
Մինչ Աթենաս աստվածուհին նրա աչքերն անուշաբույր քնով փակեց:

Իսկ խոսնայրները գողգոտում էին սաստիկ դահլիճի մեջ
սուվերանած

Եվ բոլորն էլ տեհչում էին պսակել մահճում Պենելոպի:

Այնժամ իր խոսքն ուղղեց նրանց Տելեմաքոսը խորինաց.

«Ո՛վ խոսնայրներ իմ մայրիկի, որ նսյերտ եք, ամբարտաւալան,

370 Թողե՛ք, որ այժմ խնջույքն անենք լի բերկրանքով, սակայն սուսնց
գոր աղմուկի,

Քանզի անչափ հաճելի է երգը լսել քաջ երգչի,

Այդպիսին է երգիչը այս, որն իր ձայնով կարծես նման է սասործու:

Սուսվոռչան մենք կրգնանք հրապարակ, որ գումարենք համաժողով,

Որպեսզի ձեզ ես իմ վճիռն հալոմեն անկեղծ ու բացահայտ,

Որ հեռանաք դուք իմ տնից: Ձեր տներում դուք փոխելիոխ

Սարբեցեք այլ խրախճանքներ, ձեր սեփական գո՛ւյքը լափեք:

Սակայն եթե կարծում եք դուք, որ սուսվել գերագնիվ է, աուսվել լավ՝

Անպատժապարտ ոչնչացնել գանձերն ու գույքը մի մարդու,

Կործանեցե՛ք, իսկ ես այնժամ աղոթք կանեն սասուվածներին

հալերժակյաց.

380 Եվ կառաքի՛ Ձևը անշուշտ ժանտ հատուցում արարքներին ձեր անօրեն,

Այն ժանտանակ դուք բոլորդ այս հարկի տակ պիտ անվրեժ ոչնչանաք»:

Ասաց այդպես: Ծրթունքները կրծոտելով՝ բոլորն իսկույն խիստ

զարմացան

Այդ խոսքերից Տելեմաքի, որը այդքան խորխտ խոսեց և անվեհեր:

Իսկ Անտիհնոսն՝ Եվպիթեսի որդին, նրան պատասխանեց և խոսք

ասաց.

«Տելեմաքոս, գուցե իրոք սասուվածներն են սուխրեցրել

Որ պարծենաս դու վիսաբար և խոսք ասես հանդգնագույն.

Մի լա՛վ նայիր, Ձևը հանկարծ չհաստատի քեզ թագավոր

Ծովապարտիկ Իթակեոն, որ և ունես դու իրավունք, իբրև ժառանգ»:

Եվ Տելեմաքը բանիմաց, սուսրկելով, այսպես նրան իր խոսքն ասաց.

390 «Չը գայրանա՛ս դու ինձ վրա, ո՛վ Անտիհնոս, եթե մի բան ասես ես քեզ.

Այո՛, եթե Ձևը թույլ տա, կը ցանկանամ ես, հիրաւի, այդ ձեռք բերել,

Եվ մի՞թե դու համոզված ես, որ իսկապես վատ բան է այդ:

Վա՛տ չէ լինել վեճ թագավոր, տունը որի անխանում է

Բյուրաբազում հարստությամբ, ինքն էլ պատիվ է միշտ ստանում

ժողովրդից:

Բայց ծովածիր Իթակեոն Աքեչանց մեջ շատ կան մարդիկ

Երիտասարդ կան ակոր, մեծամեծներ գերահռչակ, որոնցից մեկն

Իշխանությունն այդ կը ստանա, երբ մահացած է Ռդիսևսն սասուվածալին

Իսկ ես իմ տան և իմ գույքի իշխող տերը պիտի դառնամ,

Նաև տերը սորուկներխ, որոնց թողել է Ռդիսևսը դյուցազուն».

400 Այնժամ որդին Պոլիբոսի՝ Եվրիմաքոսը, խոսք ասաց ու բարբառեց.

«Ամենը այդ, ո՛վ Տելեմաք, կախված է լոկ սասուվածներից,

Թե ո՛վ պիտի ծովապարտիկ Իթակեոն թագավորի:

Իսկ դու քո տան իշխողն ես այժմ, տերը բոլոր այս գույքերի:

Եվ ոչ մի մարդ, ոչ ոք, իրավ, չի հանդգնի բռնի կերպով

Քեզ քո գույքից գրկել այստեղ, քանի դեռ կա մեր Իթակեոն:

Սակայն ես քեզ, բարեկամըս, այն եկվորի մասին հիմա հարց

պիտի տամ.

Ո՞րտեղից էր այդ մարդն, ասա՛, ո՞ր երկրում է ծնվել արդյոք,

Կամ, վերջապես, ո՞ր երկրում է տոհմը նրա, ո՞րտեղ ունի նա հայրենիք:

Լո՛ւր էր բերել նա քեզ արդյոք դարձի մասին քո ծնող հոր,

410 Թե՛ եկել էր նա Իթակե իր ցանկությունը և իր կարիքը հոգալու:

Եվ ինչպե՛ս նա շուտ վեր կացավ ու հեռացավ, չուզեց մեզ հետ

ծանոթ լինել,

Մինչդեռ տեսքով նման չէր նա ստո՛ր, անտե՛ր կամ վատ մարդու»:

Եվ Տելեմաքը խորինաց պատասխանեց ու խոսք ասաց.

«Ո՛վ Եվրիմաք, արդեն հիմա կորցրել եմ ես հույսը իմ հոր վերադարձի.

Ուստի էլ ինձ չեն գրավում լուր ու համբավ, որ գալիս են այս-այն

տեղից:

Անհոգ եմ ես և անտարբեր դեպի հմայք ու գուշակում,

Որոնցով այժմ, տուն կանչելով գուշակների, մայրս է զբաղվում:

Իսկ այդ եկվորն՝ իմ հայրական հյուրն է ծանոթ տափուսացի.

Իր ասելով՝ խորախորհուրդ Անքիալոսի Մեմոտես որդին,

420 Մեծամեծար իշխող տերը տափուսածին թիավարող նավորդների»:

Այդպես ասաց Տելեմաքը, թեպետ գիտեր, որ սասուված էր

խոսակիցն այն:

Սակայն նրանք, տրված պարին ու երգերին սրտագրավ,

Հրճվում էին դեռ մեծապես, մինչև եկավ, վրա հասավ մուտք երեկոն.

Այդպես նրանք բերկրում էին մեծ աղմուկով, երբ իրիկվա մուտք իջավ:

Եվ գնացին այդ ժամանակ քուն մտնելու... ամեն մեկը գնաց իր տուն:

Տելեմաքն էլ, սուզված խորունկ մտքերի մեջ, ելավ, գնաց, որ քուն

մտնի

Իր բարձրաբերձ ննջարանում, որ կառուցված էր բակի մեջ՝

Գեղեցկակերտ ու հոշակապ, ամեն կողմից տեսանելի,

Եվ նրա հետ իսկույն գնաց, վատ նրազը ձեռին բռնած՝

430 Պիսեոնոյան Օպսի դատրիկն՝ Եվրիկլիան հալատարին:

Սրան, մատաղ դեռ հասակում, մի ժամանակ գնեց Լաերոն

Իր սեփական միջոցներով ու վճարեց ուղիղ քրտան եզան արժեք,

Որին նա իր ամուսնու չափ մեծարում էր իր հարկի տակ,

Բայց մահիճին նրա կորեք չէր մոտենում՝ կնոջ խանդից միշտ խույս

տալով:

2660



Արդ՝ նա գնաց այժմ նրա հետ, ձեռքին ճրագ: Ստորուկներից
ամենից շատ

Նա էր սիրում Տելեմաքին և կրթել էր նրան մանկուց:
Ամրակառույց անշարանի դուռը բացեց Տելեմաքուն,
Մտավ, ճատեց մահճակալին, հանեց իր նոսր պատմունճանը
Եվ այն զցեց ձեռքերի մեջ միշտ հոգատար այն պատալի,
440 Որն խնամքով թափահարեց ու քնքշաբար հարթեց, ծալեց բաճկոնը այդ
Անյա կախեց մեխից այնտեղ, քանդակածո մահիճի մոտ,
Եվ դուրս եկավ անշարանից, դուռն օղակով արծաթազեղ
Քաշեց, ծածկեց, ապա փոկով դուռն անոթ շարժեց իր տեղն.
Իսկ նա պատկած մահճի վրա, ծածկված մորթով ոչխարենի,
Գիշերն ամբողջ միտք էր անում ճամփի մասին, որն Աթենասն էր
ցույց տվել:

Ե Ր Գ Ե Ր Կ Ր Ո Ր Ղ

ԻԹԱԿԵՑՈՑ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ. ՏԵԼԵՄԱՔՈՍԻ ՈՒՂԵՎՈՐՈՒՄԸ

Երբ խավարից ծագեց ելավ վառ Արշալույսը վարդամատն,
Իր մահիճից շուտ վեր կացավ Ողիսևսի սիրած որդին.
Հագուստն հագավ, ուսին զցեց նա իր թուրը սրաբերան,
Հետո հագավ նա շողշողուն իր ոտքերին մուկերը պերճ, գեղեցկափայլ
Եվ դուրս եկավ անշարանից, տեսքով ինչպես հաղթ մի աստված:
Հրամայեց նա նույնհետայն բաներների՛ն իր մեծածայն՝
Կանչել իսկույն երկայնամագ աքեացոց անդ ժողովի:
Ու կանչեցին իսկույն նրանք և շատ շուտով հավաքվեցին աքեացիք,
Իսկ երբ բոլորն արդեն եկան, ու բազմամբոխ դարձավ ժողովն,
10 Նա դուրս եկավ դեպ հրապարակ, ձեռքին տեգը սղնձածույլ,
Բայց ոչ մեճակ. իր հետևից ցատկում էին արագավազ երկու շներ:
Տեսքը նրա վերափոխեց Աթենասը, դարձրեց չքնաղ ու հմայիչ,
Եվ նրանով, երբ նա եկավ, սքանչացան բոլոր մարդիկ:
Գնաց՝ բազմեց նա հոր տեղը, իսկ ծերունիք այն զիջեցին:
Այնժամ կանգնեց և բարբառեց Էգիպտիոսը դյուցազուն.
Ծերունական հասակ ուներ և շատ բան էր կյանքում տեսել:
Մինչդեռ նրա սիրած որդին՝ Աիզակակիր քաջն Անթոխոս,
Նավերի մեջ սևակտուց, Ողիսևսի հետ դյուցազուն,
Մեկնեց Տրոյա ձիահարուստ: Բայց սպանեց նրան Կիկոույն վայրագ
ու ժանտ

20 Անդ՝ խորախոր անձալի մեջ ու նրանով սարքեց ընթրիքը իր վերջին:
Ուներ նա այլ երեք որդի, որոնցից այժմ Եվրիանոսն
Հույլի մեջ էր խոսնայրների, մինչ երկուսը վարում էին գործերը հոր:
Բայց առաջին նա իր որդուն չմոռացած՝ վիշտ էր անում և ողբ ու լաց,
Նրա համար արտասովորով՝ նա ճառեց ու այս խոսքն ասաց.
«Ռուք լսեցեք, իթակեցիք, թե ձեզ հիմա ես ինչ կասեմ.
Այն օրվանից, երբ դյուցազն Ողիսևսը մեկնեց լայնկող իր նավերով,

Ոչ մի անգամ չի գումարվել ոչ մեր խորհուրդն, ոչ էլ համայն ժողովը
այս:

Իսկ ո՞վ հիմա մեզ ժողովի այժմ հավաքեց. ո՞վ էր, իրոք, ի՞նչ
մարդ էր նա,

Երիտասա՞րդ, թե՞ ավեր, որ մեր կարիքը այժմ գգաց:

30 Գուցե համբավ է նա լսել արեական մեծ բանակի դարձի մասին
Եվ միտք ունի մեզ ճիշտն ասել, բանգի ինքը լսել է այդ առաջինը:

Կամ գուցե նա մեզ կը հայտնի և կճառի մի հանրային գործի մասին:
Գիտեմ, որ նա մի փառավոր և օգտավետ մարդ է, իրավ, թող որ նրան
Զևար բարիքն այն շնորհի, ինչ ուզենա ինքը՝ արտանց»:

Այդպես ասաց: Խոսքն այդ բարի շատ հավանեց Ռդիսևսի սիրած որդին,
էլ իր տեղում չը կարեցավ երկար նստել և ճառելու տենչն էր անհուն:
Նա դուրս եկավ, կանգնեց մեջտեղը ժողովի, մինչդեռ բանբեր

Պիսենորը,

Որ քաջ գիտեր խորախորհուրդ օրենք ու կարգ, նրա ձեռքը

մական դրեց:

Եվ դառնալով նախ ձեռուկին՝ նա խոսք ասաց ու բարբառեց.

40 «Մերուկ, բնավ հեռու չէ քո ասած մարդը, այլ կտեսնես իսկույն նրան,
Որ գումարեց ժողովը այս: Լվկում են ինձ աղետն ու վիշուը չափազանց:

Դարձի մասին մեծ բանակի ես չեմ լսել ոչ մի համբավ,
Որ ձեզ հայտնեմ ճշմարտացի, հանց իմացողը առաջին,
Ոչ էլ գործն է ժողովրդի, որի մասին պիտի հայտնեմ ու խոսք ասեմ,

Այլ կարիքն է իմ սեփական. երկու աղե՛տ, որոնք իմ տանն են հասել
այժմ:

Նախ գրկված եմ ես իմ հորից, որն իշխում էր ազնվամեծար՝
Զեզ, բոլորիդ, իբրև արքա ողորմասեր և որպես հայր:

Իսկ այժմ արդեն գլխիս եկավ մի այլ աղետ՝ ավելի ժանտ,
Որ կվատնի գույքն իմ իսպառ և քարոքանդ կանի տունն իմ:

50 Մորըս, ընդդեմ նրա կամքի, խոսնայրներն են շրջապատել,
Որ սիրելի զավակներն են այստեղացի ազնվամեծար հայտնի
մարդկանց:

Նրանք, սակայն, չեն էլ ուզում տունը գնալ, խնդրել նրա ծնող հորը՝
Իկարիոսին, որ կարող էր իր աղջկան գին որոշել օրինավոր,

Եվ մարդու տալ, ում ուզենար, ում հավաներ նա սրտագին,
Բայց ոչ. նրանք փոխարենը ամեն օր մեր տուն են գալիս,

Մորթոտում են անվերջ եզներ ու ոչխարներ, պարարտ այծեր
Եվ անընդհատ խնջույքի մեջ խմում են մեր կարմիր գինին:

Այդպես անբավ գույքն է կորչում... մինչդեռ չկա այնպիսի մարդ
մի քաջագոր,

Որպիսին էր Ռդիսևսը, որ իր տնից վանի աղետը այս դաժան:

60 Իսկ ես չե՛մ որ անկարող եմ այժմ այդ անել, և երևի այսուհետև

Նույնպես անգոր ես կլինեմ, անընդունակ պաշտպանության:
Ես, իհարկե, պաշտպանության կդիմեի, եթե միայն ուժըս պատեր.

Իսկ գործն արդեն դառնում է հույժ անտանելի, կողոպտում են
գույքն իմ ամբողջ,

Տունս քանդում են անիրավ: Ուշքի՛ եկեք այժմ գոնե դուք.
Ամաչեցեք գեթ մարդկանցից ձեր հարևան, որոնք սպրում են մեր
շուրջը,

Պատկանեցեք գեթ զայրույթից աստվածների, որ վրդովված
Այս չարությամբ, գեթ չը թափեն և ձե՛ր գլխին նույնպիսի ժանտ
աղետ ու ցավ:

Աղերսում եմ հանուն Զևսի Օլիմպացի և Թեմիսի,
Որն ինքն է միշտ մարդկանց՝ ժողովը գումարում և արձակում:

70 Զսպված եղեք, բարեկամներ, թողեք, որ ես գեթ մեկուսի՝ իմ վիճակում,
Տառապանքը մեճակ կրեմ: Արդյո՞ք հայրն իմ՝ Ռդիսևսը մեծախորհուրդ,
Զեզ, գեղեցկոտն արեացոց, թշնամաբար ինչ որ չարիք է պատճառել
Եվ դուք էլ այժմ, իբր հատուցում, ինձ վատություն եք ցանկանում՝
Սրա՛նց իմ դեմ գրգռելով: Մինչ ինձ համար շատ օգտավետ պիտի
լիներ,

Եթե ինքներդ մխիթիք իմ գույքն անշարժ ու շարժական.
Եթե հեճց դուք այդ անեիք, հատուցումը կը գար շուտով և անհապաղ.

Ես այդ դեպքում քաղաքի մեջ այնքա՛ն պատի աղմուկեի՝
Պահանջելով ես տալ գույքս, մինչև որ ինձ կայքս ամբողջ ես
դարձնեիմ,

Մինչդեռ այսպես անհուսալի ժանտ կսկիծով լցնում եք դուք
այժմ իմ հոգին»:

80 Այդպես ասաց նա վրդովված, ու իր ձեռքից գետին գցեց
զավազանը,

Եվ սկսեց դառն արտասվել: Ցավակցությունը կաշկանդեց անդ
ամենքին.

Ուստի բոլորն նստած էին լուռության մեջ, չհանդգնեց և ոչ մի մարդ
Պատասխանել Տելեմաքին խոսքով դաժան և անողոր:

Լոկ Անոիհնուն, առարկելով, պատասխանեց ու խոսք ասաց.
«Ի՞նչ ասացիր, ով դու անգուսպ և սննապարժ Տելեմաքս,
Ի՞նչ ես իզուր մեզ նախատում ու ցանկանում խայտառակել:

Բնավ քո դեմ մեղապարտ չեն խոսնայրները արեացի,
Մեղավոր է միայն մայրը քո սիրելի, որ խարդախել շատ լավ գիտե:

Ահա երրորդ տարին անցավ, և չորրորդն է գալիս արդեն,
50 Բայց շարունակ խաբում է նա սիրուն ու հոգին արեացոց կրծքերի տակ.
Հույս է տալիս նա բոլորին, խոստանում է ամեն մեկին առանձնակի,
Ակնարկներ է անվերջ անում, բայց այլ բան է խորհում իրոք իր
մտքի մեջ:

Եվ բացի այդ, խարդախ խելքով նա հորինեց այլ նենգություն:
Սենյակի մեջ, իր դագագահին, մի մեծագույն հյուսվածք սկսեց.
Հյուսում էր նա մի շատ երկար և նորը գործվածք, իսկ մեզ ասաց
այն ժամանակ.

«Ո՛վ գերագնիվ իմ խոսնայրներ, բանգի մեռած է Ռիսուսն
աստվածատես,

Մի՛ մտածեք դուք շուտափույթ ամուսնությունն իմ կատարել, մինչև
որ ես

Ստվանն հյուսեմ և ախարտեմ, որ գործվածքըս գուր չկորչի:

100 Սա պատանքն է հերոսանուն ծեր Լաերտի. երբ որ նրան
Հառիշտակի դճնի օրհնար բազմավիշտ ու ժանտ մահվան,
Թող մարդկանց մեջ չդարձի աքեացի ինձ ոչ մի կին,
Թե, ալնքան շատ կուտակելով, ծերը թաղվել է անպատանք»:
Այդպես ասաց, և արտերը մեր քաջարի համոզվեցին:
Այնուհետև նա ցերեկով գործում էր հիմքն իր մեծագույն այդ
հյուսվածքի,

Իսկ գիշերով իր գործածը բանդում լույսի տակ ճրագի:

Այդպես խարդախ ու գաղտնաբար երեք տարի խաբում էր նա
աքեացոց:

Իսկ երբ եկավ չորրորդ տարին, և ժամկետը վրա հասավ,
Այնժամ մի կին, որ ճիշտ գիտեր, պատմեց մեզ գործն այդ համարձակ,

110 Ու մենք հասանք և բռնեցինք նրան այնտեղ իր պերճ հյուսվածքը
բանդելիս:

Նա այդպիսով գործն ախարտեց, թեպետ կամքին իր հակառակ:
Արդ՝ այսպես են պատասխանում քեզ խոսնայրներն, որ դու արտով
լա՛վ իմանաս,

Եվ որպեսզի տեղյակ լինեն նաև բոլոր աքեացիք:

Ուստի քո մորն ետ ողարկիր, հրամայիր, որ նա շուտով ամուսնանա
Այն մարդու հետ, որին ինքը հավան լինի, որին իր հայրը ցանկանա:

Իսկ թե երկար պիտի վանի աքեացոց որդիներին
Իր նենգ խելքով, որով առատ նրան օժտել է Աթենասն

(Պերճ արվեստում հմուտ է նա, մեծ խելք ունի
Եվ այնպիսի մի նենգություն, որպիսին մենք չենք լսել դեռ

120 Հնում եղած գեղազանգուր աքեացի կանանց մասին.
Ո՛չ Ալկմենեն, ո՛չ էլ Տիրոն, ո՛չ Միկենեն գեղապասակ,
Գրանցից ոչ մեկը չունեն Պենելոպի չափ նենգություն.

Սակայն հիմա խարդախությունը չի կարող նրան օգնել ոչ մի կերպ)
Ուրեմն այնքան պետք է կորչի քո գույքն անշարժ ու շարժական,
Քանի դեռ նա կշարունակի համատել այն որոշման մեջ,

Որը հիմա նրա արտին ներշնչել են աստվածները:
Այդպես, այդ, միայն մեծ փառք նա կատելծի սուկ իր համար,

Մինչդեռ դու դեռ կործանումը քո գույքերի ողբալու ես շարաշար:
Իսկ մենք հիմա մեր արհեստին կամ այլ գործի դեռ չենք գնա,
մինչև որ նա

130 Մեկն ու մեկին աքեանց մեջ կին չդառնա, ում կամենա»:

Եվ Տելեմաքը խորիմաց իսկույն նրան պատասխանեց և խոսք ասաց.
«Ով Անտինոոս, չէ՞ որ բնավ չի կարելի դուրս վորճել տնից նրան,
Որն ինձ ծնել և սնել է: Իսկ հայրը իմ երկրումն օտար,

Դեռ ո՛վ գիտի, կենդանի՞ է, թե՞ մահացած: Եվ ծանրագույն գործ կլինի
Իկարիոսին տալ մեծ տուգանք, եթե մորըս ետ ողարկեմ ես ինքնակամ,
Նաև իմ հայրն ինձ կպատժի: Ահեղ պատիժ ինձ կը հասնի և աստըծուց,

Երբ որ, տնից հեռանալիս, մայրս կանչի Էրինիսին զարհուրելի,
Եվ վերջապես՝ ինձ կարող են դատապարտել նաև մարդիկ:
Ուստի իմ մորն այդ վճիռը ես չեմ կարող հայտնել նրբեք,

140 Սակայն եթե փոքր ի շատե դուք խիղճ ունեք ձեր հոգու մեջ,
Դուրս գնացեք դուք իմ տնից ու ձեզ սարքեք այլ խնջույքներ,
Ձեր սեփական գույքը վատնեք ձեր տներում փոփոխակի:
Իսկ եթե դուք ստույգ կարծում եք, որ առավել ազնվագույթ է

ու փառունակ—

Անպատժապարտ ոչնչացնել ստացվածքը սուկ մի մարդու,
Վատնե՛ք, սակայն ես կկանչեմ աստվածներին հավերժակյաց,
Եվ երևի Ջևան հատուցումն իր կատարի գործի համար այդ անիրավ,
Ու այս տան մեջ բոլորդ այնժամ կործանվելու եք անվրեժ»:

Այդպես ասաց Տելեմաքը: Եվ դեպի նա Ջևան հեռագոչ
Ուղղեց լեռան բարձունքներից երկու հզոր արծիվների,
150 Որ պացան արագաչու, հուժկո՛ւ, ինչպես շունչը հողմի,
Սոժամանակ միմյանց մոտիկ, թևերն իրենց լայնատարած:
Իսկ երբ նրանք, մեջտեղն հասան մեծադաղակ այդ ժողովի,
Պտույտ գալով լայն թևերը թափ-թափ տվին արագ ու ծիր
Եվ բոլորի գլուխներին անդ նայեցին հայացքով խոր ու մահագույժ:
Հետո նրանք ճիրաններով ճանկընտեցին վիզն ու գլուխը միմյանց
Ու ճախրեցին դեպ աջակողմ՝ դեպի քաղաքն, ուղիղ դեպի նրանց տներն:
Խիստ ապշեցին նրանք այնժամ, երբ որ իրենց աչքով տեսան
թռչուններից,

Եվ խորհեցին իրենց հոգում, թե այդ ինչո՞վ պիտ վերջանա:
Այնժամ նրանց խոսք ասաց ծեր Հալիթերսեսը Մաստորյան,

160 Քանզի նա էր հասակակից ընկերներից իմաստունը,
Քաջարանիկ հավահման, որը գիտեր ճիշտ գուշակել գործն ապագա:
Այսպես նրանց նա բարեխոս՝ իր խոսքն ասաց ու բարբառեց.
«Դուք ինձ հիմա ականջ դրեք, իթակեցիք, ինչ կասեմ ձեզ անավասիկ:
Նախ և առաջ խոսնայրների համար եմ այս բանը հայտնում,
Քանզի նրանց սպառնում է արդեն աղետը մեծագույն և անավոր.

Այլևս երկար մնալու չէ հետո սիրած իր մարդկանցից քաջ Ռդիսևան,
Գտնվում է մտիկ մի տեղ, ուր նշույթում է մահ և կորուստ այս բոլորին.
Եվ, հիրապի, փորձանք կգա նաև մեզնից շատ շատերին՝

170 Որ, ապրում ենք հայտերևակ Իթակեում: Ուստի եկեք լավ մտածենք,
Ի՞նչպես պետք է զայել տրանց, թեպետ տրանք հենց իրենք էլ
Պիտ զուսպ դառնան, քանզի այդ է իրենց համար ամենից շատ այժմ
օգտակար,

Եվ այդ ես ձեզ գուշակում եմ ոչ իբր անփորձ, այլ քաջիմաց մի գուշակող
Ասում եմ ձեզ, որ կատարվեց ամենայն ինչ ողիղ այնպես,
Ինչպես նրան մի ժամանակ ես գուշակել էի իրոք, երբ արգիլանք
Արշավեցին դեպի Իլիոն, և նրանց հետ Ռդիսևաը ամենիմաց:
Ես ասացի, որ կրելով անթիվ աղետ, գրկված բոլոր ընկերներից,
Նա, ամենքից չճանաչված, քսաներորդ տարում նորից
Ետ պիտի գա, իր տունն հասնի: Այդ ամենը կատարվում է արդ
լիովին»:

Պատասխանեց նրան որդին Պոլիբուսի՝ Եվրիմաքոսն ու խոսք ասաց.
180 «Ո՛վ ձերունի, լավ կլինի, դու տուն գնաս և քո որդոց անդ գուշակես,
Որ չկրեն ապագայում նրանք աղետ ու փորձանքներ:

Մինչ ես քեզնից ավելի լավ կարող եմ այդ մեկնաբանել.
Ծա՛տ կան, իրոք, հավքեր, որոնք պանում են արեգակի լույսի ներքո
Բայց դրանցից ոչ բոլորն են կանխագուշակ: Իսկ Ռդիսևան
Արդեն վաղուց կործանված է, և ափսո՛ս որ նրա հետ դու էլ չկորար,
Որպեսզի գեթ չը ճանտերի այդպես անգետ քո գուշակման մասին այստեղ
Եվ այդպիսով չհուզերի՝ ստանց այն էլ հույժ զայրացած Տելեմաքին.
Գիտեմ, այդպես դու կսպասես, որ մի բան էլ քո տունն ընկնի,
որպես նվեր

Բայց արդ՝ ես քեզ մի խոսք կասեմ, և դա՛ անշուշտ գլուխ կգա,
190 Եթե մարդուն այս նորատի դու, ալետք, որ փորձ ունես բազմապիսի,
Եվ այսուհետ պիտի դրդես թշնամանքի, անմիտ խոսքեր բարբառելով՝
Լավ իմացիր, որ նախ նրան այդ կլինի ծանր ու վնաս,
Քանզի բնավ այս գործի մեջ ոչինչ անել նա չի կարող,

Եվ բացի այդ՝ ինքզ, ձերուկ, դու քեզ պատիժ կը վատտակես,
Որից սիրտդ խիստ կհուզվի և տանջանքով ժանտ կը լինի:
Իսկ ես անա Տելեմաքին բոլորի դեմ կտամ խորհուրդն իմ բարեմիտ.
Թող իր մորը նա պատվեր տա՛ իր հոր տունը վերադառնալ,
Այնտեղ նրան հարսանիքի կպատրաստեն և կաարքեն հարուստ ու մեծ
Այնքան օժիտ, որքան իրոք պատշաճ է սույ սիրած որդուն,

200 Զի հիրապի, ես չեմ կարծում, որ ձեռք քաշեն զավակները արեացոց
Փեսայության ծանր գործից, քանզի բնավ մենք վախ չունենք սատ
ոչ որից,
Ոչ էլ նույնիսկ Տելեմաքից, թեկուզ և նա ճոռոմախոս է չափազանց:

Անուշադիր մենք կթողնենք, ձերուկ, նաև գուշակույնը քո անհիմաստ,
Զի դու հիմար դուրս ես տալիս, որով անչափ ասելի ես դառնում
դու մեզ:

Գույքը նրա կկործանվի դեռ չարաչար, առանց վարձի,
Քանի արդպես Պենելոպեան ամուսնությունն արեյանց հետ կըրգձրգի:
Իսկ մենք երկար սպասել ենք և կը սպասենք դեռ՝ մրցելով
Հանուն նրա գեղեցկության ու չենք դիմի մենք այլ կանանց,
Որոնց հետ հույժ վայելուչ է ամուսնանալ այժմ մեզանից ամեն մեկին»:

210 Նրան սույա Տելեմաքոսը բանիմաց պատասխանեց և խոսք ասաց.
«Ռու, Եվրիմաք, և դուք բոլոր խոսնալքներդ ազնվաբարո,
Էլ այդ մասին ձեզ չեմ խնդրի, խոսք չեմ ասի ես վերստին,
Քանզի արդեն գործն այդ՝ գիտեն և՛ աստվածներն և՛ արեյանք,
Այլ ինձ տվեք միայն մի նավ արագընթաց և ողեկից քսան հոգի,
Որոնք ինձ հետ պետք է լինեն, ճանապարհվեն դեպ հեռուները:
Ես կզնամ դեպի Սպարտա, նաև Պիլոս ալազածիր
Եվ հարցուփորձ այնտեղ կանեմ դարձի մասին անհետացած իմ
ծնող-հոր:

Գուցե մի բան ինձ մարդկանցից մահկանացու մեկը ասի,
Գուցե լսեմ՝ մարդկանց համար ամենից շատ փառապարզև լուրը Զևսի:
220 Արդ, երբ լսեմ, որ հայրը իմ կենդանի է և պիտ մի օր վերադառնա,
Այնժամ գուցե, չնայած որ ինձ կտանջեն, մեկ տարի էլ՝ ես կը սպասեմ:
Իսկ եթե ես մի կերպ լսեմ, որ մեռած է հայրս արդեն և էլ չկա,
Ետ կդառնամ ես հայրենիք՝ դեպի հողը իմ սիրասուն,
Եվ կկերտեմ նրա պատվին դամբան-բլուր վայելչագույն,
Թաղման կարգը կը կատարեմ ես վայելուչ և իմ մորը մարդու կտամ»:
Այդպես ասաց նա իր խոսքը և անդ նստեց: Իսկույն ևեթ նրանց
ատաջ

Կանգնեց Մենտորն, որ ընկերն էր Ռդիսևսի մեծախորհուրդ:
Նա, նավերով հեռանալիս, պատվեր տվեց տանն իր ամբողջ՝
Լսել, անսպ միշտ ձերուկին, իսկ Մենտորին՝ պահպանել տունը
խնամքով:

230 Արդ՝ նա սրտով բարյացակամ, դիմեց նրանց և խոսք ասաց.
«Հիմա լսեք դուք նաև ինձ, իթակեցիք, ինչ կասեմ ձեզ.
Թո՛ղ չիճի այսուհետև ոչ մի խոհեմ կամ ողորմած, հեզաբարո,
Մականակիր վեճ թազավոր, և նրա սիրուն արդարություն թող չիմանա,
Այլ միշտ դաժան թող լինի նա, թող բռնություն միշտ կատարի նա
անխնա,

Քանզի ոչ ոք այս մարդկանցից էլ՝ չի հիշում Ռդիսևսին
աստվածափառ,
Որ իշխում էր սրանց վրա հեզաբարո և միշտ արդար, ինչպես մի հայր:
Բայց՝ ես նվերտ խոսնալքներին չեմ նախատում այսօր բնավ,

Որ բռնություն են կատարում նեղգապատիր ու վիսարար.
Թեպետ գույքն են Ռդիսուսի նրանք լափում ապօրինի,
240 Վտանգելով գրոխն իրենց, և խոսում են, որ նա երբեք էլ ետ չի գա,
Բայց մեղապարտ ես կհաշվեմ ձեզ, ազգովի, զի բոլորըդ,
Այստեղ նստած մունջ ու լոկի, խոսք չասացիր, չգուպեցիր ամենևին
Խոսնայրներին՝ սակավաթիվ, թեպետ շատ եք դուք իրապես ու
բազմաթիվ»:

Այնժամ խոսեց անարկելով Լիոկրիտոսն Եվեմորյան.
«Ի՞նչ խոսք էր այդ, որ ասացիր, ո՞վ խելագուրիկ, գոռոզ Մենտոր,
Հորդորում ես, որ մեզ՝ գապի ամբոխն ամբողջ: Դժվար է այդ.
Բյուր մարդիկ էլ չեն կարենա կոխի մղել խնջույք անող մեր խմբի դեմ.
Անգամ եթե ետ՝ գար ինքը՝ իթակեցի Ռդիսուսը դիցասանունդ,
Եվ կամենար սրտանց մի կերպ դուրս վազնդեղ այժմ իր տնից
250 Խնջույքի մեջ հրճվանք անող խոսնայրներին ազնվամեծար,
Թերևս՝ նրա վերադարձին չուրախանար նույնիսկ նրա կինն անմամն,
Թեպետ կարոտ է ամուսնուն, և խալտատակ բախտ ունենար Ռդիսուսը,
Թեկուզ նրան այդ կովի մեջ բազմությունները օգնեին:
Հիմա՞ր բան էր, որ ասացիր: Տրվե՛ք, մարդի՛կ, և ետ դարձեք ձեր
գործերին»:

Թող որ հոգան Տելեմաքի ուղևորումն Հալիթերսեսն ու քաջ Մենտորն,
Որ վաղեմի և մտերիմ ընկերներն են նրա՝ մեծ հոր:
Սակայն, կարծեմ, դեռ շատ երկար Իթակեում նա կնստի՝ համբավ ու լուր
Հավաքելով, ՝ քանզի երբեք չի գնալու նա ճանապարհին իր ցանկացած»:

Այդպես ասաց և արձակեց նա ժողովը: Տրիվ եկան
260 Եվ հեռացան բոլորն իսկույն՝ ամեն մեկը արագ գնաց դեպի իր տուն:
Իսկ խոսնայրներն՝ աստվածագարմ Ռդիսուսի տուն գնացին:
Բայց Տելեմաքն ուղղվեց, գնաց ալիազածիր ծովի ափով:
Անդ նա ծովի ձերմակ ջրով լվաց ձեռքերն և աղոթեց Աթենասին.
«Գեթ ինձ լսիր, աստված անմահ, որ՝ տունը մեր երեկ եկար,
Պատվեր տվիր, որ ես նավով ճանապարհվեմ ծովի վրա օդագույն,
Եվ հարցուվորձ անեմ ուրեք՝ անհետացած իմ ծնող հոր դարձի մասին,
Մինչ արեչանք այդ ամենին խոչընդոտ են ու խափանող,
Եվ մանավանդ՝ խոսնայրները անչափ նպերտ ու վիսացող»:
Այդպես ասաց՝ աղերսանքով: Եվ Աթենասը մոտեցավ իսկույն
նրան՝

270 Անդ իր ձայնով ու կեցվածքով Մենտորի տեսքը ընդունած,
Դարձավ՝ նրան նա բարձրաձայն ու խոսքն ասաց այս թևավոր.
«Տելեմաքո՛ւ, այսուհետև լինելու չես բնավ վախկոտ և կամ պանդուր.
Եթե իրոք համատ ոգին քո ազնիվ հոր հատուկ է՝ քեզ,
Որպիսին էր նա գործի մեջ և իր խոսքով ամենուրեք,
Այնժամ՝ անշուշտ քո ճանապարհը կը լինի հնարավոր»:

Բայց եթե դու գավակը չես Պենելոպի կամ որդին չես Ռդիսուսի,
Ես հույս չունեմ, որ հիրավի դու հասնես քո՝ փախազին:
Իրավ, չէ՞ որ գավակներից՝ շատ քերն են իրենց ծնող հորը՝ մամն,
Իսկ մեծագույն մասը հորից վատթար է միշտ: Միայն՝ քերն են
գերազանց:

280 Եվ եթե դու այսուհետև չես լինելու վախկոտ ու վատ, յետևո՛ւ ու տհաս,
Քանզի բնավ զրկված չես դու Ռդիսուսի բարձր խելքից,
Հույս կա՛ արդեն, որ դու իրոք կկատարես քո գործը այդ:
Ուստի և դու անմիտ, հիմար, խոսնայրների քմայքների
Ու դավանքի մասին բնավ այսուհետև չմտածես:
Խենթ են նրանք և անարդար՝ ու չեն զգում պատիժը ժանտ, մահն
անավոր,

Որոնք արդեն մոտավոր են, և մեկ օրում կկործանվեն նրանք՝ դաժան:
Մինչ հեռու չէ, ոչ՝ էլ անհաս, ճանապարհն այն, որին տեսնում ես
դու այդպես,

Քանզի ինձ պես, անավասիկ, դու հայրական ընկեր ունես հավատարիմ:
Արդ, քեզ մի նավ արագընթաց ես կը գտնեմ, ինքս էլ կը գամ քեզ
ուղեկից:

290 Իսկ դու հիմա շուտ տուն գնա, խոսնայրների հետ եղիր անդ: Բայց
քեզ համար
Թող պատրաստեն՝ պարեն, պաշար և ամեն ինչ զամբյուղների մեջ
զտեղենն:

Կարասներում հեղեմ գինի, ամուր, կաշվե տկերի մեջ՝
Թող որ լցնեն գարե-ալյուր՝ կերն ու՝ կորովը միշտ մարդկանց:
Իսկ ես շուտով ազգի միջից կընտրեմ փորձված հոժարակամ
Ծովապարսիակ Իթակեում շա՛տ կան: Նավեր և՛ նոր, և՛ հին, թիավարներ.
Ու նրանցից ես քեզ համար լավագույնը կընտրեմ անշուշտ,
Եվ այն հապճեպ մենք կըսարքենք ու կձրգենք՝ լայն ծովի մեջ»:
Այդպես ասաց վեհն Աթենաս՝ դուստրը Ջևի: Տելեմաքոսն
էլ բնավին չդանդաղեց, երբ աստժո՛ ձայնը լսեց:

300 Դարձավ, գնաց նա դեպի տուն՝ արտով տխուր ու վշտաբեկ
Եվ իր տան մեջ անդ նա գտավ՝ խոսնայրներին ամբարտալան,
Որոնք քերթում էին այժեր, խանձում էին պարարտ խոզեր լայն
բակի մեջ:

Կանգնեց իսկույն՝ Անոիոտուր և ժպտալով դեպ Տելեմաքն ուղի գնաց,
Ջեռքը նրա ամուր բռնեց, դարձավ նրան և խոսք ասաց.
«Տելեմաքո՛ւ դու սնապարծ, նպերտախոս, քենդ անգուսպ և մոլեգին,
Չար դավանքը՝ քո գործերի ու խոսքերի գուր ես պահում դու
կրծքիդ տակ,

Այլ սրտաբաց կե՛ր ու խմիր, ինչպես սուսջ: Իսկ արեչանք,
լավ իմացիր,

Ամենայն ինչ կպատրաստեն ու քեզ կտան ճեպընթաց մտի,
Թխավարներ ընտիր ու քաջ, որպեսզի դու փոթանակի
310 Գնաս և սուրբ Պիլոս հասնես ու գերազնիվ քո հոր մասին լոր
ստանաս»:

Եվ Տեղեմաքը իելացի պատասխանեց ու խոսք ասաց.
«Ոչ, Անտիոոս, ձեզ պես նպերտ՝ և վիսացող, չար մարդկանց հետ
ես չեմ կարող

Խնջույքի մեջ մեկտեղ մտնել, որսխանակ հանգիստ սրտով:
Բավ չէ՞, որքան մինչև այսօր՝ կայքն իմ բազում և մեծարժեք
Ոչնչացրիք դուք, խոսնայրներ, երբ որ դեռ ես մանուկ էի:
Իսկ այժմ արդեն, երբ մեծ եմ ես, լավ հասկացա խոսքն ու խորհուրդը
խելացի:

Հոգիս ներքուստ վառվում է այժմ քաջարությանը մի առնական,
Փափագում եմ, ուր որ լինեմ, թափել դաժան մահն ու՝ աղետը
ձեր գլխին,

Թեկուզ Պիլոս ես հեռանամ, թեկուզ այստեղ՝ հենց մեր՝ ազգի մեջ
ես մնամ:

320 Ես կզնամ, և չի լինի գուր, անպտուղ, իմ հորինած՝ այդ ճանապարհին,
Բայց ուրիշի նալի վրա, իսկ ես չունեմ ո՛չ թխավար՝ և ո՛չ էլ նալ.
Մինչ ձեզ համար իմ այդ վիճակն էր ցանկալի և՛ շահավետ»:
Այդպես ասաց, թեթևորեն ձեռքը հանեց ձեռքի միջից Անտիոոսի:
Խոսնայրները շարունակում էին տան մեջ խնջույքն որսխ,
Ծաղրում էին նրանք նրան, խոսքեր ասում հայհոյական.

Եվ, օրինակ, երիտասարդ նպերտներից շատերն էին՝ այսպես խոսում.
«Կատակ հո չի՞», որ Տեղեմաքն մահ և կորուստ է մեզ նյութել,
Զէ՞ որ՝ իրեն լավ պաշտպաններ պետք է քերի նա Պիլոսից ալազածիր,
Կամ թե նույնիսկ Սպարտայից. այնտեղ գնալ փափագում է նա
աստկապես:

330 Գուցե նաև նա միտք ունի գնալ դեպի բերրի՝ երկիրն այն՝ Էփիրե,
Որ այնտեղից կործանարար և մահացու թույնը քերի նա մեզ համար
Եվ այն, գինու ամանի մեջ գաղտ խառնելով, մեզ բոլորիս աստ կտորի»:
Կամ այսպիսի խոսք էր ասում մեկն ու մեկը ամբարտալան ջահելներից.
«Արդ, ո՞վ գիտի. գուցե և նա, ճամփա ելած նալի վրա իր լայնանիստ,
Հար շրջելով, հեռու սիրած իր մարդկանցից՝ հանց Ողիսեսն, ո՛չընչանա:
Այդպես սակայն մեզ կստեղծի հույս ու խոնջանք նա չափազանց,
Քանզի նրա գույքերն ամբողջ մենք մեր միջև պիտ բաժանենք,
իսկ տունն անբախտ

Կտանք իր մորը իշխելու, նաև նրան, ով նրա հետ ամուսնանա»:

340 Այդպես դատում էին նրանք: Իսկ նա մտավ իր հոր մտանը բարձր
ու լայն,

Որ կուտակված պահվում էին ոսկի, պղինձ և մեղր անուշ,
Հագուստեղեն՝ սնդուկներով, անուշաբույր շատ-շատ՝ յուղեր:
Հենված պատին՝ անդ շարեշար կանգնած էին բազմաբազում
կարասները

Համեղահամ և հնամյա քաղցր գինու, իսկ նրանց մեջ՝ անապական,
Աստվածային խմիչքը կար, որ կապատեր Ողիսեսին,
Երբ որ բազում փորձանք կրած՝ նա ետ դառնար հայրենի տուն:
Մտանալ այդ երկփեղկանի, ամբակառույց և պինդ փակող մեկ դուռ
ունեն.

Գիշեր, ցերեկ, անդուլ նրան միշտ հսկում էր մտանապանն.
Հավատարիմ, Պիսեմորյան Օպսի դատրիկն՝ Եվրիկլիան:
Սա ամեն ինչ պահպանում էր խելքով, կամքով և բազմափորձ՝
հոգածությամբ:

350 Տեղեմաքուն ասաց նրան՝ ներս կանչելով դեպի մտանն.
«Լցրու, մայրիկ, կճուճներից ինձ լավ գինին քաղցրանուշիկ,
Համեղահամ ու գերհաճո, որը պահում ես դու այստեղ՝
Մտահոգված միշտ այն դժբախտ մարդու մասին, ե՞րբ պիտի գա
մի օր արդյոք

Ողիսեսը աստվածագարմ՝ խուսափելով իր օրհասից ու ժանտ մահից:
Տասներկու կճուճ լցրու և խուփեղով ամուր, ծածկիր:
Լցրու նաև գարե ալյուրը պարկերի մեջ ամբակար.
Ընդամենը դու աղացած գարին պետք է լցնես քսան չափ.
Այս ամենը պետք է միայն դո՛ւ իմանաս: Այդ բոլորը մի կողմ դու դիր,
Երեկոյան ես կը վերցնեմ, երբ իր սենյակը վերնատան

360 Մտահոգված մայրս գնա՝ այնտեղ հանգիստ քուն մտնելու:
Արդ՝ մեկնում եմ ես Սպարտա, նաև Պիլոս ալազածիր,
Որ հարց անեմ դարձի մասին իմ սիրած հոր, գուցե լսեմ որևէ բան»:
Այդպես ասաց: Եվրիկլիա սիրող դաշակն խիստ լաց եղավ ու հեկեկաց.
Նա խորախոր հառուչանքով նրան դիմեց ու թևավոր այս խոսքն ասաց.
«Ի՞նչ ես ասում, այդ ինչ՝ միտք է մտել գլուխդ, սիրասուն դու իմ
որդյակ.

Ախ, ինչո՞ւ ես գնում ուրիշ դու երկրներ: Զէ՞ որ միակ
Միբելին ես մեր միևնույնս: Դու լավ գիտես, որ հայրենի երկրից հեռու
Անդ ալազգի մարդկանց մեջ գուր կործանվեց մեր Ողիսեսը
աստվածագարմ:
Մինչդեռ սրանք, հենց որ մեկնես դու այստեղից, կհորինեն գործ
չարադավ».

370 Որ կործանեն քեզ նենգաբար, ու իրար մեջ կը բաժանեն գույքն այս
ընտիր»:

Ինչ, մի՛ գնա, նստի՛ր, հսկի՛ր դու քո գույքին: Հարկավոր չէ, որ դու

կրես

Ծովերի մեջ սին, անպտուղ աղետ ու ցայ և թափառե՛ս երկրե-երկիր»:

Եվ Տեղեմաքը խորիմաց նրան իսկույն պատասխանեց և խոսք ասաց.

«Հանգի՛ստ եղիր, դայակ, առանց աստվածների չի ընդունված

վճիրը այս:

Միայն երդվի՛ր, որ այդ մասին բնավ ոչինչ դու չես ասի սիրած

մորն իմ

Մինչև չանցնի իմ մեկնելուց տասնևմեկ օր կամ տասներկու,

Կամ մինչև որ ինքն ինձ հիշի և կամ լսի, որ մեկնել եմ ես անհասպաղ,

Որպեսզի նա լացուկոծով չփշացնի դեմքն իր չքնաղ»:

Այդպես ասաց: Եվ պատվը երդվեց իսկույն մեծ երդումով

աստվածների:

380 Իսկ երբ երդվեց նա ջերմածայն ու կատարեց երդումն անեղ,

Կճումները համեղահամ գինին լցրեց նա անհասպաղ

Եվ ամբակար պարկերի մեջ գարի ալյուրը լի լցրեց:

Իսկ Տեղեմաքը տուն դարձավ, խոսնայրներին անդ միացավ:

Սակայն այլ գործ մտքով անցավ պայծառաչյա աստվածուհի

Աթենասի:

Տեսքն ընդունած Տեղեմաքի՛ շրջեց, անցավ քաղաքն ամբողջ

Եվ ողղակի ամեն մարդու, ում հանդիպեց, նա պատվիրեց,

Որ հավաքվեն երեկոյան արագընթաց նավի վրա:

Փըրոնիոսի գեղեցկատես քաջ գավակից՝ Նոեմոնից

Նա ճեպընթաց մի նավ խնդրեց, իսկ նա սիրով խոստացավ տալ:

390 Մինչ արեգակը մայր մտավ, փողոցներին խախարն իջավ:

Արագ նավը ծով ձգեցին ու բարձեցին հարմարանքը նրա վրա,

Ծովի ափին նավը կանգնեց, որին մոտիկ հավաքվեցին ժիր նավաստիք,

Եվ նրանցից ամեն մեկին քաջալերեց աստվածուհին:

Այլ բան նաև մտքով անցավ Աթենասի, պայծառաչյա աստվածուհու.

Դեպ սպարանքն աստվածակերպ Ռոխուսի քայլեց, գնաց

Եվ անդ բողբ խոսնայրներին խնջույքի մեջ նա ներշնչեց քաղցրանուշ

բուն,

Խիստ շփոթեց: Նրանց հոգին ու դեմ ձգեց նրանց ձեռքից գավաթ ու թաս:

Նրանք իսկույն ցրիվ եկան քաղաքի մեջ բուն մտնելու. այլևս երկար

Չը կարեցան այնտեղ նստել, քանզի բունն էր արդեն փակում նրանց

աչքերն:

400 Մինչ Աթենաս պայծառաչյա աստվածուհին այդ ժամանակ,

Նմանվելով քաջ Մենոտրին՝ թե՛ իր ձայնով և թե՛ տեսքով,

Տեղեմաքին, պերճակառույց տնից նրան դուրս կանչելով, այսպես ասաց.

«Քո նավաստիք, Տեղեմաքոս, պատրաստ եմ այժմ ծովի ափին

Եվ թիերի մոտ եմ հիմա, սպասում եմ քո պատվերին.

Գնա՛նք շուտով, որ անտեղի ճանապարհը մեր չուշանա»:

Այդպես ասաց, առաջ անցավ, արագ քայլեց, Պալաս Աթենասը:

Հետևելով աստվածուհուն՝ արագ ու ժիր գնաց և ինքը Տեղեմաքն:

Իսկ երբ նրանք եկան հստան արագընթաց նավին այնտեղ, լայն ծովի

մոտ,

Գտան իսկույն ծովի ափին թիավարող նավորդներին երկայնատևազ:

410 Տեղեմաքի սուրբ գորությունն այնժամ նրանց իր խոսքն ասաց.

«Եկեք շուտով, բարեկամներ, գնանք, բերենք ճանապարհի պաշարը մեր.

Որը պատրաստ է մեր տան մեջ, մայրս սակայն այդ չգիտի,

Այլև ոչ ոք ստրուկներից: Բայց մեկը կա, որ լսել է գործի մասին»:

Այդպես ասաց, առաջ անցավ: Նրանք նրան հետևեցին

Ու, ամեն ինչ հավաքելով, հանց պատվիրեց Ռոխուսի սիրած որդին,

Բերին, դրին նավի վրա, որը ուներ ամբակառույց տախտակամած:

Տեղեմաքը նավ բարձրացավ, իսկ Աթենասն առաջ անցավ

Եվ անդ բազմեց նավախելին ու նրա մոտ այնտեղ նստեց Տեղեմաքը:

Թիավարներն արձակեցին նավակապերն ու կտառաններն,

420 Ապա իրենք շուտ բարձրացան ու նստեցին նստիքներին:

Աթենասը պայծառաչյա նրանց այնժամ ողենպաստ հողմ շնորհեց,

Եվ աղմուկեց մուգ ու մթին ծովի վրա հանկարծ Ջեփյուրը խոտաշունչ:

Նավորդներին հորդորելով՝ հրամայեց Տեղեմաքոսը խորիմաց

Կարգի բերել նավասարքը: Նրանք, նրան հնազանդված,

Կայմն եղևնյա վեր բարձրացրին և տնկեցին իր բնի մեջ

Ու կապեցին այնուհետև չվաններով հաստատ ու պինդ,

Իսկ փոկերով լավ ոլորված վեր հանեցին սուագաստը շողշողենի:

Հողմը փչեց մեջտեղն ուղիղ սուագաստի, և նա իսկույն փքվեց ուժգին,

Ու նետվեցին աղսղակող մութ ալիքները ցունկին սահող նավի,

430 Բայց թոչում էր նավը առաջ՝ խոր ճեղքելով ճանապարհն իր ջրի միջով:

Մինչ սևաթույր արագ նավի ապավանդակն հարդարելով՝

Դուրս հանեցին նրանք այնտեղ սարկարանները գինով լի

Եվ գոհ-գեներմ կատարեցին աստվածներին հալերժակչաց,

Նամանավանդ Ջևսի դստրիկ պայծառաչյա Աթենասին:

Մտքոջ գիշեր և առափոտ ճեղքում էր նավը մութ ծովում

ճանապարհն իր:

ՊԻԼՈՍՈՒՄ

Արևն արդեն, դուրս էլնելով գեղեցկատես ծովի խորքից,
 Վեր բարձրացավ դեպ երկինքը պղնձափայլ, որ պողպատ երկրի վրա
 Լույսն իր պոռի անմահներին, նաև մարդկանց մահկանացու:
 Մինչդեռ նրանք եկան հասան գեղեցկաշեն Պիլոս քաղաքը Նելսի:
 Այնտեղ բնիկ պիլոսացիք թուխ եզներից փարթամ զոհեր էին բերում
 Ու կոտորում երկրասասան ու սևահեր մեծ աստրծուն:
 Ծարված էին ինը շարքով, ամեն մեկում հինգ հարյուր մարդ,
 Եվ ամեն մի շարքի դիմաց ինը ցուլ եզ կար խողխողված,
 Ընդերքն ուտում էին իրենք, իսկ աստրծուն՝ աչրում էին թիկնամասեր:
 Նախորդները անդ ափ հասան, ստագաստը և նավի սարքը համաչափ
 10 Հավաքեցին. նախ ամուր կտուսնեցին ու քաջեցին դեպի ցամաք:
 Տեղեմաքուն իշավ նավից, իսկ Աթենասը առջևից անցավ նրա:
 Նախ դիցունին պայծառաչյա նրան դարձավ և խոսք ասաց.
 «Տես, Տեղեմաք, գեթ մագաչափ չպետք է դու վախկոտ լինես.
 Նրա համար դու ծովն անցար, որ գեթ մի բան քո հոր մասին աստ
 իմանաս:

Եվ արդ հինա ուղիղ գնա դեպ ձիագուսպ Նեստորը ծեր.
 Տեսնենք, արդյոք նա որպիսի՞ մտքեր ունի իր սրտի մեջ:
 Խնդրիք նրան, թող քեզ ափ ճշմարտությունը բացահայտ,
 Իսկ նա ստեղ չի կամենա, ճշմարտախոս է չափազանց»:
 Նրան իսկույն պատասխանեց ու խոսք ասաց Տեղեմաքոսը բանիմաց.
 20 «Բայց ես, Մենտոր, ինչպե՞ս գնամ, ինչպե՞ս պիտի դիմեմ նրան.
 Հմուտ չեմ ես և խելացի ճատեր ասել ես չը գիտեմ,
 Եվ վերջապես ամոթ է, որ ես, նորատիս, հարցմունք անեմ աստ
 մեծերին»:

Եվ խոսք ասաց նրան կրկին պայծառաչյա աստվածուհին.
 «Մասամբ ինքդ, ով Տեղեմաք, ասելիքդ քո սրտի մեջ կը մտածես,
 Եվ մասամբ էլ աստվածը քեզ կներշնչի, քանզի, կարծես,

Դու ծնված չես կամ սնված չես առանց կամքի աստվածների»:
 Ասաց, ապա արագ քայլեց, գնաց Պալլաս Աթենասը:
 Տեղեմաքուն էլ հետևից: Այդպես եկան այնտեղ հասան,
 Որ ժողովն էր պիլոսացոց: Իր որդոց հետ ծեր Նեստորն էր այնտեղ
 բազմած,

30 Ծորքը նրա խնջույք էին սարքում այնտեղ ծանոթներն իր
 Եվ տապալում էին միսը ու խորոված պատրաստում շամփուրներով:
 Երբ հյուրերին նրանք տեսան, շուտ ընդառայ էլան նրանց
 Ու ձեռք տալով, ողջունեցին ու խնդրեցին նստել իսկույն:
 Բայց առաջինը՝ մոտ գնաց Պիսիստրատը Նեստորածին,
 Ձեռքը բռնեց նա երկուսի, բազմեցրեց խրախճանքի
 Նորք և փափուկ մորթու վրա, այլազանիք ծովի ափին,
 Անդ, առընթեր իր՝ մեծ եղբայր Թրասիմեդին և իր մեծ հոր:
 Այնուհետև փորոտիքից նրանց բաժին առաջարկեց,
 Գինի լցրեց նա գավաթը ոսկեակար ու, ողջույնի խոսք ասելով,
 40 Դիմեց Պալլաս Աթենասին՝ ասպարակիր Ջևսի դատերն.
 «Հյուր այլազգի, ա՛ն բաժակը և աղոթի՛ր Պոսիդոնին իշխանագոր.
 Քանզի այստեղ, զոհաբերման այս խնջույքին, զուգադիպեց
 գալուստը ձեր:

Իսկ երբ որ դու հեղումն անես և աղոթես, ինչպես պատշաճ է օրենքով,
 Այս մեղրանուշ գինով թասը տուր և դրան, որ նա նույնպես
 հեղումն անի,

Քանզի և նա, համոզված եմ, աղոթում է անմահներին,
 Որովհետև բոլոր մարդիկ կարիքն ունեն աստվածների:
 Մինչ փոքրագույնն է նա քեզնից, բայց ինձ հետ մեկ հասակի է,
 Ուստի և ես արդ՝ նախապես քեզ եմ տալիս այս բաժակը
 ոսկեքանդակ»:

Այդպես ասաց, ձեռքը դրեց ոսկի բաժակն անուշ գինով:
 50 Հաճույք գգաց վեճ Աթենասն, որ մեծարողն արդարացի
 Նախ և առաջ մեկնեց իրեն գինով լցված գավաթն ոսկի,
 Եվ Պոսիդոն մեծ արքային աղոթքն ուղղեց նա ջերմեռանդ.
 «Լսի՛ր գեթ ինձ դու, երկրակալ ո՛վ Պոսիդոն, մի մերժիր մեզ.
 Երբ ջերմաջերմ աղոթում եմք, մեր աղերասնքը կատարիր:
 Նախ շնորհիք դու Նեստորին և իր որդոց փառք ու պատիվ,
 Այնուհետև տուր դու նաև պիլոսացոց պերճ հատուցում,
 Որ ձոնեցին հարյուրաեզ գեճունը քեզ ու պարգևներ պերճապատիվ:
 Թող որ և ես ու Տեղեմաքն ետ դառնանք շուտ, կատարելով մեր
 գործը այն,

Որի համար եկել եմք այժմ նավի վրա արագընթաց ու սևաթույր»:
 60 Այդպես անա նա աղոթեց, ինքն էլ հեղումը կատարեց,
 Ապա հանձնեց Տեղեմաքին գեղեցկափայլ ու կրկնականթ գավաթը այն:

Ու աղոթեց աչդպես և նա՛ Ռդիսևսի սիրած որդին:

Այնժամ նրանք, խորովելով, դուրս բաշեցին թիկնամիսը շամփորներից

Ու բաշխեցին բաժինները, կատարեցին խնջույքը պերճ ու փառավոր:

Երբ լիովի նրանք կերան ու հագեցան կերովստով,

Նեստորն այնժամ, գերեմացի ձիավարը, դիմեց նրանց ու խոսք ասաց.

«Արդեն հիմա, երբ հյուրերը հագեցած են կերովստով,

Հարմար է աստ հարցմունք անել, ո՞վ են նրանք: Արդ՝ ո՞վ եք, դուք,

70 Հյուր եկվորներ: Ո՞րտեղից եք դուք լող տվել հորդ ուղիով,

Ի՞նչ գործ ունեք: Գուցե միայն դեգերում եք դուք ընդունայն,

Հանց ծովահեն ավազակներ, որ թափառում են ծովերում

Եվ, կշանքն իրենց վտանգելով, միշտ աղետներ են այլազգի

մարդկանց հասցնում»:

Պատասխանեց և խոսք ասաց Տելեմաքոսը խորիմաց,

Որ խիզախ էր արդեն հիմա, խիզախությունը ներշնչեց ինքն Աթենասն,

Որպեսզի նա հարցմունք անի անհետացած իր հոր մասին

Ու աչդպիսով մարդկության մեջ փառք վաստակի ազնվափայլ:

«Ո՞վ դու Նեստոր Նելևսածին, դու աքեյանց փառք ու պարծանք.

Հարց ես տալիս, որտեղի՞ց եմք մենք իրապես. արդ՝ կպատմեմ

քեզ այդ իսկույն:

80 Եկել եմք մենք Իթակեից, որ գտնվում է Նելյոն լեռան շրջակայքում:

Իսկ գործը մեր, որ քեզ կասեմ, համայնական գործ չէ բնավ,

Լուր եմ փնտրում կամ մի համբավ, որպեսզի ես գեթ իմանամ

Դարձի մասին իմ ծնող հոր՝ բազմաշարշար Ռդիսևսի,

Որն, ասում են, քեզ հետ մեկտեղ անդ կովելով, Տրոյա քաղաքը ավերեց:

Չէ՞ որ գիտենք մենք բոլորի վերաբերմամբ, որ կովել են տրոյացոց դեմ,

Եվ ով՝ որտե՞ղ ոչնչացավ չար օրհասով իր դժընդակ:

Մինչդեռ նրան Կրոնոսյանը սահմանեց մահ, անհայտ կորուստ,

Քանզի ոչ ոք այժմ չի կարող ուղիղն ասել, ո՞ր կործանվեց նա

իսկապես.

Արդյոք կորավ նա ցամաքո՞ւմ՝ չա՛ր, անողոք մարդկանց ձեռքով,

90 Թե՞ ծովերում, Ամփիտրիտի բունն հոսանքի ալիքներում մրրկացայտ:

Եվ արդ՝ հիմա ընկած եմ քո ծնկների մոտ. արդյոք դու չե՞ս՝ բարեհաճի

Գեթ ինձ հայտնել նրա թշվառ մահվան մասին, եթե, հարկավ,

Տեսել ես դու այդ քո աչքով կամ լսել ես մեկն ու մեկից թափառական:

Այլա՞ն, իրոք տարաբախտ էր մայրը ծնել նրան խղոպես:

Մակայն բնավ չը պաճուճես՝ ինձ հարգելով կամ ցավակից լինելով ինձ,

Այլ ամեն բան, ինչ տեսել ես դու քո աչքով, ճիշտը պատմիր.

Աղաչում եմ, եթե իրոք երբևիցե Ռդիսևսը՝ հայրս ազնիվ,

Անդ, Տրոյայում, ուր կրել եք դուք՝ աքեյանք, բյուր տառապանք,

Կատարել է քեզ խոստացածը իր գործով կամ իր խոսքով, այդ այժմ

հիշիր

100 Եվ ամեն բան ճշմարտացի ու մի առ մի դու ինձ պատմիր»:

Պատասխանեց իսկույն նրան ծեր Նեստորը, ձիավարը գերեմացի.

«Ոհ, բարեկամ. ինձ դու սրտանց հիշել տվիր այն աղետներն,

Որ այն երկրում միշտ քաշեցինք մենք՝ աքայեանց զավակներս

անպարտելի,,

Եվ այն, որքա՛ն խոր տառապանք մենք կրեցինք ծովում իբրև

ավարառու՝

Հար շրջելով նավերի մեջ, որոնց իշխողն Աքիլլեսն էր Պելևսածին,

Եվ այն, որքա՛ն ցավեր տեսանք մենք Պրիամոս թագավորի

Մեծ քաղաքի մոտ մարտելիս: Եվ այնտեղ էլ կոտորվեցին քաջերն հզոր.

Պառկած է անդ քաջամարտիկ Հասը մեծ, այնտեղ է և Աքիլլեսը,

Այնտեղ է և Պատրոկլոսը՝ խորհրդականն աստվածակերպ,

110 Այնտեղ է և սիրատենչիլ զավակը իմ՝ Անտիոքոսը գորավոր,

Որը վազում էր գերագանց, պատերազմող էր աննման:

Այդ չէ միայն. մենք կրել ենք բյուրաբազում և այլ տանջանք ու

աղետներ,

Եվ մարդկանցից մահկանացու ո՞վ կարող է խոսքով պատմել

ամենը այդ:

Եթե նույնիսկ աստ մնայիր դու հինգ տարի կամ վեց տարի և անընդհատ

Հարց անեիր, թե որքա՛ն են կրել փորձանք աստվածազարմ աքեացիք,

Էլի ոչինչ դեռ չիմացած՝ պիտ փախչեիր դեպ հարազատ երկիրը քո:

Եվ շարունակ, ինք տարի, բյուր անգութքամբ շուրջը նրանց հորինեցինք

Աղետ, փորձանքը չարամանկ, մինչև ուժով գործն ավարտեց

Կրոնոսյանն:

Եվ բնավին ոչ ոք այնտեղ չէր մտածում և չէր կարող

120 Հալխասարվել խելքով դյուցազն Ռդիսևսին. և հռչակված էր չափազանց

Հնարքներով իր խորամանկ նա՛ հայրը քո, եթե իրոք ճիշտ է միայն,

Որ դու նրա զավակն ես: Ես զարմանքով նայում եմ քեզ.

Ճիշտ որ, նույնիսկ խոսքով ես դու նրան նման: Եվ հիրավի,

ո՞վ կկարծեր,

Թե կարող է քեզ նման մի երիտասարդ ասել այդքան խելոք խոսքեր:

Մինչ մենք այնտեղ, համեմայն դեպս, ես, Ռդիսևսն աստվածակերպ՝

Ժողովի մեջ կամ խորհրդում չենք հակասել միմյանց երբեք,

Այլ միաբան միտք ենք արել՝ անդ խորիմաց և համերաշխ,

Ինչպե՞ս պետք է ղեկավարել աքեյացոց, որ լավ գնա ամեն մի գործ:

Մակայն երբ մենք կործանեցինք Պրիամոսի մեծ քաղաքը

բարձրապարիսպ

130 Ու նավերով ճամփա ընկանք, երբ որ ցրեց աստվածն այնժամ աքեացոց,

Զուսն իր սրտի մեջ սահմանեց, որ վատաբախտ լինի այդ դարձը

արգիյանց,

Քանզի իրոք ոչ-բոլորը արդար էին և իմաստուն:
Եվ նրանցից շատ շատերը արժանացան թշվառագույն ժանտ վիճակի,
Որովհետև պայծառաշյա դուստրը մեծ հոր, լի գայրույթով,
Ատրերևի երկու հզոր որդոց միջև ցանել էր ռիս գծառայություն:
Եվ արդ՝ նրանք, երբ արևը մայր մտնելիս անդ կանչեցին մեծ ժողովի
Աքեացոց ամենեքայան, մինչ զո՛ր էր այդ և անկանոն, հանիրավի,
Եվ երբ եկան բոլոր որդիք արեացոց, սակայն գինով խիստ ծանրացած,
Խոսք խոսեցին, թե ինչո՛ւ է այդպես ժողովը գումարված:

140 Եվ Մեներայն այդտեղ ահա պահանջ դրեց, որ արեյանք
Ծուտ որոշեն վերադառնալ կրծքի վրայով լայն ծովերի:
Բայց հաճելի այդ չթվաց Ագամեմնոն թագավորին.
Հետաձգել նա կամեցավ դարձը գորքի, որ կատարի գեներմը սուրբ,
Որպեսզի գեթ Աթենասի քենն ահավոր մեղմացնի:
Խելացնո՛ր. նա չիմացավ, որ չի կարող աստվածունին հեշտ համոզվել,
Քանզի մտքերն հավերժակյաց աստվածների երբեք դյուրավ չեն

փոփոխվում:

Այդպես նրանք կանգնած էին՝ հայհոյական եպերանքը իրար ուղղած:
Այդ ժամանակ ոտքի ելան սրընթացեղ արեացիք
Եվ ահարկու աղմուկեցին, անհաճելի թվաց խորհուրդը երկպառակ:

150 Ու գիշերն այդ մենք անցկացրինք՝ լի չար մտքով դեպի միմյանց:
Զևսն էր նյութում մեզ այդ աղետն, հանց պատումհաս:
Մյուս առավոտ՝ շատերն իրենց խոր նավերը սրբազնասուրբ ծով
ձգեցին

Ու բարձեցին դրանց վրա կայքն ու կանանց գեղագոտի:
Սակայն մնաց իր տեղն համառ երկրորդ կեսը ժողովրդի
Իշխանագոր Ագամեմնոն Ատրիդեսի հետ միասին:
Մեզ հետ եղած կեսը սակայն խոր նավերով մեկնեց հապճեպ:
Եվ սլացան նավերն արագ, քանզի աստված հանդարտեցրեց
ծովն անեզերք:

Իսկ երբ հասանք մենք Տեներոս, զոհ ու գեներմ կատարեցինք՝
Դեպ հայրենիք շտապելով: Զևսը սակայն դեռ միտք չուներ
դարձի մասին:

160 Դաժանորեն կրկին նյութեց նա մեզ համար վատթար կոխի:
Ուստի ոմանք շուտ ետ դարձան ու շարժեցին իրենց նավերը կրկնակոր,
Հետևելով հնարագրուտ ու բազմափորձ Ոդիսևսին,
Ուղղվեցին դեպ Ատրիդես Ագամեմնոնն՝ այդպես նրան մեծարելով:
Իսկ ես այնժամ, շուրջս շարժվող իմ նավերով փախա սուսջ՝
Իմանալով, որ նյութում է աստվածն արդեն նոր աղետներ:
Փախավ նաև քաջակորով Տիդևսյանը ընկերների հետ միասին:
Ծարժվեց ապա խարտեշագեղ Մեներայը, Լեսբոս կղզում նա հասավ մեզ,

Որտեղ արդեն ճանապարհը մեր հեռագույն քննում էինք մենք իրար
հետ՝

Ինչպե՛ս պետք էր ուղևորվել. ապառաժոտ Քիոս կղզուց
170 Դեպի վերև՝, Պսիդիե կղզին՝ այն ձախ կողմում ունենալով,
Թե՛ հողմաշունչ Միմասին մոտ, բայց Քիոսից շատ դեպի ցած:
Աղերսեցիկ մենք աստծուն, որ լավ նշան հայտնաբերի:
Եվ նա տվեց մեզ այդ նշանն՝ պատվիրելով, որ դեպ Ելբես մենք գնանք՝
Ծեղքելով ծովը մեջտեղից, որ շուտափույթ փորձանքից մենք
խուսափենք:

Մեր հետևից հողմը փչեց՝ խիստ սրընթաց և ուժգնակի,
Եվ սլացան նավերն արագ, հեշտ անցնելով ողջ ճանապարհը
ձկնաստ.

Ու գիշերով եկան, հասան նավերն արդեն Գերեստ կղզին:
Երբ որ մեծ ծովը մենք անցանք, շատ եզների թիկնամներ
Մենք զոհեցինք Պոսիդոնին: Չորրորդ օրն էր, երբ Արգոսի
նավակայան

180 Նավերն հասցրին Տիդևսյան քաջ և ձիագուսպ Դիոմեդին:
Իսկ իմ նավը ես ուղղեցի դեպի Պիլոս: Էլ չընդհատվեց
Քանին քնամ այն վայրկյանից, երբ առաքեց նրան աստված:
Այդպես եկա, ո՛վ իմ զավակ, ես անտեղյակ: Եվ չգիտեմ, թե ո՞վ արդյոք
Աքեական մեծ քաջերից անդ ազատվեց կամ կործանվեց:
Ահավասիկ, որքան որ ես, մեր տանն նստած, գիտեմ այստեղ,
Դու կիմանաս, ինչպես հարկն է, և չե՛մ պահի ոչինչ թաքուն
ես քեզանից:

Արդ, ասում եմ, որ հաջողակ տուն եմ դարձել միրմիդոնցիք քաջաղեղ,
Նրանք, որոնց առաջնորդն էր ազնիվ որդին աստվածագոր Աքիլևսի:
Ողջ-ստող է և Փիլոկտեսն, փառապասկ, հզոր որդին Պեասի:

190 Ետ է քերել Իդոմենեան պատերազմից հաջող փրկված զինվորներին
Իր հայրենի Կրեստե կղզին, և նրանցից ծովն ոչ ոքի չի կրանել:
Ատրիդեսի մասին արդեն լսել եք դուք, թե ինչպես նա
Տուն է դարձել, ինչպես դժբախտ մահ է նյութել նրան Էգիսթը
դժնարար:

Սակայն և ինքը՝ դավադիր Էգիսթոսը, պատժվեց սաստիկ:
Որքա՛ն լավ է, երբ մնում է կործանվողի մահից հետո քաջ մի զավակ,
Քանզի որդին վրեժն առավ իր հայրասպան նե՛նգ Էգիսթից,
Որ մեծափառ հորն էր նրա ոչնչացրել դաժանարար:
Ո՛հ, սիրելիս, տեսնում եմ քեզ չքնաղ ու վեհ, քաջահասակ.
Պետք է այնքա՛ն խիզախ լինես, որ քեզ հիշեն միշտ ապագա
սերունդները»:

200 Եվ Տեներոսը խորիմաց պատասխանեց իսկույն նրան և խոսք ասաց.

«Ո՛վ դու Նեաւոր Նելւաւծին, դու աքելանց գերաւեծար փառք
ու պարծանք.

Ճիշտ է, այո, վրեժն առաւ նա իսկապէս, և նրա փառքն աքելացիք
Կարաւեճն երկրե-երկիր, այդ կիսնանս սերունդները նաև գալիք:
Ի՞նչ երանի և իճն՝ այնքան ուժ շնորհեճն մեճ աստվածները,
Որ կարենան վրեժն առնել եւ ոճրագործ խոսնայրներից,
Որոնք անասնճ կատարում են մեր տանն հանցանք ու շար գործեր:
Քայց անմահներն չեն վիճակել իճն՝ այդպիսի բախտ ու բարիք,
Ո՛չ հեղ իմ հորն և ո՛չ էլ իճն, ուստի պետք է, որ համբերեճն»:

Պատասխանեց ապա նրան գերաւանցի Նեաւորն իշխան.

210 «Քարեկամս, իճքդ այդ մասին հիշեցնելով, խոսք ասացիր,
Ճիշտ, ասում են, որ ձեր տան մեջ քո մոր համար խոսնայրները
բազմաբազում
Անվայել գործ են կատարում ու քարվականք՝ քո ցանկությանը
հակասակ:

Քայց իճն՝ ասա, կամովի՞ ես դու հանդուրժում այդ ամենը,
Թե՞ ատում է քեզ ծողովորդն, կամքով անմահ աստվածների:
Քայց ո՛վ գիտի, գուցե և գա Ողիսեւը և փոխարենն այդ բոնության
Նրանց պատճի. իճքը միայն կամ աքելանց հետ միասին:
Այս, երանի՞ քեզ կամենար այնպե՛ս սիրել պայծառաշյա Աթենաւը,
Ինչպէս սրտանց հոգաւոր էր Ողիսեւին նա մեծափառ
Այնտեղ՝ երկրում Տրոյական, ուր կրեցինք մենք տանջանքներ
բազմապիսի:

220 Ես, հիրավի, չեմ տեսել դեռ, որ աստվածները բացահայտ
այդպէս սիրեն,
Ինչպէս նրան պաշտպանում էր անդ Աթենաւը բացարձակ:
Եթե Պալլաս Աթենաւը քեզ իսկապէս օգնէր այնպէս,
Մեղեխներից շատերն այնժամ պիտ մոռնային ամուսնության
մասին խորհել»:

Պատասխանեց նրան իսկույն Տելեմաքոսը իմաստուն.

«Ավա՛ղ, կարծես, չեն կատարվի քո այդ խոսքերն, ո՛վ ծերունի.
Իրավ, մեճ գործ դու հաշտեցիր: Զմայված եմ ես մեծաքանկ:
Քայց այդ, գիտեմ, գլուխ չի գա, թեկուզ նույնիսկ աստվածները
ցանկանան»:

Եվ Աթենաս աստվածուհին պայծառաշյա այսպէս խոսեց
և խոսք ասաց.

«Այդ ի՞նչ խոսք էր, ով Տելեմաք, որ դուրս թռաւ քո շորթերից:
230 Մարդուն աստված, թե կամենա, հեշտ կազատի նույնիսկ հեռուտ:
Ես, օրինակ, հույժ գերադաս կհամարեմ կրել բազում տանջանք ու վիշտ
Եվ տուն դառնալ իմ հայրենի, տեսնել այնտեղ վերադարձիս օրը բարի,

Քան ետ դառնալ և հարազատ օջախի մեջ ոչընչանալ,
Հանց կործանվեց Ագամեմնոնն Էգիսթոսի և իր կնոջ խարդախությանը:
Մակայն մարդկանց մահկանացու, թեկուզ նույնիսկ շատ սիրելի,
Անկախող են փրկել անմահ աստվածները, երբ որ նրանց,
Մշտատխոր մահվան օրհասը հառնելով, հաւիշտակում է դժնաբար»:
Եվ Տելեմաքը խորիմաց պատասխանեց իսկույն նրան և ասաց.
«Թող որ, Մեւոր, էլ չխոսեճք մենք այդ մասին, լոկ վիշտ է այդ
պատճառում մեզ:

240 Մինչդեռ նրա վերադարձն է այլևս բնավ անհուսալի,
Անմահներն են ասնմանել մահ ու սև վիճակ այդպէս նրան:
Ես ուզում եմ այլ բան խոսել, հարցումնք անել այժմ Նեաւորին,
Քաւնի չէ՞ որ գերազանց է նա բողոքից արդարությանը և իր խելքով,
Եվ ասում են, որ իշխում է արդեճ երրորդ նա սերունդին:
Նայվածքով էլ նա թվում է ուղիղ ինչպէս անմահ աստված:
Պատմիր դու իճն՝ ճշմարտաբար, ո՛վ դու Նեաւոր Նելւաւծին,
Ի՞նչպէս մեռաւ Ագամեմնոն Ատրիդեւը իշխանատեր,
Ի՞նչ կործանում ասրեց նրան Էգիսթոսը նեճգապատիր,
Երբ ապանեց նա իրենից բաշ մի մարդու, ո՛ր էր այնժամ Մենելայը:
250 Գուցե չկար նա Արգոսում, այլ շրջում էր երկրներում նա այլևայլ:
Ուստի և նա համարձակվեց սպանությունն այդ կատարել»:
Պատասխանեց նրան Նեաւոր ձիավարը գերեւանցի.
«Ծա՛տ լավ, որդյակ, քեզ ամեն բան ես կպատմեմ արդարացի:
Իճքդ նաև հասկանում ես, թե սիկապէս ինչ կլինէր,
Եթե իրոք Ատրևորդին՝ Մենելայը խարտիշագեղ,
Տրոյայից ետ վերադարձած, Էգիսթին տան մեջ ողջ գտներ,
Նրան նույնիսկ մահից հետո երկրի վրա դամբան-բլուր չէին կանգնի,
Այլ պիտ միայն ընկած լինէր քաղաքից դուրս, դաշտերի մեջ,
Որ անողոք հոշոտեին նրան շներն և թռչունները գիշատիչ:
260 Եվ արցունքն իր նրա համար թափելու չէր աքելացի և ոչ մի կին.
Ահուելի գործ նա կատարեց: Երբ Իլիոնում վարում էինք մենք
պատերազմ,

Նա անողորիչ մի անկյունում՝ Արգոսի մեջ ձիատատ,
Ագամեմնի կնոջ սիրտն էր իր ճառերով հրապուրում:
Այդ նողկալի քարվականքին Վիտեմնետրան աստվածային
Սկզբներում համաձայն չէր, իբր անբասիր և ազնիվ կին,
Որի մոտ կար նաև գուսան. Ատրևորդին իշխանագոր,
Դեպի Տրոյա արշավելով, պատվիրել էր նրան նայել միշտ իր կնոջ:
Սա, դիցակամ բախտի քերմամբ հրապուրվեց և անճնատոր
եղաւ կրքին,

270 Իսկ Էգիսթոսը երգչին այն աքսորեց դեպ ամայի կղզին հեռու,
Որ նա մնաց, և մարմինն իր բաժին դարձաւ թռչուններին:

Մինչ հաճույքով իր տուն բերեց նա թագուհուն արդեն հոժար
Եվ կատարեց աստվածներին նա շատ զենում, թիկնամներ այրեց
բազում,

Ջոհեց շատ-շատ նա նվերներ, նուրբ գործվածքներ և ոսկեղեն,
Քանզի ահեղ գործ կատարեց անակնկալ հաջողությամբ:
Այդ ժամանակ էս ու Ատրիդ Մենելասը միասին, որպես անխախտ
Բարեկամներ, դեռ Տրոյայից էտ դառնալիս, մեր ճանապարհն էինք
անցնում,

Իսկ երբ հասանք մենք Աթենքի բարձունքի մոտ՝ սուրբ Սունիոն,
Հանդես եկավ ահեղաշունչ պաքներով Փեք-Ապոլլոնն.
280 Նա հարվածեց և սպանեց Մենելայի նավավարին,
Օճետորչան Փրոնտիսին, որը նավի դեկն էր վարում այդ միջոցին,
Եվ որն իրոք գերազանցն էր մահկանացու մարդկանց մեջ,
Իբրև նավի հմուտ վարիչ, երբ փոթորիկ էր բռնկվում:
Անդ կանգ առավ Մենելայը, թեպետ աստիկ շտապում էր
ճանապարհին,
Որ ընկերոջ թաղումն անի և մեծարանք տա լիովին:
Բայց երբ հետո ճամփա ընկավ նա մութ ծովում նավի վրա իր
լայնանիստ

Ու ճեպրնթաց եկավ, հասավ Մալիա բարձր հրվանդանին,
Հեռագոչ Ջևար կամեցավ ուղին նրա դժբախտ դարձնել
Եվ առաքեց շունչն աղմկող ու կործանիչ ժանտ հողմերի:
290 Խիստ բարձրացան ու թնդացին մեծ ալիքներն, հանց բարձունքները
լեռների,

Այդպես ցրեց նավերը նա, որոնց մի մասն հասավ Կրետե,
Որ կիդոններն են բնակվում Յարդան գետի հորձանքին մոտ:
Եվ կա այնտեղ, մութ ծովի մեջ, սեպեզր ու հարթ մի փոքրիկ ծայր,
Որը ասեմանն է Գորտինի ու կախված է այլաց վրա:
Անդ նետում է Նոտն ալիքներ դեպի Փեստոս, դեպ հրվանդանն
արևմտյան,

Որտեղ այդ ծայրը աննշան էտ է մղում ալիքները ահագնացալու:
Ահա այդտեղ նավերն հասան, մինչ նավորդներն հազիվ մահից
խուսափեցին:

Բայց նավերը, պինդ զարկվելով սեպ ծայրերին, խորտակվեցին.
Եվ նրանցից սևակտուց միայն հինգ նավ հողմ ու ալիք՝
300 Վերցրին տարան ու զարկեցին հեռու ափին Եգիպտոսի:
Այդպես ահա Մենելասն իր նավերով այլալեզու ցեղերի մեջ
Հար թափառեց ու հավաքեց անհաշիվ գանձ, գույք և ոսկի:
Այնժամ ահա Էգիպտոսը տանն իր նյութեց ոճիրը ժանտ.
Ատրիդեսի մահից հետո նա յոթ տարի, անդ, ոսկեշատ Միկենետոս
Թագավորեց, և ժողովուրդն էր հպատակ, հլու նրան:

Իսկ ութերորդ տարում, ինչպես մի պատուհաս, ինքն՝ Օրեստեսն
աստվածակերպ,

Աթենքից էտ վերադարձավ և սպանեց իր հայրասպան
Նենգապատիր Էգիպտոսին, որն սպանել էր մեծախառ իր ծնող հորը:
Այնուհետև արգիացոց տվեց նա ճոխ մի հոգեհաց՝
310 Հանուն ահեղ, դաժան իր մոր և այն վախկոտ Էգիպտոսի:
Եվ նույն այդ օրն եկավ, հասավ Մենելասն ահեղագոռ,
Որ բերել էր բյուր կայք ու գանձ, ինչքան որ բեռ վերցնում էին
նրա նավերն:

Իրավ, և դու, իմ սիրելի, շատ մի շրջիր, տնից-տեղիցդ հեռացած,
Անտեր թողած կայքըդ ամբողջ՝ մարդկանց կամքին ամբարտալիս.
Ո՛հ միգուցե այդ գույքդ ողջ նրանք լախեն՝ իրարու մեջ բաժանելով,
Եվ միգուցե քո ճանապարհն անցնի ունայն և անպտուղ:
Արդ, քեզ խորհուրդ էմ ես տալիս, նաև պատվեր՝ գնալ դեպի Մենելասն:
Դեռ նոր է նա նավի վրա վերադարձել օտար երկրից ու մարդկանցից,
Որոնց միջից վերադարձի հույս ունենալ մարդ չի կարող,
320 Երբ ահավոր սրբիկներն են նրան նետել այնտեղ՝ հեռու,
Այն ծովի մեջ, որտեղից նույն տարում անգամ թոչունները
Անկարող են թոչել ու գալ, քանզի մեծ է այն չափազանց ու ահեղի:
Եվ արդ հիմա պետք է գնաս դու քո նավով՝ նավորդներիդ հետ միասին:
Թե ցանկանաս, ճանապարհվիր դու ցամաքով. էս քեզ կտամ ձիեր
ու սալը

Ու կատարեմ և իմ որդոց, որոնք իրոք քեզ կողակցեն
Մինչև չքնաղ Լակեդեմոն, ուր ասպրում է Մենելայը խարտիշագեղ:
Այնտեղ նրան դու կաղերսես, որ պատմի քեզ գործը իրոք նշմարտացի,
Թեպետև սուտ նա չի խոսի, քանզի մարդ է նա իմաստուն:
Այդպես ասաց: Մինչդեռ արևը մայր մտավ և ամենուր տիրեց խավար:
330 Իսկ Աթենասն՝ աստվածուհին պաշտառաչյա, նրան դիմեց ու
խոսք ասաց.

«Ո՛վ ծերունի. այդ ամենը դու ասացիր իրավացի և օգտակար:
Բայց կորեցեք դուք լեզուները եզների և խառնեցեք շուտով գինին,
Որպեսզի մենք հեղում անենք Պոսիդոնին և այլ հավերժ անմահների
Ու այնուհետ քուն մտնելու մասին հոգանք, ժամանակն է քնել արդեն.
Հանգավ արդեն օրվա լույսը արևմուտքում, և վայել չէ
Աստվածային խնջույքի մեջ երկար նստել, այլ պետք է շուտ մենք
հեռանանք»:
Այդպես ահա խոսքն իր ասաց դուստրը Ջևսի, և լսեցին նրանք
նրան:

Բանքերները ջուր բերեցին, որ ձեռքերին լցնեն նրանց:
Խառնարանները խմիչքով մինչև բերան լի լցրեցին պատանիներն
340 Եվ բոլորին ըմպակներով բաժանեցին պատշաճապես

Ու նետեցին կրակի մեջ լեզուները: Հեղումն արին ոտքի կանգնած:
Երբ հեղումը կատարեցին և խմեցին, որքան սիրուն էր տենչում նրանց,
Պատրաստվեցին վեհ Աթենասն ու Տելեմաքն աստվածակերպ,
Որ երկուսով շոտ ետ դառնան դեպի նավը սևակտուց:
Բայց արգելեց նրանց Նեստորն և խոսք ասաց կշտամբերով.
«Թող որ բնավ Չևսը չանի և կամ անմահ աստվածները,
Որ ինձանից այս ժամանակ դուք դեպ նավերը հեռանաք:
Իրավ, կարծես, նման եմ ես մի շատ աղքատ ու մերկ մարդու,
Որն իր տան մեջ չունի այնքան բարձ ու ծածկոց, այլև վերմակ,
350 Որպեսզի ինքն և իր հյուրը բնեն փափուկ անկողնու մեջ:
Ոչ, իմ տանը կա լիովի գեղապանույն վերմակ ու բարձ,
Քանի դեռ ես կենդանի եմ, և իմ տան մեջ ապրում են դեռ

զավակներն իմ,

Որոնք պիտի քաղցրաբարո, լա՛վ ընդունեն մեզ մոտ եկող միշտ

հյուրերին,

Թույլ չեմ տա ես, որ սիրելի որդին քաջի, որպիսին է Ռդիսևսը,

Գնա, պատկի այնտեղ, այն կոշտ, տախտակամած նավի վրա»:

Եվ Աթենասն՝ աստվածունիին պայծառաչյա, իր խոսքն ասաց

այնժամ նրան.

«Սիրելի ձեր. արդարացի՛, լա՛վ ասացիր: Տելեմաքը սիրահոժար

Թող քո խոսքին հնազանդովի, քանզի իրոք լավագույնը այդ է միայն,

Եվ քո տան մեջ քուն մտնելու թող նա հիմա քեզ հետևի:

360 Մինչ ես անշուշտ պետք է գնամ դեպի նավը սևակտուց,

Որ հորդորեմ նավորդներին և տամ նրանց պատվերներն իմ:

Արդ՝ կարող եմ ես պարծենալ, որ նրանց մեջ չափահասը ես եմ միայն.

Նորատի են նրանք բոլորն և քաջասիրտ Տելեմաքին հառակակից

Ու նրան այժմ ողեկցում են իբրև սիրող բարեկամներ:

Ես կարող եմ պատկել այնտեղ՝ սևակտուց և խորագոգ նավի վրա,

Որպեսզի շոտ՝ դեպ կավկոնները քաջարի գնամ ես վաղ ստավոտյան:

Պարտք են նրանք, պիտ ստանամ, և պարտքն է այդ վաղնջական

և շատ խոշոր:

Իսկ դու սրան, քանի որ սա քո մոտ՝ քո տունն է ժամանել,

Ծուտ առաքիր քո որդու հետ՝ սայլի վրա, և տուր ձիերդ դիմացկուն,

370 Որոնք լինեն արագավազ և զորությամբ լավագույնը»:

Եվ Աթենասն՝ աստվածունիին պայծառաչյա, այդ ասելով,

թուավ, գնաց,

Ինչպես ծովի արծիվն հզոր: Մարսափ տիրեց ականատես բոլոր

մարդկանց.

Եվ ձերուկն էլ խիստ զարմացավ, երբ իր աչքով այդ նա տեսավ,

Չեոքը բռնեց Տելեմաքի, անվամբ կոչեց ու խոսք ասաց.

«Բարեկամս, ես չեմ կարծում, որ դու լինես վախկոտ ու թույլ,

Երբ քեզ, այդքան դեռահասին, աստվածներն են հովանավոր.

Եվ չէ՛ որ դա ոչ այլ ոք էր աստվածներից օլիմպակյաց,

Թե ոչ միայն ավարաբաշխ, տրիտոնաձին դուստրը Չևսի,

Որն արգիյանց քաջերի մեջ ամենից շատ սիրում, հարգում էր

քո մեծ հորն:

380 Արդ, ողորմա՛ծ եղիր, իշխող աստվածունիդ, և տուր դու ինձ

և իմ որդոց,

Նաև կնոջն իմ հարգելի, փառք ու պատիվ ազնվաշուք,

Իսկ ես ահա զոհ կը բերեմ քեզ մի երինջ լայնաճակատ

Դեռ չլծված ու գեղանի, որի վզին լուծ չի դրել դեռ ոչ մի մարդ.

Քեզ կզոհեմ ես երինջն այդ և կը զուգեմ իր եղջյուրները ոսկեզարդ»:

Այդպես ասաց աղերսագին: Լսեց նրան վեհ Աթենասն:

Ծարծվեց սպա դեպ ապարանքն իր հոշակապ գերեմացի Նեստորն

ազնիվ՝

Առաջն ընկած զավակների և ազնվագույն փեսաների:

Եվ երբ եկան, հրաշակերտ տունը հառան թագավորի,

Կարգով բոլորն աթոռներին՝ ու պերճագույն բազմոցներին նստոտեցին:

390 Ծերուկն իսկույն եկածների դեմը դրեց դաշխուրանը՝

Անուշահամ գինով լցված, որ նոր միայն մտանապետ կինը հասնեց,

Վերցնելով խուփը կարասի, որը փակված էր տասնամեկ տարի անդու:

Արդ, այդ գինին խառնեց ձերուկն անոթի մեջ, հեղում արեց այնուհետև,

Չերմ աղոթեց Աթենասին՝ պայծառ դստերն ասպարակիր Չևս գզոնի:

Երբ հեղումը կատարեցին ու խմեցին, որքան սիրուն էր տենչում նրանց,

Տրիվ եկան, ու ամեն մեկն իր տուն գնաց քուն մտնելու:

Իսկ դյուցազուն Ռդիսևսի սիրած որդի Տելեմաքին

Քնեցըրեց Նեստորն իշխան, ձիավարը գերեմացի,

Մահնակալում քանդակածո, անդաստակում իր աղմկոտ,

400 Եվ նրա մոտ՝ Պիսիստրատին քաջաղեղ ու ազգի իշխան.

Սա ամորի ճետն էր նրա և ապրում էր տան մեջ իր հոր:

Նեստորն ինքը բնեց ներքին ննջարանում իր բարձր տան.

Իսկ տիկինը, հանց կողակից, անդ զարդարեց նրա մահինը գեղեցիկ:

Եվ երբ ծագեց վառ արշալույսը վարդամատն,

Ծուտ վերկացավ իր մահինից գերեմացի ձերուկ Նեստորը ձիավար

Ու դուրս գալով, գնաց, նստեց այն քարերի վրա հրդկված,

Որոնք այնտեղ կային վաղուց, տան բարձրաբերձ դարպասի մոտ:

Փայլուն էին հղկված քարերն այդ սպիտակ. նրանց վրա մի ժամանակ

Նստում էր միշտ Նելեոս ինքը՝ խորհրդականն աստվածակերպ.

410 Սակայն արդեն մահվան ձեռքով նա կործանված իջել էր տունը Հադեսի:

Եվ արդ՝ հիմա բազմեց Նեստոր գերեմացին աքեացոց մեծ պատվարը՝

Չեոքին բռնած զավազանն իր: Ծորջը նրա հավաքվեցին

Սենյակներից դուրս եկած իր որդիք՝ Ստրատիոսն, Էքեփրոնը,

Պերսևսը և Արեւոտը, Թրասիմեդեսն աստվածային,
Հետո նրանց անդ մոտեցաւ Պիսիատրատը քաջամարտիկ:
Նրանք այնտեղ, դուրս բերելով, բազմեցըրին Տելեմաքին:
Այնժամ խոսեց ծեր Նեստորը, ձիավարը գերեմացի:
«Դուք, զավակներ իմ սիրալիր, կատարեցեք իմ կամքը շուտ,
Որ մենք շուտով խանդաղատենք աստվածներից նախ և առաջ

Աթենասին.

420 Նա երևաց ինձ խնջույքում փարթամաճոխ, որը ձոնված էր աստծուն:
Ձեզնից մեկը թող դաշտ գնա կով բերելու, որ նա շուտով այտեղ լինի.
Թող կովն հանդից քըշի-բերի, նախիրն այնտեղ արածեցնող

հովիվն ինքք,

Թող որ մեկն էլ հապճեպ գնա դեպ սև նավը Տելեմաքի,
Կանչի, բերի նրա բոլոր ընկերներին, լոկ երկուսին այնտեղ թողնի:
Թող երրորդը գնա կանչի քաջ ոսկերիչ Լաերկեսին,
Որ շուտ նա գա և եղջյուրներն անլուծ կովի ոսկեջրի:
Իսկ մյուսներդ՝ այտեղ եղեք դուք խմբովին, պատվեր տվեք
Ստրուկներին՝ մեծափարթամ խնջույք սարքել ապարանքում

գեղեցկաշեն:

Թող բազմոցներ շարեն չորս կողմ, ամենուրեք, թող կրեն փայլ
և զուլալ ջուր»:

430 Այդպես ասաց, և բոլորը շտապեցին կատարել այդ:
Երինջն իսկույն հանդից բերին: Քաջակորով Տելեմաքի ընկերները
Արագընթաց ու համաչափ նավից եկան: Եկավ նաև ոսկերիչը՝
Ձեռքին բռնած պիտույքները իր դարբնական, գործիքները իր արհեստի՝
Կռան, զնդանը վայելուչ և արքանը գեղեցկակերտ,
Որոնցով նա ոսկերչության գործն էր անում: Աթենասը կանգնեց ընթեր,
Որ մասնակից դառնա զենման: Մինչ ձիագուսպ ծեր Նեստորը
տվեց ոսկի

Իսկ ոսկերիչն ոսկեզարդեց եղջյուրները գեր երնջի,
Որ դիցուհին ցնձա սրտանց, տեսնելով զոհն արժանավոր:
Կովը, բռնած եղջյուրներից, մոտ բերեցին Ստրատիոսն և Էքեիրոնը,
440 Իսկ հեղումի ջուրը տնից, ծաղկանկար մի կոնքի մեջ, բերեց Արեւոն,
Որն և ուներ իր մյուս ձեռին մատաղ գարին զամբլուղի մեջ:
Արդ, մոտ կանգնեց, սուր տապարը ձեռքին բռնած, քաջամարտիկ
Թրասիմեդը,

Որ խողխողի և փողոտի անլուծ կովը իբրև մի զոհ:
Կանգնած էր անդ և Պերսևսը՝ ձեռքին բաժակ արյան համար:
Եվ սկսեց ծեր Նեստորը հեղումն անել, ցանել գարին:
Նա աղոթեց Աթենասին, կովի գլխի մազը կտրեց և կրակի մեջ
այն նետեց:

Իսկ երբ նրանք աղոթեցին ու ցանեցին սուստ գարին,

Ծեր Նեստորի որդին իսկույն՝ Թրասիմեդեսը քաջագույն,
Մոտիկ կանգնեց ու հարվածեց. սակրը վզի մկանները կտրատեց,
450 Կյանքից զրկվեց կովը իսկույն: Հեկեկացին բարձր ձայնով
Քաջ Նեստորի դատերն, հարսներն ու ամուսինը՝ գերազնիվ
Եվրիդիկեն,

Որ դատերից Կլիմենոսի՝ անդրանիկն էր և ամենքի, միշտ սիրելին:
Լայն, ընդարձակ գետնից կովը վեր բարձրացրած՝ պահում էին
այդպես նրանք,

Մինչ փողոտեց նրան արագ՝ մարդկանց իշխան Պիսիատրատը:
Երբ նրանից արտածորեց արյունը սև, ու ոսկրերից հոգին թուավ,
Իսկույն նրան կտրատեցին, թիկնամսերն, ինչպես կարգն է,
ողջ հաճեցին

Եվ պատեցին ապա ճարպով՝ շուրջանակի ու կրկնաշերտ,
Իսկ վերևից դրանք նորից բրդած մսի կտորներով լավ ծածկեցին:
Ծերը դրեց վառ կրակին ու սրբակեց վրան գինին իր կայծաջայտ,

460 Իսկ նորատիք կանգնած էին՝ ձեռքին իրենց հնգաժամի.
Երբ այրեցին թիկնամսերն ու երբ ընդերքն իրենք կերան,
Մյուս մասերն կտրատեցին ու զարկեցին շամփուրներին.

Այդպես ահա խորովեցին՝ ձեռքով բռնած այն շամփուրները սրածայր:
Այդ ժամանակ Տելեմաքին լողացրեց Պոլիկաստեն՝
Գեղեցկատես կրտսեր դուստրը ազնիվ Նեստոր Նելևայանի:

Իսկ երբ լվաց, նրա մարմինն օժեց յուղով նա խնամքով,
Ապա նրան շքեղազարդ բաճկոն հագրեց ու պատմունճան:
Նա դուրս եկավ լոգարանից՝ կերպարանքն իր աստվածակերպ,
Եվ, անցնելով դեպի Նեստորն, ազգավարի կողքին նստեց:

470 Իսկ երբ կարմրեց միսը արդեն, դուրս քաշեցին շամփուրներից
Եվ այն նստած վայելեցին: Ծառաները գնում էին անդ ամեն կողմ,
Սուստորեն գինին լցնում պերճ բաժակները ոսկեկտու:
Արդ երբ նրանք լավ հագեցան կերուխումով, որքան իրենց սիրուն
էր տենչում,

Նեստորն՝ իշխան գերեմացին, դարձավ նրանց ու խոսք ասաց.
«Դուք, իմ որդիք, Տելեմաքի համար ձեր գեղեցկաբաշ ու կորովի
Դուրս քաշեցեք, կտքը լծեք, որ ճանապարհն իր նա գնա»:

Այդպես ասաց: Նրանք, նրան հնազանդված, փոթանակի
Դուրս քաշեցին ձեռքն արագ և ժրածիր կտք լծեցին:
Մինչ կտքի մեջ մատանապետ կինը իսկույն բերեց, դրեց հաց և գինի

480 Եվ կերակուր, որն ուտում են արքաները աստվածամուն:
Այնուհետև շքեղազարդ կտքը նստեց Տելեմաքուն աստվածատես
Եվ նրա հետ՝ Պիսիատրատը Նեստորածին, մարդկանց իշխան:
Կտքը շարժվեց: Իր ձեռքն ստավ նա երասանն ու մորակեց:

Թոան իսկույն ձիերն արագ և սլացան դեպ դաշտավայրն՝
Իրենց ետև, հեռուն թողած Պիլոս քաղաքը բարձրաշեն:
Ողջ օրն ձիերը սլացան՝ պերս անուրը խիստ ճոճելով:
Մինչ մայր մտավ արևն արդեն, մթնշաղը ծածկեց ամբողջ

ճանապարհն,

Երբ որ նրանք Փերե եկան, Դիոկլեսի տունը հասան:
Սա զավակն էր Օրսիլոքի՝ Ալփիոսից ծնունդ առած:
490 Այնտեղ նրանք գիշերեցին, իսկ նա նրանց հյուրասիրեց հյուրամեծար:
Երբ խավարից շողշող ծագեց անդ Արշալույսը վարդամատն,
Շուտ լծեցին նրանք ձիերն ու բարձրացան կառքի վրա գեղեցկազարդ
Եվ դուրս եկան մուտքից իսկույն՝ աղքատով բակն անցնելով:
Նա մտրակեց նորից ձիանց, որոնք արագ, ժիր սլացան
Ու արընթաց եկան, հասան դաշտավայրը բազմացորյան,
Որ և ուղին ավարտեցին արագընթաց նժույզներով:
Եվ մայր մտավ արևն արդեն, ճանապարհներն ամենուրեք
պատեց խավարն:

Ե Ր Գ Հ Ո Ր Ր Ո Ր Պ

ԼԱԿԵԴԵՄՈՆՈՒՄ

Եկան նրանք Լակեդեմոն, որը ծածկված է լեռներով
Եվ սլացան ուղիղ դեպի ապարանքը փառասլակ Մենելայի,
Որին գտան խնչույքի մեջ իր ազգական շատ մարդկանց հետ՝
Անդ իր որդու և անբասիր իր աղջըկա հարսանիքը կատարելիս:
Իր դատրիկին նա տալիս էր անպարտելի Աքիլեսի ազնիվ որդուն,
Քանզի նրան խոստացել էր դեռ Տրոյայում, վաղուց ի վեր:
Եվ կատարվում էր հարսանիքն հիմա կամքով աստվածների:
Արդ՝ իր դատերն հիմա կառքով և ձիերով ճանապարհ էր դնում նա
Դեպ փառաշուք այն քաղաքը միրմիդոնցոց, որտեղ իշխում էր
փեսացուն:

10 Իսկ աղջըկան ապարտացի Ալեկոորի բերում էր նա այժմ
իբրև կին

Իր մեծագոր և սիրելի պերճ զավակին՝ Մեգապեթին:
Սա ծնվել էր մի ժամանակ նրա տանը ստըրկուհուց,
Զի աստվածներն Հեղինեին չը կամեցան պարզել էրկրորդ զավակ,
Երբ նա ծնեց Հերմիոնեին, որ տեսքն ուներ ոսկեպսակ Ափրոդիտի:
Այդպես ահա հրճվում էին պերճ խնչույքով բարձրակտուր մեծ
շենքի մեջ

Մեծահոջակ Մենելայի ազգականներն ու դրացիք բազմաբազում:
Իսկ նրանց մեջ քաղցր երգում էր գուսան-երգակն աստվածային
Եվ կիթառով հնչում խաղեր: Նրանց սուաջ անդ, մեջտեղում,
Երկու միմոս թախալգոր էին գալիս, երգչի վեհ երգը հնչելիս:
20 Մինչդեռ հերոս Տելեմաքոսն ու Նեստորի հրաշք որդին
Ուղիղ եկան և ձիերով դարպասի մոտ կանգ առան:
Իսկ մեծամուն Մենելայի կառավարիչը տնօրեն՝
Էտեոնեսը քաջագոր, դուրս վազելով, տեսավ նրանց
Ու ետ դարձավ շուտ դեպի տուն, որ լուր բերի ազգավարին
իր դյուցազուն:

Արդ՝ նա նրան մոտիկ կանգնեց և խոսքն ասաց իր թևավոր.
«Երկու եկվոր կամ այլազգի մարդ կա այստեղ, ո՛վ Մենելայ
աստվածասուն.

Եվ ծագումով կարծես նույնիսկ նմանվում են գերամեծար Չևսի ցեղին:
Ասա, արդո՞ք մենք արձակե՞նք նրանց ձիերն արագավագ,
Թե՞ ուղարկենք, որ որոնեն մի այլ մարդու, որն ընդունի այստեղ
նրանց»:

30 Խիստ զայրացավ նրա վրա և խոսք ասաց Մենելայը խարտիշագեղ.
«Բռեթոսյան էտեռնես, սուսջ այդպես պանդուր չէիր ամենևին.
Մինչդեռ հիմա, ինչպես մանուկ, հիմար բան ես դու դուրս տալիս:
Զէ՞ որ և մենք գնացել ենք հյուրընկալման շատ մարդկանց մոտ
Եվ այդպես էլ վերադարձանք ու տուն հասանք. թող որ Չևսը
այստեսես

Աղետներից մեզ ազատի: Գնա՛ շուտով նրանց ձիերը արձակիր
Եվ հյուրերին էլ բեր այստեղ, որպեսզի լավ հյուրասիրվեն»:
Այդպես ասաց: Իսկ նա տնից շուտ դուրս թռավ, ապա կանչեց
Այլ քաջածիր ծառաների, որ հետևեն նրանք իրեն:

Այդպես իսկույն արձակեցին անդ անուրից նրանք ձիերը քրտնաթոր
40 Ապա նրանց հապճեպ տարան ու կապեցին գծույզների մտրի մոտ,
Առջևն իրենց լցրին աճար և ցանեցին վերուստ գարի:
Կտքը տարան և հենեցին անդ՝ սրահի շողշող պատին,
Իսկ հյուրերին ներս տարան տունն աստվածային, որտեղ նրանք,
Լի զարմանքով, նայում էին փարթամ շենքին դյուցասանունդ թագավորի.
Մինչ բարձրաբերձ ողջ ապարանքը փտտապանձ Մենելայի
Լցված էր լի՝ կարծես լուսնի և արևի լուսածաճանչ շողշողունով:
Երբ, նայելով, նրանք այդպես, ականատես, լավ հագեցան,
Դուրս գնացին դեպի ողորկ լոզարանը լողանալու:

Այնտեղ նրանց ստրկուհիք լավ լողացրին և օժեցին փայլուն լողով,
50 Ապա հագցրին բրդե բաճկոն և պատմունան նկարագարդ:
Այնժամ եկան ու բազմեցին նրանք կողքին Ատրևտորդի Մինելայի:
Աղախինը լվացվելու շուրջ բերեց պերճ գավի մեջ մի ոսկեղեն,
Լցրեց նրանց, որ լվացվեն ամանի մեջ արծաթաշեն.
Ապա քաշեց, նրանց սուսջ դրեց ողորկ հղկված սեղան:
Մտանապես մեծարգո կինն բերեց դրեց հացը սուստ,
Այն պահիս արաչարներից բազմապիսի շատ ուտեստներ:
Իսկ մատրոնական հապճեպ նրանց սուսչարկեց ափսեները
Լցված տարբեր մետղեղով և բաժակներ դրեց ոսկի:
Եվ Մենելայն խարտիշագեղ ողջույնի խոսք ողղեց նրանց և այս ասաց.

60 «Կուշտ հաց կերեք և ողջ լեռուք: Երբ ուտեստով հագեցնաք դուք,
Ապա նոր ձեզ հարցում կանեմ թե ինչպիսի մարդիկ եք դուք,
Քանզի գիտեմ, որ անհայտ չեն ձեր ծագումը և զարմը ձեր ծնողների,

Այլ երևի ցեղից եք դուք Չևսից ծնված մականակիր արքաների:
Ես չեմ կարծում, որ ձեզ նման վեհ քաջերը ծնված լինեն ստոր
մարդուց»:

Անես, ապա վերցրեց ձեռքով եզան պարսարտ թիկնամները
խորովված,

Որ իր բաժինն էր պատվավոր, և՛ այն նրանց մեկնեց իսկույն:
Այնժամ նրանք ձեռք զարկեցին պատրաստ դրած ուտեստներին:
Երբ հագեցան կերովսումով, որքան սիրուն էր տեսչում իրենց,
Նոր Տելեմաքն այդ ժամանակ խոսքով դիմեց ծեր Նեստորի վեհ
գավակին՝

70 Յոր գլուխը նրան թեքած, որ այդ ոչ ոք անդ չիմանա.
«Մի լա՛վ նայիր, Նեստորածին, ո՞ն, սիրելիդ դու իմ սրտի.
Այս շողունին պերճ արուրի, որով դահլիճն է զարդարված,
Ոսկի, արծաթ պանունանքին, վառ փղոսկրին, քահրիքարին.
Այդպես, կարծեմ, օլիմպիացի Չևսի տունն է ներքուստ զուգված:
Եվ այնքա՛ն կա սքանչելիք անպատմելի, որ հիացած եմ նայելով»:
Այդպես ասաց նա կամացույ: Բայց հասկացավ Մենելայը
խարտիշագեղ,

Ուստի նրանց դիմեց իսկույն և խոսքն ասաց այս թևավոր.
«Ոհ, սիրելի իմ գավակներ. ոչ, չի կարող որևէ մեկը մարդկանցից
Մրցել անմահ հայր Չևսի հետ, զի անեղծ եմ և՛ տունը իր, և՛
գույքն ու զանձն»:

80 Մինչ մարդկանցից ինձ մրցակից գուցե լինի մեկն իր գույքով,
գուցե և ոչ:
Ես եմ դարձել ես ութնորդ տարին միայն, իսկ կայքն ու զանձը
այս ամբողջ

Ես բերել եմ նավերիս մեջ՝ հար շրջելով և տտապանք միշտ կրելով:
Թափառել եմ ես Կիպրոսում, Փյունիկիայում, Եգիպտոսում:
Եղել եմ ես եթովպացոց, սիդոնացոց, էրեմբների երկրում անգամ,
Լիբիայում, որ նորածին գառները իսկ եղջյուրավոր են միշտ լինում,
Որ ծնում են ոչխարները ամեն տարի երեք անգամ,
Եվ տերն իշխող կամ հովիվը այնտեղ բնավ կարիք չունի
Ո՛չ պանրի, ո՛չ էլ մսի, ո՛չ քաղցրահամ անուշ կաթի:

Ամբողջ տարին և անընդհատ ոչխարները կաթ են տալիս անուշահամ:
90 Երբ ես այդպես շրջում էի երկրե-երկիր, հավաքելով գույքն անհամար,
Նեճզ մարդասպանն անակնկալ ու գաղտնաբար սպանել էր
իմ մեծ եղբորը,

Սպանել էր նա՝ անիծյալ նրա կնոջ նեճգութունից օգտվելով:
Ուստի բնավ ես չեմ հրճվում հարստությամբ այս անսպառ:
Դուք լսել եք այս ամենը ձեր հայրերից, ով էլ թեկուզ նրանք լինեն:

Որքա՞ն եմ ես տանջանք կրել, ինչպե՞ս եմ ես գրկվել տնից
իմ սեփական,
Ապարանքից իմ հոյաշուք, գեղակառույց, բյուր թանկարժեք իրերով լի:
Ա՛խ, պատրաստ եմ տանն իմ ապրել՝ ունենալով լուկ երրորդ մասն
այս ամենի,
Եթե միայն այժմ կենդանի լինեմ նրանք, որոնք կորան լայն Տրոյաշում,
Կորան այնտեղ, օտար երկրում՝ նժդեհ, հեռու պերճ Արգոսից
մեր ձիաբույծ:

100 Մինչդեռ այսպես՝ նստած եմ ես ապարանքում այս անօգուտ՝
Ողբն անելով այդ ամենքի, հեծե՛ծում եմ ես շատ հաճախ, դառնակակիծ
Եվ մերթ լացով ամոքում եմ վշտակոտոր ես իմ հոգին,
Մերթ ընդհատում եմ ջալլանքն իմ, քանզի շատ շուտ հագեցում եմք
մենք արցունքով:
Մինչ ոչ ոքի այդ բոլորից ես չեմ ողբում այնքա՞ն սրտանց, որքան
մեկին,
Եվ դառնադատն եմ ինձ թվում կրեն ու քունն իմ նրա մասին միտք
անելիս,
Քանզի ոչ ոք արելանց մեջ չի տառապել այնքան ուժգին.
Որքա՞ն տանջանք, որքա՞ն գրկանք է կրել նա՝ Ռդիսուք
աստվածասուն:

Ճակատագիրն էր վիճակել, որ նա կրի բազում վշտեր:
Ահավասակ՝ և իմ վիշտը նրա համար անսահման է և անամոք:
110 Ախ, վաղուց է, որ նա չկա, և չգիտենք, կենդանի՞ է, թե՞ մահացած:
Գուցե նրան ողբում են այժմ ծեր Լաերտը և խորհմաց Պենելոպեան
Կամ Տելեմաքն, որին թողեց նա իր տանը դեռ նորածին:
Այդպես ասաց և նրա մեջ հուզեց տենչանք նա խորախոր՝
Լալ ու հեծել իր հոր համար: Եվ նա թափեց իր այտերին, գետնի վրա
Վարար արցունքն իր աչքերից, երբ հոր մասին լսեց այդպես.
Ապա կարմիր պատմունճանի փեշը ողողեց դեպ իր աչերն երկու ձեռքով:
Մենեղառն այդ անկատեց ու միտք արեց ինքը իր մեջ և իր սրտում.
Պիտ սպասե՛լ, որ նա ինքը լուր հոր մասին խոսքն սկըսի,
Թե՞ մանրամասն հարցում անել և ամեն ինչ պարզ իմանալ:

120 Երբ իր սրտում և իր հոգում նա այդ մասին միտք էր անում,
Բարձրակտուր ու քաղցրաբույր իր սենյակից հանդես եկավ ինքն՝
Հեղինեն,
Որն իր տեսքով նմանվում էր ոսկեպար Արտեմիսին:
Նրա համար գեղեցկակերտ պերճ մի աթոռ իսկույն դրեց անդ
Ադրեստեն,
Իսկ Ալկիպպեն ոտքերի տակ բերեց փռեց մի նրբագեղ ու բրդե գորգ:
Ապա Փիրոն բերեց, հանձնեց նորք զամբյուղը արծաթակերտ
ու գեղեցիկ,

Որը նրան պարգևել էր Պոլիքոսի կինն՝ Ալկանդրեն՝
Թեքեի մեջ եգիպտական, ուր տները լիքն են գույքով բյուրաբազում:
Մինչ Պոլիքոսն ընծայել էր Մենելային արծաթակերտ գույգ լոգարան,
Երկու փարթամ եռոտանի և տասը տաղանդ մաքուր ոսկի:

130 Եվ բացի այդ՝ կինը նրա Հեղինենին նվիրել էր
Մի ոսկեկոտ շքեղ իլիկ և դրա հետ՝ անիվավոր մի արկղիկ,
Որը շինված էր արծաթից, իսկ եզրերը ոսկուց էին:
Արդ՝ աղախին Փիրոն բերեց, հանձնեց նրան արկղիկը այդ՝
Լցված թելով ճարտարագործ. դրա վրա այն իլիկն էր
Որի շուրջը շողշողում էր բուրդը քնքուշ ու կապուտակ:
Եվ Հեղինենն բազմեց շքեղ այն բազմոցին, ոտքը դրեց աթոռակին,
Ապա իսկույն խոսքն իր ողողեց նա ամուսնուն և մանրամասն
հարցմունք արեց.
«Արդյոք գիտե՞ս, Չևսի ծնունդ Մենելաոս, ի՞նչ մարդիկ են
սրանք այստեղ.

Ո՞ր ցեղից են կամ որտեղի՞ց, որ մեր տունն են եկել հիմա:
140 Մխալ եմ ես թե ոչ, սակայն, պիտ գուշակեմ, և իմ սիրուն է դրդում
այդպես.
Արդ՝ իմացիր, որ այսպիսի նմանություն բնավ երբեք չեմ տեսել ես,
Ո՛չ կանանց մեջ, ո՛չ էլ նույնիսկ տղամարդկանց. և նայում եմ ես
զարմանքով,

Թե ինչպե՞ս սա նման է քաջ Ռդիսուսի փալյուն որդուն՝ Տելեմաքին,
Որին այնժամ հայրը չէ՞ որ տանը թողեց դեռ նորածին,
Երբ արելանք արշավեցին անդ ինձ համար՝ շնաբարո կնոջ համար,
Դեպի Տրոյա և նյութեցին պատերազմը այն ահալոր»:
Պատասխանեց նրան իսկույն և խոսք ասաց Մենելայը
խարտիշագեղ.

«Ես էլ այդպես եմ մտածում, ինչպես կարծում ես դու, ա՛յ կին.
Նման է սա իրավ նրան իր քայլվածքով ու ձեռքերով,
150 Նայվածքով էլ իր աչքերի, տեսքով գլխի զանգուրների:
Իսկ երբ հիմա ես, հիշելով Ռդիսուսին, խոսք ասացի նրա մասին,
Թե որքան նա աղետ ու վիշտ իրոք կրեց անդ ինձ համար,
Սա սկսեց իր աչքերից արցունք թափել դառնակակիծ
Ու բարձրացրեց դեպ աչքերն իր փեշը կարմիր պատմունճանի»:
Պատասխանեց նրա խոսքին Պիսիստրատը Նեստորածին.
«Ո՛վ Մենելայ Ատրևսորդի, դիցասնունդ դու ազգապետ,
Միշտ որ որդին է սա նրա, հանց ասացիր դու բանիմաց.
Բայց համեստ է և ամոթխած, պատկառում է նա չարագանց,
Իբրև նոր հյուր օտար տեղում, հանդգնաբար քո դեմ խոսել ու
բարբառել:

160 Մինչ քո ձայնը մենք լսում ենք, հանց աստծու խոսք ու պատգամ:

Ահալխակ, ինձ պատվիրեց գերեմացի Նեստորն իշխան՝
Գալ սրա հետ իբր ուղեկից, քանզի խորունկ նա փափագում էր
տեսնել քեզ,
Որպեսզի դու որևէ կերպ սրան խոսքով և կամ գործով օժանդակես.
Իրավ, որդին բացակա հոր՝ միշտ էլ իր տանը սեփական
Կրում է բյուր ցավ ու տանջանք, երբ որ չունի մի մտերիմ կամ
օգնական,

Ինչպես և այժմ Տեղեմաքն է. բացակա է հայրը նրա,
Իսկ ազգի մեջ մեկը չը կա, որ բազմաչար աղետներից նրան փրկի»:
Եվ Մենելայն խարտիշագեղ իսկույն նրան պատասխանեց
ու խոսք սասց.

«Ավա՛ղ, միթե իմ հարկի տակ ես տեսնում եմ որդուն սիրած
բարեկամիս,

170 Որն ինձ համար կրել է միշտ բյուրաբազում փորձանք ու ցավ,
Մինչ ես նրան, վերադարձիս, հույս ունեի աստ ընդունել ավելի լավ,
Քան թե բոլոր այլ արգիյանց, եթե թույլ տար Օլիմպացի Չևան հետագոջ՝
Մեզ ետ դառնալ դեպի մեր տուն լայն ծովերով, նավերի մեջ
արագընթաց:

Պիտ կանչեի Իթակեից իր գավակի ու մարդկանց հետ և իր գույքով,
Որ արգոտում մի քաղաք տամ բնակության և տուն շինեմ նրան մի նոր.
Նրա համար միտք ունեի ազատ անել մեկն իմ մոտիկ քաղաքներից,
Տեղափոխել անդուստ մարդկանց, որոնց վրա իշխում եմ ես:
Մենք մերթ ընդ մերթ կտեսնվեինք աստ միմյանց հետ և էլ ոչինչ
չէր խանգարի

Մեր արտալի մտերմությանն, մեր բերկրանքին ու ջերմ սիրույն,
180 Մինչև այն օրն, երբ մահվան սև ամպը ծածկեր մեկն ու մեկիս:
Մեր երջանիկ այդ վիճակին նախանձարեկ պիտի լիներ ինքը աստված,
Որն և գրկեց միայն նրան, այդ դժբախտին, վերադարձից»:

Այդպես ասաց, և բոլորը փափագեցին լաց ու կոծի և արցունքի:
Դառն հեկեկաց և Հեղինեն արգիացի, դուստրը Չևի.
Խոր ջայլեցին և՛ Տեղեմաքն և՛ Մենելայը Ստրիդես:
Արցունքները անդ չզսպեց և Նեստորի հրաշք որդին,
Քանզի հիշեց նա իր սրտում սիրած եղբորն իր անբասիր՝ Անտիլոքին,
Որին մի օր սպանել էր փալլուն որդին ճաճանչագեղ Արշալույսի:
Արդ՝ հիշելով նա այժմ նրան, այսպես խոսեց ու թևավոր իր
խոսքն ասաց.

190 «Ատրևտորդի, Նեստորը ծեր, ամեն անգամ իր հարկի տակ քեզ հիշելիս
Երբ որ մեր մեջ խոսք էր լինում, ասում էր մեզ, թե մարդկանց մեջ
մահկանացու

Դու ամենից գերազանցն ես իմաստությամբ և քո խելքով:
Արդ՝ ինձ ասա, եթե ունես դու ասելիք, որովհետև այժմ ինձ բնավ

Հանելի չէ, ընթրիքից ետ, ջայլանք անել արտոսրախառն,
Մինչ կծագի արդեն շուտով վաղ արշալույսն, ժամը կգա հեծեծանքի,
Երբ կը ողբան ամեն մարդու, ում հասել է օրհասը դառն.

21 «Որ այդ է մահկանացու թշվառ մարդկանց միակ պատիվն ու
հարգանքը,
Որ սովոր են մազեր խուզել և դեմքն իրենց դառն արցունքով
միշտ ոռոգել:

Մեռավ նաև իմ եղբայրը, որ վատթար չէր արգիյանց մեջ.
200 Նրան, կարծեմ, դու լավ գիտես, իսկ ես նրան ոչ տեսել եմ և ոչ գիտեմ.
Մինչ ասում եմ, որ Անտիլոքն հոչակված էր իբրև հերոս՝
Հանց ամենքից ավելի մեծ արագավազ քաջամարտիկ
Եվ խոսք սասց նրան իսկույն ի պատասխան Մենելայը
խարտիշագեղ.

«Ո՛հ սիրելիս: Իրավ այնպես դու ասացիր, ինչպես կարող էր այդ ասել
Կամ կատարել մի խորիմաց իմաստուն մարդ կամ չստիսհասը
մեծապես.

Այդպիսին էր և հայրը քո, ուստի գիտես դու խոսք խոսել իմաստալի:
Ծա՛տ դյուրին է ցեղն իմանալ այն վեհ մարդու, որին որդին Կրոնոսի
Սահմանել է երջանկություն թե՛ ծնվելիս և թե՛ կյանքում ամուսնական,
Ինչպես ահա շնորհել է նա Նեստորին երջանիկ կյանք.

210 Ապրել երկար և ծերանալ տանն իր ուրախ ու անվրդով
Եվ ունենալ նիզակակիր ու բանիմաց ազնիվ որդիք:
Վերջ տանք սակայն լաց ու կոծին, որ մեզ այսպես հուզեց սրտանց,
Եվ մեր ընթրիքն հիշենք կրկին: Թող ջուր լցնեն մեր ձեռքերին,
Իսկ ասելիքն իմ, հիրավի, Տեղեմաքին, դեռ կլինի վաղ առավոտ.
Այն ժամանակ մենք կը խոսենք, գրույց կանենք մենք իրար հետ»:
Այդպես ասաց: Տնօրենը փառապսակ Մենելայի՝
Աստիլոնը քաջաժիր, լցրեց նրանց ձեռքերին ջուր.
Ապա նրանք, ոտնետներին ձեռք զարկելով, վայելեցին:
Մինչդեռ մի այլ գործ հորինեց Չևի ծնունդ պերճ Հեղինեն.

220 Իսկույն ցանեց նա գինու մեջ, որը նրանք խմում էին, գաղտնի մի դեղ՝
Անվիշտ դարձնող, չարն մոռացնող ու ամենայն աղետներից մարդուն
փրկող:

Ով ընդուներ դեղն այդ հանկարծ բաժակի մեջ լցված, լուծված,
Նրա դեմքին այդ ամբողջ օրն էլ չէր կաթա ոչ մի կաթիլ արտասուքի.
Նույնիսկ եթե հայրը նրա կամ նրա մայրը մահանար,
Նույնիսկ եթե նրա առաջ սիրած որդուն կամ եղբորն իր
Սուր պղնձով խողխողեին, և նա տեսներ այդ աչքերով իր բացահայտ:
Դուստրը Չևի դեղն այդ ունեի հանց գերհրաշք սքանչելիք,
Եվ դա նրան նվիրել էր եգիպտացի Պոլիսամենն՝
Կինը Թունի, որին երկիրն է հացաբեր այդ դեղերով օժտում առատ:

230 Իսկ դրանց մեջ շատ կա խառնուրդ բուժիչ ու լավ, շատ կա և թույն:
 Բոլորն այնտեղ բժիշկներ են և գիտությունք այլ մարդկանցից
 միշտ գերազանց,
 Քանզի բոլորն այդ երկրի մեջ ստաջացել են Պեանից:
 Եվ երբ ցանեց նա դեղն այդպես, հրամայեց բաժակներում խառնել
 գինին,
 Այա, կրկին բարբառելով, այսպես խոսեց դուստրը Չևսի.
 «Դուցասնունդ դու Ատրիդես, ով Մեներայ, և դուք, որդիք ազնվաբարո,
 Գերամեծար հզոր մարդկանց. ամեն մարդու՝ սրան-նրան, իբրև փիճակ,
 Չևսը տալիս է և՛ բարիք, և՛ պատուհաս, քանզի նա է ամենագոր:
 Ահավասիկ՝ նստած այստեղ, ապարանքում, խնջույք արեք դուք
 փառապանծ
 Եվ հրճվեցեք զրույցներով: Իսկ ես անա մի վայելուչ բան պատմեմ ձեզ:
 240 Ես չեմ կարող խոսքով պատմել կամ թվարկել բյուրաբազում
 գործերը այն,
 Որոնք այնժամ անդ կատարեց Ոդիսևսը բազմաշարչար,
 Այլ միմիայն կպատմեմ այն, ինչ հորինեց նա՝ մեծ հերոսը քաջագոր,
 Ու կատարեց անդ Տրոյայում, ուր աղետներ շատ կրեցիք դուք՝
 արեչանք:
 Ինքը իրեն ամոթալի հարվածներով այլանդակած, իբրև ծեծված,
 Իր ուսերին ձգած զազիր մի ցնցոտի, ձորձ մի թշվառ,
 Որպես ստրուկ թշնամական, նա ներս խուժեց լայնափողոց
 Իլիոն քաղաք
 Ու թաքթաքուր քայլեց այնտեղ, իբր անձանոթ, որպես մորիկ,
 Որպիսին անդ բնավ չկար նավերի մեջ արեացոց:
 Այդպես, դրան նմանվելով, քաղաք մտավ, ու խաբվեցին այնտեղ
 դյուրավ:
 250 Բայց միայն ես ճանաչեցի նրան, թեպես այդպես մորիկ նա ձևացավ,
 Ու կամեցա հարցուփորձով բան իմանալ, բայց նա, խելոք, խույս
 էր տալիս:
 Արդ, մի անգամ, երբ ես նրան լավ լողացրի և օժեցի մաքուր յուղով,
 Երբ հագուստը ես հագցրի, երդում կերա ես անավոր,
 Որ չեմ հայտնի ոչ ոքի, թե Ոդիսևսն է տրոյացոց մեջ գտնվողն այդ,
 Մինչև որ նա դառնա, գնա դեպի նավերը ճեսքնթաց:
 Այնժամ անա նա ինձ հայտնեց արեացոց խոր միտումները խորամանկ:
 Հետո, սրով երկայն ու սուր տրոյացոց կոտորելով,
 Վերադարձավ դեպ արգիլանք՝ նրանց տալով բազմապիսի նոր
 համբավներ:
 Եվ քարձրածայն հեկեկացին տրոյուհիք, բայց սիրտը իմ խորունկ
 խնդաց,

260 Քանզի այնժամ հոգիս արդեն դրդում էր ինձ ետ դառնալ շուտ
 դեպի մեր տուն.
 Ողբում էի ես մեղսանքն իմ, որին դրդեց ինձ Ափրոդիտեն դավադիր.
 Երբ չարադավ հեռացրեց ինձ հարազատ հայրենիքից,
 Որ թողեցի իմ դատրիկին, իմ տունն ու տեղն, իմ ամուսնուն,
 Որ վսեմ է ու գերազանց թե՛ իր տեսքով և թե՛ խելքով իմաստալի:
 Պատասխանեց նրան իսկույն Մեներայը խարտիշագեղ.
 «Իրավ, ա՛յ կին, այդ ամենը, ինչպես հարկն է, ճիշտ ասացիր:
 Բազմաբազում հերոս մարդկանց միտքն ու բնույթն ես իմացա,
 Քանզի անցա ու շրջեցի շատ երկրներ բազմապիսի,
 Մակայն երբեք այդպիսի մարդ ես չեմ տեսել իմ աչքերով,
 270 Որպիսին էր Ոդիսևսը համբերատար և բազմափորձ:
 Արդ՝ օրինակ, ինչ հորինեց և կատարեց քաջն այդ տոկուն,
 Երբ ձիու մեջ դարանամուտ՝ մենք, մեծազնիվ արեացիք,
 Տանում էինք տրոյացոց ժանտ կոտորած, մահ և կորուստ:
 Այնժամ, ա՛յ կին, եկար և դու, գուցե դևն այդ քեզ ներշնչեց՝
 Ցանկանալով տալ տրոյացոց փառքն ու պատիվը հաղթության:
 Մինչ՝ մոտեցավ քո ետևից և Դեիփորն աստվածակերպ:
 Ծոշափելով՝ դու եռակի պտույտ եկար դարանի շուրջն մեծափոր
 Եվ կանչեցիր դու անունով բոլոր ազնիվ դանաչացոց՝
 Պատճենելով արգիացոց կանանց ձայնը սովորական:
 280 Ես, Տիդևսյանն այդ միջոցին և Ոդիսևսը դյուցազուն,
 Փայտյա ձիու մեջը նստած՝ լսում էինք, ինչպես էիր կանչում դու մեզ:
 Մենք՝ երկուսով, անզուսպներս, փափագառտենչ շարժվեցինք անդ,
 Որ այնտեղից դուրս գանք շուտով կամ ձայն տանք քեզ, բայց Ոդիսևսն
 Արգելելով՝ մեզ խիստ զսպեց, թեպետ ձգտում էինք սաստիկ.
 Իսկ մյուս որդիք արեացոց անխուս, էին այնժամ և լուռ,
 Եվ միմիայն Անտիկոսը անդ կամեցավ գեթ խոսք ասել ու ձայն
 տալ քեզ,
 Բայց Ոդիսևսն իսկույն կեթ իր ձեռքերով մեծակորով
 Մեղմեց, փակեց նրա բերանն և այդպիսով փրկեց որդոց նա արեչանց,
 Ձեռքը այնքան բերնին պահեց, մինչև դրդեց քեզ Աթենասը՝ հեռանալ:
 290 Եվ անդ նրան պատասխանեց Տեղեմաքոսը խորիմաց
 «Դուցասնունդ Ատրևտրդի, ո՛վ Մեներայ ազգերի տեր.
 Ցավալի է այժմ ստալել, որ չփրկվեց նա ժանտ մահից իր չարաբաստ,
 Թեկուզ և նա ներքուստ՝ իր մեջ երկաթի պես սիրտ ունեք:
 Մակայն թույլ տուր, որ մենք գնանք դեպ անկողին, որպեսզի մենք
 Գեթ հագեանանք՝ մեր աչքերին իջնող քնով հանգքստավետ»:
 Այդպես ասաց: Իսկ Հեղինեն արգիացի՝ պատվեր տվեց
 ստրուկներին՝
 Մրահի մեջ երկու մահիճ սարքել իսկույն, նուրբ անկողին,

Մեծ խնամքով փոել այնտեղ գորգեր՝ շքեղ և տալ նաև վառ, ծիրանի
Երկու վերնակ, որ վերևից ծածկվեն նրանք վայելչապես:
Եվ ստրուկներն հապճեպ տնից դուրս վազեցին, ձեռքին իրենց

ջահ ու ճրագ,

300 Անկողիներն հարդարեցին, ապա բամբերն իսկույն նրանց կանչեց,
տարավ:

Ու պառկեցին տան սրահում նրանք հանգիստ ու միասին՝
Տեղեմաքոսն հերոսագոր և Նեստորի հրաշք որդին:
Մինչ բարձրաշեն ապարանքի խորքում քնեց Ատրիդեսը,
Կողքին պառկեց պերն Հեղինեն՝ աստվածուհին կանանց մեջ:
Իսկ երբ ծագեց մութ խաղարից Արշալույսը վարդամատն,
Իր մահիճից շուտ վեր կացավ Մենելայը քաջամարտիկ ու փառաշուք.
Զգեստն հագավ, իր սուր թուրը իսկույն կեթ ձգեց ուսին
Եվ ափսոսակ իր ոտքերին մուկերն հագավ նա գեղեցիկ
Ու դուրս եկավ ննջարանից, տեսքով ինչպես անմահ աստված:

310 Գնաց, նստեց Տեղեմաքի կողքին այնտեղ, անվամբ կոչեց և խոսք ասաց.
«Ի՞նչ կարիք կար, հերոսասիրտ Տեղեմաքոս, որ դու այդպես

այստեղ եկար՝

Լայնատարած ծովի լանջով դեպի փարթամ Լակեդեմոնն աստվածային:
Համայնակա՞ն մի գործ է դա, թե՞ մասնավոր: Ծշմարտացի

դու ինձ ասա»:

Պատասխանեց իսկույն նրան և խոսք ասաց Տեղեմաքոսը խորիմաց
«Դյուցասնունդ Մենելասու, ազգերի տեր դու Ատրիդես.
Ես եկել եմ, որ դու գուցե իմ հոր մասին մի լուր տաս ինձ:
Քարոքանդ է տունս արդեն. բերրի դաշտերն անօգուտ են և ամայի:
Լիքն է տունս թշնամական, լիրբ մարդկանցով, որոնք անգույթ
Կոտորում են մանր անասուն և համբաբայ ու կորեղջյուր եզները մեր.

320 Դրանք իմ մոր խոսնայրներն են վեա ու նպերտ և մոլեգին:

Եվ ես հինա ընկած եմ քո ծնկների մոտ. արդյոք դու չե՞ս բարեհաճ
Պատմել իմ հոր թշվառագույն բախտի մասին, եթե հարկավ
Տեսել ես դու քո իսկ աչքով, կամ լսել ես դու թափառող մեկն ու մեկից:
Եվ իսկապես՝ վատաբախտ էր մայրը ծնել նրան մի՞ օր:
Սակայն բնավ չսպանուես ինձ հարգելով կամ, ցավակից, չը մեղմացնես.
Այլ ամեն բան, ինչ որ տեսել կամ լսել ես, դու ինձ պատմիր

ճշմարտաբար:

Աղաչում եմ, եթե իրոք երբևիցե իմ մեծափառ Ռդիսես հայրն
Անդ՝ Տրոյացում, ուր կրել եք դուք, աքյանք, բյուր տառապանք,
Կատարել է քեզ խոստացածը նա գործով և կամ խոսքով, դու
այդ հիշիր,

330 Եվ ամենը ճշմարտացի ու լիովին այժմ ինձ պատմիր»:
Եվ, վրդովված, Մենելայը խարտիշագեղ նրան ասաց.

«Ավա՛ղ, ինչպե՞ս. մի՞թե դրանք, այդ անիրավ, անգոր մարդիկ,
Ցանկանում են պառկել շքեղ մահիճի մեջ կորովագույն մեծ դյուցազնի.
Բայց ճիշտ այնպես, ինչպես եղնիկն երկու ծծկեր նորածնունդ

իր ձագերին

Թողնում է անդ՝ անտառապատ կաղաղի մեջ հաղթ առյուծի.
Ինքն էլ ապա, արածելով, թռչկոտում է դեպ դաշտն ու ձորը

դալարուտ,

Մինչ այուծը կորովագույն, ետ դառնալով դեպի որջն իր,
Եղնորթներին այդ երկվորյակ մահ է բերում և ժանտ կորուստ,
Այդպես էլ հենց Ռդիսեսը խոսնայրներին մահ կը նյութի մի

խայտառակ:

340 Ո՞հ, եթե նա, օգնի՛ր Չես հայր, ո՞վ Ապոլլոն, դո՛ւ Աթենաս,
Ես գա այնպես, ինչպես որ էր մի ժամանակ Լեսբոս կղզում

գեղեցկակերտ,

Երբ դուրս եկավ մրցամարտի Փիլոմելիդ մեծ քաջի դեմ ու քաջագոր,
Հաղթ հարվածով նրան ուժգին զարկեց գետին, ու ցնծացին աքեացիք,
Եթե այդպես խոսնայրների դեմը կանգներ Ռդիսեսը կորովալիր,
Ծուռ կլափեր մահը նրանց, թանկ կնստեր ամուսնության գործը

այնժամ:

Իսկ այն, ինչ որ խնդրում ես այժմ, կը հայտնեմ քեզ ճշմարտացի,
Առանց շեղման և բնավին չխաբելով՝ ես կպատմեմ:
Ահավասիկ՝ ինչ որ իրոք հայտնեց, ասաց Ծովածերուկն արդարախոս,
Ես բացեքաց, չծածկելով և ոչ մի խոսք, քեզ ամեն բան կասեմ հիմա:

350 Ես փափագում էի սրտանց ետ դառնալ տուն, բայց աստվածներն
Ինձ պահեցին Եգիպտոսում, քանզի նրանց ես գոհ-գեղում չէի արել:
Անմահները պահանջում են, որ միշտ նրանց պատգամները հիշեն

մարդիկ:

Կա մի կղզի ծովապարտիակ, միշտ մեծագոչ ու արհնակոծ,
Անդ՝ մերձակա Եգիպտոսին, և անվանում են այն Փարոս,
Որն այնքան է արից հեռու, որքան մի օր անցնում է նավը մեծափոր,
Երբ ետևից նրա սաստիկ հողմն է փչում մոնչացող և ուղեկից:

Անդ կա հարմար նավակայան, որից մեկնում են համաչափ նավերը

միշտ՝

Վերցնելով ջուրը մթագույն, որքան պետք է, իբրև պաշար:
Քսան օր այնտեղ աստվածները ինձ պահեցին՝ խափանելով

ճանապարհն իմ.

360 Այդ միջոցին հանդես չեկավ և ոչ մի հողմ հաջող շնչով,
Որն ուղեկից է նավերին լայն լանջերում լայնատարած մթին ծովի:
Այնտեղ արդեն սպառվում էր պաշարն ամբողջ, մարդկանց ուժը,
Եթե հանկարծ չը ցավակցեր և չփրկեր ինձ Իդրոթես աստվածուհին,
Կորովալիր ծովածերուկ Պրոտեսի դասրիկն անմահ,

Որի սիրտը ամենից շատ և չափազանց էս հուզեցի,
Երբ հանդիպեց ու ինձ տեսալ: Շրջում էի ես մե՜ն-մե՜նակ,
Ընկերներից իմ հեռացած, որ՝ ձուկ էի՞ն որսում այնտեղ՝
Կորագլուխ կարթիկներով, քանզի սուլից ստամոքսն էր տանջում

նրանց:

Եվ դիցումի՜ն, ինձ մոտ գալով, այսպես խոսեց ու խոսք ասաց.
370 «Պանդոն՝որ ես դու, օտարական, թե՞ չափազանց թեթևամիտ.

Գուցե դիտմամբ անփույթ ես՝ դու և հրճվում ես տատապանքով

քո սեփական:

Ձե՞ որ վաղուց արգելված ես կղզու վրա ու չես կարող մի ելք գտնել.

Մինչդեռ այստեղ ընկերներդ վհատվում են սրտով իրոք»:

Այդպես անա նա ինձ ասաց: Իսկ ես նրան ի պատասխան այս ասացի.

«Քեզ էլ կասեմ, ով էլ որ՝ դու լինես, անմահ աստվածունիդ.

Ես կամովի չեմ արգելված այստեղ բնավ, այլ երևի

Մեղանչել եմ ընդդեմ հավերժ անմահների, որ իշխողն են լայն երկնքի:

Սակայն գեթ դու ինձ այժմ ասա, քանզի իրավ աստվածներն են

ամենագետ,

Ո՛վ է կապել անմահներից ճանապարհն իմ վերադարձի,

Ո՛վ է արդյոք ինձ կաշկանդել և չի թողնում անցնել ծովն այս

ձկնավետ»:

Այդ ասացի: Եվ ինձ իսկույն պատասխանեց աստվածունի՜ն.

«Լա՛ր՛ն, ի՞նչ լինի, օտարական, ճշմարտացի թեզ կպատմես

ես ամեն բան.

380 Հաճախակի աստ գայիս է Օմվածերուկն ամենիմաց՝

Եգիպտացի հավերժ անմահ Պրոտեաը, որ ստրուկն է Պոսիդոնի:

Նա լավ գիտի ծովի բոլոր գաղտնարաններն անդրճղային

Եվ հենց ինձ էլ նա է ծընել, զի ասում են՝ հայրն է նա իմ:

Արդ՝ եթե դու, դարան մտած, կարողանաս բռնել՝ նրան,

Քեզ կպատմի նա քո ուղին, չարին իսկական ճանապարհիդ,

Քո վերադարձն և այն, ինչպես պետք է անցնես դու լայն ծովերը

ձկնավետ:

Նա թեզ կասի, եթե միայն դու ցանկանաս, Չևսի գալիսիդ քաջազուն,

Ի՞նչ է արդյոք այնտեղ, քո տանը կատարվել՝ բարի կամ չար,

Այն օրվանից, երբ դիմեցիր դեպ հեռավոր քո ճանապարհը դժվարին»:

390 Այդպես ասաց: Եվ անդ նրան ի պատասխան ես ասացի.

«Դու ինքդ արդ՝ այժմ հորինիր աստվածական այդ ծերուկի դեմ

մի դարան,

Որ նախապես նա չիմանա և խույս չը տա ինձնից իսկույն.

Դժվարին է մահկանացու մարդու համար սանձահարել հաղթ աստծուն»:

Այդ ասացի, և ինձ իսկույն պատասխանեց նա՝ դիցումի՜ն

անմահների.

«Օտարակա՛ն, ես կպատմեմ թեզ ամեն ինչ ճշմարտաբար:

Երբ որ ծագի վառ արևը ու երկնքի ուղիղ մեջտեղը բարձրանա,

Երբ Չեփյուրի շունչը փչի, ծովի ծերուկն ամենագետ,

Մածկված այլաց հոգնակոհակ սև ծփանքով, իսկույն կեթ դուրս

պիտի գա,

Եվ դուրս գալով՝ նա կպտուկի քուն մտնելու անդ անձալի մեջ

լայնափոր:

400 Մերմակ ծովից մաշկոտանի փոկերն ասա, ծովի դատերը գեղեցիկ

Շուտ դուրս կգան և կպտուկեն ծերուկի շուրջը չորս կողմից՝

Տարածելով աղի հոտը խորախոր ու մուգ ծովերի:

Արդ՝ թեզ այնտեղ ես կտանեմ, Արշալույսը հենց որ ծագի,

Կպտուկեցնեմ նրա կողքին: Միայն ընտրիր ուշի-ուշով երեք ընկեր,

Որոնք շքեղ քո նավերում լավագույնն են և կորովի:

Արդ, թեզ ասեմ նաև ամբողջ կախարդանքները ծերուկի.

Նախ՝ նա չորս դին արագ կանցնի և կը հաշվի փոկերն իսկույն,

Երբ որ դրանց աչքի առնի ու հաշվարկի նա հաշվով իր մատների,

Անդ կպտուկի նրանց մեջտեղն, հանց հովիվն է պտուկում միջև

ոչխարների:

410 Ահալխափկ, երբ որ տեսնեք, որ քուն մտավ նա պտուկած տեղն,

Խիզախությամբ ոգեշնչված, հարձակվեցեք, բռնե՛ք նրան,

Բռնեք ամուր, որքան էլ նա ճիգեր թափի խույս տալ, պոկվել.

Նա փորձ կանի փոխվել տարբեր էակների, որ ապրում են երկրի վրա.

Նա կարող է դառնալ և չոր, դառնալ և բորբ հուր ու կրակ:

Սակայն նրան պիտի ու ամուր բռնած պահեք, սեղմե՛ք ուժգին:

Իսկ երբ դառնա նա այնպիսին, ինչպես տեսաք նրան բնած

իր վիճակում,

Ու, դիմելով թեզ, խոսք ասի, հարցում անի, այնժամ, հերոս,

Գործի մի՛ դիր ուժը բռնի, այլ ազատ թող դու ծերուկին,

Սակայն հարցրու. ո՛վ է արդյոք աստվածներից քո վերադարձը

կաշկանդում.

420 Եվ կամ ինչպե՛ս ճամփա ընկնես, ծովը անցնես դու ձկնավետ»:

Այդպես ասաց և ալեկոծ նա ծովի մեջ սուզվեց իսկույն:

Իսկ ես անցա դեպի նավերն, որոնք կանգնած էին ափին ավազածիր:

Երբ ես այդպես գնում էի, հուզվում էր իմ սիրտը ուժգին:

Իսկ երբ շուտով ես հասա իմ նավերին ու ծովեզերքին,

Մենք սարքեցինք իսկույն ընթրիք: Վրա հասավ գիշերն ասա

աստվածային.

Մենք քուն մտանք՝ ծովի ափին, ալիքների հուզմունքի մեջ:

Երբ խավարից ծագեց շողշող Արշալույսը վարդամատն,

Ես ուղղվեցի դեպի ափունքը լայն ծովի և, ծունկ չոքած,

Աղոթեցի աստվածներին ես ջերմագին: Հետքս վերցրի երեք ընկեր,

430 Որոնց վրա ամեն տեսակ ձեռնարկի մեջ վստահ էի ես չափազանց:
Իսկ դիցուհին լայնատարած ծովի խորքը սուզվեց, ապա նա դուրս եկավ
Եվ դուրս հանեց ալիքներից փոկերի չորս փայլուն մորթի:
Բոլորը թարմ ու նոր քերթած: Մինչ իր հոր դեմ նենգություն
էր մտածել նա.

Եվ, փորելով անդ, ծովափնյա ավազի մեջ, մի լայն խանդակ,
Սպասում էր այնտեղ կանգնած: Մենք մոտեցանք նրան իսկույն:
Մեզ փոսի մեջ պսակել տվեց, ամեն մեկիս վրա մորթի փոեց ապա:
Բայց դարանն այդ սարսափելի՝ էր մեզ համար. վերուստ մորթին էր
նողկալի,

Եվ տանջում էր մեզ գարշ հոտը ծովասնունդ այդ փոկերի:
Ո՞վ կարող է հանգիստ պսակել ծովում ապրող հրեշի մոտ:
440 Բայց հորինեց աստվածուհին մեզ փրկարար մի օգնություն.
Ծուռով քերեց անուշաբույր նա ամբրոսիա և այն ցանեց մեր քթերին,
Որն և իսկույն ոչընչացրեց հրեշների հոտը դաժան:
Եվ մենք այդպես համբերությամբ սպասեցինք մինչ առավոտ,
Երբ որ հանկարծ անդ հուլիհույլ դուրս սողացին ծովից փոկերն,
Որոնք հետո միմյանց կողքին անդ պսակեցին՝ ծփանքի մեջ
հուզվող այլաց:
Մինչ կեսօրին ձերուկն հանկարծ ծովից ելավ և փոկերին տեսավ
պարարտ:

Նա բոլորի կողքով անցավ, նայեց, հաշվեց նրանց մեկ-մեկ.
Հրեշների հետ միասին նախ և առաջ հաշվեց և մեզ: Իսկ իր մտքում
Չը կասկածեց, որ դարան կա, ուստի ինքն էլ պսակեց իսկույն:
450 Այնժամ բարձր աղաղակով նրա վրա հարձակվեցինք մենք ուժգնակի
Ու բռնեցինք նրան ձեռքով, բայց ձերուկը չմոռացավ արհեստն իր նենգ.
Նախ և առաջ նա վերածվեց գեղեցկաբաշ մի առյուծի,
Հետո փոխվեց նա վիշապի, դարձավ հովազ, դարձավ վարազ,
Դարձավ նույնիսկ հոսանուտ ջուր, նույնիսկ և ծառ բարձրակատար:
Սակայն նրան մենք պինդ-ամուր բռնել էինք առանց վախի և անվհատ:
Երբ ձանձրացավ ու չարչարվեց հնարքներում միշտ հմտագույն
ձերուկն այդպես,

Այն ժամանակ նա ինձ դիմեց և մարդկային լեզվով խոսեց ու այս ասաց.
«Ատրևտրդի, աստվածներից ո՞վ քեզ տվեց խորհուրդն այդ վես,
Որ պետք է աստ դարան մտնես ու ինձ բռնես: Ի՞նչ է պետք քեզ»:

460 Այդպես ասաց: Եվ ես նրան ի պատասխան այս ասացի.
«Ինքզդ, ձերուկ, շատ լավ գիտես, էլ ինչո՞ւ ես գուր հարցընում,
Չէ՞ որ երկար կաշկանդված եմ նավիս վրա ես այստեղ
Ու չեմ կարող մի ելք գտնել. վհատված եմ ես հոգեպես:
Գեթ ինձ ասա, քանզի չէ՞ որ աստվածներն են ամենագետ,
Աստվածներից ո՞վ է կասել վերադարձի իմ ճանապարհն.

Ո՞վ է արդյոք ինձ կաշկանդել ու չի թողնում, որ ծովն անցնեմ
ես ձկնավետ»:

Այդ ասացի: Եվ նա իսկույն պատասխանեց ու խոսք ասաց.
«Հարկավոր է, որ դու Ջեսին և այլ անմահ աստվածներին
Փարթամաճոխ զենում և զոն աստ կատարես ու բարձրանաս
նավդ իսկույն,

470 Որ շուտափույթ վերադառնաս քո հայրենիք՝ անցնելով ծովը մթագույն:
Քեզ քո բախտից չի՞ վիճակված ավելի շուտ գնալ քո տունը պերճաշեն
Եվ սիրելյաց տեսնել այնտեղ, հայրենական քո երկրի մեջ,
Մինչև որ դու չըլինես անդ՝ անձրևածին, հզոր գետի ջրերի մոտ,
Եգիպտոսում և, ի պատիվ հավերժ անմահ աստվածների, չկատարես:
Գեթ ցուլերի՞ց մեծափարթամ՝ հարյուրեզնյա զոհն ու զենումը սրբազան:
Այնժամ կտան քեզ աստվածներն այն ճանապարհն, որ փափագում
ես դու արտանց»:

Այդպես ասաց: Մինչ սիրասուն սիրտս այնժամ խորտակվում էր
իմ կրծքի տակ,
Քանզի պատմեց, որ ես կրկին պետք է անցնեմ ծովը մթին, դեպ
Եգիպտոս՝

Անցրնելով նոր ճանապարհն այդ հեռավոր ու դժբերակ:
480 Բայց և այնպես՝ նրա խոսքին ի պատասխան ես ասացի.
«Կկատարեմ ես այդ ամենն, ինչպես որ դու պատվիրեցիր:
Սակայն ասա՝ դու ինձ հիմա և ճշմարիտը ինձ պատմիր.
Վերադարձա՞ն արդյոք բոլոր աքեացիք նավերի մեջ ու անվնաս,
Որոնցից մենք՝ Նեստորն ու ես, բաժանվեցինք դեռ Տրոյայում,
Թե՞ դառնադառն մահով ոմանք կործանվեցին նավերի մեջ
Կամ ձեռքերին սիրած մարդկանց, երբ պատերազմն ավարտվել էր»:
Այդ ասացի: Նա ինձ նորից պատասխանեց և խոսք ասաց.
«Ի՞նչ ես հարցնում ինձ այդ մասին, Ատրևտրդի, պետք չէ բնավ,
Որ ամեն բան դու իմանաս, տեղյակ լինես իմ մտքերին:

490 Անարտասուք դու չես մնա, երբ ամեն ինչ ճիշտ իմանաս:
Կործանվեցին շա՛տ շատերը, բայց շատերն էլ կենդանի են,
ապրում են դեռ:

Տուն դառնալիս կորան միայն պղնձագեն աքեացոց երկու քաջեր,
Իսկ թե որքա՞ն կոտորվեցին պատերազմում, դու ինքդ այդ
շատ լավ գիտես:

Մինչդեռ մեկը կենդանի է, լայն ծովերի մեջ արգելված:
Սակայն էսան ոչընչացավ երկայնաթի նավերի հետ.
Գոսիդոնը նրան ըջեց դեպի Գիրե ժայռերը մեծ,
Բայց ծովախեղդ լինելուց էլ նա ազատեց նրան այնտեղ:
Գուցե և խույս տար նա մահից, թեպետ անչափ ատելի էր Աթենասին,
Եթե միայն, մտակորույս, ամբարտավան խոսքեր չսսեր,

500 Իբրև թե ինքն, անկախ անմահ աստվածներից, փրկվեց ծովի
անդունդներից:

Երբ սնապարծ այդ խոսքերը Պոսիդոնը լսեց հանկարծ,
Վերցրեց իսկույն եռածանին ևս իր ձեռքով հզորագոր,
Գիրն ժայռին զարկեց ուժգին, ճեղքեց, կոտրեց երկու մասի.
Կեսը մնաց անդ՝ իր տեղում, իսկ մյուս բեկորը ծովն ընկավ,
Որի վրա հենց նստած էր Էսան այնժամ, երբ պարծեցավ:
Տարավ նրան ժայռի բեկորն անպարագիծ ծովում այդպես,
Եվ այնտեղ էլ ևս կործանվեց, աղի ջրով խեղդամահ:
Իսկ քո եղբայրն իր լայնահիստ նավերի մեջ անդ խոյս տվեց
դաժան մահից

Եվ ազատվեց, քանզի նրան փրկեց Հերան գերամեծար:
510 Մակայն երբ որ հասել էր ևս Մալիա բարձր հրվանդանին,
Մրրիկն անեղ այնժամ նրան, ծանրակակիծ հառաչելիս,
Հարկեց, քեց դեպի ծովերը ձկնալետ, դեպ հեռավոր այն
երկրածայրն,

Որ ապրում էր վաղ ժամանակ Թիեսուն իր պերճ ապարանքում.
Իսկ այժմ այնտեղ բնակվում էր ինքն՝ Էգիսթոսը Թիեսույան:
Այնտեղ անա ևս համոզվեց, որ անվտանգ է իր ողին վերադարձի:
Աստվածները տվին նորից հողմ ուղեկից, և ևս եկավ, իր տունն հասավ:
Խոր բերկրանքով ևս ոտք դրեց հողի վրա իր հայրենի,
Համբուրեց հողն իր հարագատ, այնուհետև առատ ու ջերմ
Արցունք թափեց, երբ որ տեսավ երկիրը իր փափագատենն:

520 Գիտարանից նրան տեսավ հսկիչ պահակն, որին կարգել էր չարադավ
Էգիսթոսը՝ խոստանալով, իբրև պարգև, երկու տաղանդ մաքուր ոսկի.
Եվ այդպես ևս հսկում էր միշտ՝ մի ողջ տարի շարունակ, անդուր
Որ Ատրիդեսն հանկարծ չգա ու սրընթաց չհարձակվի.
Իսկույն վազեց ևս դեպի տուն, որ տա համբավն ազգավարին:
Եվ Էգիսթոսը անհասպաղ անդ որոշեց գործ կատարել նենգապատիր.
Ժողովրդից հապճեպ ընտրեց ևս քսան հոգի վատահեղի ու քաջ
մարդկանց,

Որոնց պահեց դարանի մեջ, այնուհետև պատվիրեց ճոխ
խնջույք սարքել:
Իսկ ինքն ապա շքեղ կառքով ու ձիերով անդ ընդառաջ շուտով գնաց
Որ ալգերի առաջնորդին լավ ընդունի, թեպետ իր միտքն էր դավադիր:

530 Նա հանդիպեց այդպես նրան, որ չգիտեր դավանքը այդ,
ու տուն բերեց
Եվ խնջույքից հետո սպանեց, ինչպես որ եզ են սպանում մտորի մոտ:
Ազամեմնոն դյուցազնի հետ եկած մարդիկ նույնպես մահից չփրկվեցին,
Ինչպես նաև կողմնակիցներն էլ, իսթոսի, բոլորն այնտեղ կոտորվեցին»:
Այդպես ասաց: Մինչ խորտակվում էր սիրտը իմ սիրակարոտ.

Ես լաց եղա՝ չոր ալագի վրա ընկած, և իմ հոգին, վշտաշարժար,
Էլ չէր ուզում ապրել այլևս, ապրել, տեսնել լույսն արևի:
Մակայն երբ էս կուշտ լաց եղա ու շաղանքով իմ հագեցա,
Իսկույն նորից իր խոսքն ասաց ծովի ծերունկն արդարամիտ.
«Ատրեսորդի, բա՛վ է, երկա՛ր դու լաց եղար և շաղեցիր դառնակակիծ»:

540 Լաց ու կոծով արտասովալի հաջողության դու չես հասնի,
Այլ գործըդ տես, ինչպե՛ս գնալ և հայրենի քո երկիրը հասնել շուտով:
Կամ կզրնաս և կենդանի անդ կըզտնես Էգիսթոսին, կամ Օրեստեսն
Նրան քեզնից վաղ կըսպանի, իսկ դու միայն հասնելու ես հոգեհացին»:
Այդպես ասաց և իր խոսքով քաջալերեց ինձ հոգեպես.

Որախացավ սիրտն իմ կրծքում, թեպետ դաժան վիշտն էր տանջում
ինձ տակավին:

Ուստի նրան էս դիմեցի և թևավոր խոսք ասացի.
«Այդ երկուսի մասին արդեն ես իմացա, բայց անվանիր ինձ երրորդին,
Որը դեռևս կենդանի է, բայց կաշկանդված է ծովերում լայնատարած:
Ասա՛, որ ես այդ իմանամ, թեպետ վիշտն է մաշում հոգիս»:

550 Այդպես անա էս ասացի, և ևս իսկույն պատասխանեց ու
խոսք ասաց.

«Լաերտորդուն, որն ապրում էր Իթակեում՝ իր պերճ տան մեջ,
Տեսա էս անդ, կղզու վրա դառն արտասուք միշտ թափելիս.
Բռնի ուժով իր պալատում նրան պահում է Կալիպսո աստվածուհին:
Եվ չի կարող ևս ոչ մի կերպ վերադառնալ ու գալ երկիրն իր հայրենի,
Քանզի չունի այնտեղ նավեր ևս բազմաթի և նավորդներ,
Որոնք նրան ուղեկցեին ծովի լանջով լայնատարած:
Արդ, Մենելայ աստվածատուն, չի վիճակված քեզ կործանվել
Անդ, ձիաբույծ Արգոսի մեջ, կամ մահակուր լինել բերմամբ
ժանտ օրհասի:

Այլ անմահները կատաքեն քեզ դեպ դաշտերը Էլիսյան,

560 Այս աշխարհի սահմանից դուրս, որ ապրում է Հոստամանթիսը
շիկաներ,

Մարդկանց համար կլանքն է անցնում անդ անվրդով ու երջանիկ,
Այնտեղ չկա ձյուն ու ձմեռ, չկա անձրև կամ ցուրտ ու բուք,
Այլ միմիայն Օվկիանոսն է անդ առաքում թեթև հուսանքը Ջեփյոտի,
Որ ևս մարդկանց միշտ հով անի և միշտ նրանց մեղմ գուրգուրի,
Քանզի Ջևսի, աստվածների փեսան էս դու, ամուսինը Հեղճնեի»:
Այդպես ասաց, ապա սուզվեց ևս ծովի մեջ ալեժածան.

Իսկ էս դարձա դեպի նավերն՝ աստվածակերպ ընկերներիս հետ
միասին:

Երբ էս այդպես գնում էի, սիրտս հուզվում էր աստուկաբար:
Երբ մենք հասանք մեր նավերին ու լայնալիր ծովի ափին,

570 Իսկույն ընթրիք անդ սարքեցինք. աստվածային գիշերն արդեն
վրա հասավ:

Մենք քուն մտանք՝ ալիքների հուզմունքով լի ծովի ափին:
Երբ որ ծագեց առավոտյան Արշալույսը վարդամատն,
Մենք ձգեցինք նախ և առաջ մեր նավերը սուրբ ծովի մեջ,
Կայսր կանգուն նավերի մեջ մենք տնկեցինք, առագաստները
պարզեցինք.

Եվ ինքներս էլ վեր բարձրացանք ու նստեցինք նստիքներիս:
Նստած այդպես իրար կողքի՝ մենք ճեղքեցինք բազմափրփոք
ծովը թիով

Եվ շատ շուտով Եգիպտոսի անձրևածին մեծ գետի մեջ մենք
կանգ առանք:

Եվ ես այնտեղ կատարեցի հարյուրեզնյա զոհաբերումն աստվածական:
Իսկ երբ քենին հավերժակյաց աստվածների վերջ տվեցի ես այդպիսով,
580 Դամբան-բլուր անդ կանգնեցի Ազամեմնին, որ նրա փառքն
հավերժ մնա:

Գործն ավարտած՝ ես մեկնեցի: Անմահները շնորհեցին հողմ հաջողակ,
Որն ինձ շուտով բերեց, հասցրեց երկիրը այս իմ հայրենի:
Եվ արդ, հիմա պետք է մնա իմ տանը դու հյուրամեծար՝
Գեթ տասնևմեկ կամ տասներկու օր շարունակ: Այնուհետև
Կողկորվես դու մեծ պատվով. քեզ կընծայես ճոխ պարզևներ.
Երեք ևճույզ, փայլուն մի կառք և մի բաժակ գեղեցկափայլ,
Որպեսզի դու, հավերժակյաց ամենագոր աստվածներիս
Չոհ և հեղում կատարելիս, չմոռանաս ինձ ոչ մի օր»:
Պատասխանեց նրան այնժամ Տելեմաքոսը իմաստուն.

590 «Ոչ, Ատրիդես, այդքան երկար քո հարկի տակ ինձ մի պահիր,
Թեպետ պատրաստ եմ ես սիրով քո սոս մնալ մի ողջ տարի
Եվ բնավին չըզգալ կարոտն հայրենի տան և սիրելի ծնողների:
Ես հիացած եմ՝ լսելով խոսք ու զրույցդ մեծաքանակ,
Բայց ինձ համար անհանգիստ են ընկերներս սուրբ Պիլոսում.
Այստեղ երկար ինձ մի պահիր. սուկ պարզևները քո ասած,
Որ պիտի տաս, միշտ ինձ համար լինելու են սիրանվեր.
Իսկ ևճույզներն ես չեմ տանի դեպ Իթակե. թող քո զարդը
նրանք լինեն,

Քանզի դու ես իշխող տերը լայնատարած շատ դաշտերի,
Որ բարգավաճ աճում են միշտ փարթալ ցորեն և կիպեռիս,
600 Նան առատ լոտոս, աճար ու բարձրաբույս ճերմակ գարի:
Մինչ մենք չունենք Իթակեում դաշտավայրեր, լայն ուղիներ.
Նա սնում է միայն այծեր, իսկ ձիերին արշավելու վայրեր չը կան.
Ծովում եղած կղզիներից և ոչ մեկը մարգավետ չէ,
Ոչ էլ հարմար ձիարշավի ասպարեզ է, իսկ Իթակեն առավել ևս»:

Այդպես ասաց: Ժպտաց իսկույն Մենելայը կորովախոս,
Ջեռքով շոյեց նրան քնքուշ, անվասր կոչեց և խոսք ասաց.
«Դու գերազնիվ արյունից ես, սիրելիդ իմ, և խոսում ես այնքա՛ն վսեմ.
Լա՛վ, կը փոխես ես նվերդ, և դժվար չէ այդ ինձ համար:
Քանի որ իմ տունը լի է հարստությամբ, պարզևներից
610 Դու կատանաս ամենավալն, հույժ մեծարժեքն ու գովելին.
Ես քեզ կըրամ ճարտարարվեստ ու նկարեն մի պերճ գավաթ,
Ամբողջովին արծաթակերտ, իսկ եզրերը՝ ոսկեդրվագ:
Կերտվածքն է դա Հեփեսոսի. այն ինչ հասավ Սիդոնական
թագավորից՝

Հերոսասիրտ Փեդիմոսից. նա իր տանը մեզ ընդունեց,
Երբ անդ եղանք մենք ետ գալիս: Եվ դա հիմա ես ուզում եմ
տալ քեզ ընծա»:

Այդպես ահա խոսում էին նրանք այնտեղ իրարու հետ:

Մինչդեռ արդեն հյուրերն էին թագավորի աստվածային տունը գալիս.
Ոմանք բերում էին ոչխար, ոմանք՝ գինի քաջալերիչ,
Իսկ նրանց հետ՝ հացն սուսքում էին կանայք գեղազուտի:

620 Այդպես նրանք սարքում էին ապարանքում մեծ խրախճանք:
Այդ ժամանակ խոսնաչրները՝ Ոդիսևսի պալատի մոտ,
Որ կոխոտած կար լայն մի տեղ, հրճվում էին, զվարճանում:
Նետում էին սովորաբար սկավառակ, տեղ ու նիզակ:
Բայց մեկուսի էին նստած սեղեխների ղեկավարներն՝
Անդ բոլորին գերազանցող Անտիկոնոսն ու Եվրիմաքն աստվածակերպ:
Եվ մոտեցավ այնտեղ նրանց Նոեմոնը Փրոնիոսյան:

Նա, դիմելով Անտիկոնոսին, հարցմունք արեց և խոսք ասաց.
«Ով Անտիկոնոս, արդյոք գիտի՞ մեկն ու մեկը, թե՞ չգիտի՞
630 Երբ պիտի գա Տելեմաքոսն ավազածիր պերճ Պիլոսից.
Նա իմ նավը վերցրեց գնաց, բայց նավը ինձ պետք է հիմա:
Գնում եմ ես լայնատարած Էլիս ահա, քանզի այնտեղ
Գտնվում են իմ տասներկու ճայիկ ձիերն և չորիները իմ տոկուն,
Որոնք սակայն դեռ չեն լծված: Մեկն ուզում եմ բերել, լծել»:

Այդպես ասաց: Խիստ զարմացան, քանզի նրանց մտքով անգամ
Չէր անցել, թե նա դեպ Պիլոս է գնացել: Կարծում էին, որ տանն է նա,
Կամ էլ մի տեղ՝ հանդերում իր, խոզարածի, խաշների մոտ:

Եվ Եվպիթյան Անտիկոնոսը պատասխանեց իսկույն նրան ու խոսք ասաց.
«Մշմարտացի դու ինձ ասա. ե՞րբ նա գնաց, և ո՞վ արդյոք
640 Իթակեի ջահելներից նրան եղավ անդ ուղեկից:
Ընտի՞ր մարդիկ էին արդյոք, թե՞ վարձկաններ կամ ստրուկներ.
Այդ էլ կարող էր նա անել: Դու ճիշտ խոսիր, որ ամեն ինչ
լավ իմանամ:

Սև նավն արդո՞ք խեց քեզնից նա հակառակ քո ցանկության,
Թե՞ կամովի ինքդ նրան այն զիջեցիր, երբ որ սրտանց նա

խնդրեց քեզ»:

Եվ Նոեմոն Փրոնիոսյանն իսկույն նրան պատասխանեց ու խոսք սասց.

«Ինքս իմ կամքով ես տվեցի: Ո՞վ կարող էր այլ կերպ վարվել,
Երբ խնդրողն էր այնպիսի մարդ, որն իր սրտում մեծ վիշտ ունի,
Դժվարին էր մերժել այնժամ աղերսանքին այդ վշտալի:

Իսկ նրա հետ պատանհները մեկնեցին, որ լավագույնն են ազգի մեջ,
650 Որոնց թվում, իբր առաջնորդ, նկատեցի ես Մեհնորին,
հայց թերևս աստված էր դա, որը նրան էր նմանվել
Ապշած եմ ես, քանզի երեկ այստեղ տեսա ես Մեհնորին

աստվածակերպ.

Մինչ նա վաղուց, նավը նստած, ուղևորվեց դեպի Պիլոս ավազածիր»:

Այդպես սասց և հեռացավ, գնաց տունը իր հայրական:

Եվ վրդովվեց այն երկուսի սիրտն անվեհեր: Նրանք իսկույն
Խոսնայրներին իրենց շորջը հավաքեցին և խաղն հապճեպ

ընդհատեցին.

Իսկ Եվայիթյան Անտիոնոսը նրանց դիմեց և խոսք սասց

զայրագնաբար,

«Զանգի ինքը տխուր էր խիստ, և լցված էր նրա հոգին

Չար դավանքով, իսկ աչքերն իր վատվում էին ինչպես կրակ.

660 «Ավա՛ղ, իրոք Տելեմաքոսն հանդգնաբար գլուխ քերեց ճանապարհի
Գործն անվեհեր: Իսկ մենք այնժամ կարծում էինք, որ այդ բնավ

չի կատարվի,

Մինչդեռ կամքին մեր հակառակ, նա՛ այդ լակոտն, ինչպես հարկն է

նավը սարքած,

Ու քաջարի մարդիկ ընտրած ազգի միջից, ճանապարհիվեց անավասիկ.

Այսուհետ էլ նա միշտ աղետ և պատուհաս մեզ կը բերի:

Թող կործանի Չևսը նրա գործությունը, նախքան դառնա նա չափահաս:

Պատրաստեցեք ճեպընթաց նավ ու նավաստի քսան հոգի և

հանձնեք ինձ,

Որ ես հսկեմ նրա ուղին վերադարձի: Նեղուցի մեջ,

Իթակեի և Սամեի միջև ժայռոտ դարանամուտ ես կլինեմ,

Այդպես նրա ուղևորումն հանուն իր հոր՝ աղետալի գործ կդառնա»:

670 Այդպես սասց. բոլորն իրեն խրախուսում էին, գովում,

Ապա շուտով վեր կացան և Ռիսուսի տուն գնացին:

Մինչդեռ երկար էլ չմնաց Պենելոպեան անհրազեկ գործի մասին,

Որ չարադավ խոսնայրները խորհել էին սրտում իրենց նենգապատիր.

Լուրը նրան Մեդոնն հայտնեց. բակի պատի ետև կանգնած՝ լսել էր նա

Որոշումը, այն դավը, որը նստեցին նրանք բակում:

Արդ նա որպես համբավաբեր, տուն մտնելով, վազեց դեպի Պենելոպեան:
Երբ նոր էր դեռ նա շեմքն անցել, Պենելոպեան նրան հարցրեց.

«Սաս, բանքեր, ինչո՞ւ արդո՞ք առաքեցին քեզ խոսնայրները պանծալի
Գուցե նրանք պատվիրում են, որ դյուցազուն Ռիսուսի ծառաները

680 Այժմ ընդհատեն աշխատանքը և պատրաստեն իրենց համար

նոր խրախուսանք:

Ո՛հ, երանի թե վերջինը լինի խնջույքն այդ անհրավ,

Գեթ դադարեն այստեղ մնալ փեսայության գործի համար.

Հավաքվում են այստեղ հաճախ, ոչնչացնում ու վատնում են

մեր գույքն ամբողջ,

Ստացվածքը իմ խորիմաց Տելեմաքի: Եվ մի՞թե դուք ձեր հայրերից

Ձեր մանկության տարիներին չեք իմացել հաստատուպես,

Թե ինչպե՛ս էր լավ ու բարի վերաբերվում Ռիսուսը ձեր ծնողաց.

Ա՛խ, ոչ ոքի նա չը գիտեր վիրավորել՝ ոչ իր գործով, ոչ էլ խոսքով,

Մինչ սովոր են թագավորներն աստվածագոր այլ կերպ վարվել

Ու մարդկանցից մահկանացու՝ ոմանց ատել և մեծապես ոմանց սիրել:

690 Իսկ նա բնավ անօրեն գործ չի կատարել ոչ մի մարդու:

Մինչդեռ հայտնի են ձեր տենչանքն ու անվայել գործերը ձեր:

Իր բարության համար հիմա շնորհակալ չեք դուք բնավ»:

Պատասխանեց նրան խոհեմ ու իրազեկ Մեդոնն իսկույն.

«Ո՛հ, թագուհիս, երանի՛ թե անեղ ոճիրն այդ լոկ լիներ:

Կա ավելի վատթարագույնն և ավելի զարհուրելին.

Ահռելի գործ են մտածել խոսնայրները. ո՛հ, Չևսը այդ թող խափանի:

Մտադիր են նրանք սրով Տելեմաքին անդ սպանել,

Երբ որ նա տուն վերադառնա. գնացել է իր հոր մասին

700 Լուր ստանալու նա սուրբ Պիլոս, Լակեդեմոն աստվածայինն»:

Բերանի մեջ պապանձված էր կարծես լեզուն, աչքերն իսկույն

Լցվեցին հորդ, դառն արցունքով, խզվեց նույնիսկ ձայնը նրա առողջ
ու ջինջ.

Եվ անագան խոսեց միայն ու այսպիսի խոսք նա սասց.

«Ինչո՞ւ, բանքեր, իմ զավակը գնաց, ավա՛ղ, ի՞նչ կարիք կար,

Որ նա շրջի արագընթաց սև նավերով, որոնք այնտեղ, ծովերի մեջ,

Նժույզներ են մարդկանց համար ու ճեղքում են ջրերն անծայր.

Մի՞թե, իրավ, ուզում է նա, որ մարդկանց մեջ ընդմիշտ անունն

իր վերանա».

Պատասխանեց նրան խոհեմ ու իրազեկ Մեդոնն իսկույն.

«Ես չը գիտեմ. գուցե իրոք նրան դրդեց մի ոմն աստված,

710 Կամ ներշնչեց սիրտն իր այդպես՝ Պիլոս գնալ, որպեսզի անդ

գեթ իմանա

Վերադարձն իր սիրելի հոր կամ այն, որ նա մահացել է գուցե արդեն»:

Ասաց այդպէս ու հեռացաւ նա տան միջով Ռոփսուսի:
Մինչ դառնալի, սրակոտոր վիշտը պատեց նրա հոգին,
Եվ նա նստել չկարեցաւ տանը եղած բազմոցներից մեկն ու մեկին,
Այլ վայր ընկաւ իր ամբաշեն ննջարանի շէմքի առաջ
Ու հեկեկաց դառնակակիծ: Ծուրջը նրա ստրուկ ծառայք,
Որքան կային տան մեջ այնժամ, ծեր ու ջահել, ջայլեցին խիստ
ու մեծամայն:

Եվ դառնապէս հեծկտալով նրանց ասաց Պենելոպեան.
«Ակա՛նջ դրեք, սիրելիներ, ինձ հետ ծնված, համահասակ բոլոր
կանանց մեջ

720 Օլիմպացին ամենից շատ ինձ է տվել վիշտ ու աղետ և տառապանք:
Նախ ինձ գրկեց իմ ամուսնուց ազնվամեծար, առյուծասիրտ,
Որն իր ամեն արժանիքով միշտ փայլում էր դանախանց մեջ,
Եվ փառքը իր տարածված էր Հելլադայում ու լայնալիր Արգոսի մեջ:
Իսկ այժմ ահա իմ այս տնից սիրանվեր իմ զավակին
Ժանտ մորիկները շորթեցին. մինչ ես, ալա՛ղ, նրա մեկնու՞մը չիմացա:
Ո՛հ անողոք անպիտաններ, մի՞թե ոչ ոք գլխի չընկաւ, որ գեթ գայիք
Եվ մահիճից ինձ հանէիք. չէ՛ որ այնժամ դուք գիտէիք,
Թե ե՛րբ տնից նա դուրս եկաւ կամ ե՛րբ ողողվեց դեպի նալը սևակտուց:
Ա՛խ, եթե ես իմանայի, որ այդպիսի ճանապարհ է ձեռնարկում նա,
730 Անշուշտ տանը նա կմնար, որքան էլ խիստ ողորկել նա ցանկանար,
Կամ պետք է ինձ այն ժամանակ նա մահացած թողներ տան մեջ:
Սակայն ձեզնից մեկը հիմա թող շուտ գնա, կանչի, բերի ծեր Դոլիոսին՝
Իմ ծառային, որին հայրս ինձ նվիրեց, երբ դեռ այստեղ էի գալիս:
Նա այժմ հսկիչ խնամող է իմ ծառաշատ պարտեզի մեջ:

Թող նույնհետայն

Լաերտեսի մոտ նա գնա և ամեն բան պատմի նրան:
Գուցե ծերունին իր մտքի մեջ կարողանա գտնել հիմա գեթ մի հնար
Եվ գա շուտով ու գանգատովի համայն ազգին՝ ինչպէս սրանք անագործույն
Ցանկանում են ոչնչացնել աստվածակերպ Ռոփսուսի ցեղն ու որդուն»:
Այնժամ նրան իր խոսքն ասաց սոնտու կին Եվրիկլիան.

740 «Ո՛հ, իմ դատրիկ դու սիրելի, կուգես՝ այժմ ինձ ըսպանի՛ր սուր պղնձով,
Թե չէ՛ թող ինձ դու այս տան մեջ, բայց ես քեզնից իսկությունը
չեմ թաքցնելու:
Ամբողջ գործը՝ ես գիտեի, ես եմ սարքել և ամեն բան նրան տվել.
Հաց և գինի համեղահամ: Մինչդեռ նա մեծ երդում առաւ
այնժամ ինձնից,

Որ չհայտնեմ քեզ այդ մասին, նախքան կանցնի տասներկու օր,
Մինչև որ դու ինքդ, սրտով վշտաչարչար, հարցմունք անես և իմանաս.
Որպէսզի դու քո վաղածամ լացուկոծով դեմքիդ պերճանքը չվատնես:
Սակայն հիմա եկ լվացվիր, զգեստն հագիր քո մաքրագույն

Եվ վերնատուն դու բարձրացիր ծառաներիդ հետ միասին
Ու ջերմաջերմ անդ աղոթիր ասպարակիր Զևսի դատրիկ Աթենասին:
750 Նա է միայն, որ կարող է մահից փրկել քո զավակին:
Իսկ ձերուկին վշտաչարչար նորից դու վիշտ մի պատճառիր.
Ես չեմ կարծում, որ տոհմը մեծ Արկեիսյանի երանավետ աստվածների՞ն
Անհաճ լինի և առելի: Այլ կմնա տակալին մեկը կենդանի,
Որն այս շենքին բարձրակոտոր, այլն բերրի լայն դաշտերին
պիտի իշխի»:

Այդպէս ասաց և ամոքեց վիշտը նրա. աչքի արցունքը չորացաւ:
Նա լվացվեց, ապա իսկույն իր մաքրափայլ հագուստն հագաւ
Եվ վերնատուն շուտ բարձրացաւ ծառաների հետ միասին:
Նա զամբոյողը գարի լցրեց և աղոթեց Աթենասին:
«Լսի՛ր դու ինձ, ասպարակիր Զևսի դատրիկ, անպարտելիդ ո՛վ Աթենաս.

760 Եթե տանն իր երբեկցե Ռոփսուսը ամենագետ քո մեծ պատվին
Այրել է գեր թիկնամետը կովերի կամ խաշնների,
Հիշիր դու այդ և սիրելի որդուս հիմա պահիր դու ողջ ու անվնաս,
Եվ վիսացող սեղեխների չար դավանքից փրկիր նրան»:
Ասաց ու ջերմ նա լաց եղաւ: Աթենասը լսեց նրա թախանձանքն այդ:
Իսկ խոսնայրները սենյակում ստվերամած դեռ աղմկում էին դաժան,
Եվ վիսացող պատանիներն այսպէս էին խոսում այնտեղ.
«Բազմախոսնայր մեր թագուհին պատրաստվում է ամուսնութեան
Եվ չգիտի, թե իր որդուն ինչպիսի մահ է ըսպատում»:
Այդպէս էին խոսում ժմանք՝ չիմանալով, թե իրենց ինչ է վիճակված:

770 Բայց Անտիհոնոսն, անարգելով, դիմեց նրանց ու խոսք ասաց,
«Ո՛հ, սնապարծ դուք պանդուրներ, թողե՛ք նպերտ, ամբարտաւան
խոսքերը ձեր,
Որ չըլսի մեկն ու մեկը և չգնա ու այդ մասին հայտնի այնտեղ:
Այլ շո՛ւտ գնանք մենք լուռումունջ և գաղտնաբար կատարենք այն
գործը փայլուն,

Որն հաճելի է բոլորիս և ծնվել է մեր բոլորի սրտերի մեջ»:
Այդ ասելով՝ ընտրեց իսկույն կորովալիր բասն հոգի
Եվ նրանց հետ ծովափ գնաց, դեպի նալը արագընթաց:
Նախ և առաջ ծովի խորքը նրանք սև նալը ձգեցին.
Կայմը իր տեղը տնկեցին և առագաստը սարքեցին,
Թիերն սպա պինդ կապեցին կաշվե, ամուր ճոպաններով
780 Եվ, ամեն ինչ հարդարելով, առագաստները պարզեցին,
Իսկ մարտական գեները նրանց այնտեղ բերին ծառաները բաշահոգի:
Խարսխեցին նալը հետո և ափն իջան իրենք իսկույն
Ու սարքեցին այնտեղ ընթրիք՝ սպասելով, որ գիշերը շուտով կգա:
Այդ ժամանակ իր վերնատան սենյակի մեջ Պենելոպեան խոհեմամիտ
Տխուր պսակել էր միայնակ՝ խմիչքն, ուտեստը մոռացած:

Նա մտորում էր պեկոծ. արդյոք մահից խույս կտա՞ իր ազնիվ որդին,
Թե՞ նա իրոք կկործանվի ամբարտավան խոսնայրների բռնի ուժով:
Այնպես, ինչպես առյուծն հզոր, որսկաններով շրջապատված,
Ահը սրտում, մտածում է, թե մոտենում են ոսոխները որսատենչ,

790 Այդպես ահա մտորելիս՝ նրա աչքին քունը իջավ քաղցրամուշիկ.
Եվ պատկերով նա քուն մտավ, թմբեց մարմինն, ու վերացան
ցավեր ու վիշտ:

Մինչդեռ այլ միտք անդ հղացավ պայծառաշյա վեհ Աթենասն.
Մի ուրվական նա հորինեց և կանացի կերպարանքով օժտեց նրան՝
Նմանությամբ Իփթիմեի, Իկարիոսի պերճ դստրիկի,
Որը մի օր ամուսնացել էր Փերեոսն տուն ունեցող Ելմեյի հետ:
Ուրվականն այդ՝ աստվածակերպ Ռիսուսի տունն նա հղեց,
Որ ամոքի սրտմտությամբ պեկոծվող ու վշտաբեկ Պենելոպին
Եվ մեղմացնի նրա ջայլանքն ու հեծեծանքն արտոսրալի:
Դուան նիզի փոկի կողքով նա ննջարան մտավ նրա,

800 Կանգնեց նրա սնարի մոտ ու բարբառեց և խոսք ասաց.
«Քնա՞ծ ես դու, Պենելոպե, սիրտդ տխուր և վշտաբեկ,
Չայլում ես միշտ: Բայց աստվածները հեշտակյաց, ահավասիկ,
Արգելում են քեզ ողբ անել և հեկեկալ: Իսկ քո որդին դեռ ետ կը գա
Դեպի տունն իր, քանզի հանդեպ աստվածների մեղապարտ չէ
նա բնավին»:

Նրան այսպես պատասխանեց և խոսք ասաց խոհեմամիտ Պենելոպե՝
Նա, որ քնած էր քաղցրաբույր երազների կամարի տակ.
«Ի՞նչ բան է սա, քույր իմ, ասա՛: Ինչպե՞ս եկար: Մինչդեռ առաջ
չէիր գալիս,
Քանզի չէ՞ որ ապրում ես դու անդ, հեռավոր քո հարկի տակ:
Պատվիրում ես, որ վերջ տամ ես սրտմտությանն ու ջայլանքիս
բազմաշարչար,

810 Որոնք մաշում, խորտակում են իմ հեզ սիրտը և իմ հոգին.
Նախ գրկվեցի ես ամուսնուց առյուծասարտ և ազնվագույն,
Որն, հիրավի, գերազանց էր դանաչանց մեջ ամեն տեսակ արժանիքով.
Հերոս էր նա, որի փառքը Հելլադայում և Արգոսում
Թնդում էր միշտ: Իսկ այժմ, ավա՛ղ, սև, լայնափոր նավով
մեկնեց սիրած որդիս,
Պանդո՛ւրն անմիտ: Անփորձ է նա թե՛ գործի և թե՛ խոսքի մեջ:
Ուստի լալիս եմ դառնադառն՝ ավելի շատ նրա համար,
քան ամուսնու:

Դողում եմ ես այժմ երկյուղից, սարսափում եմ տարակուսած.
Փորձանքի մեջ գուցե ընկնի նա այն երկրում, ուր որ մեկնել է
նա հիմա,

Կամ թե ծովում, ուր չարագործ շատ կան մարդիկ, որ նրա դեմ
դավանք ունեն
820 Եվ ուզում են սպանել նրան, նախքան երկիրն իր հայրենի նա
ետ դառնա»:

Իսկ ուրվականը անմարմին պատասխանեց իսկույն նրան և այս ասաց.
«Քաջալերվիր և քո սրտում չվախենաս դու բնավին.
Չէ՞ որ նրա առաջնորդն է մի ուղեկից, որին, որպես զորավիգի,
Կը ցանկային բոլոր մարդիկ, քանզի իրոք մեծագոր է նա չափազանց
Ինքը Պալլաս Աթենասն է. նա կարեկից է նաև քեզ վշտերիդ մեջ
Եվ հիմա էլ ինձ առաքեց, որ քեզ հայտնեմ ես այդ մասին»:
Նրան նորից իր խոսքն ասաց Պենելոպե՛ն խոհեմամիտ.
«Եթե իրոք դիցուհի ես կամ լսել ես խոսքն աստրծու,
Հայտնիր դու ինձ դժբախտագույն իմ ամուսնու մասին նաև.

830 Կենդանի՞ է դեռ նա արդյոք և տեսնո՞ւմ է նա կենսատուր լույսն արևի,
Թե՞ նա արդեն մահացած է և Հադեսի տունն է իջել»:
Պատասխանեց այնժամ նրան այն ուրվականը անմարմին.
«Նրա մասին ես չեմ կարող ճշմարտացի քեզ բան ասել.
Մեռա՞ծ է նա, թե՞ կենդանի, քանզի լինել ունայնախոս լավ չէ բնավ»:
Այդպես ասաց և նույնհետայն դուան փակի անցքի միջով
Անհետացավ, հանց շունչ հողմի: Մինչ խոր քնից իր վեր թոսավ
Իկարիոսի դստրիկն այնժամ, և սիրելի սիրտը նրա խորունկ խնդաց,
Քանզի երազն, հանց իրական մի վառ տեսիլ, նրան գիշերն այդ երևաց:

Խոսնայրները նավի վրա շուտ լող տվին ճանապարհով այն ծովային՝
840 Սրտում իրենց միտք անելով Տելեմաքի անագորույն մահվան մասին:
Անդ ծովի մեջ է Աստերիս սպառաժուտ փոքրիկ կղզին,
Իթակեի և քարքարոտ Սամեի մեջ: Եվ կան նրա երկու ափին
Նավընկալող հարմարագույն երկու կայան: Ահավասիկ,
Անդ կանգ առած՝ սպասեցին դարանամուտ աքեացիք:

Ե ր գ հ ի ն գ ե ր ո ր դ

ՈՂԻՍԵՎՍԻ ԼԱՍՏԱՆԱՎԱԿԸ

Արշալույսը վեր բարձրացավ փառաբանված Տիթոնոսի պերճ մահիճից,
Որ իր շողշող լույսը սփռի անմահներից, նաև մարդկանց մահկանացու:
Անմահները բազմած էին մեծ խորհրդի, և նրանց մեջ
Ինքը Ջևան էր բազմել ահեղ, որի կորովն է մեծագույն և գերազանց:
Այդենասը նրանց պատմում էր բազմաթիվ աղետները Ողիսուսի,
Որին նա միշտ կարեկից էր, որը տանն էր դեռ դիցուհուն:
«Աստվածահայր դու հզոր Ջևա և դուք նաև, հավերժակյաց
ով աստվածներ,

Այո՛, բնավ այտուհետև մականակիր ոչ մի արքա
Թող չլինի հեզ ու բարի կամ ողորմած, թող չիմանա արդարություն,
10 Այլ թող որ միշտ նա ժանտ լինի և անօրեն գործ կատարի:
Քանզի ոչ ոք աստվածակերպ Ողիսուսին էլ չի հիշում այն ազգի մեջ,
Որի վրա իշխում էր նա, ինչպես մի հայր՝ ներողամիտ ու բարերար:
Մինչդեռ հիմա գտնվում է կղզու վրա՝ կրելով վիշտ ու տառապանք
Անդ, Կալիպսո դիցուհու տանն, որ պահում է նրան բռնի:
Վերադառնալ դեպի երկիրն իր հայրենի և դեպի տուն նա չի կարող,
Քանզի չունի ոչ ընկերներ, ոչ բազմաթի արագ նավեր,
Որոնք նրան ուղեկցեին լայնատարած, խոր լանջերով մթին ծովի:
Իսկ այժմ ահա մտադրվել են ըսպանել սիրատենչիկ նրա որդուն
Տուն դառնալիս: Մեկնել է նա դեպի Պիլոս, Լակիդեմոն աստվածային,

20 Որպեսզի գեթ անդ իմանա որևէ լուր կամ մի համբավ իր հոր մասին»:
Պատասխանեց և խոսք ասաց նրան Ջևաը ամպահալած.
«Ո՛հ իմ զավակ, ի՞նչ խոսք էր այդ, որ դուրս թույլ քո շորթերից.
2Է՛ որ ինքքդ, դու քո խելքով ամենագետ, որոշեցիր,
Որ Ողիսուսն էտ պիտի գա և նրանցից առնի վրեժն իր ահավոր:
Եվ ինքդ դու, որ կարող ես, Տելեմաքին եղիր հիմա մի ուղեկից,
Որպեսզի նա ողջ, անվնաս էտ գա, հասնի իր երկիրը հայրենական,

Իսկ սեղեխներն իրենց նավով էտ կը դառնան անհաջողակ
ու ձեռնունայն»:

Այդ ասելով՝ դիմեց ապա նա Հերմեսին՝ սիրանվեր իր զավակին.
«Դու ես, Հերմես, բաները մեր այլ դեպքերում: Նաև հիմա

30 Գնա, հայտնիր գեղազանգուր, հավերժահարս աստվածուհուն
մեր կամքն ամուր՝
Բազմահմուտ Ողիսուսի դարձի մասին: Թող նա շուտով աննապարհի,
Սակայն նրան թող չուղեկցի ոչ ոք, ո՛չ մարդ մահկանացու,
ո՛չ էլ աստված:

Այլ նա ինքը, լատտափայտի վրա ամուր, թող բյուր տանջանք,
վիշտ կրելով՝

Գնա, հասնի քսաներորդ օրը պտղավետ Աքերիա՝
Պերճ երկիրը փեակների, որոնք իրոք ազգական են աստվածներին:
Նրանք նրան անդ այնպիսի պատիվ կտան, որը վայել է աստըծուն,
Եվ կողարկեն նավի վրա նրան դեպի հայրենի հողը սիրելի:
Կտան նրան այնքան ոսկի, այնքան սղինձ ու հագուստներ
փարթամ ու բյուր,

Որքան անգամ Տրոյայից Ողիսուսը իր հետ տանել չէր կարենա,
40 Եթե բաժինն իր ավարի անդ ստանար ու բարերախտ էտ գար իր տուն:
Նրան այդպես է վիճակված՝ վերադառնալ դեպի երկիրն իր հայրենի,
Դեպի տունն իր բարձրակտուր և տեսնել անդ սիրանվեր բոլոր
մարդկանց»:

Ասաց այդպես, հնազանդվեց նրան Հերմեսն Արգոսասպան:
Նա նույնհետայն իր ոտքերին մույկերն հագավ գեղեցկափայլ,
Անեղծ ու պերճ և ոսկեղեն, որոնք նրան թոցնում էին լայն ծովերի,
Անպարագիծ երկրի վրա, հանց հողմերի շունչը թեթև:
Իր ձեռքն առավ զավազանը, որով գիտեր նա քուն քերել
Մահկանացու մարդկանց աչքին և կամ քնից արթնացնել:
Մականը այդ ձեռքին բռնած՝ թույլ, գնաց Արգոսասպանը մեծագոր:

50 Իսկ երբ հասավ նա Պիերիա ջինջ եթերից իսկույն իջավ նա ծովի մեջ,
Ապա արագ ճախրեց, սահեց մի թևավոր ճալի նման,
Որ ջրերում հաճախակի թաց է անում կուրծքն ու թևերն իր կորովի՝
Հավերժագոչ, մթին ծովի վտանգավոր խորշերի մեջ ձուկ որսալիս:
Այդպես, դրան նմանվելով, Հերմեսն արագ սահեց ծովի մակերեսով:
Իսկ երբ, այդպես սլանալով, եկավ, հասավ հեռու կղզին,
Կապույտ ծովից ցամաք ելավ, ապա շարժվեց, գնաց դեպի խոր
բարանձավն,

Որի մեջ հենց բնակվում էր գեղազանգուր հավերժահարս
աստվածուհին:

Եվ հիրավի, նա դիցուհուն գտավ այնտեղ, անձամի մեջ:
Օջախի մեջ վառվում էր անդ բորբ կրակը: Բոցավառվող մայրիկների



1. Ջևար Հերմեսին ուղարկում է Կալիպատ հավերժահարսի մոտ (նկար սափորի վրա):

60 Եվ խնկեանո բորմունքն անուշ տարածված էր կողու վրա ամենուրեք:

Հավերժահարս աստվածուհին, երգն հնչելով իր քաղցրաձայն, Ոսկի մաքրոքը շարժելով, հյուսում էր անդ կամ պատվում հաստոցի մոտ:

Անձալի շուրջ ծաղկափթիթ, ճոխ անում էր անտառը խիտ Եվ նրա մեջ՝ պերճ կահամախ ու լաստեճի, անուշաբույր շատ Առճիներ.

Ծառերի մեջ բնակալել էին բազում թռչունները թեթևաթև,

Աղմկարար ջրագուսներ, բյուր բվեճներ և ճուռակներ, Որոնք իրենց ճոխ կերակուրն հայթայթում են լայն ծովափին: Այդ խորալիոր քարանձավի շուրջ բոլորը անում էին փաթթամորեն Կանաչազարդ որթեր բազում ողկույզներով բեռնավորված:

70 Եվ չորս աղբյուր իրար կողքի, ջինջ ու վճիտ, ինչպես բլուրեղ, Հոսում էին ու վազվզում այստեղ-այնտեղ և ամենուր: Ծուրջը ծաղկող մարգեր կային, իսկ նրանց մեջ՝ նւխոր, չքնաղ մանուշակներ:

Եթե այցի գար այդ կղզին մեկը անմահ աստվածներից, Տեսնելով այդ՝ կզարմանար, և կլցվեր հիացմունքով նրա հոգին:

Եվ կանգ առավ այնտեղ ահա սուրհանդակը Արգոսասպան, Ծուրջը նայեց ու հոգեպես նա հագեցավ այդ ամենով, Ապա մտավ խոր անձավը, և առաջին իսկ հայացքից Պերճ Կալիպսոն՝ գեղեցկուհին աստվածների, հեշտ ճանաչեց իսկույն նրան.

Քանզի իրար անձանոթ չեն աստվածները հավերժակյաց, 80 Նույնիսկ եթե բնակվում են նրանք հեռու միմյուցանցից. Բայց չը գտավ ներսում այրի նա քաջասիրտ Ռիսուսին,

Որ, ծովափի ժայռին նստած, ինչպես և միշտ, լաց էր լինում դառնակակիծ.

Սրտակոտոր հեծեճանքով մաշում էր նա սիրուն ու հոգին իր վշտաբեկ, Աչքն իր ուղղած հուզվող ծովի հեռաստանին՝ դառն արցունք էր թափում այնտեղ:

Մինչ Հերմեսին պերճ Կալիպսոն՝ գեղեցկուհին աստվածների, Հարցում արեց, հրավիրեց, որ նա նստի վառ քազոնցին. «Ի՞նչ կա, ասա, որ եկել ես դու այժմ, Հերմես ոսկեմական. Գերամեծար իմ սիրելի, մինչդեռ առաջ այցելության չէիր գալիս: Արդ, ինձ ասա, ի՞նչ ես ուզում. կըկատարեմ, ինչպես դրդում է սիրտս ինձ,

90 Եթե միայն ես կարող եմ այդ կատարել, եթե գործն է հնարավոր: Բայց նախապես հետևիր ինձ, որպեսզի քեզ հյուրասիրեմ ես սրտագին»: Այդպես ասաց աստվածուհին, ապա դրեց նրա առաջ նա մի սեղան Ու ամբրոսիա առաջարկեց, լցրեց նաև կարմիր նեկտար: Եվ սկսեց ուտել, խմել արգոսասպան բանբերը ժիր: Երբ նա կերավ ու հագեցավ, և իր հոգին կերուխումով այդ լիացավ, Այնժամ նրա նա հարցմունքին պատասխանեց և խոսք ասաց. «Աստվածուհիդ, հարց ես տալիս այստեղ եկած դու աստըծուն. Ծշմարտացի ես քեզ կասեմ, ինչպես որ դու հորդորեցիր: Ջևար միայն ինձ պատվիրեց այժմ այստեղ գալ, ինքս թեպետ չէի ուզում.

100 Եվ իսկապես, ո՞վ կուզենա կամավ անցնել ծովի ջրերը անասնման, 2Է՞ որ չկա մահկանացու մարդկանց ոչ մի քաղաք այստեղ, Որտեղ ընտիր, հարյուրեզնյա զոհ են անում աստվածներին: Բայց մեկն ու մեկն աստվածներից անկարող է չկատարել կամ անտեսել Հզոր կամքը, հրամանը ասպարակիր Ջևա—գգոնի: Ասում է նա, որ այստեղ է թշվառագույն քաջն այն հզոր հերոսներից, Որ կովեցին Պրիամոսի քաղաքի մոտ ինը տարի կորովաբար, Իսկ տասներորդ տարում նրանք քաղաքը այն հիմնահատակ խորտակեցին

Ու հեռացան: Ետ դառնալիս՝ Աթենասի դեմ չարաչար մեղանչեցին, Եվ նա նետեց նրանց վրա ահռելի հողմ, մեծ ալիքներ.

110 Այդպես ահա ոչնչացան նրա բոլոր ընկերները: Իսկ իրեն էլ՝ հողմն ու ալիքը զարկեցին և, թռչելով, հասցրին այստեղ: Ահավաքի՛ նա պատվիրեց, որ այդ քաջին դու արձակես փութանակի, Քանզի բախտը չի սահմանել, որ վախճանվի նա՝ հեռու իր սիրածներից: Վիճակված է նրան՝ դառնալ դեպի երկիրն իր հայրենի, Դեպի տունն իր բարձրակոտոր և տեսնել անդ սիրանվեր բոլոր մարդկանց»:

Այդպես ասաց, ու Կալիպսոն՝ գեղեցկուհին աստվածների, ահաբեկվեց,

Եվ, Հերմեսին դառնալով, նա պատասխանեց և խոսքն ասաց
իր թևավոր.

«Ո՛հ, աստվածներ. որքա՛ն եք դուք նախանձարեկ և անողորմ:
Այդ կրքի մեջ

120 Գերազանց եք դուք բոլորից: Վրդովվում եք դուք չափազանց,
Երբ դիցունքիք միանում են քաջերի հետ, որ ամուսին դառնան իրենց:
Երբ վարդամատն Արշալույսը Օրիոնին սիրով սիրեց, ողջագորեց,
Վրդովվեցիք, նախանձեցիք դո՛ւք հեշտակյաց ո՛վ աստվածներ,
Մինչև նրան սուրբ Արտեմիսը ոսկեգան, Օրտիգիայում հարձակվելով,
Զարկեց հանկարծ և սպանեց իր մահաբեր սլաքներով:
Նույն բանն եղավ, երբ Դեմետերը վարսագեղ, սրտի տենչին

հնազանդված,

Մի եռահերկ հողի վրա Յասիոնի հետ մեկ մահիճում սիրով կապվեց:

Մինչ այդ մասին Զևսը այնժամ շատ չը մնաց անիրազեկ,

Այլ շողշողուն շանթով զարկեց և սպանեց նա Յասիոնին:

Նույնպես և ինձ, ով աստվածներ, թույլ չեք տալիս, որ ես ապրեմ
այս քաջի հետ:

130 Ես եմ փրկել նրան ծովում, երբ նստած էր ջարդված նավի նա ողնուցին:

Ծողշողենի իր կայծակով Զևսն ահավոր զարկեց ուժգին

Եվ խորտակեց, այրեց նրա նավը ծովում մուգ-մթազույն:

Կործանվեցին այդ ժամանակ նրա բոլոր ընկերները ազնվամեծար,

Մինչդեռ նրան հողմը քշեց, և ալիքներն այստեղ հանկարծ ափ
նետեցին:

Իսկ ես նրան ջերմ սիրեցի, խնամեցի ու սնեցի գորովագին.

Հույս ունեի և հաստատ կամք՝ դարձնել նրան հավերժ անմահ,

Բայց քանի որ աստվածներից ոչ ոք բնավ չի հանդգնի

Ասպարակի Չևսի կամքը չկատարել կամ անտեսել,

Թող որ գնա նա դեպի ծովն հավերժագոչ, քանզի Զևսն է
պահանջում այդ.

140 Սակայն նրան ես չեմ կարող ոչ աջակցել, ոչ էլ մարդիկ տալ ուղեկից,

Քանզի չունեմ ես բազմաթի, խորագոգ նավ և ընկերներ հավատարիմ,

Որոնք նրան ուղեկցեին լայնատարած, մուգ լանջերով մթին ծովի:

Բայց նրանից չեմ թաքցնի, այլ խորհրդով կօժանդակեմ ես բարեհաճ,

Ինչպես պետք է նա անվնաս վերադառնա իր երկիրը հայրենական»:

Կրկին նրան իր խոսքն ասաց սուրհանդակը Արգոսասպան.

«Ուրեմն հիմա բաց թող նրան և պատկառիր դու զայրույթից
ահեղ Զևսի,

Որպեսզի նա հետագայում զայրույթով քեզ չվնասի»:

Այդ ասելով՝ շուտ հեռացավ Արգոսասպանն հզորագոր:

Իսկ մեծարգո հավերժահարսն ուղղվեց, գնաց դեպ Ռդիսեսն մեծահոգի,

150 Քանզի Զևսի հրամանին հնազանդվեց նա իսկապես:

Ռդիսեսին անդ ծովափին նստած գտավ: Նրա դեմքին
Դառն արցունքը չէր ցամաքել: Նա իր տխուր կյանքն էր մաշում
այնտեղ անօգ.

Հառաչելով կարոտառենչ դարձի մասին՝ ջայլում էր նա սրտամորմոք,

Նրան այլևս ամենևին հաճելի չէր հավերժահարսն, որի հետ նա

Գիշերում էր լայն անձավի մեջ ակամա և դիցունու ցանկությամբ լուկ:

Իսկ ցերեկներն անցկացնում էր ծովի ափին, ժայռի վրա, մտահոգված:

Հեծեծանքով ու դառնությամբ անդ մաշում էր նա իր հոգին

Եվ, նայելով հուզված ծովի հեռաստանին, վարար արցունք էր
թափում միշտ:

Արդ, մոտեցավ նրան այնտեղ հավերժահարսն աստվածագոր
և խոսք ասաց.

160 «Թշվառական, բավ չէ՞ այդքան ջայլանք անես. կյանքդ իզուր
դու մի՛ կարճիր:

Արդեն սրտանց պատրաստ եմ ես ճանապարհել քեզ այստեղից.

Գնա շուտով, կտրիր երկար, հաստ գերաններ. սուր կացինով
քեզ պատրաստիր

Դու լայնալիր մի լաստանավ, բայց վերևից դրա՛ շինիր

Տախտակամած, որ քեզ տանի դա դեպի ծովը մթազույն:

Իսկ ես կտամ քեզ հաց և ջուր. ճանապարհիդ համար նաև

Առատորեն կտամ գինի, որ քո քաղցին ու ծարավի՛ն դու հագուրդ տաս:

Կհագցնեմ քեզ նոր զգեստ և ուղեկից հողմ կառաքեմ,

Որ սիրելի և հայրական քո երկիրը հասնես դու ողջ և անվնաս,

Ինչպես որ այդ ցանկանում եմ այժմ լայնալիր երկնքի տեր
աստվածները,

170 Որոնք ինձնից գորավոր են և՛ գործի մեջ, և՛ իմաստուն վճիռներով»:

Այդպես ասաց: Ահաբեկվեց բազմահամբեր Ռդիսեսը.

Նա, դիմելով աստվածունիուն խոսքերն ասաց այս թևավոր.

«Քո մտքում մի ուրիշ բան կա, աստվածունի, ո՛չ մեկնումն իմ:

Պատվիրում ես լաստանավով ահեղ ու գոռ անդունդները անցնել ծովի:

Դժվար է այդ և ահեղի: Նույնիսկ արագ նավերը հարթ ու համաչափ,

Զևսի հողմով խրախուսված՝ միշտ չեն հաջող այն անցընում:

Ահավասիկ, քո ցանկությունը հակառակ, լաստանավով ես չեմ գնա,

Մինչև որ դու չկամենաս մեծ երդումով երդվել այստեղ,

Որ ինձ համար չես հորինում դու այլ աղետ մի չարադավ»:

180 Այդպես ասաց, և Կալիպսոն աստվածային իսկույն ժպտաց,

Նրան ձեռքով նա փայփայեց, անվամբ կոչեց ու խոսք ասաց.

«Ծիշտ որ դու խիստ խորամանկ ես, հնարագետ և իմաստուն,

Որ այդպիսի լուրջ ու զգաստ և խորիմաց միտք հղացար:

Թող իմանան, իբրև վկա, երկիրը այս, երկինքը լայն

Եվ Ստիքսի ջրերը հորդ, որոնք հոսում են գետնի տակ (այս է իրոք

Երանավետ աստվածների երդումը մեծ և ահավոր),
Երդում եմ արդ, որ ես քո դեմ չեմ հորինում ոչ մի աղետ, ոչ մի

դավանք,

Այլ քեզ իրոք այն եմ միայն խորհուրդ տալիս, որն իմ ազնիվ

համոզմունքն է.

Այդպես ինքս կվարվեի, եթե իրավ քո վիճակում ես լինեի:

190 2Է՞ որ ես էլ և՛ կամք ունեմ, և՛ սուրբ ձգտում արդարության,

Նաև սիրտս այս կրծքի տակ երկաթից չէ, այլ վատում է

կարեկցությամբ»:

Այդ ասելով՝ քայլեց, գնաց պերճ դիցունի՞ն աստվածների

Եվ հետևեց աստվածունուն Ռոփսուսը բազմաշարչար:

Երկուսով էլ խոր քարանձավ նրանք մտան. քաջն հողածին և դիցունի՞ն:

Բազմեց այնտեղ նա բազմոցին, որից դեռ նոր Արգոսասպանը

վեր կացավ.

Հավերժահարսն իսկույն դրեց նրա սուսջ ամեն տեսակ կերակուրներ՝

Ե՛վ խմիչքներ, և՛ ուտելիք, որ ուտում են միայն մարդիկ մահկանացու:

Ինքն էլ ապա բազմեց ուղիղ աստվածակերպ Ռոփսուսին դեմ-հանդիման,

Իսկ նածիշտները դիցունուն մատուցեցին քաղցր նեկտար և ամբրոսիա:

200 Այդպես նրանք ձեռք մեկնեցին պատրաստ դրված ուտեստների՞ն.

Երբ հագեցան կերուխումով նրանք այդպես և լիովի,

Նախ և սուսջ իր խոսքն ասաց պերճ դիցունի՞ն աստվածների.

«Դյուցասնունդ Լաներածին, ո՛վ Ռոփսուս բազմահնար

Ուրեմն դու մտադիր ես գնալ, հասնել քո օջախը բարձրակտուր

Եվ սիրելի քո հայրենիք: Բարո՛վ գնաս. հաջողություն քեզ կմատթեմ:

Բայց եթե դու իմանայիր՝ որքա՛ն տանջանք և դառն աղետ

Դեռ վիճակված է քեզ կրել, մինչև հասնես դու հայրենի երկիրը քո,

Իրավ, ինձ մտ կմնայիր և կապրեիր ինձ հետ այստեղ, իմ հարկի տակ.

Ու դու անմահ կլինեիր, հավերժակյաց, թեպետ ձգտում ես դեպի տուն,

210 Որ կնոջդ տեսնես շուտով, որին այդպես կարտեղ ես փախազատենչ:

Մինչ կարող եմ արդարացի ես պարծենալ, որ իսկապես քո կնոջից

Հասակովս կամ իմ տեսքով վատթար չեմ ես: Եվ չի կարող

Մահկանացու կինը մրցել գեղեցկությամբ անմահների պերճանքի հետ»:

Պատասխանեց իսկույն նրան Ռոփսուսը ամենագետ.

«Ես լավ գիտեմ, որ իմաստուն Պենելոպեն, եթե նայես՝

Իր հասակով և իր տեսքով քեզնից նսեմ է ստավել ու աննշան,

Իբրև թշվառ մահկանացու, սակայն չէ՞ որ անմահ ես դու:

Բայց կարոտ եմ ես իմ կնոջ, նրա վիշտն է ինձ ամեն օր տառապեցնում.

Ես ուզում եմ տունս գնալ, մեծափափագ օրը՝ տեսնել վերադարձիս:

220 Իսկ եթե մեկն աստվածներից մթին ծովում ինձ պատճառի

նոր արհավիրք

Վրհանդուրծեմ ես նաև այդ. բազմափորձ է սիրտս, տոկուն.

Ծառն եմ կրել ես տառապանք, խոնջանք ու վիշտ ծովերի մեջ,
Նաև այնտեղ՝ պատերազմում, թող միանա և նոր՝ աղետն այդ ամենին»:

Այդպես ասաց: Մինչդեռ արևը մայր մտավ, և ամենուր տիրեց խավար:
Եվ հեռացան նրանք իսկույն: Այնտեղ՝ մի մեղմ անկյունի մեջ

խոր անձալի

Միրո քաղցր գգվանքի մեջ հրճվում էին նրանք մենակ:

Իսկ երբ ծագեց ստավոտյան արշալույսը վարդամատն,

Ռոփսուսը հագավ իսկույն իր պատմունճանն ու վերարկուն:

Իսկ դիցունի՞ն ծածկեց ծածկոցն իր նրբահյուս, գեղեցկափայլ

ու շողշողուն,

230 Կապեց մեջքին նա իր գոտին՝ գեղեցկակերտ ու ոսկեղեն,

Այնուհետև քաշեց գլխին պայծառ շղարշը նկարեն

Եվ սկսեց Ռոփսուսին ուղևորման նա պատրաստել:

Հանձնեց նրան նա մի տապար՝ թեթև ու մեծ, պղնձակերտ,

Երկապոյի և ձեռքի համար հարմարավույն ու գեղեցիկ,

Որը ամուս հագցրած էր ձիթենու պինդ փայտից կոթին:

Եվ բացի այդ՝ տվեց նրան մի սրբատաշ, հղկված ուրագ.

Ապա հապճեպ ուղևորվեց դեպ հեռավոր ծայրը կղզու,

Որ մեծամեծ ծառեր կային և՛ կաղամախ, և՛ լաստենի, և՛ երկնահաս

Եղևնիներ. բոլորը գուռ ու մերկացած, լողի համար պինդ ու հարմար:

Երբ որ նրան նա ցույց տվեց, թե որտեղ են աճում ծառեր

բարձրակատար,

240 Իսկույն ևեթ աստվածունի պերճ Կալիպսոն ետ դարձավ տուն:

Եվ սկսեց նա կտրատել այնտեղ ծառեր, եռաց նրա գործը արագ.

Նա քսան ծառ կտրեց այդպես, սուր կացիներով սրբատաշեց

շուրջանակի,

Հղկեց ապա ճարտարապես, չափեց լարով և հարթեցրեց նա համաչափ:

Իսկ Կալիպսոն՝ պերճ դիցունի՞ն աստվածային, նորից եկավ,

բերեց գշիր:

Եվ նա փորեց ու ծակծկեց գերաններն այդ, կապեց, կցեց իրարու հետ.

Պահանգներով և սեպերով պինդ հեղուսեց ու լաստանավն

այդպես կերտեց:

Ինչպես վարպետն հյուսնության մեջ ճարտարագործ, չափում է լավ,

Ապա շինում լանջածավալ ու բեռնատար նավի հատակն,

250 Այդպես շինեց Ռոփսուսը լաստանավն իր տարողունակ:

Չողեր տնկեց և հեղուսեց հեցուկներով ու ցանկապատ շինեց վերուստ,

Ցանկապատի վրա երկար նա բռնակներ շինեց նաև.

Տնկեց կայսր, որին կցեց սուագաստի համար մի ձող:

Եվ բացի այդ՝ դեկ պատրաստեց, որպեսզի ճիշտ դեկավարի,

նողություն տա,

Մեղքերի մեջ նա խիտ առ խիտ խցկեց ճյուղերը ունենալ,
Որ պաշտպանվի նավը ջրից, հետո լցրեց նա լաստի մեջ շատ
կոճղ ու ճյուղ:
Եվ Կալիպսոն՝ աստվածային պերճ դիցուհին, բերեց կտավ
մի շողշողուն,
Որ առագաստ նա պատրաստի, իսկ Ռդիսևսն այդ էլ շինեց

Կցեց դրան նա չվաններ, առագաստի պարանները սարքեց իսկույն
260 Ու վերջապես լծակներով լաստը ձգեց աստվածային ծովի վրա:
Հասավ արդեն չորրորդ օրը, և պատրաստված էր ամեն բան,
Իսկ հինգերորդ օրը նրան ճամփա դրեց պերճ Կալիպսոն աստվածային:
Նա լողացրեց նրան մաքուր, հագուստ հագցրեց անուշաբույր,
Նրա համար բերեց, դրեց մի տիկ գինի մուգ-կարմրագույն
Ու մեծագույն մի տկով ջուր: Դրեց նաև նա ընտրովի մի պարկ պաշար.
Բազմաբազում քաղցրեղեններ ու տենչալի շատ ուտեստներ:
Նա առաքեց այնուհետև բարենպաստ ուղեկից հողմ,
Որի համար Ռդիսևսը ուրախացավ և առագաստն իսկույն պարզեց:
Նստեց ապա նա դեկի մոտ, դեկը շարժեց, դեկավարեց վարպետորեն,

270 Եվ այնուհետ քունը նրա աչքերն այլևս չփակեց:
Նա նայում էր Բուլլքին անդուլ և անագան միշտ մայր մտնող
Եզնարածին, այլև Արջին, որը նաև կոչվում է Մայլ,
Որ միևնույն տեղն է շարժվում և անդադար հետևում է Օրիոնին
Ու երբևէ Օվկիանոսի ջրերի մեջ չի ընկղմվում:
Կալիպսոն էր, աստվածային պերճ դիցուհին, տվել պատվերն
այդ նախօրոք,
Որ աստղերն այդ իր ձախ թևում միշտ ունենա նա՝ ծովի մեջ
նավարկելիս:

Տասնևյոթ օր նա շարունակ իր ուղին էր անցնում ծովով,
Տասնութերորդ օրը արդեն երևացին փեակների
Երկրի լեռներն սովերամած, որ նավորդին մոտ էին շատ.
280 Դրանք մթին այդ ծովի մեջ նման էին մի մարտական մեծ վահանի:

Այնժամ երկրից եթովպացոց ետ էր գալիս երկրասասանն իշխանագոր.
Երբ լեռներից տղիմների տեսավ հանկարծ, որ Ռդիսևսն է ծովն անցնում,
Ահեղորեն նա զայրացավ, սիրտը լցվեց վրդովմունքով:
Թափահարեց նա գլուխն իր, ապա խոսեց և իր հոգուն այս
խոսքն ասաց.
«Ավա՛ղ, միթե աստվածները, երբ ես հեռու երկրում էի եթովպական,
Ռդիսևսի բախտը այլ կերպ են որոշել: Ահավասիկ հասնում է նա
Փեակների երկիրն արդեն, որտեղ նրան վիճակված է վերջ ի վերջո

Խույս տալ ցանցից իր բազմադետ տանջանքների, որ կրում է
նա հանապազ:
Բայց դեռ, կարծես, շատ տառապանք պիտի կրի, մինչև որ կուշտ
նա հագենա»:

290 Այդպես ասաց և հավաքեց նա ամպերը: Եռածանին իր ձեռքն առավ,
Փոթորկեց ծովն ու բորբոքեց շունչը բոլոր մրրիկների.
Թուխպ ամպերը խիտ ծածկեցին երկիրն ու ծովն ամենուրեք,
Իսկ երկնքից գիշերն իջավ. խիստ հուզվեցին հուժկու Եվրոսն ու
Նոտուրը,

Այլև Ջեփյունն արագաշունչ ու հորեասն եթերածին,
Որոնք ուժգին անդ նետեցին վիթխարի ու բունն աղիքներ:
Եվ թուլացան սիրելի սիրուն ու ծնկները՝ Ռդիսևսի:
Նա վրդովվեց ու իր հոգուն քաջակորով՝ այս խոսքն ասաց.
«Ավա՛ղ, որքան դժբախտ եմ ես: Ի՞նչ կլինի վերջն իմ արդյոք:
Ոհ, երևի ճիշտ գուշակեց աստվածուհին իմ ապագան.

300 Ձե՛ որ ասաց, որ ծովի մեջ, նախքան հասնեմ՝ իմ հայրենի երկիրը ես,
Պիտի կրեմ շատ աղետներ: Եվ այժմ ահա կատարվում է ամենը այդ:
Տե՛ս, որպիսի՛ խիտ ամպերով Ջևսը պատեց անձայրածիր երկինքն
ամբողջ.

Բորբոքել է ծովը հուժկու, շուրջը շաշում են մրրիկները բազմազան՝
Լի հուզմունքով փոթորկալից, և այժմ արդեն անխուսափ է
կորուստը իմ:

Ա՛խ, եռակի, քառապատիկ երջանիկ են դանաչացիք, որոնք ընկան,
Կործանվեցին լայն Տրոյայում՝ Ատրիդների հավատարիմ:
Լավ չէ՞ր լինի, որ նաև ես կործանվեի ժանտ օրհասով
Հենց այն օրը, երբ բազմամբոխ տրոյացիք Պելևսյանի դիակի մոտ
Թափում էին գլխիս անվերջ բյուր-բյուրավոր սուր նիզակներ:

310 Եվ այդ դեպքում ինձ մեծ պատվով կը թաղեին, ես վեհ փառքի
կը հասնեի
Աքեյանց մեջ, մինչ այժմ պետք է ես մահանամ մահով թշվառ
և անարժան»:

Այդ ասելիս՝ նրա վրա վերուստ ընկավ մի անուելի, հուժկու աղիք
Եվ գալարեց, պտույտ տվեց լաստանավը ահագնակի:
Իսկ Ռդիսևսն, դեկն իր ձեռքից բաց թողնելով, ցած տապալվեց
Եվ ծովն ընկավ լաստից պոկվեց: Մինչ հողմերի բորնկույնը
անեղաշունչ,
Հանց ամենուր գոռ շառաչող հուժկու մրրիկ, զարկեց, կոտրեց
կայմն մեջտեղից.

Առագաստը և նրա ձողն հուժկու թափով ծով նետվեցին ու վացան
Ալիքների արշավի մեջ, Ռդիսևսին՝ կոհակները դեռ պահեցին
Ջրերի տակ. չկարեցավ նա փրփրալից այլաց ճնշումն հաղթահարել,

320 Ծանրացած էր նա հագուստով, որ Կալիստոն հագցրեց նրան
արժանապէս.

Բայց ի վերջո նա դուրս եկավ. բերնից թափվում էր ջուրն աղի,
Որն հոսում էր նաև նրա գլխից, բոլոր գիսակներից:
Չը մոռացավ նա լաստը իր, թեպետ արդեն հոգնած էր խիստ:
Նա, ալիքները ճեղքելով, ուղղվեց դեպի այն ու բռնեց
Ել, փրկվելով օրհասական իր վիճակից, նստեց լաստին:
Հոծկու ալյաց հորձանքի մեջ լաստը նետվում էր աջ ու ձախ,
Հանց աշունքին ծանոթորեալն էր քշում փշերը դաշտի մեջ,
Որոնք, թվով անհաշվելի, հողմի առաջ սիւնում են, կցվում իրար,
Այդպէս ծովում հողմերն, աստ-անդ հար նետելով, քշում էին

լաստը նրա:

330 Մերթ Նոտոսն էր այն նետում դեպ Բորեասը, որ սա քշի,
Մերթ էլ՝ Եվրոսն էր այն ձգում դեպի Չեփյուն, որ հալածի նա անխնա:
Բայց Կադմոսի դատրիկն՝ Ինոն, քաջահասակ Լևկոթետն, տեսավ նրան.
Մահկանացու էր նա առաջ և մարդաձայն, սակայն հիմա
Նա ծովային աստվածուհու վեհ փառքին էր արժանացել:
Գթաց նա հեզ Ռիսուսին, որ տառապում էր մեծապէս.
Նմանվելով ճայի՝ իսկույն նա դուրս եկավ հորձանքներից,
Ամուր նստեց լաստանալին, ապա ասաց Ռիսուսին.
«Ո՛հ, դու դժբախտ, ինչո՞ւ արդյոք Պոսիդոնը երկրասասան
Քո դեմ այդպէս զայրացած է ու տեղում է նա քո գլխին բյուր

աղետներ:

340 Սակայն նա քեզ չի կործանի, թեպետև խիստ փափագ ունի.
Դու ինձ լսիր, վարվիր այսպէս, քանզի, կարծեմ, դու պանդուր չես:
Հանիր շորդ և դեն ձգիր. իսկ լաստը այս թող հողմերի քմալքների՞ն
Ու ձեռքերովդ լող տուր այժմ և փրկությունը որոնիր
Անդ, երկրի մեջ փեսակների, քանզի այնտեղ է վիճակված քեզ

ապաստան:

Վերցրո՛ւ անեղծ, աստվածատուր այս քողը և կրծքիդ փոփր,
Ել դու բնավ այտուհետև չես վախենա կործանումից:
Իսկ երբ լող տաս դու ձեռքերով և ցամաքին հասնես շուտով,
Քողն արձակիր և այն իսկույն ծովը նետիր դու մթագույն,
Սակայն ափից հեռու ձգիր և ցամաքով երկրի ներսը արագ գնա»:

350 Այդպէս ասաց աստվածուհին և քողն հանձնեց իսկույն նրան,
Իսկ ինքն ապա, ճայի նման, սուզվեց նորից խորքն ալեկոծ,
Մթին ծովի, և մթագույն ալիքն իսկույն ծածկեց նրան:
Ու մտածեց բազմաշարշար Ռիսուսը աստվածակերպ,
Մտահոգված՝ նա հառաչեց և քաջ սրտին այս խոսքն ասաց.

«Վա՛յ ինձ, վա՛յ ինձ: Ո՛հ, միգուցե մեկն ու մեկը աստվածներից
իմ դեմ հիմա՝
Նոր նենգություն է հորինում՝ պատվիրելով, որ լաստանալը ես թողնեմ:
Սակայն ես այդ չեմ կատարի, զի տեսնում եմ՝ հեռու է դեռ

ցամաքն ինձնից,

Որ ինձ համար, ինչպէս ասաց, նոր ապաստան է վիճակված:
Լավ չի՞ լինի, վարվեմ այսպէս.— և ստավել բարվոք է դա այժմ
ինձ թվում,

360 Քանի որ այժմ գերանները պահանգներով դեռ հեղուկված,
կցված են պինդ,

Ես կը մնամ լաստիս վրա և կը կրեմ, կը հանդուրժեմ այժմ ամեն ինչ:
Իսկ երբ արդեն լաստանալն իմ աստ խորտակվի ալիքներում
այս ահալոր,

Ծով կնետվեմ ու լող կտամ, ուրիշ հնար քաջահարմար այստեղ չկա»:
Մինչ նա այդպէս միտք էր անում ինքն իր սրտում և իր հոգում,
Պոսիդոնը երկրատառան հուզեց, շարժեց մի ահռելի, մեծ ու հզոր,
Կարծես ուղիղ նրա գլխին վերուստ կախված, հոծկու ալիք.
Ռիսուսի լաստին զարկեց: Ինչպէս հողմի շունչն ամենի
Քշում է գոս կույտը հարդի և այն նետում է ցիրուցան,
Այդպէս ահա շարդեց, ցրեց նա գերաններն երկար լաստի:

370 Իսկ Ռիսուսն գերաններից մեկը բռնեց ու ցատկելով՝ վրան նստեց,
Ինչպէս հեծնում են ճծույզ ձին. հանեց հագուստն, որը տվել էր
Կալիստոն,

Ու ծով ձգեց: Ապա հապճեպ նա իր կրծքին կապեց քողը
կախարդական,

Պարզեց ձեռքերն իր լայնորեն ու ծով նետվեց գլուխն ի վար՝
Փափագելով լող տալ այդպէս: Տեսավ նրան երկրասասանն
իշխանագոր,

Ծարժեց գլուխն և ինքն իր մեջ ու իր սրտին այսպէս ասաց.
«Այդպէս ահա, բյուր տառապանք հանդուրժելով, շրջիր ծովում
դու չարագույժ,

Մինչև որ գաս դեպի ցամաք, հասնես մարդկանց դյուցասնունդ.
Բայց և այնժամ, համոզված եմ, չես տրտնջա, որ տառապանքն էր
քո նվազ»:

Ասաց այդպէս ու մտրակեց գեղեցկաբաշ նա ձիերին,
380 Գնաց հասավ իսկույն Էգե, որ ազնվաշուք ապարանքն էր նրա
կանգնած:

Մինչ Աթենասն՝ դուստրը Չևսի, այլ բան մտքում իր մտածեց.
Արգելեց նա շունչն հողմերի, ուղիները փակեց նրանց,
Պատվեր տվեց, որ դադարեն բոլորն իսկույն և քուն մտնեն մեղմ
ու հանգիստ:

Հուզվեց միայն Բորեասը, որ վերացնի ալիքներն՝ այն,
Որպեսզի գեթ դյուցասնունդ Ռդիսևը գնա, հասնի
Փեակներին անդ թիասեր և խուսափի այդ մահացու իր վիճակից:
Բայց նա այդպես՝ երկու գիշեր ու երկու օր տարութելով

հոբոյ ալյաց մեջ,
Ինքն իր սրտում և նախապես լավ զգալով իր անխուսափ կորուստն
այնտեղ:

390 Իսկ երբ երրորդ օրն ստեղծեց Արշալույսը գեղագանգուր,
Սաստկաշունչ հողմը դադարեց, շորջը տիրեց հանդարտություն,
Խաղաղ ծովն էր Ռդիսևի դիմաց փոված: Նա, ալիքով առաջ նետված,
Քաջահայաց նայեց շորջն իր և նկատեց ցամաքն այնտեղ:
Ինչպես հաճախ որդոց համար ցնծավետ է ու բերկրալի կյանքն

իրենց հոր,
Որը, պտուկած հիվանդագին, երկարատև տանջանքի մեջ,
Հար տատապում էր սաստկապես, քանզի դեռ էր տկարություն
մատնել նրան,
Բայց փրկել են աստվածները նրան մահից՝ բերկրանք տալով
նրա որդոց,

Այդպես ահա Ռդիսևին հույժ բերկրալի թվաց երկիրն ու անտառը,
Եվ նա ուժգին լող էր տալիս, որ գեթ շուտով ոտքն իր դընի հողի վրա:
Երբ նա արդեն այնքան մոտ էր, որքան կարող է ձայնն հասնել,

400 Լսեց հանկարծ գոռ թնդունը ժայռը թակող ալիքների:
Մինչ վիթխարի, մեծ ալիքները կատաղի զարկվում էին չոր ցամաքին
Ու մրոնչում ահագնակի, և ամեն ինչ ծովափրփուրն էր պատել անդ:
Ծորջը չկար նավակայան և ծովախորշ կամ նավերին մի ապաստան:
Ժայռերն էին ցցված ծովում և ծովածեծ, ապաստածուտ, քարափ միայն,
Ուստի իսկույն Ռդիսևի սիրտն ու ծնկները թուլացան,
Եվ վշտացած այս խոսքն ասաց նա իր սրտին քաջախիզախ.
«Ավա՛ղ. Ջևար թույլ տվեց ինձ տեսնել երկիրն անակնկալ,
Անդունդները ես լող տվի, գոռ ալիքները՝ ճեղքելով՝ այստեղ հասա,
Սակայն չկա ձերմակ ծովից դուրս ելնելու ոչ մի հնար.

410 Դեմս կանգնած են սեպեզր լեռնաժայռեր, շորջն՝ ալիքներն,
հոխորտալով,
Աղմղկում են մեծամոունչ ու մոլեգին. վերուստ կախված են ուղղաբերձ
Ապաստածներն անմատչելի, ծովն է այստեղ հուզված ու խոր.
Անհնար է երկու ոտքով կանգնել ամուր և խուսափել ժանտ աղետից:
Եթե փորձեմ ես դուրս ցատկել, հուժկու ալիքն ինձ կարող է բռնել
իսկույն

Եվ խիստ նետել այս ժայռերին, և կլինի փորձն իմ նանիր:
Եթե այլուր լող տամ՝ ափին այս գուգահեռ, որ գտնեն գեթ
Հեշտ զատիվայր, որևէ ծերպ, նավակայան,

Սարսափում եմ. ո՛հ, միգուցե մրրիկը ինձ, հեծեծման մեջ այս

Վերցնի, ապա քշի, տանի՝ դեպ հեռուները ձկնավետ այս մուգ ծովի:
420 Կամ միգուցե մի ոմն աստված անդ մի հրեշ ծովից հանկարծ
իմ դեմ հանի,

Որպիսիներն այստեղ իրոք շատ է՝ սնում Ամփիտրիտեն փստապասկ.
Քանզի գիտեմ, իմ դեմ աստիկ զայրացած է Պոսիդոնը երկրասասան»:
Երբ որ այդպես միտք էր անում նա՝ իր սրտում և հոգու մեջ,
Հուժկու ալիքն հանկարծ նրան բռնեց, նետեց դեպ լեռնաժայռը ափունքի:
Մաշկն իր մարմնի պիտ պլոկեր և ոսկրերն էլ շարդուփշուր պիտի աներ,
Եթե նրան աստվածուհի վեհ Աթենասն այսպիսի միտք չներշնչեր.
Նա շուտափույթ, երկու ձեռքով, ժայռը բռնեց և, հեծնելով,
Նրա լանջին կախված մնաց, իսկ ժանտ ալիքը ետ քաշվեց,
Եվ նա մահից իր խուսափեց: Սակայն ալիքն, ետ քաշվելով,

նորից թնդաց,
430 Վրա տվեց, նրան զարկեց, ժայռից պոկեց ու դեպ ծովի՝ խորքը տարավ:
Այնպես, ինչպես բազմոտանուն, եթե նրան իր խոռոչից
դուրս են բերում,

Կպչում են պինդ և խիտախիտ բազմաբազում ավազիկներ,
Այդպես նրա հաղթ ձեռքերի պոկված մաշկը կտոր-կտոր
Կպած մնաց ժայռի լանջին, իսկ ալիքը ծածկեց նրան ամբողջովին:
Եվ Ռդիսևը տարաբախտ, ճակատագրին՝ իր հակառակ, պիտ

կործանվեր,
Եթե նրան քաջահնար խորհուրդ չը տար պայծառաշյա վեհ Աթենասն:
Դուրս լող տալով ալիքներից, որոնք թակում էին ափունքը՝ ցամաքի,
Նա լողալով շարժվեց հեռուն՝ աչքն իր ուղղած դեպի երկիրն,
որ գեթ մի կերպ

Տեսնի այնտեղ հեշտ մատչելի մի զտիվեր, նավակայան:

440 Երբ, լող տալով, եկավ, հասավ նա բերանին գեղեցկահոս վարար գետի,
Նրա աչքին անդ երևաց հարմարագույն և հարթ մի տեղ,
Փափուկ մի ափ, որն ազատ էր քարից, ժայռից, պաշտպանված
էր ժանտ հողմերից:

Նա հասկացավ, որ ծովալեժ մի գետ է՝ դա, և աղոթեց նա սրտագին.
«Լսի՛ր ինձ, տեր, ով որ լինես, դիմում եմ քեզ աղերասանքով.
Խուսափել եմ այսպես ահա ծովից հուժկու և զայրույթից Պոսիդոնի:
Չէ՞ որ անմահ աստվածների վեհ յունամքին արժանի են նաև նրանք,
Որ գալիս են իբրև դժբախտ թափառական, անչպես ես եմ, ահավասիկ,
Եկել եմ ժանտ թափառումից: Ընկած եմ, արդ, քո հորձանքին

ու ծնկներին:
Խղճա ինձ, տեր, քանզի ես քեզ աղոթում եմ հանց արժանի մի
խնդրարկու»:

450 Ասաց այդպես: Եվ նույնհետայն գետ-աստվածը դադար տվեց
հորդ հոսանքին,
Զսպեց, սանձեց ալիքներն իր: Ստեղծելով շուրջը նրա հանդարտություն՝
Նրան փրկեց իր հունի մեջ: Բայց թույացել էին նրա ծնկներն արդեն
Ու ձեռքերը. ալիքների դեմ կովելուց սիրտն էր արդեն սաստիկ տկար:
Ուտեց նրա մարմինն ամբողջ. շուրս էր հոսում նրա քթից և բերանից:
Անշնչացած, անխոս և լուռ՝ պառկեց այնտեղ նա ուժասպառ,
Եվ տիրեցին նրան այդպես անհուն խոնջանքն ու թուլությունն:
Բայց երբ հետո նա շունչ քաշեց, ուշքի եկավ, միտքն արթնացավ
իր հոգու մեջ,

Իսկույն ևեթ աստվածուհու կախարդական քողն արձակեց
Եվ այն հապճեպ նետեց գետի հորձանքի մեջ այն ծովավեժ.
460 Քողը սահեց ալիքների մեջքի վրա: Աստվածուհի Ինոն այնտեղ
Այն ընդունեց սիրանվեր իր ձեռքերով: Իսկ նա, գետից հեռանալով,
Չոքեց դարար շամբուտի մեջ և համբուրեց երկիրն ու հողը կենարար:
Ապա հուզվեց և խոսք ասաց նա իր սրտին քաջախիզախ.
«Վա՛յ ինձ, ավա՛դ, ինչե՛ր սիրտի դեռ ես կրեմ, ի՞նչ կլինի վերջն
իմ արդյոք.

Եթե այստեղ, այս գետի մոտ, ես անցկացնեմ գիշերը այս
ծանրաթափսիծ.

Եղյամը վատ, վնասարար և ցողը ցուրտ կարող են ինձ
Աստ կործանել. իսկ ես չե՞ որ ստանց այդ էլ ուժասպառ եմ
արդեն հիմա:

Մինչ ցրտաշունչ հողմն է փշում առավոտյան այս հորդ գետից:
Սակայն եթե վեր բարձրանամ ես բլուրն այս և անտառում սովերամած,
470 Տերևախիտ ճյուղերի մեջ անդ քուն մտնեմ, եթե այդպես
ինձ խստագին
Խոնջանքն՝ ու ցուրտն հաղթահարեն, ու ես սուզվեմ քաղցրանուշիկ
խոր քնի մեջ,
Երկյուղում եմ. ո՛ր միգուցե գազաններին դառնամ ավար ու կերակուր»:
Նրան, այդպես միտք անելիս, հանկարծ թվաց, որ լավագույնը
վերջինն է:

Ուտի գնաց նա անտառը, որ թեքված էր դեպի գետն այն.
Նա սողալով տակը մտավ մի ճյուղավոր ու խիտ թփի,
Որն աճում էր մեծ ցողունից. մի ճյուղն ազնիվ ձիթենի էր, մյուսը,
սակայն,
Վայրենի էր: Խորքը դրանց չէր թափանցում քամիների շունչը խոնավ,
Եվ չէր հասնում դրանց բնավ վատ ճառագայթը արևի:
Անձրևն անգամ դեռ չէր անցել դրանց ներսը, չափազանց խիտ
էին դրանք.

480 Թփերն աճում էին կցված ու միասին: Դրանց տակ մտավ Ողիսևար:

Իր հաղթ ձեռքով նա տերևներ անդ հավաքեց և անկողին սարքեց
իսկույն,
Քանզի կային բյուրաբազում շատ տերևներ անդ կուտակված,
Որոնցով լավ պատսպարվել կարող էին նույնիսկ երկու կամ երեք մարդ,
Երբ եղանակը վատ լիներ, երբ թնդային փոթորիկներ:
Տեսնելով այդ՝ բազմաչարչար, աստվածակերպ Ողիսևար խնդաց հոգով,
Պառկեց իսկույն և իր վրա տերևների կույտը ցանեց.
Այնպես, ինչպես դաշտում հեռու, որտեղ չկա ո՛չ հարևան և ո՛չ մի
մարդ,

Իր խանձողն է մոծիլի մեջ թաքցնում, պահում հովիվն հաճախ,
Որ կրակի սաղմը մնա և այն այլուր ձեռք բերելու պետք չլինի,
490 Այդպես ծածկվեց Ողիսևար տերևներով: Իսկ Աթենասն
Քունն աչքերին ցանեց նրա, որ խոնջանքից նա ազատվի,
Եվ շուտափույթ փակեց նրա արտևանումքը սիրելի:

Ե ր գ վ ե ց ե ր ո ր դ

ՈՂԻՍԵՎՍԸ ԳԱԼԻՍ Է ՓԵԱԿՆԵՐԻ ՄՈՏ

Այդպէս քնած էր դյուցագուն Ողիսէսը բազմաշարշար:
 Հաղթահարել էին նրան քունը խորունկ և խոնջանքը:
 Այդ ժամանակ Աթենասը՝ աստվածունիին պայծառաշյա,
 Թուսլ, գնաց դեպի քաղաքն ու երկիրը փեակների:
 Սրանք առաջ, վաղ ժամանակ, ապրում էին Հիպերիայում լայնատարած,
 Անդ, մերձակա կիկլոպներին, որոնք անչափ նպերտ էին ու վիսացող,
 Ու միշտ նրանց՝ ճնշում էին, երբ ստալել կորովալիր ու գերազանց:
 Եվ դուրս հանեց փեակներին Նալսիթոսն աստվածակերպ,
 Աքերիա քերեց բնակության, որը հեռու էր մարդկանցից շահախնդիր:
 10 Քաղաքի շուրջը պարիսպներ նա կառուցեց, տներ շինեց բնակության,
 Կանգնեց փարթամ նա տաճարներ աստվածներին և բաժանեց հողն
 ամենքին:
 Սակայն մահվան ուժով գերված՝ վաղուց ի վեր տունն էր իջել
 նա Հադեսի:
 Եվ իշխում էր այժմ Ալկիոնոսն՝ աստվածներից իմաստութունն
 իր ստացած:
 Արդ՝ Աթենասն՝ աստվածունիին շողշողաշյա, մեծահոգի Ողիսիսի
 Դարձի մասին հոգ տանելով, դեպի նրա ապարանքը ուղղվեց, գնաց:
 Նա բարձրացավ, արագ մտավ ճնշարանը գեղեցկակերտ ու նկարեն,
 Որ քնած էր աստվածատես արքայադուստրը՝ Նալսիկան,
 Գեղեցկափայլ պերճ դստրիկը մեծահոգի Ալկիոնոսի:
 Իսկ նրա մոտ, այնտեղ դուան երկու կողմից, կանգնած էին գույգ
 նաժիշտներ՝
 20 Քարիսներից իրենց պերճանքը ստացած: Փակված էին դռներն հղկված:
 Եվ դիցունիին, հանց հողմի շունչ, արագ անցավ դեպ անկողինը աղջրկա,
 Կանգնեց նրա նա սնարին, դիմեց նրան և խոսք ստաց՝
 Նմանվելով ծովագնաց քաջ Դիմասի այն դստրիկին,
 Որին իրոք հասակակից էր Նալսիկան, և որին նա սիրում էր շատ:

Ահա, նրա տեսքն ընդունած, Աթենասը՝ պայծառաշյա այսպես խոսեց.
 «Ինչպե՞ս է որ, ով Նալսիկա, սիրած մայրդ ծուլ է ծնել քեզ, ապաքեն,
 Եվ քնած ես դու տակալին՝ անհոգ թողած քո զգեստները պերճաշուք.
 Մինչդեռ արդեն մոտիկ է քո ամուսնությունն, երբ դու ինքդ պիտի

գուգես

Եվ պիտ գուգես նաև նրանց, որ կտանեն՝ քեզ հարսանիք:
 30 Լավ զգեստներ պարկեշտ հագնող մարդն է արժան փառք ու պատվի,
 Եվ ցնձում են ուրախությամբ հայրը նրա և հարգո մայրն:
 Արդ, եկ գնանք մենք լվացքի, հենց որ ծագի Արշալույսը ճանանչագեղ.
 Կը հետևեն քեզ նաև ես, հանց օգնական, որ շուտափույթ գործն
 ավարտես:

Իսկ դու չէ՞ որ երկար, այսպես, մնալու չես կույս, ամուրի.
 Եվ քեզ արդեն խնամախոս են փեակյան ամբողջ ազգի քաջազուններն,
 Որոնց ցեղին պատկանում ես նույնպես և դու: Ահավասիկ,
 Առավոտ վաղ գնա, խնդրիր վեսմափայլ քո ծնող հորն, որ պատվիրի
 Կառքը լծել ջորիք արագ, որպեսզի շուտ նրա վրա բառնանք, տանենք
 Պատմունճաններ, ծածկոցները փայլեցնազարդ և գոտիներն:

40 Եվ ավելի վաշելույշ է, որ դու գնաս կառքի վրա, և ոչ ոտքով ու հետիոտն,
 Քանզի չէ՞ որ լվացքի տեղն հեռու է շատ մեր քաղաքից»:
 Այդ ասելով՝ պայծառաշյա Աթենասը դեպ Օլիմպոսը հեռացավ,
 Որ ստում են, աստվածների հավերժ անեղծ բնակավայրն է անասան.
 Ոչ հողմերն են տատանում այն, և ոչ անձրևն է թրջում.
 Ջյունը երբեք չի ծածկում այն, երկինքն է միշտ ջինջ ու կապույտ,
 Ու լցված է լուսապայծառ շաշյունն այնտեղ Արեգակի.

Եվ հրճվում են նրա վրա երանալետ աստվածները հավերժապես:
 Երբ խրատեց պերճ աղջկան, անդուստ իսկույն Աթենասը թուսլ, գնաց:
 Ծագեց շուտով Արշալույսը գեղեցկազահ և արթնացրեց

50 Գեղեցկափայլ Նալսիկային, որ զարմացած էր երագով:
 Իսկույն վազեց, տունը մտավ, որ այն պատմի ծնողներին,
 Իր սիրելի հորն ու մորը: Երկուսին էլ տան մեջ գտավ.
 Նաժիշտների հետ միասին մայրը, նստած օջախի մոտ,
 Ծիրանագույն մաքուր բրդից թել էր մանում: Իսկ հայրիկին նա
 հանդիպեց

Դուան առջև. նա գնում էր դեպի ատյանը մեծափառ իշխանների:
 Այնտեղ նրան վեհ խորհրդի կանչել էին փեակները ազնվամեծար:
 Արդ, մոտեցավ նա իր հորը և խոսքն ասաց այս մեղմագին.

«Ոհ, հայրիկ ջան, չէ՞ս պատվիրի, որ ինձ համար սարքավորեն
 60 Գեղեցկանիվ կառքը բարձրիկ. պիտի տանեն ես գետափը լվանալու
 Մեր զգեստները գեղազարդ, քանզի դրանք կեղտոտ են այժմ:
 2Է՞ որ և քեզ, իշխանագարս մարդկանց շարքում, խորհրդի մեջ
 հանդես գալիս,

Վայելուչ է մարմնիդ վրա միշտ ունենալ մաքուր զգեստներ,
Եվ բացի այդ, քո տանն ունեն սիրանվեր դու հինգ որդի.
Երկուսն արդեն ամուսնացած, իսկ երեքը ծաղկահասակ և ամուրի:
2Է՞ որ նրանք ցանկանում են, պերճ, մաքրափայլ, զգեստն հագած,
Պարահանդես գնալ հաճախ: Մինչ հոգատարն այդ գործերի

ես եմ միայն»:

Ասաց այդպես, բայց ամաչեց հիշել նաև սիրատենչիկ իր հարսանիքն:
Հայրն հասկացավ, ուստի իսկույն պատասխանեց ու խոսք ասաց.

70 «Զաւակս, քեզ չեմ խնայի ոչ ջորիներ, ոչ էլ այլ բան,

Գնա, ինչպես կամենում ես. թող գամ շուտով ստրուկները և

պատրաստեն

Գեղեցկանիվ կառքը բարձրիկ, իսկ վերևից թող դնեն թափքը

գեղեցիկ»:

Ասաց այդպես ու ձայն տվեց ստրուկներին, որոնք իսկույն այդ լսեցին:
Դուրս հանեցին ու սարքեցին իսկույն կառքը գեղեցկանիվ ու ջորեքաշ:
Մոտ քերեցին և ջորիներ ամրաստեցին ու լծեցին կառքը փայլուն,
Իսկ Նախիկան խորհանցից հանեց, քերեց հագուստեղենը գերհրաշ:
Ապա բարձեց նա խնամքով կառքի վրա հղկված ու կոկ և նկարեն:

Զամբյուղի մեջ մայրը դրեց շատ այլևայլ ուտեստեղեն,

Դրեց նաև նա մսեղեն, լցրեց գինին մի այծենի նուրբ տկի մեջ:

80 Եվ բարձրացավ, կանգնեց ապա կառքի վրա պերճ Նախիկան:

Մայրը քերեց տվեց նաև օծանելիքը ոսկեկերտ մի փարչի մեջ,

Որ իր մարմնը նա օծի նաժիշտների հետ միասին:

Ու Նախիկան իր ձեռքն առավ սիրուն մտրակն և երասանը շողշողուն

Եվ մտրակեց ջորիներին: Թնդաց դոփյունը ոտքերի. անխոնջ ու ժիր

Ջորիները սուր սլացան, արագ տարան հագուստեղենն ու աղջրկան,

Բայց ոչ մեճակ. նրան իսկույն հետևեցին և նաժիշտները ծրաջան:

Եկան այդպես և շատ շուտով գետափն հասան գեղեցկահոս,

Որ մշտական լվարաններ էին սարքված, որոնց տակից ջինջ ու

պայծառ

Ջուրն էր հոսում սուստորեն, որ կարող էր կեղտն ամենայն մաքրել

խալստ:

90 Այնտեղ նրանք ջորիներին հապճեպ կառքից արձակեցին

Եվ թողեցին, որպեսզի անդ, այն հորդահոս գետի ափին,

Լավ արածեն ու վայելեն կանաչ խոտերը մեղրահամ և հյութալից:

Ապա իրենք ցած քերեցին կառքից հագուստն ու թափեցին սև ջրի մեջ.

Եվ սկսեցին, մրցակցելով իրարու հետ, կոխ տալ, քամել փոսերի մեջ:

Երբ լվացին նրանք այդպես, կեղտից ամբողջը մաքրեցին,

Ծուտ փոռեցին անդ շարեշար ծովի ափին, որ մեծ հորձանքը

հորդ ալյաց

Ամենից շատ դուրս էր նետում դեպի ցամաք կոպիճ, ալազ:

Այնուհետև լավ լողացան և օծվեցին պարարտ յուղով

Ու նստեցին գետի ափին այնժամ ճաշի համեղահամ.

100 Մինչդեռ լվացքը թողեցին, որ չորանա արևի վառ լույսերի տակ:

Երբ կերուխումն ավարտեցին ու հագեցան, նաժիշտները և Նախիկան,

Գլխաքողերն արձակելով, ցած ձգեցին և սկսեցին գնդակ խաղալ:

Մինչ նրանց մեջ լուսաթևիկ Նախիկան փորձն սկսեց երկու պարի.

Եվ ճիշտ այնպես, ինչպես վստմ Արտեմիաը, երբ ճախրում է նա,

բաջաղեղ,

Բարձրակատար Էրիմանթի և Տեգետի լանջով շքեղ,

Արագավազ եղնիկների ու կինճերի բազմազվարճ որսն անելիս,

Երբ նրա շուրջ թռչկոտում են դաշտակենցաղ հավերժահարս

պերճ դիցունհիք,

Ասպարակի Զևսի դստերք, և Լետոյի սիրուն է թնդում

քերկրանքով լի,

Քանզի նրա դստրիկն անմահ գլխով, տեսքով, գերազանց է

անդ բոլորից,

110 Եվ հեշտ է միշտ նրան իսկույն անդ ճանաչել, թեպետ բոլորն են

գեղեցիկ,

Այդպես ահա կույսն ամուրի գեղեցկությամբ գերազանցն էր

նաժիշտներից:

Արդ, երբ նրանք պատրաստվեցին վերադառնալ և տուն գնալ,

Երբ լծեցին ջորիներին ու լվացված, պերճ զգեստը հավաքեցին,

Աթենասը՝ պայծառաչյա սատվածուհին, մի այլ, նոր գործ

անդ հորինեց,

Որպեսզի շուտ Ողիսևը քնից զարթնի և այդ շքնաղ կույսին տեսնի,

Եվ, որպեսզի կույսն աննման նրան տանի դեպ քաղաքը փեսայների:

Գնդակն ահա արքայադուստրն այնժամ ձգեց դեպի մեկն իր

նաժիշտներից,

Բայց վրիպեց, և գնդակը ընկավ գետի հորձանքի մեջ.

Նրանք բարձր գոգոռացին, և արթնացավ Ողիսևը աստվածակերպ:

120 Նա վեր կացավ և սկսեց ինքն իր սրտում խոր միտք անել.

«Վա՛յ ինձ, ալա՛ղ: Որտե՞ղ եմ ես. ի՞նչ հողածին մարդկանց

մոտ եմ ես այժմ եկել:

Գուցե գոռոզ նկերտների մի վայր է սա կամ վայրենի և անօրեն,

Գուցե սրանք մարդիկ են հեզ և հյուրասեր, աստվածալախ

և բարեգութ:

Սակայն կարծես ձայն եմ լսում, նուրբ, կանացի, քնքուշ մի ձայն

աստ, մերձակա,

Ինչպես մի ճիշ չքնաղ կույսի կամ Նիմփայի. նրանք հաճախ

Գտնվում են լեռների մեջ, արտ-արոտում կամ գետերի ակունքներում,

Գուցե եկել և հասել եմ մարդկանց ուրույն բնակության:

Լավ է սակայն, որ ես ինքս փորձեմ գնալ և իմանալ հաստատապես»:
Ասաց այդպես Ռդիսևսը աստվածատես և դուքս եկավ թփի տակից:
130 Կարող ձեռքով թանձրաթփից նա կտրատեց տերևաշատ մի փունջ
ճյուղեր,
Որ նրանցով ծածկի մի կերպ իր մերկացած մարմնի մասերն ամոթալի:
Եվ նա գնաց, ինչպես սույուծ մի լեռնասուն, իր գորութչամբ
ինքնավստահ,
Որն անցնում է՝ անտեսելով անձրևը հորդ և ժանտ քամին:
Ինչպես կրակ,
Փայլատակում են աչքերն իր: Մինչ նա, հզոր, ներս է խուժում
Ոչխարների և կովերի կամ վայրենի եղնիկների մեջ հանկարծ:
Քաղցն է դրդում շորթել ոչխարը փարախից և պարիսպը անցնել ամուր:
Այդպես էլավ Ռդիսևսը, որ մտենա աղջիկներին գեղագանգոր,
Թեպետ մերկ էր նա ողջ մարմնով, բայց կարիքն էր դրդում նրան:
Եվ նա թվաց աղջիկներին զարհուրելի, տիղմով պատած և այլանկալ:
140 Ահաբեկված՝ նրանք փախան այս ու այն կողմ, դեպի ծովի
ափունքը կոր,
Եվ միմիայն դուստրը մնաց Ալկինոսի: Աթենասը նրա սրտին
Ներշնչեց բուռն խիզախություն և մարմինը ձեռքազատեց նա երկյուղից:
Սրտապնդված՝ նա դեմառդեմ կանգնեց տեղում: Մինչ Ռդիսևսը
մտածեց,
Գրկե՛լ արդյոք գեղեցկափայլ կույսի ծունկը և աղերսել նրան այդպես,
Թե՞ խոսքերով թախանձագին, պատկասանքով պետք է դիմել՝
միայն հեռվից,
Որպեսզի գեթ նա քաղաքը ցույց տա իրեն և տա նաև հագուստեղեն:
Այդպես այնժամ միտք անելիս՝ նրան թվաց, որ բարվոք է և օգտակար
Խնդրել հեռվից, պատկասանքով, խնդրել խոսքով թախանձալի,
Քանզի եթե ծունկը գրկի, գուցե այնժամ խիստ վրդովվի կույսի հոգին:
150 Եվ նույնհետևյալ թախանձանքի խոսքով դիմեց և այս սասաց.
«Աղաչում եմ քեզ ծնկաչոք. դիցո՞ւմի՞ ես, թե՞ երկրածին:
Եթե մեկն ես աստվածներից դու, հիրավի, որ իշխում եմ լայն երկնքին,
Ապա ուրեմն, ըստ քո տեսքի և հասակի, ավելի շուտ
Նման ես դու Արտեմիսին՝ Չևսի դստերն ամենագոր,
Իսկ եթե դու մահկանացու հողածին ես և ապրում ես երկրի վրա,
Եռապատիկ երջանիկ եմ քո հայրը քաջ և քո մայրը գերամեծար,
Եռապատիկ բախտավոր եմ եղբայրներդ, որոնց սիրտը, քեզ նայելիս,
Լցվում է ջերմ ու խանդավառ մի հրճվանքով, քանզի նրանք,
Տեսնում են, թե ինչպես ես դու հրաշագեղ խմբապար մտնում:
160 Բայց ստավել երանելի կհամարեմ ես այն մարդուն մահկանացու,
Որը հաղթի նվերներով ուրիշներին և տուն տանի քեզ իբրև կին:
Քանզի երբեք ես չեմ տեսել աչքովս նման մահկանացու, ո՛չ կին, ո՛չ էլ

Մի տղամարդ. քեզ նայելով՝ զարմացած եմ ես չտիագանց:
Եվ մի անգամ միայն տեսա ես Դելոսում, Ապոլլոնի քազինի մոտ,
Ուղիղ քեզ պես՝ վայելչակազմ, նորաբողբոջ, պերճ մի ուղեշ արմավենի:
Գործով էի այնտեղ եկել, ինձ հետ կային բազմաբազում և այլ մարդիկ.
Մինչ այդ ուղին իմ խեղճ գլխին թափեց բազում տանջանք ու վիշտ
չարասաստիկ:
Եվ ճիշտ այսպես այն ժամանակ երկար ուշքի չէի գալիս ես զարմանքից.
Ո՛հ, դժվար թե այդպիսի ծառ երբևիցե բուսել, ծագել է այս երկրից:
170 Այդպես և այժմ, ա՛յ կին, քեզնով ապշած եմ ես. սարսափում եմ,
ահավասիկ,
Մոտ գալ, դիպչել քո ծնկների: Բայց վիշտը ժանտ խորտակում է
իմ հոգին:
Միայն երեկ, քաններորդ օրն, ես ժանտ մահից խուսափեցի
մթին ծովում.
Այդքան երկար, ահեղ ու գոռ հողմերի մեջ, ինձ քշում էր ալիքը ժանտ,
Անդ, Օգիգիս կղզու այս կողմ: Եվ արդ հիմա աստվածն է ինձ
նետել այստեղ,
Որպեսզի նոր ժանտ աղետներ ես հանդուրժեմ, քանզի բնավ
չեմ կարծում ես,
Որ վերացան դրանք արդեն, այլ աստվածներն ինձ կը քերեն
դեռ շատ աղետ:
Իշխանուհիդ, խղճա դու ինձ: Բյուրաբազում աղետ, փորձանք
հանդուրժած,
Քեզ եմ դիմում ես առաջին անգամ, ահա: Անձանոթ եմ, չեմ ճանաչում
Աստ ոչ ոքի և չգիտեմ, ո՞վ է իշխողն այս աշխարհի, այս քաղաքի:
180 Ցույց տուր ուղին դեպի քաղաք. ձորձ շնորհիր, որ մարմինս
ծածկեմ միայն,
Եթե ոմնե կամ վերցրել ես, այստեղ գալով, գեթ մի կապոց:
Թող շնորհեն քեզ աստվածներն, ինչ որ սրտանց դու ցանկանաս.
Պերտ տուն ու տեղ և ամուսին ու նրա հետ համերաշխ կյանքը
անպակաս:
Եվ արդարև՝ չկա ոչինչ ավելի լավ, ազնվագույն ու պանծալի,
Քան այն, երբ միշտ մարդ ու կինն են համաբարո և սիրով յի
մեկ հարկի տակ՝
Ի քերկրություն բարեկամի և ի հեճուկս նախանձարեկ չար թշնամու:
Մինչ ամենից ավելի լավ նրանք իրենք են գիտակցում բախտն
այդպիսի»:
Եվ Նավսիկան լուսաթևիկ պատասխանեց ու խոսք սասաց.
«Օտարական, դու լիրբ մարդու կամ հիմարի չես նմանվում ամենևին.
190 Օլիմպացի Չևսն է սակայն բախտ ու բարիք բաշխում մարդկանց,
Ինչպես ինքն է դա կտտեմում. թե՛ վատթարին և թե՛ լավին:

Եվ քեզ, հարկավ, տրված է այդ, ու պետք է այդ համբերատար
դու հանդուրժես:

Եվ քանի որ դու եկել ես այժմ այս երկիրն ու այս քաղաքն,
էլ դու կարիք չես ունենա ոչ հագուստի, ոչ էլ նաև մի այլ բանի,
Որ վայել է տալ մեզ դիմող աղերասարկու-մարդկանց թշվառ:
Քաղաքը քեզ ես ցույց կրտամ և կնշեմ նաև անունը այս ազգի.
Փեակներն են այս քաղաքի և այս երկրի տերը իշխող:
Ահավասիկ՝ դատրիկն եմ ես մեծահոգի Ալկիմոսի,
Որ իր ձեռքին պահում է այժմ փեակների իշխանությունն ու

գորությունն»:

- 200 Այդպես սասաց, ապա կանչեց նաժիշտներին գեղազանգուր.
«Ծո՛ւտ կանգ ստեք. ո՞ր էք փախչում, մարդ տեսնելիս, աղախիններ՝.
Արդ, իսկապես դուք չեք ասի, որ մարդ է սա մի չարական
կամ թշնամի:

Չկա բնավ և չի ծնվել այս աշխարհում այնպիսի մարդ,
Որն երկիրն այս փեակների իր հետ բերի չար թշնամանք,
Քանզի մենք միշտ անմահներին հաճելի ենք չարագանց.
Եվ բացի այդ՝ մենք ապրում ենք շատ-շատ հեռու, երկրի ծայրին,
Ծովերի մեջ կորովագոչ, և ոչ մի մարդ չի գալիս մեզ այցելության:
Իսկ նա, որ այժմ եկել է, արդ, մի ուղևոր, դժբախտ շրջիկ է միմիայն,
Որին պետք է լավ ընդունել ու խնամել, քանզի Ջևսից են միշտ գալիս

- 210 Մորիկներն ու նժիհները. դա աննշան, բայց թանկ տուրք է:
Ուստի շուտով, ո՛վ նաժիշտներ, ուտեստ տվեք, նաև խմիչք
Եվ օգնեցեք, որ գետի մեջ, հողմի շնչից պատսպարված, նա լողանա»:
Սասց այդպես: Ծառաները, իսկույն միմյանց հորդորելով,
Անդ կանգ առան, Ռոփսուսին նստեցրին մի գողտրիկ տեղ,
Հանց պատվիրեց մեծահոգի Ալկիմոսի չքնաղ դատրիկը՝ Նավսիկան,
Եվ դրեցին նրա կողքին հագուստեղեն. մի պատմունան և մի ծածկոց:
Տվին նաև օժանելիք՝ նրբափայլ յոթ ոսկեպանոցն մի գավի մեջ
Եվ ցանկացան օգնել նրան, որ լողանա նա գետի մեջ գեղեցկահոս:

- Մինչ Ռոփսուսն աստվածակերպ այս խոսքն սասց նաժիշտներին.
220 «Հեռու կանգնեք, մի կողմ, այնտեղ, կույս աղջիկներ, մինչև ինքս
Փրփուրն ու տիղմն իմ ուտերից լավ լվանամ և յոթ քսեմ ես իմ մարմնին,
Քանզի մաշկս վաղուց ի վեր օժանելիք ու նրբարար յոթ չի տեսել:
Ես ձեր սուսջ չեմ լողանա. ամոթալի է ինձ համար
Գեղազանգուր կույսերի դեմ մերկ մարմնովս երևալ»:
Սասց այդպես: Եվ հեռացան նրանք իսկույն ու պատմեցին չքնաղ
կույսին:

Մինչ Ռոփսուսն աստվածակերպ հորդ գետի մեջ լվաց, մաքրեց
տիղմն ու կեղտը,
Որ խիտախիտ ծածկել էին մեջքը նրա, նաև ուտերը լայնալիք:



2. Ռոփսուս և Նավսիկես: Ջախ կողմում Ռոփսուսն է, նրա առջևն Աթենասը,
սրա կողքին՝ Նավսիկեսն, իսկ վերջում՝ ապատմիները (նկար սափորի վրա):

- Սրբեց ապա նա իր գլխից խիտ փրփուրը հավերժագոչ մթին ծովի:
Երբ որ լվաց ու մարմինն իր պարարտ և նուրբ յոտով օժեց,
230 Հազավ իսկույն նա զգեստն այն, որ տվել էր կույսն անբասիր:
Իսկ Աթենասը Ջևսածին դարձրեց նրան էլ սուսվել քաջահասակ,
Տեսքը շքեղ, վայելչակազմ. պատեց գլուխը խիտախիտ
Գանգուրներով, որոնք գույնով հիսկիսթի էին նման:
Հանց դրվագում է արծաթն իր ոսկեջրով հմուտ վարպետն,
Որ իր արվեստն ստացել է Աթենասից, Հեփեստոսից,
Եվ կերտում է այդպես հաճախ նա գերհրաշ ու նկարեն շատ-շատ
գործեր,
Այդպես և նա նրա գլուխն և ուտերը նոր պերճանքով պատեց իսկույն:
Անցավ ապա Ռոփսուսը դեպի ծովափն ու նստեց անդ՝
Ծողողալով իր պանծալի նոր պերճությամբ: Նայեց նրան կույսն
ակնապիշ-

- 240 Նա, հիացած, այս խոսքն սասց նաժիշտներին զանգուրագեղ.
«Ինձ լսեցեք, լուսաթևիկ կույս աղջիկներ, ահա թե ինչ կասես ես ձեզ.
Օլիմպակյաց աստվածների կամքին բնավ հակառակ չէ, որ քաջը այս
Այստեղ եկավ, աստվածատես փեակների երկիրը մեր.
Թեպետ սուսջ նա ինձ թվաց իբր աննշան, այլանդակ մարդ,
Սակայն հիմա նա նման է անմահներին, որ իշխողն են լայն երկնքի:
Ո՞ր էր թե ես ունենայի մի այսպիսի վեհ ամուսին,
Որ ցանկանար ընդմիշտ մնալ ու բնակվել այս երկրի մեջ,

Ուստի շուտով, ով նածիշտներ, կեր ու խմիչք բերեք, տվեք
այս եկվորին»:

250 Ասաց այդպես: Նրանք սիրով այդ լսեցին ու արեցին,
Ողիսեսի դեմ շուտափույթ բերին, դրին խմիչք ուտեստ:

Ազանությամբ կերավ, խմեց աստվածակերպ Ողիսեսը բազմաշարձար,
Քանզի չէ՞ որ անանունդ էր. նա ուտեստի վաղուց ի վեր ձեռք չէր տվել:
Միշդեռ այնժամ լուսածղի պերճ Նավսիկան մի ուրիշ միտք անդ
հղացավ.

Հագուստդեմն արագ ծալեց ու պերճանիվ կառքի վրա տեղավորեց,
Լծեց ջորիքն ամրամբակ, թոսավ, կանգնեց կառքի վրա նա քաջասպես,
Ողիսեսին, մոտ կանչելով, այսպես դիմեց ու խոսք ասաց.

«Վե՛ր կաց, կանգնիր, օտարական: Հիմա պիտի քաղաք գնաս:
Քեզ կողեկցեմ

Եվ խորիմաց հորըս տունը քեզ ցույց կտամ: Իսկ դու, կարծեմ
անդ կտեսնես

260 Այվագանի ու մեծամեծ փեակներին, որքան որ կան նրանք այնտեղ:
Սակայն այսպես պիտի վարվես, քանզի, գիտեմ, անհասկացող,
անգետ մարդ չես:

Քանի ուղիդ պիտի գնանք մենք դաշտերով և արտերով
մարդապատկան,

Նածիշտների հետ միասին դու հետևիր ջորիներին
Եվ այս կառքին գեղեցկանիվ, իսկ ճանապարհն էս ցույց կտամ:

Այնուհետև կմոտենանք մենք քաղաքին. շրջապատված է այն բարձր
Պարիսպներով: Երկու կողմից կա գեղաշուք նավակայան,
իսկ այնտեղից

270 Զգված է նեղ մի ճանապարհ: Երկու եզրին այդ նեղանցուկ
ճանապարհի

Կանգնած են միշտ կոր նավերը մեր ծովանցիկ, և ամեն մեկը նրանցից
Իր սուսնձին կայանն ունի: Անդ կա նաև, Պոսիդոնի տաճարի մոտ,
Մի ընդարձակ հրապարակ, շուրջը որի կան շատ քարեր հողին խրված:

Եվ այնտեղ էլ պատրաստվում է սև նավերի սարքը ամբողջ.

Առագաստներ, պինդ կտուսներ ու կոկ, հղկված նավաթիեր:

Քանզի բնավ փեակներին չեն գրավում ոչ աղեղը և ոչ կապարճն,
Այլ միմիայն նավապատկան կայանն ու թիերն և կոր նավերը համաշարի,
Որոնց վրա նրանք գիտեն ուրախությամբ ձերմակ ծովը ձեղքել-անցնել:

Բայց ուզում եմ էս խոսափել անմիտ ճաշից. թող որ բնավ իմ հետևից
Վատ խոսք չասեն, ծաղրանք չանեն: Մեր ազգի մեջ շատ կա
լկտի ու վիսացող.

Թերևս այնտեղ մեզ հանդիպող լկտիներից մեկն ու մեկը այսպես խոսի.
«Ի՞նչ մարդ է սա, օտարականն այս գեղեցիկ, Նավսիկային
արդ ուղեկցող.

Ո՛րտեղից է ճարել նրան: Գուցե նրան նա ամուսին դառնա նույնիսկ:
280 Եվ կամ գուցե հեռաբնակ, ճամփակորույս մի մարդ է նա,
Որին նավից է նա վերցրել իր խնամքին, քանզի չկան մեր շուրջն,
այստեղ,

Այլ ապրողներ: Գուցե նույնիսկ աստված է նա, որ երկնքից է ցած իջել՝
Աղերալի, ջերմ աղոթքով, որ կույսի հետ, հանց ամուսին, ապրի
հավերժ:

Լավագույնը այդ է, իրավ, որ այլազգի, օտարական մարդ է գտել
Նա իր համար իբր ամուսին: Մինչդեռ բազում մեծ քաջերին փեակների,
Որոնք նրա փեռն են հայցում, արհամարհում է նա սաստիկ
ու բացահայտ»:

Այդպես կասեն, և ինձ համար դա կլինի անտանելի մի քարվականք:
Ես ինքս եմ միշտ դատապարտում այն աղջրկան, որ հանդգնում է
Իր սիրելի հոր ու մոր կամքին ընդդեմ, տակավին դեռ չամուսնացած,
290 Մի որևէ տղամարդու հետ միանալ: Այսպես, ուրեմն, օտարական,
Դու լավ լսիր խոսքերը իմ և կատարիր, որ շուտափույթ
Իմ հայրը քեզ պատրաստի ճիշտ ճամփորդության, վերադարձի
դեպ հայրենիք:

Անդ՝ ուղեմերձ, դու կտեսնես մի գեղեցիկ բարդու պուրակ.
Աթենասին է նվիրված... մի ջինջ աղբյուր կա նրա մեջ, շուրջը՝ մարգեր:
Այնտեղ է հենց նաև իմ հոր հողամասը, ծաղկափթիթ նրա այգին.
Եվ ճիշտ այնքան է դա հեռու մեր քաղաքից, որքան կարող է
ձայնն հասնել:

Այնտեղ նստիր և սպասիր, մինչև որ մենք մտնենք քաղաք
Եվ այնուհետ գնանք, հասնենք իմ հոր շքեղ ապարանքին:
Իսկ երբ որ դու անդ համոզվես, որ մենք արդեն հասել ենք տուն,
300 Այնժամ մտիր դու քաղաքը փեակների, հարցրու ապա, ում հանդիպես՝
Ինչպե՞ս գնալ և տունն հասնել մեծահոգի Ալկինոսի:
Եվ դժվար չէ այդ իմանալ. երեխան էլ քեզ ցույց կտա,
Քանզի ոչ ոք փեակներից այդպիսի տուն իրոք չունի,
Ինչպես շքեղ կառուցված է ապարանքը քաջ ու հերոս Ալկինոսի:
Արդ, երբ այնտեղ, մեր լայնալիք բակն անցնելով, դու տուն մտնես,
Դահլիճն անցիր իսկույն, ապա ուղիղ գնա դեպ մայրը իմ.
Նա նստած է օջախի մոտ, անդ՝ բոցավառ կրակի դեմ
Ու շառագույն թել է մանում՝ հենված սյունին մեր հոշափայլ:
Տեսնես՝ կասես՝ հրաշք է դա մի մեծաքանց: Նրա ետև հավաքված են
310 Ստրկուհիք: Մի փոքր հեռու, նույն սյունի մոտ դրված է պերճ
բազմոցն իմ հոր,
Որին բազմած, սիրում է նա գինի խմել և հար հրճվել ինչպես աստված:
Նրան թողած՝ դու ձեռքերով բռնիր իսկույն ծնկներն իմ մոր
Եվ աղերսիր, որպեսզի շուտ դու խնդալի օրը տեսնես վերադարձի,

Թեպետև շատ հեռվից ես դու, և տունն է քո հույժ հեռավոր:
 Արդ, եթե նա սրտանց, սիրով, կարեկցություն դեպ քեզ տածի,
 Այնժամ իրոք հույս կունենաս վերադառնալ երկիրը դու քո հայրենի,
 Դեպի տունդ գեղեցկաշեն, որ սիրելի բոլոր մարդկանց տեսնես
 դու անդ»:

Ասաց այդպես, զարկեց ապա ջորիներին նա մտրակով շողշողենի,
 Որոնք արագ, սուր պացան՝ հեռուն թողած գետի հոսանքը հոսանում:
 320 Մահում էին նրանք այդպես գեղեցկաճեմ ու ոտքերով դոփում վեմ.
 Մինչ քշում էր չքնաղ կույսը ճարտարակի, որ գան, հասնեն

և՛ հետիոտն
 Նածիշտները, և՛ Ռդիսևն. մտրակում էր նա միշտ տեղին և խորիմաց:
 Երբ մայր մտավ արևն արդեն, նրանք եկան և փառավոր պորակն
 հասան,

Աթենասին նվիրվածը: Այնտեղ մնաց Ռդիսևը աստվածակերպ
 Եվ սկսեց ջերմ աղոթել Ջևս աստրծու վեհ դատրիկին.
 «Ակա՛նջ դիր ինձ, անպարտելիդ. ասպարակիր Ջևսի դատրիկ.
 Լսիր գեթ այժմ, քանզի առաջ, խորտակվելիս, ինձ բնավին չես լսել դու,
 Երբ մեծագոր երկրասասանն հալածում էր ինձ տարագիր:
 Տուր, որ իրոք փեակները ինձ ընդունեն սիրով, սրտանց ու կարեկից»:
 330 Ասաց այդպես աղերսելով: Լսեց Պաղլաս Աթենասը,
 Բայց ընդառաջ չեկավ նրան ու չերևաց, քանզի աստրիկ
 Պատկառում էր հորեղբորից, որ քինահույզ գալթացած էր
 Աստվածակերպ Ռդիսևսի դեմ, քանի դեռ նա չէր դարձել նա հայրենիք:

Ե Ր Գ յ ո թ Ե Ր Ո Ր Ղ

ՈՐԻՍԵՎՍԸ ԳԱԼԻՍ Է ԱԼԿԻՆՈՈՍԻ ՏՈՒՆ

Այդպես փորձված, աստվածակերպ Ռդիսևը ջերմ աղոթեց,
 Մինչդեռ կույսին քաղաքն հասցրին ջորիները կորովալիր:
 Իսկ երբ հասավ նա պանծալի մեծ ապարանքը հայրական,
 Ջորիները շուտ կանգնեցին մուտքի առաջ: Կույսի շուրջը հավաքվեցին
 Եղբայրները աստվածակերպ, որոնք հապճեպ ջորիներին
 Ծքեղ կառքից արձակեցին և հագուստները ներս տարան.
 Եվ Նավսիկան իսկույն գնաց իր սենյակը. նրագն այնտեղ վառեց
 ծառան՝

Սենեկապան պառավ կինը, Եվրիմեդոս Էպիրացին:
 Նրան մի օր Էպիրեից բերել էին կորակտուց նավի վրա
 10 Եվ երբ ընծա տվել էին Ալկինոոսին, քանզի բոլոր փեակներին
 Ղեկավարում էր ազնվորեն և հարգված էր աստծու պես:
 Այդ պառավն էր ապարանքում միշտ խնամել Նավսիկային լուսաթևիկ.
 Հիմա էլ նա նրագ վառեց և շուտափույթ ընթրիք սարքեց կույսի համար:
 Մինչ Ռդիսևը վեր կացավ, ողևորվեց դեպի քաղաք,
 Իսկ Աթենասն, Ռդիսևսին միշտ կարեկից, շուրջը սփռեց թանձր խավար,
 Որ պանծալի փեակներից մեկն ու մեկը հանդիպելիս
 Չդարովի նրան իզուր կամ հարց չը տա, թե ո՛վ է նա:
 Երբ որ արդեն պատրաստ էր նա, որ ներս մտնի քաղաքի մեջ,
 Ծուռ ընդառաջ նրան ելավ պայծառաչյա վեհ Աթենասն.
 20 Նմանվելով փոքր աղջկա, ձեռքին բռնած մի նոր զամբյուղ,
 Կանգնեց ողիղ դեմը նրա: Եվ հարց տվեց Ռդիսևը աստվածակերպ.
 «Ոհ, զավակս. չե՞ս կարող դու ինձ ողեկցել դեպի տունը Ալկինոոսի,
 Որն, ասում են, առաջնորդ է և իշխում է այստեղացի բոլոր մարդկանց:
 Ես, մի դժբախտ օտարական, ահավասիկ՝ այստեղ եկա
 Ծառ հեռավոր և այլազգի մի աշխարհից, բայց ոչ ոքի
 Չեմ ճանաչում այն մարդկանցից, որ իշխողն են այս քաղաքի»:
 Իսկույն նրան իր խոսքն ասաց Աթենասը՝ շողշողաչյա աստվածուհին.

«Քեզ ես իսկույն, ով եկվոր հայր, քո ուզած տունը ցույց կը տամ,
Քանզի և տունն իմ ազնիվ հոր գտնվում է անդ առընթեր:
30 Քալիք, գնանք, կատաչնորդեմ: Սակայն անցիր դու լույսայն
Ու մարդկանցից աստ ոչ ոքի դու չը նայես և հարց չը տաս:
Տեղացիներն օտարական մարդկանց բնավ չեն հանդուրժում

ու չեն սիրում

Եվ հարգանքով չեն ընդունում նրանք նրան, ով այլ երկրից է
աստ գալիս,

Քանզի միայն անձնատուր են կոր նավերին և նավերով
Ճեղքում, անցնում են անդունդները ծովերի, երկրասասանն է
այդ տալիս:

Եվ նավերն են սրանց արագ, ինչպես միտքը, ինչպես թռչունը թևավոր»:
Այդպես Պալլաս Աթենասը խոսքն իր ասաց և անհապաղ առաջ անցավ:
Իսկ Ռդիսուսը, աստ՞նու ետեն ընկած, արագապես քայլեց գնաց:
Նավահոջակ փեակները բնավ նրան անդ չտեսան,

40 Երբ անցնում էր նա քաղաքի փողոցներով՝ նրանց միջով:
Աթենասը, կորովալիք, գեղագանգոր աստվածուհին կատարեց այդ:
Սիրում էր նա Ռդիսուսին, ուստի ծածկեց նրան մեզով հրաշագործ:
Հիացած էր Ռդիսուսը՝ տեսնելով անդ նավակալանն ու կոր նավերն,
Հերոսների առյանի տեղն ու պարիսպները բարձրաբերձ՝
Ամրակառույց ցանկապատով շրջապատված: Իրաչք էր դա չը տեսնված:
Իսկ երբ նրանք եկան, հասան սքանչելի ապարանքը թագավորի,
Նախ և առաջ իր խոսքն ասաց ու բարբառեց շողշողաչյա վեհ Աթենասն:
«Օտարական հայր իմ, անհա քեզ այն տունը, որը գտնել դու կամեցար:
Դյուցասնունդ իշխաններին անդ կըգտնես փարթամաճոխ խնջույքի մեջ:

50 Ուղիղ գնա և ներս մտիր, սրտով բնավ չվախենաս,
Քանզի իրոք քաջն անվեհեր ամեն գործից դուրս է գալիս հաջողությամբ,
Թեկուզ նույնիսկ նա որևէ հեռու երկրից եկած լինի:
Նախ և առաջ գնա, հասիր այնտեղ, տան մեջ, տանտիրոհուն,
Որի անունն է Արեսե: Առյն ցեղից է նա ծագումով,
Որից ծնվեց, առաջ եկավ ինքը՝ արքա Ալկինոսը:
Մի ժամանակ Նավսիթոսը ծնունդ առավ Պուսիդոնից երկրասասան
Եվ Պերիբեա կնոջից: Սա, իր տեսքով գեղեցկագույնը կանանց մեջ,
Կրտսերագույն, փոքր աղջիկն էր արժանահաղթ Եվրիստեոն

դյուցագունի,

Որն իշխում էր վաղ ժամանակ գիզանուններին հաղթ, մոլեգին:

60 Եվ կործանեց նա ոճրագործ ազգությունն այդ, բայց կործանվեց
ինքը նաև:

Անավասիկ նրա դստեր հետ միացավ Պուսիդոնը, և ծնեց նա
Մեծահոգի Նավսիթոսին, որ իշխողն էր փեակների:
Նավսիթոսից ծնունդ առան Հոեքսեոնն ու Ալկինոսը:

Բայց մահացավ Հոեքսեոնը նորասպակ՝ զարկված նետովն Ապոլլոնի-
Որդի չունեք և իր տանը թողեց միակ նա դստրիկին՝ Արեսեին,
Որին վերցրեց Ալկինոսը իրեն որպես քաջահաճո և ազնիվ կին:
Նրան լայնպես նա մեծարեց, ինչպես երբեք դեռ ոչ մի կին երկրի վրա:
2ի մեծարվել, որքան որ կան ամուսնացած և տնարար բազում կանայք:
Այդպես նրան հարգել են միշտ և հարգում են նաև հիմա

70 Թե՛ սիրելի զավակներն իր, և թե՛ արքա Ալկինոսը,
Ու ողջ ազգը, որ նայում է նրան որպես մի աստրճու

Եվ շերմացերն ողջունում է, երբ որ անցնում է քաղաքով նա փառահեղ,
Քանզի նաև գուրկ չէ խելքից ու ազնիվ է և շատ հաճախ
Մեղմ խորհրդով վերացնում է չար գժտությունը ամուսնու և կնոջ մեջ:
Արդ, եթե նա քեզ այժմ, եկվոր, վերաբերվի կարեկցաբար,
Այճճամ նոր դու հույս կունենաս տեսնել մարդկանց քո սիրելի,
Վերադառնալ անդ՝ տունը քո գեղեցկաշեն և քո երկիրը հայրենի»:
Այդպես անհա Աթենասը պայծասառես խոսքն իր ասաց ու հեռացավ
Դեպի ծովը հավերժագոչ՝ անդ թողնելով Աթերիան պերճապաճույն:

80 Գնաց, հասավ Մարաթոնին և Աթենքին լայնափողոց,
Մտավ ապա Էրեքթեւի ապարանքը ամրակառույց: Իսկ Ռդիսուսն
Ծարձվեց, գնաց շքեղ տունը Ալկինոսի, բայց սրտաբեկ անդ
կանգ առավ:

Նախքան դրեց ոտքը շենքին արույրաշեն, նա զարմացավ,
Քանզի, կարծես, պերճ ապարանքն արժանահաղթ Ալկինոսի
Լի լցված էր շողշողումով արեգակի և վառ լուսնի:
Երկու կողմից ձգված էին պատերը վառ, արույրաշեն ու շողշողուն,
Իսկ վերևից, եզերքներին փայլում էին շքեղ քիվերը լաջվարդի:
Տունը ներքուստ փակում էին դռները պերճ և ոսկեկոտ,
Պղնձաշեն շենքի վրա հիմնված էին բարավորները արծաթա:

90 Արծաթաշեն էին նաև կուռ դրանդիք, իսկ դռների պինդ օղակները՝
ոսկեղեն:

Իսկ դռների երկու կողմը կանգնած էին արծաթաճուլ ու ոսկեկերտ
Ծքեղ շներ, որ կերտել էր Հեփեստոսն իր ճարտարությամբ
քաջահաճոյն,

Որ պահպանեն մեծահոգի Ալկինոսի ապարանքն այդ
պերճապաճուս:

Անմահ էին այդ շները, հավերժ անեղծ, չծերացող:
Տան պատերին անդ շարեշար շենքից մինչև ծայրը վերջին,
Հենված էին բազկաթոռներ, որոնց վրա փռված կային նուրբ
ծածկոցներ՝

Գեղեցկափայլ ու ձնուստեղծ գործվածքները չքնաղ կանանց:
Դրանց վրա բազմում էին փեակների առաջնորդները մեծամեծ
Եվ լիովի հրճվում էին կերուխումով խնջույքներում առատ և ճոխ:

- 100 Ծարված էին անդ ամրապինդ պատվանդաններ. դրանց վրա կանգնած էին Պերճ արձաններ ոսկեկառույց պատանջաց, որոնց ձեռքի շահերը վառ Գիշերն ամբողջ անընդհատ լույս էին սփռում խնջույք անող մեծ քաջերին:
- Նրա տանը կային հիսուն ստրուկ կանայք, և նրանցից այնտեղ ոմանք Աղում էին ոսկե ցորեն՝ երկանքները գործի դրած, Իսկ ոմանք էլ գործում էին նուրբ հյուսվածքներ կամ իլիկով մանում թելեր:
- Վայելչակազմ էին ամենքը, շարեշար, հանց տերևներ կաղամախի. Նրանց հյուսած խիտ կտավից հեղհեղուկ յուղը ծործորում էր հազիվհազ:
- Ինչպես իրենք՝ ծովագնաց փեակներն են բազմատեղյակ ու հմտալից՝ Ծովերի մեջ արագ նավերը վարելիս, այդպես նաև նրանց կանայք
- 110 Հմտագույն են հյուսելու մեջ. ինքն՝ Աթենասն է պարզել աշոպես նրանց Գեղեցկափայլ ձեռագործի բարձր շնորհք և ձիրքն ու խելքը խորիմաց: Մինչ բակից դուրս, դարբասին մոտ, կար մի փարթամ, չորս օրավար հողով այգի՝
- Երկու կողմից ցանկապատով շրջապատված: Այնտեղ առատ Աճում էին ծաղկափթիթ ծառերը մեծ, բարձրակառույթ. Նոնեհիներ, տանձեհիներ, գեղապտուղ խնձորենիք, Ոսկեծաղիկ ձիթենիներ և քաղցրահամ շատ թզենիք, Որոնց վրա վառ պտուղներն անպակաս են, չեն չքանում Ամբողջ տարի՝ ոչ ամառը, ոչ ձմեռը: Ջերմ գեպիտոսի շունչն անընդհատ Նպաստում է, որ միշտ ոմանք հասունանան, իսկ մյուսները ծլեն, ծաղկեն:
- 120 Հասնում էին՝ տանձը տանձին հետևելով և նոր խնձորը՝ խնձորին: Միշտ թզենուն հետևում էր նոր թզենի, ողկույզները՝ ողկույզներին: Կար պտղավետ և խաղողի արդեն տնկած փարթամ այգի Մի հարթ տեղով, որտեղ խաղողն էր չորանում արևի տակ: Մյուս մասը՝ կոթի տեղ էր, երրորդ մասում՝ քամում էին խաղողն արդեն: Մինչ առջևից այդ ճոխ այգու կախված էին տերևաթափ դեռ ողկույզներ, Իսկ մի այլ տեղ շտապունած խաղողը դեռ նոր էր կարմրում: Պերճ խաղողի այգու ետև սարքված էին թմբեր, մարգեր, Որ ողջ տարին և անընդհատ տալիս էին բանջարեղեն, թարմ կանաչի: Եվ կար այնտեղ երկու աղբյուր, մեկն հոսում էր ամբողջ այգում համատարած,
- 130 Իսկ երկրորդը՝ հակառակը, Աետում էր ջուրը իր՝ բակով, Բարձրաբերձ տան շենքի տակով, և այս ջրից օգտվում էին քաղաքացիք: Դրանք էին Ալկիհնոսի սքանչելի բարիքները աստվածատուր:

- Դեռ կանգնած էր այնտեղ երկար խիստ հիացած Ռոխսևը բազմաշարչար, Իսկ երբ արդեն նա իր սրտում հիացմունքով այդ հագեցավ, Հապճեպ ու ծիր շենքը անցավ և հոշակապ ապարանքի ներսը մտավ. Որ նա գտավ փեակների իշխաններին և ստաջնորդ մեծ քաջերին, Որոնք գիհին հեղում էին Արգոսաստան ու սրտեն սասործու պատվին, Որին հեղումն անում են միշտ վերջում, մահիճը հիշելիս:
- Եվ տան միջով բազմաշարչար, աստվածակերպ Ռոխսևը վազեց արագ, 140 Բայց թանձրախիտ մեզով պատած, որով նրան ծածկել էր վեհ Աթենասը: Նա վազեվազ գնաց, հասավ Արեւտեին և Ալկիհնոս թագավորին, Ապա իսկույն երկու ձեռքով Արեւտեի նա ծնկները բռնեց այնտեղ, Ու նրանից այնժամ միայն անհետացավ թանձր մեզը աստվածային: Խոր լուսթյուն տիրեց տան մեջ, պասպանձվեցին, երբ հերոսին տեսան աշոպես Ու զարմացած նայում էին, մինչ Ռոխսևը աղերսեց. «Ոհ, Արեւտե, աստվածարժան Հոեքսենորի չքնաղ աղջիկ, Բյուր չարչարանք կրելուց ետ, ընկած եմ արդ քո ծնկներին Ու ոտքերին քո ամուսնու, այլև սրանց, որ այստեղ են խնջույքի մեջ: Թող շնորհեն աստվածները ձեզ, բոլորիդ, կյանք երջանիկ, թող իր որդուն
- 150 Ամեն մեկդ տա ունեցվածք և մեծարանք, որոնք ազգն է տվել նրան: Ո՛հ, օգնեցեք, աղաչում եմ, որ շուտափույթ վերադառնամ իմ հայրենիք. Վաղուց ի վեր, հեռու սիրած իմ մարդկանցից՝ աղետներ եմ կրում անվերջ»:
- Ասաց աշոպես, ապա նստեց օջախի մոտ, կրակի դեմ, փոշու վրա: Լուռ մնացին բոլորն այնժամ, տիրեց խորունկ մի լուսթյուն: Միայն հետո իր խոսքն ասաց ծերուկ հերոս Էրբենտուն. Փեակներից ամենամեծ ծերուկն էր նա իր հասակով անվերջ»:
- Ու իր խոսքի կարողությամբ հոշակված էր հանց բազմափորձ մի խնաստուն: Եվ արդ, այնտեղ բարեխորհուրդ նա բարբառեց ու խոսք ասաց այնժամ նրանց. «Ով Ալկիհնոս, քեզ համար լավ չէ բնավին, այլ իսկապես անվայել է, 160 Որ եկվորը նստի այսպես գետնի վրա, օջախի դեմ և փոշու մեջ. Մինչդեռ սրանք, սպասելով քո պատվերին, դանդաղում են այժմ անմոռնչ: Ուստի վերցրու եկվոր հյուրին և բազմեցրու արծաթազամ այն բազմոցին:
- Հրամայիր արագանեմ բանքերներին խառնել գիհին, Որպեսզի մենք հեղում անենք այստեղ Ջևախ կաշմակնացու, Բանգի նա է ողելիցը մորիկների և օգնություն աղերսողի:

Եկվոր հյուրին թող ընթրիք տա մատանապետն, ինչ որ ունի իր
 ձեռքի տակ»:

Երբ որ լսեց այդ խոսքերը սուրբ գործությունն Ալկինոսի,
 Քաջահմուտ և գերիմաստ Ռոիսեսին, օջախից այն հեռացնելով,
 Բարձրացրեց, ապա նրան բազմել տվեց պերճապաճույճ բազկաթոռին

170 Ու պատվիրեց միշտ իր կողքին նստող որդուն, գերամեծար
 Լաոդամին,
 Որին սիրում էր չափազանց, ամենից շատ, տեղը զիջել էկվոր հյուրին:
 Ծառան իսկույն ջուրը բերեց ոսկի գավով պերճ, նկարեն,
 Լցրեց նրան, որ վացվի կոնքի վրա արծաթեղեն,
 Ապա իսկույն քաշեց դրեց նրա առաջ սեղանը կոկ ու սրբատաշ:
 Մատանապետ հարգելի կինն հացը բերեց իսկույն ևեթ,
 Հետո դրեց առատ ու լի նա ուտեստներ, որքան որ կար անդ

պատրաստի:
 Եվ բանբերին այդ ժամանակ իր խոսքն ասաց գործությունը Ալկինոսի.
 «Ով Պոնտոնոս, սարկարանում լցրու, խառնիր քաղցր գինին,
 180 Տուր բոլորին իմ հարկի տակ, որ կատարենք հեղում Չևսին
 ամպահավաք,
 Քանզի նա է ողելիցը մորիկների և օգնություն աղերսողի»:
 Ասաց այդպես, և Պոնտոնոսը հաճելի գինին խառնեց
 Ու բաժակներն իսկույն լցրեց, առաջարկեց անդ ամենքին:
 Երբ հեղումը կատարեցին և ըմպեցին, որքան հոգով ուզում էին,
 Այնժամ նրանց վեհ Ալկինոսը բարբառեց և այսպիսի խոսքեր ասաց.
 «Արդ, ինձ լսեք, փեսայների առաջնորդներ, խորհրդակալն
 մեծամեծներ,
 Ես ձեզ խոսքն իմ անա կասեմ, ինչպես սիրուն է ինձ հորդորում
 իմ կրծքի տակ:
 Հիմա արդեն ցրիվ եկեք և գնացեք ձեր տները քուն մտնելու,
 Առավոտյան՝ մենք կկանչենք ավելի շատ, բազմաբազում ծերունիներ

190 Եվ կը սարքենք հյուրամեծար և սրտալի խրախճանքներ,
 Հաճոյական զոհ կը բերենք այն ժամանակ աստվածներին
 Ու կը խորհենք ուղևորման գործի մասին, որ հյուրն առանց
 մի փորձանքի
 Մեր օգնությամբ, ողջ, անվնաս, գնա, հասնի իր հայրենիք
 Եվ լի բերկրանք անդ վայելի, թեպետև շատ հեռուից է նա,
 Եվ որպեսզի ճանապարհին չհանդիպի նա աղետի ու տանջանքի,
 Մինչև որ իր երկիր հասնի: Այնուհետև թող որ կրի
 Այն ամենը, ինչ որ բախտից է իսկապես, զի մանել են Մոլորակերը
 Նրա թելերը գոյության այն օրվանից, երբ որ ծնեց մայրը նրան:
 Իսկ եթե սա մեկնումեկն է անմահներից և իջել է այժմ երկնքից,
 200 Ակներև է ուրեմն արդեն, որ նոր բան են աստվածները հիմա խորհում,

Քանզի չէ՞ որ աստվածները սովորաբար մեզ երևում են բացահայտ,
 Երբ մենք նրանց հարյուրեզնյա, գերապանծ զոհ ենք մատուցում,
 Եվ միասին մեզ հետ նստած խնջույքի մեջ՝ հրճվում են:
 Եթե նույնիսկ մի ուղևոր նրանց ճամփին իր հանդիպի,
 Նրանք բնավ չեն թաքցնի տեսքը իրենց, քանզի մենք շատ
 հարազատ ենք,
 Մեզ պես՝ նաև կիկլոպները ու վայրի ցեղն հսկաների»:
 Պատասխանեց նրան իսկույն և խոսք ասաց Ռոիսեսը իմաստնագույն.
 «Ո՛վ Ալկինոս, այլ բան խորհիր դու քո սրտում, քանզի բնավ
 նման չե՛մ ես
 Անմահներին, որոնք իշխում են անասնման, լայն երկնքին,
 210 Ո՛չ իմ տեսքով, ո՛չ կազմվածքով: Ես նման եմ մահկանացու միայն
 մարդկանց.
 Ում որ գիտե՞ք և տեսել եք՝ բոլորից շատ տառապանքներ կյանքում
 կրած,
 Նրան եմ ես իմ չարաղետ ճակատագրով հավասար:
 Սակայն հիմա կարող եմ ձեզ էլ ստավել, բազմաբազում ժանտ
 աղետներ
 Պատմել այստեղ, որոնք կամավ աստվածների միշտ կրել եմ ես
 չարատանջ:
 Բայց թույլ տվեք, աղաչում եմ, ընթրիք անել, թեպետև խիստ
 վշտահար եմ:
 Չէ՞ որ դաժան ստամոքսից ավելի վատ և անամոթ մի բան չկա.
 Երբ հնչի նա իր հրամանն՝ ուզես, չուզես, պիտ ակամա հիշես նրան,
 Թեկուզ լինես դու տառապյալ, թեկուզ լինի քո սրտի մեջ վիշտ անախոր.
 Այդպես եմ ես: Սրտումս կա դառնալի ցավ, մինչև նա ազահ և անողոր
 220 Դորդում է ինձ ուտել, խմել, կերուխումը շարունակել, ստիպում է,
 Որ մոռանամ ես իմ կրած բոլոր աղետներն հագուրդ տամ իրեն միայն:
 Արդ, երբ ծագի վաղ Արշալույսն, ըշտապեցեք դուք մտածել,
 խորհուրդ անել,
 Թե ինչպե՛ս ինձ՝ հեզ թշվառիս, բյուրաբազում աղետ ու ցավ կրելուց ետ,
 Ծանապարհել դեպ իմ երկիրը հայրենի: Իսկ երբ իրավ տեսնեմ ես անդ
 Գույքն իմ, տունն իմ բարձրակտուր, ստրուկներիս, թող գա այնժամ
 վերջը կյանքիս»:
 Ասաց այդպես: Նրանք բոլորն հավանեցին ու լցվեցին կարեկցությամբ,
 Որոշեցին ճանապարհել էկվոր հյուրին, քանզի խոսեց ճշմարտացի,
 Իսկ երբ հետո հեղումն արին և ըմպեցին, որքան կարոտ ուներ հոգին,
 Ցրիվ եկան բոլորեքյան, և ամեն մարդ քուն մտնելու գնաց իր տուն:
 230 Ապարանքում մնաց միայն Ռոիսեսը աստվածակերպ,
 Եվ նրա հետ Արեւուն էր և Ալկինոսն աստվածատես:
 Նածիշտները սկսեցին անդ հավաքել խրախճանքի սարքն ու կարգը:

Մինչ Արեւուն լուսաթելի դիմեց նրան և խոսք ասաց,
Քանզի տեսալ և ճանաչեց զգեւտները պերճապաճույն,
Սիրուն ծածկոցն ու պատմութեանն, որ գործել էր ծառաների

հետ միասին,

Ուստի խոսեց նա բարձրաձայն և խոսքն ասաց իր թնալոր.
«Օտարական, նախ և սուսջ ես ինքս արդ հարց պիտի տամ.

Ո՞վ ես, ասա, ի՞նչ մարդ ես դու, կամ ո՞վ տվեց քեզ հագուստն այդ,
Ձէ՞ որ արդեն դու ասացիր, որ, ծովի մեջ հար շրջելով, այստեղ եկար»:

240 Պատասխանեց նրան իսկույն Ողիսեսը և խոսք ասաց իմաստալի.

«Անհնար է, ով թագուհի, քեզ ամեն բան մանրամասն պատմել այստեղ,
Պատմել բազում այն աղետներն, որ ինձ հասցրին աստվածները

երկնաբնակ,

Բայց կարող եմ քեզ այն պատմել, ինչի մասին հարցնում ես դու:

Անդ, ալեծովի ծովի միջին մի կղզի կա, որը կոչվում է Օգիգիե,

Եվ ապրում է Ատրլասի նեղգապատիր դուստրը այնտեղ

Գանգուրագեղ պերճ Կալիպսոն, կորովագույն աստվածուհին.

Ոչ ոք նրան չի այցելում, ոչ էլ մարդիկ մահկանացու:

Եվ միայն ինձ՝ վատարախտիս, հանց խնդրարկու, այնտեղ նետեց

կամքն ասածու

Այն ժամանակ, երբ որ Ձևը արագընթաց նավն իմ շողշող իր

կայծակով

250 Անդ խորտակեց ու հրկիզեց անդունդներում մթին ծովի:

Կործանվեցին այնժամ բոլոր ընկերներս քաջակորով,

Իսկ ես միայն, կորակտուց նավի դեկը ամուր բռնած,

Ինձ ամբողջ օր քաջքշվեցի և միմիայն տասներորդ օրը, գիշերով,

Աստվածները ինձ նետեցին դեպ Օգիգիե հեռու կղզին,

Որտեղ ապրում էր վարսագեղ պերճ Կալիպսոն, աստվածուհին

այդ զորավոր:

Եվ ինձ սիրով նա ընդունեց, լավ խնամեց, սնեց, պահեց միշտ

հոգատար:

Խոստանում էր, որ կդարձնի նա ինձ անմահ ու միշտ ջահել,

Սակայն սիրտը իմ կրծքի տակ այդ խոստումով չկարեցավ հրապուրել:

Եվ յոթ տարի ես շարունակ մնացի. դառն արցունքով իմ անընդհատ

260 Թրջում էի ես հագուստն այն, որ տալիս էր ինձ Կալիպսոն

անմահական:

Վերջը, սակայն, երբ որ եկավ, հասավ տարին անդ ութերորդ,

Այնժամ միայն նա պատվիրեց ճանապարհվել ու հեռանալ

շուտ այնտեղից.

Գուցե Ձևսի կամքն էր հզոր, կամ նա ինքը գուցե փոխեց

ցանկությունն իր:

Եվ ճանապարհ նա ինձ դրեց պիտի հեղուակած լաստի վրա:

Տվեց նա ինձ

Ծատ ոտետներ, քաղցր գինի. անմահական հագցրեց հագուստ

Եվ առաքեց նա նաև հողմը բարեհույս և ողելից:

Տասնկյոթ օր լող տվեցի ծովերի մեջ ես շարունակ,

Երբ օրն հասավ տասնութերորդ, երևացին սովերամած լեռները ձեր,

Ու իմ սիրտը փափագաւտեմ ձեր քերկրանքով խնդաց իսկույն:

270 Մինչդեռ պետք էր դեռ հանդուրժել բյուրաբազում տանջանք ու ցավ,

Որ իմ գլխին թափեց դաժան Պուփոնը երկրասասան:

Նա բորբոքեց ժանտ մրրիկներ և ճանապարհն իսպառ փակեց:

Անծայրածիր ծովը հուզվեց, և իմ լաստին ընդդեմ ելած գոռ ալիքներն

Թույլ չտվին առաջ գնալ ինձ, դժբախտիս, երբ հառաչում էի աստիկ:

Մրրիկն հանկարծ լաստանավն իմ ջախջախելով ցրիվ տվեց,

և ես այնժամ

Սկսեցի անդ լող տալով ճեղքել ծովի անդունդները ալեկոծված,

Մինչև որ հողմն և հուզմունքը ինձ, քշելով, ձեր երկիրը այժմ

նետեցին:

Հորդ ալիքներն ինձ նետեցին սուր, անտիկ, ահեղ ժայռին:

Բայց դեպի ետ ես լող տվի, մինչև հասա գետաբերանն,

280 Որ ցամաքը անդ ինձ թվաց հարմարագույն, հանց ապաստան

հողմերի դեմ:

Ես, դուրս գալով ծովից, այնտեղ գետնին ընկա: Բայց քիչ առ քիչ

ուշքի եկա:

Մինչ գիշերը աստվածային վրա հասավ, և ես գետից անձրևածին

Քիչ հեռացա ու բուն մտա թիերի տակ. տերևները ծածկեցին ինձ:

Աստվածն այնտեղ սուգեց իսկույն ինձ քնի մեջ երկարառև:

Այդպես ահա, տերևներով անդ պարտրված, սիրած սիրտս

տառապահար,

Ես քնեցի գիշերն ամբողջ, ողջ առավոտ, մինչև կեսօր,

Եվ արևն էր թեքվում արդեն, երբ ինձ թողեց բունն անուշիկ:

Այդ ժամանակ ես ծովափին, այնտեղ, տեսա խաղ խաղալիս,

Նածիշտների՞ն քո դատրիկի, որ նրանց մեջ շողշողում էր հանց դիցուհի:

290 Անդ ես նրան աղերսեցի. չդանդաղեց այդ գործի մեջ նա ազնվագութ,

Մինչ սպասել չէր կարելի, որ նորատի կույսը այդքան լավ վարվի,

Քանզի չէ՞ որ ջահելները անգետ են միշտ կամ անխոհեմ:

Նա ինձ ոտետ տվեց առատ, այլև քաղցր, կարմիր գինի,

Ինձ լողանալ տվեց գետում և շնորհեց հագուստը այս, ահալափիկ:

Քեզ ամենն այս ես պատմեցի ճշմարտացի, թեպետ սիրուն էր իմ

վշտահար»:

Նրան այնժամ պատասխանեց և խոսք ասաց Ալկինոսը.

«Դատրիկը մեր լավ չի վարվել, ինչպես հարկն էր, օտարական.

Չի մտածել, որ պետք էր քեզ, նածիշտների հետ միասին, մեր
տուն բերել,

Քանզի նրա՛ն նախ և առաջ աղերսանքով դու դիմեցիր»:

300 Առարկելով՝ նրան իսկույն պատասխանեց Ռդիսևը ամենագետ.

«Ոչ ո՞վ հերոս. մի կշտամբիր այդ առիթով կույսին անմեղ,

Քանզի իրոք նա պատվիրեց, որ ես տուն գամ նածիշտների

հետ միասին,

Բայց ես ինքս այդ չուզեցի՝ ամաչելով, մտածելով,

Որ միգուցե, տեսնելով այդ, դու զայրանաս ու վրդովվես սրտակոտոր.

Չէ՛ որ հիմա երկրի վրա դյուրաբորբոք են միշտ մարդիկ մահկանացու»:

Նրան այնժամ Ալկիճոտը պատասխանեց և խոսք ասաց.

«Օտարական, սիրտս երբեք իմ կրծքի տակ զուր և ունայն չի զայրանա.

Մինչդեռ բարվոք է չափազանց պատշաճությունն ամեն բանի,

Եվ արդ, եթե մեկը լիներ, Չես երկնահայր, դուք, Ապոլլոն և Աթենաս,

310 Որ քեզ նման հայացքներով ու բնությամբ ինձ նմանվեր

Եվ ցանկանար աղջկաս առնել, ինձ հարազատ փեսա կոչվել

Եվ բնակվել ընդմիշտ այստեղ, լավ տուն ու տեղ, հարստություն

ես կտայի,

Եթե մնալ նա կամենար: Սակայն ոչ ոք փեսայներից չի ցանկանա

Պահել ուժով կամ ակամա, և հայր Չեսին էլ հաճելի այդ չի լինի:

Բայց կարող ես վստահ լինել. որոշում եմ քո առաքումն՝ վաղը ուղիղ

Այս ժամանակ: Եթե այնտեղ քունդ տանի, կարող ես դու քնել հանգիստ,

Իսկ նավորդներն հարթ ու խաղաղ ծովի վրա կալանան, մինչև հասնես

Դու քո տունը, քո հայրենիք կամ մի այլ տեղ, որ կամենաս,

Թեկուզ նույնիսկ հեռու երկիր, անգամ մինչև Եվրեա,

320 Որը հեռուն է ամենից, ինչպես գիտեն մեր նավաստիք:

Նրանք տեսել են այդ կղզին՝ խարտիշագեղ՝ Հոսդամանթին ողեկցելիս,

Որը գնաց այնտեղ Երկրի Տիտիոս որդուն այցելության:

Նրանք այնտեղ հասել են ճիշտ և հեշտությամբ լոկ մեկ օրում,

Անցել են այդ ամբողջ ուղին և նույն օրը ետ են դարձել ու տուն եկել:

Դու ինքդ անձամբ այդ կիմանաս, թե որքան են մեր նավերը

արագընթաց,

Եվ ինչպես են նավորդները մեր պատանի ծովը ճեղքում ճարտարակի»:

Ասաց այդպես: Խորունկ խնդաց բազմաշարշար Ռդիսևը

աստվածիմաց,

Եվ նա այնժամ բարձրադալակ իր խոսքն ասաց ու ջերմաջերմ

անդ աղոթեց.

«Թող կատարի Ալկիճոտը այն ամենը, ինչ այժմ ասաց, Չես մեծագոր,

330 Տուր, որ նրա փառքը վսեմ այս կենսատու երկրի վրա

Անեղծ լինի և անթառամ, որ նաև ես վերադառնամ իմ հայրենիք»:

Մինչդեռ նրանք անդ միմյանց հետ խոսում, ասում էին այդպես,

Նածիշտներին պատվեր տվեց ինքն Արեւուն լուսաթևիկ՝
Մահին սարքել սրահի մեջ, բազմապաճույն ալ դոշակներ փռել իսկույն,
Իսկ վերևից նաև գորգեր փռել այնտեղ մեծախնամ
Եվ տալ բրդեղ պերճ վերմակներ, որ հաճույքով նա ծածկվի:
Եվ ստրուկներն շտապ տնից դուրս վազեցին՝ ջահ ու ճրագը

ձեռքներին:

Իսկ երբ նրանք անդ սարքեցին պերճ ու փափուկ անկողինը,
Վերադարձան ու մոտեցան Ռդիսևին և կանչեցին.

340 «Օտարական, վեր կաց, գնա. արդեն պատրաստ է անկողինը
քեզ համար»:

Այդ ասացին, և քուն մտնելն հույժ հաճելի թվաց նրան:

Այդպես քնեց Ռդիսևը աստվածային ու բազմափորձ՝

Սրահի մեջ աղմկաշատ և մահիճում քանդակածո:

Մինչ Ալկիճոտն այնտեղ պառկեց մի անկյունում իր բարձր տան,

Իսկ իր կինը՝ տանտիրուհին, կողակիցն էր նրա այնտեղ:

Ե ր գ ու թ ե ր ո ր դ

ՈՂԻՍԵՎՍԸ ՆԵՐԿԱՅԱՆՈՒՄ Է ՓԵԱԿՆԵՐԻՆ

Երբ որ ծագեց ճաճանչագեղ Արշալույսը Վարդամատն,
Ծուտ վեր կացավ իր մահիճից սուրբ զորությունն Ալկինոսի,
Անդ վեր կացավ և Ռոխսեսն աստվածագուն, քաղաքաջարդ:
Բայց նրանից Ալկինոսի սուրբ զորությունն առաջ անցավ,
Գնաց դեպի փեակների կաճատատեղն՝ կայանի մոտ կոր նավերի.
Նրանք եկան ու բազմեցին անդ, ողորկված, կոկ քարերին, իրարու մոտ:
Տեսքն ընդունած խոհեմամիտ Ալկինոսին ժիր ծառայող սուրհանդակի
Եվ իր մտքում որոճալով վերադարձը մեծահոգի Ռոխսեսի՝
Հգոր Պալլաս Աթենասը գնաց, անցավ քաղաքի մեջ

10 Եվ, քաջերից ամեն մեկին մոտենալով, այս խոսքն ասաց.
«Հավաքվեցե՛ք փեակների խորհրդական առաջնորդներ,
Ծուտ գնացեք կաճատատեղն և անդ տեսեք օտարական այն վեհ

մարդուն,

Որ նոր է դեռ կորովամիտ Ալկինոսի տունը եկել.
Մոլորված էր նա ծովի մեջ: Մինչ արտաքուստ անմահներին

է նա նման»:

Այդպես խոսքով նա հորդորեց, հուզեց սաստիկ նա բոլորի
սիրտն ու հոգին,

Եվ լցվեցին իսկույն, հապճեպ բյուր մարդկանցով տեղերն ամբողջ:
Ծառերն էին սքանչանում՝ տեսնելով անդ Լատրոսի վեհ, պերճ գավակին,
Եվ մանավանդ, որ Աթենասն աստվածային նոր պերճությամբ

20 Այնտեղ պատեց իսկույն նրա գլուխն, ուտերը լայնալիք
Ու տեսքով իր դարձրեց նրան քաջահասակ և հաղթանդամ,
Որպեսզի անդ նա հաճելի, բազմապատկառ ու կորովի թվա բոլոր
Փեակներին, նաև հաղթի մրցույթներում այն բազմազան,
Որոճցով անդ Ռոխսեսին փեակները պիտ փորձեին:
Իսկ երբ նրանք այնտեղ արդեն հավաքվեցին միահամուռ,
Վեհ Ալկինոսն դիմեց նրանց և քարբառեց ու խոսք ասաց.

«Ինձ լսեցեք, փեակների առաջնորդներ և քաջագունք խորհրդական,
Ձեզ կասեմ այն, որ սիրտս է այժմ ինձ ներշնչում իմ կրծքի տակ:
Ես չգիտեմ՝ այս մոլորված օտարականն, որ եկել է իմ տունն այժմ,
30 Ո՞վ է արդյոք. երկրացի է արևելյա՞ն, թե՞ մարդկանցից է արևմտյան:
Խնդրում է նա, որ հայրենիք մենք ուղարկենք, ծամ ու ծամկետ

սահմանենք:

Ուստի եկեք ճանապարհենք, ինչպես որ միշտ կատարել ենք
այդպիսի գործ:

2Է՞ որ ո՛չ սա, ո՛չ էլ այլ ոք, ով որ էլ գա իմ տունն իրոք,
2այետք է աստ երկար մնա, որ շաղանքով վերադարձն իր
անվերջ չողբա:

Ուստի եկեք սևաթույր նավն աստվածային ձգե՛նք.
Այն առաջին անգամ պիտի դուրս գա բաց ծով: Նրա համար ազգի
միջից

Ընտրե՛նք շուտով հիսուներկու քաջ նավաստիք, որ լավագույնն են
համարվում:

Թող որ նրանք թիերն ամբողջ սարքավորեն, ամուր կապեն
թիանցքներին:

Գործն այդ այնտեղ ավարտելով՝ թող շուտափույթ ետ գան կրկին,
40 Որ պատրաստենք աստ խրախճանք: Ես բոլորին շքեղորեն
կը պատվեմ այժմ,

Կպատվիրեմ, որ պատանի նավորդներին աստ առանձին
խնջույք սարքեն:

Իսկ դուք, բոլոր մականակիր վեհ արքաներ, եկեք գնանք
իմ ապարանքն:

Օտարական այս եկվորին պիտ մեծարենք իմ հարկի տակ և տանը իմ,
Եվ թող ոչ ոք չմերժի այդ: Կանչեք, որ գա երգիչ-գուսանն
աստվածային,

Դեմոդոկը, որին աստվածն է շնորհել երգաստության ձիրքն, եռանդը,
Որ բերկրանքով սիրտը վառի, երբ քաջարի հոգին է երգը տենչում»:

Ասաց այդպես, անցավ առաջ: Հետևեցին իշխանները մականակիր,
Իսկ բանբերը իսկույն գնաց, որ երգակին աստվածագոր կանչի շուտով:

Ապա հապճեպ անդ ընտրեցին հիսուներկու երիտասարդ քաջ
նավաստի,

50 Որոնք ելան և շուտափույթ հավերժագոյ ծովի ափունքը գնացին,
Ինչպես որ այդ պատվիրել էր թագավորը, որ պատրաստեն
նավը այնտեղ:

Երբ որ նրանք ծովափն հասան, սևաթույր նավն իսկույն խորունկ
ծով ձգեցին,

Տնկեցին կայմն ու սարքեցին առագաստը նավի վրա,
Իսկ թիերը թիանցքներին պիտ կապեցին կաշվե փոկով

Ու պարզեցին այնուհետև, ինչպես հարկն է, առազաստը լայն
ու ճերմակ:

Ապա ծովի մի խոր տեղում սևակտուց նավը ամուր խարսխեցին,
Եվ իրենք էլ հապճեպ եկան մեծաշեն տունը խորիմաց Ալկինոսի:

Մինչ ամեն տեղ լեւի-լեցուն էր. և՛ սրահը, և՛ բակն ու տունն՝
Հոծ հավաքված բյուր մարդկանցով, կային բազում և՛ ծերունիք,

և՛ պատանիք:

60 Եվ մորթել էր Ալկինոսը նրանց համար տասներկու պարարտ ոչխար,
Որք գլուխ խոզ ճերմակատամ, երկու հատ էլ համրաբայլ եզ.

Դրանց այնտեղ քերթում էին, սարքում էին քաջահաճո և ճոխ խնջույք:
Մինչ մոտեցավ բանբերն այնժամ, բերեց երգչին նա պատվավոր,

Որին մուսան էր շատ սիրում, բայց տվել էր ոչ լոկ բարիք, նաև չարիք.
Զրկել էր նա ոչքի լույսից, բայց տվել էր ձիրքն արվեստի:

Պոնտոնոսը երգչի համար դահլիճի մեջ, մարդկանց շարքում,
Արծաթազամ բազմոց դրեց անդ, բարձրաբերձ պունին մոտիկ,

Իսկ կիթառը քաղցրահնչուն՝ մեխից կախեց, ուղիղ նրա գլխի վերև,
Ապա ձեռքով նրան նշեց, թե ինչպես նա պիտի վերցնի:

70 Դրեց նաև նրա առաջ գեղեցկափայլ զամբյուղով հաց
Եվ գինով լի մի մեծ գավաթ, որ նա խմի, երբ սրտին այդ հաճո լինի:
Այնժամ նրանք ձեռք մեկնեցին պատրաստ դրված համեղահամ

ուտեստներին:

Երբ հագեցան կերուխումով, որքան կարիք ուներ հոգին,
Ոգեշնչեց երգչին մուսան, որ երգի երգը դյուցազանց,

Որոնց վսեմ սխրանքների փառքն էր հասել ու տարածվել մինչև
երկինք.

Ինչպե՛ս մի օր գծովեցին Ռոփսուսը և Աքիլլեոսը Պելասյան.
Ինչպես նրանք երկնաշնորհ, աստվածական խնջույքի մեջ
Ժանտ խոսքերով անդ վիճեցին, ինչպես այնտեղ տերն ազգերի՝

Ազամեմնունն,

Խնդաց հոգով, երբ գծովեցին աքեացիք այդ վեհագույն,
80 Քանզի այդպես էր գուշակել նրան Փեբոս Ապոլլոնը այն ժամանակ,
Երբ, անցնելով վիմակերտ շենքը Պիթոնի, անդ նա հարցրեց

այդ առըծուն

Գործի մասին, որը, կամքով Չևս զգոնի, սկիզբն եղավ այնժամ արդեն
Տրոյացոց և դանաչանց սպառնացող բյուր-բյուրավոր աղետների:

Արդ, քաջափառ գուսանն ազնիվ այդ էր երգում: Մինչ Ռոփսուսն
Հզոր ձեռքով վեր բարձրացրեց ծածկոցն երկար ու շտապույն

Եվ, իր գլխին այն քաշելով, թաքցրեց այդպես իր դեմքն ազնիվ.
Նա ամաչեց փեսայներին ցույց տալ արցունքն իր դառնագին:

Իսկ երբ երգիչն աստվածագոր ընդհատում էր երգն իր վսեմ
ու սրտառուչ,

Ցած էր քաշում քղամիդը նա իր գլխից և, սրբելով արցունքն աչքի,
90 Վերցնում էր թասը կրկնական՞ ու սրտալի հեղմունք անում
աստվածներին:

Իսկ երբ գուսանն սկսում էր կրկին երգել, քանզի երգով այդ հիացած՝
Մեծ քաջերը փեսայների դրդում էին նվազն հնչել,
Նորից ողբում էր Ռոփսուսն՝ իր գլուխը թաքցնելով ծածկոցի տակ:

Սակայն նրա դառն արցունքը անհայտ մնաց. ոչ ոք այնտեղ
այդ չտեսավ,

Եվ միմիայն այդ նկատեց և իմացավ Ալկինոսը,
Որ նստած էր նրա կողքին. նույնիսկ լսեց նա նրա խոր հեծեծանքը,
Ուստի իսկույն նա թիասեր փեսայներին խոսքով դիմեց և այս ասաց.

«Արդ, ինձ լսեք, փեսայների առաջնորդներ և իշխաններ խորհրդական.
Մենք մեր սրտին հագուրդ տվինք ու հագեցանք պերճ խնջույքով,

100 Նաև երգով ու կիթառով, որ զարդերն են վեհ խնջույքի,
Սակայն հիմա գնանք, փորձենք մրցությունները բազմազան,
Որպեսզի այս օտարականն, երբ նա տունն իր վերադառնա,
Իր սիրելի մարդկանց պատմել կարողանա, թե որքա՛ն ենք

մենք գերազանց

Ծատ շատերից բռնակովում, մենամարտում, թոխչքների և վազքի մեջ»:
Ասաց այդպես, առաջ անցավ: Իսկույն նրան հետևեցին բոլորեքյան:
Բանբերն ապա կիթառն հնչեղ նորից կախեց մեխից այնտեղ,
Դեմոդոկի ձեռքը բռնած՝ նա դուրս բերեց տնից նրան,
Ապա տարավ այն ուղիով, որով անցան երևելիք փեսայների,
Որպեսզի անդ կատարվելիք մրցամարտով սրտանց հրճվեն և հիանան:

110 Անցան դեպի հրապարակն, և հետևեց խոռոն ամբոխը, բյուր
ժողովուրդ:

Հանդես եկան շատ քաջասիրտ մեծամեծներ և կորովի պատանիներ:
Ոտքի ելան Ակրոնետոսն, Օկիալոսը, Էլասոսը և Նալիոսը,
Պրիմնևսը և Անքիալոսը, Էրետոմևսը և Պոնտոսը,
Պրորոսը և Թոոնը: Հանդես եկան Անաբեսիսն

Եվ Ամփիպան, որ զավակն էր Տեկտոնածին Պոլիմետոսի,
Քաջ Եվրիպան, որ նման էր մարդակոտոր ժանտ Արեսին,
Որ կազմվածքով քաջահասակ և իր տեսքով գեղեցկափայլ
Գերազանց էր բոլոր, բոլոր փեսայներից, բացի փայլուն Լատոամից:

Հանդես եկան և քաջազոր երեք որդիքը անբասիր Ալկինոսի.
120 Լատոամսան, Ալիոսը, Կլիտոնետոսն աստվածակերպ:
Հայտարարվեց նախ մրցությունը ոտքերի արագության,
Եվ սկսվեց մրցավազքը նշանակետ պունի մոտից:
Բոլորն իսկույն և միասին թունդ վազեցին, ու բարձրացավ

դաշտում փոշի.

Կլիտոնետոսը ամենքից լավագույնը մրցավազքում հանդիսացավ:

Եվ ինչպես նոր հերկված արտում գույց ջորիներն են անցնում ժիր,
Այդպես բոլոր մրցողներից նա շուտ եկավ, իսկ մյուսները ետ մնացին:
Ապա դաժան մեծամարտում իրենց կորովը փորձեցին նրանք իսկույն.
Այստեղ արդեն հզորագոր քաջ Եվրիալը ամենքին գերազանցեց:

Թռիչքի մեջ ամենաց լավն Ամփիալը հանդիսացավ,
130 Էլատրևար սկավառակ նետելու մեջ հաղթող եղավ,
Սակայն անեղ բռնակոխում Լաոդամասն Ալկինոոսյան հաղթող եղավ:
Եվ երբ նրանք մրցույթի մեջ հրճվում էին՝ հագուրդ տալով

իրենց սրտին,
Ալկինոոսի պայծառ որդի Լաոդամը այս խոսքն ասաց այնժամ նրանց.
«Քարեկամներ, եկեք հարցնենք հիմա նաև օտարական այս եկվորին.
Գուցե ծանոթ է մրցույթին, գուցե գիտի: Նա արտաբուստ վատ չէ բնավ.
Ազդերը և սրունքները, ուտերը և հաղթ ձեռքերն իր,
Վիզը հզոր՝ այդ բոլորը ցույց են տալիս մի քաջարի, մեծ զորություն.
Հասակով էլ չի կորացած: Թերևս բազում աղետներից է նա տանջված:
Ես կարծում եմ՝ ոչինչ չկա այնքան դաժան վնասաբեր, ինչպես ծովը.

140 Քայքայիչ է մարդու համար, որքան էլ նա տոկուն լինի»:
Եվ Եվրիալն իսկույն նրան պատասխանեց և խոսք ասաց.
«Միշտ ասացիր դու, Լաոդամ: Բայց մոտեցիր այժմ նրան
Եվ հայտնի՛ր քո առաջարկը, այլև կանչիր դու մրցության»:
Երբ այդ լսեց Ալկինոոսի ազնվագույն զավակն այնտեղ,
Ծարժվեց իսկույն, կանգնեց մեջտեղ, Ողիսևսին այս խոսքն ասաց.
«Օ՛հ անդր, հայրիկ օտարական, ուժդ փորձիր մրցության մեջ:
Եթե հմուտ ես մի բանում, վայելույ է, որ մասնակցես դու մրցույթին:
Մարդու կյանքում նրա համար չկա բնավ ավելի մեծ փառք ու

պարծանք,
Քան այն, երբ նա գործ է անում իր ձեռքերով կամ ոտքերով
կորովագույն:

150 Ե՛կ դու, սակայն, ու փորձի՛ր քեզ. վանի՛ր սրտիդ վիշտն ու կարիք,
Ուղևորմանն էլ դու երկար չես սպասի, քանզի արդեն իսկ քեզ համար
Ծովն է ձգած նավը արագ և պատրաստ են նավորդներդ»:
Պատասխանեց նրան այնժամ Ողիսևսը բազմաչարչար և խոսք ասաց.
«Ո՛հ, Լաոդամ. ի՛նչ ես կանչում ինձ մրցության դու հեզնաբար.
Լիքն է սիրտս աղետներով, մրցանքը չէ միտքս հուզողն, այլ ցավերը:
Զէ՛ որ ես ցարդ հանդուրժել եմ բյուր դառնություն, կրել եմ բյուր
տառապանքներ.

Եվ տե՛ս, հիմա նստած եմ այս կանառի մեջ, հուզված մտքով
վերադարձիս,
Ինչպես թշվառ մի աղերսող, աղերսում եմ ձեր արքային և ողջ ազգին»:
Եվրիալը, դարովելով, պատասխանեց այնժամ նրան և խոսք ասաց.

160 «Դու նման չես, օտարական, մրցության մեջ բազմահմուտ հերոսներին,

Որպիսիները մարդկանց մեջ շատ կան, իրավ, ամենուրեք,
Այլ նման ես դու բազմաթի նավի վրա շրջող մարդկանց վաճառական,
Որ միմիայն առևտուրով են զբաղվում և իշխում են նավորդներին,
Որպեսզի նոր ապրանք բառնան իրենց նավին՝ նոր շահավետ

գործի համար:

Ոչ, նման չես դու մարտիկի, պիտանի չես դու մրցության»:
Եվ, նայելով նրան խոժոռ, ասաց այնժամ Ողիսևսը աստվածագոր.
«Լավ չասացիր դու, բարեկամ. պանդուր մարդ ես դու, երևի,
կամ անազնիվ:

Միշտ չեն տալիս աստվածները մարդուն իրոք ամեն տեսակ
արժանիքներ,

Միանգամից գեղեցիկ տեսք, և՛ խելք ու միտք, և՛ խոսքի ուժ,
170 Մինչ մարդն երբեմն արտաքինից երևում է որպես չնչին մի պատանի,
Բայց դրա տեղ աստված նրան շնորհել է հրաշալի խոսքի կորով,
Եվ նայում են նրան մարդիկ հիացմունքով. ճառում է նա սքանչելի,
Հրասպորիչ, հեզաբարո, փայլում է միշտ մարդկանց առաջ նա
բազմաթիվ:

Քաղաքի մեջ անց կենալիս՝ նրան նայում են զարմանքով,
կարծես անմահ
Աստված լինի: Մեկ ուրիշը լույ իր տեսքով է նմանվում անմահներին,
Մինչ աղբատիկ նրա խոսքը զուրկ է չքնաղ հմայքներից ճարտասանի:
Եվ դու նույնպես գեղեցկափայլ, լավ տեսք ունես, մի տեսք, որից
ավելի լավն
Աստված նույնիսկ չէր ստեղծի, սակայն խելքով աղբատ ես դու
և պանդուր ես:

Բորբոքեցիր սիրտենչիկ սիրտը դու իմ այս կրծքի տակ
180 Եվ անվայել խոսք խոսեցիր: Մրցության մեջ նորածին չեմ ես բնավ,
Ինչպես դու այժմ բարբառեցիր, այլ, թվում է, միշտ առաջինն
եմ ես եղել,

Այն ժամանակ, երբ դեռ արբուն, շահել կյանքի, հաղթ ձեռքերի
տեր էի ես:

Մինչդեռ հիմա մատնված եմ ես դժբախտության և աղետի.
Ծատ եմ կրել ես տառապանք, կովել եմ միշտ ընդդեմ մարդկանց
և ծանոտ այլաց,
Բայց և այնպես, թեպետ շատ եմ տառապել ես, մրցության մեջ
կփորձեմ ինձ,

Քանզի այդպես դու քո խոսքով ինձ դրդեցիր, և ճառն էր քո
խիստ թունավոր»:

Ասաց: Իսկույն նա վեր թռավ, ծածկոցն հագած, և ձեռքն ատավ
սկավառակը

Ծանր ու մեծ և հաստամետտ, ավելի մեծ, քան աննշան սկավառակներն,

- Որոնցով անդ իրարու հետ մրցում էին փեակները մի քիչ առաջ:
- 190 Դա նա ուժգին թափահարեց և խիստ նետեց ձեռքով հզոր.
Քարը թնդաց և շառաչեց: Մինչ ուժգնակի քարն այդ ձեռքից
դուրս նետվելիս
Նավահոշակ, երկայնաթի փեակները իսկույն գետնին, ցած կոսացան,
Եվ սկավառակն հաղթ պացավ, անցավ հուժկու 'նշանները նա բոլորի:
Իսկույն, մարդու նմանվելով, վեհ Աթենասն նշան դրեց
Եվ գիծ քաշեց, ապա դարձավ և բարձրաձայն իր խոսքն ասաց.
«Օտարական, կույրը անգամ քո նիշն այստեղ, շոշափելով, կտարբերի.
Նա չի խառնվել նշաններին այս քաշերի, այլ խիստ անցել է նրանցից:
Վստահ եղիր, որ կարող ես դու մասնակցել մրցության մեջ.
Հաղթանակը քոնն է այստեղ, և չի կարող ոչ ոք քեզնից հեռու նետել»:
- 200 Ասաց այդպես: Ուրախացավ բազմաշարշար Ռիսուսը աստվածազն,
Նա գոհ մնաց, որ ժողովում բարյացակամ և բարեխոս ընկեր տեսավ,
Հանգստացավ սրտանց արդեն և խոսք ասաց փեակներին.
«Պատանիներ, նետե՛ք հիմա, իսկ ես ապա մեկ ուրիշը
Կնետեմ և, ենթացրում եմ, էլ առավել ձեզնից հեռու կձգեմ այն:
Եվ բոլորդ, ով որ սրտանց ուզում է այդ, արդեն կարող եք հանդես գալ
Մրցության մեջ՝ ուժ փորձելու բռնակրվում, մեծամարտում, իբրև ըմբիշ
Եվ վազքի մեջ, քանզի աստիկ ինձ հուզեցիք: Փեակներից
Ոչ մեկիդ հետ ես մրցելուց չեմ վախենա, բացի միայն Լաոդամից,
Քանզի նա իմ հյուրընկալն է: Ո՛վ կարող է մարտել ընդդեմ
իր տանտիրոջ:
- 210 Իրավ, անպետք և հիմար մարդ կլինի նա, ով սխալվի
Եվ կանչի յուր հյուրընկալին օտար երկրում մարտակույլի, կամ
մրցության,
Քանզի այդպես նա միմայն ինքը իրեն կը վնասի:
Իսկ մյուսներիդ, ով որ լինի, ես չեմ մերժի, և պատրաստ եմ
Ես բացեիքաց ցույց տալ այստեղ, մրցության մեջ, զորությունն իմ:
Եվ վատ չեմ ես ամեն տեսակ մրցանքներում, որոնք հայտնի են
քաջ մարդկանց.
Ես լավ գիտեմ ողորկ աղեղը գործածել, հանց նետաձիգ մի քաջավարժ,
Ախոյանիս բազմության մեջ ամենից շուտ ես սուր նետով կկործանեմ,
Շուրջս թեկուզ կանգնած լինեն բյուրաբազում շատ ընկերներ,
Որոնք կարող են պաքով դիպուկ զարկել մրցակցողին հակառակորդ:
220 Եվ միմիայն ինձ աղեղով գերազանցում էր Փիլոկտեսը դյուցազուն,
Երբ աղեղով մենք՝ աքելանք, մրցում էինք այնտեղ, երկրում տրոյական,
Բայց, ասում եմ, անհամեմատ գերազանց եմ ես բոլորից, ուրիշներից,
Մահկանացու ու հացակեր այն մարդկանցից, որ ապրում են
հիմա երկրում:
Մինչ անկարող եմ ես մրցել վաղնջական քաշերի հետ.

- Ընդդեմ հզոր Հերակլեսի, այլև ընդդեմ Էբալիացի Եվրիտուսի,
Որոնք հաճախ աղեղով հաղթ մարտում էին ընդդեմ անմահ
աստվածների,
Ուստի հանկարծ մահացավ քաջ Եվրիտուսը՝ ծեր օրերին չհասնելով.
Խիստ զայրացած Փեք Ապոլլոնը սպանեց նրան նետով,
Քանզի նրան՝ այդ աստըծուն, նա կանչում էր աղեղամարտ քաջ
մրցության:
230 Ես կարող եմ տեզն ավելի հեռու նետել, քան ուրիշներն նետն աղեղի:
Բայց միմիայն երկյուղ ունեմ ես ոտքերից: Մեկն ու մեկը փեակներից
Ինձ վազքի մեջ գուցե հաղթի, քանզի հոգնած եմ չարաշար.
Տանջել են ինձ ալիքները ծովում դաժան, ուր շատ, սակավ էր
անունդն իմ,
Ուստի անչափ թուլացել են այժմ անդամները իմ մարմնի»:
Ասաց այդպես: Խոր լուռությոն տիրեց հանկարծ, լուռ էին
բոլորն այնտեղ:
Պատասխանեց նրան միայն Ալկինոսը մեծահոգի.
«Օտարական, դու մեզ այստեղ անհաճելի քան չաասցիր.
Ցանկանում ես դու հաստատել քաջարությունն, որն իսկապես
հատուկ է քեզ:
Վրդովվել ես, քանզի այստեղ, ժողովի մեջ, այս քաջն իզուր քեզ
կշտամբեց.
240 Մինչ մարդկանցից մահկանացու ոչ ոք, երբեք, քո քաջությունը
չի ժխտի,
Ով խելք ունի և ընդունակ է խորիմաց խոսքեր ասել:
Ուստի հիմա դու խոսքն իմ այս լսիր, որ գեթ պատմես հետո
Դու նաև այլ հերոսների, երբ հուսով եմ, դու քո տանը, սրտահաճո
Քո կնոջ հետ, քո որդոց հետ, մեծափարթամ, պայծառ խնջույք սարքես
մի օր:
Այնժամ հիշիր դու նաև մեր քաջարությունն, որը Ջեսն է միշտ
մեզ տալիս,
Եվ որը մենք ցույց ենք տալիս վաղուց ի վեր և անընդհատ:
Ըմբիշներ չենք մենք փառավոր, բողբոջամարտն ու կոփվը լավ
չգիտենք,
Բայց հմուտ ենք մենք վազքի մեջ: Ծովագնաց նավորդներ ենք
Մենք գերազանց: Սիրում ենք մենք պերճ խնջույքներ, սրտալի երգ
ու խմբապար,
250 Բազմատեսակ չքնաղ զգեստներ, ջերմ լոգարան և նուրբ մահին:
Օն անդր, շուտ, փեակների մեծամեծար կաքավողներ, դուք ցույց տվեք
Ձեր զվարճանքն ու արվեստը, որպեսզի սա, եկվորը այս, երբ տուն
դառնա,

Պատմի անդ իր սիրածներին, ինչպես ենք մենք գերազանցում
բոլոր մարդկանց
Նավորոդոյթյամբ ծովագնաց, վազքով արագ, երգ ու պարով գեղապանծ:
Եվ դուրս եկան ազգերի միջից ինը ընտիր կարգապահներ,
Որը, կարծես, գտնվում է մեր տանն հիմա, որևէ տեղ»:
Ասաց այդպես Ալկինոսը աստվածատես: Վազեց բաներն

արագավազ,

Որ արքայի ապարանքից բերի կիթառը նրբակերտ,
Եվ դուրս եկան ազգի միջից ինը ընտիր կարգապահներ,
Նրանք էին հսկում կարգին ու կանոնին խաղ ու պարի ժամանակ:
260 Ժիր մաքրեցին պարասպարեզն, ընդլայնեցին մրցարանը:
Մինչ մոտ եկավ բաներն այնժամ, Դեմոդոկին հանձնեց իսկույն
կիթառն հնչուն:

Երգիչն ապա մեջտեղն անցավ: Հավաքվեցին պատանիներն այնտեղ
շուրջն իր,

Կարավողները մեծարվեստ և սկսեցին ոտքով դուրս լայն ասպարեզմ՝
Կատարելով պարն հմայիչ, աստվածաչին: Մինչ Ոդիսևսն աչքը հառած
Արագաշարժ բյուր ոտքերին, զարմանում էր, անդուլ դիտում սքանչելիքն:
Զարկեց երգիչն իր կիթառին, ու երգն հնչեց չքնադազեղ՝
Միրո մասին պերճապասկ Ասիրոդիտի և Արեսի: Եվ նա երգեց,
Ինչպես նրանք սիրով ծածուկ անդ միացան ապարանքում Հեփեստոսի,
Ինչպես անբավ ընծա տալով՝ պղծեց մահիճը Հեփեստոս մեծագորի,
270 Թեպետև թանկ դրա համար նա վճարեց: Քանզի իսկույն, իբրև բաներ,
Արևն եկավ, որ տեսել էր, ինչպես նրանք գաղտնի սիրով անդ միացան:
Հենց որ լսեց Հեփեստոսը խոսքն այդ տխուր, սրտակոտոր,
Վազեց, գնաց իր դարբնոցը՝ սրտում հուզված վրեժն ահեղ:
Անդ նա դրեց կոճղի վրա զնդանը մեծը պիրկ կոփեց շղթա ու ցանց՝
Անլուծելի և անխորտակ, որ նրա մեջ նրանք բռնվեին և հար մնան:
Երբ որ կոփեց նա վարմը այդ Արեսի դեմ, ցասմամբ լցված
Վերադարձավ իր անշարանն, որ գտնվում էր հաճելի իր անկողինն,
Եվ անդ փռեց մահճակալի պուճերի մեջ վարմն ամենուր, շուրջանակի:
Ու կախվեցին անդ խիտախիտ առաստաղից ամենուրեք
վարմն ու ցանցը՝

280 Ոստայնի պես և այնքան նուրբ, որ չէր տեսնի ոչ ոք աչքով,
Նույնիսկ ոչ մեկն երանալվեստ աստվածներից. կերտվածքն էր նուրբ
և խորամանկ:
Իսկ երբ կախեց մահիճի շուրջն ամենուրեք վարմն ահավոր և աննկատ,
Նա ձևացավ, թե ինքն իբրև մեկնում է դեպ գեղեցկաչեւն Լեմնոս
քաղաքն,

Որ իր սրտին շատ ավելի հաճելի էր, քան երկիրները ամենայն:
Կույր չէր բնավ Արես աստվածը ոսկեհեր, երբ նա տեսավ,

Որ մեծարվեստ Հեփեստոսը մեկնում, գնում է հեռուներ,
Երավ գնաց դեպ ապարանքն արվեստագետ Հեփեստոսի՝
Լցված սիրո տարիանքով դեպ Կիթերուհին ոսկեպասկ,
Որ դեռ նոր էր այնժամ եկել ամենագոր Կրոնոսյանի մոտից այնտեղ
290 Եվ իր հանգիստն էր վայելում, երբ ներս մտավ նա ապարանքն:
Արդ, նա նրա ձեռքը բռնեց, անվամբ կոչեց և խոսք ասաց.
«Եկ, սիրելիս, գնանք դեպի պերճ մահիճը և, անդ պատկած,
հրճվենք սիրով,

Իսկ Հեփեստոսն այժմ տանը չէ, այլ երևի հեռացել է դեպի Լեմնոս,
Գնացել է նա իսկապես դեպ սինտիացիք վայրենախոս»:
Ասաց այդպես: Ուրախությամբ նա նրա հետ պատկեց այնտեղ
Մի մահիճում: Եվ քնեցին նրանք ապա, մինչդեռ նրանց իսկույն կեթ
Ամենագետ Հեփեստոսի այն նրբագույն վարմը այնքան ամուր պատեց,
Որ ոչ միայն չէր կարելի բարձրացնել այն, այլ դժվար էր շարժել անգամ
Անդամները իրենց մարմնի: Կոստեցին, որ թակարդից հնար չկա

300 Էլ դուրս գալու, մինչդեռ եկավ այդ ժամանակ կրկնակաղը փառասպակ.
Նախքան Լեմնոս հասնելը նա ետ դարձավ իր ճանապարհից,
Քանզի նրան գործի մասին հայտնեց Արևն ամենատես:
Այդպես նա տունն իր սիրելի վերադարձավ, սակայն սրտով իր
վշտաբեկ:

Կանգնեց այնտեղ դռան շեմքին՝ ժանտ զայրույթով լցված հոգին
Եվ ահռելի աղաղակեց, կանչեց այնտեղ աստվածներին:
«Դու, Չևս, մեր հայր, և դուք նաև, այլ աստվածներ հավերժակյաց,
Ծուտով եկեք, գործը տեսեք անտանելի ու խաչտառակ.
Ինչպե՞ս է միշտ անարգում ինձ, կրկնակաղիս, դուստրը Չևսի՝
Ասիրոդիտեն,

Որ կապվել է ամբարտավան Արեսի հետ գաղտնի սիրով,
310 Քանզի չքնաղ և ժիր է նա, մինչ ծնված եմ ես ոտքերով թույլ ու տկար:
Սակայն ոչ ոք այս գործի մեջ մեղավոր չէ, այլ ծնողները իմ երկու:
Լա՛վ կլինեք եթե նրանք չծնեին և ինձ աշխարհ չբերեին:
Ո՛հ, լավ նայեք, թե որտե՛ղ եմ քնել սիրո տարիանքի մեջ,
Պատկած այսպես իմ մահիճում, իսկ ես այստեղ նստած եմ խե՛ղճ
ու ցավագար:

Բայց չեմ կարծում, որ մյուս անգամ էլ ցանկանան նրանք նորից
պատկել այսպես,
Թեկուզ սաստիկ տարիանք զգան, այլ պատկելու տենչն երկուսի
շուտ կկորչի,
Քանզի այս նուրբ և խորամանկ թակարդը դեռ կաշկանդված
պիտի պահի
Նրանց այսպես, մինչև որ ինձ լրիվ ետ տա իմ հայրը այն գլխագիճը,

- Որ եւ նրան վճարեցի իր շնացող ու լրբենի դատեր համար:
- 320 Պերճ է թեպետ դատրիկը յոր և գեղեցիկ, բայց ժուժկալ չէ»: Ասաց այդպես: Իսկ աստվածներն հավաքվեցին պղնձաշեն նրա տան շուրջ-
 Եկավ իսկույն Պոսիդոնը աշխարհակալ, Հերմեսն եկավ երախտագործ,
 Անդ երևաց և Ապոլլոնը նետաձիգ, իշխանագոր,
 Բայց կանացի ամոթանքից դիցունհիները մնացին տանը իրենց:
 Կանգնած էին անդ դուսն մեջ աստվածները բարիատուր,
 Ու բորնկվեց ծիծաղն անգուսպ, հոհրոտցը գերերջանիկ աստվածների,
 Երբ անդ տեսան ամենիմաստ Հեփեստոսի այդ խորամանկ
 կերտվածքը կուտ:
 Արդ, նայելով իրար դեմքի, այսպես էին նրանք դատում և խոսք ասում.
 «Չեն հաջողվում գործերը չար. դանդաղկուտը հաղթահարեց
 քաջավազին»:
- 330 Դանդաղկուտ էր կաղ Հեփեստոսն, բայց Արեսին որսաց գործով իր խորամանկ:
 Արեսն, իրավ, ժրագույնն է և քաջավազն Օլիմպակյաց աստվածներից,
 Սակայն հիմա նա պիտ տուժի՝ ի հատուցում իր կատարած այս շնության:
 Այդպես ահա իրարու հետ խոսում էին նրանք այնտեղ:
 Այնժամ արքա Ապոլլոնը, Չևսի որդին, խոսքն իր ասաց անդ Հերմեսին.
 «Իսկ դո՞ւ, Հերմես, Չևսի զավակ, երախտագործ և ուղեցույց,
 Կը ցանկայի՞ր արդյոք այսպես, այդ անխորտակ, պիրկ վարմի մեջ
 կաշկանդված,
 Քնել կողքին, մահիճի մեջ, ոսկեպսակ Ափրոդիտի»:
 Պատասխանեց այնժամ նրան Ուղեցույցը Արգոսասպան.
 «Այո, եթե այդպես լիներ, ով Ապոլլոն, դու թագավորդ հեռաձիգ,
 340 Թող պատեր ինձ այդպիսի վարմն եռապատիկ դաժանորեն,
 Եվ դուք, բոլոր աստվածներդ և դիցունհիք թող դիտեիք՝
 Ինչպես եմ ես այնտեղ պտուկած մահիճի մեջ ոսկեակար Ափրոդիտի».
 Այդպես ասաց, հոհուցին նորից անմահ աստվածները:
 Պոսիդոնը միայն այնտեղ չէր ծիծաղում, այլ անդադար խնդրում էր նա
 Ճարտարարվեստ Հեփեստոսին, որ բաց թողնի նա Արեսին:
 Եվ արդ, նրան նա դառնալով, խոսքերն ասաց այս թևավոր.
 «Ոհ, արձակիր, երաշխավոր եմ քո առաջ, աստվածների առաջ այլև,
 Որ նա կտա քեզ վճարն այդ, կվճարի նա վայելույշ»:
 Բայց առարկեց նրան իսկույն անդ կրկնակաղը վեհափառ.
 350 «Մի պահանջիր դու այդ ինձնից, ո՞վ Պոսիդոն աշխարհակալ,
 Եվ վայել չէ երաշխիք տալ այս վատաբարք լրբի համար:
 Կամ թե ինչպե՞ս պետք է քեզնից ես պահանջեմ այդ վճարը,
 Երբ Արեսը, խուսափելով այս թակարդից, պարտք վճարել չկամենա»:
 Պատասխանեց նորից նրան և խոսք ասաց Պոսիդոնը երկրատատան.

- «Եթե նույնիսկ, խուսափելով պարտքից, Արեսը փախուստ տա,
 անհետունա,
 Փոխարենը քեզ այդ դեպքում ինքս անձամբ կվճարեմ»:
 Նրան այնժամ պատասխանեց կրկնակաղը մեծապատիվ.
 «Անհնար է և անպատշաճ խնդիրը քո մերժել այստեղ»:
 Այդ ասելով՝ զորոթյունը Հեփեստոսի արձակեց վարմը փութապես:
 360 Իսկ երբ նրանք ազատվեցին այն թակարդից, որ շատ պիրկ էր
 և կաշկանդիչ,
 Արագորեն վեր բարձրացան. Արեսն ուղղվեց դեպ Թրակիա,
 Ափրոդիտը նրբաժպիտ գնաց Կիպրոս, Պափոս քաղաքն,
 Որ սրբազան նրա անտուն և ծխալից բազիկը կար:
 Անդ քարիսները լողացրին իսկույն նրան և օժեցին անմահական
 Եվ նուրբ լուղով, որ քսում են հավերժ անմահ աստվածների անեղծ
 մարմնին,
 Ու հագցրին սքանչելի, աչքի համար զարմանալի, չքնաղ զգեստ:
 Այդ էր ահա փառապսակ երգիչն երգում: Ողիսևսը լսում էր լուռ,
 Խոր հրճվանքով, հոգին լցված հիացմունքով. հրճվում էին նաև անթիվ
 Փեակները երկպանաթի, ծովագնաց և նավերով միշտ հոշակված:
 370 Մինչ Ալկինոսն հրամայեց Լաոդամին և Ալիոսին պարի դուրս գալ,
 Բայց առանձին. ամենալավ պարողները նրանք էին:
 Ու վերցրին նրանք իսկույն գեղեցկափայլ ու շատագույն մի մեծ գնդակ,
 Որ կերտել էր մեծարվեստ Պոլիբոսը նրանց համար:
 Մեկն համարձակ, ետ քաշվելով, գնդակն ուժգին նետում էր վեր
 մինչև ամպերն,
 Իսկ երկրորդը կորովակի ցատկում էր անդ գետնից վեր և
 Բռնում տակից գնդակը հեշտ, նախքան ոտքն էր դիպչում հողին:
 Երբ որ նրանք պերճ գնդակը մի կողմ դրին, գնդակախաղն
 ավարտեցին,
 Ըսկսեցին թունդ կաքավել բազմապտուղ գետնի վրա
 Ու մերթ ընդ մերթ հերթափոխվել իրարու հետ: Ծորջն հավաքված՝
 պատանհներն
- 380 Իրար հետ ծափ էին տալիս, և թնդում էր դոփյունն ուժգին ամենուրեք:
 Եվ Ողիսևսն աստվածային իր խոսքն ասաց Ալկինոսին.
 «Իշխանագոր դու Ալկինոս, որ գերհոշակ ես մարդկանց մեջ,
 Արդ, պարծեցար դու քիչ առաջ, որ սրանք են կաքավողները գերազանց:
 Ծշմարիտ էր խոսքդ, այո, և ես ահա հիանում եմ հոգեզվարճ»:
 Այդպես ասաց: Խորունկ խնդաց սուրբ զորոթյունն Ալկինոսի
 Եվ թիասեր փեակներին խոսքն իր ասաց պատկառելի.
 «Ինձ լսեցեք, դուք, դյուցազունք փեակների, խորհրդական
 առաջնորդներ.
 Թվում է ինձ, որ եկվորն այս օտարական խորիմաց է, քաջահանձար,

Ոստի եկեք, ինչպես հարկն է, պերճ պարգևներ սրան մենք տանք
հյուրամեծար:

390 Հզորագոր մեր այս ազգին աշծմ իշխում են քաջավայել
Տասներկու փայլուն արքա, մինչ տասներեքերորդն են ես:
Թող որ քերի նրան նվեր՝ ամեն մեկս մի մեծագով, շքեղ բաճկոն
Ու մաքրափայլ մի պատմունճան, մի տաղանդ էր մաքուր ոսկի:
Հարկավոր է, որ բոլորս այդքան քերենք, բայց շուտափույթ
և անհապաղ,

Որ ընթրիքի հյուրը գնա՝ ձեռքին ընծայք քաջավայել, սրտահաճո:
Թող գա նաև Եվրիայը և հյուրի դեմ մեղքն իր քալի, քանզի իզուր
Նա անպատկառ խոսքեր ասաց, թող քերի տա և ընծաներ մեծաշնորհ»:
Ասաց այդպես, և անդ բոլորն հոժարությամբ հավանեցին
խորհուրդը այդ:

Իսկ Եվրիայն Ալկիհնոսին իսկույն դիմեց և խոսք ասաց.
400 «Իշխանագոր Ալկիհնոս, դու մարդկանց մեջ արծանագով երևելիդ.
Պատրաստ եմ ես եկվոր հյուրին սիրաշահել, ինչպես որ դու
պատվիրեցիր:
Արդ՝ ձոնում եմ ես թուրը այս սրնճակոտ՝ արծաթագամ, շքեղ կոթով,
Որի պատշանն է զարդարված շուրջանակի փղոսկրակերտ
պանունանքով.

Նրա համար սա կյինի քաջավայել ինձնից նվեր»:
Ասաց այդպես, ապա հանձնեց Ռդիսևսին արծաթագամ թուրը շքեղ,
Ու, դիմելով նրան, ասաց նա թեավոր խոսքերը այս.
«Ողջույն քեզ, հայր օտարական, եթե վատ խոսք քեզ ասացի,
Թող հողմերը քշեն, ցրեն խոսքն անշնորհք: Իսկ քեզ թող տան
աստվածները,

Որ շուտ դառնաս դու հայրենիք և շուտ տեսնես այնտեղ կնոջդ սիրելի,
410 Քանզի վաղուց, տառապահար, դու հեռացել ես մտերիմ
քո մարդկանցից»:
Այնժամ նրան պատասխանեց և խոսք ասաց Ռդիսևսը ամենիմաց.
«Ծնորհասպարտ եմ, բարեկամ. թող անմահները բարիքներ
պարգևեն քեզ,

Եվ թող երբեք դու չզղջաս, որ ինձ այսպես նվիրեցիր
Թուրն այս չքնաղ, արծաթապատ՝ ներողության խոսքն ասելով»:
Այդպես ասաց և իր ուսին արծաթագամ թուրը կախեց:
Երբ մայր մտավ արևն արդեն, եկան հասան նվերները մեծահաճո:
Բայց բանբերները ծրածիր իսկույն դրանք Ալկիհնոսի տունը տարան,
Իսկ անբասիր Ալկիհնոսի որդիք իսկույն ընդունեցին
Պերճապալծառ ընծաները, սիրելի մոր մոտ դարսեցին,

420 Մինչ, բոլորի առաջն ընկած, իր տունն եկավ սուրբ զորությունն
Ալկիհնոսի:

Ամենքն եկան ու բազմեցին բազմոցներին բարձր ու շքեղ:
Այնժամ դիմեց Արեւտին և խոսք ասաց զորությունը Ալկիհնոսի.
«Ա՛յ կին, շուտով քեր մեր սնդուկն ամենալավ ու քաջապերճ,
Դիր նրա մեջ մի լավ բաճկոն և մաքրափայլ մի պատմունճան:

Պղինձ ասանդ դուք կրակին դրեք այնտեղ, որ տաքանա ջուրը շուտով,
Որ լողանա հյուրն վայելուչ: Թող նա տեսնի, որ պատրաստ են
այստեղ արդեն

Փառապասկ փեակների քերած բոլոր պարգևները
Եվ խնջույքով այստեղ հրճվի, ապա լսի երգերը քաղցր ու սրտալի:
Իսկ ես ահա նվիրում եմ նրան գավաթն իմ ոսկեղենն ու գերհրաշ.
430 Ապարանքում, Ջևս զգոնին և այլ անմահ աստվածներին
Հանախ հեղում կատարելիս, թող ինձ հիշի ամեն անգամ»:
Ասաց այդպես: Եվ Արեւտն ստրուկներին հրամայեց
Դնել շուտով անդ կրակին եռոտանին ամենամեծ:
Իսկույն նրանք վառ կրակին դրին կաթսան եռոտանի,
Մեջը արագ ջուր լցրին և զցեցին տակը առատ վառելափայտ:
Իսկույն գրկեց բոց-կրակը կաթսայի փորն, և տաքացավ ջուրը շուտով:
Իսկ Արեւտն խորհանցից հյուրի համար քերեց սնդուկն հրաշագեղ
Ու խնամքով մեջը դարսեց ընծաները սքանչելի՝
Մաքուր ոսկին և զգեստներն, որոնք հյուրին փեակները նվիրեցին:

440 Դրեց նաև մի լավ բաճկոն և քաջապերճ մի պատմունճան:
Ապա դիմեց նա եկվորին և խոսքն ասաց այս թևավոր.
«Այժմ կափարիչը սնդուկի դու քո ձեռքով ամուր կապիր, հանգույց արա,
Որպեսզի գեթ ճանապարհին մեկն ու մեկը չգողանա կամ ձեռք չտա,
Երբ դու անուշ միրհած լինես քո սևաթուրը նավի վրա»:
Երբ այդ լսեց աստվածատես ու բազմափորձ Ռդիսևսը,
Սնդուկի խուփն իսկույն փակեց, ապա կապեց այն խորամանկ մի
հանգույցով,

Ինչպես նրան ուսուցել էր հարզո Կիրկեն մի ժամանակ:
Մտառնապետն եկավ այնժամ, խնդրեց գնալ լոգարանը լողանալու:
Տաք լոգարանը տեսնելով՝ խորունկ խնդաց նա իր հոգով,
450 Քանզի բնավ չէր լողացել նա այն օրից, երբ հեռացավ
Գեղազանգոր Կալիպատի սպարանքից: Իսկ մինչև այդ
Ապրում էր նա մեծ խնամքով, որը միայն աստվածներին է արծանի:
Արդ, երբ նրան ստրկուհիք անդ լողացրին և օժեցին մաքուր յուղով,
Ապա հագրին մաքուր բաճկոն և պատմունճան հրաշագեղ:
Նա դուրս գնաց լոգարանից դեպի մարդիկ, որոնք այնտեղ
Առատ գինի էին խմում: Իսկ Նավսիկան, գեղեցկությունն իր ստացած
Աստվածներից, կանգնած էր անդ, դահլիճի մեջ, ամրակառույց
պունին ընթեր,

Եվ նայում էր հիացմունքով աստվածատես Ռդիսևսին:
 Ապա նրան նա, դիմելով, այս խոսքն ասաց իր թեալովր.
 460 «Ռդշո՛ւյն քեզ, ով օտարական, երբ որ լինես դու երկրի մեջ
 քո հայրենի,
 Արդոյք մի կերպ ինձ կհիշե՛ս: Չէ՞ որ ինձ ես դու փրկությամբ
 նախ պարտական»: Պատասխանեց
 Պատասխանեց նրան այնտեղ և խոսք ասաց Ռդիսևսը ամենհմաց.
 «Ո՛հ, Նավսիկա, մեծահոգի Ալկինոսի չքնաղ դատրիկ,
 Թող գեթ թույլ տա այժմ ինձ Ջևար՝ մեծ Հերայի ամուսինը որոտագոչ,
 Որ իմ տունը ես ետ դառնամ, տեսնեմ օրը վերադարձիս.
 Եվ ես այնտե՛ղ ամեն օր պիտ աղոթք անեմ քեզ սրտահույզ,
 Որպես անմահ մի աստրծու, քանզի կյանքս դու փրկեցիր,
 ո՛վ չքնաղ կույս»: Մասց այդպես
 Մասց այդպես, նստեց ապա նա բազմոցին, Ալկինոս արքայի մոտ:
 470 Եվ ներս եկավ բանբերն այնժամ ու ներս բերեց միշտ սիրելի
 նա երգիչին,
 Մարդկանց համար գերամեծար Դեմոդոկին, որը նստեց
 Խնջույք անող բազմության մեջ՝ բարձր պունին անդ հեռվելով:
 Եվ Ռդիսևսը իմաստուն, մի պատաս միս ճերմակատամ պարարտ խոզի
 Թիկնամսից անդ կտրելով, իր մոտ թողած էլ ավելի պարարտաճարպ
 Մի մեծ կտոր՝ տրեհանդակին դիմեց հանկարծ և խոսք ասաց.
 «Բանբեր, վերցրու դու այս միսը և տուր ազնիվ այդ երգիչին,
 Դեմոդոկին,
 Թող վայելի: Նրան ուզում եմ մեծարել, թեպես սիրուն է իմ վշտալի:
 Հայտնի բան է, որ երգիչները երկրածին մարդկանց կողմից
 Պատիվ ունեն և մեծարանք, քանզի նրանց երգն անուշիկ
 480 Ներշնչում է անմահ մուսան, որ սիրում է երգիչների տոհմը ամբողջ»: Մասց այդպես
 Մասց այդպես: Բանբերն առավ, տարավ դրեց ձեռքը հերոս Դեմոդոկի:
 Նա ընդունեց և չափազանց հոգով, սրտով ուրախացավ:
 Այնուհետև ձեռք մեկնեցին նրանք այնտեղ պատրաստ դրված
 ուտեստներին:
 Երբ հագեցան կերուխումով, որքան փափագ ուներ հոգին,
 Կրկին դիմեց Դեմոդոկին և խոսք ասաց Ռդիսևսը ամենհմաց.
 «Ո՛վ Դեմոդոկ, քեզ ամենից բարձր եմ դասում ես մարդկանց մեջ
 մահկանացու,
 Քանզի Մուսան է, հիրավի, քեզ ուտուցել՝ դուստրը Ջևսի, կամ Ապոլլոնն,
 Եվ երգում ես բախտն աքեջանց դու, արդարև, ճշմարտացի,
 Թե ի՞նչ գործեր կատարեցին, որքա՞ն տանջանք անդ կրեցին աքեացիք:
 490 Բայց այնպես ես երգում, կարծես ինքդ ես եղել ականատես,
 կամ լսել ես

Մեկ ուրիշից: Այլ բան երգիր, պատմիր հիմա դու փայտակերտ ձիու
 մասին,
 Ինչպե՛ս շինեց ձին Հպիոսը Աթենասի օգնությամբ,
 Ինչպե՛ս մտցրեց աստվածազն Ռդիսևսը խարդախությամբ այն
 միջնաբերդ՝ Մեջը լցրած
 Մեջը լցրած բազում քաջեր, որոնք Իլիոնն հիմնահատակ ավերեցին:
 Եվ եթե դու այդ ամենը հիմա երգես, պատմես, ինչպես այդ կատարվեց,
 Ես կպատմեմ բոլոր մարդկանց, ամենուրեք, ի լուր ամբողջ այս
 աշխարհի,
 Որ աստվածն է բարիատուր քեզ շնորհել աստվածաշունչ քաղցր երգեր»: Մասց այդպես
 Մասց այդպես: Եվ երգիչը աստվածային ոգեշնչմամբ երգն սկսեց.
 Երգեց սրտանց, ինչպես հանկարծ վրանները հրկիզեցին արգիացիք
 500 Ու բարձրացան գեղեցկակերտ ու լայնամիտ նավի վրա
 Եվ հեռացան, ինչպե՛ս ոմանք, մեծահոչակ Ռդիսևսի հետ, ձիու մեջ
 Դարանամուտ՝ տըրոյացոց մեջ մնացին շրջապատված,
 Եվ տրոյացիք իրենք անձամբ միջնաբերդը ձին ներս տարան:
 Այդպես կանգնած էր ձին այնտեղ, մինչդեռ նրանք, շուրջը ձիու
 ամբողջվելով,
 Անվերջ ու խիստ վիճում էին, և կարծիքներ անդ հայտնվեցին
 երեք տեսակ.
 Կամ անողոք, դաժան կացնով կտրատել այդ լայնափոր փայտն,
 Կամ վեր հանել մի բարձրաբերձ ժայռի վրա և բարձունքից գլորել ցած,
 Եվ կամ պահել, հանց ուխտադիր աստվածներին սիրաշահող
 մի սուրբ նվեր:
 Սակայն հաստատ այդ վերջինը պիտ կատարվեր. ճակատագիրն
 էր այդ նրանց,
 510 Քանզի իրոք նրանց վիճակն էր՝ կործանում: Նրանք պետք է
 ներս տանեին
 Քաղաքի մեջ փայտյա մեծ ձին, որի փորում բազմաբազում
 քաջեր կային,
 Տրոյացոց մահն և կորուստը պատրաստող քաջակորով աքեացիք:
 Նա այնուհետ երգեց՝ ինչպես ավերեցին այնժամ քաղաքն արգիացիք,
 Ինչպես որդիք աքեացոց, դուրս ելնելով ձիու փորից,
 Որոգայթից այն լայնափոր, հրկիզեցին ու քանդեցին քաղաքն հարուստ,
 Ինչպե՛ս հետո բարձրակառույց այդ քաղաքը կապտում էին
 և թե ինչպե՛ս,
 Ժանտ Արեսին նմանվելով, աստվածակերպ Մենելայի հետ միասին,
 Ռդիսևսը ուղղվեց, գնաց այնժամ դեպի ապարանքը Դեփիոքի,
 Ինչպես այնտեղ ճակատամարտ հուզեց անդ թշնամու դեմ
 520 Ու քաջարի հաղթանակեց մեծահոգի Աթենասի աջակցությամբ:

Այդպէս ահա փառապատկեր գիշն երգեց: Վշտահար էր Ռդիսկար,
Եվ աչքերից նրա թափվող դառն արցունքը ոտոգում էր դեմքը նրա,
Այնպէս, ինչպէս հեծեծում է թշվառ կինը՝ ընկած զոհված իր ամուսնու
Մարմնի վրա, որ կործանվեց իբրև պաշտպան իր սիրելի հայրենիքի,
Երբ վանում էր կործանումը իր քաղաքից և հարազատ զավակներից:
Եվ տեսնելով իր ամուսնուն կարկամելիս ու մահամերձ՝ դժբախտ կինը
Փաթարվում է նրան սրտանց, ջալանք անում և արտասվում:

Մինչ հետևից չար թշնամիք միզակներով հարվածում են նրա վզին
և ուտերին

530 Եվ բշուձ են դեպ գերություն, որ ենթարկեն աղետների ու տանջանքի:
Իսկ նա, թշվառ, պիտ տառապի, և այտերն իր պիտի թոշենն

դառն արցունքից:

Այդպէս ահա Ռդիսկան էր թշվառ ու հեզ արցունք թափում իր աչքերից:
Մինչ բոլորին անհայտ էր այդ, որ թափում է աղիողորմ նա արտասուք:
Եվ միմիայն այդ մկատեց ու իմացավ Ալկիանոսը մեծահոգի,
Քանզի նստած էր նրա մոտ, նաև լսեց հեծեծանքը նրա ծածուկ:

Ուստի իսկույն նա թիասեր փեակներին դիմեց այնտեղ և խոսք ասաց.
«Ինձ լսեցեք, փեակների առաջնորդներ և քաջագուն դուք իշխաններ,
Թող Դեմոդոկը դադար տա քազմահնչուն իր կիթառին,
Քանզի ահա ոչ բոլորին նա երգով իր պատճառում է խինդ ու հաճույք.
Արդ, սկզբից մեր խնշույթի, երբ երգիչը երգն սկսեց աստվածային,

540 Մինչև հիմա դառն հեծեծում է վշտաբեկ օտարական մեր հյուրն եկվոր:
Եվ եռևի սիրտը նրա կաշկանդում է ծանր թախիծը տխրության:
Թող դադարի երգիչն հիմա, որ բոլորս քերկրանք զգանք

մենք հավասար՝

Թե՛ հյուրընկալն, և թե՛ հյուրը, և կլինի այդպէս անշուշտ ավելի լավ,
Քանզի չե՛ որ այս ամենը աստ կատարվեց միայն հանուն եկվոր հյուրի,
Ե՛վ մրցույթը, և՛ քաջապերն մկերները, որ ձոնեցինք իբրև հարգանք:
Ողևորը օտարական և օգնություն աղերսողը եղբոր նման
Հարազատ են միշտ այն մարդուն, որն իր գլխում գեթ աննշան

դեռ խելք ունի.

Ուստի, եկվոր՝ չթաքցնես հիմա խելքով քո խորամանկ այն, ինչ էս քեզ
Պիտի հարցնեն. քեզ համար էլ լավ է պատմել մեզ ամեն բան:

550 Նախ, դու հայտնիր անունը քո. ինչպե՛ս էին քեզ անվանում

հայրդ ու մայրդ

Եվ այլ մարդիկ, որ ապրում են քաղաքիդ մեջ կամ թե նրա
շրջակայքում,

Քանզի գիտենք, որ մարդկանց մեջ անանուն մարդ չկա երբեք՝
Թեկուզ լինի նա մեծատուն կամ հաւարակ, չնչին մի մարդ:
Մարդուն, նրա ծնված ժամին, ծնողները անշուշտ տալիս են մի անուն:
Հայտնիր դու ինձ երկիրը քո, քաղաքը քո և ազգությունն,

Որպեսզի քեզ նավերն ուղիդ և նախապես մտադրված, վերցնեն տանեն.
Փեակները չունեն իրոք ոչ նավավար և ոչ էլ դեկ կամ դեկավար,
Ինչպէս ունեն ուրիշները: Սակայն գիտեն նավագնաց
Մեր քաջերը մարդկանց միտքը և ցանկությունն, այլև նրանց

կամքն ու վճիռն:

560 Գիտեն նրանք նաև բոլոր քաղաքները ու երկրները պտղատու,
Ուստի արագ լող են տալիս և հեշտ անցնում են անդունդները
միգապատ

Եվ ամպերով միշտ քողարկված. և չի սպանում նրանց երբեք
Ո՛չ խորտակում և ո՛չ վնաս, ո՛չ որևէ դժբախտ մի դեպք կամ պատահար:
Թեպետ վաղուց լսել են էս իմ ծեր հորից՝ Նավսիրոսուից մի ժամանակ,
Որ իբր թե Պոսիդոնն է վրդովված մեր դեմ ընդմիջտ,
Նրա համար, որ ամենքին ամենուրեք ուղեկցում ենք մենք հուսալի,
Ուստի և նա զայրագնաբար սպառնում է մեզ քինահույզ,
Որ ինքն, հզոր, անշուշտ մի օր ծովի վրա այս կապուտակ
Փեակների գեղեցկակերտ նավը արագ, ճանապարհից էտ դառնալիս,

570 Կխորտակի, անգամ ուղին մեր քաղաքի մեծ, ահավոր, ժայռ կը մետի
ու կը փակի:

Արդ, այդպէս էր ծերունկն ասում: Գուցե աստվածն այդ կատարի
Գուցե թողնի սպառնանքն այդ չիրագործված, ինչպէս սիրտն իր
կը ցանկանա:

Ահա թե ինչ պատմիր դու ինձ, սակայն պատմիր ճշմարտացի.
Ինչպե՛ս եղավ,

Որ սկսեցիր դու թափառել կամ ի՞նչ մարդկանց աշխարհներումն
էս դու եղել:
Միշտը պատմիր նրանց մասին և նրանց շեն քաղաքների մասին նաև,
Պատմիր դու մեզ նրանց մասին, որոնք չար են կամ վայրենի և անօրեն,
Որոնք բարի հյուրասեր են, ու սրտերն են իրենց վսեմ, աստվածավախ:
Հայտնիր դու մեզ. ինչո՞ւ էս դու խիստ հեծեծում և արտասուք
թափում այդպէս,

580 Երբ լսում էս դանաչացոց կամ արգիյանց բախտի մասին Իլիոնի մոտ:
Մահմանված էր գործն այդ կամքով աստվածների: Նրա համար են
անմահներն

Մահ վիճակել դժբախտ մարդկանց, որ այդ երգվի սերունդների
երգերի մեջ:

Գուցե այնտեղ, Իլիոնի մոտ, կործանվել է ազգականդ ազնվամեծար
Կամ աներդ կամ քո փեսան, որոնք, հարկավ, արյունակից
Տոհմից հետո, ամենաշատն են սիրելի: Գուցե նույնիսկ
Փափազատեն ընկերը քո, որն երևի արծանացել էր քո սիրուն,
Որպէս մի մարդ ազնվաբարո, և հավասար էր հարազատ եղբորը քո,
Քանզի հաճախ հենց այդպիսին դառնում է մեզ և՛ մտերիմ,
և՛ սրտակից»:

ՈՂԻՍԵՎՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ. ԿԻԿԼՈՊԱԿԱՆ

Պատասխանեց նրան այնժամ և խոսք ասաց Ռդիսևսը ամենիմաց. «Իշխանագոր դու Ալկինոսս, որ գերհոշակ ես մարդկանց մեջ և անվանի, Ռրքա՛ն, այո, հաճելի է այժմ ինձ համար երգը լսել վեհ երգիչի, Ռրպիսին է սա իսկապես, որն իր ձայնով աստվածներին է նմանվում: Եվ ես ահա մտածում եմ. չը կա սխրանք ավելի վեհ և սրտատենչ, Քան բերկրանքը հոգեզվարճ, որ թնդում է ամենուրեք ողջ ազգի մեջ, Երբ խնջույքի մասնակիցներն, իրար կողքի, տան մեջ նստած, Երգն են լսում վեհ երգիչի, մինչ սեղանն է նրանց ստաջ

Ճանրաբեռնված

Մտեղենով և քաղցր հացով, իսկ մատրովակն համեղ գինին պերճ գավաթից

10 Հանում է լի և պորտովում ամենուրեք, որ բաժակներն հապճեպ լցնի: Այդ է, այո, ինձ, իմ սրտում, թվում վսեմ, բարձր մի գործ: Մինչ հորդորեց քեզ սիրտը քո՝ հարցնել իմ հեզ տառապանքի,

վշտի մասին,

Ռրպեսզի այժմ էլ առավել ես հեկեկամ ու վշտագին ջայլանք անեմ: Բայց ես, ավա՛ղ, ո՞րը պատմեմ քեզ սկզբից կամ ո՞րն ասեմ

վերջ ի վերջո,

Բյուրաբազում աղետներ են ինձ շնորհել աստվածները երկնաբնակ: Ահավառփկ՝ նախ ձեզ հայտնեմ անունը իմ, որ այդ հաստատ

դուք իմանաք,

Քանի որ ես, խուսափելով իմ օրհասից աղետալի, ձեր հյուրն եմ արդ, Թեպետ հիմա, առանց այդ էլ, ես ապրում եմ ապարանքում

այս հեռագույն:

Ես եմ ահա Ռդիսևսը Լաերտածին, մարդկության մեջ գերազդեցիկ,

20 Բյուր խորամանկ հերյուրանքով փառաբանված, և փառքն է իմ հասել երկինք:

Ապրում եմ ես Իթակեում, որ նշմարվում է շատ հեռուից, հայտերևակ.

Նրա վրա Ներիտ լեռն է անտառաշատ և անվանի:
Շուրջը նրա բազմաբազում և մերձընդմերձ կան կղզիներ մարդաբնակ.
Դուլիքիոնը, Սամեն, Զակինթոս անտառախիտ: Իսկ Իթակեն

Ճովապարիակ

Հարթավայր է մի լայնալիր և հեռավոր է չափազանց.
Գտնվում է արևմուտքում, բայց կղզիներն ուղղված են դեպ արևելք:
Խիստ բարբարոս է Իթակեն, թեև սնում է պնդակազմ պատանիներ:
Ես չգիտեմ մի այլ երկիր ավելի լավ և վեհագույն, քան սիրելի
Իմ Իթակեն: Բայց արգելեց և ինձ պահեց անդ Կալիպսո աստվածուհին

30 Խոր անձավում ցանկանալով, որ իր համար ես ամուսին դառնամ այնտեղ:
Իր տանը ինձ պահեց նաև կախարդ Կիրկեն, հեռու կղզու մեջ Էակամ.
Եվ նա նույնպես կամենում էր անդ իր համար ինձ ամուսին դարձնել
մի կերպ,
Բայց նա բնավ չկարեցավ ինձ համոզել և սիրտը իմ իր կողմ թեքել:
Եվ ոչ մի բան սրտին այնքան հաճելի չէ, որքան երկիրը հայրենի
Ու ծնողներն, եթե նույնիսկ օտար երկրում մարդ ապրում է
պերճապանույն

Ապարանքում, սակայն հեռու իր ազնվագույն ծնողներից:
Իսկ հիմա քեզ պատմեմ պիտի դարձի մասին իմ չարաղետ,
Որն ինձ համար, դեռ Տրոյայից ետ դառնալիս, Ջևան հորինեց:
Ինձ Իլիոնից հողմը քշեց, հասցրեց մինչև Իսմարոսը կիկլոնների.

40 Ավերեցինք մենք քաղաքն այդ, կոտորեցինք բնիկներին,
Վերցրինք ավար այդ քաղաքից, բյուրաբազում հարստություն
և շատ կանանց,
Բաժանեցինք այդ իրար մեջ, որպեսզի գեթ ոչ ոք մեզանից զուրկ չմնա,
Եվ ես այնտեղ հորդորեցի՝ շուտ հավաքվել ու հեռանալ փոթանակի,
Սակայն նրանք, հիմարներն այդ, ինձ այդ գործում հնազանդվել
չկամեցան,
Այլ ճովափին գինի անշափ շատ խմեցին ու մորթեցին շատ ոչխարներ,
Ծառ կորյեղջյուր ու համրաքայլ պարարտ եզներ: Մինչդեռ փրկված
կիկլոնները
Ծուր կամչեցին ա՛յլ, հարևան և ցամաքի խորքում ապրող կիկլոնների,
Որ առավել ուժեղ էին, շատ ավելի բազմաբանակ:
Սրանք արդեն լավ գիտեին կոփվ մղել մարտակառքով

50 Եվ երբեմն էլ, ուր պետք էր այդ, մարտում էին և հետիոտն:
Ծառ-շատ էին նրանք թվով, հանց գարունքի բյուր ծաղիկներ
ու տերևներ,
Որոնք հանկարծ, վաղ առավոտ, հարձակվեցին: Եվ մեզ, ավա՛ղ,
դժբախտներիս,

Անդ վիճակվեց փորձել արդեն Ջևսի տված բախտը դաժան
 և տանջանքը:
 Մեր ճեպընթաց նավերի մոտ թնդաց կոխվն ահագնակի: Նրանք
 հուժկու
 Նետում էին պղնձասայր տեգ-նիզակներ ու մեր գլխին թափում անվերջ:
 Եվ քանի դեռ առավոտ էր, ու սուրբ օրը դեռ չէր մթնել, մենք,
 դիմադիր,
 Վանում էինք նրանց մի կերպ, թեպետ թվով անդ գերազանց էին
 նրանք:
 Բայց երբ թեքվեց Արևն արդեն, երբ որ լծից արձակում են
 եզներն հոգնած,
 Մեզ կիկոններն հաղթահարել սկսեցին և ճնշեցին արեացոց:
 60 Մեր ամեն մի նավից այդտեղ զոհվեց, ընկավ գեղասրունք
 վեց բաշ ընկեր,
 Իսկ մյուսներս հազիվ, մի կերպ ազատվեցինք ճակատագրից
 ու ժանտ մահից
 Եվ հեռացանք մենք այդտեղից: Ուրախացանք, որ օրհասից
 խուսափեցինք,
 Բայց վշտահար էինք սրտով մեր սիրելի ընկերների մահվան համար:
 Մինչդեռ իմ կոր նավերն այնժամ ծովը չանցան, մինչև որ անդ
 Երեք անգամ և միսումի չկանչեցինք մեր տարաբախտ ընկերներին,
 Որ մահացան դաշտավայրում կիկոնների հարվածներից.
 Մինչդեռ հանկարծ ամպահավաք Ջևսը հուզեց ժանտ Բորեասը
 սաստկաշունչ,
 Հանց ահավոր մի փոթորիկ, և բողարկեց խիտ ամպերով ծովն
 ու երկիրն,
 Եվ երկնքից այնժամ իջավ մութ գիշերը և տարածվեց ամենուրեք:
 70 Նավերն անցան՝ իրենց քթերը թաղելով մրրկահույզ, հորդ ալյաց մեջ:
 Իսկ փոթորիկն առագաստները կտրատեց երեք թե չորս կտորների.
 Սարսափելով խորտակումից՝ դրանք իսկույն մենք իջեցրինք նավի վրա
 Եվ, թերին խիստ ուժ տալով, մեր ընթացքը մենք ուղղեցինք
 դեպի ցամաք:
 Երկու գիշեր և երկու օր անդ անընդհատ մենք մնացինք ծովի ափին՝
 Խոնջանքից թույլ և ուժասպառ, վշտերով լի ու ցավազար:
 Իսկ երբ արդեն օրը երրորդ քերեց պայծառ Արշալույսը գեղագանգուր,
 Հարդարեցինք մենք կայմերը, տարածեցինք առագաստները
 լայնասփյուռ
 Ու բազմեցինք մեր նավերին, որ պացան նավորդների ձեռքերի տակ
 Եվ ողեկից հողմի շնչով: Հասնում էի արդեն երկիրն իմ հայրենի,
 80 Բայց ինձ հորձանքն հուժկու ալյաց և Բորեասն, անդ, Մալխայի
 շուրջն անցնելիս,

Խիստ շեղեցին, Կիթերայից դեպի հեռուն ահագնակի ինձ նետեցին:
 Ինձ օր ծովում այն ձկնատատ մենք պացանք մրրկահույզ հողմերի տակ
 Եվ տասներորդ օրը միայն հազիվ հասանք երկիրը այն,
 Որ ծաղկակեր լոտոփագներն են բնակվում և սնվում են ծաղիկներով:
 Այնտեղ ցամաք մենք դուրս եկանք, որ մեզ համար վերցնենք
 առատ ջրի պաշար,
 Եվ ճեպընթաց նավերի մոտ մեր ընկերները նստեցին ճաշկերույթի:
 Երբ որ այդպես կերուխումով մենք հագեցանք, ընկերներից
 ես ընտրեցի
 Երկու հոգի հավաստարիմ, երրորդին էլ՝ իբրև բանբեր,
 Եվ անհասպաղ ուղարկեցի, որ շուտ գնան և իմանան՝
 90 Ի՞նչ հացակեր, մահկանացու մարդիկ են այդ երկրում ապրում:
 Արդ, գնացին նրանք շուտով, բայց հանդիպել էին մարդկանց
 լոտոսակեր:
 Խաղաղասեր լոտոփագներն, իրավ, բնավ չէին ուզել մահվան մատնել
 Մեր ուղարկված ընկերներին, այլ, փորձելով, լոտոս էին նրանց տվել:
 Մինչ ով փորձել էր լոտոսի ծաղկամեղրը քաղցրահամ,
 Էլ չէր ուզում այլևս ետ գալ, որ լուր բերի և իր ուղին անցնի կրկին,
 Այլ ուզում էր մնալ ընդմիջտ այդ լոտոփագ ազգության մեջ
 Եվ լոտոսի ծաղկամեղրով սնվել միայն՝ մոռանալով վերադարձն իր:
 Ուժով նրանց ես դեպ նավերն ետ քերեցի, թեպետ լալիս էին աստիկ,
 Ու, քարշ տալով նավի վրա, պինդ կապեցի նավորդների նստիքներին,
 100 Ասրս իսկույն պատվիրեցի մեր մյուս սիրած ընկերներին անապարել
 Եվ փութապես նավը նստել ու հեռանալ, որ էլ ոչ ոք չկարենա
 Լոտոսի մեղրը ճաշակել, որ վերադարձը դեպի տուն չմոռանա:
 Հապճեպ նրանք վեր բարձրացան ու բազմեցին նստիքներին
 Եվ սկսեցին թերով ժիր ու քաշունակ փրփրաթաթախս ծովը ճեղքել:
 Այդպես անդուստ մենք պացանք դեպի ստաջ՝ սրտով տխուր
 և վշտառանջ:
 Ասրս եկանք մենք երկիրը ամբարտավան և անօրեն կիկլոպների:
 Մրանք, անմահ աստվածների վրա միայն հուսադրված:
 Սովորաբար ո՛չ վարում են, հող ու դաշտեր, ո՛չ ցանում են
 իրենց ձեռքով,
 110 Այլ լափում են լոկ չցանված և անմշակ բույս ու պտուղ.
 Ցորեն, գարի, մեծաողկույզ և գինետու խաղող առատ:
 Ու սնվում են ամեն բանով, ինչ աճում է Ջևսից եկող անձրևներից:
 Չունեն նրանք օրենք ու խիղճ, խորհրդական ու վեհ առյան
 Եվ ապրում են սեզ լեռների կատարներին և խորափոր անձավներում:
 Իրենց կանանց, զավակներին դատում, իշխում են բռնաբար
 Եվ չգիտեն ամենևին՝ ինչ է հոգսը ալյոց մասին:
 Ծովի ափին, կիկլոպների երկրից այնտեղ ոչ շատ հեռու, ոչ էլ մոտիկ,

Կա մի կղզի, անտառապատ մի հարթավայր, ուր անարգել,
Ազատ շրջում և արածում են վայրենի անթիվ այծեր,
120 Որոնց երբեք չի վախեցրել մարդու քայլը կամ հանդիպումը
մարդկանց հետ.

Այնտեղ նրանց չեն հետևում նաև դաժան որսորդները, որոնք հաճախ
Ծատ գրկանքներ են հանդուրժում անտառի մեջ կամ լեռների
կատարներին:

Չկան այնտեղ ոչ վար ու ցանք, ոչ խաշնարոտ և ոչ խաշինք.
Այդպես այն կա և մնում է միշտ անմշակ, անմարդակյաց և ամայի,
Ու միմիայն սևվում են անդ մայրոջ այծերը վայրենի,
Քանզի չէ՞ որ կիկլոպները չունեն նավեր սևակտուց ու կարմրալանջ,
Չունեն նրանք և վարպետներ նավակառույց, որ շինեին գեղեցկանիստ
Եվ ամրաթի արագ նավեր, որոնց վրա մարդիկ ծովով
Այցելության են միշտ գնում քաղաքներին մարդաբնակ

180 Եվ, անցնելով ծովանդունդը, միշտ շփվում են միմյանց հետ:
Բայց այդ կղզին կարող էին լավ մշակել, իրոք դարձնել գեղեցկաշեն
Եվ բազմամարդ. անպտուղ չէ այն հիրավի և կարող է տալ ամեն ինչ,
Քանզի այնտեղ, բազմափրփուր ծովի ափին, շատ կան մարգեր
Միշտ ոռոգվող և հյութալից և կարող է խաղողն անգամ այնտեղ աճել
Փարթամաճոխ և անսպառ, և կլինի վարն հեշտագույն, բերքը՝ առատ,
Քանզի այնտեղ, ամենուրեք, հողն է բերրի, ներքուստ պարարտ:
Անդ կա նաև քաջահամարմար նավակալան, որտեղ բնավ կարիք չկա
Նավ կառանել, խարիսխ գետել կամ նավախելն ամուր կապել,
Եվ կարող է նավը այնքան երկարատև այնտեղ մնալ,

140 Որքան ուզում է նավորդի սիրտը, մինչև փչի հողմը:
Նավարանի կողքին, այնտեղ, ջուր էր հոսում պայծառ ու ջինջ.
Ժայռից բխող աղբյուր էր այդ, որի շուրջը բսնում էին պերճ ստիներ:
Ահա՛ այնտեղ եկանք, հասանք մենք լող տալով, թերևս աստված
մեզ բերեց անդ
Մի մութ գիշեր, այնքան մութ էր, որ նշմարել շուրջը ոչինչ չէր կարելի,
Եվ թանձրախիտ մեզն էր պատել նավերն ամբողջ, իսկ լուսինը
երկնքի մեջ

Լույս չէր տալիս ամենևին. ամպերով էր նա քողարկված:
Մինչ մեզանից անկարող էր մեկն ու մեկը աչքով տեսնել
այնտեղ կղզին:

Նախքան նավերը բազմաթի ափունքի մոտ անդ կանգնեցին,
Ամենևին չէինք տեսնում մենք ալիքները ցամաքին հուժկու զարկվող:
150 Իսկ երբ նավերը ափ հասան, մենք իջեցրինք սարքավորումն
և սուսգաստն,

Եվ ինքներս էլ իսկույն կեթ անդ ծովածեծ ափ դուրս եկանք:
Ու քնեցինք իսկույն այնտեղ՝ սպասելով Արշալույսին աստվածաստես:

Երբ որ ծագեց ճանաչագեղ Արշալույսը վարդամատն,
Մենք շարժվեցինք, որ թափառենք կղզու վրա և հիացանք հոգեզվառն:
Սապարակիր Չևի դստերք նիմփաները այնժամ այծերը լեռնակյաց
Դուրս հլանեցին, որ ընկերներն իմ հեշտությամբ ուտեստ ճարեն:
Վերցրինք այնժամ մենք նավերից կոր տղերներ և նիզակներ
երկայն ու սուր,

Բաժանվեցինք երեք խմբի, ապա իսկույն սկսեցինք զարկել դրանց:
Եվ շատ շուտով աստվածն այնտեղ մեզ շնորհեց առատ ավար.
160 Տասներկու նավ կային ինձ հետ... ամեն մեկին ինը գրիս լավ
այծ հասավ,

Մակայն բացի իմ բաժինից, մեկն էլ ավել և ընտրույի ես ստացա:
Եվ մենք այդպես ամբողջ որը, մինչև թեքվեց արևը իր մայրամուտին,
Նստած այնտեղ, լախում էինք բազմաառատ միսն ու մեղրանուշ
գինին խմում:
Կարմիր գինին այդ տակալին, որ պահված էր նավերի մեջ,
չէր սպասվել,

Քանզի շատ էր ամեն մեկըս վերցրել իր հետ կարասներով
Այն ժամանակ, երբ մենք ստանք կիկլոպների ամրակառույց քաղաքն
հարուստ:
Այդպես նստած՝ տեսնում էինք մենք երկիրը կիկլոպների, ծովան
այնտեղի,

Լսում էինք նրանց ձայնը, ոչխարների և այծերի մայունն հնչելը:
Երբ մայր մտավ արևն արդեն, և խափարը իջավ վերուստ,
170 Բողորեքյան մենք քուն մտանք այնտեղ, ափին հուզված ծովի:
Իսկ երբ ծագեց ճանաչագեղ Արշալույսը վարդամատն,
Ես անդ ժողով գումարեցի, ապա նրանց այս ասացի.
«Դուք բոլորդ, սիրատենչիկ իմ ընկերներ, պիտի այստեղ մնաք հիմա,
Իսկ ես իսկույն այս իմ նավով և իմ մարդկանց հետ միասին
Պիտի գնամ, հարցմունք անեմ և իմանամ մոտիկ ապրող մարդկանց
մասին.

Արդո՞ք նրանք վիսացող են և վայրենի կամ անօրեն, չնչին մարդիկ,
Թե՞ փառավոր և հյուրասեր մի ազգություն, աստվածախախտ սիրտ
ունեցող»:

Այդ ասացի, նավ բարձրացա ես անհապաղ՝ սրասփրեղով ընկերներես,
Որ և նրանք, կառանները արձակելով, նավը նստեմ իսկույն կեթ:
180 Նրանք հապճեպ նավ բարձրացան և, բազմելով նստիքներին,
իրար կողքի.

Սկսեցին թիերով ժիր ճեղքել ծովի ալիքները փրփրաթաթախ:
Ծատ շուտ հասանք մենք Երկիրը կիկլոպների, որ մոտիկ էր,
Այնտեղ տեսանք ծովափին կից, ծովին ողողված մի քարանձավ՝
Դափնիներով շրջապատված ու բարձրաբերձ: Անձախում այդ գիշերելու

Գալիս էին բյուր ոչխար, այծ. անձալի շորջ բակն ահագին
Կերտված էր գոռ և վիթխարի, գետնին ցցված, բարձրագլուխ
մեծ ժայռերից.

Որոնց շորջը անում էին բարձրագանգուր շատ կաղնիներ և սոճիներ,
Եվ ապրում էր անձալի մեջ հսկա մի մարդ: Նա մեն-մենակ
Ու ամեն օր դուրս էր բշում ոչխար ու այծ դեպ խաշնարոտ. ոչ ոքի հետ
190 Չէր տեսնվում և հեռու էր պահում իրեն, բայց վարվում էր ծանտ,
անօրեն:

Հրեշ էր նա և նման էր հսկայական մի ճիվաղի, բայց նման չէր
Նա հացակեր մարդկանց բնավ: Ահռելի էր ու լեռնաբերձ, ասես մի սար
Անտառախիտ, որը մենակ նշմարվում է բոլորի մեջ:

Ահավասիկ, պատվիրեցի ես իմ բոլոր սիրանվեր ընկերներին
Նավերի մոտ սպասել մեզ և նավերը հսկել միայն,

Իսկ ես ինքս, տասներկու քաջ և ընտրովի ընկերներին հետ միասին,
Ծամփա ընկա: Ինձ հետ կարմիր ու մեղրանուշ մի տիկ գինի ես ունեի.

Դա ինձ տվել էր Մարոնը՝ քաջ գավալը Եվանթոսի,
Քրմապետը Ապոլլոնի, որ քաջարի գորավիզն էր Իսմարոսի:

200 Նա նվիրեց այն առիթով, որ մենք իրոք, պատկանելով աստվածներից,
Պաշտպանեցինք այնտեղ նրան, նրա որդուն ու կնոջը.

Բնակվում էր նա Իսմարում, Ապոլլոնի թավ անտառում:
Ծատ ընծաներ նա ինձ տվեց. յոթը տաղանդ մաքուր ոսկի

Եվ մի գավաթ շքեղագարդ, ամբողջովին արծաթաշեն,
Ապա լցրեց նա ինձ համար կարմիր գինի, տասներկու կարաս լիքը,
Անուշահամ և անարատ, աստվածարժան մի խմելիք:

Տանը ոչ ոք այդ չիմացավ, ո՛չ ստրուկներն և ո՛չ ծառայք,
Այլ միայն ինքն և իր կինը սիրատենչիկ, նաև միակ մատանապետն:

Երբ այդ գինին վայելելիս՝ միայն մեկ թասը դրանից
210 Խառնում էին քսան թաս լիքը ջրի հետ, այնուհանդերձ
Ծորջն ամանի տարածվում էր բուրմունքն, ասես սքանչելիք,
Եվ այդ դեպքում իրավ ոչ ոք էլ չէր կարող զսպել իրեն:

Արդ, այդ գինով լցված մի տիկ հետո տարա, պարկի մեջ կար
նաև պաշար,

Քանզի սիրուն իմ քաջահայաց նախատեսավ, կարծես զգաց,
Որ պետք է մենք մի ահռելի, մեծ զորությամբ օժտված մարդու
դիմաց կանգնենք,

Ժանտ հրեշի, որ չգիտի ոչ իրավունք և ոչ օրենք:
Մենք գնացինք և շատ շուտով քարայր մտանք, բայց չգտանք
այնտեղ նրան,

Նա այդ ժամին խաշնարոտում արածացնում էր իր խաշինքը պարարուն:
Ներս մտնելով քարայրի մեջ՝ մենք ամեն ինչ լավ դիտեցինք.

220 Համբոլդները ինչ էին անդ լավ պահիրով: Ախրոները լցված էին

Այծիկներով ու գառներով, բայց բոլորը իրարից գատ.
Տարբեր տաղեր էին փակված գարնանածիճք, ամառնածիճք,
աշնանածիճք՝

Ասեմ տեպսկն առանձնակի: Եվ լիքն էին ամանները թարմ շունկով.
Պա ռբաստ կաշին կաթ կթելու սկուտեղներ, կթի դուլեր:

Տեսնելով այդ՝ իմ ընկերները նախապես ինձ խնդրեցին
Վերցնել իսկույն այդ պանիրը ու ետ դառնալ դեպի նավերն,
Ապա շուտով վերադառնալ և քարայրից քշել տանել այժն ու գառը,
Բառնալ նավին արագընթաց և շուտ լող տալ աղի ծովով ու հեռանալ,
Մակայն ինձ դա չհամոզեց, թեպետև այդ շատ ավելի լավ կլիներ:

250 Ես կամեցա տեսնել նրան՝ հույս տածելով, որ նվերներ կտա նա ինձ,
Բայց գալուստը նրա, ավա՛ղ, ուրախ չեղավ ընկերներին համար
այնտեղ:

Ապա կրակ մենք վառեցինք, աստվածներին գոհ ու զենում
կատարեցինք

Եվ, քիչ պանիր ճաշակելով, քարայրի մեջ այդպես նստած սպասեցինք:
Եվ նա եկավ՝ մեջքին դրած մի ահագին ու մեծ շալակ խոիվ ու ցախ,
Որ, խաշինքն իր տուն քշելով, կրակ վառի, ընթրիք սարքի:

Ներս նետելով ցախն ու խոիվն՝ այնքան ահեղ նա գոռոռաց,
Որ մենք այնտեղ, քարանձավի մի անկյունում, կրծկրվեցինք
սարափահար:

Մինչ հրեշը իր խաշինքի կթան ոչխարն ու էգ այծերն շուտ ներս քշեց
Անձալի մեջ, իսկ մյուս մասը՝ գեր խոյերին, որձ այծերին

240 Թողեց այնտեղ, դուռն ետև, լայնատարած իր բակի մեջ:
Այնուհետև նա բարձրացրեց մի վիթխարի, ծանրակիր ժայռ
Եվ դա դրեց իր մուտքի դեմ: Այնքան էր մեծ այդ ժայռը, որ քսաներկու
Քառանիվ ու ամրապինդ սալ այն իր տեղից շարժել չէին կարողանա:

Արդ, այդպիսի հսկայական մի քարածայր մուտքի առջև նա դրեց,
Ապա նստեց և սկըսեց կթել մայրը իր այծերն ու ոչխարները:

Կթեց բոլորն, ինչպես հարկն է, հետո նրանց տակը թողեց մի-մի ծծկեր:
Թողեց կեսը ձերմակ կաթի, որ մակարդի, ապա շուտով նա այն քամեց,
Իսկ քամածը նա խնամքով դարսեց իսկույն զամբոլդներում իր հյուսած:

250 Մինչ մյուս կեսը ամաններով մի կողմ դրեց, որ ձեռքի տակ այն ունենա,
Վերցնի խմի, երբ կամենա և որպեսզի իր ընթրիքին դա բավ լինի:
Երբ որ այդպես նա ժրաջան բոլոր գործերն իր ավարտեց,
Խարույկ վառեց և մեզ, հանկարծ նկատելով, հարցմունք արեց
ու գոռոռաց.

«Հը՞, եկվորներ, որտեղի՞ց եք դուք լող տվել ուղիներով այն հորդաջուր,
Ի՞նչ գործ ունեք. գուցե միայն դեզերում եք դուք ընդունալն
Հանց ծովահենք, որ սովոր են ծովերի մեջ միշտ թափառել
զուր ու նանիր

Եվ, կյանքն իրենց վտանգեղով, ժամն աղետներ հասցնել մարդկանց
այլերկրացի»:

Ասաց այդպես, խորտակվեցին սիրատենչիկ արտերը մեր ահաբեկված:
Սարափեցիներ մենք վայրենի այդ հրեշից, նրա ձայնից զարհուրելի:
Բայց ես նրան, համեմայն դեպս, խոսք ասացի ի պատասխան.

260 «Մենք, աքելանք, Տրոյայից ենք գալիս, ուղուց շեղվել ենք մենք
Ու շրջում ենք՝ ամեն տեսակ հողմերի տակ, ծովի աճումն անդունդներով.
Փարիազում ենք ետ դառնալ տուն, բայց եկել ենք ուղեկորույս,
այլ ուղղությամբ,

Եվ երևի Ջևաի կամոք էր այդ իրոք մեզ վիճակված:
Մինչ կարող ենք մենք պարծենալ, հասնց մարտիկներ Ատրեսածին
Ազամեմնի,

Որի փառքն է գերահռչակ թնդում հիմա երկնքի տակ:
Մի այնպիսի հզոր քաղաք նա ավերեց և կործանեց բյուր բյուրերի:
Եվ արդ, հիմա այստեղ եկած, քո ծնկներն ենք ընկնում ահա
աղերսագին.

Գուցե դու մեզ հյուրընկալես և կամ մի կերպ նվերներով մեզ աստարես,
Ինչպես որ այդ ընդունված է օտարական մարդկանց համար,
որպես օրենք.

270 Գեթ պատկառի սատվածներից, ո՛վ գերագույն, աղերսողներ ենք
այստեղ մենք.

Ջևան է իրոք հովանավոր հյուրընկալը կարոտ մարդկանց և հյուրերի,
Նա է նրանց ուղեկիցը, եկվոր հյուրերն արծանի են մեծարանքի»:

Այդպես ահա ես ասացի, ինձ հույնհետայն նա աճողոք պատասխանեց.
«Հիմար ես դու, օտարական, կամ եկել ես շատ շատ հեռվից,
Որ այժմ այստեղ պատվիրում ես զգուշանալ կամ երկնչել
աստվածներից.

Կիկրույները չեն պատկառում ասպարակի Ջևաից երբեք,
Կամ այլ անմահ աստվածներից. մեր զորությամբ մենք ավելի
գերազանց ենք:

Ջևաի քենից չեմ վախենում և քեզ բնավ չեմ խնայի
Եվ ոչ էլ քո ընկերներին, եթե սիրտըս ինձ չդրոյի:

280 Բայց ինձ ասա, որ իմանամ, որտե՞ղ արդյոք կառանցեցիր
Դու քո նավը սարքավորված, այստե՞ղ, մոտի՞կ, թե՞ հեռավոր
մի այլ տեղում»:

Այդպես ասաց՝ ինձ փորձելով: Բայց ես, իբրև քաղմափորձ մարդ,
Այդ հասկացա, ուստի նրան ի պատասխան այս խորամանկ
խոսքն ասացի.

«Իմ նավն, ավա՛ղ, այժմ խորտակեց Պոսիդոնը երկրասասան
Սահմանի մոտ ձեր այս երկրի, սուր ծայրերին խիստ զարկելով:
Նախ նա քշեց դեպ հրվանդան, մեզ այնտեղից աղի ծովով հողմը քերեց,

Եվ միմիայն ես փրկվեցի դժնի մահից, նաև արանք»:
Այդպես ահա ես ասացի, բայց սրառասխան ինձ չտվեց նա՝
ժամասպիրտն,

Այլ վեր կացալ, ապա դեպի իմ ընկերները նա մեկնեց իր ձեռքը բիրտ

290 Եվ երկուսին, ինչպես երկու շան լակոտի, բռնեց, ճանկեց,
Անգթաբար զարկեց գետնին: Ուղեղն հոսեց և ոտոզեց հատակն իսկույն,
Ապա նրանց նա ցրցրտեց ու վայելեց, իբրև ընթրիք,
Կերավ, լափեց հանց լեռնասուն արծիվն հզոր, և չթողեց ոչ մի կտոր,
Ոչ փորոտին, ոչ ուղեղը, որ հարուստ է ոսկորներով:
Ահեղ գործին այդ նայելով՝ հեկեկացիներ մենք դառնադառն
ու հայր Ջևաին

Կարկանտեցիներ ձեռքերը մեր. վհատությամբ ցցվեց իսկույն
մեր խեղճ հոգին:

Արդ, երբ կիկրույն այդպես ցրեց իր ահագին որոգայծը մարդու մտով,
Եվ երբ որ նա այնուհետև անապակ կայթը լափլիփեց,
Անդ, քարայրում պատկեց, քնեց՝ լայն փովելով ոչխարների, այծերի մեջ:

300 Այդ ժամանակ քաջախիզախ իմ արտի մեջ ես այսպիսի միտք հղացա.
Իր պատյանից սուրը քաշել իմ սալասուր և, մոտ գալով ընդհուպ նրան,
Զարկել, վարսել կրծքին, այնտեղ, ուր քաժանվում է թաղանթով
լերդը արտից:

Եվ ձեռքս արդեն շոշափում էր սուր պղինձը, երբ ինձ այլ միտք զսպեց
իսկույն,

«Բանգի այնտեղ, քարայրի մեջ, մեզ ահուելի մի կործանում պիտ
վիճակվեր.

Չէ՞ որ չէինք մենք կարենա մեր ձեռքերով վանել քարձր դռան մոտից
Հսկայական ծայրը, որը անդ որել էր հրեշն ահեղ:
Ուստի, միայն դառն հեծելով, սպասեցիներ աստվածային Արշալույսին:
Իսկ երբ ծագեց անձանչագեղ Արշալույսը վարդամատն,
Նա վեր կացալ այդ ժամանակ, խարույկ վառեց, կթեց խաշիներն
իր փառավոր,

310 Կթեց բոլորն ինչպես հարկն էր և ամեն ինչ դասավորեց:
Երբ ավարտեց նա գործն այդպես, ծծկեր գառներ թողեց իսկույն
մայրերի տակ,

Ապա նորից երկու հոգի ճանկեց մեզնից և նախաձաշն իր պատրաստեց:
Երբ մարդամիս նախաձաշն այդ նա լափլիփեց, այրից խաշիներն իր
դուրս տարավ՝

Մուտքի մեծ քարն հեշտիվ մի կողմ ետ քաշելով, ապա նորից
տեղը դրեց,

Սակայն դրեց այնքան թեթև, որ կարծես թե խուփը ծածկեց
նա կապարճի:

Աղմըկելով և սուլոցով քշեց կիկրույն իր գեր խաշիները սարն ի վեր,

Մինչդեռ, փակված բարայրի մեջ, սկսեցի ես միտք անել,
Ինչպե՞ս արդո՞ք վրեժն առնել. գուցե փառք տա ինձ Աթենասան
այս գործի մեջ:

- Ահալասիկ իմ հոգու մեջ հետևյալը ինձ ավելի հարմար թվաց.
320 Քարայրի մեջ, ախտի մոտ, ընկած էր ձողը կիկլոսի, նոր կտրված
Եվ մեծագույն մի ձիթենի. նա կտրել էր, որ գործածի, երբ չորանա:
Մեր աչքերին դա կայմ թվաց՝ երկու տասնյակ թի ունեցող,
Արագընթաց, մեծածավալ ու բեռնակիր սև նավի կայմ,
Այն մեծ նավի, որ պանոսն և անցնում է անդունդները մթին ծովի:
Երկարությամբ և հաստությամբ այդպես էր դա թվում աչքին:
Եվ ես դրան շուտ մոտեցա ու կտրեցի ճիշտ երկու գագ:
Ապա տվի ընկերներին՝ պատվիրելով այն հարթ հոկել:
Նրանք շուտով ողորկեցին, իսկ ես վերցրի ու սրեցի ծայրը դրա:
Ապա իսկույն սրված ծայրը ես խանձեցի բոցավառվող կրակի մեջ
330 Ու խնամքով այն պահեցի՝ խոր թաղելով խիտ աղբի տակ,
Որ մեծակույտ և լիովի թափված էր անդ, ախտի մոտ:
Այնուհետև պատվիրեցի ընկերներին՝ վիճակ գցել իրարու մեջ,
Թե ո՞վ արդո՞ք պիտ հանդըզնի վերցնել, տանել ձողը ինձ հետ
Եվ աչքի մեջ նրա վարսել, երբ քաղցրանուշ բունը նրան իսկույն զսայի:
Վիճակն ընկալ այն չորս հոգուն, որոնց և ես կցանկայի,
Եթե անձամբ ինքս ընտրողը լինեի, իսկ հիմնգերորդը ես էի:
Եվ նա եկալ երեկոյան՝ տուն բերելով իր մեծ խաշիճքը նրբագեղմ.
Նա անհասպաղ այժն ու ոչխարն քշեց, լցրեց մեծատարած անձամբի մեջ,
Սակայն լցրեց ամբողջովին, իսկ բակի մեջ էլ չթողեց նա ոչ մի հատ:
340 Նախագագսմունքն այդպես գուցե դրո՞ւց նրան կամ ներշնչեց
աստվածն այնժամ:
Արդ, նա կրկին վեր բարձրացրեց ծայրն ահագին ու սեղմ դրեց
դեմը մուտքի,
Ապա նստեց և սկսեց կթել ոչխարն, այլև մաշող այժերը լուր.
Կթեց բոլորն ինչպես հարկն էր, հետո թողեց նրանց տակը մի-մի ծծկեր:
Երբ ծրաջան նա ավարտեց գործերը այդ, ձեռքը մեկնեց ու մեզանից
Կրկին ճանկեց երկու հոգի և նրանցից ասրքեց ընթրիք նա իր համար:
Այդ միջոցին, ձեռքիս բռնած պերճ գավաթը, կարմիր գինին մեջը լեցուն,
Ես կիկլոսին խոսք ասացի՝ ընդհուպ նրան մոտենալով.
«Ա՛ռ, ով կիկլոս, մարդու միսը ուտելուց ետ, խմիր գինին,
Որ իմանաս, թե որպիսի՝ ըմպելիք կար սեր նավի մեջ.
350 Ահալասիկ, քեզ եմ բերում և քո պատվին հեղումը այս:
Գուցե խղճաս, մեզ արձակես, մինչ մոլեգե՞նում ես չափազանց:
Անագորո՞ւյն, ինչպե՞ս արդո՞ք բյուրաբազում մարդկանց միջից
մեկնումեկը
Այցելության քեզ պիտի գա այսուհետև, երբ վարվում ես դու անօրեն»:

Այդպես ահա բարբառեցի, և նա վերցրեց, իսկույն խմեց:
Քաղցրահամ թվաց նրան կարմիր գինին, և նա ինձնից խնդրեց կրկին.
«Տո՛ւր ինձ, խնդրեմ, մի անգամ էլ և ինձ հայտնի անունը քո,
Որպեսզի ես նույնպես ընծա շնորհեմ քեզ, որ լավ խնդա և քո հոգին:
Մի՛շտ է, գինի ողկույզագարդ, պերճ խաղողից մալը երկիրը

այս կենսատու
Տալիս է և կիկլոսներին, քանզի Ջեսի անձրևն է միշտ այն անեցնում,
360 Բայց այս գինին կարծես իրոք ամբրոսիայի է կամ նեկտարի
կալլակ ու ցայտ»:

Երեք անգամ ես տվեցի, երեք անգամ խեղակորույս նա դատարկեց:

Երբ վիանդեց արդեն գինին ուշքն ու միտքը չար կիկլոսի,

Ես, դիմելով իսկույն նրան, գորովալիք բարբառեցի.

«Քաջդ կիկլոս, իմ փառավոր անվան մասին դու հարցրիր,

որ իմանաս.

Հայտնում եմ այն, ահալասիկ, իսկ դու ընծան ինձ պարգևիր,

հանց խոստացար:

Արդ, «Ոչոք» է իմ անունը: Ինձ «Ոչոք» են միշտ հորջորջում

Իմ հայրն ու մայրն և իմ բոլոր բարեկամները բազմաթիվ»:

Ասացի այդ: Դաժանորեն նա ինձ հայեց և անողոք իր խոսքն ասաց.

«Ոչոք, ես քեզ ամենից ուշ պիտի լախեմ, ընկերներիդ մասինց հետո.

370 Նախ կրպիտեմ այդ բոլորին, քեզ նվերն իմ այդ կիկին»:

Ասաց այդպես ու տեղնուտեղն, օրորվելով ցած գլորվեց:

Պսուկեց ապա՝ իր հաստագույն պարանոցը մի կողմ թեքած:

Ամենահաղթ բունը իսկույն զսպեց նրան, բայց, դեռ հարբած,

փսխում էր նա

Եվ կոկորդից իր գգաշուռ մարդու մսի բեկորները գինեխառն:

Ես անհասպաղ ձողն հանեցի, ծայրը կրկին կրակի մեջ խոր վառեցի,

Որ շիկանա այն հրավառ: Ընկերներին համոզեցի քաջահորդոր,

Որ մեկնումեկն ետ չկանգնի, չահաբեկվի գործն անելիս:

Իսկ երբ արդեն կրակի մեջ ձիթենի ձողն հրակիզվեց ու շիկացավ,

Թեպետ խոնավ էր այն սաստիկ, վառ կրակից ես ձողը այդ

380 Արագապես դուրս քաշեցի, ապա մոտիկ տարա նրան: Իմ կողքին վես

Կանգնած էին ընկերներս, և աստվածն էր խիզախություն ներշնչում մեզ:

Իսկույն նրանք պինդ բռնեցին ձիթենի ձողն ու վարսեցին սրված ծայրով

Աչքի մեջը ժանտ հրեշի: Մինչ ես, ձողին ամուր հեճված, պտտեցի

Եվ ճիշտ այնպես, ինչպես խոստան է ծիր ծակում նավափայտը

իր գշիրով,

Երբ ներքինց օգնողներն են այդ գշիրը պիրկ փոկերով պտույտ տալիս,

Ծարժվում է այն արագորեն՝ գերանի մեջ անդուրյուն պտտվելով,

Այդպես և մենք չար կիկլոսի մեծ աչքի մեջ պտտեցնում էինք արագ

Ձողն հրաշեկ: Ցայտեց աչքից ջերմ արյունը և ոռոզեց քարայրն ամբողջ,



Յ. Պոլիփեմոսի կորացումը (նկար սափորի վրա):

390 Բորք կրակից խիստ խանձվեցին նրա հոնքերն, թարթիչները,
 Բոցավառվեց խնձորն աչքի, ու պայթեցին մկանները՝ խիստ շշարով:
 Այնպես, ինչպես վարպետ դարբինն իր ուրագը կամ տապարը
 երկայն ու սուր
 վերցնում, նետում է ջրի մեջ, որպեսզի լավ կոփվեն դրանք,
 Քանզի երկաթն ամրանում է ջրմխվելով, և շշում են սառը ջրում
 Գործիքներն այդ, այդպես աչքն էր նրա շշում շուրջը ձողի:
 Նա ահռելի և ուժգնորեն աղաղակեց, շուրջը ժայռերը թնդացին,
 Եվ մենք այնտեղ, սարսափահար, փախանք իսկույն ու ցրվեցինք:
 Կիկլույն աչքից իր դուրս քաշեց կարող ձեռքով արյունոտված
 ձիթենի ձողն
 Եվ կատաղած ու մոլեգին նետեց մի կողմ, ապա բարձր,
 Ահեղագոչ գոռաց, կանչեց կիկլույներիս, որոնք այնտեղ
 400 Ապրում էին շրջակայքի բարձունքներում, անձավներում անտառափսիտ:
 Լսելով այդ գոռոռոցը՝ կիկլույները ամեն կողմից ելան, եկան
 Եվ, կանգնելով քարայրի մոտ, հարցմունք արին՝ ինչո՞ւ է նա
 տանջվում այդպես.
 «Ով Պոլիփեմ, աաս, արդո՞ք ի՞նչ աղետ է պատահել քեզ,
 Որ այս գիշերն աստվածային մեզ կանչեցիր և մեր բունը խափանեցիր:
 Գուցե մի ոմն մահկանացու քո խաշինքը հափշտակեց, քշեց տարավ
 Եվ կամ գուցե մեկնումսկը կործանում է քեզ բռնաբար»:
 Ու քարայրից այն խորափոր աղաղակեց Պոլիփեմը հզորագոր.
 «Բարեկամներ՝, ինձ սպանում է Ոչոքը, խարդախությամբ, ոչ թե ուժով»:

Նրանք նրան բարբառեցին ի պատասխան, խոսքն ասացին այս թևավոր.
 410 «Արդ, քանի որ մենակ ես դու և քեզ ոչ ոք չի չարչարում,
 Տերեմն ապա Ջևից եկած տառապանքից քեզ ազատել չի կարելի.
 Ռատի միայն պիտ աղոթես դու քո հորը, Պոսիդոնին իշխանագոր»:
 Այդ ասացին ու հեռացան: Մինչ սիրասուն սիրուն իմ խնդաց,
 Քանզի նրանց այդպես խաբեց իմ անունը և նենգությունն իմ գերազանց:
 Իսկ կիկլույսը, հեծեծանքով, ահեղ ցավից իր կարկամած,
 Ծուրջը ձեռքով իր շոշափեց, ապա մուտքի վիթխարի քարը գլորեց,
 Եվ ինքն իսկույն նստեց այնտեղ, մուտքի առջև և տարածեց
 ձեռքերն իր հաղթ,
 Որ գեթ բռնի մեկն ու մեկիս՝ խաշների հետ քարանձավից
 դուրս ելնելիս:
 Այդպես նա ինձ, իր մտքի մեջ, համարում էր այդքան հիմար
 և միամիտ:
 420 Մինչ ես խորունկ խորհում էի, ինչպե՞ս անել, ի՞նչ էլք գտնել,
 Որ ժանտ մահից փրկվեմք և՛ ես և՛ ընկերներն իմ սիրելի:
 Ծառ շատ մտքեր և խորամանկ, նենգ միջոցներ ես հյուսեցի
 իմ գլխի մեջ.
 Զե՛ որ կյանքի խնդիր էր այդ, և ժանտ մահն էր մեր դեմ կանգնած:
 Եվ արդ, այնժամ այս միտքը ինձ և իմ սրտին թվաց բարվոք
 ու լավագույն.
 Այնտեղ կային բազում խոյեր՝ պերճ, ահագին ու պարարուն,
 Որոնք ծածկված էին բրդով մուգ-շառագույն, խիտ գեղմերով:
 Դրանց միմյանց ես կապեցի՝ ամուր հյուսված դալար ու պինդ
 ընձյուղներով,
 Որոնց վրա պառկում, քնում էր անօրեն գործ կատարող հրեջը այն:
 Երեք-երեք ես կապեցի. մեջտեղինը իր հետ մի մարդ պիտի տաներ,
 430 Իսկ մյուս երկուսն երկու կողմից պիտ գնային՝ ընկերներիս քողարկելով:
 Այդպես ահա ընկերներից ամեն մեկի պիտ տանեին երեք ոչխար:
 Կար պերճ մի խոյ՝ եղած բոլոր ոչխարներից շատ ավելի մեծամարմին,
 Եվ ես ահա փաթաթվեցի նրա մեջքին ու, մտնելով թավ փորի տակ,
 Մեկնված էի՝ ձեռքերով պինդ բռնած նրա գեղմը փաթթամ ու փառավոր:
 Արդ, ես դրա փորին կպած, կախված էի համբերությամբ, տոկուն
 սրտով:
 Այդպես այնժամ աստվածային Արշալույսին սպասեցինք մենք
 վշտահար:
 Իսկ երբ ծագեց ճանաչագեղ Արշալույսը վարդախառն,
 Նա դուրս քշեց այրից դեպի արոտատեղ գեր այծերին ու խոյերին,
 Մինչ էգերը դեռ չկթված մաշում էին ախոռի մոտ՝
 440 Ծծերն իրենց կայծով լցված. տերը դրանց, ժանտ ցավերից
 իր տանջահար,

Խոյնքի մեջքն էր շոշափում, էրբ որ դրանք քարայրից դուրս էին

վազում,

Իսկ այն մասին՝ ո՛վ է արդոք այդ գեղմավոր պերճ խոյնքի Փորի տակին կապված-կախված, նա, հիմարն այդ, չէր մտածում:

Մինչ, ամենից վերջում դեպի դուրս վազեց իմ խոյք մեծ՝

Ծանրաբեռնված չքնաղ բրդով, նաև անձով իմ խորիմաց:

Նրա մեջքը շոշափելով՝ այս խոսքն ասաց Պոլիփեմը քաջակորով.

«Խո՛ւ, սիրելիդ, ինչո՞ւ այրից դուրս ես գալիս դու վերջինը.

Զէ՛ որ առաջ իմ այս բոլոր ոչխարներից դու ետ չէիր մնում երբեք:

Ամենից շուտ էիր գնում դու սիգաճեմ՝ ծաղկաբույր խոտն արածելու,

450 Ամենից շուտ և սուսջինն էիր գալիս դու դեպ գետակը հորձանուտ,

Արոտներից երեկոյան միշտ դու էիր շտապ գալիս դեպի քարայր,

Մինչդեռ հիմա գնում ես դու, հանց վերջինը: Վշտահար ես

գուցե արդեն,

Մտահոգված այժմ քո տիրոջ աչքի մասին. ինձ կուրացրեց դաժան

մի մարդ

Ընկերներով իր չարագործ. աստ խելքահան ինձ արեցին նախ գինիով:

Ոչոքն էր այդ, որը, կարծեմ, չի խուսափի իր անողորմ մահից հիմա:

Ա՛խ, եթե դու գեթ լինեիր ինձ համամիտ և խոսունակ

Եվ հայտնեիր ինձ բացահայտ, թե որտե՞ղ է իմ գայրույթից

նա թաքնված,

Ուժգընորեն նրան գետնին կգարկեի, և ուղեղով նրա ցրված

Կծածկը վեր քարայրն ամբողջ, ու իմ սիրտը վշտակոտոր

460 Հանգիստ կստներ այս չարադավ դառնությունից, որ հասցրեց ինձ

Ոչոքն ստոր»:

Ասաց այդպես և դուրս թողեց հույժ նազելի նա իր խոյին:

Քարանձավից և լայն բակից փոքր-ինչ արդեն հեռանալով՝

Խոյից ես ինձ արձակեցի, ապա նաև արձակեցի ընկերներին,

Եվ քշեցինք մենք շուտափույթ ոչխարները պարարտաճարպ

Եվ, մերթընդմերթ ետ նայելով, մենք վերջապես եկանք, հասանք

մեր սև նավին:

Մեր սիրելի ընկերները ուրախությամբ հանդիպեցին այնտեղ մեզ,

Որ ժանտ մահից էինք փրկվել, իսկ մյուսների մահն ողբացին

դառն արցունքով,

Բայց ես նրանց արգելեցի ջալմանք անել, աչքով արի ամեն մեկին,

Պատվիրեցի նավը լցնել բյուրաբազում խաշինքը պերճ ու նրբագեղ

470 Եվ անհապաղ նավը ուղղել դեպ աղի ծովը մթազույն:

Նրանք արագ վեր բարձրացան ու բազմեցին նստիքներից, թիերի մոտ,

Եվ, շարեշար այդպես նստած, կոկ թիերով ճեղքեցին ծովը փրփրալից:

Երբ, սահելով, այնքան անցանք, որքան կանչող ձայնն է հեռվից լսելի,

Ես, դիմելով այդ կիկոպին ու ծաղրելով, խոսք ասացի.

«Տես դու, կիկոպ, ոչ այնքան թույլ, անգոր, մարդու ընկերներին
Դու լափեցիր քո խորափոր քարայրի մեջ՝ լի բուճությամբ ամբարտավան,
Եվ արդ, հիմա արժանի ես այդ վիճակին դու չարաղետ,
Ո՛վ ոճրագործ, որ հյուրերին չվախեցար լափել տանդ՝ քո հարկի տակ,
Ուստի պատիժն է դա Ջևաի և այլ ամմահ աստվածների»:

480 Այդպես ահա ես ասացի: Եվ կատաղեց նա իր սրտում էլ ավելի,

Իսկույն պոկեց հսկա լեռան բարձր լանջից հսկա մի ժայռ,

Ապա հուժկու նետեց ուղիղ սևակտուց նավի առջև,

Եվ քիչ մնաց՝ ժայռը դիպչեց դաստապանին նավաղելի:

Ժանտ անկումից հսկա ժայռի պեկոծվեց ծովը ուժգին, ահագնակի:

Մինչ փրփրալի, հորդ ալիքը նավը քշեց դեպի ցամաք,

Քանզի հորձանքը մակընթաց ստիպում էր նետվել, շարժվել դեպի ափ:

Իսկույն երկար ձողը նավի ես ձեռքս առա և նավն ափից

Ետ մղեցի: Գլխով արի ընկերներին, պատվիրեցի հորդորելով՝

Թափով ուժ տալ թիակներին, որ փորձանքից այդ ազատվենք:

490 Եվ սկսեցին թիավարել լարվածությամբ կորովալի,

Իսկ էրբ արդեն ծովում անցանք մենք կրկնակի տարածություն,

Ես ցանկացա նորից դիմել չար կիկոպին և խոսք ասել,

Մինչ սկսեցին ընկերներն իմ ինձ հորդորել ամեն կողմից.

«Ի՞նչ ես անում, ո՛վ խելագորկ, ցանկանում ես, որ ժանտ հրեշն

այդ գազազի՞»:

Հսկա ժայռը ծով ձգելով՝ հենց հիմա մեր նավը նետեց դեպի ցամաք,

Եվ քիչ մնաց, ինչպես տեսանք, որ մենք այստեղ կործանվեինք

մահով անեղ:

Եթե նա այժմ նորից լսի որևէ խոսք, ձայն, աղաղակ,

Նա կարող է ծովը նետել էլ ավելի վիթխարի ժայռ և ջախջախել

Մեզ, մեր գլուխն և նավն ամբողջ, քանզի կարող է հասցընել

հարվածը մեզ»:

500 Այդպես նրանք ինձ ասացին, բայց սիրտն իմ վետ չհամոզվեց,

Հոգիս հուզված էր հուզմունքով ցատումնալի, ուստի նորից ես գոռացի.

«Կիկո՛պ, եթե մահկանացու մի մարդ մի օր հարցմունք անի,

Թե ո՛վ այդպես աչքից գրկեց, կուրացրեց քեզ խայտառակ,

Պատասխանիր, որ այդ արեց, աչքդ հանեց քաղաքալեր Ռդիսևը,

Լաերտածինն, որն ապրում է շքեղ տան մեջ Իթակեում ապառաժուտ»:

Այդպես ահա ես ասացի, իսկ նա հեռվից, հառաչելով, պատասխանեց.

«Ավա՛ղ, որեմն կատարվեց գուշակությունը վաղեմի.

Մի օր այստեղ կար մի գուշակ, վայելչակազմ, քաջահասակ

Տեղեմուք Եվրիմիդես՝ հմայության մեջ խորիմաց և անվանի.

510 Այստեղ էր նա, գուշակում էր կիկոպներին և այստեղ էլ նա ծերացավ:

Նա գուշակեց, հանց մարգարե, և ինձ ասաց, որ ամենն այդ կկատարվի:

Ասաց, որ ես Ռդիսևսի ձեռքով մի օր կկորսանամ:

Ես սպասում էի, սակայն, որ իսկապես պիտ հաճեցիս մի քաջագնիվ,
Մի մեծագարն հերոս մարդու, կարողությամբ իր՝ գերագոր:
Մինչդեռ աչքից այժմ ինձ գրկեց նվաստագույն, ողորմելի,

չնչին մի մարդ,

Մի աչքանդակ ու թույլ թզուկ, որ նախապես ինձ խելքահան

արեց գինով:

Օ՛հ, դու հիմա գեթ այստեղ եկ, ո՛վ Ողիսես, քեզ պերճ պարզև

կրճճայեմ ես

Եվ կաղերսեմ նաև արքա մեծարխտին, երկրասասան մեծ աստղծուն,

Որ տա հաջող քեզ վերադարձ, քանզի զավակն եմ ես նրա և իբրև հայր

520 Ինձանով է նա պարծենում, լույ ինքը ինձ կրճճի, թե ցանկանա,

Եվ ո՛չ մի այլ անմահ աստված, ոչ էլ մի մարդ մահկանացու»:

Ասաց աղբյու: Իսկ ես նրան անդ ասացի ի պատասխան.

«Ա՛յ, եթե ես կարենայի կորզել քո կյանքն ու քո հոգին,

Եվ քեզ հղել տունն Հաղեսի, ինչպես ոչ ոք և ոչ մի մարդ,

Այնժամ քեզ չէր բուժի նույնիսկ Պոսիդոնը երկրաստատան»:

Աղբյու նրան ես ասացի, մինչ նա իսկույն դիմեց արքա Պոսիդոնին

Եվ աղոթեց՝ կարկառելով ձեռքերը յուր դեպի երկինքը աստղագարդ.

«Ակա՛նց դիր ինձ դու, Պոսիդոն, ո՛վ սևամազ դու երկրակալ:

Եթե ես միշտ քո զավակն եմ, եթե, իմ հայրը լինելով, դու իսկապես

530 Պարծենում ես, մի՛ թող, որ տուն վերադառնա Ողիսեսը Լաերտածին,

Որ տուն ունի, բնակվում է ապառաժուտ Իթակոնով:

Սակայն եթե վիճակված է, որ պետք է նա վերադառնա

Իր երկիրը հաչրենախանդ, ապարանքն իր բարձրակտուր, որպեսզի անդ

Տեսնի մարդկանց իր սիրելի, թող ետ դառնա ուշ, տառապած,

Օտար նախով, գրկված բոլոր ընկերներից, թող նա տանջվի և իր

տան մեջ»:

Աղբյու ասաց աղերսագին: Սևամազը նրան լսեց,

Իսկ Պոլիսիենն ավելի մեծ ու վիթխարի մի ժայռ վերցրեց,

Ապա ուժգին թափահարեց՝ անեղ կորովն իր լարելով

Եվ խիստ նետեց: Ժայռը ընկավ սևակտուց նախի ետևն ու շատ մոտիկ.

540 Քիչ էր մնում, որ այն դիպչեր դաստապանին նավաղելի,

Եվ անկումից հսկա ժայռի ծովը աստիկ ալեկոծվեց,

Նավն աղիքը առաջ նետեց, քշեց, տարավ դեպի ցամաք:

Աղբյու եկանք, հասանք կղզին, որ հավաքված էին նաև

Մեր մյուս նավերը գեղակերտ ու լայնահաստ, իսկ դրանց մոտ,

ափին նստած,

Մեր ընկերներն, աչքը ճանհիսն, մեր գալստյանն էին տխուր

դեռ սպասում:

Սփ հասնելով՝ նավը իսկույն մեկը ավազում կտանեցինք,

Իսկ ինքներս, դուրս ելնելով, հուզվող ծովի ափը իջանք,

Ապա նավից մեր խորափոր դուրս բերեցինք չքնաղ խաշինքը կիկլոսի
Եվ այն մեր մեջ բաժանեցինք, ու անդ գրկված կամ թե խաբված
ոչ ոք չեղավ:

550 Գեղասարունք ընկերներն իմ ինձ առանձին, իբրև պատիվ,

Նվիրեցին չքնաղ մի խոյ, որին այնտեղ, ծովի ափին, ես զոհեցի

Կրոնոսի անմահ որդուն՝ ամսրահալած և ամենուր իշխող Զևսին:

Զոհն անելով՝ թիկնամեքը այրեցի, բայց գեճուճը չընդունեց նա,

Այլ խորհում էր՝ ինչպես անել, որ կործանվեն իմ գեղակերտ

Ու լայնահաստ բոլոր նավերն և ընկերներըս սիրելի:

Աղբյու անա այդ օրն ամբողջ, մինչ մայրամուտը արևի,

Այնտեղ նստած՝ լափում էինք մեկը միսն առատ և ջինջ գինին

քաղցրամուշիկ:

Երբ մայր մտավ արևն արդեն, և խավարը իջավ, գրկեց երկիրն համայն,

Անդ, աղմըկող և այլեկոծ ծովի ափին մեկը քուն մտանք:

560 Իսկ երբ ծագեց ճաճանչագեղ Արշալույսը վարդամատն,

Ես վեր կացա ու շուտափույթ, հորդորանքով, ընկերներիս պատվիրեցի

Շուտ արձակել կտանները ու բարձրանալ նախի վրա:

Նրանք իսկույն վեր բարձրացան ու բազմեցին թերի մոտ, նստիքներին,

Եվ շարեշար աղբյուս նստած՝ ժիր թիերով ճեղքում էին ծովը փրփրուն:

Աղբյու անդուստ մեկը հեռացանք: Որախ էինք, որ փրկվեցինք

մահից դաժան,

Բայց վշտահար էինք սրտով, որ սիրելի մեր ընկերները մահացան:

Ե Ր Գ Մ Ա Ա Ն Ե Ր Ո Ր Ղ

ԷՈԼՈՍԻ, ԼԵՍՏՐԻԳՈՆՆԵՐԻ ԵՎ ԿԻՐԿԵԻ ՄԱՍԻՆ

Եվ մենք այդպես եկանք հասանք Էդական կոչվող կղզին,
Որի վրա բնակվում էր հավերժ անմահ աստվածների մեծ սիրելին՝
Հիպպոտեսյան Էդոսը: Ծրջապատված էր այդ կղզին
Պղնձակերտ պարիսպներով, իսկ վերևից անմատչելի ժայռեր կաշին:
Տասներկու պերճ զավակ ուներ Էդոսը. վեց կույս աղջիկ ու վեց տղա:
Հետո նա իր դստրիկներին ամուսնացրեց իր որդոց հետ,
Որոնք շքեղ ապարանքում սիրելի հոր և բարի մոր ապրում էին
Լիության մեջ ու բերկրալի: Տունը լցված էր բյուրաբյուր պաշարներով.
Ոստեսուների ճեմնն անընդհատ տարածվում էր անդ ամենուր՝

10 Լցնելով բակը լայնայլի, և զգացվում էր օրնիբուն:
Գիշերները նրանք, իրենց հեզաբարո պերճ կանանց հետ,
Քնում էին քանդակած մահիճներում, գորգերի մեջ:
Նրանց քաղաքը մենք եկանք, գեղեցկափայլ ապարանքը Էդոսի:
Մի ողջ ամիս նա շատ սիրով մեզ ընդունեց: Հարցնում էր միշտ
նա Իլիոնի,

Արգիացոց գործի մասին, սև նավերի և արեյանց դարձի մասին:
Ու մանրամասն ես պատմեցի անդ ամեն բան: Վերջը նրան ես խնդրեցի
Ճանապարհել մեզ դեպի տուն, դեպ սիրելի մեր հայրենիք:
Նա չմերժեց, այլ պատրաստեց, ասրբավորեց ուղևորումը անհապաղ:
Քերթեց կաշին նա իննամյա մի եզան ու տկճոր շինեց մի ահագին

20 Եվ տվեց ինձ: Տկճորի մեջ նա պարիսպեց շունչն հողմերի մրրկահույզ,
Քանգի Ջևան էր հանձնել նրան իշխանագոր տնօրինումը հողմերի,
Որ իր կամքով, ում ցանկանա, նա բորբոքի կամ թե զսպի, սանձահարի:
Արծաթահյուս պիրկ լարերով տկճորը այդ նա պինդ կապեց նավի վրա,
Որ չփչի ոչ մի քամի կամ հողմի շունչ: Հրամայեց նա Ջեփյոտին,
Որ նա լինի մեզ ուղեկից և նպաստի ճանապարհին մեզ իր շնչով
Եվ տանի մեզ ու մեր նավերն: Բայց դա չեղավ, քանզի մեզ այդ
չէր փհակված,

Ու մենք շուտով կործանվեցինք անխելքության հետևանքով:
Ուղիղ ինն օր, ինը գիշեր լող տվեցինք մենք անընդհատ:
Տասներորդ օրն արդեն հեռվից մեզ երևաց հայրենադանդ երկիրը մեր,
30 Եվ մենք արդեն նշմարեցինք դաշտ ու արոտ և խարույկները բոցավառ:
Հանկարծ արտեղ բուն տարավ, ես քնեցի, քանզի սաստիկ հոգնած էի.
Ծուպանաճիչ առագաստը շարժում էի միմիայն ես
Ու ոչ ոքի չէի գիշում աշխատանքն այդ, որ շուտ հասնենք

մեր հայրենիքն:
Իսկ ընկերներս այդ միջոցին սկսեցին գրույց անել իրարու հետ.
Կարծում էին, թե ես ինձ հետ այժմ տանում եմ ոսկի, արծաթ
բազմաբազում,
Որն ստացել եմ, հանց նվեր, քաջակորով Հիպպոտեսյան Էդոսից:
Եվ ոմանք էլ իրարու մեջ այսպես էին խոսում այնտեղ.
«Զարմանալի մի բան է սա: Եվ ինչպե՞ս են արտանց սիրում և մեծարում
Այս հերոսին, երբ գալիս է սա մի քաղաք կամ մի երկիր: Բյուրաբազում

40 Գանձ և իրեր արծեքավոր ու պերճ ավար դեռ Տրոյայից է
տուն տանում,
Իսկ մենք, տեսեք, թեպես եղել ենք մասնակից այդ միևնույն
արշավանքին,

Ահավասիկ տուն ենք գնում զուրկ ու դատարկ և ձեռնունայն.
Եվ տե՛ս, հիմա Էդոսն է, հանց մեծարանք և սիրո տորթ,
Մրան տվել այսքանն ահա: Եկեք, շուտով նայե՛նք, տեսնենք՝
Որքա՞ն արդյոք ոսկի, արծաթ կա այս ոռուս տկճորի մեջ»:
Այդպես էին նրանք խոսում: Եվ չարագույժ առաջարկն այդ
հաղթանակեց:

Ու բաց արին տիկը նրանք, որի միջից շուտ դուրս թուան հողմերը ժանտ,
Եվ բռնկվեց մրրիկն հոժկու: Փոթորիկը շեց նրանց,
Որոնք արդեն լալիս էին, դեպ լայն ծովը, հեռու երկրից մեր հայրենիք:

50 Այնժամ քնից ես արթնացա և անբասիր իմ սրտի մեջ մտածեցի.
«Արդյոք նավից ծո՞վն ինձ նետեմ, որ ծովախեղդ լինեմ այնտեղ,
Թե՞ ամեն ինչ պիտ հանդուրժեմ, մնամ, ապրեմ ես մարդկանց մեջ»:
Եվ ցանկացա ես հանդուրժել իմ վիճակը: Բայց և պատկած էի կրկին
Նավի վրա, վերուստ ծածկված: Մինչ ետ քշեց մրրիկն անեղ
Մեր նավերը նորից կղզին Էդական: Լալիս էին ընկերներս:
Նավից իսկույն ցամաք իջանք ու մեզ ջրի պաշար վերցրինք:
Արագընթաց նավերի մոտ ընկերներս ճաշ ասրքեցին,
Իսկ երբ այդպես, ինչպես հարկն է, կերուխումով մենք հագեցանք,
Ես ընտրեցի երկու հոգի՝ մի քաջ ընկեր և մի բանբեր

60 Ու շարժվեցի դեպի շքեղ ապարանքը Էդոսի: Այնտեղ նրան
Ծուռով գտա ես խնջույքում, զավակների ու կնոջ հետ:
Մենք ներս մտանք ու նստեցինք դռների մեջ, շեմքի ստաշ:

Եվ զարմացան նրանք սրտանց, հարցմունք արին իսկույն նեթ.

«Ինչպե՞ս է որ դու ետ եկար, ո՞վ Ռփսու: Ո՞ր չար աստվածն
ստիպեց քեզ:

Մենք ճանապարհ քեզ դրեցինք խիստ հոգատար ու քաջալեր,
Որ տուն գնաս և հայրենիք կամ թե այնտեղ, ուր որ ինքդ,
դու ցանկանաս»:

Այդպես նրանք ինձ ասացին: Եվ վշտասիրտ ես ասացի ի պատասխան.
«Աղետի մեջ ինձ նետեցին ընկերներս, և բացի այդ՝ բունն ապարսխտ:
Արդ՝ օգնեցեք, սիրելիներ, քանզի կարող եք այդ անել»:

70 Այդ ասելով՝ հույս ունեի սիրաշահել նրանց խոսքով գորովանքի:
Լուռ մնացին բոլորն այնժամ: Հայրը միայն պատասխանեց
ու խոսք ասաց.

«Կորի՛ր շոտով, որ մարդկանց մեջ մահկանացու զգվելի ես
ու խալտառակ,
Չեմ հանդգնի ես ընդունել, ոչ էլ թեկուզ ճանապարհել մի ժամ
մարդու,

Որն, հիրավի, ատելի է գերերջանիկ աստվածներին:
Կորի՛ր շոտով, քանզի եկել ես դու այստեղ աստվածների
ատելությամբ»:

Ասաց այդպես և ինձ տնից դուրս վորդեց: Հեկեկացի ես դառնադառն:
Մենք այնտեղից, սրտով տխուր ու խորտակված, լող տվեցինք
դեպի սուս:

Թիավարումն էր տանջալի, քանզի արդեն թուլացել էր մարդկանց ոգին.
Մեր մեղքից էր այդ ամենը: Էլ հույս չկար վերադառնալ դեպ հայրենիք:

80 Մենք շարունակ լող տվեցինք այդպես վեց օր և վեց գիշեր.
Յոթերորդ օրն հասանք քաղաքը Լամոսի՝ Տելեսիլոս,
Որ երկրում է լեստրիգոնյան: Անդ հովիվն է, իր նախիրը տուն քշելիս,
Ողջույն տալիս մյուս հովիվին՝ նախիրն արդեն դուրս տանողին:
Քուն չիմացող մարդը այնտեղ կատանար միշտ երկու վճար,
կրկնակի գին՝

Մեկը որպես սուկ եզնարած, իսկ մյուսն իբրև ճերմակագեղմ
խաշինք պահող,
Քանզի այնտեղ շատ մտիկ են օրն ու գիշերն, որոնց ուղին է միացած:

Մենք, լող տարով, մտանք այնտեղ նավակայան մի փստաշոթ,
Երկու կողմից շրջապատված էր անմատույց այն ժայռերով,
Որտեղ ծովում իբար հանդեպ ցցված երկու բարձրաբերձ լեռ

90 Կազմում էին նեղ ծովածոց, և անցքն էր անդ նեղ և անձուկ:
Ընկերներս սևակտուց նավերն իրենց շոտ ներս տարան նավակայան
Եվ կապեցին անդ մերձընդմերձ: Ծովածոցում այդ անմատույց
Չի պատահում երբեք հորձանքն ալիքների, ո՛չ աննշան, ո՛չ մեծագույն,
Այլ հանգիստ է ծովը այնտեղ՝ անդորր ու հարթ և շողշողուն:

Եվ միայն ես իմ նավը սև նավակայան, ներս չտարս, այլ կանգ առա
Նավատեղից դուրս, քիչ հեռու, և կառանները ժայռերին հեղուսեցի:
Ինքս ապա վեր բարձրացա լեռան գլուխն ապաստանու.
Մինչ այնտեղից չէր երևում աշխատանքը ոչ մարդկային, ոչ եզների,
Այլ միմիայն մենք ծովս տեսանք, որը երկրից բարձրանում էր
քուլս-քուլս:

100 Ես հղեցի այն ժամանակ ընկերներիս, որ շոտ գնան և իմանան՝
Ի՞նչ մարդիկ են մահկանացու և հացակեր ապրում այդտեղ:
Արդ, ընտրեցի ես երկու մարդ, իսկ երրորդին ես կարգեցի որպես
քանթեր,

Եվ գնացին նրանք իսկույն ճանապարհով հարթ, հավասար,
Որով սայր բարձրակատար սեզ լեռներից փայտ է կրում դեպի քաղաք:
Նրանք այնտեղ, քաղաքից դուրս, հանդիպեցին ջրի եկած մի աղջկա.
Սա Անտիփատ լեստրիգոնի պերճ դատրիկն էր կորովալիր,
Նա եկել էր դեպ հոսանուտ, ջինջ աղբյուրը՝ Արտակիեն:
Այդ աղբյուրից էին միայն ջուրն անհրաժեշտ քաղաք տանում:
Նրանք, կույսին մոտենալով, հարցմունք արին և խոսեցին.

110 «Ո՞վ է այստեղ թագավորը, ո՞վ է նրան հպատակվողն այս քաղաքում»:
Եվ ցույց տվեց կույսն անհապաղ բարձրաբերձ տունը հայրական:
Նրանք իսկույն, տուն մտնելով, թագավորի կնոջն հանկարծ
այնտեղ տեսան՝

Քաջահասակ, ինչպես մի լեռ, սարսափեցին՝ տեսնելով այդ:
Իսկ տիկինը գնաց կանչեց Անտիփատին, քաջ ամուսնուն իր կանստից,
Որը, սվա՛ղ, անդ իմ մարդկանց մատնեց մահվան դաժանորեն:
Նա նրանցից մեկին բռնեց ու կեր դարձրեց և տեղնուտեղը լախիփեց,
Իսկ մյուս երկուսը փախչելով դեպի նավերն արագ եկան:
Մինչ քաղաքում թնդաց այնժամ ճիշտ-աղաղակ և մարտակոչ.
Ամեն կողմից հազարներով հավաքվեցին լեստրիգոնները վիթխարի,

120 Որոնք նաև չէին մարդկանց մահկանացու, այլ գիզանուներ էին անեղ,
Եվ սկսեցին նրանք նետել հսկայական, մեծ-մեծ ժայռեր:
Մն նավերի վրա թնդաց ճիշտ-աղաղակ և ճարձատյունը չարագույժ
Անդ ջախջախվող մեր նավերի և կործանվող շատ-շատ մարդկանց:
Դիակները, ձկների պես հավաքելով, տարան իբրև սուկալի կեր:
Այդպես ահա կոտորեցին ընկերներիս ծովածոցում այն խորախոր:

Այդ միջոցին դուրս քաշեցի ես ապրաստոր թուրն իմ կողքից
Ու դրանով կտրատեցի կառանները կորակտուց իմ սև նավի
Եվ անհապաղ քաջահորդոր պատվիրեցի ընկերներիս՝
Թիերն արագ, հուժկու շարժել, որ խուսափենք կործանումից
այդ անավոր:

130 Եվ նրանք էլ, դաժան մահից սարսափելով, հուժկու թիերը շարժեցին,
—149—

Ու պացալ իմ նավն հաշող՝ հեռանալով վերուստ կախված ժանտ
ժայռերից,

Մինչդեռ բոլոր մյուս նավերը այնտեղ կորան, խորտակվեցին,
Իսկ մենք արագ անցանք առաջ. ուրախ էինք, որ ժանտ մահից
խուսափեցինք:

Տխուր էինք սրտով սակայն, որ զրկվեցինք ընկերներից մեր սիրելի:
Այդպես եկանք մենք այնտեղից և Հական կղզուն հասանք,
Որ ապրում էր անեղ Կիրկեն, աստվածոհին գեղազանգուր,
որ մարդու պես

Խոսել գիտեր: Սրա եղբայրն էր՝ Հետեար նենգամիտ:
Վառ Հելիոսն էր այդ երկուսի ծնող հայրը, որը մարդկանց լույս
է տալիս,

140 Մինչդեռ Նիմփա Պերսեո՝ ծնված Օվկիանոսից, մայրն էր նրանց:
Եվ լուռ ու մունջ մենք մտնեցանք կղզու արհիմ ու նավը մեր
Կառանեցիներ ծովածոցում, աստվածային կամքն էր տվել մեզ այդ
բախտը:

Ափն իջնելով՝ այդտեղ պսոկած մենք մնացինք երկու գիշեր
ու երկու օր

Եվ մեր հոգին մաշում էինք խիստ խոնջանքով ու դառնությամբ:
Իսկ երբ երրորդ օրը բերեց Արշալույսը գեղազանգուր,
Հապճեպ ու ժիր ես վերցրրի նիզակը իմ և թորը սուր
Եվ, թողնելով նավը այնտեղ, շուտ բարձրացա ժայռի վրա,
Որ գեթ տեսնեմ հետքը մարդու մշակույթի, գուցե լսեմ նաև ձայներ:
Կանգնած այդպես մի բարձրաբերձ ժայռի գլխին՝ ես նայեցի
շուրջս, հեռուն.

150 Արդ, այնտեղից ծովսն երևաց, ծովսը երկրի, որ տարածվում էր Կիրկեի

Տան չորս կողմը և կաղնավետ անտառի շուրջ:
Եվ ես այնտեղ ինքս իմ մեջ և իմ սրտում մտածեցի.
Քանի որ ես շտապույն ծովսն արդեն տեսա, պետք էր գնալ և իմանալ:
Ու խորհելով՝ ես առավել ինձ օգտավետ այս խորհուրդը՝ համարեցի.
Նախ և առաջ ծովսի գնալ, դեպի նավը արագընթաց,
Մաշ տալ այնտեղ ընկերներին, հետո միայն հղել նրանց լուր բերելու:
Այն ժամանակ, երբ մտնեցա ես մեր նավին անդ կորակոր,
Ինչ-որ մեկը աստվածներից ինձ, նժդեհիս, խղճաց իսկույն
Եվ սուսքեց, իբրև վիճակ, բարձրաեղջյուր մի եղջերու,
Որն այդ ժամին արոտներից անտառային շտապում էր դեպի շուրը,

160 Քանզի սաստիկ տոչորված էր վառ ու կիզիչ ճառագայթով արեգակի:
Ու ես նրան, երբ երևաց, հարվածեցի ուղիղ մեջքին: Պղնձակոտ
Տեգ-նիզակը վարսվեց խորքը ողնաշարի ու դուրս թռավ:
Բառաչելով նա տապալվեց գետնի վրա, հոգին մարմնից իր հեռացավ:
Ոտքս սեղմած նրա կրծքին՝ դուրս քաշեցի տեղը վերքից

Եվ այն ապա ես թողեցի նորից այնտեղ, դիակի մոտ:
Ինքս դարձա, կտրատեցի դալար ճյուղեր ոտնմու
Եվ հյուսեցի խիստ ամրապինդ, հաստ մի պարան մոտ երկու գազ
Ու դրանով ես կապեցի ոտքերն անեղ այդ գազանի,
Ապա նրան ուսիս դրած՝ դեպի սև նավն ես ուղղվեցի:
170 Մինչ քալելիս՝ հեռվում էի ես նիզակին, քանզի գազանը վայրենի
Ահագին էր և դժվար էր տանել նրան ուսիս վրա:
Իսկույն նրան նավի առաջ ես գցեցի, ապա խոսքով գորովալիր
Հորդորեցի ընկերներին, ամեն մեկին առանձնակի.
«Բարեկամներ, վշտակիր եմք մենք թեպետ այժմ, բայց և այնպես
տունն Հադեսի

Մենք տակավին իջնելու չենք, մինչև չգա օրհասը մեր:
Քանի դեռ կա նավի վրա կեր ու խմիչք, պետք չէ, որ մենք
մեզ չարչարենք՝
Քաղցին իզուր հպատակված: Ուստի եկեք ուտեստն հիշենք
մենք անվհատ»:

Այդպես այնժամ ես ասացի: Ինձ լսեցին նրանք իսկույն,
Հավերժագոչ ծովի արհիմ իրենց դեմքերը բացեցին, շատ զարմացան,
180 Երբ եղջերուն հանկարծ տեսան, քանզի իրոք վիթխարի էր
այդ գազանը:

Իսկ երբ արդեն աչքի առաջ նրան տեսան, լավ դիտեցին ու հագեցան,
Չեղբերն հապճեպ լավ լվացին ու ճոխ ընթրիք պատրաստեցին:
Այդպես ահա ամբողջ օրն այդ, մինչ մայրամուտը արևի,
Այնտեղ նստած լսվում էինք առատ միսը, այլև գինին քաղցրանուշիկ:
Երբ մայր մտավ արևն արդեն, և խավարը ծածկեց երկիրն,
Մենք պսոկեցինք ակնիծվող ծովի արհիմ ու քուն մտանք:
Իսկ երբ ծագեց ճանանչագեղ Արշալույսը վարդամատն,
Իսկույն ժողով ես կանչեցի ընկերներին և ասացի.
«Ականջ դրեք դուք իմ խոսքին, սիրելիներ, թեպետ վիշտն է
մեզ մաշում այժմ.

190 Մենք չգիտենք, բարեկամներ, ո՞րն է այստեղ արևելքը,
Կամ որտե՞ղ է արևմուտքը, ո՞ր է գնում Արեգակը լույս տարածող,
Երբ երկնքից իջնում է ցած, դեպի երկիր, կամ ո՞րտեղից է ծագում նա:
Ուստի եկեք լավ մտածենք. գուցե և կա մի խելացի միջոց ու ելք:
Ես համոզված եմ, որ ելք կա: Գլուխն ելա ապառաժտու ես բարձունքի,
Կղզին տեսա, դրվագել էր անձաքաժիր ծովը նրան, ինչպես պսակ,
Ինքն էլ ասես հարթավայր էր ծովերի մեջ: Ես իմ աչքով տեսա նաև
Գալարվող ծովսը անտառի, մութ մացառի ետևն, այնտեղ»:
Այդ ասացի: Բայց սիրելի սիրտն էր նրանց խիստ խորտակվում
դաժան վշտից,
Երբ հիշեցին լեատրիգոնյան Անտիփատի գործն անհեղի

200 Եվ բռնությունը կիկլուպի այն մարդակեր ու վայրենի:
Ուստի վարար արցունք էին նրանք թափում և բարձրաձայն լալիս էին,
Բայց արցունքից դառնակակիծ ոչ մի օգուտ էլ չստացան:
Երկու խմբի բաժանեցի անդ ես բոլոր գեղասրունք ընկերներիս
Ու դրանցից ամեն մեկին ես կարգեցի մի գլխավոր:
Մեկին իշխաղը ես դարձա, իսկ երկրորդին՝ Եվրիլոքը աստվածասես:
Ապա վիճակ մենք գցեցինք պղնձապատ կորդակի մեջ:
Վիճակն ընկավ մեծահոգի Եվրիլոքին, և նա իսկույն ճանապարհովեց:
Նրան ապա, լաց լինելով, հետևեցին ընկերները քսաններկու:
Բայց նաև մեզ անդ թողեցին ջաղանքի մեջ ու դառնադառն

արտասովելիս:

210 Մինչ Կիրկեի պերճ ապարանքը վիճակերտ ու սրբատաշ նրանք գտան
Խոր ձորի մեջ, մի բաց տեղում, շորջանակի հայտերևակ:
Գրա շորջը շրջում էին հաղթ սուղումներն և լեռնային գայլերն հզոր,
Որոնց Կիրկեն կախարդել էր, հմայական դեղեր տալով:
Բայց հարձակվել մարդկանց վրա նրանք բնավ չգիտեին,
Այլ, մոտ գալով, երկայնաձիգ պոչերն էին թափահարում,
Ինչպես սուլոր են շները իրենց տիրոջ, որ խնջույքից նոր է գալիս,
Փաղաքշել, քանգի բերում է նա նրանց համեղահամ նոր պատասներ:
Այդպես շրջում էին գայլերը ամրանակ և դրանց հետ՝
Աղյուծները փաղաքշարար: Գազաններին այդ տեսնելով,

մերոնք իսկույն

220 Սարսափեցին ու կանգ առան գանգոտազեղ աստվածուհու
մուտքի առաջ
Ու լեցին, ինչպես ներսում երգ է երգում Կիրկեն ձայնով
քաղցրահնչյուն՝
Կատարելով ձեռագործն իր նուրբ ու անեղծ և մեծագույն,
Ինչպիսին որ գործել գիտեն միայն անմահ դիցունիներն:
Այնժամ նրանց իր խոսքն ասաց ու բարբառեց մարդկանց իշխան

Պոլիտեսը,

Որը բոլոր ընկերներից ինձ առավել հաճելի էր և մտերիմ:
«Բարեկամներ, ահա ներսում, դազգահի մոտ, մի գերահրաշ,
Չբնաղ երգ է երգում մեկը, և շորջն ահա երգն է թնդում սքանչելի.
Դիցունի՞ է, թե լոկ մի կին մահկանացու: Եկեք կանչե՛նք, ձայն տանք
մի կերպ»:

Ասաց այդպես: Ու բարձրագոչ ձայն տվեցին նրանք այնտեղ:

230 Աստվածուհին իսկույն ներք բացեց դռնն իր շողշողենի,
Ծոտ դուրս եկավ ու ներս կանչեց: Հետևեցին նրանք բոլորն
անգիտարար:
Եվրիլոքը մնաց միայն. նա կանկամեց՝ մի գուցե դա չարադաժան

Մի դավանք է: Մինչդեռ նրանց նա ներս տարավ, բազմել տվեց
բազմոցներին,
Առաջարկեց պանիր ու մեղր, գարե ալյուր, նաև գինի պրամնեական:
Բայց խմիչքին Կիրկեն խառնեց ինչ-որ մի դեղ դաժանագույն,
Որ մեկընդմիջո նրանք իրենց տունն ու երկիրը մոռանան:
Կիրկեն տվեց, և նրանք էլ այն խմեցին: Վերցրեց մտրակն իր մոզական
Ու հարվածեց, թշեց ապա, լցրեց նրանց իր խոզանոցն.
Այնտեղ նրանց գլուխը, ձայնն ու մազերը դարձան խոզի.

240 Խոզեր էին նրանք տեսքով, խելքը սակայն, անխախտ մնաց,
ինչպես առաջ:
Եվ փակվեցին այդպես նրանք լացուկոծով և դառնադառն

արցունքի մեջ,
Կիրկեն գցեց նրանց համար, հանց ուտելիք, կաղին, գավաթս
ու շագանակ,
Որ խոզերն են ուտում հաճախ գետնաթավալ, հանց խոզի կեր:
Մինչ այնտեղից հապճեպ վազեց Եվրիլոքը դեպի սև նավն արագընթաց,
Որ հաղորդի ընկերների այդ անարժան բախտի մասին:
Նա ոչ մի խոսք չկարեցավ արտասանել, թեպետ ուզում էր չափազանց.
Վշտից ահեղ խորտակվում էր սիրտը նրա, տխուր աչքերն էին լցված
Դառն արցունքով. ամբողջովին ջաղանք էր նա ու հեծեճանք:
Իսկ երբ նրան խոր գարմանքով մենք բոլորս հարցմունք արինք,
250 Այնժամ միայն նա մեզ պատմեց դաժան վիճակն իր սիրելի ընկերների.

«Մենք գնացինք խիտ անտառով, հանց ասացիր, ո՞վ փառավոր
դու Ռոխսս,

Եվ անդ գտանք պերճ ապարանքը վիճակերտ ու սրբատաշ,
Հովիտի մեջ, մի բաց տեղում, շորջանակի հայտերևակ:
Մեկը այնտեղ, ձեռագործով իր զբաղված, երգ էր երգում

քաղցրահնչյուն.
Դիցունի էր կամ թե մի կին մահկանացու: Ու կանչեցինք մենք
բարձրաձայն,

Եվ դուրս եկավ նա շուտափույթ, բացեց դռնն իր շողշողենի
Ու ներս կանչեց: Հետևեցին նրանք բոլորն անգիտարար ու համերաշխ,
Եվ միմիայն ես մնացի՝ կասկածելով, որ մի գուցե դավանք է դա
դաժանագույն:

Եվ արդ, նրանք անհետացան միանգամից բոլորեքսան.

260 Ոչ ոք այլևս ետ չդարձավ, թեպետ երկար, այնտեղ նստած, սպասեցի»:
Ասաց այդպես: Իսկույն թուրն իմ արձաթագամ ես կախեցի իմ ուներին,
Թորք խոշոր, պղնձակոտ: Վերցրի նաև աղեղն ինձ հետ,
Ապա նրան պատվիրեցի, որ միևնույն ճանապարհով նա ինձ տանի,
Բայց նա բռնեց իմ ծնկները երկու ձեռքով աղերասլի,
Արտասվաթոր նա հեկեկաց ու խոսքն ասաց այս թևավոր.

«Ոչ, մի տար ինձ դու ակամա, ո՛վ դյուցազուն, այստեղ թող ինձ,
Քանզի գիտեմ՝ ոչ դու ինքդ ետ կդառնաս, ոչ էլ մեկին ընկերներից
ես կբերես. լավ կլինի, որ փախուստ տանք մենք այստեղից,
Գուցե այդպես կարողանանք մենք խուսափել ծանո օրհասից»:

270 Ասաց այդպես: Սակայն նրան ի պատասխան ես ասացի.
«Այստեղ մնա, ո՛վ Եվրիլոք, ընկերներիդ հետ միասին
Կեր ու խմիր ծովի ափին, մեր սևաթույր կոր նավի մոտ,
Իսկ ես անշուշտ պիտի գնամ. անհրաժեշտ է դա ինձ համար»:
Այդպես ահա ես ասացի ու հեռացա ծովի ափից ու մեր նավից:
Երբ ես անցա սուրբ հովիտը ու դժվարին ճանապարհով
Հասնում էի արդեն ես այն ապարանքին կախարդուհի վեհ Կիրկեի,
Անդ իմ առաջ հանկարծակի կանգնեց Հերմեսն ոսկեմական՝
Նմանվելով մի նորաստի, երիտասարդ, առույգ մարդու՝
Մորուքը դեռ նոր-աղվամազ, կերպարանքը՝ հույժ հաճելի:

280 Եվ նա իսկույն ձեռքս բռնեց, անվամբ կոչեց և աչքս ասաց.
«Ո՛ր ես այդպես, դժբախտ, մեռակ լեռների մեջ դու թափառում,
Երբ անձանոթ ես այս վայրին: Մինչդեռ ահա, ընկերների Կիրկեի մոտ
Նեղվում են անդ խոզանոցում, որպես խոզեր ու փակված են
շենքում ամուր:

Միգուցե դու եկար այստեղ, որ ազատե՛ս նրանց հիմա.
Կարծեմ, և դո՛ւ ետ չես դառնա, այլ նրանց պես ու նրանց հետ
անդ կմնաս:

Բայց եկ, ես քեզ կօգնեմ սրտանց և կփրկեմ այդ փորձանքից:
Վերցրու ահա և ունեցիր քեզ հետ դեղն այս, իբրև միջոց գերահրաշ,
Եվ Կիրկեի տունը գնա. դա քո գլխից կվանի ծանո մահ ու օրհաս:
Լսիր, պատմեմ քեզ Կիրկեի միտումները նեղապատիր.

290 Կպատրաստի նա քեզ խմիչք և կխառնի ըմպելիքին նա դեղաբույս,
Բայց չի կարող նույնիսկ այդպես կախարդել քեզ. թույլ չի տա այդ
Գերագոր դեղն, որ տալիս եմ: Արդ, պատմեմ քեզ ես ամեն բան.
Երբ որ Կիրկեն քեզ հարվածի երկար ցուպով իր մոզական,
Ծուռ դուրս քաշիր իր պատյանից քո սուր թուրը և հարձակվիր
Դու Կիրկեի վրա իսկույն, որ իբրև թե ցանկանում ես սպանել նրան,
Իսկ նա աստիկ կաարասիի, կսուսջարկի քեզ միասին մտնել մահին:
Բայց պահանջիր, որ նա երդվի մե՛ծ երդումով երջանկափառ
աստվածների,

Որ քո դեմ նա չի ունենա ոչ մի միտում կործանարար ու չարաղետ
Եվ որ նա քեզ, երբ մերկանաս, չի գրկելու զորությունից քո առնական»:

300 Այդպես ասաց Արգոսասպանն և ինձ հանձնեց դեղաբույսը,
Որք գետնից քաղեց իսկույն, ապա մեկնեց նա ինձ դրա հատկությունը:
Ծաղիկ էր դա, արմատը սև, ինքն սպիտակ, կաթի նման,

Աստվածները անվանում են դրան մուրշ: Մահկանացու մարդկանց
համար

Վտանգավոր է քաղել դա, մինչ ամեն ինչ մատչելի է աստվածներին:
Հերմեսն ապա անտառախիտ կղզին անցավ և հեռացավ
Դեպ Օլիմպոս բազմաբլուր: Իսկ ես իսկույն անցա, եկա Կիրկեի տուն:
Սակայն սիրտս, ճանապարհը այդ անցնելիս, հուզվում էր խիստ:
Կանգ առա ես մուտքի դիմաց գեղազանգուր աստվածուհու:
Այդպես կանգնած, ես կանչեցի: Չայնս լսեց անդ դիցուհին

310 Եվ բաց արեց նա փոթապես դռները իր շողշողեհի
Ու ներս կանչեց, և ես նրան հետևեցի, վշտահար էր սիրտս սակայն:
Ինձ ներս տարավ, բազմել տվեց նա բազմոցին արծաթափայլ,
Գեղապաճույն, ճարտարագործ. ոտքերիս տակ կար պոթոսակ:
Սարքեց ապա նա ըմպելիքն, որ ես խմեմ ոսկի թասով գեղեցկազարդ:
Ինձ խաբելու չար միտումով՝ նա դեղաբույսը խմիչքին խառնեց իսկույն
Եվ այդպես ինձ առաջարկեց: Ես խմեցի, բայց չդյուրեց ինձ դա բնավ:
Այնժամ դյուրեց իր մականով ինձ հարվածեց ու խոսք ասաց.
«Հիմա գնա դու խոզանոց, ուր պտուկած են ընկերներիդ»:
Ասաց այդպես: Ես, սուր թուրս իր պատյանից դուրս քաշելով,
հարձակվեցի

320 Անդ Կիրկեի վրա հուժկու, իբր ուզում էի սպանել:
Ծչաց իսկույն նա մեծաձայն, թեքվեց մի կողմ, ապա բռնեց
նա իմ ծնկներն

Եվ, լացախեղդ հառաչելով, այս խոսքն ասաց իր թևավոր.
«Ի՛նչ մարդ ես դու, և որտե՛ղ են քո քաղաքը և ծնողներն:
Չարմացած եմ. դու խմեցիր դեղաբույսն իմ, բայց չդյուրեց բնավ
այն քեզ:

Այս կախարդիչ դեղի ուժին չի դիմացել դեռ ոչ մի մարդ,
Ով խմել է, կամ ում բերանն որևէ կերպ անցել է դա:
Ուրեմն, ունես դու կրծքիդ տակ սիրտ քաջազոր և անհողողող,
ինչպես երկաթ.

Գուցե նույնիսկ բազմահմուտ Ողիսեսն ես, որի մասին
Հաճախակի պատմել է միշտ ոսկեմական Արգոսասպան,
330 Որ, Տրոյայից ետ դառնալով, պիտ անշուշտ գա նավով արագ
ու սևաթույր,

Ուստի շուտով պատյանիդ մեջ դիր թուրը սուր, որ հետո մենք
Մեկ մահիճում, տոփանքի մեջ այստեղ պսակենք և, անկողնում
Սիրով իրար հետ միացած, առմիշտ միմյանց վատահ լինենք»:
Ասաց այդպես, իսկ ես նրան այս ասացի ի պատասխան.
«Ինչպե՛ս ես դու, Կիրկե, հիմա պատվիրում ինձ, որ սիրալիր
լինեմ քեզ հետ,
Երբ դու այստեղ, ապարանքում, խոզ ես դարձրել ընկերներիս

Ու ինձ էլ այժմ չար միտումով ցանկանում ես պահել այստեղ
Եվ կանչում ես, որ մտնեմ այժմ քո ննջարանն ու մի մահճում
պսակեմ քեզ հետ,
Որ կորովն իմ, երբ հագուստս հիմա հանեմ, դու թուլացնես, ոչնչացնես:

340 Ոչ, ես բնավ չեմ ցանկանա քո մահճում պսակել այստեղ,
Մինչև որ դու չկանանաս երդվել հիմա մեծ երդումով,
Որ դու բնավ, ո՛վ դիցուհիդ, չես հորհրդի իմ դեմ փորձանք
կամ այլ աղետ»:

Այդպես այնտեղ ես ասացի: Եվ նա, ինչպես պահանջեցի,
երդվեց իսկույն:

Երբ որ Կիրկեն երդվեց այդպես և ավարտեց երդումը այդ,
Ես պսակեցի իսկույն նրա գեղապանույն մահճի մեջ:
Մինչ աշխատում էին այնտեղ չորս հոգևորք, ժիր ծառաներ,
Նրանք էին ապարանքում ամբողջ գործը միշտ կատարում.

Ծնվել, ծագել էին դրանք աղբյուրներից և ծառայխո
Գորակներից կամ ծովալեծ ու հորդահո՛ս սուրբ գետերից:

350 Արդ, դրանցից մեկը այնտեղ բազմոցների վրա փռեց պերճ
գործվածքներ,

Ապա վերուստ ծածկեց գորգեր ծիրանագույն և նրբագեղ,
Իսկ երկրորդը բազմոցների դեմը դրեց արծաթակերտ կոկ սեղաններ,
Որոնց վրա բերեց, շարեց նա զամբյուղներ գեղեցկազարդ,
Մինչ երրորդը արծաթաշեն խառնարանում խառնեց գինին

բաղքանուշիկ

Ու մեղրահամ, ապա շարեց ամենուրեք նա ոսկեկոտ շատ բաժակներ:
Իսկ չորրորդը շուր էր կրում, ալն կրակ վառում այնտեղ՝
Եռուսանու տակ մեծագույն: Տարանում էր ջուրն այդ արագ:
Երբ որ ապա ջուրը եռաց պղնձի մեջ շողշողենի,
Ինձ լոզարան մտցրեց Կիրկեն ու մեծագույն եռուսանուց

360 Նա ջուր լցրեց և լողացրեց: Լավ ոտգեց նա իմ գլուխն և ուտերը.
Եվ ազատեց խոր խոնջանքից իմ մարմինն ու անդամներս:
Եվ երբ այդպես ես լողացա, մարմինըս նա օժեց լողով պարարտածոր,
Ապա հագցրեց գեղեցկափայլ մի ճուրք բանկոն և պատմունան:

Այնուհետև ինձ ներս տարավ ու բազմեցրեց նա բազմոցին արծաթեղեն,
Գեղապանույն, ճարտարագործ, ոտքերիս տակ՝ աթոռակ կար:
Իսկույն ծառան ջուրը բերեց մի ամանով ոսկեկար ու գեղեցիկ,
Էջրեց ապա, որ լվացվեմ արծաթակերտ մեծ կոնքի մեջ:
Դեմս դրեց կոկ սեղանը: Մտանապետ կինն հարգելի հացը բերեց,
Առաջարկեց համեղահամ ու բազմատառ շատ տեսակի ուտելեղեն,

370 Ինչ որ ունեք, իբրև պաշար: Ապա Կիրկեն հրավիրեց, որ վայելեմ:
Բայց ամենն այդ սրտահաճ ինձ չթվաց. նստած էի ես վշտացած,

Մի այլ բան կար իմ մտքի մեջ, ժաճտ մի աղետ էր իմ հոգին
նախատեսում:

Ուստի Կիրկեն, երբ նա տեսավ, որ նստած եմ ես տխրահամ
Եվ ուտեստին ձեռք չեմ տալիս, որ ինձ խորհունկ վիշտն է մաշում,
Ծոտ մտեցավ, մոտս կանգնեց և խոսքն ասաց այս թևավոր.
«Ինչո՞ւ այդպես, ո՛վ Ողիսես, դու նստած ես սեղանի շուրջն

համրի նման,

Մտածում ես սրտակոտոր, ձեռք չես տալիս դու ուտեստին ու խմիչքին:
Գուցե մի այլ նեճություն ես տեսնում այստեղ դու իմ կողմից.
Երկյուղդ թո՛ղ, քանզի արդեն ես երդվեցի երդումով մեծ ու ահավոր»:

380 Ասաց այդպես: Բայց ես նրան առարկեցի ի պատասխան.
«Ո՛հ դու Կիրկե, կա՞ հողածին քաջազնիվ մարդ, որ կարենա
Կերովստով հրճվել սրտանց, նախքան մի կերպ նա չփրկի
Իր սիրելի ընկերներին կամ չտեսնի նրանց աչքով իր նախապես:
Եթե անկեղծ ցանկանում ես, որ ես այստեղ ուտեմ, խմեմ հոգեզվարճ,
Բաց թող իսկույն իմ սիրելի ընկերներին, որ ես աչքով տեսնեմ նրանց»:
Այդպես այնժամ ես ասացի: Ծոտ դուրս վազեց Կիրկեն տնից՝
Ձեռքին մականն իր մոզական և բաց արեց խոզանոցի դուռը ամուր
Ու բաց թողեց նրանց, որոնք նման էին ինձանյա որձ խոճկորների:
Նրանք իսկույն նրա առջև կանգնեցին, և նա, նրանց շուրջն անցնելով,

390 Անդ առանձին ամեն մեկին քսեց իր ճոր դեղն հակաթույն:
Նրանց մարմնից թափվեց իսկույն, ցրիվ եկավ ձողկամազն այն,
Որով նրանք ծածկվել էին ժաճտ Կիրկեի դեղաբույսը խմելուց ետ:
Ու մարդ դարձան նրանք բոլորն հանկարծակի, բայց ավելի
երիտասարդ,

Քանց թե առաջ, շատ ավելի բարձրահասակ ու գեղեցիկ:
Եվ ինձ իսկույն ճանաչելով՝ ջերմ սեղմեցին ձեռքերը իմ,
Բայց սկսեցին բոլորն հանկարծ լալ ու ջալել սրտակեղեք,
Եվ ամբողջ տունն հեծեճանքից թոճաց այդպես: Խղճահարվեց
աստվածուհին.

Ինձ մտեցավ պերճ դիցուհին, մոտս կանգնեց և խոսք ասաց.
«Դիցուսանունդ Լաերուածին, ո՛վ Ողիսես բազմահնար,

400 Գնա հիմա դու դեպի նավդ ճեպրնթաց, դեպի ասիդ ճերմակ ծովի.
Նավը ծովից նախ և առաջ դուրս քաշեցեք դեպի ցամաք
Եվ պահեցեք անձառի մեջ սարքավորումն ու գույքն ամբողջ:
Ապա իսկույն վերադարձի և հետդ բեր ընկերներին քո սիրելի»:
Ասաց այդպես, և լսեցի ես իմ սրտով քաջախիզախ
Ու շարժվեցի արագապես դեպի ծովափ, դեպի նավն իմ արագընթաց:
Այնտեղ գտա իմ նավի մոտ ընկերներին սիրատենչիկ,
Որոնք թշվառ լալիս էին ու ջերմաջերմ արցունք թափում:

Այնպես, ինչպես պերճ հորթուկներն են գյուղի մեջ խիտ-խմբովի
առաջ գալիս

Մայր կովերին, որ արոտում լավ հագեցած գոմն են գալիս,
410 Մինչ հորթերը բառաչաձայն թռչկոտում են մայրերի շուրջ,
Եվ գոմն անգամ էլ չի կարող զապես նրանց այդ բերկրանքից,
Այդպես արանք, երբ ինձ աչքով այնտեղ տեսան, հեծեճալով
Դեպ ինձ իսկույն վազ տվեցին այնքան ուրախ և այնքան ջերմ,
Որ կարծես թե վերադարձան քաղցր հայրենիք և տիրք քաղաքն,
Ապառաժուտ էթակեմ, ուր մի ժամանակ ծնվել, սնվել էին նրանք:
Եվ ինձ դարձան արտաավալի ու արտահույզ և թեավոր խոսքն ասացին.
«Ո՞հ, մենք այնքան ուրախացանք քո արտալի վերադարձով,
ո՞վ դյուցազուն,
Որ կարծես թե արդեն հասանք մենք Իթակե, երկիրը մեր
հայրենավանդ:

Սակայն ասա, ինչպե՞ս արդյոք մեր ընկերներն այնտեղ կորան»:
420 Այդպես նրանք անդ խոսեցին, իսկ ես նրանց ուրախասիրտ այս ասացի.
«Նախ դորս քաշենք, ծովից հանենք դեպի ցամաք նավը արագ,
Սարքավորումն ու գույքն ամբողջ տանենք, պահենք քարայրի մեջ,
Իսկ դուք, բոլորդ, այժմ անհապաղ, ինձ հետևեք, որ մենք իսկույն
և միասին

Գնանք հիմա սուրբ ապարանքը Կիրկեի: Անդ կտեսնեք դուք մեր բոլոր
Ընկերներին, որոնք ուտում և խմում են՝ ամեն բանով ապահովված».
Այդպես նրանց ես ասացի, և հնազանդ նրանք բոլորն ինձ լսեցին,
Ու միմիայն Եվրիլոքը փորձեց նրանց բաց չթողնել ու խանգարել,
Ուստի դիմեց ընկերներին և խոսքն ասաց այս թեավոր.

«Ի՞նչ եք անում, խելագա՞ր եք, նո՞ր աղետ է ձեզ հարկավոր,
430 Որ Կիրկեի տունն եք ուզում հիմա գնալ փախազատենչ:
Այդ էր պակաս, որ բոլորիս դարձնի նա խոզ, առյուծ ո՞ր գայլ,
Որ անդ նրա ապարանքին մենք անամա պահակ դառնանք
ու պահապան,
Ինչպես կիկլոպն այդ կատարեց՝ փակելով մեր ընկերներին
իր բակի մեջ,

Թե՛պես նրանց առաջնորդն էր քաջ Ոդիսևսը փառավոր,
Նրա անմիտ հանդգնության պատճառով մեր ընկերները իզուր կորան»:
Այդպես խոսեց: Իսկ ես իմ մեջ և իմ արտում խորհում էի երկմտանքով.
Դուրս չքաշե՞լ արդյոք ուսիս կախած սուրբ և չը կտրե՞լ
Տեղնուտեղը նրա գլուխն ու ապա այն գարկել գետնին,
Թե՛պես նա ինձ ազգական էր և չափազանց մոտիկ մի մարդ:

440 Բայց զապեցին ընկերներս ամեն կողմից՝ գորովալիք խոսք ասելով.
«Դյուցասնունդ, ո՞վ Ոդիսևս, մենք կստիպենք, եթե միայն
դու պատվիրես,

Որ նա մնա այստեղ հիմա և պահպանի սև նավը մեր,
Իսկ դու, քաջդ, առաջնորդիր մեզ այժմ դեպի Կիրկեի տունն
ամբակառույց»:

Այդպես նրանք բարբառեցին, և մենք ծովից ու մեր նավից
բարձրացանք վեր,

Սակայն և նա, Եվրիլոքը, էլ չմնաց սև նավի մոտ մեր լայնավոր,
Այլ հետևեց իսկույն նա մեզ, քանզի աստիկ վախեճում էր
իմ զայրույթից:

Մինչդեռ մեր մյուս ընկերներին Կիրկեն իր տանը, հարկի տակ,
Խիստ հոգատար՝ լավ լողացրեց, օժեց նրանց մաքուր լողով,
Հագրեց ապա մի-մի բանկոն և բրդեղեն նորը պատմոճան:

450 Նրանց գտանք մենք Կիրկեի պերճ դահլիճում, փարթամաճոխ
խնջույքի մեջ,

Եվ երբ բոլորն հանդիպեցին և դեմառդեմ իրար տեսան,
Հեծեճագին, խիստ լաց եղան, և տունն ամբողջ հոժկու թնդաց
ու որոտաց:

Այնժամ կանգնեց ինձ առընթեր և խոսք ասաց աստվածունին
գերապալծառ.

«Դյուցասնունդ Լաերտածին, ո՞վ Ոդիսևս քազմահնար,
Դուք վերջ տվեք լացուկոճին և ջալլանքին պոտակոտոր:
Ես լավ գիտեմ, ինչեք եք դուք կրել ծովում այն ձկնատառ,
Կամ որքա՞ն են ձեզ վնասել ցամաքներում մարդիկ դաժան ու թշնամի.
Բայց համեցեք պերճ վայելքի և հրճվեցեք կերուխումով այս արտագին,
Որ ձեր արտում, ձեր կրծքի տակ, նորից թնդա նոյն կորովը
և նույն ոգին,

460 Որով դուք շատ հարուստ էիք այն ժամանակ, երբ թողեցիք
ձեր հայրենիքն,

Ձեր Իթակեն ապառաժուտ: Բայց վհատված եք դուք հիմա և վշտահար՝
Միշտ հիշելով թախտոմունները ժամտալի: Մինչ ձեր հոգին
խինդ ու հրճվանք

Դեռ չի զգում ամենևին, քանզի անչափ շատ եք քաշել դուք
սասուպանք»:

Ասաց այդպես: Մենք լսեցինք՝ հնազանդված քաջախիզախ
մեր արտերին:

Եվ մի ամբողջ տարի այդպես մենք մնացինք այդ կղզու մեջ,
Լախում էինք քազմատառ միսն և մեղրահամ անուշ գինին:
Երբ լրացավ տարին ամբողջ, պտույտ եկավ ժամանակը,
Ամիսները անհետացան, երկարատև օրերն անգամ եկան-անցան,
Այդ ժամանակ ինձ կանչեցին սիրանվեր իմ ընկերներն ու ասացին.

470 «Թշվառագո՞ւյն, հիշիր գեթ այժմ երկիրը քո հայրենավանդ,
Եթե, իրավ, կամքն է հաստատ աստվածների, որ դու փրկվես՝

Ու ետ դառնաս քո հայրենիքն ու քո տունը բարձրակատար»:
Այդպէս նրանք ինձ ասացին: Լսեց այդ խոսքն իմ քաջարի, վսեմ հոգին,
Ու մե՛նք նորից ամբողջ այդ օրն, մինչ մայրամուտը սրկի,
Անդ լափեցինք բազմաուտ միսն և մեղրահամ անուշ գինին:
Սակայն երբ որ այնտեղ արևը մայր մտավ ու խափարը տիրեց երկրին,
Ընկերներս քուն մտնելու պատկեցին անդ ապարանքում ստվերախիտ:
Ես էլ այնժամ վե՛հ Կիրկէի գեղեցկագույն անկողինը մտա իսկույն,
Ապա, նրա ծնկներն ընկած, աղերսեցի: Լսեց խնդիրս դիցունին:

480 Արդ, դիմելով այնտեղ նրան, այս թեւա՛ր խոսքն ասացի.
«Գեթ այժմ, Կիրկէ, դու կատարիր այն խոստումը, որ տվել ես
անկեղծորե՛ն.
Ծանապարհի՛ր ինձ դեպի տուն, սիրտս արդեն այդ փափագում է
չափազանց,
Հայրենիքն են ուզում և մյուս ընկերներս, որոնք հաճախ սիրտն իմ
սիրած
Խորտակում են տրտնջալով, երբ հեռանում ես դու մեզնից
ամեն անգամ»:
Եվ նույնհետայն պատասխանեց և խոսք ասաց աստվածային
պերճ դիցունին.

«Դուցասնունդ Լատրոսածին, ո՛վ Ռոփսես բազմահնար,
Այլևս դուք մի մնացեք ապարանքում իմ ակամա,
Սակայն պետք է, որ նախապես դուք անցնեք մի այլ ճանապարհ.
Պետք է իջնեք տունն Հադեսի և ահալոր Պերսեփոնի,

490 Որպեսզի դու հարցնունք անես այնտեղ հոգուն կույր, իմաստուն
Թեթերնակ Տիրեսիասի, որի միտքը պահպանված է դեռ անվնաս.
Պերսեփոնեն միայն նրա՛ն մահից հետո թողեց ուժը գիտակցության,
Իսկ մյուսների հոգիները սուրում են ու շոջում այնտեղ որպէս ստվեր»:
Ասաց այդպէս, և սիրելի սիրտս արդեն խորտակվում էր իմ կրծքի տակ.
Ու դառնադառն ես լաց եղա՝ պատկած այնտեղ, մահի՛նի մեջ,
և իմ հոգին

Չէր ցանկանում այլևս ապրել և արևի լույսը տեսնել:
Անկողնու մեջ դեռ շատ երկար շուռ-մուռ եկա ես լալագին,
իսկ երբ արդեն
Լացուկոծով ես հագեցա, դարձա նրան և ասացի ի պատասխան.
«Բայց ո՛վ պետք է, ասա, Կիրկէ, առաջնորդի մեզ այդպիսի
ճանապարհով.

500 Չէ՛ որ ոչ ոք իր սև նավով դեռ չի հասել տունն Հադեսի»:
Այդ ասացի, և ինձ իսկույն պատասխանեց աստվածային
պերճ դիցունին.

«Դուցասնունդ Լատրոսածին, ո՛վ Ռոփսես բազմահնար,

Չուր ես այդպէս մտահոգված, թե ո՛վ արդոք պետք է նավը
առաջնորդի:
Կայմը միայն դու կանգնեցրու և տարածիր առազաստը քո ափտակ,
Ապա ինքդ հանգիստ նստիր, և կը քշի շունչը միայն հորեասի:
Երբ որ անցնես, նավդը նստած, տարածությունն Օվկիանոսի,
Անդ կտեսնես ծովի եզրին մի հարթավայր. Պերսեփոնի անտառն է դա,
Որ աճում են կաղամախներ բարձրակատար և ոռնեմք միշտ
պտղագերծ:

Նավդ այնտեղ, խորահորձանք Օվկիանոսում դու կստանիր,
510 Ինքդ ապա շարժվիր, գնա Հադեսի տունը մթա՛նած:
Այնտեղ է, որ Աքերոնի մեջ են թափվում Պիրիփլեգեթոնն ու Կոկիտոսն,
Որն Ստիքսի հորը ջրերի գետաբազուկն է անդ միայն,
Միացնողը միշտ մոլեգնող երկու գետի. անդ կա նաև մի լեռնածայր:
Ահա այնտեղ փոքր-ինչ թեքվիր, ինչպէս ես եմ պատվիրում քեզ,
ով քաջագուն,
Ու փոս փորիր դու՛ խորությամբ և լայնությամբ արմունկի չափ:
Այդ փոսի շուրջ մեռյալներին պիտ կատարես դու մի հեղում.
Նախ և սուսջ մեղրաջրով, այնուհետև մաքուր գինով քաղցրամուշիկ,
Երրորդ անգամ միայն ջրով: Վերուտ ցանիր դու գարեղեն

ճերմակ այլուր
Ու ծնկաչոք ջերմ աղոթիր դու անմարմին մեռյալների գլուխներին
520 Եվ խոստացիր, որ Իթակէ հասնելուն պես քո շատ գանձեր
Խարույկի մեջ պիտի նետես և պիտ գոհես ամենալավ կովը ստերջ,
Որ հատկապէս Տիրեսիասին զոհ կբերես մի այնպիսի խոյ թխագույն,
Որն հիրավի խաշինքի մեջ ամենալավը կլինի:
Երբ գերափառ մեռյալների խմբակներին այդ ոխտն անես
դու արտաբուխ
Եվ աղոթես, այնժամ գե՛նիր թխագույն խոյ և էգ ոչխար մի սևաթույր.
Գլուխները պիտի ոտդես դեպ Էրեբոս, ինքդ, սակայն, մի կողմ
կանգնիր,

Դեմքով դեպի գետի հոսքը: Այնժամ իսկույն բյուր-բյուրավոր
Մեռյալների հոգիները կհավաքվեն այնտեղ քո շուրջ:
Ընկերներիդ իսկույն ևեթ խրախուսիր ու պատվիրիր՝
530 Քերթել, այրել այն ոչխարներն, որոնք արդեն խողխողված են
պղինձ սրով
Եվ ընկած են արդեն այնտեղ գետնաթավալ, իբրև զոհեր
Կորովագույն, ծանո Հադեսին ու ահարկու Պերսեփոնին:
Իսկ դու ինքդ այնժամ իսկույն թուրը քաշիր քո երկաայրի,
Կանգնիր այնտեղ և թույլ մի տուր, որ անմարմին մեռյալների
գլուխները

Գան, մոտենան անդ, արյունին, մինչև որ դու հարցնու՞նք անեա

Տիրեսիասին:

Քեզ նույնհետայն կմոտենա ազգերի տեր գուշակն հզոր,
Նա անհապաղ կպատմի քեզ քո ողջ ուղին, երկարությունը քո ճամփի,
Քո վերադարձն և այն՝ ինչպես դու ձկնատատ ծովի միջով

պիտի անցնես»:

Ասաց այդպես: Ծագեց այնժամ Արշալույսը ոսկեզարհ:

540 Նա ինձ հագցրեց մի պատմունան և մի թիկնոց շքեղագեղ,
Ապա ինքը՝ աստվածունին, ծածկոցն հագավ ձյունաշողիկ,
Գեղեցկափառ ու նրբահյուս: Կապեց մեջքին նաև գոտի՝
Չքնաղ, ոսկե, գլխին ծածկեց նա սքանչելի և նուրբ մի քող:
Ես վեր կացա, ապարանքի միջով անցա ուղիդ դեպի իմ ընկերներն:
Հորդորեցի նրանց իսկույն, գորովալիր խոսք ասացի ամեն մեկին.
«Բա՛վ է, որքան խոր քնեցիք, բարեկամներ. քունը թողեք

քաղցրանուշիկ,

Ելեք, գնանք, քանզի Կիրկեն գերամեծար արդեն տվեց ինձ

խորհուրդներ»:

Այդպես այնժամ ես ասացի: Հնազանդվեց կորովալիր նրանց հոգին:

Սակայն և այժմ անդուստ բոլոր ընկերներինս ես անվնաս դուրս չտարա:

550 Կար նրանց մեջ մեկը՝ Էլպենոր անունով, որը կրտսերն էր բոլորից:

Քաջարի չէր նա կովի մեջ. ոչ էլ մի մեծ խելքի տեր էր:

Անդ, Կիրկեի ամուր տանը, ընկերներից մի փոքր հեռու

Եվ մեկուսի, քնած էր գով մի անկյունում, բայց գիճուցած:

Երբ նա լսեց ոտքի ելած ընկերների ձայնն ու աղմուկն,

Ծուտ վեր թուավ տեղից հանկարծ, բայց սրտում իր նա մոռացավ,

Որ, վերևից ցած իջնելիս, պիտ բարձրաբերձ սանդուղքներով

իջնել ու գալ,

Եվ ողղակի գահավիժեց վերևից ցած ու ջախջախեց պարանոցը,

Անմիջապես նրա հոգին թուավ դեպի տունն Հադեսի:

Մինչդեռ նրանց՝ ուղևորվող ընկերներինս, ես մոտեցա և ասացի.

560 «Գուցե արդեն դուք կարծում եք, որ մեկնում եմք մենք սիրելի

մեր հայրենիք,

Դեպ տունը մեր բարձրակտուր: Ոչ, մեզ Կիրկեն այժմ սահմանեց

այլ ճանապարհ.

Պետք է ողղվենք դեպ ապարանքը Հադեսի, դեպ ահավոր

Պերսեփոնեն,

Որպեսզի մենք հարցում անենք այնտեղ հոգուն Թեբեթնակ

Տիրեսիասի»:

Այդ ասացի, և խորտակվեց իսկույն կեթ սիրտը նրանց,

Ու վայր ընկան, գորովեցին նրանք գետնին, մազերն էին փետում գլխի,

Սակայն այդ գուր ջալլակոծից նրանց համար ոչ էլք եղավ, ոչ էլ օգուտ:

Այդպես ահա մենք ողղվեցինք դեպի ծովափ, դեպի մեր նավն

արագընթաց,

Բայց մեր սիրտը շատ տխուր էր, և արցունքն էր հոսում աղի:

Մենք այնտեղից ճամփա ընկանք, Կիրկեն մեզնից հեշտ, աննշմար

ատաջ անցավ

570 Ու սևաթույր նավին կապեց նա գեր մի խոյ և թխագույն մի էգ ոչխար:

Ա՛խ, ասածուն ո՞վ կարող է աչքով տեսնել ու համկանալ,

Երբ աստ ու անդ է նա անցնում և չի ուզում, որ մեկն ու մեկն

իրեն տեսնի:

Ե Ր Գ Մ Ա Ա Ն Մ Ե Կ Ե Ր Ո Ր Դ

ՄԱՀՎԱՆ ԱԾԽԱՐՀ

Երբ որ եկանք, հասանք նալին ու ծովափին, նախ և առաջ Արագրնթաց մեր նալն այնտեղ աստվածային ծով ձգեցինք. Տնկեցինք կայսն սև նալի և կախեցինք մենք առագաստն անմիջապես: Վերցրինք ապա ոչխարները և նալի մեջ գետեղեցինք: Վերջը ինքներս բարձրացանք նալի վրա՝ սրտով տխուր, արտոսրահեղ: Մինչդեռ Կիրկեն՝ գեղազանգուր, կորովալիր աստվածուհին, Մեզ ողնեկից հողմ առաքեց, որը, որպես ազնիվ ընկեր երախտագործ, Մեր առագաստը ուղցնելով ծովի վրա, նալն էր քշում սևակտուց: Բազմած էինք մենք նալի մեջ՝ ասորբավորման ողջ աշխատանքը

կատարած,

10 Իսկ մեր նալը դեպի առաջ շարժում էին նավավարն ու քամիները: Ամբողջ օրն այդ, նալը ծովում պանալիս, լայն առագաստն էր ծածանվում:

Մինչ մայր մտավ արևն արդեն, և խավարով ճանապարհները ծածկվեցին,

Իսկ նալն հասավ խոր, անհատակ Օվկիանոսի սահմաններին: Այնտեղ, ահա, գտնվում են կիմերացի մարդկանց քաղաքն ու երկիրը, Որոնք հավերժ քողարկված են թուխ ամպերով, մուգ մեզի մեջ, Եվ չի նայում նրանց վրա արևն երբեք՝ ճառագայթով իր շողշողուն, Ո՛չ այն ժամին, երբ բարձրանում է նա վերև, դեպի երկինքը

աստղազարդ,

Ոչ էլ այնժամ, երբ երկնքից նա դեպ երկիրն է ետ գալիս: Այդ տարաբախտ մահկանացու մարդկանց վրա դաժան գիշերն է տարածված:

20 Երբ մոտեցանք այնտեղ ափին, նալը իսկույն դուրս հանեցինք դեպի ցամաք,

Ոչխարները վերցրինք մեզ հետ ու գնացինք օվկիանոսի ափով կրկին, Մինչև եկանք, այն տեղն հասանք, որը Կիրկեն ցույց էր տվել:

Չոհվող ոչխարն այնտեղ բռնած պահում էին Պերիսենն ու Եվրիուքը, Իսկ ես իսկույն դուրս քաշեցի իմ կողքի թուրը սայրասուր Եվ անհապաղ փոս փորեցի՝ խորությամբ և լայնությամբ մի արմունկի չափ:

Հետո փոսի բերանի մոտ կատարեցի հեղմունք բոլոր մեղայաներին՝ Նախ և առաջ մեղրաչորով, հետո գինով քաղցրանուշիկ, Երրորդ անգամ՝ միայն ջրով, ապա վերուստ ես ցանեցի գարե-այլուր: Եվ ծնկաչոք աղոթեցի ես անմարմին մեղայաների գլուխներին:

30 Աղոթելիս ես խոստացա, որ Իթակե հասնելուն պես իմ թանկարժեք իրերը պերճ

Չոհ կբերեմ խարույկի մեջ և կզոհեմ ամենալավ կովը ստերջ, Իսկ հատկապես Տիրեսիասին զոհ կբերեմ մի այնպիսի խոյ թխագույն, Որը անշուշտ իմ խաշինքում ամենալավը կլինի: Երբ գերափառ մեղայաների խմբակներին, ովստն անելով իմ սրտաբուխ, Աղոթեցի, վերցրի իսկույն ոչխարները և մորթեցի փոսի վրա: Սև, մթագույն արյունն հոսեց, և սուրալով էրեթոսից Այնժամ եկան, հավաքվեցին հոգիները մեղայաների՝ Հարսնացուներ և նորատիք, բազմաշարշար ծերունիներ: Սրտով դեռ նոր տանջանք տեսած կույս աղջիկներ կայտատ, անհոգ

40 Եվ մարտիկներ բյուրաբազում՝ զենքեր հագած արյունոտոգ, Պղնձակոտ զենքով զարկված քաջախիզախ շատ-շատ մարդիկ. Բյուր բյուրերը հավաքվեցին խանդակի շուրջ և ամենոր, Ու բարձրացավ ճիշ-աղաղակ զարհուրելի: Գունասովեցի ես մահու չափ Ապա իսկույն ընկերներին հորդորելով պատվիրեցի Քերթել, այրել ոչխարներն այն, որ, խողխողված պղինձ սրով, Ընկած էին արդեն այնտեղ գեղոնաթավալ: Պատվիրեցի, որ աղոթեն Կորովագույն ժանտ Հադեսին և ահարկու Պերսեփոնին: Իսկ ես իսկույն դուրս քաշեցի սուր սուները իմ երկասյրի Ու նստեցի փոսի եզրին՝ թույլ չտալով, որ անմարմին մեղայաների

50 Գլուխները հասնեն արշանն՝ մինչև որ ես հարցնունք անեմ Տիրեսիասին:

Նախ մոտեցավ ինձ Էլպենոր իմ ընկերոջ դժբախտ հոգին, Քանզի չէ՞ որ դեռ չէր թաղված նա հողի տակ լայնատարած, Նրա դիակն անդ, Կիրկեի ասարանքում էինք թողել մենք չթաղված, Անուգ, քանզի այլ հոգսերով էինք լարված այնժամ այնտեղ: Երբ ես նրան այնտեղ տեսա, արտասովեցի, կարեկցությամբ սիրտս լցվեց,

Ուստի նրան ես դիմեցի և ասացի խոսքերը իմ այս թևավոր. «Ո՛վ Էլպենոր, ինչպե՞ս է որ եկար, հասար այս խավարին՝ Իբր հետիոտն, ինձնից առաջ այդպես անցար, երբ ինձ քերեց սև նալն արագ»:



Նկ. 4. Ողիսւսը կանչում է մեռչալների հոգիներին
(նկար ստիորի վրա):

Այդ ասացի: Նա շչալով պատասխանեց և խոսք ասաց.
 60 «Դիւցաւանունդ Լաերտածին, բազմահնար դու Ողիսւս,
 Ինձ կործանեց դաժան աղետն աստվածատուր, այլև գինին
 անչափավոր: Գտուկած էի եւ Կիրկեի տան կտորին, բայց մոռացել էի լրիվ,
 Ով, վերևից ներքև գալիս, պիտ բարձրաբերձ սանդուղքներով
 եւ իջնեմ ցած: Եվ ողղակի գլորվեցի վերևից ցած, ու ջախջախվեց պարանոցս,
 Այդպէս հոգիս իսկույն նեթ թռավ դեպի տունն Հադեսի:
 Աղաչում եմ հաւնուն նրանց, որ այստեղ չեն, բայց քո տանը
 ապրում են դեռ, Հանուն կնոջդ և քո հոր, որ քեզ սնել է մանկութեան քո օրերին,
 Այլև հաւնուն Տելեմաքի, որին, իբրև միևնույնարի, տանն եւ թողել.
 Գիտեմ, որ դու, այժմ Հադեսի կացարանից հեռանալիս,

70 Ամրակառույց նախ պետք է դեպ Էսկան կղզին ուղղես,
 Ոստի եւ քեզ աղերսում եմ, մի մոռանա, այլ ինձ հիշիր, իշխանատեր:
 Երբ հեռանաս դու այնտեղից, մի թող դու ինձ անուշադիր,
 Եվ չթաղված, որ գայրույթը աստվածների դու աղաչիսով չհարուցես:
 Իմ մարմինը, գեներիս հետ, աղաչում եմ, հրկիզեցեք խարույկի մեջ
 Եվ ալեգարդ ծովի ափին շիրիմ-դամբան կանգնեցեք ինձ,
 Որ դժբախտիս գործն իմանան շատ շատերը նաև գալիք սերունդներից:
 Կատարիր դու թախանձանքս, գերեզմանիս վրա տնկիր դու այն իմ թին,
 Որով կյանքում թիավարել եմ սիրելի ընկերների հետ միասին»: Ասաց
 այդպես: Իսկ եւ նրան խոսք ասացի ի պատասխան.
 80 «Թշվառակա՛ն, այդ ամենը, որ խնդրեցիր, կանեմ այնտեղ,
 կկատարեմ»: Այդպես անա, նստած այնտեղ, տխուր-տրտում խոսում էինք
 մենք իրար հետ: Թուրը մեկնած փոսի վրա՝ արյունն էի եւ պահպանում,
 Մինչ որվականն իմ ընկերոջ փոսի այն կողմը բարբառում էր
 տակալին: Եկալ այնժամ ու մոտեցալ նաև մեռած մորս հոգին՝
 Անտիկլիան, որ ծնվել էր քաջակորով Ավտոլիկից:
 Ես կենդանի թողի նրան, երբ հեռացա դեպի Իլիոն սրբազնատուրք...
 Արտասովեցի, երբ որ տեսա եւ իմ մորը, սիրտս լցվեց ափսոսանքով,
 Բայց և այնպես թույլ չտվի, որ մոտենա նա արյունին,
 Մինչև որ ես հարցմունք անեմ Տիրեսիասին, թեպետ վիշուն էր
 իմ դառնագին: 90 Այդ միջոցին թեքեացի Տիրեսիասի հոգին եկալ ու մոտեցալ՝
 Ոսկի մական ձեռքին բռնած, ինձ ճանաչեց ու այս ասաց.
 «Աստվածազա՛րմ Լաերտածին, ո՛վ Ողիսւս բազմահնար,
 Ի՞նչ եւ եկել դու, տարաբախտ, լույսը թողած արեգական,
 Որ այժմ տեսես մեռչալների սովերները և անխնդուն աշխարհը այս:
 Բայց ետ քաշվիր դու խանդակից, սուր սուներդ դու դեմ գցիր,
 Որ գեթ խեղձ արյունը այս ու քեզ հայտնեմ նշմարտացի եւ ամեն բան»: Ասաց
 այդպես: Ետ քաշվեցի և սուներն իմ արծաթազամ
 Ես կոխեցի պատշաճի մեջ: Իսկ ծեր գուշակը մեծափստ,
 Երբ որ խեղձ թուխ արյունը, անդ ինձ դիմեց ու այս ասաց.
 100 «Վերադարձ եւ դու փափագում, ո՛վ Ողիսւս արժանագով,
 Բայց քեզ համար այն դժվարին պիտի դարձնի աստվածն հզոր:
 Զեմ կարծում ես, Որ քո մասին երկրասասանը մոռանա: Սրտում քո դեմ նա դիւ ունի,
 Ոխակալ է. կուրացրել եւ դու սիրելի նրա որդուն,
 Բայց աղետներն հաւնորժեղաց հետո պիտի ետ գնաս քո հայրենիքը,
 Հարկալ, եթե զայես դու քեզ և տենչանքը ընկերներիդ այն ծամանակ,

Երբ քո նավով ամրակառուց դու անց կենաս ծովը կապույտ
Եվ, հասնելով Թրիհակիա կղզուն, դուրս գաս իսկույն ցամաք:
Անդ կգտնես դու արածող պարարտ եզներն ու խաշիկքը ամենադեռ,
Վառ Հելիոսի, որը լսում և տեսնում է ամենուրեք և ամեն բան:

110 Եթե դրանց դուք ձեռք չտաք, թողնեք, անցնեք՝ ձեր վերադարձը
հիշելով,

Այնժամ կգաք դուք Իթակե, թեկուզ բազում ժամն աղետներ
կրելուց ետ:

Սակայն եթե ձեռք տաք դրանց, գուշակում եմ մահ և կորուստ
Ընկերներիդ ու քո նավին: Անձամբ ինքդ գուցե փրկվես,
Բայց ետ կգաս դու անազան ու չարաբախտ, գրկված բոլոր

ընկերներից
Եվ մի օտար նավի վրա: Դու կգտնես քո տանն աղետ ու փորձանքներ՝
Գույքդ անխիղճ վատնող, լափող, ամբարտախան շատ-շատ
մարդկանց,

Որ քո տիկնոջն աստվածակերպ խոստանում են, իբրև խոսնայր,
շատ ընծաներ:

Բայց դու, հարկավ, պիտի լուծես քո վրեժը այդ բռնակալ գործի համար,
Իսկ երբ որ դու քո հարկի տակ խոսնայրներին ոչնչացնես

120 Սուր պղինձով, բացեփբաց կամ որևէ խարդախությամբ,
Թեթևագույն մի թի վերցրած, անապարհվիր, գնա շուտով դու շրջելու,
Մինչև որ գաս, հասնես մարդկանց, որոնք ծովին անձանոթ են,
Որոնք իրենց կերակուրը ուտում են միշտ ստանց սղի:

Անդ չգիտեն նրանք բնավ ո՛չ կարմրակող նավեր արագ,
Ոչ էլ թիեր թեթևաշարժ, որպիսիները նավերի թևերն են ժիր:

Քեզ պարզ նշան կասեմ, որը չես մոռանա, այլ կհիշես դու
հեշտությամբ:

Եթե անմիտրդ մի որևէ քեզ հանդիպի և քեզ հարցնի,
Թե դու այդ ի՞նչ բան ես տանում՝ դրած ուսին քո փառահեղ,
Կանգնիր իսկույն և քո թեթև այն նավաթին ցցիր հողին

130 Ու փառավոր զոհ մատուցիր իշխանագոր Պոսիդոնին:
Զոհիր մի խոյ, այլև մի եզ և խոզերին բեղմնավորող մի գեր վարագ:

Եվ բացի այդ՝ զոհ կատարիր հարյուրեզնյա, երբ որ իրոք դու տուն
դառնաս,

Զոհ՝ լայնալիր երկնքի տեր գերերջանիկ աստվածներին,
Բայց բոլորին, ինչպես հարկն է: Ծովի վրա չես մեռնելու,
Մահդ թեթև է լինելու, և միմիայն այն ժամանակ,
Երբ ուժասպառ լինես անդորր ծերությունից, երբ որ շուրջդ
Ժատ երջանիկ մարդիկ լինեն: Այսբանը քեզ գուշակում եմ

ես ճշմարիտ:
Ասաց այդպես, իսկ ես նրան այս ասացի ի պատասխան.

«Ո՛վ Տիբեսիաս, աստվածներն են այդ ամենը վիճակել ինձ:
140 Բայց նաև սա դու ինձ ասա, ճշմարիտը պատմիր միայն:
Ահա այստեղ տեսնում եմ ես նաև հոգին իմ մեռած մոր.
Ահալասիկ, նա լուռ ու մունջ նստած է այժմ արյունի մոտ
Եվ, կարծես թե, չի հանդգնում որդուն նայել, խուսել ինձ հետ:
Ասա, տեր իմ, ինչպե՞ս անել, որ նա այստեղ ինձ աննաչի»:
Այդպես ահա ես ասացի: Նա ինձ իսկույն պատասխանեց
ու խոսք ասաց.

«Ես հեշտությամբ այդ կասեմ քեզ, և դու իսկույն կհասկանաս:
Մեղայվների հոգիներից ում որ թույլ տաս, որ արյունին այս մոտենա,
Նա կբառնի քեզ ամեն բան ճշմարտացի, իսկ ում մերժես
Եվ թույլ չտաս, որ մոտենա, նա լռելյայն ետ կգնա»:

150 Այդպես այնժամ ասաց հոգին իշխանագոր Տիբեսիասի:
Երբ որ բախտն իմ նա ինձ հայտնեց, իսկույն մտավ տունն Հադեսի:
Մինչ ես անշարժ անդ մնացի, մինչև որ մայրս մոտեցավ.
Նա թխագույն արյունն ըմպեց, ինձ աննաչեց և անհապաղ,
Բարձրահատաչ անդ բարբառեց ու խոսքն ասաց այս թևավոր.
«Ո՛հ, իմ որդյակ, ինքդ այդպես, դեռ կենդանի, ինչպե՞ս հասար
Դու խաղարիկն այս մթագույն: Դժվա՛ր է խիստ, որ կենդանի
մարդն այս տեսնի:

Արդ, մեր միջև գետն է հոսում, հեղեղատներն են անոեղի,
Իսկ սոջևից, մինչև գետը, խոր հորձանքն է օվկիանոսի,
Որ չի կարող հետիոտն մարդն անցնել բնավ, եթե չունի ամբակուռ նավ:

160 Եվ մի՞թե դու Տըրոյայից նոր ես գալիս նավիդ վրա սևակառոց՝
Այդքան երկար թափառելով ընկերներիդ հետ միասին: Մի՞թե ցայժմ
Դու չես եղել Իթակեում, դեռ չես տեսել քո հարկի տակ դու կնոջդ»:
Ասաց այդպես: Իսկ ես նրան այս ասացի, հանց պատասխան.
«Ա՛յս, իմ մայրիկ. միայն կարիքն ինձ քերեց տունը Հադեսի,

դեպի դժոխք,
Որ թեքացի Տիբեսիասի հոգուն այստեղ հարցմունք անեն: Ես տակավին
Դեռ չեմ հասել քաղցր ափերին աքեական, ոտք չեմ դրել դեռ ես իրոք
Մեր հարազատ երկրի վրա, այլ շրջում եմ դեռ չարաղետ և հոգնատանջ
Այն օրվանից, երբ մեզ տարավ Ագամեմնոնն աստվածագարս
Դեպի Իլիոնը ձիաբույժ, որ անդ մարտենք տրոյացոց դեմ:

170 Սակայն հիմա դու ինձ ասա և ճշմարիտը պատմիր այժմ.
Կորստաբեր օրհասի ի՞նչ հարված արդյոք քեզ կործանեց.
Երկարատև տկարություն՝ դու քաշեցիր, թե՞ Արտեմիսը նետամիզ
Սլաքներով թեթևաշարժ քեզ սպանեց հանկարծակի:
Պատմիր նաև իմ հոր մասին, որդու մասին, որին այնտեղ թողեցի ես.
Արդյոք նրանց ձեռքի՞ն է դեռ իշխանությունն իմ անասման,
Թե՞ այլ մարդիկ զավթել են այն և խոսում են, որ ետ չեմ գա ես այլևս:

Պատմիր դու իմ օրինական կնոջ մասին, նրա մտքերն ու տենչանքը:
Մնո՞ւմ է դեռ նա որդու մոտ, պահպանում է նա իմ գույքերը անվնաս,
Թե՞ որևէ գերախոչակ արեացի նրան վերցրել է կնությունն»:

180 Այդպես այնժամ ես ասացի, և ինձ իսկույն պատասխանեց
մայրն իմ հարգո.

«Մնում է դեռ հավատարիմ Պենելոպեան տխուր սրտով և հալումա՞շ՝
Քո սեփական ապարանքում և անցկացնում օրն ու գիշերը վշտաբեկ.
Ողբում, կոծում է անդադար, արտասվում է նա դառնադառն:
Դեռ չի գավթել քո մեծաշուք իշխանությունն այնտեղ ոչ որ,
Իսկ հողերդ Տելեմաքոսն է մշակում խաղաղությամբ ու համերաշխ՝
Մասնակցելով խնջույքներին, որոնք պատշաճ են փառաշուք

իշխանազնին,

Քանզի բոլորն հրավիրում են միշտ նրան: Մնում է դեռ և հայրը քո՝
Այնտեղ, գյուղում, դաշտերի մեջ: Քաղաքը նա չի այցելում.
Զուրկ է, չունի ո՛չ անկողին, ո՛չ մահճակալ իր ծածկոցով,
ոչ փափուկ բարձ,

190 Իսկ ձմեռը տանն է քնում, ստրուկների հետ միասին,
Օջախի մոտ ու փռու մեջ և ծածկվում է հագուստներով իր ցնցոտի:

Բայց երբ գալիս է ամառը կամ աշունը փարթամաճոխ,
Պերճ խաղողի այգու լանջին ամենուրեք նրա համար,
Թափված փափուկ տերևներից, պատրաստ է միշտ թավ անկողին:
Անդ պատկում է նա վշտաբեկ, սիրտը ցավին միշտ անձնատուր՝
Քո վիճակն է լալիս անկերջ ու լցված է նա դառնությամբ իր ծերության:
Զե՞ որ և ես այդ վիճակում կործանվեցի, և ծանոտ օրհասն ինձ նվաճեց:
Քանզի մեր տանն ինձ չի հասել ինքն՝ Արտեմիսը Աետաձիգ,
Ինձ չի զարկել նա, քաջատես, զաքներով թեթևաշարժ

200 Ու չի ճնշել, նմանապես, ինձ որևէ տկարություն,
Որն, ուժարափ մեզ անելով, կորզում է միշտ մարմնի միջից
մարդու հոգին:

Ստրջանքը, այլև վիշտը միշտ քո համար, ո՛վ Ոդիսևս, և կարոտը,
Որ հեռու ես դու մայրական գուրգուրանքից, ինձ զրկեցին

քաղցր կյանքից»:

Ասաց այդպես, և իմ սրտում միտք հղացա այդ միջոցին.
Ես կամեցա բռնել, զրկել իմ հանգուցյալ մոր սուրբ հոգին:
Երեք անգամ ես նետվեցի, և դրդում էր ամեն անգամ սիրտս հուժկու,
Երեք անգամ նա խույս տվեց, ինչպես երագ, հանց մի սուվեր:
Եվ առավել խորունկ մի ցավ, նոր ստրջանք սիրտս զգաց,
Ուստի նրան անդ կանչելով խոսքն ասացի այս թևավոր.

210 «Մա՞յր իմ, ինձնից խուսափում ես. չե՞ որ կարոտ եմ չափազանց,
Որ գեթ այստեղ, տանն Հադեսի, մենք ձեռքերով մեր սիրելի

զրկենք իրար,

Որ երկուսովս ջերմ արցունքով սրտերին տանք թեթևություն:
Ո՞հ, գուցե ինձ սուկ ուրվական է ուղարկել Պերսեփոնեն ազնվամեծար,
Որ առավել ես հեծեճամ, սիրտս լցվի նոր ստրջանք»:
Այդպես ահա ես ասացի, և ինձ իսկույն պատասխանեց

հարգո մայրն իմ.

«Վա՛յ ինձ, որդյակ, որ առավել դժբախտն ես դու մահկանացու
մարդկանց մեջ.

Ոչ, բնավին քեզ չի խաբում Պերսեփոնեն, դուստրը Զևսի,
Այլ այդպես է մարդու վիճակն, երբ որ արդեն դառնում է նա
մահվան բաժին,

Եվ նրա մեջ ջլերն այլևս չեն կապակցում միսն ու ոսկրերը միաձույլ,
220 Այլ ամեն ինչ լափվում է գորությունը բորբ կրակի,

Երբ որ ոգին բաժանվում է ոսկորներից իր ափտակ:
Մինչդեռ հոգին, դուրս թռչելով, սուրում է և սավառնում է երագի պես:
Մակայն շուտով անապարիթ դու դեպի լույս և այս ամենը լավ հիշիր,
Որպեսզի անդ, քո կնոջ հետ տեսնվելիս, ասածներն իմ
նրան պատմես»:

Այդպես, միմյանց հարցեր տալով, խոսում էինք մենք միասին,
Մինչ մոտ եկան անթիվ կանաչք՝ դրդված կամքով ազնվամեծար
Պերսեփոնի.

Որքան կային իշխանների պերճ տիկիներն ու դատրիկներ՝
Խոնր-խոնրի հավաքվեցին շուրջը այնտեղ սև արյունի:
Եվ ես արդեն խորհում էի. ինչպե՞ս արդյոք հարցմունք անեն
ամեն մեկին:

230 Արդ, իմ սրտում այս խորհուրդը ինձ լավագույնն այնժամ թվաց.
Դուրս քաշելով ուսիցս կախ իմ սայրասուր թուրը իսկույն՝

Թույլ չտվի, որ միասին, միահամուտ, խմեն բոլորը սև արյունն,
Ուստի նրանք հերթով էին ինձ մոտենում և խոսք ասում սերունդների,
Զարմի մասին: Իսկ ես կարգով հարցնում էի ամեն մեկին առանձնակի:
Ահավասիկ, նախ Տիրոջին այնտեղ տեսա, գերապատիվ հոր գավակին:
Եվ նա պատմեց, որ սերունդն է ինքը վսեմ Սարմոնևսի:
Ասաց նաև, որ ինքն իրոք ամուսինն է Էդուսյան Կրեթևսի:
Սիրահարվեց նա Էնիպևս աստվածային բուռն գետին,
Որ ամենից գեղեցիկն է երկրի վրա հոսող բոլոր ջինջ գետերից:

240 Արդ, շատ անգամ գալիս էր նա հորդահոսան Էնիպևսի պերճ
այլաց մոտ,

Եվ ընդունեց տեսքը գետի Պոսիդոնը երկրասասան,
Որ նրա հետ այնտեղ սիրով զուգավորվեց ալեկոծվող ջրերի մեջ,
Իսկ շտապույն, լեռնանման ալիքները փրփրաթաթախս խիստ փքվելով
Թաքցրին իսկույն և՛ աստրծուն, և՛ մեղապարտ կնոջը այդ.
Նա բնեցրեց այնտեղ կույսին և արձակեց վառ, կուսական նրա գոտին:

Երբ հազեցրեց աստվածն այդպէս սիրո տոփանքը իր արտի,
Բռնեց իսկույն ձեռքը կույսի, անվամբ կոչեց և խոսք ասաց.
«Տնծա, ա՛յ կին, ու պարծեցիր դու մեր սիրով: Իսկ երբ տարին գա,
լրանա,

- Դու կծնես վեհ զավակներ, զի միացումն աստըծու հետ անպտուղ չէ:
250 Բայց դու նրանց լավ խնամիր, պահիր, սնիր միշտ ուշադիր,
Եվ անունն իմ քո մէջ թող միշտ գաղտնի մնա: Արդ տուն գնա.
Ես եմ անա քո դէմ կանգնած՝ Պոսիդոնը երկրատաստան»:
Այդպէս ասաց և այնժամ ան ծովի մէջ սուզվեց իսկույն:
Իսկ կույս Տիրոն հոլիացավ, ապա ծնեց Պելիաս, Նելևս չքնաղ որդոց,
Երկուսով էլ նրանք հետո դարձան Ջևսի կամակատար քաջ հերոսներ:
Պելիասն ապրեց բազմատաստ ու խաշնավետ շեն Իոլկոսում,
Իսկ մյուս եղբայր քաջ Նելևսը՝ Պիլոսի մէջ ավազածիր:
Ապա կանանց պերճ թագուհին ծնեց որդոց Կրեթևսի՝
Ամիթաոն ձիավարժին, քաջ Էսոնին ու Փերեսին:
260 Այնտեղ տեսա Անտիոպին՝ Աստպոսի պերճ աղջկան, որն իմ ստաջ
Պարծենում էր, որ քնել է մինչև անգամ Ջևսի գրկում
Եվ ծնել է երկու զավակ՝ Ամփիոնին և Չերոսին:
Առաջիններն էին սրանք, որ հիմնեցին յթնադոնն Թեբե քաղաքն,
Ու կանգնեցին նրա շուրջը բարձր պարիսպ, քանզի չէին կարող ապրել
Լայնատարած, բայց անպատնէշ Թեբեի մէջ, թեպէտ հզոր էին նրանք:
Տեսա նաև Ալկմենէին, Ամփիտրիոնի չքնաղ կնոջն,
Որ, Ջևսի հետ միանալով սիրակարոտ գրկում նրա,
Աշխարհ բերեց Հերակլեսին՝ քաջախիզախ, աշուժասիրտ մեծագործին:
Տեսա այնտեղ Մեգարեին, որ դատրիկն էր իշխանագոր Կրեոնի,
270 Որը դարձավ կողակիցը Ամփիտրիոնի անպարտելի, հզոր որդու:
Տեսա էս մորն Էդիպոսի՝ գեղեցկափայլ Էպիկաստին.
Խելակորո՛ւյս, նա կատարեց մի անավոր և ծանառ ռճիր. ամուսնացավ
Իր որդու հետ: Սա սպանեց իր ծնող հորն ու միացավ անպա մոր հետ:
Այդ արարքը կամքով անմահ աստվածների հայտնաբերվեց:
Թեև դաժան տառապանքներ կրեց Էդիպոսը հետո, բայց և կամքով
Աստվածների նա սիրելի իր Թեբեում իշխեց երկար ու պանծալի:
Կինը սակայն տունը իջավ գորել պահակ ծանա Հադեսի:
Իր կյանքին ինքը վերջ տվեց. նա մարդակին կապեց չվանը
հանգուցված
Ու այդ քայլին դիմեց վշտոտ, իսկ ամուսնուն թողեց նա բյուր
աղետ ու ցավ,

- 280 Որոնք մարդկանց առատապէս պատճառում են Էրիճիսները մայրական:
Տեսա նաև չքնաղատես Քլորիսին, որին, իբրև բարձր տիպար
Գեղեցկութեան, ստալ Նելևսը կնոջան՝ տալով անթիվ վարձ ու վճար:
Միմիական Օրթոնէնում թագավորող Իստոպան Ամփիոնի

Կրտսերագույն դատրիկն էր դա, որ Պիլոսում վեհ Նելևսից,
Իբրև նրա պերճ թագուհին, ծնեց փայլուն, գերահոշակ քաջ զավակներ,
Որպիսիներն էին Նեստորն, Քրոմիոսն ու Պերիկլիմենը մեծագոր:
Քլորիսը ծնեց հետո վեհ Պերոյին, որ սքանչելի էր մարդկանց մէջ.
Սա խոսնայրներ ուներ բազում և մեծամեծ: Սակայն կամքն էր
քաջ Նելևսի՝

- Միայն նրան տալ աղջկան, ով քաջաբար Փիլակեից քշի, բերի
290 Լայնանակատ ու կորեղջյուր արջառները հզորագոր Իփիկլեսի:
Եվ հանձն առավ այդ կատարել մի գերհրաշ և քաջ գուշակ,
Բայց խափանեց փորձը նրա ժանտաժոտ բախտն աստվածակամ,
Այլև կապանքը անավոր և հովիվները գլուղական:
Անցան օրեր ու ամիսներ, տարին արեց շրջապտույտ,
Ժամկետն հասավ, և գերվածը Իփիկլեսին հայտնեց կամքը
աստվածների,
Ու զորությունն Իփիկլեսի, ազատելով այդ գուշակին,
Նրա կապանքը արձակեց, և կատարվեց կամքը Ջևսի:
Տեսա այնտեղ էս Լեդային, Տինդարևսի կնոջն հզոր,
Որն և ծնեց Տինդարևսից քաջախիզախ գույգ զավակներ՝
300 Պոլիդէկին՝ բռնամարտում քաջամարտիկ և Կաստորին ձիամարզիկ:
Երկուսին էլ ողջ ու առողջ, դեռ կենդանի, կենսատու հողն
իր մէջ թաղեց

Անդ՝ երկրի տակ: Նրանք անչափ հարգված են միշտ Ջևսի կողմից
Եվ ամեն օր նրանք հերթով ու փոխելովս մահանում են և հերթով էլ
Կենդանանում, մինչդեռ փառքով աստվածներին են հավասար:
Իփիմեդիան իմ դեմ էլավ, Արևսի չքնաղ կինը,
Եվ սա նույնպէս պատմում էր ինձ, որ ինքն իրոք Պոսիդոնի
հետ միացավ,

- Ապա ծնեց երկու զավակ՝ աստվածակերպ վեհ Օտոսին
Եվ գերհոշակ Էփիալտին, որոնք սակայն կարճ ապրեցին:
Նրանց սնեց մայր-երկիրը սննդարար. կորին էին գեղեցկափայլ,
310 Քաջահասակ և ամենքին գերազանցող, բացի միայն Օրիոնից:
Երբ ինձամյա դարձան նրանք, լայնքն էր նրանց՝ ինը արմունկ,
Իսկ փառապանճ հասակների բարձրությունը հասավ նույնիսկ
ինը գագի:
Նրանք մի օր Օլիմպակյաց աստվածներին սպառնացին հանդգնաբար,
Որ երկնքում կհարուցեն զարհուրելի խռովություն,
Միտք հղացան՝ Օսաս լեռը դնել գլխին Օլիմպոսի, իսկ Պելիոնն
Անտառախիտ տնկել գլխին այդ Օսասի, որ գեթ հասնեն մինչև երկինք:
Կարող էին կատարել այդ, եթե կյանքից չզրկվեին.
Մինչ կործանեց նրանց որդին Ջևս գգոնի ու Լետոյի գեղեցկավարս.
Եվ երկուսին էլ միասին, նախքան պատեց նրանց այտերը աղվամազ,

320 Նախքան նրանց կգալները ծածկըվեցին խիտ մորուքով:
Այնտեղ տեսա ես Փեղրային, Պրոկրիսին, Արիադնեին,
Որն իմաստուն, մեծ Մինոսի պերճ դստրիկն էր չքնադատես:
Կրետե կղզուց նրան թեւեւսն առավ, տարավ դեպի Աթենքը սրբածես,
Սակայն այդ գործը ձախողվեց, քանզի ճամփին, Դիե կղզում
նրան հանկարծ,

Դիոնիսի մեղադրանքով, ճետով զարկեց Արտեմիսը:
Տեսա նաև ես Մերային, Կլիմենին ու Էրիփիլեին դաժան,
Որը սիրած իր ամուսնու մահվան համար շատ թանկարժեք

նուկի սուսցավ:
Բայց չեմ կարող ես մի առ մի այժմ ձեզ պատմել բյուր-բյուրերի
մասին այստեղ,
Որքան այնտեղ տեսա կանանց կամ դստրերի դյուցազնական
հերոսների,

Բանգի նախքան այդ պատմելը կանցնի գիշերն աստվածային,
330 Սակայն արդեն ժամանակն է՝ բուն մտնելու ընկերներիս հետ միասին,
Նավի վրա կամ հենց այստեղ, իսկ իմ ողու համար արդեն
դուք պիտ հոգաք»:

Ասաց այդպես, և մունջ էին բորբեքյան ու խորախոր լուռության մեջ:
Սքանչանքով այդ հիացած՝ ճտած էին ասարանքում սովորաբար,
Եվ առաջինը խոսք սասց անդ Արետեն լուսաթելիկ.
«Ո՛վ փեակներ, ի՛նչ եք արդյոք դուք մտածում այս փառավոր
քաջի մասին,

Սրա տեսքի և հասակի, վսեմ, ազնիվ խելքի մասին.
Թեպետ նա իմ հյուրն է միայն, բայց բոլորդ պարտավոր եք
պատվել նրան:

Պետք չէ բնավ աճապարել, ճամփա դնել, որ ընծաճերը քիչ լինեն՝
340 Մի այսպիսի մարդու համար: Չէ՞ որ քազում հարստություն,
Ողորմությամբ աստվածների, մեր տներում է կուտակված»:
Այնժամ նրանց իր խոսքն ասաց ծերուկ հերոս Էքենեոսն,
Որ տարիքով փեակներից ավագագույնն էր հիրավի.
«Բարեկամներ, ոչ ասարքեն մեզ հակառակ կամ անարժան
Մտքեր ասաց խոհեմամիտ մեր թագուհին: Պետք է պատվով

լսենք նրան:
Խոսքը սակայն, այլև գործը պատկանում են հզոր կանքին Ալկիհոոսի»:
Իսկույն նրան պատասխանեց և խոսք սասց Ալկիհոոսը.
«Ամենը այդ կկատարվի, ինչպես խոսքով այստեղ ասվեց,

քանզի դեռ ես
Կենդանի եմ և թիասեր փեակների իշխանավորն եմ իսկապես:
350 Թող հյուրը մեր քիչ սպասի, թեպետ սաստիկ նա կարոտ է
վերադարձի,

Թող համբերի մինչև էգուց, մինչև որ ես կարողանամ, ըստ պատշաճի,
Լրիվ բոլոր ընծաճերը լավ հավաքել, իսկ առաքումն աստ կհոգան
Բոլոր քաջերն և անձամբ ես, քանզի իմն է իշխանությունն
այս ազգի մեջ»:

Իսկույն նրան պատասխանեց և խոսք սասց Ռոփսուսը ամենիմաց.
«Իշխանավոր Ալկիհոոս, որ մարդկանց մեջ գերազանց ես ու մեծագույ.
Եթե պետք է, և պատվեր տաք այստեղ դուք ինձ, ես կմնամ
ամբողջ տարի,

Որ պատրաստեք առաքումն իմ և շնորհեք հարուստ ու պերճ
ինձ նվերներ:

Գոհ կլինեմ ես և այդպես, քանզի իրոք շատ ավելի օգտավետ է
Լի ձեռքերով վերադառնալ սիրանվեր իմ հայրենիք,

360 Եվ առավել սիրահոժար ինձ կընդունեն բոլորն այնտեղ,
Երբ որ հասնեմ ես Իթակե, և ինձ տեսնեն ազգի մարդիկ»:
Իսկույն նրան պատասխանեց և խոսք սասց Ալկիհոոսը.
«Նայում ենք քեզ, ո՛վ Ռոփսուս, և չենք կարող մենք միտք անել,
Որ դու հիմա մի ստախոս սրիկա ես. մեզ մոտ, այստեղ այդպիսիներն
Բազմաթիվ են և տարածված, որոնց սնում է երկիրը այս սևերես:
Նրանք գիտեն այնքան լսիրջ ստել, խաբել, որ դժվար է այդ ըմբռնել:
Մինչ միտքն է քո բարձր ու վսեմ, խոսքերն են քո գեղապաճույճ
ու գերազնիվ:

Արգիացոց բախտի մասին և չարաբաստ աղետները քո վշտալի
Դու պատմեցիր մեզ վայելուչ, ինչպես երգիչ մի քաղցրաճայն:

370 Սակայն հիմա դու այս ասա և ճշմարիտը ինձ պատմիր.
Տեսա՞ր դու քո աստվածատես ընկերներից մեկն ու մեկին,
որոնք քեզ հետ
Եկել էին այնտեղ, Իլիոն, բայց օրհասին արժանացան անդ չարաղետ:
Երկար է դեռ գիշերը այս, և տակավին ժամանակ չէ
Քուն մտնելու մեր հարկի տակ: Պատմիր գործերն այն գերհրաջ
ու մեծաքանչ:

Պատրաստ եմ ես քեզ այժմ լսել թեկուզ մինչև Արշալույսը
աստվածային,
Եթե միայն ցանկանում ես պատմել դու մեզ քո աղետները
չարատանջ»:

Պատասխանեց իսկույն նրան Ռոփսուսը աստվածարժան.
«Իշխանագոր Ալկիհոոս, որ մարդկանց մեջ գերազանց ես ու մեծագույ.
Ե՛վ բուն մտնելն, և՛ պատմելը ունեն իրենց ժամերն ուրույն,

380 Բայց եթե դու ցանկանում ես լսել նորից, ես հանույքով կպատմեմ քեզ
Է՛լ ավելի դառնակակիծ աղետներն իմ ընկերների, որ ողջ-առողջ
Տրոյական մարտակովում խույս տվեցին մահ-օրհասից, սակայն հետո,
Ետ դառնալիս, կործանվեցին խարդախությամբ ստոր կնոջ:

Ահալասիկ, երբ ողջախոն Պերսեփոնեն անդ ամենուր
 Տրիվ տվեց բոլոր կանանց և կույսերի հոգիները ստվերացած,
 Ինձ մոտեցավ Ասորիդեսի հույժ ախարդեմ, մոռլ հոգին:
 Ծրջապատել էին նրան հոգիները նրա դժբախտ ընկերների,
 Որ նրա հետ կոտորվեցին Էզիսթոսի դաժան ձեռքով նույն հարկի տակ:
 Երբ նա խմեց արյունը թուխ, ինձ ճանաչեց, ապա իսկույն
 390 Նա լաց եղավ, ջե՛րմ, աղեկեզ, արցունք թափեց անդ դառնադառն
 Ու տարածեց ձեռքերն իմ կողմ. փափագում էր, որ ինձ գրկի,
 Սակայն չկար էլ նրա մեջ ոչ կորովի ամրությունը, և ոչ էլ ուժ,
 Որոնք կային մի ժամանակ անդամների մեջ մեծագոր ու եռանդուն:
 Այդ տեսնելիս՝ կարեկցությամբ լցվեց հոգիս. արտասվեցի ես արտագին
 Ու, դիմելով իսկույն նրան խոսքն ասացի այս թեևալոր.
 «Ազամեմնոն Ասորևտրդի, ո՛վ մեծափստ դու ազգավար,
 Ի՞նչ վիճակում քեզ տապալեց մահվան օրհասը կործանիչ:
 Գուցե նույնիսկ Պոսիդոնը քեզ խորտակեց նավերիդ հետ, իր ալլաց մեջ՝
 Ահագնակի բորբոքելով մրրկահույզ շունչն հողմերի,
 400 Կամ թե գուցե քեզ ցամաքում, որևէ տեղ, խորտակեցին չար թշնամիք
 Այն ժամանակ, երբ փորձեցիր շորթել խաշինքն և նախիրները եզների
 Եվ կամ գուցե մի որևէ քաղաքի դեմ՝ կանանց համար անդ կովելիս»:
 Այդպես ահա ես ասացի, և նա իսկույն ի պատասխան այսպես խոսեց.
 «Աստվածասուն Լանրտածին, ո՛վ Ռդիսես բազմահնար,
 Ոչ, ապաքեն Պոսիդոնն ինձ չի խորտակել իմ նավերի հետ միասին՝
 Ահագնակի բորբոքելով մրրկածուսի շունչն հողմերի:
 2են կոտորել նաև մարդիկ թշնամակամ ինձ ցամաքում,
 Այլ Էզիսթոսն ինձ պատրաստեց մահ ու կորուստ և շնորհիվ
 չարադաժան
 Ու անիծյալ իմ ժանտ կնոջ. ինձ նենգաբար տուն կանչելով՝
 410 Խնջույքի մեջ, ինչպես հաճախ մտորի մոտ խողխողում են զոհ եզանը,
 Կոտորվեցին այնտեղ բոլոր իմ ընկերներն, հանց կոտորվում են
 շատ անգամ
 Մեծահոշակ, հարուստ մարդու հարսանիքին կամ խնջույքում՝
 ճոխ ու կիսարար
 Կամ փառավոր խրախճանքին՝ պարարտ խոզեր ճերմակատամ:
 Դու, հիրավի, հանդիպել ես հաճախ կովում բազում մարդկանց՝
 Մե՛ն ու մե՛նակ ապանվելիս կամ շփթում արյունոտոգ պատերազմի,
 Բայց դու սրտանց է՛լ առավել արտոսրացայտ պիտ ողբալիր
 դառնակակիծ,
 Թե տեսնեիր, ինչպես էինք մենք բոլորս թափված գետնին, սեղանների,
 Գավաթների միջև այնտեղ, ուր հատակն էր ամբողջ ծածկված
 հոժ արյունով:
 Ես լսեցի Պրիամոսյան Կասսանդրայի դժբախտ ճիշը և աղաղակն,
 —176—

420 Որին այնտեղ իմ պատճառով խողխողում էր Կլիտեմնեստրան
 նենգապատիր,
 Եվ ես այնժամ, դեռ մահամերձ, ձեռքս ողողեցի դեպի թուրն իմ,
 Բայց ճարվեցին ձեռքերս անգոր, իսկ անամոթ այդ շնացողը հեռացավ,
 Չհանդգնեց նա ինձ այնտեղ, Հադեսի տունը իջնողին, գեթ մոտենալ,
 Գեթ իր ձեռքով փակել գոճե աչքերը իմ, գոցել բերանը մեռնողի:
 Եվ հիրավի երկրի վրա ոչինչ չկա ավելի նողկ, լիրք ու դաժան,
 Քան շնացող զագիր մի կին, որ իր մտքում հորինում է ստոր գործեր,
 Ինչպես և նա, որ մտածեց այդ խաչտոտակ գործը լսիրշ ու ժանտաբեր՝
 Նյութելով չար սպանությունն օրինական իր ամուսնու: Կարծում էի,
 Որ տուն գալով ես իմ որդոց, ստրուկներին առիթ կտամ
 ուրախությամբ,
 430 Բայց նա, իբրև անօրինակ մի դավադիր, մի ոճրագործ նենգապատիր,
 Ինքը իրեն ծածկեց հավերժ ամոթանքով այդ նողկալի,
 Նաև գալիք անգոր կանանց, թեկուզ լինի որևէ մեկն առաքինի»:
 Ասաց այդպես, և ես նրան այս առաջի ի պատասխան.
 «Ավա՛ղ, Չևար որոտագոչ վաղուց ի վեր խիստ ատում է ցեղն Ասորևսի,
 Ուստի նրա սերունդներին կանանց ձեռքով սուսքում է մահ և կորուստ:
 Նույնպես և մենք, Հեղինեի համար միայն, շատ շատերս կոտորվեցինք:
 Իսկ այժմ, երբ դու հեռու էիր, Կլիտեմնեստրան քո դեմ նյութեց
 չար դավանքն այդ»:
 Այդպես ահա ես ասացի, իսկ նա իսկույն պատասխանեց ու խոսք ասաց.
 «Ուստի և դու չպետք է մեղմ վարվես երբեք քո կնոջ հետ.
 440 Ինչ որ ունես դու գլխիդ մեջ կամ մտքումդ, բայց մի անիր նրան երբեք,
 Այլ միշտ, մի բան վստահելով, մյուսը սակայն գաղտնի պահիր:
 Բայց քեզ բնավ ոչ մի վտանգ չի սպառնում կնոջ կողմից,
 Քանզի անչափ խոհեմ է նա, խորհել գիտի իր սրտի մեջ
 Իկարիոսի դուստրը չքնաղ՝ Պեճելուպեն խոհեմամիտ:
 Արդ, և նրան մենք թողեցինք իբրև կնոջ մի դեռահաս,
 Երբ հեռացանք մենք պատերազմ. նա իր կրծքին այնժամ ուներ
 ծծկեր մանուկ,
 Որն երևի նստած է այժմ հասակավոր, մեծ մարդկանց մեջ.
 Երջանիկ է և կտեսնի նրան անշուշտ տուն դառնալիս սիրելի հայրն,
 Եվ նա ինքն էլ, ինչպես հարկն է, պիտ ընդունի իր ծնող հորը
 գրկախառն:
 450 Մինչ կինս ինձ թույլ չտվեց, որ գեթ նայեմ ես իմ աչքով
 իմ զավակին
 Ու հագեմամ, այլ նախքան այդ ինձ սպանեց դաժանորեն:
 Բայց այլ մի բան ես քեզ կասեմ, և այն պահիր դու սրտիդ մեջ.
 Քո հայրենի, սիրած երկրին նավիդ վրա դու մոտեցիր
 Միայն թաքուն, քանզի կանանց հանդեպ չկա բնավ հավատ:
 —177—

Ո՛հ, ինձ հիմա դու այս ասա, ճշմարիտը պատմիր միայն.
Դեռ չե՞ս լսել դու իսկապես՝ կենդանի՞ է իմ զավակը արդյոք այնտեղ՝
Օրբոմենում կամ էլ թե չէ՝ Պիլոսի մեջ ավազածիր
Կամ առընթեր Մենելային, Սպարտայում լայնատարած,
Քանզի չէ՞ որ չի մահացել դեռ Օրեւոնեսն աստվածամուտս»:

460 Ասաց այդպես, իսկ ես նրան խոսքս ասացի ի պատասխան.
«Ատրևտորդի, ինչո՞ւ ես դու ինձ այդ մասին հարցմունք անում,
չգիտեմ ես,
Կենդանի՞ է, թե՞ մահացած. անվայել է մարդուն լինել ունայնախոս»:
Եվ մենք այդպես խոսում էինք ու վշտալի հարցմունք անում
անդ փոխադարձ,

Ողբում էինք մենք դառնալի և արտաավում արտահառաչ,
Երբ մոտեցավ հանկարծ հոգին Պելասածին Աքիլլեւի,
Ապա եկան հոգիները Պատրոկլոսի, Անտիլոքի և Էասի,
Որն իր տեսքով և հասակով գերազանց էր անդ բոլորից
Դանալանց մեջ, բացի միայն ազնվամեծար Պելեւյանից:
Ինձ ճանաչեց սուվեր-հոգին արագոտն Էակլանի,

470 Ու լացախառն ինձ նա դիմեց և խոսքն ասաց այս թեւավոր.
«Աստվածագոր Լաերտածին, ո՞վ Ոդիսևս հոգնահնար,
Թշվառագույն, ի՞նչ գործ է այդ, որ հորիկնել ես քո սրտում.
Ի՞նչպես արդյոք հանդգնեցիր Հադեսի տունը ներս մտնել,
որտեղ միայն

Թափառում են զգայագուրկ սուվերները մեռյալների»:
Ասաց այդպես, իսկույն նրան ես ասացի ի պատասխան.
«Ո՛հ Աքիլլես Պելասածին, աքեյանց մեջ դու գերհրաշ և գերազոր,
Պետք ունեի այստեղ գալու, Տիրեսիասին հարց անելու, որ գեթ նրա
Գուշակությունն այստեղ լսեմ՝ ինչպե՞ս հասնեմ ես Իթակե
ասպտածուտ:

Ես տակալիմ չեմ մոտեցել բաղք ափերին աքեական, ոտք չեմ դրել
480 Իմ հարազատ երկրի վրա, այլ կրում եմ դառն աղետներ:
Մի՞նչ, Աքիլլես,
Ո՛չ անցյալում և ո՛չ հետք քեզնից ավել երջանիկ մարդ էլ չի լինի.
Արդ, քեզ այնժամ, դեռ կենդանի, մենք՝ արգիյանք, պաշտում էինք
աստվածաշափ,

Իսկ այժմ այստեղ նույնպես դու մեծ թագավոր ես սուվերների՝
մեռյալների,
Ուստի և դու մի տրտնջա, որ մեռած ես, ո՞վ Աքիլլես աստվածարժան»:
Այդպես այնտեղ ես ասացի, և նա իսկույն պատասխանեց
ու խոսք ասաց.

«Դու ինձ մահով մի ամոքիր, ո՞վ Ոդիսևս փառապսակ,
Ավելի շուտ կցանկալի լինել աղքատ մի գյուղացի կամ մի վարձկան

Եվ ծառայել, հանց չքավոր, խեղճ մարդու մոտ, որի ասքրուտն է
աղքատիկ
Բայց դու պատմիր և լուր տուր ինձ որդու մասին վեհնագույն
ու փառաշուր՝

490 Հանդես եկա՞վ արդյոք կովում, որ դառնա վեհ քաջամարտիկ,
թե՞ բնավ ոչ.
Պատմիր դու ինձ և Պիլեւի մասին ազնիվ, եթե միայն դու այդ գիտես:
Արդյոք ունի՞ միմիդոնյան քաղաքներում նա իրավունք իշխանական,
Թե՞ այլևս Հելլադայում և Փթիայում էլ չեն լսում նրան բնավ,
Կամ ծերությունն է կաշկանդել ձեռն ու ոտը նրա անզոր ու դողդոջուն:
Ա՛խ, եթե ես նրան, շողշող արևի տակ, այնպեսի մի նեցուկ դառնամ
Որպեսին ես հանդես եկա Տրոյայում լայնատարած՝
Կոտորելով մեծակորով բլուր քաջերին, իբրև պաշտպան արգիացոց,
Ա՛խ, եթե ես այդպես գայի իմ հոր տունը, ժամանակով գոնե մի կարճ,
Սյնժամ ոմանց հաղթ իմ ձեռքերն ու կորովն իմ պիտ թվաչին
ահագնագույն,

500 Նրանց, որոնք հալածում են այնտեղ նրան և կամ զրկում իրավունքից»:
Այդպես ասաց, և ես իսկույն նրան այս խոսքը ասացի ի պատասխան.
«Ո՛հ, ես ոչինչ դեռ չգիտեմ քո Պելեւի մասին վսեմ,
Սակայն գիտեմ քո սիրելի Նեոպտոլեմ որդու մասին ես ամեն բան
Եվ կպատմեմ քեզ ճշմարիտն, ինչպես դու այդ պատվիրեցիր,
Քանզի նրան լայնածավալ և կորակոր նավի վրա
Սկիրոսից ես բերեցի դեպ աքեյանք գեղասրունք:
Երբ որ Տրոյա քաղաքի շուրջ կազմում էինք մենք խորհուրդներ
վեհածողով,

Միշտ առաջինն էր նա խոսում և ճառում էր վեհ ու վսեմ:
Նրան այնտեղ հաղթում էինք միմիայն ես և ծեր Նեստորն
աստվածամիտ:

510 Իսկ երբ դաշտում տրոյական սուր պղնձով կովում էինք անագնակի,
Ոչ մի անգամ նա չը թաքնվեց ամբոխի մեջ, ճակատից դուրս,
Այլ նետվում էր նա միշտ առաջ և քաջազոր խիզախությամբ
Նա չէր զիջում անդ ոչ որի ու կոտորեց կովում անեղ նա շատ
մարդկանց:

Ես չեմ կարող հիմա հիշել կամ մի առ մի այժմ անվանել ու թվարկել,
Թե որքա՞ն նա, իբր աքեյանց քաջ գորավիզ, թշնամիներ անդ կոտորեց,
Բայց լավ գիտեմ, որ մարդաշարդ սուր պղնձով նա ջախջախեց
Քաջ Տելեփյան Եվրիպիլին, որի շուրջը, հաճուն կանանց ընծաների,
Կոտորվեցին նրա անթիվ ընկերները կետիացի:
Ինձ նա թվում էր գեղեցիկ, թեպետ զիջում էր Մեմնոնին:

520 Երբ մենք՝ հզոր արգիացիք, թաքնվեցինք որովայնում Երիվարի,

Որն Էսփոսն էր կառուցել, մինչդեռ միայն ինձ էր հանձնված
գործն այդ խարդախ՝

Ե՛վ բաց անելն այդ դարանի, և՛ փակելը դրա ներքուստ,
Այնժամ այնտեղ դարանամուտ խորհրդական արգիացիք, ահաբեկված,
Իրենց աչքի հորդ արտասուքն էին սրբում և դողդողում ամբողջ
մարմնով:

Սակայն նրան ես չտեսա ո՛չ արտասուքը այտերից իր սրբելիս
Ո՛չ էլ չքնաղ իր երեսը գունատությամբ համակ ծածկված,
Այլ աղերսում էր ինձ հաճախ, որ ես թույլ տամ՝ ձիու միջից
դուրս գալ կովի:

Սեղմում էր նա կոթն իր թրի, պղնձակուտ տեղ նիզակն էր
շարժում անվախ,

Ոգեշնչված էր տենչանքով՝ ոչնչացնել ու կոտորել տըրոյացոց:
530 Եվ վերջապես, երբ Պրիամի բարձր քաղաքն ավերեցինք,
Նա սև նավով, հարուստ ավարն ու ընծաներն իր ստացած,
վերադարձավ:

Զվնավեց նա պղնձով ձեռնամարտում, մի բան, որ միշտ
Հազվադեպ է պատերազմում, որ մոլեգնում է ժանտ Արեսը
մարդասխանձ»:

Այդպես ահա ես սասցի, և քաջալիզ Էսկյանի հոգին անդուստ,
Մեծ քաղերով շարժվեց, գնաց դաշտավայրով ասփողեյան.
Ուրախացավ, երբ որ լսեց, որ իր որդին քաջ էր կովում և փառապանծ:
Այնուհետև հանդես եկան մեռյալների այլ հոգիներ,
Որոնք, բոլորը վշտակիր, պատմում էին ամեն մեկը պատուհասն իր:
Եվ միմիայն Տելամոնյան Էասն էր անդ կանգնած մեռակ

540 Եվ մեկուսի: Չայրացած էր նա չափազանց, որ հաղթեցի
Ես Աքիլի գեներ համար ծագած վեճում: Մայրն էր մրցույթը սահմանել,
Իսկ վճիռը արձակեցին Աթենասը և տրոյացիք:

Ո՛հ, երանի հաղթանակն այդ վեճի մեջ ես չտանեի,
Այնժամ երկիրն իր կրծքի տակ այդպիսի վեճ և մեծ գլուխը չէր թաղի՝
Գլուխն հզոր, մեծ Էասի, որ գերազանցն էր բոլորից դանայանց մեջ
Թե՛ իր տեսքով և թե՛ գործով, բացի միայն գերահռչակ Պելևսյանից:
Ու ես նրան, անդ դիմելով, խոսք սասցի գորովալի ու մեղմագին.
«Ո՛վ փառապանծ դու մեծ Էաս, որդիդ վեսն Տելամոնի, մի՞թե նաև
Մահից հետո չես մոռանում զարյույթն իմ դեմ այն չարաբաստ
գեների համար,

550 Որով անմահ աստվածները աքեացոց մատնեցին բյուր աղետների,
Իսկ դու՝ նրանց պատվարն հզոր, կործանվեցիր: Մինչդեռ այնժամ
քեզ՝ մեռյալիդ,

Որ Պելևսյան Աքիլլեոսի գլխին էիր ճիշտ հավասար,
Մենք՝ աքեյանք, ողբում էինք արտահառաչ և անդադար:

Այնտեղ ոչ ոք մեղավոր չէր, մեղավորը Չևսն էր միայն. նա՛ դանաթանց
Աշտեավոր գորքը ատեց և քեզ մատնեց ժանտ օրհասի:

Մոտ եկ, մոտ եկ, իշխանավոր, լսիր մեր խոսքն ու պատմածը,
Զայիք գեթ այժմ հպարտ հոգիդ և քո անեղ զայրույթ ու քեճն»:
Այդպես այնտեղ ես սասցի, բայց նա ոչինչ էլ չխոսեց: Անպատասխան
Նա հեռացավ մեռյալների հոգիների հետ միասին դեպ Էրեբոս:

560 Գուցե հետո ինձ հետ խոսեր, թեկուզ ցաակոտ, գուցե մի կերպ
ես խոսեի,

Բայց սիրելի սիրոսս այնժամ իմ կրծքի տակ տենչում էր խիստ
Եվ փափագում տեսնել այնտեղ մեռյալների այլ հոգիներ:
Տեսա հանկարծ ես Միևոսին՝ մեծ, փառավոր որդուն Չևսի
Չեռքին բռնած ոսկե մական՝ կատարում էր դառաաստանը մեռյալների,
Որոնք դիմում էին դատին մեծ արքայի՝ կա՛մ նրա շուրջն,
այնտեղ նստած,
Կամ գալարվում էին անվերջ անդ, Հադեսի լայնադարպաս
մուտքի առջև:

Տեսա այնտեղ նաև հսկա ու վիթխարի Օրիոնին,
Ասփողեյան մարգերի մեջ հարածում էր նա գազաններ,
Որոնց ինքը մի ժամանակ ամայացած լեռների մեջ կոտորել էր՝

570 Պղնձակուտ և հավիտյան չխորտակվող իր մեծ գուրգով:
Ես անդ տեսա նաև հսկա Տիտիոսին՝ երկրի որդուն փառապասկ.
Ընկած էր նա գետնատարած, ինն արտավար տեղ գրաված:
Երկու կողմից երկու անգեղ նստած անդուլ հոշում էին լերդը նրա՝
Խոր վարսելով կտուցները, և չէր կարող նա իր ձեռքով վանել նրանց,
Քանզի մի օր բռնաբարել էր Լետոյին, Չևսի հարճին գեղեցկափայլ՝
Պանոպևսի լայնատարած դաշտավայրով դեսի Պիթոն ընթանալիս:
Այնտեղ տեսա ես Տանտալին, որ տառապում էր դառնագին:
Կանգնած էր նա լճակի մեջ, մինչդեռ ջուրը հասնում էր սուկ
իր կզակին.

Ծարավ էր խիստ, բայց չէր կարող հասնել ջրին, որ գեթ խմի,
580 Քանզի հենց որ կքվում էր նա, որ ջուր խմի փափագատենչ,
Զուրն անհասպաղ, ետ քաշվելով, չքանում էր, և անդ, նրա ոտքերի տակ
Միայն մնում էր հողը սև. այդպես ջուրը ցամաքեցնում էր ինքն
աստված:

Իսկ ծառերը բարձրասաղարթ կախել էին վերուստ նրա գլխի վերև
Պերն պտուղներ՝ խնձոր ու տանձ գեղեցկափայլ ու քաղցր նուր,
Որոնց հետ և՛ թուզ մեղրահամ, ձիթապտուղ մեծափայթամ:
Բայց հենց որ նա՛ հեզ ձերունին, ձեռքը մեկնելով, ջանում էր,
որ մի բան քաղի,

Հողմն էր դրանք իսկույն քշում, փախցնում դեսի հեռու ամպերն
ասվերախիտ:

Տեսա նաև Սիսիփոսին տանջանքի մեջ ծանու ու դաժան.
 Երկու ձեռքով բռնել էր նա հսկայական, ծանր մի քար

590 Եվ անընդհատ, ոտքով, ձեռքով նա ճգնում էր քարն անարի գլորելով
 Տանել, հասցնել քարձր լեռան քարձրակատար գագաթներին,
 Սակայն հեկնց որ հասնում էր նա լեռան քարձր գագաթներին,
 հգոր մի ուժ
 Ետ էր մղում, քարն այդ կրկին գորվում էր դեպի հովիտ:
 Իսկ նա ճիգ էր թափում անվերջ վեր հանել քարն, մինչ քրտինքը
 հորդ ու վարար
 Հոսում էր ողջ նրա մարմնից, իսկ գլուխն իր փոշին պատել էր
 թանձրախիտ:
 Ես վերջապես այնտեղ տեսա ուրվականը Հերակլեսի մեծ գործության,
 Մինչդեռ ինքը հրճվում էր անդ, աստվածների ճոխ խնջույքում:
 Կինն էր նրա՝ անմահ Հեբե աստվածուհին չքնադագույն,
 Որ դատրիկն էր Ջևա զգոնի և Հերալի ոսկեկոշիկ:

600 Ուրվականի շուրջը տիրում էր աղաղակ, հանց ահաբեկ հավքերի ճիչ-
 Ինքն էլ, նման մուգ գիշերին,՝ ձեռքին բռնած իր հաղթ աղեղը լայնալիճ,
 Կանգնած էր անդ շրջահայաց, նետը լարին արդեն դրած,
 Կարծես, ահա պատրաստ է նա նետը ձգել իր խորտակիչ:
 Նրա կրծքին շուրջանակի շողշողում էր քեմոխտի փուկը ահավոր,
 Հանց թրակապ ոսկեակար, որի վրա կալին գործեր հրաշակերտ՝
 Հուժկու արջեր, դաշտակենցաղ վայրի կինճեր և հրաչյա հաղթ
 սույուճներ,
 Ահեղ կոիվ, մարտաշփոթ, մարդակոտոր ծանու նախճիրներ:
 Նույնիսկ ճարտար արվեստագետն, որ հղացել էր քեմոխտի
 կերտվածքը այդ,
 Էլ այդպիսի գերհրաշ գործ երկրորդ անգամ չէր կարող նա
 կերտել նորից:

610 Երբ նա աչքը դարձրեց իմ կողմ, ինձ ճանաչեց իսկույն նեթ
 Ու խորախոր հատաչելով նա ինձ դիմեց և թեափոր այս խոսքն ասաց.
 «Աստվածազարն Լաերտածին, բազմահնար դու Ռիսևս,
 Դժբախտ, ավա՜ղ, այժմ երևի կրում ես դու մի շարաղետ, դաժան
 վիճակ,
 Որպիսին ես կրում էի մի ժամանակ վառ Արևի լույսերի տակ.
 Թեպետ որդին էի ես քաջ Կրոնոսյան Ջևա զգոնի,
 Սակայն մատնված էի անթիվ տանջանքների, քանզի հանձնված էի իրոք
 Ստոր ու ճողկ մարդու կամքին, որ ստիպում էր կատարել
 դաժան գործեր:
 Եվ արդ, այստեղ ինձ առաքեց նա մի անգամ, որ դուրս քերեմ
 շունն ահաբեր-
 Կարծես, թե նա էլ ավելի մի ժանտալի գործ մտածել չէր հանդրճնի:

620 Ծունն Հադեսի տնից մի կերպ ես հանեցի և քերեցի երկրի վրա.
 Հերմեսն եղավ ինձ ուղեկից և Աթենասն՝ աստվածուհին պայծառաչյա»:
 Ասաց այդպես, ապա իսկույն նա ետ դարձավ, գնաց, մտավ
 տունն Հադեսի:
 Մինչ մնացի ես իմ տեղում սպասելով, որ գուցե գան հոգիները
 Այն քաջազուն հերոսների, որոնք նույնպես կործանվել են
 վաղ ժամանակ:
 Եվ ես մարդկանց կոտանեի անդ վաղեմի, սրտիս համար փափագատենն,
 Պիրիթոոսին ու Թեսևսին, աստվածների զավակներին այդ փառավոր:
 Բայց նախքան այդ հավաքվեցին մեռյալները քյորաքազում,
 Աղմըկեցին ահագնակի և ինձ պատեց գունատությունը սարսափի:
 Մտածեցի, մի գուցե այժմ գործությունը Պերսեփոնի

630 Անդ առաքի հրեշավոր դաժան գլուխը Գորգոնի,
 Ուստի իսկույն ես ուղղվեցի դեպի նավն իմ, պատվիրեցի ընկերներին՝
 Ծուռ քարձրանալ նավի վրա և կտուսները արձակել:
 Նրանք հապճեպ նսվ քարձրացան, նստոտեցին ճստիքներին.
 Ալիքները նավը արագ ուղղեցին դեպ գետն, օվկիանոսն.
 Նախ սլացավ այն թիերով, ապա քշեց հողմն ուղեկից ու քարեքեր:

Ե Ր Գ Թ Ա Ս Ն Ե Ր Կ Ո Ւ Ե Ր Ո Ր Դ

ԾՈՎԱԼՔՆԵՐԸ. ՍԿԻԼԼԱՆ ՈՒ ՔԱՐԻՔԻՍԸ.
ԱՐԵՎԻ ԵԶՆԵՐԸ

Եվ պացալ մեր նավն աղպես, հասավ գետի, օվկիանոսի հոսանքներին:
Այնուհետև անպարագիծ ծովի կրծքում, հորդ ալիքները ճեղքելով,
Հասավ կղզուն Հական, ուր Արշալույսը առավոտյան իր տունն ունի,
Կացարանը: Այնտեղից է ծագում Արևը լուսաշող:
Արագընթաց նավը իսկույն դուրս քաշեցինք մենք դեպի ափ,

ավազի մեջ,

Այնտեղ ապա մենք ինքներս էլ ծովափ իջանք, ափը ծովի հավերժագոչ
Ու շատ շուտով մենք քուն մտանք՝ սպասելով Արշալույսին աստվածային:
Իսկ երբ ծագեց ճաճանչագեղ Արշալույսը վարդամատն,
Ես անհապաղ ընկերներիս առաքեցի Կիրկեի տունն,

10 Որ այնտեղից վերցնեն-բերեն նրանք դիակն Էլպեճորի:
Ապա իսկույն փայտ կտրեցինք ու թաղեցինք նրան ափին

այն բարձրաբերձ

Եվ ողբացինք լացուկոծով, հոսեց արցունքը դառնադառն,
Երբ մեռյալի գեներն ու դին հրկիզեցինք մենք ջերմնաանդ,
Դամբան-բլուր կառուցեցինք և կանգնեցինք նրա վրա մի կոթող պուն,
Իսկ բլուրի բարձր գլխին մենք տնկեցինք թիակը իր:

Այդ ամենը կատարեցինք մենք մի առ մի, բայց Կիրկեին
Հայտնի դարձավ, որ Հադեսի տնից արդեն վերադարձել, եկել ենք մենք,
Ոստի իսկույն, հագուստն հագած, մեզ մոտ եկավ, իսկ ծառաներն

իր հետևից

Հաց բերեցին, ճոխ մսեղեն ու շողշողուն կարմիր գինի:

20 Եվ, կանգնելով այնտեղ մեր դեմ, այս խոսքն ասաց պերճ դիցուհին.
աստվածային.

«Հանդուգնե՛ր, որ կենդանի՝ տունը մտաք դուք Հադեսի. մահ կտեսնեք
Երկու անգամ, մինչ այլ մարդիկ մահանում են՝ մահ տեսնելով

լույ մեկ անգամ:

Ահավասիկ կեր ու խմիչք վայելեցեք, խմեք գինին այս մեղրահամ

Ու մնացեք այս օրն այստեղ, իսկ երբ ծագի Արշալույսը առավոտյան,
Ծամփա կընկնեք և կզնաք, ես ցույց կտամ ձեզ ճանապարհը

մանրամասն

Եվ ամեն ինչ կհայտնեմ ձեզ, որ, վերահաս, աղետաբեր
Խարդախության պատճառով՝ դուք չտուժեք անդ, ծովի վրա

կամ ցամաքում»:

Ասաց աղպես, և լսեցինք մենք հնազանդ մեր սրտերով:

Աղպես ահա այդ օրն ամբողջ մինչ մայրամուտը արևի,

30 Վայելեցինք այնտեղ առատ մենք մսեղեն, այլև գինին անուշահամ:

Երբ մայր մտավ արևն արդեն, և խախարը պատեց երկրին ամենուրեք,
Ընկերներս անդ քուն մտան մեր սև նավի կառանների մոտ մեկնըված:
Այնժամ Կիրկեն, ձեռքս բռնած, ինձ սիրելի ընկերներից մի կողմ

տարավ,

Նստեցրրեց, ինքն էլ բազմեց դեմ-հանդիման, հարցմունք արեց,

Եվ ես նրան ճշմարտացի ու մի առ մի անդ պատմեցի գործը ամբողջ:
Երբ որ լսեց, ինձ դիմելով այս խոսքն իսկույն ասաց Կիրկեն գերամեծար.
«Նրեմն աղպես գլուխ եկավ ամենայն ինչ. այժմ արդեն պիտի լսես,
Ինչ որ սրտանց ես քեզ կասեմ. թող ինքն՝ աստված, քեզ խելացի,

խոհուն դարձնի:

Նախ պիտի դու ծովալքների մոտ ծամանես, որոնք իրոք

40 Գիտեն վարմել ու կախարդել բոլոր մարդկանց, ով որ գալիս է

նրանց մոտ:

Ով անտեղյակ ու սրտճառով անգիտության՝ հանկարծ նրանց

անդ մոտենա

Ու չարաղետ ծովալքների թունդ երգերին նա ձայնալուր դառնա

հանկարծ,

Երբեք նրան, որպես իր տուն ետ եկողի, էլ չեն տեսնի

Կամ սրտալի չեն ողջունի ո՛չ իր կինը, ո՛չ էլ մանուկ զավակներն իր,
Քանզի նրան ծովալքները, մարգում նստած, կը հմայեն երգով դյուրօիչ.
Մինչ նրանց շուրջ մարդկանց փսած ոսկորների և մաշկի մեծ

մի բլուր կա:

Բայց դու կղզուց հեռու մնա, իսկ ականջներն ընկերներիդ

Խցկիր փափուկ դո՛ւ մեղրամոմ, որ չլսի երգն այդ ոչ ոք:

Իսկ դու կարող ես լսել այն, եթե միայն դու ցանկանաս,

50 Բայց քեզ մինչ այդ, նավի վրա, կայմի ձողին թող պինդ կապեն,

Մակայն կանգնած, պարանները ամուր ձողին պարավանդած,

Մինչև որ դու, ծովալքների երգը լսած, հրճվես սրտանց:

Եթե խնդրես կամ պատվիրես ընկերներիդ, որ արձակեն քեզ

կապանքից,

Թող ավելի պիտի ու ամուր քեզ պարանով այնտեղ կապեն,

Իսկ երբ կղզին ծովալքների հեռուն թողած, անցնեք արդեն,

Այնուհետև մանրամասն էլ չեմ պատմում, կարիք չը կա,
Թե ո՞ր մեկը այնտեղ քո դեմ եղած երկու ուղիներից պետք է ընտրես,
Դու ինքդ այդ լավ մտածիր, իսկ ես կատեն այդ երկուսի մասին այսպան:
Անդ, մի կողմից գոռ ժայռերն են հոռվոր կախված և սարավանդ,
60 Որոնց զարկվում են մեծագոչ, կապույտաչյա Ամփիտրիտի

այիքներն հար:

Երջանկավետ աստվածները ժայռերը այդ հորջորջել են

«Թափառածայր»,

Եվ չեն կարող դրանց մոտիկ թռչել անցնել ոչ թռչուններն, ոչ թուլասիրտ
Աղավնիներն, որոնք քերում են ամբոսիա աստվածահայր

Չևս զգոնին,

Չի դրանցից մեկն ու մեկին անշուշտ շորթում է լերկ ժայռը

այդ սեպածայր,

Բայց փոխարենն՝ իսկույն հայրը առաքում է մեկ ուրիշին:

Արդ, մարդկային և ոչ մի նավ այնտեղից դեռ չի անցկացել՝ չվնասված,
Եվ դիակներն անթիվ մարդկանց ու տախտակները նավերի

լայն ծովի մեջ

Քշում, տանում են այիքներն, աղետարար, ժանտ կրակը:

Սակայն անդուստ մի օր անցավ ծովագնաց միայն մի նավ՝ Արգո նավը.

70 Որն, ամենքին հայտնի դարձած, վերադառնում էր. Էետից արքայազոր:

Նույնիսկ և դա իսկույն պիտի զարկվեր խարակ այդ ժայռերին

ու խորտակվեր,

Եթե չօգներ նրանց Հերան, որ խիստ սիրում էր Յասոնին:

Անդ կա երկու մեծ լեռնածայր, մեկն հասնում է մինչև երկինք

լայնատարած

Եվ սրածայր գլուխ ունի. ու այն ծածկում են մշտապես

Մուրթ ամպերը, որոնք քնավ չեն հեռանում դրա գլխից

Ո՛չ ամառը, ո՛չ աշունքին, այլ գազաթեմ է խիտ ամպերով միշտ

քողարկված:

Դրա վրա մահկանացու մարդ չի կարող ո՛չ քարձրանալ և ո՛չ իջնել,

Թեկուզ ձեռքեր և հաղթ ոտքեր քսան-քսան նա ունենա:

Պարեխն է այդ չափազանց լերկ ու գահավեժ, կարծես իրոք

հղկված լինի:

80 Այդ ահավոր պարեխի մեջ կա մի քարայր խավարամած,

Որն ուղղված է դեպ արևմուտք, դեպի Էրեբն անդնդախոր:

Արդ, այդ տեղով քո խորափոր նավը քջիր, ո՛վ մեծափստ դու Ռոդսես,

Եվ հագիվ թե կարողանա քաջահմուտ մի նետամիզ

Նետը նավից իր խոր՝ ձգել, հասցնել քարանձավին այդ լայնալիր:

Քարայրում այդ բնակվում է ժանտ Սքիլլան. հաչում է նա

քրատրմնաձայն,

Եվ նորածին շան լակոտի ոռնոցին է միշտ նմանվում նրա ոռնոցն,

Իսկ նա ինքը մի այլանդակ, ժանտ ճիվաղ է հրեշավոր:

Արդ, չի խնդա, ով որ նրան այնտեղ տեսնի, թեկուզ աստված էլ

նա լինի:

Տապներկու ոտք, թաթ նա ունի՝ բոլորն էլ գարշ, անբնական,

90 Երկարաձիգ վեց վիզ ունի, իսկ վզերին մի-մի գլուխ կա սուկալի,

Եվ ամեն մի երախի մեջ ատամներն են շարված ահեղ ու եռակի՝

Միշտ ամբասիկնդ, չափազանց խիտ և մահաափյուռ, մախիզ ու հոծ:

Այդ հրեշն է թաղված մարմնով իր՝ կիսով չափ այրում այն խոր

Եվ այնտեղից դուրս է ցցում սարսափելի գլուխներն իր դեպ անդունդը,

Որոնք, ժայռերն ստուգելով, ձուկ են որսում գալարվելով,

Բռնում, լափում են փոկերին, դելֆիններին և ծովի այլ հրեշներին,

Որոնց իր մեջ, հագարներով, սնուցում է Ամփիտրիտեն ահեղագոչ:

Եվ չի կարող ոչ մի նավորդ ցարդ պարծենալ, թե իր նավով նա անվնաս

Անցել է այդ ժայռի մոտով, քանզի ամեն մի գլուխը ժանտ հրեշի

100 Ծովագնաց նավի վրայից շորթում, տանում է դեպ քարայրը

մի-մի մարդ:

Ապա այնտեղ, ո՛վ Ռոդսես, մի այլ պարեխ դու կտեսնես,

բայց ցածր է դա

Ու մոտիկ է մյուս ժայռին՝ տարածությամբ մեկ նետընկեց:

Դրա գլխին քարձր անում է ծաղկափթիթ, տերևազարդ մի թզենի.

Իսկ ժայռի տակ սուրբ Քարիթիսն կլանում է մրբկահույզ ջուրը մթին,

Երեք անգամ խմում է նա ջուրն օրվա մեջ ու երիցս՝ ժանտ զգայրում:

Վա՛յ քեզ, եթե դու հանդիպես նրան այնտեղ, ջուրը այդպես կլանելիս.

Այնժամ նույնիսկ Պոսիդոնը երկրասասան քեզ չի փրկի այդ աղետից:

Լավ է, եթե Սքիլլայի ժայռի մոտով դու ընթանաս: Նրա մոտով

Արագապես դու սրացիր նավիդ վրա, քանզի քարվոք է առավել

110 Չրկվել իրոք նավիդ լուկ վեց ընկերներից, քան թե կորցնել

անդ բոլորին»:

Ասաց այդպես, և ես նրան խոսք ասացի ի պատասխան.

«Դու այս ասա, աստվածուհիդ, և ինձ պատմիր ճշմարտացի.

Եթե մի կերպ խոյս տամ այնտեղ ես մահաբեր Քարիթիսից,

Ես կվանե՞մ արդյոք մյուսին, երբ հարձակվի ընկերներես վրա

հանկարծ»:

Այդ ասացի, և պատասխանն իսկույն ասաց պերճ դիցուհին

աստվածային.

«Հանդուգն, ալվա՛դ, կոխվ ու կուգ ես փափագում, արի գործեր,

Չես ցանկանում զիջել նույնիսկ հավերժ անմահ աստվածներին:

Արդ, անմահ է ժանտ Սքիլլան, չարիք է նա անջնջելի, մի չարություն՝

Չարհորելի և այլանդակ, անպարտելի, նողկ ու վայրագ:

120 Չի դիմանա նրան ոչ ոք, ոչ մի կորով, և փախուստն է միակ միջոցն:

Եթէ հանկարծ այդ ժայռի մոտ դու դանդաղես, որ քո գեներով
Էլնես կովի,

Համոզված եմ, որ այդ հրեշն ձեր կողմ կուղղի իր գլուխներն
Ու ձեր նավից այնքան նորից մարդ կշորթի, որքան իրոք գլուխ ունի:
Ուստի անցիր դու սրբընթաց, բայց աներկչող կանչիր միայն

Կրատեիսին՝

Մորը անեղ Աքիլլայի, որ ծնել է մարդկանց համար այդ պատուհասն.
Նա է միայն, որ կարող է զսպել ուժգին հարձակումը նրա կրկին:
Այնուհետև կը ժամանես Թրիակիէ: Այնտեղ, բազում և բյուրակերպ,
Արածում են Արեգակի եզները և ոչխարները հույր ու պարարտ.
Յոթ սուլար եզանանախի, և նույնքան էլ՝ ոչխարների հոտ գեղեցիկ.

180 Ամեն մեկում հիսուն գլուխ: Բայց չեն աճում դրանք արդեն,
Չեն մահանում, դիցուհի եմ հովիվները դրանց պահող՝
Գեղազանգուր նիմփաները՝ Փաւթուսան և Լամպետին,
Որոնց ծնեց աստվածուհի պերճ Նեւերան վառ Հելիոս-Հիպերիոնից:
Երբ որ նրանց այնտեղ ծնեց ու խնամեց գերամեծար մայրը սնող,
Բնակություն նա սուսքեց դեպ հեռավոր Թրիակիէ կղզին իսկույն,
Որպեսզի միշտ անդ պահպանեն հոր կորեղջյուր եզները և ոչխարները:
Արդ, եթէ դու, դարձիդ մասին մտահոգված, դրանց թողնես

ու ձեռք չտաս,

Այնժամ անշուշտ, թեպետ և միշտ աղետակիր, դուք կհասնեք
ձեր Իթակեն,

Սակայն եթէ ձեռք տաս դրանց, գուշակում եմ քեզ պատուհաս,

140 Մահ ու կորուստ ընկերներիդ և քո նավին: Թեպետ մահից
դու խույս կտաս,
Բայց ետ կը գաս դու տարաբախտ ու անազան, զրկված բոլոր
ընկերներից»:

Ասաց այդպես, մինչդեռ ծագեց անդ Արշալույսը ոսկեզան,
Եվ հեռացավ դեպի կղզին աստվածային պերճ դիցուհին:
Դեպի նավը ես շարժվեցի, հորդորեցի ընկերներին,
Որ շուտ նրանք նավ բարձրանան և կառանները արձակեն.
Նրանք հապճեպ վեր բարձրացան, նստուեցին նստիքներին:

Այդպես նստած՝ նրանք թիով ճեղքում էին կործքն ալևոր ալիքների,
Մինչդեռ Կիրկեն, աստվածուհին գեղազանգուր, անեղ, խոսուն,
Առաքեց մեզ ու ժիր նավին սկսկտուց, մեր ետևից ուժգին փչող,

150 Առագաստը ուղեցող քամին իբրև ընկեր և ուղեկից:
Նստած էինք մենք նավի մեջ՝ սարքալորման ողջ աշխատանքը
կատարած,

Իսկ նավն արագ դեպի սուսջ տանում էին նավախարը և մեղմ քամին:
Այդ ժամանակ ընկերներին ես դիմեցի սրտակոտոր ու ասացի.
«Բարեկամներ, վայել չէ, որ միայն մեկը կամ թե երկուսը իմանան

Կամքն աստծու, որն ինձ հայտնեց այստեղ Կիրկեն՝ պերճ դիցուհին
աստվածային,

Ուստի ես այժմ ձեզ կը հայտնեմ, ահավասիկ, որ իմանաք.
Մենք կկորչենք կամ կը փրկվենք կործանումից և օրհասից:
Նախ և սուսջ նա պատվիրեց, որ խուսափենք ծովալքներից

աստվածային

Եվ չլսենք երգը նրանց, երգն՝ հմայիչ, ծաղկափթիթ մարգերի մեջ,
160 Այլ միմիայն հրամայեց, որ ես լսեմ նրանց երգերը կախարդիչ:
Դուք ինձ կապեք պինդ կապանքով, որ իմ տեղում անշարժ մնամ,
բայց և կանգնած,

Ամուր կայմին պարավանդված. ներքևից էլ ինձ պինդ կապեք:
Եթէ խնդրեմ կամ պատվիրեմ, որ արձակեք ինձ կապանքից,
Էլ ալելի ամուր և պինդ կաշկանդեցեք պարաններով դուք ինձ կայմին»:
Այդպես ահա բացատրեցի ընկերներինս ամենայն ինչ,
Մինչ մեր նավը գեղեցկակերտ սուր սլացավ, հասավ կղզին
ծովալքների,

Քանզի հաջող հողմն էր օգնում: Բայց երբ հասանք, չքվեց քամին,
Ծուրջը տիրեց խաղաղ անդորրն անհողմությամբ, և չքացան
աստծու կամքով

Հույզն ու հորձանքն այեկոծման: Ծուրջը միայն ծովն էր փոված
անդորրավետ:

170 Եվ նավորդներն ոտքի ելան, վար քերեցին առագաստը իմ սև նավի,
Ծաղծեցին ու դրեցին նավագոգում և, նստելով նստիքներին,
Եղևակերտ կոկ թիերով ճեղքեցին ջուրը փրփրալից:
Իսկ ես վերքրի մեղրամոմի գունդը իսկույն և սուր թրով
Կտրատեցի ու ձեռքիս մեջ կորովակի այն սեղմեցի:
Անմիջապես մոմը կակղեց, քանզի հզոր էր կորովը իմ ձեռքերի,
Այլև ուժը ճառագայթի, որ տալիս էր իշխանավոր Հիպերիոնը:
Մոմն այդ կարգով ես խցկեցի ականջները ընկերներինս,
Ապա նրանք ինձ կապեցին, կանգնած դիրքով՝ կապկպեցին
Ձեռ ու ոտս պատաններով, կաշկանդեցին կայմի ձողին:

180 Իրենք նորից նստուեցին ու ճեղքեցին ճերմակ ալիքը թիերով:
Հարպեպ սուսջ ընթանալով՝ այնժամ այնքան մենք մոտեցանք.
Որքան կանչող ձայնն է լսվում: Ծովալքները տեսան մեր նավն
արագընթաց,

Որ սրանում էր այլաց մեջ, և սկսեցին նրանք հնչուն երգն հմայիչ.
«Ո՛հ, եկ, այստեղ, ո՛վ Ռիսես արժանագով, դու աքելյանց
փառք ու պարծանք,

Կանգնեցրու նավն, հանգստացիր, որպեսզի մեր երգը լսես հրաշագեղ.
Չէ՞ որ ոչ ոք, ոչ մի անգամ դեռ չի անցել այստեղ նավով իր սևաթուր՝
Առանց մեր երգը լսելու, երգը քաղցր մեր շուրթերի:


Բանինաց է մեզ լսողը և դեպի տուն նա պանում է ցնծավետ:
 Հայտնի է մեզ փորձանքները, որ կրել են Տրոյայի մոտ,
 190 Կամքով անմահ աստվածների, արգիացիք և տրոյացիք:
 Մենք լավ գիտենք՝ ինչ կա, չկա երկրի վրա քաղմապտող»:
 Այդպես ասում էին նրանք երգերի մեջ քաղցրահնչյուն,
 Ուզում էի սրտանց լսել: Պատվիրեցի ընկերներին ինձ արձակել,
 Ոստի հոնքով նշան արի, բայց ավելի ուժգին նրանք աշխատեցին,
 Իսկ Ելփրիոքն ու Պերիմեդն անդ վեր կացան իսկույն ներ-
 Ու կապեցին չվաններով ինձ առավել ամուր և պինդ:
 Երբ որ ադպես մեր նավն արագ պանալով կղզին անցավ,
 Եվ բնավին էլ չէր լսվում ծովալքների երգն ու ձայնը,
 Միրանվեր ընկերներս այնտեղ իրենց ականջներից
 200 Մոնձ հանեցին անմիջապես և ապա ինձ արձակեցին իմ կապանքից:
 Իսկ երբ կղզուց մենք հեռացանք, ես դեմառդեմ մի ծովս տեսա
 Եվ լեռնաչափ, ժանտ ալիքներ ու լսեցի ահեղ թնդյուն:
 Սարսափեցին ընկերներս, և վայր ընկան նրանց ձեռքից թիերն իսկույն:
 Թնդաց հանկարծ հուզված ծովի հորձանքն ահեղ, և կանգ առավ
 նավը այնտեղ,

Քանզի նրան այնու առաջ չէին մղում թիերն երկայն:
 Ես շարժեցի նավի վրա, հորդորեցի ընկերներին սարսափահար,
 Մտռեմալով ամեն մեկին՝ խոսք սասացի գորովալիր.
 «Միրելիներ, չկա աղետ, որին լինենք մենք անձանոթ,
 Մինչ աղետն այս մեծ չէ բնավ կամ առավել սարսափելի, քան այն,
 երբ մեզ

210 Կիկլոպն ահեղ ու ժանտագույն խոր անձավում իր մոտ փակեց,
 Բայց այնտեղից մենք, շնորհիվ իմ քաջությանն հնարագետ և իմ խելքի,
 Ազատվեցինք, և դուր, կարծես, չէք մոռացել դեռ գործը այդ:
 Ահավասիկ, ինչ որ հիմա ձեզ պատվիրեմ, հնազանդվեք դուր իմ
 խոսքին:

Թիավարներ, նստիքներին ամուր նստած, ձեր սրածայր պինդ թիերով
 Գուր ճեղքեցեք ծովի բունն ալիքները. գուցե և Չևան այժմ օգնի մեզ,
 Որ խուսափենք սարսնալի այս վտանգից ու հեռանանք գեթ անվնաս:
 Իսկ քեզ ահա, ո՛վ նավավար, ես տալիս եմ պատվերը իմ.
 Սրտումդ այն ամուր պահիր, զի վարում ես դեկը նստի այս գոգավոր:
 Լեռնանման ալիքներից և այս ծխից հեռու պահիր դու նավը մեր,

220 Ուղիղ դիմիր դեպ ծայրը այն, բնավ մի՛ թող, որ ծովի մեջ
 Այն աննկատ շեղ պանա, զի այդպես մահվան կտաս մեզ անխնա»:
 Այդպես ահա ես ասացի, և, հնազանդ, նրանք իմ խոսքը լսեցին,
 Բայց չառացի Սքիլլայի մասին ոչինչ, այդ անխուսափ աղետը ժանտ,
 Որ ավելի չահաբեկվեն ընկերներս ու թիերը վայր չձգեն
 Եվ, խուճապով, սև նավի մեջ, նրա ներսում չթաքնվեն:



Նկ. 5. Ողիսակի նավը լողում է Սիրենների կղզու մոտով (նկար ապիոթի վրա):

Սակայն այնժամ հույժ խիստ պատվերը Կիրկեի ես մոռացա.
 2Է՞ որ նա ինձ խորհուրդ տվեց, որ չզհնվեմ և իմ զենքով հանդես չգամ:
 Մինչ ես զենքերն իմ փառավոր արագապես այնժամ հագա, ձեռքս առա
 Երկայնաստվեր երկու նիզակ ու կանգնեցի նավաքթին.
 280 Կարծում էի, որ հենց այդտեղ հանդես կգա ժանտ Սքիլլան ծայրաբնակ,
 Որ մահառիթ աղետ քերի ընկերներին իմ տարաբախտ,
 Բայց նշմարել նրան բնավ չկարեցա, և հոգնեցին աչքերը իմ՝
 Այն միզապատ ծայրի կողմը ակնկառույց, հար նայելուց:
 Արցունքի մեջ ու վշտացած՝ մենք, լող տալով, անցնում էինք
 կածանը այդ:

Անդ մի կողմից Սքիլլան էր, իսկ մյուս կողմից աստվածագոր և ահարկու
 Քարիբդիսն էր գոռ կրանում աղի ջուրը ծովաստարած:
 Ամեն անգամ, երբ զգայում էր ջուրը նա, հանց կրակին դրված կաթսա,
 Ամբողջ ծովը, աղաբջալով, եռում էր խիստ, աղմկալի,
 Փրփուրն հուժկու թոչում, ծածկում էր գագաթները ծայրերի:
 240 Երբ կլանում էր ջուրն աղի, ծովը ներքուստ, ամբողջովին,
 Թվում էր խիստ ալեկոծման ու վիթխարի եռոցի մեջ,
 Եվ թնդում է ծայրի ջուրը աղմուկն ահեղ. երևում էր ծովի տակից
 Կապույտ ավազն: Մինչ ընդգրկեց դարուկ սարսափն ընկերներին,

Կարծես կանգնած մահվան հանդէպ՝ ահաբեկված նայում էինք
Քարիքրիստին,
Եվ հենց այդտեղ, այդ միջոցին, ժանտ Սքիլլան նավի միջից
իմ գոգավոր

Հանկարծ բռնեց ու հափափեց իմ կորովի վեց թիավար ընկերներին:
Երբ ետ դարձաւ, որ գեթ նայեմ ընկերներս ու իմ նավին,
Տեսա նրանց միայն ձեռքերն ու ոտքերը, բայց վեր հանաւ:
Ծշում էին նրանք այդպէս և ինձ կանչում անվանապէս, վերջին անգամ՝
250 Սրտերում լի աղեխարշանք, այլև վերջին վիշտն ո՛ր ցավը.
Ողիղ ինչպէս ձկնորսը անդ, կանգնած ծովի ժայռոտ ափին,
Երկայնագույն իր կարթի հետ ծովն է նետում խարուսիկ խայծ
Ու դաշտային եզան եղջյուր, հանց մի թակարդ մանր ձկանց,
Ապա դրանց, դուրս քաշելով, վերցնում է նա և շարտում դեպի ցամաք,
Սշդպէս նրանք անդ ժայռերին շարտվեցին, մինչդեռ հրեջը դժընդակ
Անձափի մեջ այնժամ նրանց հոշեց, լափեց, երբ որ նրանք
Ծշում էին և, իմ կողմը ձեռք կարկառած, կանչում էին ինձ օգնության:
Ես աղետներ շատ եմ տեսել՝ ծովային բյուր ճամփաներով թափառելիս,
Բայց աղետն այս խառագույնն էր ու ծայրահեղը, որ տեսա

260 Ահավասիկ, երբ մենք անցանք ժայռերը այդ և ահավոր
Քարիքրիստին ու Սքիլլային, հասանք կղզին այն գեղեցիկ,
աստվածային:

Սյնտեղ էին Հիպերիոն Հելիոսի խոտանարակ, լայնաճակատ,
Գեղեցկափայլ եզները և բյուր ոչխարներն ու այծերը:
Ես, տակավին ծովում, հեռու, իմ գոգավոր սև նավի մեջ,
Լավ լսեցի զի բառաչը դեպի գոմերն արդեն քշվող պերճ եզների
Եվ մայունը ոչխարների, ապա իսկույն ես հիշեցի տեղին խոսքը
Թեբացի կույր կանխագուշակ Տիրեսիասի և էացի պերճ Կիրկեի,
Որը նույնիսկ իրավացի ու խստորեն ինձ պատվիրեց
Չիջևանել մարդու համար ակնապարար Հելիոսի կղզու վրա,
270 Ուստի հիմա, արտահասաչ խոսք ասելով, ես դիմեցի ընկերներս.
«Ինձ լսեցեք, աղետակիր իմ ընկերներ, որպեսզի ձեզ

հայտնեմ ես այժմ
Պատվերները թեբեացի կույր գուշակող Տիրեսիասի
Եվ էացի պերճ Կիրկեի, որն հիրավի հրամայեց ինձ խստաբար՝
Չիջևանել մարդու համար ակնապարար Հելիոսի կղզու վրա,
Քանզի ասաց, որ մեր գլխին չարադաժան մի մեծ աղետ կթափվի անդ,
Ուստի սև նավն հեռու պահեք դուք այդ կղզուց և լող տվեք մի այլ
կողմով»:

Սշդպէս այնտեղ ես ասացի ու խորտակվեց սիրած սիրտը ընկերներս,
Եվ անհասպող Եվրիլոքոսն անեղ խոսքով ինձ առարկեց.

«Ո՛հ, ժանտագույն դու Ռիսուս, որ լցված ես միշտ եռանդով
անչափ ու մեծ.
280 Անխոնջ եմ քո անդամները, որոնք, կարծես, երկաթից են միայն
ձուլված:

Անբնությանը և խոնջանքից այսպէս տանջված ընկերներիդ
Թույլ չես տալիս, որ ոտք դնեն երկրի հողին, որ գեթ հմար
գտնեն այնտեղ,
Ծովապարփակ կղզու վրա, գոնե ընթրիքն համեղահամ պատրաստելու:
Ուստի հիմա ստիպում եմ՝ դու մթագույն այս գիշերով
Լող տալ, անցնել կղզուց հեռու և թափառել լայնածավալ ծովերի մեջ:
Մինչդեռ գիշերն են միշտ ծագում ժանտ հողմերը, խորտակիչները
նավերի.

Ինչպէ՛ս արդյոք մենք խուսափենք կործանումից անագորույն,
Երբ վրա տա և հարձակվի հանկարծակի փոթորիկը ժանտ հողմերի՝
Չոր Նոտոսի և Զեփյուռի, որ փչում են դեմ-հանդիման: Դրանք են, որ
290 Խորտակում են ծովում նավեր, նույնիսկ ընդդեմ աստվածների
անմահ կամքի,

Ուստի եկեք հնազանդվե՛նք այս սրընթաց մութ գիշերին,
Որ գեթ այստեղ պատշաճ ընթրիք մեզ պատրաստենք, այլև մնանք
մեր նավի մոտ,
Իսկ լայնալիր ծովով ապա ճամփա կընկնենք վաղ առավոտ»:
Սշդպէս ասաց Եվրիլոքոսն, և այդ խոսքը հավանեցին մյուս ընկերներն:
Այնժամ արդեն ես հասկացա, որ աստվածն է մեզ հորինում
ժանտ աղետներ

Ու, դիմելով իսկույն նրան, խոսքն ասացի ես թևավոր.
«Եվրիլոքոս, այստեղ հիմա մե՛նակ եմ ես, և դուք բռնի նեղում եք ինձ,
Սակայն եկեք և երդվեցեք դուք բոլորդ մե՛ծ երդումով հզորագոր,
Որ եթե աստ տեսնենք նախիրը եզների կամ մե՛ծ խաշիկը ոչխարի,
300 Չեք մորթոտի դուք բնավին, իբրև հանցանք մի՛ չարաշուք,
Ոչ մի հատ եզ, ոչ մի ոչխար, այլ, եղածով բավարարված,
Կը վայելեք ուտեստը մեր, որ մեզ տվեց անմահ Կիրկեն
այն ժամանակ»:

Սշդ ասացի, և պատվերին այդ համաձայն՝ նրանք իսկույն
երդում կերան:
Երբ երդվեցին նրանք այդպէս ու երդումը կատարեցին,
Մնրակառույց ու գոգավոր նավն ուղղեցինք դեպ խորափոր նավակալան,
Դեպի քաղցր ջրի ափը: Եվ դուրս եկան ընկերներս նավից իսկույն,
Հապճեպ ընթրիք պատրաստեցին ճարտարակի, հաջողությամբ:
Երբ հագեցան կերուխոտով, որքան սիրտն էր փափագում այդ,
Սկսեցին լացուկոծով արդեն հիշել ընկերներին սիրատենչիկ,
310 Որոնց լափեց ժանտ Սկիլլան՝ անակնկալ նավի միջից փակցընկելով:

Երբ որ աղպես ջայում էին, նրանց աչքին քունը իջավ քաղցրանուշիկ:
Մինչ գիշերվա մեկ երրորդն էր լոկ մնացել, երբ ասողերը մթագնեցին,
Եվ բորբոքեց ամպահավաք Ջևաը հանկարծ զարհուրելի մի փոթորիկ,
Մի պտտահողմ, և ամպերով ծածկեց համայն ծովն ու երկիրն:

Անպարագիծ, խոր երկնքից այնժամ իջավ ու տարածվեց մթին գիշեր,
Իսկ երբ ծագեց ճաճանչագեղ Արշալույսը վարդամատն,
Նավը, իսկույն ներս քաշելով, կտանեցինք քարանձավի մոտ խորափոր,
Որ հավաքվում էին անմահ հիմփաները՝ հեզ, չքնաղ պար կատարելու:
Իսկ եւ ժողով գումարեցի, ապա նրանց այնտեղ այսպես եւ ճանեցի.

320 «Բարեկամներ, արագընթաց մեր նավի մեջ խմիչք, ուտեստ
տակավին կա,

Ուստի հեռու դուք մնացեք այդ եզներից, որ չտուծենք մենք
այժմ այստեղ.

Չքնաղ եզներն, հույր ոչխարներն պատկանում են Հելիոսին հզոր արքա,
Մեծ Աստրծուն, որն ահեղ է, ամենալուր, ամենատես»:

Աղպես նրանց եւ ասացի, հնազանդվեց նրանց հոգին կորովագույն:
Մինչդեռ փշում էր ողջ ամիս Նոտուն անդուլ, և բացի այդ

Ձեր բարձրանում ոչ մի այլ հողմ: Ծնչում էին միայն Նոտուն ու Եվրոսը:
Եվ արդ, նրանք, քանի դեռ կար անդ կերակուր և մուգ գինի,

Մտահոգված կյանքի մասին, ժուժկալաքար ձեռք չը տվին պերճ
եզներին:

Սակայն շուտով, երբ սպառվեց պաշարն ամբողջ և պարենը նավի վրա,
330 Սկսեցին նրանք շրջել և ամենուր որս որոնել:

Որսում էին թռչուն ու ձուկ և ամեն բան, ինչ որ ընկներ ձեռքը իրենց,
Քաղցր ճնշում էր աստկապես, և քերվում էր որովայնը նրանց արդեն:

Այդ ժամանակ եւ դուրս եկա դեպի կղզին՝ աղոթելու աստվածներին,
Որ նրանցից մեկն ու մեկը գեթ բաց աներ ճանապարհն իմ վերադարձի:

Աղպես անցա կղզու վրա, բայց մոռացա ընկերներին: .
Անդ հողմերից պատսպարված մի տեղ գտա, ուր լվացի ձեռքերը իմ

Եվ կանչեցի այնտեղ բոլոր աստվածներին, որոնք տեղ են Օլիմպոսին,
Բայց անմահներն իմ աչքերին այդ վիճակում քուն ցանեցին

քաղցրանուշիկ,
Իսկ Եվրիլոքն ընկերների առաջ, այնտեղ, նյութեց խորհուրդը չարաղավ.

340 «Տոսքս լսեք, ո՛վ սիրելի, աղետակիր իմ ընկերներ,
Մահկանացու դժբախտ մարդուն սուկալի է ամեն տեսակ մահը իրոք,
Մինչդեռ սուրբ մահաճալը թշվառագույնն է ամենից:

Ուստի եկեք քշենք եզները լավագույն, պարարտ եզները Հելիոսի,
Բերենք, զոհենք լայնատարած երկնքի տեղ աստվածներին,

Եվ եթե մենք հասնենք մի կերպ մեր Իթակեն, սիրած երկիրը հայրենի,
Անդ վեհ տաճար անմահ պատվին Հիպերիոն Հելիոսի մենք կկանգնենք,

Ու նրա մեջ կդնենք բյուր մեր ընծաները թանկարժեք:

Իսկ եթե նա, խիստ զայրացած, հանուն պարարտ, բարձրաեղջուր
իր եզների,
Ցանկա նավը մեր խորտակել, և համամիտ լինեն նրան մյուս
աստվածներն,

350 Պատրաստ եմ եւ, սուզվելով, խորքն հուժկու այլաց, վերջ տալ կյանքիս,
Քան թե մնալ այս ամայի կղզու վրա և մահամերձ տանջվել սուրբից»:

Աղպես ասաց Եվրիլոքուն, և այդ խոսքը հավանեցին ընկերները:
Ու քշեցին նրանք իսկույն Հելիոսի պարարտ եզներն, որոնք այնտեղ,
Սևակտոց նավին մոտիկ, քաղցր արածում էին մարգի խոտը համեղ.

Ամենալավ, լայնաճակատ և կորեղջուր եզներն էին դրանք փարթամ:
Իսկույն նրանք շրջապատեցին պերճ եզներին, աղոթեցին

աստվածներին,
Ապա նրանք անդ քաղեցին թարմ տերևներ հսկա կաղնուց
բարձրասաղարթ,

Քանզի չկար ճերմակ գարի նավի վրա ճարտարակերտ:
Արդ, երբ նրանք աղոթեցին, մորթոտեցին ու քերթեցին եզները այդ,

360 Կտրատեցին ազդրերն ապա և ծածկեցին ճարպով թանձր
ու կրկնաշերտ,
Իսկ արտաքուստ դրանց վրա սեղմ դարսեցին մնացորդ միսը
կտրատված,

Սակայն չկար կարմիր գինի, որ ցողեին այդ զոհմունքին հրաբորբոք.
Փոխարենը ջուր ցանեցին, հետո դարձան ու փորոտին խորովեցին:
Մինչ փորոտին նրանք կերան այն ժամանակ, երբ այրվեցին

ազդրերն արդեն,
Իսկ մյուս միսը մանրացրին ու հագցրին շամփուրներին,
Միայն այնժամ իմ աչքերից քաղցրանուշիկ քունն հեռացավ:

Եւ շարժվեցի ու գնացի դեպ նավն արագ, դեպի ափունքն հուզվող ծովի:
Արդ, երբ արդեն եւ մոտեցա անդ մեր նավին սևակտոց,
Իսկույն ևեթ եւ զգացի վստփող ճարպի ճենճերահոտը թարմաշունչ,

370 Ապա բարձր հեկեկացի ու կանչեցի հավերժ անմահ աստվածներին.
«Ձև՛ս հայր, և դո՛ւք, ո՛վ աստվածներ հավերժակյաց ու երկնային.
Դժբախտության համար միայն իմ աչքերին քուն ցանեցիք
քաղցրանուշիկ,

Մինչ ընկերն իմ, անդ մնալով, կատարել է չարաղածան ոճիրը այս»:
Այնժամ իսկույն պերճ Լամպեոիեն նրբահագուստ, որպես բանքեր,
թուով, հայտնեց

Հիպերիոն Հելիոսին, որ մենք նրա պարարտ եզներն սպանեցինք:
Իսկ նա, սրտով խիստ քինահույզ, աստվածներին իսկույն դիմեց
և այս ասաց.

«Ձև՛ս հայր, և դուք, այլ աստվածներ հավերժակյաց, երանավետ.
Պատիժ տվեք դուք շուտափույթ ընկերներին Ողիսեսի Լաերտածին,
և այս ասաց.

Պատիժ տվեք դուք շուտափույթ ընկերներին Ողիսեսի Լաերտածին,
և այս ասաց.

Իմ եզները կոտորեցին նրանք՝ այդպես ամբարտաւան, հանդգնաբար.
380 Իմ եզներով հրճվում էի ես՝ էլներով դեպի երկինքը աստղագարդ
Ու երկնքից, պտույտ տալով, ետ դառնալիս դեպի երկիր:
Եթե նրանք պատշաճ պատիժը չտանան, հանց հատուցում,
Ես ցած կիջնեմ տունն Հադեսի և իմ լույսը կտամ միայն մեռյալներին»:
Ամբաստանաբ Ջևր նրան պատասխանեց ու խոսք ասաց.
«Ո՛վ Հելիոս, դու տակավին շարունակիր պայծառ լույս տալ

անմահներին

Ու կենարար երկրի վրա մահկանացու նաև մարդկանց,
Իսկ ես շուտով շողշողեմի իմ կայծակով արագ նավը Ռիփսևսի
Կը ջախջախեմ, շարդոսիշուր կանեմ այնտեղ, մուգ ծովի մեջ»:
Այդքանը ես անդ լսեցի գեղագանգուր Կալիպսոյից: Նա ինձ ասաց,

390 Որ իբրև թե ինքն իմացել է Հերմեսից՝ ողեցույցից:
Երբ ես արդեն վերադարձա, հասա նավին ու ծովափին,
Կշտամբեցի խստիվ նրանց՝ ամեն մեկին մոտենալով առանձնակի,
Բայց ոչ մի ելք արդեն չկար, քանզի եզներն էին արդեն անդ

կոտորված,

Հանուն որոնց աստվածները նշանակիր մի նոր հրաշք ցույց տվեցին.
Մորթիները շարժվեցին, միսը, զարկված շամփուրներից,
Հանկարծ սկսեց թունդ բառաչել, կարծես իրոք ձայնն էր հնչում

անդ եզների:

Մինչ ընկերներն իմ փրեկի այնուհետև վեց օր այնտեղ խնջույքի մեջ
Ռոտում էին միս եզների արեգական՝ միշտ լավագույնը ընտրելով:
Իսկ երբ Ջևր Կրոնոսյան շնորհեց օրը յոթերորդ,

400 Ու դադարեց միանգամայն հողմն ու մրրիկը մոլեգին,
Մենք անհասպաղ նավ նստեցինք ու շարժվեցինք լայնատարած
մուգ ծովի մեջ:

Կայմը իր տեղը տնկեցինք և սպիտակ մեր առագաստը պարզեցինք:
Կոզուց այդպես մենք հեռացանք, միևնչյն արդեն չէր երևում
երկիրն իսպառ,

Ու մեր չորս դին այնժամ կային երկինքն ու ծովն հայտերևակ:
Եվ արդ այնտեղ Կրոնոսյանն հանկարծակի մի մթագույն,
թույրաթուխ ամպ

Նետեց մեր սև նավի վրա: Խիստ մթագնեց ծովն ամպի տակ,
Բայց սրացավ դեպի առաջ նավը արագ, թեպետ և շատ
կարճ ժամանակ.

Քանզի իսկույն, մոնչալով, փչեց Ջեփյունն անագնակի,
Մրրիկն ուժեղ զարկեց, խզեց զույգ կառանները մեր կայմի,
410 Ցած գլորվեց կայմը իսկույն, և նավի ներսն ապա թափվեց նավասարքը:
Գահավիժող կայմը զարկվեց ուղիղ գլխին նավալարի,

Ջարդեց, փշրեց նրա գլուխն և ոսկորներն ամբողջովին.
Նավի վրայից նա շեշտակի, հանց մի սուզակ, գահավիժեց խորքը ծովի,
Եվ բաժանվեց իսկույն ևեթ նրա հոգին ոսկորներից:
Ջևրն անդեղի վերուստ թնդաց ու որոտաց և կայծակով զարկեց նավին.
Ցնցվեց նավը ու դողողաց՝ խորտակվելով Ջևսի անդ

շանթ-հարվածից

Եվ ծծումքի հոտով լցվեց: Ընկերներս թափվեցին ցած
Մեր սևաթույր նավի շուրջը, հորդ ալյաց մեջ՝ մմանվելով ագռավների:
Նրանք այնտեղ գալարվեցին. աստվածն այդպես զրկեց նրանց
վերադարձից:

420 Ես տակավին քայլում էի նավիս վրա, մինչ մրրիկը պոկեց նավի
Ռղնափայտը իր կողերից, որը սահեց ալիքների մեջ՝ մերկացած:
Ընկած կայմը դեռ կպած էր ողնափայտին. դրա վրա կար մի կառան,
Որը գործված էր ամրապինդ եզան կաշուց: Այդ կառանով ես պրկեցի
Ռղնափայտն ու կայմը երկար և կցեցի այդ երկուսը իրարու հետ:
Դրանց վրա մի կերպ նստած՝ ես թշվեցի անդ ծովահույզ հողմի շնչով:
Հանկարծ այնժամ լոնց Ջեփյունն, հանց մոլեգին մի փոթորիկ,
Փչեց Նոտուն արագահոս, սիրտս լցրեց ստրջանքով նա դառնադառն.
Մի գուցե ինձ քշի, տանի դեպ Քարիթիսը կործանիչ:

Ամբողջ գիշերն հորդ ալիքներն ինձ քշեցին, իսկ երբ ծագեց արևը վառ,
430 Ես անարկու Սկիլլայի, Քարիթիսի քարածայրին արդեն հասա:
Մինչ հրեշը կանում էր այդ միջոցին ջուրը աղի և ծովածուխ,
Ես անհասպաղ վեր ցատկեցի ու բռնեցի թզեմու ճյուղը բարձրաբերձ,
Ապա այդպես ծառից կախված ես մնացի, հանց մի չղջիկ:
Ոչինչ չկար ինձ հենակետ, որ գեթ ոտքով ամուր կանգնեմ կամ

վեր էլնեմ.

Քանզի նրա արմատները թաղվել էին ներքև, խորքը,
Մինչդեռ ճյուղերը բարձրուղեզ դարձել էին Քարիթիսին մի հովանի:
Կախված էի՝ սպասելով, որ հրեշն այդ գերանները պիտ գգայոի,
Թեպետ սաստիկ ուզում էի, սակայն դրանք հայտնվեցին անդ անագան:
Ուղիղ ինչպես դատավորը, որ քննելով վիճող մարդկանց գործերը բյուր,

440 Դուրս է գալիս իր ատյանից՝ ընթրիքն համեղ վալելելու,
Փորի միջից Քարիթիսի երկար կայմը ու ողնափայտը դուրս եկան:
Ես պոկեցի իմ ձեռքն ու ոտը վերևից, որ վայր ընկնեմ ուղիղ ներքև,
Ու նետվեցի ես սուրմթեր երկայնաձիգ գերաններից, նրանց միջև:
Անդ ցատկեցի նրանց վրա և սկսեցի ձեռքերովս թիավարել:
Էլ չթողեց աստվածների ու մարդկանց հայրն, որ Սկիլլան նկատի ինձ,
Ես ալյապես չէի կարող անդ խուսափել չարադաժան իմ օրհասից:
Ուղիղ ինձ օր քաշքշվեցի ես ծովի մեջ. տասներորդ օրը, գիշերով,
Դեպի կղզին այն՝ Օգիգիե աստվածները ինձ նետեցին,

Որ ապրում է պերճ Կալիպսոն. գեղեցկաձայն ու վարսագեղ
աստվածուհին

450 Ինձ հոգատար անդ փայփայեց, բայց ինչո՞ւ եմ պատմում քեզ այդ.
Չէ՞ որ երեկ, դեռ քո տան մեջ, այդ ամենը ես պատմեցի
Քեզ ու վսեմ քո թագուհուն, մինչ ինձ համար այժմ, հարկավ,
Անահաճո է կրկին պատմել այն, որ արդեն պատմվել է:

Ե ը գ տ ա ս ն ե ր ե ք ե ր ո թ ղ

ՈՂԻՍԵՎԱԸ ՓԵԱԿՆԵՐԻ ՈՒՂԵԿՑՈՒԹՅԱՄԲ
ԺԱՄԱՆՈՒՄ Է ԻԹԱԿԵ

Այդպես ասաց լուռության մեջ՝ նրանք բոլորն անխոս էին՝
Լցված խորունկ ճիւղացմունքով ապարանքում ստվերախիտ:
Նրան այնժամ պատասխանեց և խոսք ասաց Ալկինոսը:
«Քանի որ դու, ո՛վ Ողիսես, այժմ եկել ես ապարանքն իմ
Պղնձաշեն, բարձրակոտոր, անշուշտ հիմա, կարծում եմ ես,

ես կը գնաս

Դու անարգել, անարհավիրք, թեպետ շատ ես կրել տանջանք

ու պատուհաս:

Եվ այժմ ահա ձեզ եմ դիմում ես իմ խոսքով, ձեզ բոլորիդ,

Որ սովոր եք այս իմ տան մեջ ըմպել գինի միշտ հրաշեկ,

հաճեց մեծարանք,

Նաև լինել լավ ունկընդիր վեճ երգիչի պերճ երգերին.

- 10 Հյուրի համար այս սնդուկում՝ գեղեցկափայլ ու ողորկված,
Արդեն դրված են զգեստներ, ճարտարակերտ ոսկեղեններ և ընծաներ,
Որ քերել են իրեն նվեր փեակները խորհրդական:
Եկե՛ք ձոնենք ամեն մեկս և մի-մի սառն ու մեծագույն Լոռուսանի,
Իսկ ես դրանց փոխարենը՝ հետո ազգից տուրք ու հարկեր կհավաքեմ.
Ծառ դժվար է մեկի համար միանգամից տալ այդպիսի պերճ նվերներ»:
Այդպես ասաց Ալկինոսը, հավանեցին այդ խորհուրդը բոլորեքյան:
Սպա նրանք ցրիվ եկան, ամեն մեկը իր տուն գնաց բուն մտնելու:
Իսկ երբ ծագեց խոր խավարից ճամնաչափեղ Արշալույսը վարդամատն,
Նրանք իսկույն շտապեցին դեպի նավը՝ տանելով պերճ պղինձն ամուր:
20 Մտքը գործությունն Ալկինոսի՝ նավը նայեց, նստիքների տակ, ամենուր
Տեղափոխեց նվերները փեակների և ստուգեց նա խնամքով,
Որ թխավար նավորդներին չխանգարեն, երբ թիերը ծովը թակեն:
Բոլորն ապա տունը եկան Ալկինոսի և սարքեցին մեծ խրախճանք:

Սուրբ գործությունն Ալկիմոսի մոլորել տվեց մի պարսրտ եզ
նրանց համար
Եվ Կրոնոսյան, ամպրոպային Չևսի համար, որ թագավորն է ամենքի:
Ազդրերն արագ խորովեցին, խրախճանքում գերապայծառ
Հրճվում էին հոգեզվարճ: Իսկ նրանց մեջ մարդկանց արտին մեծարելի
Վեհ երգիչը՝ աստվածախոս Դեմոդոկը, երգն էր հնչում սքանչելի:
Բայց Ռոխսան հաճախ թեքում էր գլուխն իր դեպի արևն.

30 Որ շուտափույթ նա մայր մտնի, քանզի տենչում էր անհասարակ
փափագում էր,
ճանապարհվել,
Ինչպես գեղջուկն է շուտափույթ դեպի ընթրիքն իր ցանկալի: Ամբողջ օրը
Նրա արտի մեջ նորահերկ սևեզները քաշում էին գութանն ամուր.
Եվ նա հիմա, սրտատրոփ սպասելով, որ մայր մտնի արևն իսկույն,
Մեծափափագ շուտափույթ է շուտ ընթրելու, և իր ծնկներն են դողդոջուն:
Ռոխսան էլ, երբ մայր մտավ լույս արևը, խնդաց իսկույն սրտակարոտ
Եվ թիասեր փեակներին նա բարբառեց, այսպես խոսեց՝
Նամանավանդ խոսքն ուղղելով գործությանը Ալկիմոսի.
«Ալկիմոս, որ մարդկանց մեջ գերհուշակ ես ու մեծափառ,
Հեղո՛ւմ արեք անմահներին և ինձ շուտով ճանապարհեք, որ ես գնամ,
40 Արդ, ո՛ղջ լերուք, կատարվեց այն, որ փափագում էր իմ հոգին

կարոտալի.
Արդեն պատրաստ են նավն արագ, պերճ ընծաներն: Ո՛հ աստվածներ
օլիմպակյաց,
Այժմ եղեք դուք բարեհաճ, որ գեթ շուտով ես տուն դառնամ
Եվ անվնաս գտնեմ կնոջն իմ անբասիր, այլև մարդկանց սիրակարոտ:
Իսկ դուք այստեղ բարո՛ւյ մնաք գերամեծար ձեր կանանց հետ
Չեր որդոց հետ: Թող շնորհեն անմահները ձեզ բարիքներ ամեն տեսակ,
Թող գերծ պահեն աղետներից ձեր ազգն հավերժ աստվածները
երկնաքնակ»:

Ասաց այդպես, նրանք բոլորն, հավանելով խոսքերը այդ,
Քանզի խոսեց իրավացի, որոշեցին հյուրին հապճեպ ճանապարհել:
Մինչ բանքերին այդ ժամանակ այս խոսքն ասաց գործությունը
Ալկիմոսի.

50 «Ո՛վ Պոնտոնոս, խառնի՛ր գինին խառնարանում և բաժանի՛ր
իմ հարկի տակ
Դու բոլորին, որպեսզի մենք, աղոթելով աստվածահայր Չևս զգոնին,
Հյուրին հաջող ճամփա դնենք դեպ սիրելի իր երկիրը, դեպ հայրենիք»:
Ասաց այդպես, և Պոնտոնոսն ոտքի կանգնեց, խառնեց գինին
այն մեղրանուշ
Ու բաժանեց ամեն մեկին: Այդպես նրանք յուրաքանչյուրն իր տեղն
բազմած,

Կատարեցին իսկույն հեղում երկնքի տեր աստվածներին:
Այնուհետև ոտքի ելավ Ռոխսան աստվածային
Եվ ընդձեռեց Արեւտեին ըմպակն իսկույն կրկնահասակ,
Ապա, նրան նա դիմելով, ասաց այս խոսքը թեւալոր.
«Ո՛ղջ լեր, խնդա դու հավիտյան, վեհ թագուհիդ, մինչև որ գա
60 Ծերությունը և օրհասը, որ վիճակված են միշտ մարդկանց:
Հրճի՛ր ընթրիշտ այս հարկի տակ, զավակներիդ հետ միասին,
Ամբողջ ազգի և Ալկիմոս թագավորի հետ գերակա»:
Այդպես ասաց Ռոխսան աստվածագարն և դուրս եկավ՝

շեմքն անցնելով:

Իսկ բանքերին հրամայեց վեհ գործությունն Ալկիմոսի՝
Սուղեղորդի դեպ ճեպընջաց նավը նրան, դեպի ափունքը ծովածեծ:
Բայց նրանց հետ ինքն՝ Արեւտե, հոգեց ստրուկ նաժիշտներին իր սիրելի.
Նա նրանցից մեկին հանձնեց պերճ մի բանկոն և լվացված ու

մաքրազարդ

Մի պատմուճան: Իսկ երկրորդին հանձնեց տանել մի ամբակոտ,
սիրուճ արկղիկ,
Ապա երրորդն անավ, տարավ հաց և գինի անուշահամ ու կարճարիայ:

70 Արդ, երբ դրանք եկան հասան արագ նավին ու ծովափին,
Իրերն ամբողջ ընդունեցին թիավարները քաջունակ,
Խմիչքն, ուտեստն և ամեն բան վերցրին, դրին անդ, լայնահիստ
նավի վրա:

Ռոխսան համար այնտեղ արագ նավի նավախելում գորգ փռեցին,
Նաև պատտառ, որ նա քնի մեղմ ու հանգիստ, անդորրի մեջ:
Եվ Ռոխսան վեր բարձրացավ նավի վրա, պտուկեց այնտեղ
մունջ ու լոկի:

Նավորդները շարքով, կարգով նստուեցին նստիքներին,
Կառանները արձակեցին ծակված քարից, որն այնտեղ կար,
Եվ, թեքվելով, ծովը իսկույն եռանդալի ակոսեցին կոկ թիերով:
Մինչ աչքերին Ռոխսանի իջավ քունը անդորրավետ,

80 Խոր, անվրդով ու անուշիկ, որ նման է, կարծես, մահվան:
Եվ պացավ նավը արագ: Ինչպես դաշտում կորովալիք, չորս ձիերը,
Կարգով լծված ու միասին, հարվածների տակ մտրակի
Վեր են ցատկում, ստրում են սուր և մոլեգին ու շուտափույթ
կտրում ճամփան,

Այդպես անա նավախելն էր ասես թոշում, իսկ ետևից
Չարկվում էին և թոշկոտում մութ ալիքներն հավերժագոյ,

հուզվող ծովի:

Նավն էր սահում սլաքի պես դեպի առաջ, փութանակի և անվտանգ,
Եվ չէր կարող հասնել նրան նույնիսկ բազեն, արագագույնը հավքերից:
Այդպես արագ սլանալով և ճեղքելով ծովի լայն կործքը ալեկոճ՝

Այն իր վրա տանում էր մեծ մի հերոսի, աստվածագոր մտքերի տեր,
90 Որն իր հոգով բյուրաբազում կրեց տանջանք ու աղետներ.
Տեսավ մարդկանց կոիվն ահեղ, փորձեց ծովի հուզմունքն ու
քենը ահավոր:

Մինչ բնած էր նա այժմ հանգիստ՝ տառապանքներն իր մոռացած:
Երբ որ ծագեց մութ երկնքում պայծառաշող այն լուսաստղը,
Որ նախորդում է վաղորդյան ճանանչագեղ Արշալույսին,
Ծովագնաց արագ նավը եկավ կանգնեց կղզու ափին:
Կա Իթակե երկրում մի խոր նավակայան՝ նվեր Փորկիս ծովածերին.
Ապառաժուտ սեպ ափունքի՝ ծովում ցցված երկու թևերն են
կազմել այն,

Որոնք բնավ թույլ չեն տալիս, որ հողմերը հուզված ծովից
հարկ ալիքներ նետեն այնտեղ: Գեղեցկակերտ նավերն արագ,
100 Ավարտելով իրենց ուղին, միշտ աներկյուղ կանգնում են անդ՝
Սուանց կապի և անկասուն: Ծայրամասում ծովածոցի,
հարձր մի տեղ, կա ձիթենի տերևախիտ, քաջագանգուր,
Որին մոտիկ կա քարանձավ մի մթագույն, բայց դուրեկան, արտահաճո:
Իս սրբավայրն է ծովահարս նիմփաների, որոնց նայաղ են անվանում:
Քարայրում կան խառնարաններ և վիմակերտ շատ կահույրներ,
Այն բազում բնակավայրած մեղրաճանձեր՝ մեղրը իրենց անդ ստեղծող:
Ծառ կան այնտեղ և վիմակերտ մեծ հաստոցներ, որոնց վրա
նայաղները
Գործում են պերն և շտապույն հագուստեղեն՝ աչքի համար
սքանչելիք:

Զուր կա այնտեղ հավերժահոս ջինջ աղբյուրի, կա երկու մուտք
և երկու դուռ,
110 Մեկն ուղղված է դեպի հյուսիս և մատչելի մարդկանց համար,
Երկրորդն, ուղղված դեպի հարավ, մուտքն է անմահ աստվածների:
Այդ ուղիով երբեք մարդիկ չեն անց կենում, աստվածային է դա միայն:
Անդ կանգ սուան նավորդները, որ նախապես լավ գիտեին
այդ տեղերը.

Սրընթաց նավը կհսով չափ ցամաքի մեջ ցցվեց իսկույն,
Քանզի ուժգին նրան մղեց դեպի առաջ հզոր ձեռքը թիավարի:
Եվ ամբակոտ նավից նրանք դեպի ցամաքն իջան այնտեղ:
Ռդիսուսին, որ պատառի և պերն գորգի վրա պտկած էր տակավին
Եվ քնի մեջ խորասուզված, նավախելից վերցրին զգույշ
Եվ խնամքով ափն իջեցրին ու դրեցին անդ, ավազի վրա փափուկ:

120 Ապա գույքը ցած բերեցին, որ փեակները վեհապանծ,
Մեծահոգի Աթենասի քաջ օգնությամբ նվիրեցին,
Եվ դարսեցին ամբողջովին թզենու տակ՝ մի կույտի մեջ,
Ճանապարհից հեռու, մի կողմ ու մեկուսի, որ ոչ մի մարդ անցորդներից

Այն շշորթի կամ ձեռք չտա, մինչ Ռդիսուսը արթնանա,
Իսկ իրենք էլ՝ վերադարձան, տուն գնացին: Մինչ Պոսիդոնն
երկրասասան

Զմոռացավ, թե ինչպես էր աստվածային Ռդիսուսին՝ սպառնացել
Մի ժամանակ, ուստի գնաց, որ Զևսից մի խորհուրդ հարցնի.
«Զևս հայր, չե՞ որ ինձ այնու հավերժ անմահ աստվածները
չեն մեծարի,
Երբ անարգում են ինձ մարդիկ մահկանացու, ինչպես սրանք,
ահավասիկ,

130 Փեակները, որոնք նույնիսկ իմ ցեղից են և ինձանից սերված միայն:
Ես գիտեի, որ Ռդիսուսը տուն կը գա, բայց աղետներ կրելուց ետ,
Եվ իսկապես միտք չունեի ես խափանել դարձը նրա դեպ հայրենիք,
Մի բան, որ դու սահմանել ես քո ակնարկով և նախօրոք:
Մինչդեռ սրանք, խոր նավի մեջ ծովն անցնելով, նրան, քնի մեջ
խորասույզ,
Իթակեի ափ հասցրին, այն նրան շնորհեցին այժմ, ապաքեն,
Բյուր ընծաներ, ոսկի, պղինձ, հագուստեղեն ու նկարեն ձեռագործներ
Եվ այնքան շատ ու բազմազան, որ Ռդիսուսը Տրոյացից իսկ չէր բերի,
Եթե ետ գար նա անվտանգ՝ ստանալով իր բաժինը մեծ ավարի»:
Այնժամ նրան, հանց պատասխան, ասաց Զևսը անպահավաք.

140 «Այդ ի՞նչ խոսք էր, որ ասացիր, մեծափառը երկրատատան,
Երբեք անարգ քեզ չեն անի աստվածները, և ժանտալի գործ կլինե՞ր՝
Ենթարկել վեհ, երիցագույն մեծ աստծուն եպերելի սորջանքի:
Սակայն եթե մահկանացու մարդկանցից մեկն, իր գործության
վրա վստահ,
Քեզ չի հարգում կամ մեծարում, դու կարող ես նրան լինել վրեժխնդիր:
Վարվի՛ր, ինչպես կցանկանաս, ինչպես իրոք հաճելի է քո վեհ սրտին»:
Պատասխանեց իսկույն նրան Պոսիդոնը երկրասասան.

«Ես իսկապես այդ կանեի, ինչպես դու ճիշտ պատվիրեցիր,
ամպրոպային,
Բայց քաշվում եմ՝ պատկանելով քո գործության, քո գերագոր
կամքի առաջ,
Բայց այժմ ահա փեակների պերճապանույն նավն ուզում եմ
ես խորտակել:
Ահավասիկ՝ այն անհապաղ ետ է դառնում հավերժագոյ, մթին ծովով.

150 Կը ջախջախեմ, որ դադարեն գեթ ողնկցել մարդկանց դեպի
հողն հայրենի,
Եվ կպատեմ քաղաքն իրենց ես լեռներով անանցնելի ու բարձրաբերձ»:
Պատասխանեց անպահավաք Զևսը նրան և խոսք ասաց.
«Ո՛հ, սիրելիս, ինձ, իմ սրտին թվում է արդ, որ լավագույնն է առավել,

Եթե նալն այդ, ետ դառնալիս, դու ծովափին դարձնես մի ժայռ
նախանման,
Եվ քաղաքից այդ գործն ամբողջ ազգը տեսնի ու զարմանա,
Որպեսզի միշտ սքանչանան մահկանացու բոլոր մարդիկ,
Նամանավանդ, եթե քաղաքը բարձրաբերձ դու լեռներով

Հրջապատես»:

160 Լսելով այդ՝ երկրասասան Պոսիդոնը շարժվեց, գնաց դեպի Սքերիա,
Որ բնակվում են փեակներն: Անդ կանգ առավ և սպասեց,
Մինչդեռ նալը, ետ դառնալով, արագորեն ու սրընթաց եկավ արդեն
Ու տեղ հասավ: Եվ մոտեցավ իսկույն աստվածն երկրատատան
Ու նալն այնտեղ դարձրեց մի ժայռ, վարսեց ապա ժայռը գետնին՝
Հարված տալով ձեռքի ափով, և ինքն իսկույն անհետացավ:
Իսկ մեծափառ, վես նավաստիք՝ փեակները թիակասեր,
Խիստ զարմացած՝ անդ սկսեցին իրարու հետ զրույց անել,
Եվ, նայելով իրար դեմքի, այս թեալիոր խոսքն ասացին.
«Ավա՛ղ, վա՛յ ինձ, այդ ո՞վ արդյոք մեր սև նալը, արագորեն

ետ դառնալիս,

Ծովում այսպես զուր կաշկանդեց: Չէ՞ որ այն մեր աչքի դեմ էր»:

Այդպես նրանք խոսում էին, բայց չիմացան՝ գործը ինչպես անդ

կատարվեց:

170 Եվ բարբառեց այդ ժամանակ Ալկինոսն, այս խոսքն ասաց.

«Ավա՛ղ, իմ հոր գուշակումը կատարվում է արդեն հիմա:

Ասում էր նա, որ մեզ վրա զայրացած է Պոսիդոնը սաստկապես,

Քանզի մարդկանց մենք անվտանգ ուղեկցում ենք ամենուրեք:

Պատմում էր, որ փեակների ամրակառույց նալը մի օր,

Ծանապարհից ետ դառնալով, վերադարձին, մութ ծովի մեջ կկործանվի,

Եվ կպատի Պոսիդոնը մեր քաղաքը շուրջանակի մեծ լեռներով:

Այդպես ասում էր ծերունին, և ամեն ինչ կատարվում է այժմ իսկ և իսկ:

Սակայն եկեք բոլորեքյան կատարենք այն, ինչ որ հիմա

ես կասեմ ձեզ.

Եկեք իրոք մենք դադարենք մարդկանց այլևս նանապարհել,

180 Երբ մեր քաղաքը գան մարդիկ, իսկ երկրակալ Պոսիդոնին

Եկեք զոհենք տասներկու եզ, որ ողորմած լինի դեպ մեզ,

Որ չպատի մեր քաղաքը նա լեռներով անանցանելի ու բարձրաբերձ»:

Ասաց այդպես, սարսափեցին նրանք սաստիկ և սկսեցին զոհ

պատրաստել:

Մինչդեռ այդպես փեակների առաջնորդներն, իշխանները խորհրդակալան

Ջերմ աղոթում էին այնտեղ Պոսիդոնին իշխանագոր՝

Կանգնած նրա բազինի մոտ, անդ արթնացավ Ոդիսևսը

աստվածագարմ,

Որ բնած էր հողի վրա իր հայրենի: Չը ճանաչեց նա երկիրն իր,
Չի շատ վաղուց էր բացակա, և նրա շուրջը լայնածիր
Ցանեց Պալլաս Աթենասը՝ աստվածուհի դուստրը Ջևսի, թանձր խավար,

190 Որ չտեսնի ոչ որ նրան, մինչև ինքը խրատներ տա,
Եվ որպեսզի չճանաչեն նրան կինը, ընկերներն ու քաղաքացիք,
Մինչև չտեսնի նա իր վրեժն ամբարտավան և անամոթ խոսնայրներից:
Ռուսի թվում էր արքային անդ ամեն բան տարօրինակ՝

Ե՛վ նեղ ու խիտ ուղիները, հարմար ծոցն ու նավակայքը,

Ե՛վ գահավեժ սպառածներն, և՛ բողբոջած բարձր ծառերն:

Նա գահավեժ, կանգնեց այնտեղ, հայացք նետեց իր այդ երկիրն
հայրենավանդ,

Ու լաց եղավ նա դառնադառն, ձեռքով թակեց իր ազդրերը,

Լացակումած այս խոսքն ասաց, խոսքը խորունկ հառաչանքի.

«Ա՛խ, ո՞ր մարդկանց երկիրն է սա, ես, դժբախտս, այս ո՞ր հասա:

200 Գուցե այստեղ ապրում են չար, դաժան, մարդիկ, ամբարտավան
և անօրեն,

Սակայն գուցե հյուրասեր են և վանատուր կամ սիրտ ունեն

աստվածավախ:

Ո՛հ, ո՞ր տանեմ իմ գույքերն այս բազմաբազում, ո՞ր գնամ ես.

Ա՛խ, երանի ես մնայի այնտեղ, երկրում փեակների:

Ես այդ դեպքում կզնայի մի այլ վսեմ ու փառահեղ արքայի մոտ,

Եվ նա գուցե ինձ ընդուներ սիրով, սրտանց և առաքեր ինձ հայրենիք:

Մինչդեռ հիմա ես չգիտեմ, արդյոք գույքերն այս ո՞ր պահեմ,

Ինչպե՛ս և ո՞ր պիտի թաքցնեմ, որ չը դառնան սրանք ավար

մեկ ուրիշի:

Ուրեմն այսպես՝ փեակների առաջնորդներն և իշխանները մեծամեծ

Մարդիկ չէին ամենևին արդարախոս ու խելացի,

210 Քանզի նրանք ինձ բերել են մի այլ աշխարհ, մինչ խոստացան

Տանել իրոք ինձ Իթակե հայտերևակ: Սակայն, ավա՛ղ, ինձ խաբեցին:

Թող որ պատժի նրանց Ջևսը, աղոթողի հովանավորն ամենագետ.

Նա նայում է մարդկանց հավերժ, մեղանչողին միշտ պատժում է,

Նա է տերը արդարադատ: Բայց ե՛կ նայեմ և ստուգեմ գույքերը իմ,

Գուցե նրանք որևէ բան վերցրին, տարան նալի վրա»:

Եվ նա իսկույն սկսեց հաշվել գեղեցկափայլ եռոտանիք, կաթսաները,

Ոսկին, այլև պերճ գգեստները, ձեռագործը մեծափառթամ և ամեն ինչ:

Պակաս չկար, և սկսեց նա սրտավեր ողբալ երկիրն իր հայրենի:

Նա վշտաբեկ թափառում էր անդ, բազմագոչ ծովի ափին,

220 Հեծում անդուլ, սրտամորմոք: Եվ մոտեցավ այնժամ նրան Աթենասը՝

Տեսքով նման երիտասարդ, գիրգ մի մարդու, ջահել հովվի,

Մի պատանու՝ արքայազուն մահուկներին անգամ նման:

Իր ուներին գցած ուներ նա կրկնաձայ լայն պատմունան,

Իսկ ոտքերին՝ հագած մուկեր շողշողենի, տեգ միգակը ձեռքին բռնած:
Երբ Ռոփսեսն իրեն տեսավ, ուրախացավ և ընդատաչ իսկույն գնաց
Ու, դիմելով ապա նրան, այսպես խոսեց և խոսքն ասաց իր թևավոր.
«Ո՞ն, սիրելիդ, քեզ եմ ահա այս երկրի մեջ առաջինը հանդիպում ես.
Ողջո՞ւյն, կարծեմ, չար միտումով չես մտնեցել դու ինձ հիմա,

բարեկամս:

Դու ազատի՛ր գույքն այս, գանձը, փրկիր և ինձ. աղերսում եմ քեզ

սրտագին

230 Եվ ճիշտ ինչպես մի աստըծու, կփաթաթվեմ ես ծնկներին քո սիրելի:

Արդ այս ասա դու նաև ինձ, ճիշտը պատմիր, որ իմանամ.

Ի՞նչ երկիր է սա իսկապես, ի՞նչ ազգություն, ի՞նչ մարդիկ են

ապրում այստեղ:

Գուցե թե սա մի կղզի է՝ հեռովից-հեռու հայտերևակ,

Գուցե բերրի մի ցամաքի ափունքն է սա, ծովին այսպես

ամուր հենված»:

Եվ բարբառեց այնժամ նրան Աթեննաը պայծառաչյա.

«Հիմա՛ր ես դու, օտարական կամ հեռավոր երկրից ես այստեղ եկել,

Որ այդպիսի հարց ես տալիս մի այսպիսի երկրի մասին:

Սա այնքան էլ անփառունակ մի երկիր չէ, որի մասին շատ լավ գիտեն

Բյուրաբազում ժողովուրդներ, որ ապրում են արևելքում, անդ,

առընթեր

240 Արշալույսին, կամ բնակվում են միգախառն արևմուտքում:

Թեպետ և սա բարբարոս է և առապար, ճիարշավին շատ անհարմար

Եվ աղքատ է տարածությամբ, բայց և այնպես անպտուղ չէ ամենևին:

Առատորեն սա հաց ունի, որքան ուզես, քաղցր գինի միշտ կա այստեղ,

Տեղում են աստ հորդ անձրևներ, ցողն է այստեղ միշտ բարեբեր,

Պերճ արոտներ կան եզներին ու այծերին, անտառներ կան

բազմապիսի,

Աղբյուրներն են ամբողջ տարի աստ կարկաչուն և ջրառատ,

Եվ անունն է Իթակեի, օտարական, նույնիսկ հասել մինչև Իլիոն,

Որն, ասում են, հեռու է շատ չքնաղ երկրից արեացոց»:

Ասաց այդպես, խնդաց իսկույն Ռոփսեսը բազմահնար և դյուցազուն,

250 Հրճվեց հոգով, երբ որ լսեց բարի համբավն իր հայրենի երկրի մասին,

Ինչպես որ այդ պատմեց Պալլաս Աթենասը, դուստրը Ջևսի

ասաբարակիր:

Ուստի դիմեց իսկույն նրան և խոսքն ասաց իր թևավոր

ու բարձրաձայն,

Բայց չխոսեց ճմարտացի, այլ բարբառեց նենգ ու խարդախ.

«Իթակեի մասին, հարկավ, լսել եմ ես Կրետեում լայնատարած,

Որն հեռու է, ծովից այն կողմ: Այժմ ես նկա և բերեցի գույքն այս,

գանձը,

Մի այդքան էլ ես թողեցի զավակներիս, ապա փախա ես այնտեղից,
Քանզի ես անդ սպանեցի Իդոմենի սիրած որդուն քաջակորով,—

Օրսիրոքին արագավազ: Նա լայնալիր Կրետեում մահկանացու

Եվ հացակեր բոլոր մարդկանց հաղթահարեց արագությամբ իր ոտքերի:

260 Նա ցանկանում էր ինձ զրկել տրոյական իմ ավարից ամբողջովին,

Հանուն որի ես կրեցի բյուրաբազում վիշտ ու աղետ և տառապանք

Ու փորձեցի մարդկանց ահեղ կոծկները, ահն ու խոնջանքը ծովի մեջ:

Խիստ զայրացած էր նա իմ դեմ. անդ, Տրոյայում չը կամեցա

եւ ծառայել

Նրա հորը, քանզի սիրած ընկերներիս առաջնորդը այնժամ դարձա,

Ուստի նրան, երբ նա դաշտից ետ էր գալիս, ընկերներիս հետ միասին,

Ծանապարհին դարան մտած, սպանեցի պղնձատուր տեգ-միգակով,

Բայց մթագույն գիշերն իսկույն ծածկեց երկինքն, և ոչ մի մարդ

մեզ չտեսավ:

Այդպես նրան այնտեղ կյանքից ես զրկեցի և հոգին էլ ես շորթեցի,

Իսկ երբ նրան կործանեցի տեգ-միգակով պղնձասայր,

270 Իսկույն եկա դեպի նավը փառապասկ փյունիկեցոց,

Աղերսեցի՝ նրանց տալով որոշ մի մասն իմ լավագույն, մեծ ավարի,

Հորդորեցի թախանձագին, որ ինձ տանեն, հասցնեն Պիրոս

Կամ թե Էլիս աստվածաշեն, որ իշխում են Էպիացիք:

Սակայն նրանց, ընդդեմ իրենց իսկ ցանկության, գորությունը

ժանտ հողմերի

Հեռու քեց այդ վայրերից, թեպետ իրենք խաբել բնավ չէին ուզում:

Այնուհետև մենք, մոլորված, թափառեցինք և մութ գիշերն

այստեղ հասանք:

Նավը հագիվ, դժվարությամբ մենք քաշեցինք նավակայան,

Ոչ որ ընթրիքն էլ չհիշեց, թեպետ կարիքն ստիպում էր մեզ չափազանց,

Այլ, սև նավից ցած իջնելով, պտկեցինք աստ, ծովի ափին,

280 Եվ իմ վրա, որ չազափանց հոգնած էի, քունը իջավ քաղցրամուշիկ:

Մինչ խորափոր նավից նրանք ցած բերելով գանձն իմ, գույքը,

Դարսել էին աստ, ավազին, ուր ես քնած էի խորունկ:

Իրենք ապա, նավ նստելով, մեկնել էին դեպ Սիդոնե պերճաբնակ:

Եվ մնացի ես աստ տխուր, սրտահառաչ, այսպես ահա մեն ու մենակ»:

Ասաց այդպես, իսկույն ժպտաց Աթենասը, պայծառաչյա

աստվածուհին,

Ու փայփայեց նրան ձեռքով, բայց անհասապա տեսք ընդունեց

նա մի կնոջ՝

Գեղեցկափայլ, քաջահասակ, արվեստի մեջ քաջատեղյակ և իմաստուն:

Եվ այդ տեսքով նրան դարձավ ու թևավոր իր խոսքն ասաց

նա բարձրաձայն.

«Գերխաբեթա նենգողն անգամ, թեկուզ հենց դա աստված լինի,

290 Անկարող է քեզ իսկապես գերազանցել խաբեությանը ու նենգությանը:
 Ո՞ր դու թշվառ, չես հազեցել բշտը խորամանկ ու խարդախիչ
 քո գործերով:
 Մի՞թե նույնիսկ հայրենիքում չես դատարում նենգել, խաբել,
 ո՞վ խորամանկ,
 կամ սուտ ճանել, որ քեզ այդքան հաճելի է քո մանկության
 դեռ օրերից:
 Բայց այդ մասին թողնենք խոսել, երկուսովս էլ խորամանկ ենք
 մենք չափազանց.
 Դու մարդկանց մեջ մանկանացու գերազանց ես խելքով, խոսքով,
 Իսկ ես, չէ՞ որ հռչակված եմ կաճառի մեջ աստվածների՝
 Իմաստալի խելացությանը և նենգությանը իմ խորամանկ:
 Ինչպե՞ս է, որ այժմ ինձ՝ Պալլաս Աթենասին, Ջևաի դատրին,
 դու չիմացար,
 Ինձ, որ բոլոր ժանտ գործերում եղել եմ միշտ քեզ գորավիզ
 ու պահապան,
 300 Որ դրդեցի փեակներին քեզ մեծարել և չափազանց սիրել սրտանց
 Ու արդ հիմա պատեղ եկա, որ քեզ օգնեմ լավ խորհրդով՝
 Ինչպե՞ս պանել գույքն այդ, գանձը, որ փեակներն հռչակավոր
 Իմ խորհրդով նվիրեցին քեզ, դեպի տուն ետ դառնալիս:
 Արդ, ասում եմ. քեզ վիճակված է տակավին քո հռչակապ,
 չեն հարկի տակ
 Տանջանք կրել ու տառապանք, բայց հանդուրժիր, քանզի պետք է այդ,
 հիրավի:
 Բայց տակավին դու մի հայտնիր այժմ ոչ ոքի, տղամարդկանց
 և կամ կանանց,
 Թե դու իրոք ետ ես եկել թափառումից, դեռ բազմաբշտը վիշտ և աղետ
 Աստ չարաչար քեզ հալածող փուշ մարդկանցից պիտի կրես
 դու լույսայն»:
 Պատասխանեց նրան իսկույն Ռիսանսը ամենհիմաց.
 310 «Ի՞նչպիսին է մանկանացու մարդու համար, թեկուզ լինի նա իմաստուն,
 Քեզ ճանաչել, աստվածունի, տեսքդ անվերջ դու փոխում ես,
 Բայց և գիտեմ ես ստուգապես, որ դու ստաջ բարյացակամ էիր
 դեպ ինձ՝
 Այն ժամանակ, երբ Տրոյայում մարտում էինք մենք՝ արեյանք:
 Մակայն երբ մենք ավերեցինք Պրիամոսի հարուստ քաղաքը
 բարձրաբերձ
 Ու հեռացանք մեր նավերով, բայց արեյանց աստվածն արեց
 անդ ցիրուցան,
 Ես այնուհետ ոչ մի անգամ քեզ չեմ տեսել, դուստր Ջևաի,
 Չեմ նկատել, որ իմ նավին մոտենալիր՝ ազատելու ինձ տանջանքից,

Այլ վշտակիր, սրտակոտոր թափառել եմ ես ամեն օր,
 Մինչև որ ինձ այժմ աստվածները փրկեցին աղետներից:
 320 Մակայն ստաջ, փեակների քերքի երկրում, դու ինձ իրոք
 Քո խորհրդով հորդորեցիր, ապա տարար նրանց քաղաքն:
 Եվ արդ հիմա, հաճուն քո հոր, Ջևա զգոնի, աղաչում եմ ես ծնկաչոք,
 Քանզի բնավ չեմ հավատում, որ եկել եմ ես Իթակե հայտերևակ
 Ու դեռ կարծես դեգերում եմ ես այլ երկրում. կարծեմ և դու
 Ծաղրում ես ինձ՝ ցանկանալով սիրուս թաղել մթության մեջ
 մոլորության:
 Ուստի ասա, ճի՞շտ է արդյոք, որ հասել եմ ես հայրենիքն իմ սիրելի»:
 Իսկույն նրան պատասխանեց Աթենասը՝ աստվածունիին պայծառաչյա.
 «Ի՞նչ քո սրտում միշտ միևնույն ոգին ունես, ո՞վ Ռիսեսս,
 Ուստի և քեզ ես չեմ կարող անօգ թողնել ձախորդության մեջ
 տարաբախտ,
 330 Քանզի քաջ ես դու խորհմաց, հնարագետ և ողջամիտ,
 Մինչ այլ մի մարդ, թափառումից նոր ետ եկած, անշուշտ իսկույն
 Պիտ պանար դեպի տունն իր, որ շուտ տեսնի անդ իր որդոց
 և կնոջն իր:
 Իսկ դու ահա չես էլ հարցնում, որ իմանաս, այլ նախապես
 Ցանկանում ես քո կնոջը փորձել ստույգ: Արդ, նա իրոք
 Քո տանն է դեռ, բայց սրտավեր և հանապազ ջալքանքով լի.
 Ողբում է նա գիշեր-ցերեկ արտոսրախառն ու սրտաքնկ,
 Իսկ ես երբեք չեմ կասկածել, այլ գիտեի անտարակույս,
 Որ դու անշուշտ ետ կը դառնաս, սակայն գրկված քո սիրելի
 ընկերներից:
 Բայց և այնպես չէի ուզում մարտել ընդդեմ իմ հորեղբայր Պոսիդոնի,
 340 Նա դեպի քեզ սրտով խորունկ դիակալ է և քինահույզ.
 Չայրացած է, որ դու որդուն իր սիրելի կուրացրիր:
 Եվ արդ հիմա, որպեսզի դու լավ համոզվես, քեզ ցույց կտամ
 ես Իթակեն:
 Սա է ահա ծովածերուկ այն փորկիսի նավակայանը, ապաքեն,
 Իսկ առընթեր ծովածոցին, տես, կանգնած է սաղարթաշատ
 այն թզենին:
 Դրան մոտիկ դեռ կա քարայրը մթագույն և զովաշունչ,
 Արբավայրը հավերժահարս ծովալքների, որոնց նաչադ են անվանում:
 Սա իսկ և իսկ այն անձավն է լալն, սովերոտ, որտեղ հաճախ
 Հարյուրանգ զոհ ես բերել դու այդ ծովալք նիոփաներին,
 Իսկ սա Ներիտոն լեռն է, որ ծածկված է մացառներով անտառախիտ»:
 350 Այդ ասելով, աստվածունիին մեզը ցրեց, բացվեց շուրջը,
 Խնդաց խորունկ, հրճվեց հովով Ռիսեսսը բազմաշարչար,

Երբ որ տեսաւ իր հայրենի երկիրն այդպէս. հողն համբուրեց
նա կենաստու,
Ապա իսկույն, իր ձեռքերը վեր կարկատած, իր խոսքն ուղղեց
նիսիսաներին:
«Դստերք Ջևսի, հավերժ հարսներ, ո՛վ նայադներ, ո՛հ, ես երբեք
հույս չունեի,

Որ ձեզ կրկին պիտի տեսնեմ: Ողջունում եմ ձեզ ես սրտանց,
Ուխտն ընդունեք իմ բերկրալից: Ինչպէս առաջ, ձեզ կձոնեմ
պերճ պարզներ,
Եթե թույլ տա ավարաբաշխ դուստրը Ջևսի, որ ես ապրեմ
դեռ կենսունակ,

Այլն օգնի, որ լավ աճի և գորանա իմ գաղթակը սիրանվեր»:
Իսկույն նրան պատասխանեց Աթենասը, պայծառաշլա աստվածուհին.
360 «Վստահ եղիր և այդպիսի դու հոգսերով մի կաշկանդիր այժմ քո հոգին,
Այլ եկ գնանք և անձալում գաղտնի մի տեղ մենք որոնենք,
Ու անդ պահենք գույքդ, գանձդ, որ անվնաս մնան դրանք.
Այնուհետև կմտածենք՝ ինչպե՛ս վարել գործերը քո, ինչպէս հարկն է»:
Այդ ասելով՝ աստվածուհին շուտ ներս մտաւ քարանձաւը այն մթագույն
Եվ որոնեց հարմար անկյուն ամենուրեք, իսկ Ռդիսեսն
Շուտ ներս տարաւ անդ ամեն ինչ, պղինձն ամուր, ոսկին փայլուն,
Հրաշալի զգեստները, ընծաները փեակների:
Մինչդեռ Պալլաս Աթենասը, ասպարակիր Ջևսի դուստրը,
Այդ ամենը դարսեց կարգին, իսկ մուտքի մտք քար գլորեց
մի վիթխարի,

370 Եվ բազմեցին ապա նրանք անդ, սրբազան թգեհու տակ:
Այդպէս նրանք խորհում էին՝ ինչպե՛ս նյութել խոսնայրներիս
մահ ու պատիժ:

Եվ Աթենաս աստվածուհին այսպէս խոսեց ու խոսք ասաց.
«Դյուցասնունդ Լաերտածին, ո՛վ Ռդիսես բազմահնար,
Լա՛վ մտածիր՝ ինչպե՛ս ձեռքիդ հարկածն ուղղես խոսնայրներիս
այդ անամոթ.

Նրանք արդեն երեք տարի իշխում են աստ, քո տանն, իբրև
խնամախոս՝

Աստվածակերպ քո վեհ կնոջն՝ խոստանալով նրան բազում
պերճ պարզներ:

Իսկ նա, միայն դարձիդ մասին մտահոգված, ջայլում է միշտ
սրտակոտոր,

Հույս է տալիս նա բորբին, առանձնապէս խոստանում է ամեն մեկին,
Որախ լուրեր հղում նույնիսկ, սակայն այլ բան է խորհում նա
իր սրտի մեջ»:

380 Այնժամ նրան պատասխանեց Ռդիսեսը խոհեմամիտ.

«Ավա՛դ, ուրեմն ուղիղ ինչպէս Ագամեմնոն Ատրիդեսը,
Պետք է և ես կործանվեի իմ հարկի տակ դաժան մահով օրհասական,
Եթե դու ինձ, աստվածուհիդ, այդ ամենը չպատմեիր:

Եվ արդ, հիմա ինձ խորհուրդ տուր, ինչպե՛ս արդյոք պետք է լուծել
վրեժը այդ:

Ինձ մտ կանգնիր ինքդ հիմա, քաջախիզախ, հզոր ոգի ինձ ներշնչիր,
Որպիսին ես միշտ ունեի պատերազմում այն ժամանակ,

Երբ մենք անվախ խորտակեցինք ամրակառույց պարիսպները
սուրբ Տրոյայի:

Եթե օգնես դու ինձ, խաժա՛կն, ուժ ու կորով ինձ ներշնչես,
հանց գորավիզ,

Պատրաստ եմ ես կռիվ մղել նույնիսկ բազում, երեք հարյուր
քաջերի դեմ»:

390 Նրան իսկույն պատասխանեց աստվածուհին պայծառառետս.

«Անշուշտ քեզ հետ ես կլինեմ և չեմ թողնի քեզ մեն-մենակ,
Երբ սկսենք մենք այդ գործը: Կարծեմ, շուտով սեղեխները
այդ անամոթ,

Որ անխնա վատնում են քո գույքը ու գանձը շարունակ,
Պիտ ոռոգեն շեմքը քո տան իրենց արշաւք և ուղեղով՝ հողին ընկած:

Բայց ուզում եմ ես քեզ դարձնել մահկանացու մարդկանց համար
չճանաչվող.

Կնձիռներով ես կը ծածկեմ փայլուն մաշկը քո այդ ճկուն անդամների,
Գլխիդ խարտուշ քո մազերը կը վերացնեմ, պատուոված ձորձ
կը հագցնեմ,

Որ բոլորը, քեզ նայելիս, խոր նողկանքով զգվեն իսկույն,
Իսկ քո չքնաղ այդ աչքերը ես կը դարձնեմ մուր և աղոտ:

400 Արդ՝ դու այդպէս գարշ, այլանդակ հանդես կը գաս խոսնայրներին,
Քո պերճ կնոջն ու քո որդուն, որին, մանուկ, թողել էիր դու՝ քո
տան մեջ:

Այժմ դու գնա նախ և առաջ, հասիր այնտեղ խոզարածին քո բարեգութ,
Որ հսկիչն է երամակի և բարեկամն է քո ազնիվ:

Նա սիրում է և՛ քո որդուն, և՛ խորհմաց Պենելոպե վեհ կնոջդ:
Դու կգտնես նրան այնտեղ, խոզերի մոտ, որ արոնում արածում են
ողջ և առողջ՝

Անդ, Կորակոս ժայռի շուրջը և առնթեր Արեթուսա հորդ աղբյուրի,

Եվ ուտում են առատագույն այնտեղ կաղին, խմում են ջուրը սևաթուր:
Այդպէս աճում, գորանում են խոզերը քո պարարտ և հույր:

Ահավասիկ, այնտեղ նստիր և ամեն ինչ խոզարածից դու իմացիր,
410 Մինչև որ ես գնամ Սպարտա, այդ քաղաքը՝ լի կանանցով
գեղեցկառես,

Որ ետ կանչեմ Տեղեմաքին՝ սիրատենչիկ քո զավակին:
Լակեղեմոն երկրում է նա լայնատարած, ապարանքում Մենելայի,
Որ նա գնաց, որ քո մասին լուր իմանա. արդոք դու կա՞ս,

թե՞ էլ չկաս»:

Եվ Ռդիսեսն ամենագետ պատասխանեց իսկույն նրան ու խոսք ասաց.
«Ինչո՞ւ նրան այդ չասացիր, չէ՞ որ ամեն ինչ լավ գիտես.

Գուցե միայն նրա համար, որ նաև նա տանջանքով լի միշտ թափառի
Հավերժագոչ ծովերի մեջ, մինչ ուրիշներն պիտի լափեն գույքը նրա»:
Նրան այնժամ պատասխանեց աստվածուհին, պայծառատես Աթենասը.

420 «Անհոգ եղիր նրա մասին, մի՛ վախենա, երկյուղ չկա,
Ես եմ նրան անդ առաքել, որ մեծաշուք փառք վաստակի՝
Այդ վե՛ն՝ գործը կատարելով. անվիշտ է նա այնտեղ իսպառ,

ողջ և առողջ:

Ատրիդեսի տանն է նստած նա անվրդով, վայելքով լի և անպակաս:
Թեպետ ջահել խոսնայրները, սև նավի մեջ դարանամուտ

թաքնված արդեն,

Կուգեն նրան ոչնչացնել, նախքան նա գա, վերադառնա իր հայրենիք,
Բայց չեմ կարծում, որ գլուխ գա այդ ձեռնարկը, ավելի շուտ

երկիրն իր մեջ

Թաղելու է խոսնայրներին, որ լափում են քո գույքերը քո հարկի տակ»:
Ասաց այդպես Աթենասը և իր ցուպը քսեց, հպեց Ռդիսեսին,
Կենհոներով ծածկեց իսկույն քնքուշ մաշկը նրա ճկուն անդամների,
Ոչնչացան նրա գլխի մազերը վառ, խարտիշագեղ,

430 Ամբողջ մարմնով անմիջապես նա նմանվեց մի ծերուկի:

Աղոտ դարձրեց, այլանդակեց, նրա աչքերը գեղեցիկ,
Վրան գցեց վատթարագույն մի ցնցոտի, պատմունճանի մի մնացորդ՝
Կեղտոտ ու ճողկ, պատառոտված և ծխի մեջ խիստ մրտոված

ու գարշահոտ,

Վերուտ ծածկեց արագավազ մի եղնիկի անմազ կաշվով,
Ձեռքը դրեց նաև մի ցուպ, ապա կախեց նրա ուսին զագիր մի պարկ՝
Գարշ, հնամաշ, խիստ ծակծկված և ոլորուն փոկին կցված,
Եվ, միտքը այդ հավանելով, բաժանվեցին: Մինչ Աթենասը՝ դիցուհին,
Թռավ դեպի Լակեղեմոն աստվածային, դեպի որդին Ռդիսեսի:

Ե Ր Գ Ա Վ Ա Ն Ն Ո Ր Ա Ե Ր Ո Ր Ղ

ՈՂԻՍԵՎԱԸ ԵՎՄԵՈՍԻ ՄՈՏ

Ռդիսեսը ծովածոցից ուղղվեց դեպի լեռնաշավիղը քարքարոտ
Անցավ վայրերն անտառախիտ, ուր, ըստ ցուցմանն Աթենասի,
Բնակվում էր խոզարածը աստվածակերպ, որ առավել հոգածությամբ
Պահպանում էր գույքը տիրոջ, քան մյուս բոլոր ծառաները Ռդիսեսի:
Եվ նա նրան գտավ նստած անդ, գավիթում լայնատարած:
Բակը շինված էր բաց տեղում, շուրջանակի հայտերևակ,
Գեղեցկակերտ ու բարձրաբերձ, մեծակառույց ու բոլորակ:
Դա շինել էր խոզարածը, հանց խոզաբուն, երբ թագավորն էր բացակա,
Սակայն առանց թույլտվության և՛ տանտիկնոջ, և՛ գառամյալ Լաերտեսի:

10 Ծորջը պատել էր թփերով նա թանձրափուշ և քարերով մեծ ու ամուր,
Ապա դրսից, երկու կողմից, բաշել էր նա պիրկ ցանկապատ՝

Կեղևները արդեն պոկված կաղնու տոկուն խիտ ցցերից,
Իսկ բակի մեջ շինել էր նա տաաններկու խոր խոզանոց
Իրար կողքի, հանց խոզերի խշտի և բուն, և դրանցից ամեն մեկում
Գետնաթափալ պատկում էին հիսուն հոլի, փակված խոզեր:
Արու խոզերը գիշերում էին դրսում, խշտիներին, և շատ չէին.

Դրանց թիվը պակասում էր, լափում էին սեղեխները աստվածային:
Եվ խոզարածն ստիպված էր հաճույքների համար նրանց՝
Միշտ ուղարկել այդ պարսպուն որձ խոզերից ընտիրներին:

20 Երեք հարյուր վաթսուն էին ընդամենը դրանք թլով.
Միշտ դրանց մոտ քնում էին չորս գամփոներ գազանակերպ,
Որոնց առատ կերակրում էր խոզարածն այդ մարդկանց իշխան:
Ծերուկ հովիվն այդ ժամանակ պատրաստում էր իր ոտքերին

չքեղ մուկեր՝

Կտրատելով պերճ, գունավոր եզան կաշին: Մյուս հովիվներն
Ցրվել էին ամենուրեք, երեք հոգի խոզերն էին տարել հանդը,
Իսկ չորրորդին նա ակամա ուղարկել էր արդեն քաղաք՝
Խոզ տանելու ամբարտավան խոսնայրներին, որ անդ նրանք

Չոհ կատարեն, որ հագենան նրա մտով սրտերը ժամտ:

Ռոհիսուսին հանկարծ տեսան այդ գամփոռներն անվերջ հաչող

30 Ու կատարի, զիլ հաչոցով հարձակվեցին նրա վրա,
Բայց Ռոհիսուսը խորամանկ իսկույն նստեց և իր ցուպը գցեց գետին:
Քիչ մնաց որ նա խայտառակ փորձանքի գար այդ կարվածում

իր սեփական,

Մինչ խոզարածն շտապ քայլերով անապարեց իսկույն նեթ
Եվ դուրս վազեց լայն գավթոցից՝ վայր գցելով ձեռքից կաշին,
Ու, սաստկաբար գոռոռալով, նա շներին սաստեց հուժկու և մեծագոչ-

Քարեր նետեց նրանց վրա զայրագնաբար, ապա խոսեց իր տիրոջ հետ-
«Մհ, ծերունիդ, քիչ էր մնում, որ շները գզգզեին քեզ հանկարծակի,
Եվ այդ բանը ինձ կծածկեր քարվականքով ամոթալի:

Առանց այդ էլ աստվածները ինձ տվել են այս հառաչանքը տանջալի-

40 Ես, վշտակիր, ողբում եմ միշտ իմ արքային աստվածային

Ու շատերին կեր եմ տալիս, որ լափվեն պարարտաճարայ խոզերը իմ,
Մինչ նա, գուցե, ուտեստների, հացի կարոտ ու ձեռնունայն,
Թափառում է դեպի օտար, այլալեզու քաղաքներն ու երկրները-

Կամ ո՞վ գիտի, կենդանի՞ է նա տակալին, տեսնո՞ւմ է նա լույսն Արևի:

Բայց ե՛կ, ծերուկ, տունս գնանք, որ դու սրտանց անդ հագենաս

Գեթ ուտեստով, այլև գինով: Այնուհետև, ինչպես հարկն է,

ինձ կը պատմես,

Թե ո՞վ ես դու կամ որտեղի՞ց, ի՞նչ անդեռներ ես դու կրել»:

Ասաց այդպես ու տուն տարավ իսկույն նրան խոզարածը աստվածային

Եվ անհապաղ գետնին փռեց խիտ ու դալար կանաչ ճյուղեր,

50 Հարթեց ձեռքով և վերևից փռեց ապա նա թավամազ մի այծենի՝

Իր անկողինը մշտական, որի վրա բազմել տվեց իսկույն նրան:

Ուրախացավ Ռոհիսուսը, որ ընդունեց խոզարածը, ուստի սասց-

«Քե՞զ, հյուրընկալ, թող տան Չևսը և այլ անմահ աստվածները

Այն, ինչ սրտանց կցանկանաս, քանզի այսքան ինձ սրտալի

ընդունեցիր»:

Այսպես նրան ի պատասխան խոսք սասցիր ո՞վ էվմեոս դու խոզարած

«Օտարակա՛ն, վայել չէ, որ հյուր եկվորին անարգ ու վա՛տ

ես ընդունեմ,

Թեկուզ լինի նա ավելի քեզնից նվաստ, քանզի հյուրեր ու մուրիկներ

Միայն Չևսից են մեզ գալիս: Քիչ եմ տալիս, բայց տալիս եմ

ես սրտալի,

Այդ է՛ սակայն հեզ վիճակը ծառաների միշտ երկյուղած,

60 Երբ իշխում են նրանց վրա նոր տերերը երիտասարդ:

Մինչ երևի աստվածները կարկանդեցին վերադարձը իմ արքայի,

Որ սիրում էր ինձ հոգատար, և այնքա՛ն ինձ գույք պիտի տար,

Որքան տալիս է քարեսիրտ տանուտերը հավատարիմ իր ծառային:

Նա ինձ և՛ տուն կտար անշուշտ և՛ լավ կարված, կտար և կին
քազմախոսնայր,

Հանց ազնվագույն մի ծառայի, գործը որի աստված կանի արդյունավետ,
Ինչպես իմ գործն է այժմ ար չեն արգասավոր, քանի հովիվ եմ ես արի:
Օտտ-շատ քարիք դեռ կընծայեր ինձ իմ արքան, եթե այստեղ

նա ծերանար,

Բայց նա կորավ: Երանի՞ թե կորչեր զարմը Հեղինեի այն չարաղետ,
Քանզի չէ՞ որ հանուն նրա ծունկը ծալվեց բյուրաբազում մեծ քաջերի,

70 Եվ նա նույնպես, հանուն միայն Ագամեմնոնն դյուցազունի,

Գնաց Էլիոն ձիահարուստ, որպեսզի անդ կույի ընդդեմ տրոյացոց»:

Ասաց այդպես, հապճեպ քաշեց, պատմունանի վրա պնդեց նա իր գոտին

Եվ դուրս եկավ ու ծիր գնաց նա խոզանոց, ուր խոճկորներն

էին փակված:

Վերցրեց, բերեց երկու խոճկոր. երկուսին էլ նա մորթոտեց,

Քերթեց ապա ու կտրատեց, շամփոռներին իսկույն զարկեց:

Երբ խորովեց ու փատրաստեց նա բոլորը շամփոռներով ու ջերմորեն

Բերեց տվեց Ռոհիսուսին, ցանեց վրան գարի այլորը սպիտակ:

Ապա շոտով խառնարանում խառնեց գինին մեղրանուշիկ,

Նստեց հետո դեմ-հանդիման և խոսքն սասց քաղցր ու խոհեմ-

80 «Անո՞ւշ արա, կե՛ր, ո՞վ եկվոր. ծառաների բաժինը այս խոճկորներն են,

Մինչ սեղեխներն ազամ լափում են միշտ խոզեր պարարտաճարայ՝

Չանց աննելով, որ կա պատիժն աստվածների, այլև գույթը և գորովը:

Բայց չեն սիրում երանավետ աստվածները գործերը չար,

Միայն մարդկանց վեհ գործին են նրանք տալիս լավ հատուցում:

Աստվածների պատժից անեղ իրենց սրտում և հոգու մեջ

Վախենում են անգամ ոտիս ու չարագործ բոլոր մարդիկ,

Որոնք անցնում են հեռավոր, օտար երկիր և ավարը Չևսի տված,

Հավաքելով նավերի մեջ, վերադառնում, այդպես բերում են հայրենիք:

Գուցե, սակայն, սեղեխներն այս, աստվածներին այժմ ձայնալուր,

90 Մի բան գիտեն իմ արքայի մահվան մասին և չեն ուզում, հանց վայելույ

Խնամախոս, կարգին վարվել թագուհու հետ կամ ետ գնալ տներն իրենց,

Այլ անխնա ու ստոնասիրտ վատնում, լափում են վիսաբար

գույքը ամբողջ,

Չի ամեն օր, ամեն գիշեր, որոնք նույնպես սահմանված են

Չևսի կամքով,

Մրանք զոհում, կոտորում են ո՛չ թե չափով, օրը մի հատ

կամ իսկ երկուսն,

Այլ շատերին և գինին էլ արդեն լափում, ոչնչացնում են չափից դուրս:

Մինչ իմ տիրոջ հարստությունն անապատ էր, և այդքան գույք

Չի ունեցել ոչ մի հերոս կամ քաջազուն՝ թե՛ ցամաքի մեջ սևաթույր,

Եվ թե՛ նույնիսկ Իթակեում, այլ միասին քսան դյուցազն իսկ մեծաշուք

Այդքան մեծ գույք չեն ունեցել: Եվ կարող եմ քեզ թվարկել ես միսումի-
100 Տասններկու եզնանախիր կար ցամաքում, Աույնքան խաշիկը
Եվ ձիշտ Աույնքան խոզերամակ, Աույնքան այծի մեծ հորաններ,
Որ արածում են սեփական կամ թե օտար հովիվների խնամքի տակ:
Նան այստեղ, Իթակեում, կան տասններկ այծի հոտեր,
Որոնք առատ արածում են սահմանի մոտ, խնամքի տակ

ազնիվ մարդկանց:

Հովիվներից ամեն մեկը խոսնայրներին քերում է միշտ օրը մի այծ,
Այն էլ ինչպե՛ս. լավագույնը ու ընտիրը պարսպոտներից:
Ես էլ այստեղ, ահախասիկ, պահպանում եմ խոզեր միայն,
Եվ առաքում նրանց համար այս խոզերից լավագույնը»:
Ասաց այդպես. Ռդիսևը ուտում էր միսն ազահորեն, խմում գինին
110 Եվ իր մտքում հորինում էր խոսնայրներին վրեժ և մահ:
Երբ նա կերավ և իր սրտին հագուրդ տվեց այդ լիովին,
Եվ մտաք լցրեց բաժակն, որով ինքն էր ըմպում գինին այդ լուսաշող,
Եվ այն տվեց եկվոր հյուրին. ընդունելով՝ Ռդիսևը խնդաց հոգով
Ու բարձրաձայն դիմեց իսկույն խոզարածին և խոսքն ասաց իր թևավոր.
«Ո՛հ, սիրելիդ, ո՛վ էր այն քաջ դյուցազունը, որ գնեց քեզ.

Հարո՛ւտ էր նա, քաջակորո՛վ, ինչպես արդեն դու պատմեցիր:
Դու ասում ես՝ նա կործանվեց պատվի համար Ազանեմնոն մեծ հերոսի,
Պատմիր դու ինձ. գուցե և ես գիտեմ նրան, հանդիպել եմ գուցե մի տեղ:
Թեպետ միայն Ջևար գիտի այդ ամենը, նաև անմահ այլ աստվածներն,
120 Գուցե և ես մի լուր տամ քեզ, բանգի չե՛ որ թափառել եմ
եւ շատ ու շատ»:

Այնժամ նրան պատասխանեց խոզարածը՝ լավագույնը հովիվներից.
«Ո՛հ դու ծերուկ, եթե Աույնիսկ շրջիկներից մեկնումեկը նրա մասին
Համբավ քերի, չի համոզի նա բնավին նրա կնոջն ու սիրելի
իր զավակին:

Մինչ թափառող, շրջիկ մարդիկ անապատում և անխնամ
Ստո՛ւմ են միշտ, չեն ցանկանում խոսքը ասել ճշմարտացի:
Եվ իսկապես, ով գալիս է, թափառելով, մեր Իթակեն,
Ներկայանում է մեր տիկնոջն ու զանազան բանե՛ր պատմում
սուտ և անհույս:

Նա էլ դրանց ընդունում է շատ սիրալիր, հարցմունք անում
միշտ մտահույզ,
Վշտանում է ապա աստիկ և արտասուք թափում անվերջ
ու դառնադառն,

130 Ինչպես հատուկ է այն կանանց, որոնց անբախտ ամուսինն է
հեռվում կորած:
Նույնպես և դո՛ւ, հեզ ծերունիդ, իրավ, հեքիաթ պիտի պատմես
մեզ մի ցանցստ,

Եթե քեզ տան մի ցնցոտի, մի պատմունձան կամ մի բաճկոն,
որպես մի վարձ:
Մինչդեռ, կարծես, թերևս արդեն արագ շներն և թռչունները գիշատիչ
Մաշկն են նրա ոսկորներից վաղուց քերթել, և թռել է հոգին մարմնից,
Կամ լափել են նրան ձկները ծովի մեջ, իսկ ոսկորները ծովափին
Թերևս հիմա ընկած են դեռ՝ խիտ ավազով Աույնիսկ ծածկված:
Այդպե՛ս եղավ կորուստն անբախտ, բայց նա այստեղ թողեց
մարդկանց իր սիրելի,

Ինձ մանավանդ՝ վիշտ ու ջալլանք: Մինչդեռ երբեք էլ չեմ գտնի
140 Ես այդպիսի ազնվամեծար, սիրալիր տեր, ուր որ լինեմ, ուր որ գնամ,
Թեկուզ Աույնիսկ վերադառնամ կրկին դեպի հայրն ու մայրն իմ
բարեխնամ,

Դեպի մեր տուն, որտեղ մի օր ծնվել եմ ես, սնվել նրանց
խնամքի տակ:
Ո՛չ, իմ վիշտը նրանց համար չէ բնավին, թեպետ սրտանց,
մեծախափազ

Կը ցանկանամ գնալ երկիրն իմ հայրենի և գեթ տեսնել նրանց աչքով:
Ուտի ես այժմ ողբ եմ անում տարաշխարհիկ Ռդիսևսի համար միայն:
Ավա՛ղ, հյուր իմ, պատկառում եմ նրան Աույնիսկ անվամբ կոչել,
Այնքա՛ն էր ինձ նա միշտ սիրում և այնքա՛ն էր ինձ հոգատար
ո՛ւր արտալի,

Որ ես նրան, թեպետ չկա և հեռու է, պիտ անվանեմ միշտ սիրելի»:
Այնժամ ասաց խոսքն իր նրան բազմաշարձար Ռդիսևը աստվածազուն.
150 «Բարեկա՛մս, թեպետ և դու դրժում ես և չես հավատում ամենևին,
Որ Ռդիսևը պիտի գա, և սիրոն է քո կասկածանքով լցված հիմա,
Բայց ես ոչ թե միայն խոսքով, այդ պիտ ասեմ, այլ կը երդվեմ,
Որ Ռդիսևն ետ կը դառնա, իսկ դու նվեր ինձ պատրաստիր,
Իբր ավետչյա: Երբ նա իրոք վերադառնա, իր շեմքն անցնի
և տուն մտնի,

Ինձ կընձայես մի լավ հագուստ. մի բաճկոն և մի պատմունձան:
Իսկ նախքան այդ՝ նվերն, հարկավ, չեմ ընդունի, թեպետ շատ մեծ
կարիք ունեմ:

Ժանտ Հադեսի դռների պես տտելի՛ է ինձ համար նա՛,
Ով, իսկապես, իր կարիքին հետևելով, սուտ է խոսում, կեղծում է զուր:
Երդվում եմ արդ՝ ես անունով աստվածների, աստվածահայր նաև Ջևսի,
160 Այս սեղանով հյուրամեծար և օջախով ազնվաբարո Ռդիսևսի,
Որի տունն եմ ես այժմ եկել. կկատարվի այն ինչ անա
հայտնում եմ քեզ,

Հենց ա՛յս տարի. մինչ իր ուղին արևն անցնի, Ռդիսևը արդեն կգա,
Երբ այս ամիսը վերջանա, նա մյուս ամսին ետ կդառնա
Ու իր վրեժն այն ժամանակ այստեղ կտոնի նա բոլորից,

Ով հանդուհանդ աճարգեղ իր կնոջը և չքնաղ որդուն»:

Այճամ, նրան ի պատասխան, խոսք ասացիր դու, Եվմենու,
ո՛վ խոզարած-

«Ո՛հ, ծերունիդ, ո՛չ ես կտամ քեզ որևէ աչքաբուսանք,
եվ ո՛չ էլ իսկ Ողիսեսը ետ կը դառնա և տուն կը գա,
Այ դու հանգիստ խմիր գինին ու եկ խոսենք մենք այլ մի բան,
իսկ այդ մասին»

170 Մի վրդովիր հուշերը իմ, բանգի սիրտս իմ կրծքի տակ
տանջվում է խիստ,

Երբ մեկնումեկն հիշեցնում է ինձ արքային իմ փառավոր:
Թողնենք նաև երդումը այդ. եթե իրոք Ողիսեսը վերադառնա,
Ապա ուրեմն այդ կլինի սիրակարոտ կատարումը իմ փափագի,
Պենեկուպի, ծեր Լաերտի և անբասիր, աստվածակերպ Տելեմաքի:
Բայց ես աստիկ վշտացած եմ որդու համար, Ողիսեսից ծնունդ առած
Տելեմաքի, որին չէ՞ որ աստվածները լավ սնեցին, հանց շատավղի,
Ու ես արտանց կարծում էի, որ մարդկանց մեջ մահկանացու
Նա գերհրաշխեքով, տեսքով վատ չի լինի, բան սիրելի հայրը իր մեծ:
Մի՞նչդեռ հինա աստվածներից կամ մարդկանցից մեկը նրան

խելքից հանեց,

171 Ու գնացել է սուրբ Պիլոս նա այժմ արդեն, որ հոր մասին լուր ստանա,
Իսկ խոսակցուները մեծարգո սպասում են դարանամուտ,
Որ սպանեն տուն ետ գալիս, որպեսզի զարմն աստվածակերպ
Արկիսիոսի

Իջակեում անփառունակ ոչնչանա ու վերանա:
Սակայն թողնենք խոսել նաև նրա մասին. գուցե իրոք նա կործանվի
եվ կամ գուցե Կրո նույնի մեծ գորությանը ու ձեռքի տակ
խույս տա մահից:
Բայց դու, ծերո՛ւկ, պատմիր ինձ այժմ այն աղետներն, որ կրել ես
դու իսկապես:

Այդ, ինձ ասա ճշմարտացի, որպեսզի լավ իմանամ ես.
Ի՞նչ մարդ ես դու կամ ո՞ր ցեղից, կամ որտե՞ղ եմ ծնողներդ,
բաղաբք բո:
Ո՞ւմ նավով ես այստեղ եկել, ինչպե՞ս արդյոք նավորդները
հասցրին քեզ

180 Աստ, Իջակե: Ովքե՞ր էին, ինչպե՞ս էին կոչվում նրանք.
Քանզի գիտեմ, դու հետիոտն չէիր կարող գալ ու հասնել երկիրը այս:
Իսկույն նրան պատասխանեց և խոսք ասաց Ողիսեսը բազմահմար.
«Ճշմարիտը և ամեն ինչ քեզ կպատմեմ ես անթերի,
Սակայն եթե երկարատև, շատ ժամանակ, մի ողջ տարի,
Նստած այստեղ, սեղանի շուրջ, քաղցր գինին ու ուտեստը վայելելով,
Այսպես խնջուք մենք անեինք հանգստացած և անվրդով,

Իսկ մեր գործը ուրիշն էր կատարելին, և ես անվերջ պատմեի քեզ,
Նույնիսկ այդպե՛ս գլխ ովս անցած աղետների երկար խոսքը
չէր վերջանա,

Աղետների ու դառնության, որ կրել եմ կամքով անմահ աստվածների:
200 Ծնվել եմ ես անդ, լայնալիր Կրետեում, և դրանով եմ միշտ հպարտ:
Ես զավակն եմ մեծահարուստ, քաջ մի մարդու, բայց նա ուներ
և այլ որդիք,

Որոնք, ծնված օրինական մի կնոջից, սնվում էին տանը նրա:
Իսկ իմ մայրը հարձ էր միայն, մի սարուկ կին, որին գնել էր նա մի օր:
Սակայն հայրս՝ ազնիվ Կաստոր Հիլակյանը, միշտ հարգում էր
ինձ հավասար,

Օրինական իր որդոց սխե. այդ ծագումով արդ կարող եմ ես պարծենալ:
Կրետեի ազգերի մեջ աստրծու պես հարգված էր նա,
Իբրև հարուստ մի մեծագույ, իբր անբասիր քաջ զավակներ
ունեցող մարդ:

Ահավասիկ՝ ճակատագիրը մահակուր հղեց նրան տունն Հադեսի:
Հանդուգն ու վես նրա որդիք գույքը նրա ամբողջովին

210 Իրարու մեջ և վիճակով բաժանեցին այդ ժամանակ,
Իսկ ինձ գույքից տվին միայն չնչին մասը, մի աննշան, փոքրիկ տնակ:
Ես կին առա՝ պերճ դասրիկի մեծահարուստ ծնողների,
Եվ այդ միայն՝ շնորհիվ իմ քաջարության: Թույլ չէի ես,
Ոչ էլ վախկոտ, այլ միշտ խիզախ և մարտունակ, բայց այդ բոլորն
անցյալում է:

Երբ դու, կարծեմ, հարդն ես տեսնում, արտն ու բերքը պիտ ճանաչես:
Հարդ եմ ես այժմ, ինձ տանջե՛լ են բյուր բյուրավոր վիշտն ու աղետը
չափազանց:

Ինձ Աթենասն ու Արեսը շնորհեցին քաջախիզախ ուժ և կորով
եվ հաղթական հանդգնություն: Ես, մեծագոր և ընտրովի քաջերի հետ
Դարանամուտ, քաջ մարտելիս, մահ ու կորուստ էի բերում իմ թշնամուն:

220 Սիրտս երբեք չէր վրդովվում մահվան ահով թշնամու դեմ,
Որ գերազանց էր ինձանից ուրբով արագ: Նետվում էի դեպի առաջ՝
Նախահարձակ, ջարդում էի տեգ միզակով: Այդպես էի ես կովի մեջ,
Ինձ հաճելի չէին բնավ ո՛չ դաշտային աշխատանքներն,
Ո՛չ էլ հոգսերը տնային կամ մեծափառ կրթությունը զավակների,
Այլ ես արտանց սիրում էի նավերն արագ, թիավարվող,
Մարտակոխվել, ողորկագույն տեգ-միզակը և թևավոր սլաքները,
Այն, որ այլոց միշտ թվում է զարհուրելի ու դժնդակ:
Ես նրանո՛վ էի հրճվում, ինչ որ աստված հաստատել էր իմ հոգու մեջ,
Չի ա՛յն գործն է աստիկ սիրում ամեն մի մարդ, որն հատուկ է
նրա սրտին:

230 Նախքան որդիք աքեացոց արշավեցին դեպի Տրոյա,

Ես ի՞նչ անգամ քաջերի հետ ու նավերով արագընթաց
 Հաջողակի արշավեցի ընդդէմ օտար և թշնամի հզոր մարդկանց,
 Հարուստ ավար գրավեցի, և, բացի այդ, ինձ վիճակով էլ շատ հասավ:
 Տունս արագ բարգաւաճեց, լցվեց անբավ հարստությամբ բազմապիսի,
 Ու շատ շուտով Կրեւտեում ես կորովի, գերամեծար մի մարդ դարձա:
 Իսկ երբ Ջևար որոտագոչ հորինեց ժանտ ճանապարհը արշավանքի,
 Որն, արդարև, ծալեց ծնկները բյուրավոր մեծ քաջերի,
 Որոշեցին այդ ժամանակ, որ ես, նաև Իդոմենևար մեծափստ,
 Արագ նավով պիտի շարժվենք դեպի Իլիոն: Էլ մերժելու հնար չկար,
 240 Զի այդպիսին էր վճիռը մեծապահանջ, ժանտ ամբոխի:
 Եվ շարունակ ի՞նչ տարի անդ կովեցինք մենք, զավակներս արեւանց:
 Մինչ տասներորդ տարում միայն, երբ քաղաքը Պրիամոսի ավերեցինք,
 Մենք նավերով տուն ետ եկանք: Բայց արեւանց ցրիվ տվեց
 կամքն աստըծու,
 Եվ Ջևան զգոն իմ հեզ գլխին թափեց ցավեր ու աղետներ
 դժբախտության:
 Լոկ մի ամիս կարողացա մնալ իմ տանն, իմ հարկի տակ,
 Որ հրճվեցի զավակներուս, օրինական իմ կնոջով, այլև գույքով:
 Եվ ինձ հանկարծ սիրտս դրդեց սարքավորված խոր նավերով,
 Աստվածակերպ ընկերներին հետ միասին, լող տալ, գնալ
 դեպ Եգիպտոս:
 Ու սարքեցի ես ինը նավ. հավաքվեցին համհարզներս բազմաբազում:
 250 Իմ սիրելի ընկերները անդ շարունակ, վեց ամբողջ օր,
 Խրախճանքներ կատարեցին. ես շատ զոհեր մատուցեցի
 աստվածներին,
 Նույնիսկ եզներ շատ մորթեցի նրանց համար, իբրև ուտեստ:
 Յոթերորդ օրն մենք մեկնեցինք լայնատարած Կրեւտե կղզուց
 Ու լող տվինք Բորեասի հաղթ շնչի տակ հաջողությամբ,
 Թեթև ու հեշտ, ասես խաղաղ մի գետի մեջ, և ոչ մեկը մեր նավերից
 Անդ չտուժեց: Գնում էինք մենք անվնաս և անվտանգ,
 Իսկ նավերը քշում էին դեպի առաջ միայն հողմերն ու նավավարն:
 Հինգ օր հետո եկանք հասանք մենք ջրերին Եգիպտոսի:
 Հորդ հոսանքի բերանի մոտ կանգնեցրինք գեղեցկակերտ նավերը մեր.
 260 Այնտեղ իսկույն պատվիրեցի ես սիրելի համհարզներին՝
 Մնալ կողքին մեր նավերի և անվրդով ու բարեհույս հսկել դրանք,
 Իսկ մյուսներին հորդորեցի՝ բարձր տեղից շուրջը դիտել, հետախուզել:
 Մինչդեռ նրանք, ամբարտալան, խիզախությամբ ոգեշնչված,
 Հարձակվեցին, ավերեցին եգիպտացոց դաշտն ու արտոլը պերճագույն
 Ու փախցրին նրանց կանանց և անպաշտպան մանուկներին,
 Եվ իրենց էլ՝ տղամարդկանց, կոտորեցին: Բարձրացավ ճիչ և աղաղակ,
 Որը գնաց, քաղաքն հասավ: Քաղաքացիք, այդ լսելով, վաղ առավոտ,

Արշալույսին, դուրս վազեցին: Դաշտում զնգաց սուր պղինձը հեծյալների
 Ու հետիոտն անթիվ մարդկանց, սակայն Ջևար շանթազվարճ՝

ընկերներին

270 Մտռնեց ակեղ ու խայտասակ խունապի, չը կարողացավ թշնամու դեմ
 Կանգնել ոչ որ: Որոտացին շուրջը աղետն, արհավիրքը,
 Ծառ շատերը անդ մերճեցից սուր պղինձով կոտորվեցին,
 Ծառերին էլ գերի տարան, որ աշխատեն սորկաբար:
 Բայց հարուցեց Ջևան իմ սրտում այնժամ ձգտում մի փրկարար.
 Ա՛խ, ես ինչո՞ւ չմահացա այնտեղ, ափին Եգիպտոսի,
 Ենթարկվելով իմ օրհասին, քանզի հետո ես աղետից չազատվեցի:
 Արդ, անհասպաղ դեմ գցեցի սաղավարտը ես ամրակերտ ու նկարեն,
 Նաև ասպարն իմ ուտերից, շարտեցի տեղ-նիզակը ես իմ ձեռքից
 Եվ վազեցի ես շեշտակի դեպ գորակառքը արքայի
 280 Ու, գրկելով նրա ծնկներն, համբուրեցի: Ինձ նա խղճաց ու պաշտպանեց,
 Նստեցրեց կառքի վրա և տուն տարավ: Լայիս էի ես դառնադատն,
 Մինչ հարձակվում էին շատերն՝ ձեռքին իրենց սուր գեղարդներ,
 Փափագելով ինձ սպանել. խիստ կատաղած էին այնժամ նրանք իմ դեմ:
 Բայց թագավորն ինձ ազատեց՝ պատկատելով հյուրախնամ Ջևարի ռիսից,
 Որ չարաչար պատժում է միշտ վատ, անիրավ գործի համար:
 Ես յոթ տարի անդ մնացի, Եգիպտոսում հավաքեցի
 Ես բազմաբյուր գույք և ընծա, բոլորն էին սիրով տալիս ինձ նվերներ:
 Երբ ութերորդ տարին հասավ այնուհետև, այնտեղ հանկարծ
 Փյունիկեցի մի մարդ եկավ, մեծահոջակ և շահասեր մի ստախոս,
 290 Մի խաբերա, որ շատերին պատճառել էր արդեն չարիք ու վնասներ:
 Նա ինձ խաբեց և, պատրանքով սիրտս լցրած, ինձ համոզեց,
 Որ այցելեմ ես Փյունիկիս, ուր իբրև թե նա իր տանը շատ գույք ուներ:
 Եվ նրա մոտ ես մնացի ու սարքեցի մի ողջ տարի,
 Մինչդեռ արդեն եկան անցան և՛ օրերը, և՛ ամիսներն,
 Ծուռով հասավ երկրորդ տարին, երբ ժամանակը կատարեց շրջանը իր,
 Եվ նա այնժամ ինձ նեղաբար խորհուրդ տվեց՝ ծովագնաց նավի վրա,
 Որպես հսկիչ իր բեռների, իր հետ մեկնել դեպի Լիբիս,
 Բայց իսկապես նա միտք ուներ բարձր գնով ինձ վաճառել:
 Սիրտս լցված կասկածանքով և հակառակ իմ ցանկության՝ ես գնացի:
 300 Նավն ընթացավ Բորեասի զիլ շնչի տակ և հաջողակ:
 Մենք Կրեւտե անցանք արդեն, մինչդեռ Ջևար նրանց նույնում էր
 արհավիրք:

Ձևի անեղ շանթ-հարվածից նալը ցնցվեց ու դողդողաց
Եվ ծծմբի հոտով լցվեց, իսկ համահարզներն թափվեցին ցած
Ու սևաթույր նավի շուրջը, հորդ այլաց մեջ. նմանվելով ազոավների՝
310 Նրանք արագ գալարվեցին. այդպես նրանց վերադարձից գրկեց
աստված:

Երբ սիրտն էր իմ լցրել աղետն, այնժամ Ձևը ներշնչեց ինձ
Բռնել ձեռքով սևակտուց նավի երկար կայմը իսկույն,
Որ խուսափեմ գեթ այդպիսով մահից դաժան: Ես բռնեցի

կայմը շուտով,
Սեղմ գրկեցի ու արացա՝ հանձնված ուժին կործանարար այդ փոթորկի:
Ինը օր էս բաշքշվեցի այլաց մեջքին, տասներորդ օրն, մի մութ գիշեր,
Հորձանքն հուժկու ինձ դուրս նետեց, բշեց, հանեց երկրի ափը
թեսպրոտացոց,

Եվ թագավորը թեսպրոտյանց՝ բաշ Փիդոնը, հյուրընկալեց
ինձ իր տան մեջ,

Քանզի նրա սիրանվեր, ազնիվ որդին ինձ ծովափին
Այնժամ գտավ խիստ ցրտահար և խոնջանքից ուժասպառված:

320 Ինձ նա իսկույն վերցրեց ձեռքով և տունն իր հոր հապճեպ տարավ,
Հագցրեց ապա ինձ հագուստներ՝ մի հատ բանկոն և մի թիկնոց:
Ողիսևսի մասին այնտե՛ղ էս լսեցի. Փիդոնն ասաց, որ հենց նրան
Ինքն է սիրով, մեծարանքով հյուրընկալել՝ դեպ հայրենիք էտ դառնալիս:
Նա ցույց տվեց գույքը ամբողջ, որն հավաքել էր Ողիսևսն.

Ոսկի, պղինձ, այլև երկաթ, որ մշակվում է շատ դժվար,
Եվ այնքա՛ն շատ, որ կարող էր պահել, սնել տասնյակ սերունդ:
Այդքան ահա թանկարժեք գույք կուտակված էր տանն արքայի,
Իսկ Ողիսևսն այնժամ անձամբ գնացել էր դեպ Դոդոնե,
Որ անդ լսի բարձրակատար կաղնի ծառից, ինչպես պատմեց
Փիդոն արքան,

330 Ձևի խորհուրդն՝ ինչպե՛ս արդյոք ինքը, որպես երկրից երկար
բացակայած,

Պիտ էտ դառնա դեպ Իթակե. բացեիրա՛ց, թե՛ գաղտնաբար:
Երդվեց նույնիսկ արքա Փիդոնն՝ աստվածներին զոհ անելով
իր հարկի տակ,

Որ պատրաստ է նավը արդեն, հավաքված են նավորդները,
Որպեսզի շուտ տանեն նրան իր երկիրը հայրենավանդ ու սիրելի:
Բայց նախ նա ինձ ճանապարհեց, քանզի նավը թեսպրոտացոց
Այնժամ ի դեպ մեկնում, գնում էր Դուլիքիոն ցորենաշատ:
Նա պատվիրեց, որ խնամքով տանեն հանձնեն ինձ Ակաստին
իշխանագոր,

Սակայն նրանք դաժան սրտով իմ դեմ դավանք անդ հղացան,
Որ ինձ մատնեն թշվառության և ահռելի տվայտանքի:

340 Հենց որ նավը ծովագնաց թեսպրոտացոց ափը թողեց ու հեռացավ,
Նավորդները իսկույն նեթ ստրկության ինձ մատնեցին.

Արդ, հանեցին իմ վրայից նրանք բանկոնն ու պատմունանն,
Եվ հագցրին մի ցնցոտի պատառոտած ու այլանդակ,
Որ տեսնում էս ինքդ անձամբ դու իմ վրա արդ, քո աչքով:
Եվ նավորդներն երեկոցան հայտերևակ Իթակեի ափը հատան,
Գեղեցկակերտ նավի ներսում պինդ չվանով ինձ անհապաղ
Եվ ամրապինդ կապկպեցին, այնուհետև իրենք անվախ
Այնտեղ ծովափը դուրս եկան՝ ընթրիքն իրենց վայելելու:
Բայց կապանքն իմ աստվածները իսկույն հեշտով արձակեցին,

350 Եվ էս շուտով գուլար իմ քողարկեցի ցնցոտիով մի քրքրված,
Ապա իսկույն, ողորկագույն դեկին փարված, ցած սողալով, հասա ջրի՞ն
Եվ սկսեցի, երկու ձեռքով շուրն ճեղքելով, լող տալ արագ:
Ես նրանցից ավելի շուտ մի կողմ անցա ու հեռավոր ափ դուրս եկա,
Որտեղ հապճեպ էս պատկեցի խիտ անտառի ծաղկափթիթ
թավուտի մեջ:

Միհնչեո նրանք վազվզեցին գոռգոռալով և սկսեցին որոնել ինձ,
Սակայն հետո ինձ փնտրելը իրենց համար էլ օգտակար անդ չթվաց,
Ռեստի շուտով վերադարձան և, խորափոր նավը նստած,
Ծամփա ընկան ու գնացին: Իսկ ինձ շատ հեշտ աստվածները
թաքցրին անդ

Եվ հետո էլ ցույց տվեցին ինձ խրճիթը մի իմաստուն, ազնիվ մարդու:
360 Ինձ, երևի, փնտրված է առայժմ ապրել արևի տակ, կյանքը սիրելի:
Իսկույն նրան ի պատասխան խոսք ասացիր դու, Եվմեոս, ո՛վ խոզարած.
«Իժբա՛խտ շրջիկ, սիրոսս աստիկ դու հուզեցիր այդքան երկար
քո պատմածով,

Թե որքա՛ն էս տանջանք կրել կամ որքա՛ն էս դու թափառել:
Բայց հիշեցիր Ողիսևսին զուր, անտեղի և վարվեցիր դու անվայել:
Երբեք դու ինձ չես համոզի, կամ իսկապես ի՛նչ կարիք կա,
Որ աստ երկար աշդպես խոսես, հեթիաթ հյուսես: Ինքս գիտեմ
գործն արքայի,

Որ, երևի, ատելի էր երանալետ աստվածների սրտին իրոք,
Քանզի նրանք թույլ չտվին, որ գեթ երկրում տորյական նա մահանար
Եվ կամ նույնիսկ ուզմից հետո՝ ձեռքի վրա իր սիրելի, ազնիվ
մարդկանց,

370 Ձի այդ դեպքում արեացիք կկանգնեին նրան կոթող, մի հուշարձան,
Իսկ իր փառքը մեծահոշակ իր գավակին պիտի թողներ նա հավիտյան:
Միհնչեո հիմա անփառունակ նրան փախցրին Հարպիաները,
Իսկ էս այսպես առանձնացած ապրում եմ այս խոզերի մոտ
Եվ քաղաքն էլ չեմ այցելում, միհչև որ ինձ Պենելոպեն
Չհորդորի և չկանչի, երբ որ հանկարծ մի որևէ լուր է գալիս:

Լրաբերին շրջապատած՝ բոլորեքյան միշտ մանրամասն հարց են տալիս
Նրանք, որ ջերմ ողբում են միշտ բացակայող թագավորին,
Այն նրանք, որ նրա գույքը լսիում են այժմ անպատիժ ու քերկրալի:
Իսկ ինձ բնավ հաճելի չէ տեղեկանալ կամ այդ մասին հարցնունք անել՝
380 Հենց այն օրից, երբ ինձ խաբեց հերյուրանքով՝ էտուլացի մի ստախտս:
Մարդ էր այնտեղ նա սպանել, ուստի, երկար թափառելով երկրե-երկիր,
Մի օր խրճիթն իմ նա եկավ, իսկ ես նրան ընդունեցի շատ սիրալիր:
Սասց, որ անդ, Կրեւտում, նրան տեսել է Իդունեն իշխանի մոտ,
Որ իբրև թե նորոգում էր մրրիկներից խորտակված իր նավերը նա:
Հայտնեց նաև, որ նա անշուշտ ետ պիտի գա նույն ամառը

կամ աշունքին
Ու կրերի, աստվածակերպ ընկերների հետ միասին, բյուր գանձ ու գույք:
Եվ դու նույնպես, բազմաշարշար ով ծերունիդ, որ աստըծո հյուր ես
ինձ մոտ,

Մի՛ աշխատիր ինձ գորգորել կամ սուտ խոսքով ուրախացնել,
Քանզի ես քեզ արդ մեծարում և սիրում եմ ոչ թե միայն դրա համար,
390 Այլ պատկառում եմ վանատոր Ջևաից անմահ և ցավակցում եմ քեզ
սրտանց»:

Եվ Ռդիսևն ամենագետ պատասխանեց ու խոսք ասաց.
«Ո՛հ, որպիսի՛ կասկածամիտ սիրտ ունես դու քո կրծքի տակ
Եվ բնավին քեզ չազդեցին ոչ երդումն իմ, ոչ հորդորը,
Ուստի լսիր, եկ գրագ գանք, պայման կապենք, և թող վերուստ
Օլիմպակյաց աստվածները վկա լինեն մեզ, երկուսիս.
Եթե իրոք իր տունն, այստեղ, վերադառնա քո տերն արքա,
Այդ դեպքում դու պիտ շնորհես ինձ մի բաճկոն և մի թիկնոց,

իբրև հագուստ,
Եվ ողարկես ինձ Դուլիքիոն, որ գնալու փափագ ունեմ սիրակարոտ:
Սակայն եթե ետ չդառնա քո տերն արքա, ինչպես պնդում ես դու հիմա,
400 Հրամայիր ծառաներիդ, որ ցած նետեն ինձ բարձրաբերձ ծայրի գլխից,
Որ այնուհետ ոչ մի շրջիկ չհանդգնի քեզ այդպիսով խաբել նորից»:
Եվ խոզարածն աստվածային պատասխանեց և խոսք ասաց

այնժամ նրան.
«Ո՛հ դու շրջիկ, էլ ես ի՞նչ փառք պիտ վաստակեմ առաքինի
գործիս համար
Կամ ի՞նչ պատիվ ես կունենամ թե՛ ներկայումս և թե՛ հետո
մարդկության մեջ,
Եթե ես քեզ՝ իմ հարկի տակ հյուրամեծար ու պատվարժան
ընդունվածիդ,
Հանկարծ վերցնեմ ու սպանեմ և այդպիսով զրկեմ կյանքից
փափագատե՛՛ն:
Ինչպե՛ս այնժամ սիրանվեր պիտ աղերսեմ Ջևաին, որդուն Կրոնոսի:

Բայց ընթրիքի ժամն է արդեն. ահավասիկ, ընկերներս կգան շուտով,
Եվ մենք այստեղ, այս խրճիթում կպատրաստենք ընթրիքը նոխ»:
410 Երբ որ նրանք այդպես խոսում, դատում էին իրարու հետ,
Եկան արդեն երամակները խոզերի և հովիվները խոզարած,
Որոնք իսկույն ներս քշեցին խոզերամակը գոմի մեջ՝ գիշերելու:
Թնդաց իսկույն այդ ժամանակ սարսափելի խանչյուն-աղմուկը խոզերի,
Եվ պատվիրեց ընկերներին իսկույն ետք խոզարածը աստվածային.
«Բռնե՛ք, քերե՛ք դուք լավագույնը խոզերից, որ աստ զոհեմ հատուկ՝

պատվին
Հեռուստ եկած հյուր-եկվորի, որ նաև մենք սոժամանակ ուրախանանք,
Ձի վաղո՛ւց է, որ կրում ենք տանջանք հանուն ձերմակատամ
այս խոզերի,
Քանի որ այժմ ուրիշները լավիվում են մեր աշխատանքը անհատույց»:
Այդպես ասաց նա բարձրաձայն և սկսեց փայտ կտրատել
սուր տապարով,

420 Մինչդեռ նրանք ներս քերեցին խոզն հնգամյա և պարարուն,
Որը իսկույն տեղավորվեց, կանգնեց այնտեղ օջախի մոտ:
Խոզարածը, որ բարեպաշտ հոգի ուներ, չմոռացավ աստվածներին,
Նա սկսեց ձերմակատամ խոզի գլխից քաղել մազերն արագորեն,
Կրակի մեջ դրանք նետել: Նա աղոթեց աստվածներին երկնաբնակ՝
Աղերսելով, որ ետ դառնա դեպ իր տունը Ռդիսևը ամենագետ:
Ապա վերցրեց կոճղը կաղնի, զարկեց խոզին, որ տապավեց
թավալգոր,
Հոգին թոսավ մարմնի միջից: Եվ մորթեցին նրանք այդ խոզն
ու քերթեցին,

Հետո հապճեպ կտրատեցին և կտորներն անդամների
Խոզարածը իսկույն ետք շուրջանակի ճարպով պատեց
430 Եվ հոշվածին գարե այլուր՝ նաշին ցանեց ու այն գցեց կրակի մեջ,
Իսկ մնացյալը, բրդելով, շուտ զարկեցին շամփուրներին:
Խորովեցին զգուշորեն, այնուհետև շամփուրներից դուրս քաշեցին
Ու սեղանի վրա ամբողջը դրեցին: Կանգնեց այնժամ խոզարածը
Եվ սկսեց միւր բաժանել արդարացի, քանզի ազնիվ նա սիրտ ուներ:
Ահավասիկ, ամբողջն այդպես նա բաժանեց յոթ մասերի,
Մեկը ձոնեց նիմփաներին և Հերմեսին, որը զավակն է Մեասի,
Եվ աղոթեց նա ջերմեռանդ, իսկ մնացյալը մի առ մի բաշխեց նրանց:
Ռդիսևին նա մեծարեց ձերմակատամ խոզի երկայն թիկնամտով.
Այդ գերակա պատվի համար նրա տիրոջ սիրտը խնդաց,

440 Ուստի խոհեմ Ռդիսևը նրան դիմեց և այս ասաց.
«Ո՛վ Եվմեոս, թո՛ղ որ այնքան Ջևաի համար հավերժ լինես դու սիրելի,
Որքան հիմա ինձ՝ դժբախտիս, այսպես ահա դու հարգեցիր»:
Այնժամ նրան ի պատասխան խոսք ասացիր, ո՛վ Եվմեոս դու խոզարած.

«Համեցիր, կե՛ր, ա՛յ տնաբանդ, հրճվիր դու այժմ նրանով,
Ինչ որ դրված է քո առաջ, չէ՞ որ աստված մեկը կտա, իսկ մյուսը՝ ոչ,
Ինչպես ուզում է սիրտը յուր, քանզի նա է ամենագոր»:
Ասաց, ձոնեց երախայրիքն աստվածներին հավերժակաց,
Լցրեց գինին նա հրավառ, ձեռքը դրեց քաղաքավեր Ռդիսուսի,
Որը բազմած էր վայելուչ նրա կողքին այդ ժամանակ:
450 Հացը բերեց և բաժանեց Մեսալիոսն, որին ինքն էր, խոզարածը,
Անձամբ գնել, երբ որ արդեն բացակա էր տերն իր արքա,
Սակայն առանց թուղտվության իր տանտիկնոջ և Լաերտի

ծերունագարդ,

Եվ գնել էր նրան անձամբ՝ տափոսացուց միջոցներով իր սեփական:
Այդպես նրանք ձեռք մեկնեցին իրենց առաջ պատրաստ դրված

ուտեստներին,

Իսկ երբ արդեն կերուխումով այդ հագեցան, որքան սիրտը
փափագ ուներ,

Անմիջապես հացն հավաքեց Մեսալիոսն, մինչդեռ նրանք,
Երբ հագեցան ուտեստներով, քուն մոռնելու շտապեցին:

Վրա հասավ մի անդուսին և չար գիշեր, Չևար հեղեց անդուլ անձրև:
Փշում, ճշում էր աստկաշունչ զիլ Չեփյուրը խոնավաշունչ:

460 Ռդիսուսը խոսք սկսեց՝ ցանկանալով խոզարածին փորձել մի կերպ.
Թիկնոցն արդյոք նա կհանի՞, կտա՞ իրեն, կամ կստիպի՞ ընկերներից
Մեկնումեկին նույն բանն անել. այդ մասին էր մտահոգված

նա չափազանց.

«Ակա՛նջ դիր ինձ, ով Եվմեոս, անանապես և դուք, նրա ընկերներդ.
Խոսք եմ ուզում ձեզ այժմ ասել հպարտորեն: Չէ՞ որ գինին

Խենթացնում է ամեն մարդու, նույնիսկ մարդկանց խոհեմամիտ:
Գրդում է այն սրտանց ժպտալ, բարձր երգել ու կաքավել,

Այլև ասել այնպիսի խոսք, որն իսկապես, լավ կլինե՞ր չասել երբեք:
Երբ ես արդեն սկսել եմ շատախոսել, անհնար է էլ ինձ զսպել:

470 Ա՛խ եթե ես այժմ լինեի այնպես ջահել, լի զորությամբ, տոկուն ու սեգ,
Ինչպես առաջ, երբ Տրոյայում դարան մտանք մենք մի ամբողջ
զորախմբով...

Ռդիսուսն էր և Ատրիդես Մենելայը մեզ առաջնորդ,
Իսկ ես այնտեղ երրորդն էի. նրանք իրե՛նք ինձ կանչեցին:

Երբ մենք եկանք, քաղաքն հատանք, պարիսպներին այն բարձրաշեն,
Մենք պատկեցինք անդ խտագույն թփերի տակ, շամբուտի մեջ

մի ճահճավետ,

Քաղաքին մոտ՝ ծածկված միայն վահաններով: Գիշերն հասավ
դաժանագույն,

Վերուստ անվերջ ձյուն էր տեղում, և մորճնում էր Բորեասը ցրտաշունչ:
Վահանների ու մեր վրա ձյունը ցրտից եղյամ դարձավ, ասես բյուրեղ:

Բայց թողրը հագած էին տաք բաճկոններ ու պատմունան,
Ուստի հանգիստ քնած էին՝ վահաններով իրենց ուտերը քողարկած:
480 Իսկ ես այնտեղ հիմարացա ու թողեցի ընկերներիս իմ վերարկուն,
Քանզի բնավ չէի կարծում, որ ցրտահար պիտի լինեմ ես այդ գիշեր:
Տարա ինձ հետ գեղեցկակերտ միայն գոտին և իմ վահանն:
Երբ գիշերվա երրորդ մասը արդեն հասավ, և չքացան աստղերը իսկ,
Ռդիսուսին, որ պատկած էր անդ իմ կողքին, ինձ մերձակա,
Ես հրեցի իմ արմունկով ու ասացի, և նա իսկույն ինձ լավ լսեց.
«Դյուցասնունդ Լաերտածին, ո՛վ Ռդիսուս բազմահնար,
Վերջն է կյանքիս. էլ կենդանի ես չեմ մնա, սպանում է այս ցուրտը ինձ,
Ո՛հ, վերարկու չունեմ անա ես ցրտահար, ինձ թերևս դեր խաբեց.
Լոկ մի բաճկոն հագած ունեմ, այլևս այսպես ինձ փրկություն

չկա մահից»:

490 Այդպես այնտեղ ես ասացի, և անա թե ի՛նչ մտածեց անդ նա իսկույն,
Ինչպես և միշտ՝ խորհուրդներում կամ կուլի մեջ թշնամու դեմ.
Եվ նա կողքիս մեղմիկ ձայնով ու կամացուկ ինձ շնջաց.

«Սուս կաց, լռիր, որ չը լսի մեկնումեկը արեչանց մեջ»:
Ասաց այդպես և արմունկին իր գլուխը թեքած՝ խոսեց.

«Ակա՛նջ դրեք, սիրելիներ, արդ քնի մեջ աստվածակերպ երազն եկավ
Եվ ինձ հայտնեց, որ չափազանց հեռացել ենք մենք նավերից:

Թող մեկնումեկն

Գնա, խնդրի ազգերի տեր Ագամեմնոն Ատրիդեսին,
Որ նավերից մեզ օգնության զինված մարդիկ նա ուղարկի»:

500 Արդյես ասաց, և վեր կացավ իսկույն ևեթ քաջ Թուարը Անդրեմոնյան
Ու անհապաղ իր վրայից հանեց, գցեց նա վերարկուն իր ծիրանի,
Ու վազ տվեց դեպի նավերն, իսկ ես նրա հագուստն հագա

Եվ քնեցի ուրախացած, մինչև ծագեց վառ Արշարույսը ոսկեգահ:
Ա՛խ, երանի այժմ լինեի այդպես ուժեղ, զորությամբ լի,
Այնժամ անշուշտ մեկնումեկը հովիվներից այս փարափի,

Ակնածելով քաջի հանդեպ, հանց մեծարանք, ինձ կգիշեր իր վերարկուն,
Սակայն հիմա, նողկ ցնցոտի հագուստի մեջ, ինձ էլ երբե՛ք

չեն մեծարի»:

Այնժամ նրան ի պատասխան խոսք խոսեցիր, ո՛վ Եվմեոս
դու խոզարած.

«Ո՛հ, ծերունիդ, հրաշալի պատմություն էր, որ պատմեցիր այստեղ
դու մեզ,

Դու ամեն ինչ լավ ասացիր, և խոսքիդ մեջ ունայն ու սին ոչինչ չկար:
510 Ուստի և այժմ ոչ մի կարիք չես ունենա, ո՛չ հագուստի, ո՛չ այլ բանի,
Որին, հարկավ, արժանի է թշվառ մուրիկը վատաբախտ և աղերսող,
Սակայն վաղը պետք է կրկին հագնես դու այդ քո ցնցոտին,
Քանզի այստեղ չկան բազում պատմունաններ, կամ բաճկոններ,

Եվ միմիայն մի հատ ունի ամեն մեկս մեզնից այստեղ,
Բայց երբ ետ գա, վերադառնա Ռդիսուսի սիրանվեր որդին ազնիվ,
Նա և՛ բաճկոն, և՛ պատմունան քեզ կընծայի այստեղ անշուշտ
Ու կառաքի քեզ նա այնտեղ, ուր որ սիրտդ կկամենա»:
Այդպես ասաց ու վեր կացավ, բերեց, փռեց օջախի մոտ
Այծենիները և օղենիք, հանց փափկագույն մի անկողին,
520 Եվ մեկնրվեց Ռդիսուսը, իսկ հովիվը իսկույն քաշեց նրա վրա
Հաստ, մեծագույն իր վերարկուն, որն, հիրավի, նրա միակ
հագուստն էր անդ,

Եվ որը նա հագնում էր միշտ անեղաշունչ ձմռան ցրտին:
Այդպես պսակեց Ռդիսուսը, իսկ ստրկներ անդ պսակեցին
Մյուս հովիվներն երիտասարդ, բայց խոզարածն ինքը չուզեց
Անդ, նրանց մոտ իր անկողինը ունենալ և խոզերից հեռու պսակել,
Ուստի իսկույն նա պատրաստվեց, որ դուրս գնա: Ռդիսուսը ուրախացավ,
Որ նա այդպես, իր բացակա եղած ժամին, հոգատար է գույքի հանդեպ:
Նախ սայրաստր թուրը վերցրեց և այն կախեց իր ամրապինդ
նա ուներին,

Վերցրեց տեգը՝ պաշտպանն ընդդեմ գամփոների ու չար մարդկանց,
530 Եվ դուրս գնաց, որ քուն մտնի ժայռի տակին, ուր, Բորենաս
դաժան հողմից
Պատասպարված, միրհում էին հույլ խոզերը ճերմակատամ:

Ե Ր Չ Թ Ա Ս Ն Ի Ի Ն Չ Ե Ր Ո Ր Դ

ՈՐԻՍԵՎՍԻ ՈՐԴԻՆ ԼԱԿԵՌԵՄՈՆԻՑ
ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ԻԹԱԿԵ

Մինչդեռ Պալլաս Աթենասը շարժվեց գնաց լայնատարած Լակեդեմոն,
Որպեսզի անդ Ռդիսուսի սիրած որդուն փառապասկ
Հիշեցնի յուր վերադարձը և հորդորի, որ շուտ ետ գա նա դեպի տուն:
Արդ, նա գտավ Տելեմաքին և Նեստորի ազնիվ որդուն
Վեներափառ Մենելայի տան գավիթում, այնտեղ, պսակած:
Նեստորյանը անդ տակավին խոր միրհում էր՝ անուշ քունը իր աչքերին,
Բայց այդ քունը քաղցրանուշիկ Տելեմաքին չնվաճեց ամենևին.
Ամբողջ գիշեր վիշտն էր հուզում նրա հոգին, վիշտը կորած

իր հոր համար:

Արդ, ստրկներ նրան կանգնեց և խոսք ասաց Աթենասը պայծառաչյա.

10 «Տելեմաքոս, լավ չէ իրոք, որ քո տնից բացակա ես երկարատև,
Գույքդ այնտեղ անտեր թողած, ամբարտախան մարդկանց կամքին,
որպես ավար:
Տե՛ս, մի գուցե քո գույքն ամբողջ անդ լափլիեն կամ իրարու մեջ
բաժանեն,

Եվ կդառնա քո ճանապարհն և՛ անօգուտ, և՛ ավերի միայն պատճառ:
Ուստի շուտով գնա, խնդիր Մենելային դու քաջագեն,
Թող քեզ հապճեպ ետ ուղարկի, որ տանդ գեթ քո անբասիր
մորը գտնես:

Հայրը արդեն և եղբայրներն ստիպում են նրան հիմա
Մարդու գնալ Եվրիմաքին, որը բոլոր խոսակարներին
Գերազանցեց նվերներով և անընդհատ բազմապատկում է գլխավարձն,
Մինչդեռ եթե այդ գույս գա, ետս, մի գուցե և քո գույքը տանեն տնից:

20 Դու լավ գիտես, թե որպիսի՛ սիրտ կա կրծքի տակ կանացի.
Կինը գիտե բազմապատկել և շեն պահել տունը երկրորդ, նոր ամուսնու.
Սակայն երբեք չի մտածում իր առաջին ամուսնության որդոց մասին
Կամ մահացած այն ամուսնու, որի մասին անգամ լսել չի ցանկանա:

Երբ դու քո տուն վերադառնաս, քո ունեցած գույքը ամբողջ
համձնիր այնտեղ
Մեկնումեկին քո լավագույն ծառաներից, ով քեզ թվա հավատարիմ,
Մինչև անմահ աստվածները քեզ կնոթյան ցույց տան աղջիկ
վայելչագեղ:

Մի խոսք ևս ես քեզ ասեմ, և այն պահիր դու քո սրտում:
Մեղեխների մեծ քաջերը դարանամուտ են այժմ արդեն
Իթակեի նեղուցի մեջ, անդ, քարքարոտ Սամեի մոտ.
30 Մտադիր են քեզ սպանել, որ ե՛տ չգաս դու քո երկիրը հայրական:
Բայց չեմ կարծում այդ գլուխ գա. ավելի շուտ պիտի լսիի հողը նրանց,
Այդ չարադավ խոսնայր մարդկանց, որ վատնում են գույքդ, գանձդ:
Սակայն անշուշտ դու քո նավը ամրակառույց հեռու պահիր կղզիներից,
Լող տուր միայն դու գիշերով. քեզ հաջողակ և ուղեկից հողմ կառաքի
Մեկնումեկը անմահներից, որ պահպանում, փրկում է քեզ,
հանց զորավիգ:

Ահավասիկ, երբ դու հասնես Իթակեի ափը, այնտեղ,
Նավն ու բոլոր ընկերներիդ իսկույն քաղաք ուղարկիր դու,
Սակայն ինքդ նախ և առաջ գնա դեպի խոզարածը,
Որ հսկիչն է՝ ձեր խոզերի և դեպի քեզ առմիշտ ազնիվ, բարեհաճ է,
40 Եվ գիշերը դու նրա մոտ: Ապա նրան շուտով քաղաք դու առաքիր
Իբրև բանբեր՝ լուր տանելու Պենելոպին խոհեմամիտ,
Որ ողջ ես դու և ապահով, որ Պիլոսից վերադարձել ես անվնաս»: Արդայես
ասաց վեհ Աթենասն ու հեռացավ դեպ Օլիմպոսը բարձրաբերձ,
Իսկ նա իսկույն Նեստորյանին հանեց քնից քաղցրանուշիկ.
Նրան ոտքով Տելեմաքը հրեց, ապա այս խոսքն ասաց.
«Ով Պիսիստրատ Նեստորածին, վե՛ր կաց, ձիերն ամրամաքակ
դու դուրս քաշիր,
Կառքը լծիր դու անհապաղ, որպեսզի մենք ճանապարհավեճք
արագորեն»: և այս ասաց.
Եվ Պիսիստրատ Նեստորածինն իսկույն նրան պատասխանեց

«Տելեմաքոս, թեպետ և դու փափագում ես ճանապարհովել հիմա շուտով,
Բայց չեմք կարող մութ գիշերով ձիեր վարել: Արշալույսը մոտ է արդեն.
50 Ե՛կ, ապասենք, որ դյուցազուն, նիզակաճոճ Մենելասը Ատրիդես
Ընծաները ամբողջովին քերի, դնի կառքի վրա
Եվ, ճանապարհ մեզ դնելով, իր ողջույնի խոսքը ասի,
«Քանզի չէ՞ որ ուրախությամբ պետք է հիշի հյուրն ամեն օր
Այն հյուրընկալ վսեմ մարդուն, որն ընդունեց նրան սիրով
հյուրամեծար»: և այս ասաց
Սասց այդպես, և շատ շուտով ծագեց շողշող Արշալույսը ոսկեգան:
Այնժամ ելավ գեղազանգուր Հեղինեի մահճի միջից

Մենելասն անեղագոչ, ապա գնաց, որ հյուրերին տեսնի այնտեղ:
Այդ նկատեց Ռիսուսի սիրանվեր որդին իսկույն.

Նա անհապաղ իր շողշողուն բաճկոնն հագավ և ուտերին
60 Քաշեց ծածկոցը մեծագույն, ապա գնաց, ինչպես հերոս մի մեծաբայ,
Ծեմքը անցավ նա գավիթի և դուրս եկավ շուտով նրան անդ ընդատաջ:
Եվ բարբառեց այնժամ որդին Ռիսուսի, Տելեմաքոսն աստվածային.
«Դյուցասնունդ ով Ատրիդես, Մենելասոս դու ազգապետ.
Թույլ տուր դու այժմ, որ ես գնամ, հասնեմ երկիրն իմ սիրելի,
հայրենավանդ,

Քանզի սիրտս փափագում է շատ շուտով տուն վերադառնալու:
Պատասխանեց այնժամ նրան Մենելասն անեղագոչ.

«Տելեմաքոս, ես չեմ կարող քեզ աստ պահել երկարատև,
Երբ ուզում ես դու ետ գնալ: Եվ, հիրավի, ատում եմ ես
Հյուրընկալին, որն իր հյուրին պատվում, սիրում է չափից դուրս,
70 Նաև նրան, ով բնավին հյուր չի սիրում. միջինն է լավ անտարակույս:
Լավ չէ, եթե ստիպում են հյուրին մեկնել, երբ նա մեկնել չի ցանկանում,
Կամ ջանում են շա՛տ ավելի երկար պահել՝ շուտով մեկնել ցանկացողին:
Սրտանց սիրիր և ընդունիր, ով գալիս է, բայց և մեկնել կամեցողին
Ծանապարհ դիր: Բայց սպասիր, ընծաները քերեմ, դնեմ կառքիդ վրա,
Որ քո աչքով ինքդ տեսնես, այն կանանց ես պատվիրեմ,
Որ այժմ, եղած մեր պաշարից, լավ ճաշկերույթ քեզ պատրաստեն
իմ հարկի տակ»

Փառավոր է և հաճելի, երբ որ հյուրը, ճաշկերույթով հյուրասիրված,
Ծանապարհի դեպ հեռուներն անպարագիծ այս աշխարհի:

Իսկ եթե դու ցանկանում ես գնալ, շրջել Հելլադայում կամ Արգոսում,
80 Ինքս նաև կը գամ քեզ հետ և կլծեմ նծույզներն իմ,
Կառաջնորդեմ, որպեսզի մենք գնա՛նք, շրջե՛նք քաղաքները
շատ-շատ մարդկանց,
Եվ մեզ ոչ ոք բաց չի թողնի առանց ազնիվ նվերների,
Այլ կընծայեն կամ շքեղ սան, եռոտանի պղնձակերտ,
Կամ կորովի գույզ ջորիներ և կամ նույնիսկ պերճապաճույն
ոսկե բաժակ»:

Պատասխանեց իսկույն նրան Տելեմաքոսը խորինաց.

«Ազգերի տեր Ատրևսորդի, դու, Մենելայ աստվածային.
Մտադիր եմ ես շուտափույթ վերադառնալ, գնալ մեր տուն,
Քանզի այնտեղ իմ գո. քերին ես չեմ կարգել մի պահապան:
Մինչ մի գուցե, աստվածակերպ հորըս այսպես որոնելով,
ես կործանվեմ,

90 Կամ մի՛ գուցե անդ փշանան իմ պերճ գույքերը թանկարժեք»:
Այդ որ լսեց Մենելասն անեղագոչ, իսկույն ևեթ
Հրամայեց իր ամուսնուն, այն ստրուկ նաժիշտներին՝

Տանը եղած առատագույն պաշարներից սարքել շուտով ճոխ
ճաշկերույթ:

Եվ մոտեցավ անժամ նրան Բոնթեղեւ Էտեռնաւը,
Որ մահիճից նոր վեր կացավ և ապրում էր այնտեղ մոտիկ:
Մենելատսն հրամայեց, որ նա շուտով կրակ վառի, միս խորովի:
Չը ծուլացավ Էտեռնան, հնազանդվեց իսկույն նրա հրամանին,
Իսկ Մենելայն ուղղվեց, գնաց դեպի սենյակն անուշաբույր,
Բայց ոչ մեճակ. ուղեկցեցին նրան նաև Մեգապեմթեսն ու Հեղիմենն:

100 Եվ երբ նրանք այնտեղ եկան, որտեղ պահված էին գույքերը
թանկարժեք,

Ատրիդեսը վերցրեց անդուստ մի կրկնականթ չքնաղ գավաթ,
Իսկ իր որդուն՝ Մեգապեմթին նա պատվիրեց վերցնել շքեղ,
արծաթակերտ
Խառնարանը: Մինչ Հեղիմենն անդ մոտեցավ սնդուկներին, որոնց
մեջ միշտ

Պահվում էին այն ձեռագործ հագուստները նկարագարող,
Որ կարել էր ինքը անձամբ, և Հեղիմենն՝ կանանց չքնաղ աստվածուհին,
Ընտրեց անդուստ գեղեցկափայլ ու նկարեն մի մեծ ծածկոց,
Որ պահվում էր բլուրի տակ ու խորքերում և շողում էր աստղերի պես:
Եվ դուրս եկան ու տան միջով նրանք անցան դեպ Տելեմաքը խորիմաց,
Այնտեղ նրան իր խոսքն ասաց Մենելայը խարտիշագեղ.

110 «Տելեմաքոս, թող որ Ձևը՝ որոտագոչ մեծ ամուսինը Հերայի,
Քո վերադարձն իրագործի այնպես, ինչպես քո սիրելի սիրուն է ուզում,
Իսկ ես անա քեզ տալիս եմ իմ տանն եղած ամենապերճ
Ու թանկարժեք ընծաներից լավագույնն ու պատվավորը,
Նվիրում եմ քեզ պերճափայլ, ճարտարակերտ այս գավաթը,
Ամբողջովին արծաթաշեն, իսկ ափերը ոսկեդրվագ,
Որ կերտվածքն է Հեփեստոսի: Ինձ դա տվեց սիդոնական թագավորը՝
Քաջ Փեգիմոսն այն ժամանակ, երբ, Տրոյացից ետ դառնալիս,
Ես հյուր եղա նրա տանը: Ահավասիկ, քե՛զ եմ հիմա ընծայում այդ»:
Այդ ասելով՝ Ատրևտորդի մեծ հերոսը նրա ձեռքը դրեց իսկույն

120 Ծքեղ գավաթը կրկնականթ, իսկ խառնարանը՝ շողշողուն,
Արծաթակերտ, Մեգապեմթը բերեց, դրեց նրա ստաշ:
Եվ մոտեցավ այդ ժամանակ ինքն Հեղիմենն գեղեցկափայլ.
Նա, ծածկոցը ձեռին բռնած, անվամբ կոչեց և խոսք ասաց.
«Ահա և ես քեզ տալիս եմ այս նվերը, սիրատենչի՛կ դու իմ գավակ,
Որ գեթ հիշես Հեղիմենի ձեռագործն այս, քո բաղձալի հարսանիքին.
Թող դա ծածկի քո հարսնացուն, իսկ մինչև այդ թող դա մնա
ձեր հարկի տակ,
Քո սիրելի մայրիկի մոտ: Իսկ ես հիմա մաղթում եմ քեզ

Ողջ և ուրախ վերադառնալ քո տունը պերճ և քո երկիրն
հայրենավանդ»:

Ասաց այդպես և ընձեռեց իսկույն նրան, ուրախությամբ ընդունեց նա:
130 Մինչ Պիսիատրատն իսկույն վերցրեց ընծաները, հիացմունքով
նայեց դրանց,

Ապա սիրով ու սրտագին դրանք դրեց կառաթափքում:
Այնուհետև Մենելայը խարտիշագեղ նրանց կանչեց ու տուն տարավ,
Եվ բազմեցին այնտեղ նրանք աթոռներին ու փառասեղ բազմոցներին:
Աղախինը լվացվելու ջուրը բերեց ոսկեպաճույն մի գավի մեջ,
Լցրեց նրանց, որ լվացվեն ամանի մեջ արծաթակերտ.
Քաշեց, դրեց նրանց ստաշ վայելչագեղ, ողորկագույն կոկ մի սեղան:
Մատանապետ մեծարգո կինն իսկույն բերեց, դրեց այնտեղ հացը ստատ,
Նաև եղած պաշարներից բազմապիսի այլ ուտեստներ:
Միսը կտրեց Բոնթեղեան ու ամենքին անդ բաժանեց պատշամարար,
140 Սակայն գինին մատուկակից ազնիվ որդին փառապասկ Մենելայի:
Ապա նրանք ձեռք մեկնեցին իրենց առջև դրված ստատ ուտեստներին,
Իսկ երբ նրանք կերուխումով լավ հագեցան, ինչպես սիրուն էր
փափագում այդ,

Տելեմաքոսն ու Նեստորի ազնիվ որդին իսկույն ևեթ
Ժիր նծույզները լծեցին, վեր բարձրացան կտրքի վրա այն գերագարդ
Եվ դուրս եկան աղմկալի նախագավթի մուտքից իսկույն:
Մինչ դուրս եկավ ինքը նաև՝ Մենելատս Ատրիդեսը խարտիշագեղ՝
Իր աջ ձեռին բռնած ոսկի բաժակը լի անուշ գինով,
Որ անդ նրանց ճանապարհի և սուրբ հեղումը կատարի:
Արդ, նա կանգնեց նծույզների ստաշն այնտեղ և խոսքն ասաց
իր ողջույնի.

150 «Ուրախացե՛ք և ողջ լերուք, պատանիներ՛, իսկ Նեստորին վեհապատիվ
Հայտնեք բարևն իմ ջերմաջերմ. նա ինձ համար հայր էր խոհեն
ու հարագատ,
Երբ որ այնտեղ, Տրոյայի մոտ, կուլում էինք մենք՝ զավակներս
աքեյանց»:

Իսկույն նրան պատասխանեց և խոսք ասաց Տելեմաքոսը խորիմաց.
«Այո, արքա դյուցասնունդ, մենք կպատմենք այդ ամենը,
Ինչպես դու այժմ պատվիրեցիր: Ա՛խ, երանի, ետ դառնալով
դեպ Իթակե,

Ողիսուսին տանս գտնեմ, պատմեմ նրան, թե որքա՛ն ջերմ և սիրալիր
Դու մեզ սրտանց ընդունեցիր, կամ որպիսի՛ ընծաներով եմ տուն եկել»:
Երբ նա իր խոսքն այդպես ասաց, թուավ, եկավ մեծ արծիվը
սավառնաթև.
Ծանկերի մեջ բռնած ուներ այն ընտանի, բակից փախցրած,
ճերմակ մի սագ,

160 Մինչ ետևից վազում էին, արձակելով ճիշտ-աղաղակ,
Տղամարդիկ և շատ կանայք: Թոշունն անցավ նրանց մոտով,
Ապա ձիանց աջակողմից թռավ գնաց: Բոլորը այդ նկատեցին
ու խնդացին,

Եվ բերկրանքով անդ բոլորի կրծքի ներքո սիրտը լցվեց,
Իսկ Պիսիստրատ Նեստորաձինն իր խոսքն ասաց այդ ժամանակ.
«Մեկնի՛ր դու մեզ, Մեներասոս դյուցասանունդ, ազգերի տեր.
Մեզ համա՞ր է, թե՞ քեզ համար, որ ցույց տվեց աստվածն այդպես
նշանը իր»:

Այդպես ասաց, խորասուզվեց մտքերի մեջ Մեներասոսն Արեսասեր:
Երբ նա այդպես մտածում էր՝ ինչպե՛ս արդյոք արժանապես
պատասխանել,

Կանխեց նրան երկայնազգեստ պերճ Հեղինենն ու խոսք ասաց.
170 «Ակա՛նջ դրեք, ես ահա ձեզ կգուշակեմ այն, ինչ անմահ
աստվածներն ինձ

Եվ իմ արտին ներշնչում են, և այդ, կարծեմ, կկատարվի:
Ինչպես արծիվն է փախցրել այդ ընտանի սագը ճերմակ՝
Մեզ լեռներում ծնված արծիվն, ուր նա ուներ և ձագուկներ,
Այդպես նաև Ողիսևսը, հանդուրժելով բյուր աղետներ ու տառապանք,
Ետ կղանա իր տունն անշուշտ և կյուծի իր վրեժը սեղեխներից,
Գուցե նույնիսկ ետ է դարձել ու նյութում է նրանց ժանտ մահ»:
Հեղինեին այնժամ իսկույն իր խոսքն ասաց Տելեմաքոսը խորիմաց.
«Թող գործն այդպե՛ս հենց կատարի Զևսն՝ Հերայի ամուսինը
որոտագո՛չ,

Այն ժամանակ աստծու պես քեզ կպաշտեմ ես արտալի»:
180 Ասաց այդպես և մտրակեց իսկույն ձիանց, որոնք հապճեպ,
Ժիր պացան ու քաղաքից դեպ լայնալիր դաշտն ընթացան:
Ամբողջ օրն այդ թռչում էին նծուզները, և անուրն էր ճոճվում նրանց:
Արդ, մայր մտավ արևն արդեն, մթնշաղը ծածկեց բոլոր
ճանապարհներն:

Նրանք եկան, հասան Փերե ու կանգ առան ապարանքում Դիոկլեասի.
Սա գավակն էր աստվածածին Օրսիլոքի, թողը աստված Ալփիոսի:
Այնտեղ ահա, նրա տանը, հյուրամեծար ընդունվելով, գիշերեցին:

Իսկ երբ ծագեց խոր խավարից ճաճանչագեղ Արշալույսը վարդամատն,
Նրանք ձիերը լծեցին և, նկարեն կառքի վրա բարձրանալով,
Աղմկայից նախագավթի մուտքից իսկույն դուրս գնացին՝

190 Մտրակելով նծուզներին, որոնք հլու և հնազանդ թուան անցան
Ու շատ շուտով եկան հասան Պիլոս քաղաքը բարձրաբերձ:
Տելեմաքոսն այն ժամանակ իր խոսքն ասաց Նեստորաձին
Պիսիստրատին.

«Եկ, խոստացիր, Նեստորաձին, որ դու կամքն իմ կկատարես.
Չէ՞ որ մենք այժմ ընկերներ ենք հավերժական և մտերիմ՝
Կապված սիրով մեր հայրերի. հասակակից ենք բացի այդ,
Իսկ ճանապարհն այս մեզ կապեց իրարու հետ ավելի մեծ
մտերմությամբ:

Դու ինձ նավից հեռու մի՛ տար, այլ թող այնտեղ, դիցանո՛ւնդ,
Քանզի ծերուկն իր հարկի տակ ինձ ակամա պիտի պահի,
Որպեսզի լավ հյուրասիրի, մինչդեռ պետք է, որ ես գնամ այժմ
անհասպաղ»:

200 Ասաց այդպես, և մտածեց Նեստորաձինն ինքը իր մեջ և իր սրտում՝
Ինչպե՛ս արդյոք այդ խոստումը պիտ կատարել վայելչաբար,
Եվ, այդ միտքը որոնալիս, նրան թվաց, որ լավագույնը կլինի,
Եթե կառքը ծովափ քշի, ուստի ուղղվեց նա դեպի նավն արագընթաց:
Անդ նա հանգեց ու զետեղեց նավախելում ընծաները պերճապանույն.
Ոսկին, հագուստն և ամեն ինչ, որ նվիրել էր Մեներասոս դյուցազուն:
Ապա նրան հորդորանքով դիմեց և այս խոսքը ասաց իր թևավոր.
«Ծո՛ւտ բարձրացիր նավիդ վրա, թող շտապեն նաև նավորդ
ընկերներդ,

Նախքան ես տուն գնամ, հասնեմ և ծերուկին համբալը տամ:
Քանզի, ինչպես հոգով, սրտով, համոզված եմ և լավ գիտեմ,

210 Նա այնպիսի մի կամակոր հոգի ունի, որ ոչ միայն չի թողնի քեզ,
Այլ ինքն անձամբ այստեղ կգա քեզ կանչելու և այդպիսով,
կարծում եմ ես,

Նա ապարդյուն ետ չի դառնա կամ պետք է խիստ նա զայրանա»:
Ասաց այդպես նա բարձրաձայն ու մտրակեց նծուզներին գեղեցկաբաշ
Եվ շատ շուտով եկավ, հասավ Պիլոս քաղաքն ու ապարանքն
իր հայրական:

Իսկ Տելեմաքն ընկերներին հրամայեց հորդորանքով.
«Դուք, ուղեկից իմ ընկերներ, պատրաստեցեք սև նավի սարքն
Ու բարձրացեք նավի վրա, որ շատ շուտով ճանապարհվենք»:
Ասաց այդպես, և լսեցին նրանք իսկույն ու հնազանդ:
Ժիր բարձրացան նավի վրա ու բոլորը անդ բազմեցին նստիքներին,

220 Իսկ Տելեմաքն, շտապելով, աղոթք արեց Աթենասին
Ու կատարեց անդ հեղումը, և մոտեցավ այնժամ նրան հանկարծ
մի մարդ,

Հեռաբնակ օտարական, որը փախել էր Արգոսից, հանց մարդասպան:
Գուշակ էր նա ու ծագումով սերնդից էր Մելամպոսի,
Ով բնակվում էր խաշնավետ Պիլոսի մեջ մի ժամանակ
Եվ հայտնի էր, որպես հարուստ պիլոսացի, որ տո՛ւն ուներ
մի գերհուշակ:

Սակայն հետո, փախուստ տալով հայրենիքից, գնաց դեպի այլ երկրներ,
Քանզի այդպես նա խույս տվեց խիզախ սրտի տեր Նելևսից,
Որն այնուհետ զավթեց նրա բազմաբազում կայքն ու գույքը

ամբողջ տարի,

Մինչ Մելամուհոսը, շղթայված, դառնության մեջ կապանքների,
230 Տառապում էր Փիլակոսի տանն անողորմ տանջանքի մեջ ու վշտահար
Եվ, անողորմ աստվածուհի Էրինիսի ազդեցությամբ խելագարված
Ու կուրացած, խիստ փափագում էր ձեռք բերել նա Նելևսի

պերճ դատրիկին.

Նա, մահից իր խուսափելով, Փիլակեից արջառները բարձրաբառաչ
Դեպի Պիլոս քշեց, տարավ ու Նելևսից այնտեղ նա իր վրեժն առավ՝
Նրա անկարգ գործի համար: Իր եղբոր մոտ բերեց կնոջը բարեհաճ,
Սակայն ինքը թողեց, գնաց դեպի օտար, այլ երկրներ,
Դեպի Արգոսը ձիավետ, որտեղ բախտից վիճակված էր արդեն նրան
Ապրել, այլև իշխել բոլոր արգիացոց, իբրև արքա:

Այնտեղ էլ նա ամուսնացավ մի կնոջ հետ և տուն շինեց բարձրակոտոր.

240 Ու ծնվեցին զավակներն իր՝ Անտիփատեսն ու Մանտիոսը քաջագոր:

Անտիփատից ծնվեց ապա Օիկլեսը մեծահոգի,

Օիկլեսից ծնունդ առավ Անտիարայը մարտաշունչ,

Որին սրտանց սիրում էին ասպարակի Զևսն երկնատեր, Ապոլլոնը.

Սակայն բնավ չկարեցավ շեմքը անցնել նա ծերության,

Այլ կործանվեց նա Թերեոն չար դավանքով իր ընչատեր, ագահ կնոջ:

Բայց նրանից ծնունդ առան զույգ զավակներ Անտիլոքոսն, Ալկմեոնը,

Իսկ Մանտիոսից անդ ծնվեցին Կլիտոսը և Պոլիփիդեսն:

Կլիտոսին մի ժամանակ հափշտակեց Արշալույսը ոսկեգահիկ՝

Հանուն նրա գեղեցկության, որ նա ապրի հույլում հավերժ անմահների:

250 Մինչ քաջագոր Պոլիփիդին, երբ Անտիարայը վախճանվեց,

Ապոլլոնը դարձրեց գուշակ, որ գերազանցն էր մարդկանցից

մահկանացու:

Եվ սա, անա, իր հոր հանդեպ խիստ զայրացած, գաղթեց, գնաց

Հիպերեսիե,

Որ ապրում էր՝ մահկանացու մարդկանց համար գուշակումներ

միշտ անելով:

Ահավասիկ, դրա որդին էր իսկապես Թեոկլիմեն կոչվող մարդն այդ,

Որ մոտեցավ այն ժամանակ Տելեմաքին հանկարծակի:

Աղերսանքով աղոթում էր նա սևաթույր ու ճեպընթաց նավի վրա.

Արդ, բարձրաձայն նա բարբառեց և խոսքն ասաց իր թևավոր.

«Ո՛հ, սիրելիդ, քանի որ քեզ ես այժմ գտա զոհաբերում կատարելիս,

Աղաչում եմ, հանուն զոհիդ և աստծու, որին զոհ ես բերում այստեղ,

260 Հանուն անձիդ ու քո գլխի, նաև ի սեր ընկերներիդ,

Պատասխանիր դու իմ հարցին և ճշմարիտն ասա միայն.

Արդ, ո՛վ ես դու կամ ո՛ր ցեղից և որտե՛ղ եմ քո ծնողներն ու քաղաքը»:

Պատասխանեց իսկույն նրան և խոսք ասաց Տելեմաքոսը խորիմաց.

«Այդքանը քեզ, օտարական, ես կպատմեմ ճշմարտացի:

Իթակեի ծնունդն եմ ես, և Ռիսևսն էր հայրը իմ,

Եթե դեռ կա: Բայց կործանվեց նա բերմունքով մի դառնաղետ,

Դրա համար եմ հավաքել ընկերներինս այս սևաթույր նավի վրա

Եվ աստ եկել հարցուփորձի, որ լուր լսեմ հար բացակա իմ հոր մասին»:

Նրան իսկույն ի պատասխան իր խոսքն ասաց Թեոկլիմենն

աստվածային.

270 «Պանդոլխոս եմ ես, հայրենիքից փախել եմ, զի մարդ եմ սպանել
եւ ցեղակից,

Որը ունի արեյանց մեջ և Արգոսում ձիասնույց

Բազմաբազում ազգականներ ու եղբայրներ հզորագոր ու կորովի:

Ես խույս տվի նրանց ձեռքից, փախա մահվան սև օրհասից

Եվ արդ, այսպես ինձ վիճակված է թափառել միշտ մարդկանց մեջ՝

Հանց մի թշվա՛ռ փախստական. աղերսում եմ, նավիդ վրա ինձ ընդունիր,

Որպեսզի ինձ գեթ չսպանեն. հարածո՛ւմ եմ ինձ անողոր»:

Այնժամ նրան ի պատասխան այսպես ասաց Տելեմաքոսը խորիմաց.

«Քե՛զ, որ այդպես փափագում ես, ես չեմ մերժի, պատասխարել

նավիս վրա.

Վե՛ր կաց, նստիր և կզնանք, մեր պաշարից նաև բաժին
մենք քեզ կտանք»:

280 Ասաց այդպես, ապա վերցրեց նրա ձեռքից տեղ-նիզակը պղնձակոտ
Եվ այն դրեց իր բոլորակ ու սև նավի կոկ հատակին տախտակամած,

Ինքն էլ, հապճեպ բարձրանալով նավի վրա ծովագնաց,

Բազմեց այնտեղ նավախելին, իսկ իր կողքին նստեցրեց Թեոկլիմեն

Նոր եկվորին: Մինչ նավորդները շոտափույթ կտուսնները արձակեցին,

Տելեմաքոսն հրամայեց ընկերներին հորդորանքով՝

Ամրապնդել նավասարքը: Կատարեցին նրանք նրա պատվերն արագ,

Եղևնակերտ կայմը վերցրին ու տնկեցին խանդակի մեջ իր խորախոր,

Այնուհետև այն կապեցին չվաններով հաստ ու ամոր

Եվ քաջոլոր պինդ փոկերով տարածեցին առագաստները սպիտակ:

290 Մինչ Աթենաս աստվածուհին նրանց այնժամ հողմ առաքեց
բարենպաստ,

Որ թունդ փչեց եթերական բարձունքներից, որպեսզի նավն

Արագ և ժիր անդ պանա, անցնի ծովի ջրերն աղի:

Այդպես անցան նրանք Կրունեն և Քալկիսի հորդ հորձանքները

թափանցիկ,

Ու մայր մտավ արևն արդեն, և խավարը պատեց շուրջը

և ճանապարհն:

Մինչդեռ նավը, Չևսի հողմով շարժվելով, հասավ Փեա

Եվ էլիսը աստվածային, ուր իշխում են էպիսոպոս,
Իսկ այնտեղից Տելեմաքը նավն իր ուղղեց դեպ կղզիներն ապստամուտ՝
Մտածելով, արդյոք մահից փրկվելո՞ւ է, թե՞ անխուսափ կկործանվի:

Մինչ Ռոդիսեան և խոզարածն աստվածակերպ խրճիթի մեջ
300 Ընթրիք էին դեռ վայելում, և հովիվներն էլ նրանց հետ:
Իսկ երբ նրանք կերուխումով լավ հագեցան, որքան սիրտն էր
այդ փափագում,

Խոսքն սկսեց Ռոդիսեան, որ կամեցավ մի կերպ փորձել խոզարածին՝
Արդյո՞ք սիրով և հոգատար նա կորդի, որ ինքը դեռ այնտեղ մնա,
Թե՞ կստիպի, հավառակը, շուտով գնալ դեպի քաղաք:

«Ակա՛նջ դիր ինձ, ով Եվմենու և դուք, սրա ընկերներդ.
Ուզում եմ ես վաղ ստալոտ քաղաք գնալ, ողորմություն այնտեղ մտրալ,
Որպեսզի քեզ, նաև քո այլ ընկերներին, զուր նեղություն չպատճառեմ:
Ու դու հիմա խորհուրդ տուր ինձ և ուղեցույց նաև մի մարդ,
Որ ինձ տանի ու տեղ հասցնի, իսկ քաղաքում ես կը շրջեմ

310 Եվ կմտրամ. գուցե մի թաս ինձ գինի՝ տան կամ հաց գցեն
գեթ մի փշուր:

Ես կգնամ աստվածային Ռոդիսեանի տունը նույնպես,
Որպեսզի անդ մի լուր հարսնեմ խոհեմամիտ Պենեոպեյե պերճ
թագուհուն:

Այնտեղ ի դեպ կհանդիպեմ խոսնայրներին ամբարտալան,
Գուցե և տան ինձ մի բաժին ուտեստներից, որոնք շատ կան
նրանց առջև:

Ես անդ նրանց կձուռայեմ ինչպես հարկն է, ինչպես իրենք կցանկանան:
Ասում եմ քեզ, ինձ լավ լսիր, զրկված չեմ ես ամեն տեսակ
շնորհքներից:

Եվ, շնորհիվ միայն Հերմես Ուղեկցողի, որ գործերին բոլոր մարդկանց
Հաղորդում է շնորհաշուք փառքն ու պարծանքը գերազանց,
Ծառայության գործում ինձ հետ մրցել ոչ ո՞ք չի կարե՞նա:

320 Ես լավ գիտեմ վառել կրակն և փայտը գոս ջարդել կարգին,
Միսը մաս-մաս լավ կտրատել, մատրովակել նաև գինին,
Գիտեմ և այն՝ ինչպե՛ս ստորն հաճոյանում է մեծամեծ
մարդկանց հզոր»:

Այնժամ նրան դու, Եվմենու, ո՛վ խոզարած, այս ասացիր խիստ
վրդովված.

«Օտարական, այդ ի՞նչ միտք էր, որ քո սրտում ծագեց հանկարծ:
Դու, երևի, փափագում ես անդ կործանվել միանգամից,
Եթե իրոք ցանկանում ես ժանտ հույլի մեջ մտնել նրանց,
Ում բռնությունն ու վիսուքությունն արդեն հասել է երկնքին:
Նաև նրանց սպասարկող ծառաները ամենևին նման չեն քեզ,

Պատանհներ են բոլորը, հագած ունեն լավ բանկոններ ու պատմունան,
330 Գլուխներն են նրանց մաքուր և շողշողուն, դեմքերը պերճ ու բերկրալի:
Նրանց առաջ դրված են միշտ կոկ սեղաններ լավ ողորկված,
Որոնք լիքն են հացով, գինով, մսեղենով միշտ ակաղձուն:
Այստե՛ղ դու կաց և ոչ ոքի դու նեղություն չես պատճառում,
Ո՛չ անձամբ ինձ, ո՛չ էլ սրանց, ինձ հետ ապրող ընկերներից
մեկն ու մեկին:

Իսկ երբ հետո Ռոդիսեան սիրած որդին վերադառնա և այստե՛ղ գա,
Նա քեզ կը տա պերճ մի բանկոն և պատմունան, որ դու հագնես
վայելչաբար,
Եվ քեզ այնտեղ նա կառաքի, ուր որ սիրտը քո ցանկանա»:

Պատասխանեց այնժամ նրան բազմաշարշար Ռոդիսեան աստվածային.

«Ա՛խ, երանի՛, ով Եվմենու, Ջև-հոր պրտին այնքան լինես դու սիրելի,
340 Որքան դու ինձ ես հաճելի, որ տանջանքից ու շրջերուց ինձ փրկեցիր:
Մահկանացու մարդկանց համար ոչինչ չկա ավելի վատ, քան դեգերումն.
Մարդիկ կրում են աղետներ հանուն դաժան և անիծյալ որովայնի,
Որ ծնում է դժբախտություն և տանջալից թափառումներ մուրացկանի:

Բայց քանի որ ցանկանում ես դու ինձ առայժմ այստեղ պահել,
Այժմ ինձ պատմիր դու մո՛ր մասին աստվածակերպ Ռոդիսեանի
Եվ հոր մասին նաև նրա, որին թողեց նա ծերության շեմքի առաջ:
Կենդանի՞ են արդյոք նրանք, տեսնում են լույսը արևի,
Թե՞ իսկապես մահացել են և իջել տունը Հադեսի»:

Եվ խոզարած մարդկանց տերը կրկին նրան իր խոսքն ասաց.
350 «Ահա ես քեզ, օտարական, այդ կպատմեմ ճշմարտացի:
Լաերտը դեռ կենդանի է, բայց աղոթում է միշտ Ջևսին,
Որպեսզի նա իր հարկի տակ, սեփական տանը, իր մարմնից
կորզի հոգին,
Բանգի ինքը խիստ վշտահար է բացակա որդու համար,
Այլև սաստիկ ցավագար է՝ մտածելով իր իմաստուն կենոջ մասին,
Որ մահացավ վշտից անբավ ու վաղաժամ մատնեց իրեն
ծերությանն այս:

Այո՛, նրան անհուն վիշտը որդու համար իր փառաշուք
Թշվառագույն մահվան մատնեց: Եվ թող ոչ ոք, ինձ բարեկամ
Կամ սիրելի իմ մարդկանցից, այդ ժանտ մահով չմահանա:
Քանի դեռ նա կենդանի էր, թեպետ և միշտ ցավեր ուներ
դառնակակիծ,

360 Ես նրա հետ խոսում էի մեծ հաճույքով, հարցմունք անում ամեն անգամ:
Նա էր սնել իր դատեր հետ ինձ միասին. երկայնգգեստ ու գերազանիվ
Կտիմենեի հետ միասին, որ կրտսերն էր նրա բոլոր զավակներից:
Սննդակից էի նրան, և հարգում էր ինձ նրանից նա ոչ պակաս:

Իսկ երբ հասանք մենք երկուսով փափագելի, արքուն կյանքի,
Մարդու տարան նրան Սամե՝ վճարելով մեծ փրկագին,
Իսկ թագուհին ինձ պարզեց այնժամ բաճկոն մի նկարեն
Ու գեղեցիկ մի պատմուճան: Նա շնորհեց նաև մուկեր իմ ոտքերին,
Այս դաշտը ինձ առաքեց, և այնուհետ էլ առավել սիրեց նա ինձ:
Մինչդեռ հինա այդ ամենից զրկված եմ ես բոլորովին,

370 Բայց արդյունքն իմ աշխատանքի բազմապատկում են աստվածներն
երջանկավետ.

Աղբյուրն է դա իմ սննդի: Դրանով էլ հարգում եմ ես իմ հյուրերին,
Էլ չեմ լսում տանտիրուհուց ոչ քաղցր խոսք, ոչ էլ գործիս խրախուսանք
Այն օրվանից, երբ պատեցին նրա օջախն աղետները, փորձանքները,
Երբ տիրեցին սեղեխները ամբարտախան: Ծառաները, անտարակույս,
Փափագում են գրույց անել տանտիրուհու հետ, հարցնել, լսել
Ու նրա հետ ոտել, խմել, դաշտը տանել նրա պատգամն ու կարծիքը,
Քանզի այդպես է միշտ խնդում ծառաների սիրուն ու հոգին»:

Եվ հոփսան ամենիմաց պատասխանեց ու խոսք ասաց.
«Ո՛հ, Եվմեոս դու խոզարած, մի՞թե այդպես դու մահկանան
քո հասակից

380 Թափառում ես այդքան երկար, հեռու և գուրկ հայրենիքից ու ծնողից:
Որեմն ասա դու ինձ հիմա, սակայն պատմիր ճշմարտաբար.
Գուցե ձեռքով չար թշնամու ավերված էր լայնափողոց քաղաքը այն,
Որտեղ ապրում էին այնժամ քո հայրն ու մայրն ազնվամեծար,
Եվ կամ գուցե քեզ մեն-մենակ, անդ եզների կամ խաշիկների մոտ
գտնվելիս,

Ծորթել, տարել են թշնամիք իրենց նավով և վաճառել են այնուհետ
Այս տանը քեզ ու այս մարդուն՝ ստանալով արժանավոր ու մեծ վճար»:
Եվ խոզարած մարդկանց տերը նրան կրկին իր խոսքն ասաց.
«Թուարական, քանի որ դու հարց ես տալիս, այժմ իմ մասին,
կպատմեմ ես,

Իսկ դու հանգիստ ու լուռ լսիր՝ և, հրճվելով, հոգեզվարձ գինի՛ն խմիր:

390 Գիշերն է այժմ երկարատև, և քնելու բավականին կա՝ ժամանակ,
Մենք կարող ենք հրճվանքով լի գրույց անել: Պետք չէ բնավ
քեզ, օրինակ,

Ծատ վաղածամ պտուկել, բնել, քանզի չէ՞ որ շատ քնելն է վնասակար,
Իսկ մրուսները, որոնց սիրուն է փափագում այդ, թող նիրհելու
գնան շուտով,

Որպեսզի վաղ առավոտյան, արշալույսին, նախաճաշը տանն անելով,
Արքայական խոզերի հետ դուրս գան, գնան դեպի դաշտերն, արոտները,
Իսկ մենք այստեղ, այս խրճիթում, խնջույք կանենք և կխմենք

Ու մեր կրած բյուր աղետներն ու տառապանքն ուրախությամբ
աստ կհիշենք,
Քանզի նաև դժբախտությամբ, որն անցել է, հրճվում է սիրտը մարդու,
Որ շրջել է շա՛տ ու երկար և կրել է տառապանքները չարաչար:
400 Որեմն այսպես, պատմեմ քեզ այն, ինչ հարցնում ես և իմանալ ես
ցանկանում:

Կա մի կղզի, որը կոչվում է Սիրիե, գուցե և դու այն լավ գիտես.
Օգիգիեից դեպի վերև, ուր արևը կատարում է շրջադարձն իր:
Այն այնքան էլ բազմաբնակ չէ իսկապես, բայց երջանկի է անկասկած,
Հարուստ է այն, եզներով լի, խաշնավետ է, բազմացորեն և գինեշատ:
Ժողովրդի և ազգի մեջ սովը երբեք չի ներխուժում այնտեղ իրոք,
Եվ մահաշունչ հիվանդությունը չի տանջում մահկանացու, դժբախտ
մարդկանց:

Սակայն երբ որ մարդկային ցեղն արդեն հասնում է ծերության,
Մոտենում է արծաթադեղ Ապոլլոնը և Արտեմիսն էլ նրա հետ,
Ու հեշտ, թեթև պաքներով, անցավագին, նրանց հանձնում է
նա մահվան:

410 Եվ կան այնտեղ երկու քաղաք՝ ամեն բանում իրարու հետ
միշտ միաբան,

Իսկ իշխողն էր այդ երկուսի աստվածակերպ հայրս արքա,
Կտեպիոսը Օրմենաձին, անմահներին միշտ հավասար:
Այնտեղ եկան փյունիկեցիք, հանց նավորդներ խրոխտագույն,
բայց խաբերա,

Որոնք իրենց նավի վրա բերել էին բյուր խաղալիք գվարճալի:
Բնակվում էր իմ հոր տանը այդ ժամանակ փյունիկեցի մի կինարմատ՝
Չքնադագեղ, վայելչակազմ, ձեռագործի մեջ՝ մեծարվեստ:
Արդ, կնոջն այդ գրավեցին փյունիկեցիք ու խաբեցին խարդախաբար,
Երբ խորափոր նրանց նավի շրջակայքում մենակ լվացք էր նա անում:
Մեկը սիրով անդ միանում է նրա հետ. սիրտը կանանց, թույլ ու տկար,

420 Ընդունակ է գայթակղության, թեկուզ մինչ այդ նրանք լինեն առաքինի:
Խարողն հարցնում է կնոջն այդ, թե ո՞վ է նա և որտեղի՞ց է ժամանել,
Ու պատմում է կինը իսկույն և ցույց տալիս իմ հոր տունը բարձրակտուր:
«Ծանոթալար իմ քաղաքն է պղնձաշատ Սիդոնը պերճ,
Դրանով էլ հպարտ եմ ես: Դատրիկն եմ ես մեծահարուստ Արիբասի.
Մի օր, երբ ես, վերադառնում, գալիս էի դեպի մեր տուն,
Տափուպազի ծովահեններն ինձ փախցրին անսպասելի
Եվ, բերելով ապա այստեղ, այդ մեծ մարդուն, նրա տանը
Վաճառեցին, որից և մեծ, արժանավոր գին ստացան»:

Եվ հարցնում է ծովահենը, որ կնոջ հետ անդ միացել էր գաղտնաբար.
430 «Արդյոք հիմա չե՞ս ցանկանում վերադառնալ քո հայրենիք,

Որպեսզի անդ կրկին տեսնես քո հորն ու մորը ձեր տան մեջ
այն բարձրահարկ,
Որոնք դեռ կան, կենդանի են և ապրում են՝ վեհ ու հարուստ»:
Կինը նորից պատասխանում, խոսք է ասում փյունիկեցուն.
«Ուզում եմ այդ, փափագատենե՛ց կցանկանամ, եթե երդվեք դուք,
նավորդներ,
Ու երաշխիք տաք, իսկապես, որ անվտանգ ինձ կտանեք,
կհասցնեք տուն»:
Ասաց այդպես, կատարեցին նրանք բոլորն այնպես, ինչպես
պահանջեց նա:
Երբ, այդպիսով, յուրաքանչյուրը նրանցից երդում տվեց,
Կինը կրկին անդ բարբառեց և այս խոսքը նրանց ասաց.
«Լուռ կացեք դուք, թող սա մեր մեջ, գաղտնի մնա, թող այդ մասին
ընկերներից

440 Ինձ հետ ոչ ոք էլ չխոսի աղբյուրի մոտ կամ ճամփեքին հանդիպելիս,
Որ մեկն ու մեկն, տուն գնալով, այդ չպատմի անդ ծերուկին:
Կասկածելով՝ նա կարող է ինձ անողոք կապանքներով այժմ շղթայել,
Եվ բացի այդ ձեզ համար էլ նա կկնյոթի մահ և կորուստ:
Խոսքն այս պահեք դուք ձեր սրտում, որպես գաղտնիք, կատարեցե՛ք
ձեր գնումներն,
Սակայն երբ որ պաշարներով ու պարենով լցված լինի ձեր նավն արդեն,
Այնժամ իսկույն մարդ ուղարկեք, որ գա մեր տուն և համբավ տա
ինձ գաղտնաբար:

Ես կվերցնեմ հետս ոսկի, որքան այնտեղ ձեռքս ընկնի,
Եվ բացի այդ ես ձեզ կտամ նաև մի լավ ուղեվճար:
Ապարանքում իմ իշխանի ես սնում եմ նրա փորքիկ երեխային,
450 Որ խելք է և ժրածիր վազվզում է, դուրս է գնում տնից ինձ հետ:
Այլև նրան դեպի նավը ես կբերեմ, և կստանաք դուք մեծ վճար,
Եթե նրան դուք վաճառեք այլալեզու մարդկանց մի կերպ»:
Այդ ասելով՝ կինը թողեց ու հեռացավ դեպի մեր տունը պերճափայլ:
Փյունիկեցիք ամբողջ տարի անդ մնացին, բայց գնումներ կատարեցին.
Ձեռք բերելով շատ-շատ պարեն՝ բարձեցին սև ու խորափող
իրենց նավին:
Երբ կորակոր նավն էր արդեն բարձաված, պատրաստ, որ ճանապարհ
ընկնի շուտով,
Նրանք իսկույն մարդ հղեցին, որ այն կնոջն, իբրև բանբեր, իմաց անի:
Ահավասիկ, մեր տուն եկավ այնժամ մի մարդ բազմահմար
և խորամանկ՝

Ձեռքին բռնած ոսկի մանչակ, որ մեջընդմեջ շարված ուներ
և բահրիբար:

460 Երբ մեր տան մեջ ստրկուհիք և իմ մայրը գերամեծար
Հրաձորված նաչում էին ու շատ մեծ գին ստաջարկում այդ մանչակին,
Եկվորը լուռ ու գաղտնաբար աչքով արեց անդ այն կնոջն,
իբրև համբավ:
Այդպես, նրան նշան տալով, նա ետ դարձավ, գնաց դեպի
խորափոր նավն,
Մինչդեռ կինը ինձ մոտեցավ, ձեռքս բռնեց և դուրս տարավ
տանից հապճեպ:
Եվ, դուրս գալով, մեր գավիթում նա նկատեց շատ գավաթներ
ու սեղաններ,

Քանզի խնջույք էին արել մարդիկ իմ հոր հետ միասին,
Իսկ այդ պահին մեկնել էին դեպի ատյանը խորհրդի:
Կինը վերցրեց գաղտագողի երեք գավաթ, ապա թաքցրեց
իր կրծքի տակ

Եվ շուտափույթ առաջ անցավ, իսկ ես նրան հետևեցի հիմարաբար:
470 Արևն արդեն մայր էր մտել, և խավարն էր ծածկել բոլոր
ճանապարհներն,
Մինչ մենք, արագ ընթանալով, եկանք հասանք նավակայանը
փառաշուք.

Անդ կանգնած էր փյունիկեցոց ծովագնաց նավը արագ:
Նրանք իսկույն նավ բարձրացան և, վերցնելով մեզ իրենց հետ,
Ժիր ճեղքեցին ճանապարհները ծովային: Ձևս առաքեց հողմ հաջողակ,
Ու մենք վեց օր և վեց գիշեր լող տվեցինք անդուրյուն:
Իսկ երբ Ձևը Կրոնոսյան յոթերորդ օրն արդեն բերեց,
Այն կնոջը զարկեց հանկարծ Արտեմիսը պաքներով իր մահաբեր.
Նա գլորվեց ու ցած ընկավ նավին, ինչպես ծովային ճալ,
Իսկ նավաստիք դուրս նետեցին, որ ձկներին ու փոկերին
նա կեր դառնա:

480 Եվ ես անտեղ անդ մնացի՝ սրտով տխուր ու վշտահար:
Հողմն ու ալիքը բշեցին նրանց նավը ու բերեցին աստ, Իթակե,
Ապա Լաերտն այստեղ փողով ինձ գնեց ու ձեռք բերեց,
Ահավասիկ ես այսպիսով այս երկիրը տեսա աչքով»:

Եվ Ոդիսևսն աստվածագարմ պատասխանեց ու խոսք ասաց.
«Ո՛վ Եվմենոս, սիրտս խորունկ դու հուզեցիր իմ կրծքի տակ,
Մանրամասն աստ պատմելով, թե որքա՛ն ես սրտով կրել
դու տառապանք:
Ձևը, սակայն, դժբախտության փոխարենը բարություն է քեզ շնորհել.
Բայր աղետներ կրելուց ետ, դու մտել ես տունը մարդու այս սիրալի,

Որն հոգատար քեզ տալիս է և՛ կերակուր, և՛ ամեն ինչ առատորեն,
490 Եվ ապրում ես, ահավասիկ, կյանքով խաղաղ ու երջանիկ:

Իսկ ես ավա՞ղ,
Մահկանացու մարդկանց մեջ գորկ, անապավեն՝ հար շրջելով
այստեղ եկա»:

Այդպես ահա գրուց էին նրանք անում իրարու հետ
Եվ բուն մտան նրանք այնտեղ վերջ ի վերջո, քայց ոչ երկար
ժամանակով,

Քանզի շուտով արդեն ծագեց անդ Արշալույսը ոսկեզամ:
Մինչ Տելեմաքն ու ընկերներն հասան ցամաք, առագաստներն
հավաքեցին,

Ցած բերեցին կայմն ու սարքը, նավը իսկույն ներս քշեցին նավակայան
Ու ձգեցին խարիսխն հապճեպ, նավակառանը կապեցին չվաններով,
Իսկ իրենք էլ, նավը թողած, շուտ դուրս եկան ափը ծովի ալեկոծվող
Ու ճոխ ընթրիք պատրաստեցին, ջուրն ու գինին խմոնարանի մեջ
խսոնեցին:

500 Իսկ երբ նրանք կերուխումով լավ հագեցան, որքան սիրուն էր
փափագում այդ,

Այնժամ նրանց իր խոսքն ասաց Տելեմաքսը խորհմաց.
«Դուք այժմ արդեն դեպի քաղաք տարեք նավը մեր սևաթույր,
Իսկ ես հիմա դաշտ կզնամ, որ այցելեմ հովիվներին,
Ստուգեմ այնտեղ նրանց գործը: Երեկոյան քաղաք կգամ,
Առավոտյան՝ ձեզ, իբրև վարձ ուղեկցության, ես կսարքեմ ճոխ
նաշկերույթ»,

Կհարգեմ ձեզ սուտ մտով և մեղրահամ քաղցր գինով»:
Այնժամ նրան իր խոսքն ասաց Տեոկլիմենն աստվածակերպ.
«Իսկ ե՞ս ապա, ո՞վ սիրելի դու իմ զավակ, որտե՞ղ պիտի գնամ հիմա,
Ապառաժուտ Իթակեի իշխաններից ո՞ւմ կարող եմ ես այժմ դիմել:

510 Գուցե շարժվեմ, ուղիղ գնամ դեպ քո մայրը և տունը քո»:
Եվ Տելեմաքը խորհմաց ի պատասխան այս խոսքն ասաց.
«Մի ա՛յլ դեպքում, ա՛յլ ժամանակ, կկանչեի, որ անպայման
դու մեզ մոտ գաս.

Անդ պատիվը իմ հարկի տակ միշտ կլինեիր քեզ անպակաս:
Մինչդեռ հիմա վատ կլինի հենց քեզ համար, երբ քացակա եմ ես տնից,
Իսկ իմ մորը դու չես տեսի, չի երևում սեղեխների աչքին բնավ,
Այլ վերնատանն, ոստայնի մոտ, միշտ կտավ է գործում, հյուսում
նա մեն-մենակ:

Սակայն ես քեզ ցույց կտամ այժմ ուրիշ մի մարդ. գնա դեպի
հյուրամեծար
Դու Եվրիմաքն, որ քաջասիրտ ազնիվ որդին է փառավոր Պոլիբոսի:
Իթակեում նրան նայում, հարգում են այժմ աստվածաշարի,

520 Ազնվագույնն է նա բոլորից և խնդրում է ձեռքը իմ մոր ամենից շատ,
Որ ստանա ու ձեռք բերի Ռոխսևսի փառք ու պատիվը գերասպան:
Սակայն միայն եթերի մեջ կյանք վայելող Օլիմպացի Ջևաբ գիտի,
Որ նախքան այդ հարսանիքը, նրանց օրհասը կործանում
կպատրաստի»:

Ասաց այդպես, և աչ կողմից հանկարծ թռավ, անցավ թռչուն մի կորովի.
Հզոր բազեն, Ապոլլոնի հաղթ քաները արագաթիո՛ւ
Ճանկում բռնած մի աղավնի: Փետում էր նա փետուրները այդ աղավնու
Եվ ցած թափում երկրի վրա, միջև ուղիղ Տելեմաքի ու սև նավի:
Այդ ժամանակ Թեոկլիմենն իսկույն նրա ձեռքը բռնեց,
Մի կողմ տարավ ընկերներից, անվամբ կոչեց և այս ասաց.

530 «Տելեմաքոս, տես, աչ կողմից թռչունը ոչ-սուանց Ջևաբ իմացության
Մահեց, անցավ: Ես նայեցի դրա դեմքին. թռչունն էր դա գուշակության:
Լավ իմացիր, բացի ձեզանից, Իթակեի ազգին իշխող արքայազոր
Լինելու չէ ոչ մի այլ ցեղ, դո՛ւք կլինեք միայն իշխողն իշխանատեր»:
Նրան իսկույն ի պատասխան իր խոսքն ասաց Տելեմաքսը խորհմաց.
«Երանի՛ թե, օտարական, քո գուշակումն այդ կատարվի.
Եվ կտեսնես այնժամ անշուշտ դու իմ սերը և քեզ տրվող
բյուր ընծաներն,

Իսկ ով այդպե՛ս քեզ հանդիպի, պիտ համարի քեզ երջանիկ
ու փառավոր»:

Ասաց այդպես և խոսքն ուղղեց հավատարիմ ընկերոջն իր՝ Պիրեոսին.
«Կլիտիոսյան դու Պիրեոս, դեպի Պիլոս ինձ հետ եկած
540 Ընկերներից ամենից շատ դու էիր միշտ հավատարիմ և ինձ լսող:
Ահավասիկ, օտարական դու այս մարդուն վերցրու ու տար քո տունն
հիմա

Եվ հոգատար հյուրասիրիր ու մեծարիր, մինչև որ ես ետ գամ կրկին»:
Իսկույն նրան ի պատասխան իր խոսքն ասաց Պիրեոսը նիզակափառ.
«Տելեմաքոս, եթե նույնիսկ դու շա՛տ երկար ժամանակով այնտեղ մնաս,
Սրա մասին ես կհոգամ, և չի ըզզա մեծարանքի ոչ մի պակաս»:
Այդ ասելով՝ նավ բարձրացավ ու պատվիրեց ընկերներին,
Որ և նրանք շուտ բարձրանան նավի վրա ու կտանները արձակեն:
Նրանք այդ ժիր կատարեցին ու նստեցին նստիքներին:
Մինչ Տելեմաքն իր ոտքերին կապեց մուկերը գեղեցիկ,

550 Վերցրեց ապա նա անհասպաղ նավի վրայից տախտակամած՝
Նիզակն ամուր, պղնձասայր: Կտանները նրանք իսկույն արձակեցին
Ու, մեկնելով ծովի ափից, շուտ նավեցին դեպի քաղաք,
Ինչպես արդեն պատվիրել էր Տելեմաքսն, որդին դյուցազն Ռոխսևսի:
Իսկ ինքը նա արագաքայլ շարժվեց, գնաց և շատ շուտով
փարսխն հասավ,

Որ քազմաբյուր կային խոզեր, ուր բնակվում էր խոզարածն
Առմիշտ բարի, տիրոջ գույքին միշտ հոգատար ու սրտացավ:

Ե ր գ տ ա ս ն վ ե ց ե ր ո թ ղ

ՏԵԼԵՄԱՔՈՍԸ ԾԱՆԱԶՈՒՄ Է ԻՐ ՀՈՐԸ

Եվ խրճիթում Ռդիսևսը ու խոզարածն աստվածային,
Առափոռյան, բորբոք կրակը վառելով, ճոխ նախաճաշ պատրաստեցին,
Իսկ մյուս բոլոր հովիվներին, խոզերի հետ, դաշտ ու արոտ ուղարկեցին:
Մինչ բարձրահաշ շներն բնավ չհաշեցին, երբ Տելեմաքը մտնեցավ,
Այլ գգվեցին՝ պոչերն իրենց գալարելով: Տեսավ այնժամ Ռդիսևսը
աստվածային,

Որ շները, պոչերը ցից, գգվեցին խիստ, դոփչում լսեց նա ոտքերի,
Ուստի դիմեց Եվմենոսին և խոսքն ասաց այս թևավոր.
«Ո՛վ Եվմենոս, ինչ-որ, ահա, մարդ է գալիս, գուցե և քո ընկե՛րն է դա
Կամ որևէ մի այլ ծանոթ. տես, չե՞ն հաշում քո շները նրա վրա,

10 Այլ գգվում են՝ պոչերը ցից. ես լսում եմ նույնիսկ դոփչունը ոտքերի»:
Խոսքը դեռ չէր ավարտել, երբ նրա որդին սիրանվեր
Եկավ մտավ նախագավիթն, ու վեր թռավ խոզարածը խիստ զարմացած,
Չեռքից իսկույն ցած գլորվեց սարկարանը, որի մեջ նա
Խառնում էր մուգ-կարմիր գինին, և դուրս վազեց նա իր տիրոջն
անդ ընդատաջ

Ու սրտաբուխ, ջերմ համբուրեց գլուխն, այլև գույգ աչքերը չքնաղլագեղ,
Այլև նրա երկու ձեռքերն, իսկ աչքերիցն իր նա թափեց հոթո՞ղ

արտասուք:
Ինչպես հայրն է հանդիպում ջերմ ու սրտառուչ՝ հեռու երկրից
վերադարձող,
Տասնյակ տարի օտարության մեջ հեռացած իր սիրելի միակ որդուն,
Որին ծնեց նա հրճվելով, փափագատենչ, բայց անագան,

20 Այդպես ահա աստվածագարն Տելեմաքին խոզարածը աստվածային
Գրկել էր սե՛ղմ, համբուրում էր անհագ ու ջե՛րմ, բանգի փրկվել էր
նա մահից:

Ահալասիկ, այնժամ նրան նա դիմելով, այս խոսքն ասաց իր թևավոր,
«Դո՛ւ ես միթե, որ արդ եկար, Տելեմաքոս, սիրատենչիկ, իմ աչքի լույս.

Հույս չունեի, թե կտեսնեմ, երբ դու նավով դեպի Պիլոսը հեռացար:
Ներս եկ շուտով, որ քեզ նայեմ, որ հրճվանքից սիրոսս սիրո՞վ
գեթ հագեմա,

Քանզի նոր ես հեռվից հեռու այցի եկել դու խրճիթն իմ:
Մինչդեռ հաճախ դու չես գալիս դաշտերը այս, որ այցելել հովիվներիդ,
Այլ ասքում ես միշտ քաղաքում, քո ազգի մեջ և միշտ դիտում
Ամբարտավան սեղեխների ոհմակը լիրք և անամոթ»:

30 Նրան իսկույն պատասխանեց և խոսք ասաց Տելեմաքոսը խորիմաց.
«Հենց այդպես էլ պետք է լինի, կգա՛մ, հա՛յր իմ, ես քեզ համար
այստեղ եկա,

Որ աչքերովս քեզ տեսնեմ, այլև անձամբ ականջ դնեմ համբավներիդ.
Մայրս արդյոք մեր տա՛նն է դեռ, մեռ՛ում է անդ նա տակավին,
Թե՛ այլ մարդ է արդեն գտել, իսկ ամայի մահիճի մեջ Ռդիսևսի
Թերևս հիմա սարդերն են գարշ ազատ հյուսում ուսույանն իրենց»:

Նորից նրան ասաց իր խոսքը խոզարած մարդկանց տերը.
«Ոչ, բնավին, մնում է դեռ, սակայն անչափ սրտակոտոր ու վշտահար
Եվ իր տան մեջ միշտ լացուկոծ, ողբ է անում նա մշտապես
Ու կարճում է նա իր օրերն ու գիշերներն արցունքի մեջ դառնակակիծ»:

40 Այդ ասելով՝ իսկույն վերցրեց նրա ձեռքից տեգ-նիզակը պղնձասայր,
Եվ Տելեմաքը ներս մտավ՝ անցնելով շեմքը քարակերտ:
Իսկույն ոտքի կանգնեց նրա հայր Ռդիսևսն՝ նրան իր տեղը զիջելով,
Բայց Տելեմաքն հրաժարվեց ու բարձրաձայն այս խոսքն ասաց.
«Տեղդ նստիր, օտարական, մենք այլ մի տեղ մեզ կգտնենք
այս հարկի տակ,

Այստեղ մարդ կա սպասարկու, որն և անշուշտ տեղ կուս մեզ»:
Ասաց այդպես, նստեց կրկին Ռդիսևսը, մինչ խոզարածը խնամքով
Բերեց, փոեց գետնի վրա կանաչ ուտեր, թփեր ու ջով,
Իսկ վերևից ծածկեց, փոեց նա մի մորթի, որին բազմեց
Ռդիսևսի սիրած որդին:

Նրանց առաջ խոզարածը որեց պնակ՝ լիքը մտով խորովածի,
50 Որը պահված մնացորդն էր դեռ երեկվա վայելածի:
Ապա լցրեց զամբշտղն հացով և այն հապճեպ որեց մեջտեղ,
Այնուհետև խառնարանում խառնեց գինին մուգ-կարմրագույն
ու մեղրահամ,

Ինքն էլ իսկույն նստեց այնտեղ, աստվածագարն Ռդիսևսին
դեմ-հանդիման:
Այդպես նրանք ձեռք մեկնեցին իրենց առջև պատրաստ դրված
ուտեստներին,

Իսկ երբ արդեն կերտխումով լավ հագեցան, որքան սիրուն էր
փափագում այդ,
Տեղեմաքը, խոսքն ուղղելով աստվածակերպ խոզարածին,

այսպես ասաց.
«Հայր իմ, ասա, որտեղի՞ց է օտարականն այս ժամանել այստեղ,
քեզ մոտ,
Ո՞ր նավաստիք արան բերին դեպ Իթակե, ինչպե՞ս էին կոչվում նրանք,
Քանզի գիտեմ, որ իսկապես սա չի եկել աստ հետխումն»:

60 Այնժամ նրան ի պատասխան այս ասացիր դու, Եվմեոս, ո՞վ խոզարած.
«Քեզ, զավակս, այժմ ամեն ինչ կպատմեմ ես ճշմարտացի:
Սա պարծենում է, որ ծնվել է լայնալիր Կրետեում.
Իր անելով՝ մահկանացու մարդկանց բազում քաղաքներ է շրջել արդեն,
Թափառել է երկրե-երկիր, ինչպես իրեն վիճակել էր ինքն աստվածը,
Սակայն հիմա փախել է սա թեսպրոտացի մարդկանց նավից
Ու եկել է խրճիթն իմ այս, իսկ ես ահա հաճեցում եմ քեզ.
Վարվիր, ինչպես կցանկանաս, քանզի քեզնից է աղերսում
նա ապավեն»:

Պատասխանեց նրան կրկին և խոսք ասաց Տեղեմաքոսը խորիմաց.
«Ավա՛ղ, դու ինձ, ո՞վ Եվմեոս, այժմ որպիսի՞ արտակոտոր խոսք
ասացիր,

70 Քանզի ինչպե՞ս ես կարող եմ օտարական այս եկվորին տուն ընդունել.
Դեռահաս եմ ես տակավին, եթե արան մեկնումեկը վիրավորի,
Հզորագոր ձեռքեր չունեմ, որ պաշտպանեմ չար մարդկանցից:
Մինչդեռ մայրս, հոգով երկմիտ, երկմտանքով խորհում է դեռ,
Արդյոք մնա՞լ այստեղ ինձ մոտ և հոգատար լինել մեր տանն,
Հարգե՞լ մահիճն Ռիսուսի և ամբոխի խոսքն ու ճոշանքն,
Թե՞ արքեյանց դյուցազններից ընտրել մեկին ազնվամեծար,
Նրան, որն այժմ, իբրև խոսնայր, նվերներ է առաջարկում ամենից շատ:
Բայց քո հյուրին, այս եկվորին, քանի որ նա արդեն եկել է այժմ
քո տուն,

Բանկրն կտամ և պատմունան ու այլ շքեղ հագուստեղեն:

80 Կնվիրեմ նրան ես թուր մի երկասյրի, մույկեր կտամ ոտքի համար
Եվ կողարկեմ ուղիղ այնտեղ, ուր որ արտանց ինքն ուզենա
ու փափագի:

Կամ թե պահիր քո խրճիթում, եթե կուզես, և խնամիր միշտ հոգատար,
Եվ հենց այստեղ ես կառաքեմ հագուստեղեն ու բազմազան
շատ ոտեստներ,

Իբրև ապրուստ, որ նեղություն չպատճառի նա քեզ և քո ընկերներին:
Սակայն բնավ թույլ չեմ տա ես, որ նա գնա, սեղեխներին առն էրևա,

Որոնք նպերտ են չափազանց, ամբարտախան, այլև անգուսպ
վիսության տեր.
Եվ մի՛ գուցե ծաղրեն սրան, ու ժանտալից մի ցավ դառնա

դա իմ սրտին:
Մինչ միայնակ մարդու համար շա՛տ է դժվար, թեկուզ լինի նա կորովի,
Գործ կատարել բազմության դեմ, քանզի նրանք միշտ ավելի
գորավոր են»:

90 Այնժամ նրան իր խոսքն ասաց բազմաշարժար Ռիսուսը
աստվածագարն.

«Ո՞հ, բարեկամ, գուցե և ինձ պատշաճ է այժմ մի քան ասել.
Արդ, սիրելի սիրուն իմ արդեն կորսավում է, երբ լսեցի պատմածը ձեր,
Որ կատարում են խոսնայրներն այդքան ոճիր և այլ գործեր
չարաբաժան՝

Քեզ պես մարդու ապարանքում, քո ցանկությանն իսկ հակառակ:
Բայց ինձ ասա, կամովի՞ ես դու հանդուրժում ամենը այդ.
Թե՞ ատում է քեզ ժողովուրդն՝ հետևելով աստվածների կամքին միայն,
Կամ միգուցե ատում են քեզ քո եղբայրներն, որոնց վրա
ամեն մի մարդ

Հուսադիր է պատերազմում, երբ թնդում է մարտակոխվն ահագնագույն:
Երանի՛ թե ես լինեի քեզ պես շահել, բայց ա՛յս սրտով,

100 Կամ լինեի իրոք զավակն ազնվամեծար Ռիսուսի,
Կամ լինեի Ռիսուսը, որը անշուշտ, համոզված եմ,
Ետ պիտի գա. թող որ իսկույն ինձ գլխատեր չար թշնամին,
Եթե, իրավ, Լսերտածին Ռիսուսի ապարանքը ներս մտնելով,
Ես այդ բոլոր լսիրճներին չջարդեի, չմատնեի ահեղ մահվան,
Թեկուզ նույնիսկ, բազմության դեմ մարտնչելիս, ես պարտվեի:
Ես գերադաս կհամարեմ՝ խորտակվել գեթ իմ հարկի տակ
և իմ տան մեջ,

Քան թե ապրել և միշտ տեսնել նողկալի գործ ու քարվականք,
Տեսնել՝ ինչպե՞ս վիրավորվում են հյուրերն իմ, ինչպես հաճախ
կանայք ստրուկ

Բռնաբարվում և խալտատակ անարգվում են ապարանքում
իմ պերճաշուք,

110 Ինչպես գինին թափում, լսվում են անխնա և գուր վատնում
ուտեստ ու գույք,
Ինչպե՞ս դաժան կատարվում է այդ ամենը, ստանց արդար
մի հատուցման»:

Այնժամ նրան ի պատասխան իր խոսքն ասաց Տեղեմաքոսը խորիմաց.
«Օտարական, քեզ այդ մասին ես կպատմեմ ճշմարտաբար.
Ո՛չ, քավ լիցի, ժողովուրդը ինձ չի ատում, թշնամի չէ նա ինձ բնավ,

Մեղավոր չեն և եղբայրներն, որոնց վրա ամեն մի մարդ
 Հուսադիր է պատերազմում, երբ թնդում է մարտակոծիվն ահագնագույն.
 Մեր սերնդին մեկ գավակ է Ջևաի կամքով միշտ վիճակված:
 Արկիսիոսը ծնեց միայն մեկ գավակի, Լաերտեսին,
 Ողիսեսի հայրը նույնպես աշխարհ բերեց միակ որդուն՝ Ողիսեսին,
 120 Իսկ Ողիսեսն ինձ լոկ ծնեց, տանը թողեց՝ որդուց ոչ մի շահ չստացած:
 Պատճառն այդ է, որ մեր տան մեջ ներս խուժեցին բյուր թշնամիք,
 Որքան որ կան իշխանագոր մեծամեծներ կղզիներում՝
 Գուլիքիոնում և Սամեում, Ջակիկթոսի մեջ մացառուտ,
 Այլն նրանք, որ իշխում են Իթակեում ապառաժուտ:
 Դրանք բոլորն իմ մոր ձեռքն են խնդրում հիմա և քանդում են
 տունս անգութ,
 Մինչ իմ մայրը ո՛չ ժխտում է ամուսնությունն, ո՛չ էլ գործին
 վերջ է տալիս:
 Ուստի դրանք ոչնչացնում ու լափում են տունն իմ, գույքը,
 Եվ շատ շուտով էլ ի՛նձ անձամբ կկործանեն չարագործներն այդ
 մարդախանձ:
 Բայց ամենն այդ ու մեր վիճակն գտնվում է աստվածների ծնկների մոտ,
 130 Իսկ դու, հայր իմ, գնա իսկույն և լուր հայտնիր Պենելոպին խոհեմամիտ,
 Որ ես արդեն սուրբ Պիլոսից ետ եմ եկել և որ ողջ եմ ու անվնաս,
 Իսկ ես այստեղ պիտի մնամ, մինչև որ դու համբավ տանես ու ետ
 դառնաս:
 Բայց այդ մասին արեյանց մեջ ոչ ոք ոչինչ թող չիմանա,
 Քանզի շատերն այնտեղ հիմա ինձ մահ, կորուստ են պատրաստում»:
 Իսկույն նրան ի պատասխան խոսք ասացիր դու, Եվմենու, ո՛վ խոզարած.
 «Հասկանում եմ և լավ գիտեմ ամենը այդ, հրամանդ կկատարեմ,
 Սակայն դու ինձ այս բանն ասա, ճշմարիտը խոսիր միայն,
 Արդյո՞ք ես այժմ, ճանապարհին, այդ անուն համբավը չտանեմ
 նաև դժբախտ,
 Ծեր Լաերտին: Թեպետ հաճուն Ողիսեսի վշտահար էր նա չարագանց,
 140 Բայց հսկում էր գործին դաշտում և բացի այդ՝ ստրուկների հետ միասին
 Երբեմն տանն էր ուտում, խմում, երբ որ սիրտն իր այդ էր ուզում
 իր կրծքի տակ:
 Մինչդեռ հիմա, այն օրվանից, երբ դեպ Պիլոս դու գավեցիր,
 Ասում են, նա էլ չի ուտում և չի խմում բոլորովին
 Եվ չի նայում գործին արդեն, այլ միշտ, տրված լացուկոծին
 սրտակոտոր,
 Միայն պատկած ողբ է անում, ամբողջապես ուժասպառված»:
 Այնժամ նրան ի պատասխան իր խոսքն ասաց Տելեմաքոսը խորիմաց.
 «Ափսո՛ս, սակայն թողնենք այժմ այդ, թեպետ նա խիստ վշտահար է,

Քանզի եթե մահկանացու մարդկանց կամքով ամեն մի գործը
 կատարվեր,
 Կցանկայի նախ և առաջ ես վերադարձն իմ ծնող հոր,
 150 Ուստի դու լուրը հաղորդիր Պենելոպին, ապա շուտով վերադարձիր:
 Գեպի՛ծերուկն էլ չգնաս, այլ իմ մորը հայտնիր միայն,
 Թող տևօրեն մեր ծառային նա պատվիրի գաղտնածածուկ,
 Որ ծերուկին դեպի դաշտը համբավ տանի նա շուտափույց»:
 Ասաց այդպես և ողարկեց խոզարածին: Իսկույն վերցրեց նա
 մուկերն իր,
 Հապճեպ հագավ ու դեպ քաղաք ճանապարհվեց, մինչդեռ այդ բանն
 Աթենասին
 Հայտնի եղավ, որ խոզարածը փարախից իր հեռացավ,
 Ուստի շուտով նա մոտ եկավ՝ նմանվելով չքնադագեղ, քաջահասակ,
 Գերահարաջ ձեռագործի լավ ընդունակ մի ժիր կնոջ
 Եվ խրճիթի նախադրան դիմաց կանգնեց ու երևաց Ողիսեսին,
 160 Իսկ Տելեմաքն այնժամ նրան չնկատեց և չիմացավ, զի մարդկանցից
 Ոչ բոլորին աստվածները երևում են տեսանելի ու բացահայտ:
 Տեսավ միայն Ողիսեսը և գամփոներն, որոնք սակայն չհաչեցին,
 Այլ կաղկանձով ու ահաբեկ բակում աստ-անդ ցրիվ եկան:
 Հոնքը շարժեց, աչքով արեց աստվածուհին, Ողիսեսը հասկացավ այդ
 Եվ, խրճիթից շուտ դուրս գալով, գնաց, կանգնեց բակի քարձր
 պարսպի մոտ,
 Աստվածուհուն անդ առընթեր, ու Աթենասը բարբառեց այնժամ այսպես.
 «Լաերտածին քազմահնար, ո՛վ Ողիսես աստվածագարն,
 Ժամանակն է, որ դու խոսես քո որդու հետ. հայտնվի՛ր նրան,
 Եվ գնացեք դուք միասին վե՛սմափառ քաղաքն արդեն՝ մտածելով
 170 Խոսնայրների մահվան մասին: Զեզկից հեռու երկարատև ես չեմ մնա,
 Այլ պիտի գամ ձեզ օգնելու, զի մարտելու տենչանքով եմ ոգեշնչված»:
 Եվ Աթենասն, այդ ասելով, իսկույն նրան հպեց, քեց ոսկի մականն:
 Հանկարծակի, ինչպես առաջ, պերճ պատմուճանն, այլև բաճկոնը
 մարքափայլ
 Սեղմ ծածկեցին նրա կործքը, և ստացավ նա հասակն իր ծաղկափթիթ,
 Չքնաղ տեսքը, դեմքն իր դարձավ մութ, թխագույն, իսկ այտերը՝
 լիքն ու առույգ,
 Փարթամաճոխ սև մորուքը պատեց նրա կզակն իսկույն:
 Հրաչքն այդպես կատարելով՝ աստվածուհին անհետացավ:
 Երբ Ողիսեսը ետ եկավ, մտավ խրճիթն, խիստ զարմացավ նրա որդին.
 Սարսափահար՝ նա իր աչքերն ուղղեց այլ կողմ, քանզի աստված
 կարծեց նրան,
 180 Բայց և այնպես նա ձայն տվեց և խոսքն ասաց այս թևավոր.
 «Ծրջի՛կ, այժմ այլ տեսքով ես ինձ երևում, առաջվանից ավելի թարմ

Եվ այլ հագուստ ունես հագած, ու փոխված եմ քո մարմինը,
կերպարանք:
Աստված ես դու, անմահներից մեկը անշուշտ, որ իշխում եմ
լայն երկնքում:
Եղի՛ր դեպ մեզ դու ողորմած, մենք քեզ բազում ու հաճելի գոհ կբերենք
Եվ կընծայենք ոսկի կերտվածք, գթա՛ դու մեզ ու խնայիր»:

Պատասխանեց իսկույն նրան բազմաշարժար Ռոփսուսը աստվածային.
«Աստված չեմ ես, ինչպե՛ս է, որ անմահներին ինձ նման դու
համարեցիր.

Քո հայրն եմ ես, հանուն որի տանջվում ես դու սրտահառաչ
Եվ կրում ես բյուր աղետներ՝ չարադաժան հալածվելով»:
190 Այդպես ասաց և համբուրեց իր զավակին, մինչ աչքերից նրա իսկույն
Թափվեց վարար արտասուքը, որը մինչ այդ զսպում էր նա,

2 համառորեն:
Չհամոզվեց Տեղեմաքոսն, որ իր հայրն է դա իսկապես,
Ուստի դիմեց իսկույն նրան և խոսք ասաց ի պատասխան.
«Ո՛հ, քա՛վ լիցի, դու Ռոփսուս իմ հա՛յրը չես, այլ աստվածն է
ինձ անխնա
Այդպես դյութում, որ առավել սրտահառաչ ու դառնադառն
ես հեկեկամ:

Մահկանացու մարդն անկարող է իր խելքով և ինքնակամ
Մի այսպիսի հրաշք գործել, և միմիայն ինքը աստված, թե կամե՛նա,
Հեշտ կարող է ծերունի մարդուն երիտասարդ դարձնել հանկարծ:
Դու ցնցոտի հագած դժբախտ ծերունի էիր դեռ քիչ առաջ, իսկ այժմ, ահա,
200 Հանդես եկար հանց մի ջահել, նման անմահ, երկնքի տեր
աստվածներին»:

Եվ Ռոփսուսն ամենիմաց պատասխանեց իսկույն նրան ու խոսք ասաց.
«Զուր մի՛ ապշիր, Տեղեմաքոս, մի՛ գարմանա դու չափազանց,
Որ տեսնում ես, ահավասիկ, աչքիդ առաջ քո սիրելի հորն հարազատ,
Քանզի բնավ այլ Ռոփսուս աստ քեզ համար չի գա այլևս:
Այդ Ռոփսուսն ես եմ, որ կամ, ես, որ կրել, հանդուրժել եմ
բյուր աղետներ,

Իսկ այժմ եկա երկիրը իմ հայրենավանդ՝ քսան տարի անցներուց ետ,
Մինչ այսպիսի փոխվելը իմ՝ ավարտու Աթենասի գործն է միայն,
Որ տեսքեր է տալիս տարբեր, ուզածի պես, քանզի կարող է այդ անել:
Նա երբեմն ինձ դարձնում է հեզ, թշվառ շրջիկ կամ մի մուրիկ,
երբեմն էլ ինձ
210 Նա դեռահաս, ատույզ մարդու տեսք է տալիս՝ չքնադագեղ
հագուստ հագած:
Անծայրածիր երկնքի տեր աստվածների համար հեշտ է և մատչելի

Մահկանացու մարդուն անել վեհ, փառունակ և կամ դարձնել նողկ,
այլանդակ»:
Այդ ասելով՝ տեղն իր նստեց, մինչ Տեղեմաքն հասավ, գրկեց
իր հորն ազնիվ,

Ողջագորեց և լաց եղավ, արցունք թափեց նա դառնադառն:
Երկուսով էլ փափագեցին սրտանց ջայլել ու կսկծել արտոսրախառն:
Հայիս էին նրանք այդպես հեծկլտալով և սավելի սրտակոտոր,
Քան թոչունները վշտահար՝ ծովարծիվը, անգղները կորամագի,
Որոնց մատղաշ, անփետրածիլ ձագուկներն են գյուղացիները փախցրել:
Այդպես նրանք լալիս էին ու դառնալի արցունք թափում,

220 Եվ արևն էլ պիտ մա՛յր մտներ՝ նրանց այդ դառն հեծեճանքի
մեջ թողնելով,
Եթե այնժամ Տեղեմաքոսը ձայն չտար հանկարծ իր հորն.
«Ավա՛ղ, հայր իմ սիրանվեր, նախորդները քեզ ի՞նչ նավով՝
Աստ բերեցին այժմ Իթակե: Ի՞նչ մարդ էին, ինչպե՛ս էին կոչվում նրանք,
Քանզի գիտեմ, որ հիրավի, աստ հետիտուն դու չես եկել»:

Եվ խոսքն ասաց իսկույն նրան բազմահամբեր Ռոփսուսը աստվածային.
«Քեզ, զավակս, այդ ամենը ես կպատմեմ ճշմարտաբար,
Ինձ փեակներն, փառապաակ այդ նավաստիք, աստ բերեցին նավի վրա:
Նրանք իրենց ապավինող օտար մարդկանց առաջնորդում են
դեպի տուն:

Քնած էի արագընթաց ես նավի մեջ, սահում էր նավը ծովի մեջ,
230 Եվ քնած տեղն ինձ Իթակե ափ հանեցին: Ծառ ընծաներ տվեցին ինձ՝
Չքնաղ, հյուսկեն, պերճ գգեստներ ու բազմազան ոսկի, պղինձ,
Որոնք կամքով աստվածների պահված են անդ, քարայրի մեջ,
Եվ այժմ ահա ես խորհրդով Աթենասի եկա այստեղ,
Որ մտածե՛նք մենք միասին՝ ինչպե՛ս արդյոք պիտ կործանենք
մեր թշնամուն:

Իսկ դու պատմիր և թիվն ասա խոսնայրների, իրավ, որքա՛ն են
նրանք այժմ,
Որպեսզի ես լավ իմանամ, ի՞նչ մարդիկ են, քանի՞ հոգի.
Ես ողջախոհ իմ հոգու մեջ պիտ մտածեմ և որոշեմ՝
Կարելի՞ է, որ մենք մե՛նակ և առանց այլ մի օգնության՝ ընդդեմ դրանց
Կանգնենք կովի, թե՛ պիտ փնտրենք մեզ օգնություն մի կողմնակի»:

240 Կրկին նրան ի պատասխան իր խոսքն ասաց Տեղեմաքոսը խորինաց.
«Թեպետ լսել եմ ես իրոք մեծահոշակ քո փառքը միշտ, ո՛վ ծնող հայր,
Որ տիգալիոր ես քաջագոր քո ձեռքերով և մի՛տք ունես քաջահաճանար,
Բայց չափազանց ծանր է գործը, որ ասացիր. տարակուսում եմ
ուղղակի.

Անհնար է, որ երկու մարդ մեն ու մենակ մարտեն ընդդեմ
մեծ բազմության,
Մինչ սեղեխները տասնյակ չեն, ոչ էլ նույնիսկ երկու տասնյակ
քաջագուններ,

Այլ առավել բազմաթիվ են, և կիմանաս նրանց թիվը ինքդ շուտով:
Դուլիքիոնից աստ եկել են հիսուներկու երիտասարդ ընտիր մարդիկ,
Եվ նրանց հետ էլ միասին՝ վեց մարդ ծառա սպասարկող,
Իսկ Սամեից հավաքվել են քրսանկչորս ազնվամեծար դյուցազուններ,
250 Նաև բաան երիտասարդ արեացիք աստ եկել են Զակիներուսից.
Իթակեի միջից նաև քրսան հոգի, բոլորն ընտիր և քաջագոր:
Դրանց հետ է նաև Մեդոնն, իբրև բանբեր և երգասաց աստվածաձիր,
Եվ բացի այդ՝ կան քաջափորձ երկու հոգի՝ միս կտրատող:
Ուստի եթե այդ բոլորին մեր հարկի տակ այժմ հանդիպենք
մենք դեմ առ դեմ,
Խիստ կտուժենք, և քո դարձը մեզ մահաբեր պիտի դառնա:
Սակայն եթե դու կարող ես, լավ մտածիր և զորավիգ մեզ որոնիր,
Որն իսկապես պատրաստ լինի մեզ օգնելու, հանց բարեկամ»:

Պատասխանեց այնժամ որդուն Ռդիսևը բազմաշարշար ու դյուցազուն.
«Իմ ի՛նձ լսիր, ինչ որ ասես, քո սրտի մեջ միշտ այն պահիր
260 Եվ լավ դատիր. եթե իրոք մեզ պաշտպանեն վեհ Աթենասն
ու Զևս հայրը,
Բավ չէ՞ արդյոք և այդքանը, թե՞ հարկավոր է օգնական մեզ որոնել»:
Եվ Տելեմաքը խորիմաց պատասխանեց նրան կրկին ու խոսք ասաց.
«Օգնականներն, որոնց դու այժմ անվանեցիր, միշտ բարեհույս են
չափազանց,
Քանզի նրանք, թեև բարձր են բազմած այնտեղ, ամպերի մեջ,
բայց գերագոր
Իշխողն են միշտ բոլոր մարդկանց, այլև անմահ աստվածների»:
Եվ խոսք ասաց կրկին նրան բազմաշարշար Ռդիսևը աստվածային.
«Այդ երկուսն էլ արյունահեղ մարտակովից պիտի սակավ, կա՛րձ
ժամանակ
Բացակայեն, երբ իմ և ժանտ խոսնայրների միջև այնտեղ, մեր
հարկի տակ,
Կովում հզոր՝ մրցման ելնի բուռն Արեսի ոգին և ուժը մարդախանձ:
270 Բայց դու հիմա ետ գնա տուն, երբ որ ծագի Արշալույսը վարդամատն,
Եվ միացիր այնտեղ հույին ամբարտավան սեղեխների:
Իսկ ինձ ապա, մի փոքր հետո, դեպի քաղաք մեր խոզարածը թող քերի,
Որպես թշվառ շրջմուխիկի, հանց ծերունի մի մուրիկի:
Եվ եթե ինձ այնտեղ, իմ տանը անարգեն, սիրած սիրտը քո կրծքի տակ

Թող հանդուրժի, դու համբերիր իմ կրած ողջ վիրավորանքն
ու եպերանքն,
Եթե նույնիսկ, լկտիաբար ոտքերիցս բռնած, քարշ տան և դուրս նետեն,
Եթե գլխիս քարեր թափեն, դու համբերիր ու քեզ պահիր

միշտ անվրդով:
Դու միմիայն խոսքեր ասա մեղմ ու խոհեմ, խնդիր նրանց գորովալիր,
Որ գեթ վերջ տան մոլեգնությանն, թեպետ նրանք չեն լսի քեզ ամենևին,
280 Քանզի նրանց նախավիճակ ժանտ Օրհասը մոտալուտ է և պիտի գա:
Ես քեզ մի այլ բան էլ կասեմ, և դու պահիր քո սրտում այդ.
Երբ իմ սրտին Աթենասը խորախորհուրդ ներշնչում տա,
Ես քեզ գլխիս մի շարժումով նշան կանեմ: Երբ իմանաս այդ բանը դու,
Մեր տանն եղած արեսական բոլոր զենքերը անհապաղ
Վերցրու և տար ու բարձրաբերձ մեր սենյակի մի անկյունում
պահիր ծածուկ:
Եթե հանկարծ խոսնայրները հարցմունք անեն քեզ այդ մասին,
Մի կերպ նրանց դու համոզիր՝ խոսք ասելով քաղցր ու փափուկ.
«Տարել, որել եմ ծխից դուրս, քանզի չէ՞ որ դրանք հիմա
Այնպիսիք չեն, ինչպես թողեց Ռդիսևը՝ դեպի Տրոյա մեկնելիս,
290 Այլ ժանգոտել են լիովին՝ գունավերով կրակի մոտ, գոլորշու տակ.
Եվ մանավանդ՝ այդ մեծապես ինձ իմ սրտում դրդեց որդին Կրոնոսի,
Զգո՛ւյջ լինել, զի միգուցե դուք գինովցած աստ հարուցեք կազ ու կոխվ
Եվ իրարու արյուն թափեք ու պի՛ղծ անեք խնջույքն ամբողջ,
Այլև ձեր այս փեսայությունն, քանզի երկաթն ինքն է իր կողմ
քաշում մարդուն»:
Իսկ մեզ համար դու թող միայն երկու նիզակ և երկու թուր,
Մի զույգ վահան եզնակաշի, ձեռքի համար հարմարագույն,
Որպեսզի մենք, հարձակվելիս, այդ զենքերով իսկույն գինվե՞նք:

Մինչդեռ նրանց
Այնժամ Պալլաս Աթենասը և Զևսն զգուն պիտ մտակույր անեն անշուշտ:
Եվ ա՛յլ մի բան ես քեզ կասեմ, իսկ դու պահիր քո սրտում այդ.
300 Եթե դու ճիշտ իմ որդին ես, և հոսում է քո մեջ իրոք արյունը իմ,
Գաղտնի՛ պահիր. բնավ ոչ ոք թող չիմանա Ռդիսևի դարձի մասին,
Ո՛չ Լաերտը պիտ իմանա, ո՛չ էլ հովիվ խոզարածն այս,
Ո՛չ էլ նույնիսկ մեր տնեցիք, ո՛չ էլ ինքը՝ Պենելոպեն,
Այլ դու և ես միայն գիտենք ու այդպիսով բոլոր կանանց մենք կդիտենք
Եվ կփորձենք ու կիմանանք մեր տան բոլոր ծառա մարդկանց.
Ո՛վ է մեզնից դեռ պատկառում, ո՛վ է սրտանց մեծարում մեզ,
Կամ ո՛վ է մեզ արհամարհում և անարգում քեզ պես մարդուն»:

Պատասխանեց նրան կրկին փառասրակ նրա որդին.
«Հայր իմ, ավա՛ղ, կարծեմ հետո դու կտեսնես և իմ ոգին կճանաչես,

310 Բանգի իրոք վախկոտ չեմ ես, ո՛չ էլ անգամ թեթևամիտ:
Բայց կարծում եմ, որ չի լինի քո ասածը մեզ, երկուսիս էլ օգտավետ:
Աղերսում եմ, ահավասիկ, լավ մտածիր ինքդ ու տես.

Շատ շատ երկար պիտի տևի, եթե դաշտերը շրջելով մենք սկսենք
Մարդկանց այդպես քննել, փորձել, մինչդեռ նրանք, նպերտներն այդ,
Քո հարկի տակ և քո տան մեջ անխնա պիտ լափեն-թափեն

ունեցվածքդ,

Ուստի և ես խորհուրդ կտամ՝ քննել, զննել վարքը կանանց
Եվ իմանալ, ո՞վ է պղծում քո տունն իրոք և կամ ո՞վ է անմեղ արդյոք,
Իսկ դաշտերում տղամարդկանց մենք կարող ենք փորձել հետո,

տեղնուտեղը,

Զի այդ մասին կարելի է հոգալ հետո և անագան,

320 Եթե Ջևաից ասպարակիր ստացել ես ճիշտ այդպիսի դու մի նշան»:

Այդպես ահա նրանք այնտեղ խոսում էին իրարու հետ,

Մինչդեռ քաղաքն հասավ նավը գեղեցկակերտ, որի վրա

Տեղեմաքն և իր ընկերները Իթակե էին եկել սուրբ Պիլոսից:

Երբ խորախոր նավակայանն արդեն նրանք անդ ներս մտան,

Փութանակի դեպի ցամաք հանեցին նավը սևաթույր,

Ապա նրանց զենքն ու զրահն վերցրին, տարան ծառաները մեծահոգի,

Իսկ թանկագին ընծաները Կլիտիոսի տունը տարան անմիջապես,

Եվ բացի այդ՝ Ողիսակի տունը բանքեր առաքեցին՝

Պենելոպե վեհ թագուհուն հայտնելու լուրը այն մասին,

330 Որ դաշտում է Տեղեմաքսն ողջ և առողջ ու պատվիրեց նավը բերել

դեպի քաղաք:

Հարկավոր էր այդ լուրը տալ, որ թագուհին գերամեծար,

Անից իր սիրտը փարատած, գուր չթափի հորդ արտասուք:

Եվ արդ, այնտեղ համբավաբերն և խոզարածն աստվածակերպ,

Որն հայտնելու էր նույն լուրը, հանդիպեցին իրարու հետ:

Երբ որ նրանք եկան, հասան տունն արքայի աստվածափն,

Համբավաբերը բարձրաձայն, նածիշտների ներկայությամբ,

անդ բարբառեց.

«Ո՞վ թագուհիդ, վերադարձավ, արդեն եկավ քո զավակը սիրանվեր»:

Խոզարածն էլ, կանգնած ընթեր իր թագուհի Պենելոպիսն,

Գաղտնի պատմեց այն, ինչ նրան պատվիրել էր նրա որդին:

340 Երբ կատարեց առաջադրանքն իր այդպիսով, նա անհապաղ,

Թողնելով տունն ու ցակապատն, մեկնեց, զնաց դեպի փարախը

խոզերի:

Մինչ խոսակցները զարմացան և սրտագին ու խորախոր վիշտ զգացին,

Եվ դուրս եկան նրանք տնից, անցան դեպի բակի բարձր պարիսպները,

Այնուհետև նստուեցին դարպասների կողքին նրանք:

Այնժամ որդին Պոլիքոսի՝ Եվրիմաքսն հանդես եկավ ու խոսք ասաց.

«Միրելիներ, քաջախիզախ ու մեծագույն գործ կատարեց Տեղեմաքը,

Իր անհապարհը նա անցավ, մինչ մենք, ալիս՝ դ, կարծում էինք,

որ նա բնավ

Ետ չի դառնա, ուստի եկեք ամենալավ սևաթույր նավը ծով ձգենք

Եվ հավաքենք թիավարներ. թող շուտ գնան ու լուր տանեն

նրանք հապճեպ

350 Անդ մեր բոլոր ընկերներին, որ անհապաղ վերադառնան

ու ետ գան տուն»:

Այդ խոսքը դեռ չէր ավարտվել, երբ Ամփինոմն, տեղնուտեղը,

ետ նայելով,

Նկատեց նավն, որ ժամանեց նավակայանը խորախոր,

Ուր առագաստն էին արդեն ցած իջեցնում, այլև թիերը հավաքում:

Ամփինոմը ուրախատիթ ժպտաց իսկույն և ձայն տվեց ընկերներին.

«Պետք չէ այլևս, որ մենք բանքեր գուր առաքենք. տեսա, եկավ

նավը արդեն:

Կա՛մ ներշնչեց նրանց աստված, որ ետ դառնան, կա՛մ թե նրանք

հեռուից տեսան

Տեղեմաքի նավն անցնելիս, սակայն նրան թերևս հասնել չկարեցան»:

Ասաց այդպես, ու վեր կացան նրանք իսկույն և գնացին դեպի ծովափ.

Անդ շտապույթ դուրս քաշեցին սևաթույր նավը դեպ ցամաք:

360 Նրանց զենքերն առան, տարան ծառաները մեծահոգի,

Իրենք սակայն դեպի առյուծը խորհրդի շտապեցին,

Բայց ոչ ոքի թույլ չտվին նիստում լինել, ո՛չ ծերերին, ո՛չ պատանջաց:

Եվ արդ, այնտեղ, նրանց առաջ, Անտիհոսը այնժամ նստեց

ու խոսք ասաց.

«Ալիս՝ դ, ինչպե՛ս աստվածները մահ-կորուստից այժմ այդ մարդուն

ազատեցին:

Հանապազոր և անդադար, նստած հողմուտ բարձունքներին,

Մենք իրար հետ, հերթով, անվերջ հսկում էինք, իսկ արևը

մայր մտնելիս՝

Ոչ մի գիշեր ցամաք մենք չէինք դուրս գալիս, այլ մութ ծովում

Լողում էինք նավով արագ՝ սպասելով Արշալույսին աստվածաձագ,

Որ գեթ բռնենք Տեղեմաքին, ոչնչացնենք՝ նրա դեմ միշտ դարանամուտ:

370 Մինչդեռ ահա աստվածներից մեկը նրան արդեն բերեց նավակայան,

Ուստի խորհե՛նք՝ ինչպե՛ս այստեղ Տեղեմաքին թշվառագույն

մահ պատրաստենք:

Հիմա այլևս մեզանից խույս տալ նա չի կարող, եթե մնա նա կենդանի,

Գիտեմ, երբե՛ք այս մեր գործը գլուխ չի գա ամենևին,

Քանզի արդեն նա իր խելքով զգոն է խիստ և խորամիտ,

Մինչ ժողովուրդն այժմ դեպի մեզ համակիր չէ, ոչ էլ նույնիսկ

բարյացակամ:

Աճապարե՛նք, քանի դեռ նա չի հավաքել նոր ժողովի աքեացոց:

Ես չեմ կարծում, որ նա պղերգ կամ թույլ լինի և այդ գործի մեջ
դանդաղի,

Այլ քինահույզ հանդես կգա և կպատմի ամբողջ ազգին ու ամենքին,
Որ մենք իրոք նյութում էինք նրա դաժան սպանությունն, բայց անհաջող:

380 Լսելով այս գործն ահռելի՝ ազգը մեր դեմ կվրդովվի,
Եվ մի գուցե չարախնդիր վարվեն մեզ հետ ու զրկեն մեզ
Մեր իսկ երկրից ու մենք, որպես փախստական, ապավիճենք
այլ ազգերին:

Կանխելով այդ՝ եկեք բռնե՛նք և սպանենք քաղաքից դուրս,
դաշտերի մեջ

Կամ թե նույնիսկ ճանապարհին, իսկ նրա գույքն ու կալվածք
կվերցնենք մեզ

Ու հավասար մեր մեջ կարգին կբաժանենք: Տունը սակալն
Կտանք իր մորն, այլև նրան, ով նրա հետ ամուսնանա:
Թե խորհուրդն այս չէք հավանում և ուզում եք դուք կենդանի
թողնել նրան,

Որ հայրական իր ողջ գույքին իշխող լինի նա իսկապես,
Էլ միտք չունի, որ այսուհետ աստ հավաքվենք մենք ինչույքի.

390 Այլ ամեն մեկը մեզանից թող որ տունն իր վերադառնա
Եվ թագուհու ձեռքը՝ խնդրի՝ ուղարկելով պե՛րճ նվերներ ու գլխավարձ,
Իսկ նա կընտրի ամենից շատ ընծայողին, ում որ բախտն է
վիճակել այդ»:

Ասաց այդպես. մինչ լուռ էին բոլորն այնտեղ ու պապանձված,
Բայց մեծափառ Ամփինոմը՝ Արեւոսյան Նիսուսի զարմը մեծանուն,
Հանդես եկավ ու բարբառեց այդ ժամանակ ու խոսք ասաց.

Տորենաշատ ու խոտավետ Դուլիթիոնից եկած բոլոր խոսնայրների
Առաջնորդն էր նա հիրավի. նրան, որպես մի գերազանց ճարտասանի,
Ամենից շատ էր հավանում Պենելոպեան, քանզի բարի նա սիրտ ուներ,
Եվ նա նրանց այնտեղ դիմեց ու խոսքն ասաց այս բարեմիտ.

400 «Բարեկամներ՛ր, ես չեմ ուզում ու չեմ կարող կյանքից զրկել Տելեմաքին,
Քանզի ահեղ, զարհուրելի գործ է իրոք՝ արքայագուն մարդ սպանել:
Ուստի եկեք նախ և առաջ հարցնենք խորհուրդն աստվածների,
Եթե իրոք աստվածահայր Չևսն իր կամքով այդ հավանի,
Նրան ինքս, ես կապանեմ և բոլորիդ կհորդորեմ այդ գործն անել.
Եթե մերժեն անմահները, խորհուրդ կտամ, որ այդ գործից
հրաժարվենք»:

Այդպես ասաց Ամփինոմը, նրա խորհուրդն հավանեցին բոլորեքյան
Եվ անհապաղ անդ վեր կացան, Ռոփսուսի տուն գնացին:

Ներս մտնելով՝ այնտեղ իսկույն նստոտեցին հղկված ու կոկ

բազմոցներին:

Մինչ որոշեց այդ ժամանակ Պենելոպեան խոհեմամիտ՝
410 Երևան գալ անդ վիսացող, ամբարտավան սեղեխներին,
Քանզի գիտեր, որ իր տանը չար դավանք կա՝ կործանելու իր զավակին.
Նրան հայտնեց բաները Մեդոնն, որ լսել էր նրանց խորհուրդը
գաղտնաբար,

Ուստի և նա՝ չքնաղ կինը, արդ դուրս եկավ իր սենյակից,
Նաժիշտների հետ միասին գնաց այնտեղ, ուր հավաքն էր
խոսնայրների,

Եվ, իր այտերը ծածկելով գեղեցկափայլ, շողշողեցի մի շղարշով,
Նա կանգ առավ ամբակառույց դռան առաջ, շեմքին ընթեր,
Անվամբ կոչեց Անտիհոնուսին, պախարակեց ու խոսքն ասաց եպերալի.
«Ամբարտավա՛ն Անտիհոնու, աղետարա՛ր դու դավադիր.

Իթակեի ազգերի մեջ ասում եմ, թե հասակակից մարդկանց մեջ դու
420 Գերազանցն ես քո մեծ խելքով ու ճատերով, մինչդեռ բնա՛լ
այդպիսին չես:
Ինչո՞ւ ես դու, շամբջագույնդ, Տելեմաքին մահ և կորուստ
նյութում դաժան:

Մինչ մոռացել ես մեծարել դու աղերսող նաև մարդկանց, որոնց ահեղ
Եվ իմաստուն Չևսն է օգնում: Նողկալի է չարիք ու դավ սարքել այլոց.
Դեռ չե՛ս հիշում՝ ինչպես մի օր, ահաբեկված ժողովրդից,

Որ չափազանց զայրացած էր, հայրդ փախավ, այստեղ եկավ,
Քանզի այնժամ նա իսկապես առընչված էր տափոսացոց հետ ավազակ:
Նա կողոպտել, վնասել էր վաղնջական մեր դաշնակից թեսպրոտացոց,
Որոնք քո հորն ոչնչացնել էին ուզում, կորզել հոգին իր սիրատենչ,
Բնաջնջել անդ, կործանել ստացվածքը և գույքերը անհաշվելի,

430 Սակայն նրանց մոլեգնությունը մեղմացրեց, զսպեց միայն Ռոփսուսը:
Դրա համա՛ր դու կործանում և պղծում ես այժմ նրա տունը շարունակ,
Ուզում շորթել կնոջը իր, սպանել որդուն և ինձ՝ նետել տանջանքի մեջ:
Բավակա՛ն է, պատվիրում եմ, զսպի՛ր դու քեզ ու ներշնչիր
նույնը այլոց»:

Պատասխանեց այնժամ նրան Եվրիմաքոս Պոլիքոսյանն.
«Պենելոպե խոհեմամիտ, դու, ծերունի Իկարիոսի չքնաղ դստրիկ,
Հանգիստ եղիր և վրդովիչ մտքերն այդ քո սրտից հանիր,
Քանզի չկա և չի եղել ու չի լինի դեռ ոչ մի մարդ,
Որ հանդգնի ձեռք բարձրացնել որդուդ վրա, Տելեմաքոս զավակիդ դեմ,
Քանի ես դեռ կենդանի եմ ու տեսնում եմ լույսն արևի:

440 Խոսք եմ տալիս, և այս խոսքն իմ կկատարվի. ով հանդգնի,
—259—

Նիզակը իմ իսկույն նրա թուխ արշուճով ես կներկեմ,
Քանզի չէ որ քաղաքավեր Ողիսևը հաճախակի
Վերցնում էր ինձ իր ծնկներին, խորոված միս էր դնում նա

իմ ձեռքի մեջ,

Առաջարկում էր շտապույն նաև գինի քաղցրամուշիկ,
Ոստի համայն մարդկության մեջ Տելեմաքն է ամենից շատ ինձ սիրելի:
Ո՛չ, թույլ չեմ տա, որ սարսափի նա սև մահից, խոսնայրներից,
Բայց աստրծու կամքով տրված մահից դժվար է խուսափել»:

Այդպես ասաց ամոքելով, թեպետ ինքն էր նրա որդուն կորուստ նշույթում,
Եվ բարձրացավ Պենելոպեան իր վերնատան շողշող սենյակը գեղեցիկ,

450 Արտոսրախառն ողբաց այնտեղ Ողիսևսին՝ վեհ ամուսնուն

իր սիրատենչ,

Մինչդեռ խաժակն Աթենասը ցանեց նրա աչքերին քունը քաղցրամուշ:
Երեկո էր, երբ խոզարածն աստվածային եկավ, հասավ
Ողիսևսին ու իր որդուն: Փարթամ ընթրիքը սարքելով՝ նրանք այնտեղ
Փողոտեցին միամյա խոզ, իսկ Աթենասն այդ ժամանակ
Եկավ, կանգնեց անդ առընթեր Լաերտածին Ողիսևսին,
Հպեց նրան իր մականը, դարձրեց նրան կրկին թշվառ մի ծերունի,
Մարմնի վրա՝ ողորմելի մի ցնցոտի. չէ՞ որ գուցե խոզարածը
Նրան տեսներ և ճանաչեր, ապա, սրտի խոր բերկրանքն իր չզուպելով,
Ծուռ վագ տար տուն և իմաստուն Պենելոպին համբավն հայտներ:

460 Եվ Տելեմաքն առաջինը խոսքն սկսեց ու բարբառեց այնտեղ այսպես.
«Եկա՞ր արդեն, ով Եվմենու, ի՞նչ եմ խոսում քաղաքի մեջ,

կամ ի՞նչ լուր կա.

Արդյոք նպերտ խոսնայրները վերադարձա՞ն դարանից այն,
Թե՞ այնտեղ եմ, դարանակալ՝ սպասելով, թե երբ պիտի

ես տուն դառնամ»:

Նրան այնժամ պատասխանեց ու խոսք ասաց Եվմենոսը խոզարած.

«Քաղաքի մեջ անցրեցելով՝ ես այդ մասին չէի կարող խորհել անգամ,

Ես ոչ ոքի հարցմունք չարի, այլ դրդում էր ինձ իմ հոգին,

Որ շուտափույթ համբավն հայտնեմ, ապա կրկին այստեղ շուտով

ես դառնամ, գամ:

Միայն ճամփին հանդիպեցի ես բանբերին արագավագ,

Որն, արդարև, առաջինը համբավն հայտնեց քո մորն արգո:

470 Գիտեմ նաև ես այլ մի բան, որը տեսա ես իմ աչքով.

Երբ քաղաքից ես դուրս եկա, իսկ և իսկ անդ, որտեղ բլուրն է Հերմեսի,

Հեռից-հեռու նկատեցի նավը արագ, որ ուղղակի ներս էր մտնում

Նավակալան: Դրա վրա մարդիկ կային բազմաբազում,

Ծանրաբեռնված էր այն նաև վահաններով ու երկաայրի նիզակներով,

Եվ դա, կարծեմ, նրանք էին: Ուրիշ ոչինչ էլ չգիտեմ»:

Ասաց այդպես, Տելեմաքի սուրբ գործությունն իսկույն ժպտաց,

Բայց հայացքն իր, խոզարածից աննկատ, իր ծնող հոր կողմն

ուղղեց հապճեպ:

Արդ, երբ նրանք գործից պրծան և ընթրիքը պատրաստեցին,

480 Կուշտ ընթրեցին, ու վայելուչ այդ խնջույքից այնտեղ բոլորը լիացան,

Իսկ երբ արդեն կերովխումով լավ հագեցան, ինչպես սիրտն էր

փափագում այդ,

Ծուռ պսակեցին քուն մտնելու. շնորհաշուք Բունը ապա տիրեց նրանց:

Ե ր գ տ ա ս ն յ ո թ ե ր ո թ ղ

ՏԵԼԵՄԱՔՈՍԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ԻԹԱԿԵ

Երբ որ ծագեց ճաճանչագեղ Արշալույսը վարդամատն,
Աստվածագուն Ռդիսևսի սիրատենչիկ զավակն ազնիվ՝
Տելեմաքոսն իսկույն հագավ գեղեցկափայլ մուկերը պերճ իր ոտքերին,
Վերցրեց ապա նիզակն ամուր, ձեռքի համար հարմարագույն
Եվ, ողողվելով դեպի քաղաք, այսպես ասաց խոզարածին.
«Հայրի՛կ, ահա ես գնում եմ դեպի քաղաք, որ իմ մորը տեսնեմ այնտեղ,
Քանզի բնավ ես չեմ կարծում, որ այդքան շուտ նա դադարի
Արցունք թափել կականայիր, այլ ողբ կանի, կհեկեկա նա վշտագին,
Մինչև որ ինձ աչքով տեսնի, իսկ շրջիկին այս տարաբախտ

հանձնում եմ քեզ.

10 Նրան քեզ հետ, ո՛վ Եվմեոս, դու քաղաք բեր: Թող նա այնտեղ,
հանց մութացիկ,
Երջի, մութա, կեր հայթայթի: Կտան նրան, ով գթալով այդ ցանկանա,
Մի թաս գինի, մի կտոր հաց: Իսկ ես հիմա էլ չեմ կարող

խնամքիս տակ

Ամեն մարդու պահել, սնել, առանց այդ էլ լիքն է սիրտս ստորջանքով:
Եթե դժգոհ մնա շրջիկն, այդ առավել վատ կլինի հենց իր համար,
Իսկ ինձ համար հաճելի է խոսել անկեղծ և ճշմարիտ»:

Նրան իսկույն պատասխանեց և խոսք ասաց Ռդիսևսը ամենիմաց.
«Ո՛չ, սիրելի բարեկամս, ես ինքս իսկ չեմ ցանկանա այստեղ մնալ:
Մորացկանին շատ ավելի ձեռընտու է ուտեստ մութալ քաղաքի մեջ,
Քան դաշտերում. անդ ինձ կտան ողորմություն, ով ինչ ունի,

ինչ կամենա:

20 Եվ իսկապես այս հասակում չեմ կարող ես մնալ այստեղ, այս խրճիթում,
Որ պիտ լսեմ և ամեն կերպ հնազանդվեմ պատվերներից հովիվներիդ:
Այժմ դու գնա, իսկ ինձ իր հետ սա կբերի, ինչպես արդեն

պատվիրեցիր,

Միայն թե ես կրակի մոտ քիչ տաքանամ, երբ ջերմանա օդն արևից,

Քանզի ձորձն իմ վատորակ է, և մի գուցե ինձ չարչարի
Այս վաղորդյան ցուրտը սաստիկ, մինչ քաղաքը, հանց ասացիք,
հեռու է շատ»:

Ասաց այդպես, Տելեմաքոսը դուրս եկավ այն խրճիթից անմիջապես,
Ծարժվեց, գնաց արագաքայլ՝ մտածելով խոսակցների մահվան մասին:
Իսկ երբ այդպես եկավ, հասավ այնտեղ, իր տունը բարեշեն,
Նիզակը իր իսկույն դրեց, թեքեց սյունին նա բարձրաբերձ

30 Ու ինքն հապճեպ ներս մտավ տուն՝ անցնելով շենքը քարակերտ:

Ամենից շուտ և առաջինն Եվրիկլիան տեսավ նրան,
Որ պիտում էր բազմոցներից այդ ժամանակ օղենիները երփներանգ:
Արտասվելով իսկույն վազեց նա ընդատաշ, շուրջն այնուհետ

ամենուրեք

Հավաքվեցին բազմաչարչար Ռդիսևսի ստրկուհիք
Եվ սկսեցին նրա գլուխն և ուտերը ջերմ համբուրել գուրգուրանքով:
Այնուհետև իր սենյակից իջավ, եկավ Պենելոպեան խոհեմամիտ,
Որ նման էր Արտեմիսին, այն չքնաղ Ափրոդիտին ոսկեղենիկ.
Երկու ձեռքով նա փաթաթվեց իր զավակին սիրատենչիկ,
Արտոսրայի՛ր, ջերմ համբուրեց նրա գլուխն ու աչքերը չքնաղագեղ
40 Եվ վերջապես հեկեկալով նրան դիմեց ու խոսքն ասաց այս թևավոր.
«Դո՛ւ ես միթե, որ արդ եկար, Տելեմաքոս, դու, քաղցրագույն

իմ աչքի լույս,

Քեզ տեսնելու հույս չունեի, երբ, գաղտնաբար և հակառակ
իմ ցանկության,

Դու մեկնեցիր դեպի Պիլոս, որ լուր լսես անդ սիրելի քո հոր մասին:
Ուստի պատմիր, արդյոք այնտեղ դու ի՞նչ տեսար, ի՞նչ լսեցիր»:
Պատասխանեց այնժամ նրան և խոսք ասաց Տելեմաքոսը խորիմաց.
«Ո՛հ, իմ մայրիկ, մի նորոգիր լաց ու կոծս, մի՛ հուզիր սիրտը
կրծքիս տակ,

Ես հագիվհագ խուսափեցի դառն օրհասից իմ չարաչար,
Այլ լվացվիր, ապա հագիր, զուգիր մարմինդ հագուստով քո մաքրափայլ
Ու բարձրացիր ծառաներիդ հետ միասին անդ, վերնատուն,

50 Ուխտի՛ր բոլոր աստվածներին՝ կատարել զոհ հարյուրանգ,
Եթե միայն Ջևաբ՝ օգնի, որ կատարվի վրեժի գործն արժանավոր:
Իսկ ես հիմա հրապարակ պիտի գնամ, որ գեթ կանչեմ այն շրջիկին.
Ծանապարհին ինձ հետ էր նա, նավի վրա այստեղ եկավ: Ես նախօրոք
Աստվածային համհարզիս հետ նրան քաղաք ողորկեցի
Եվ հանձնեցի Պիրեոսին, որ իր տունը նրան տանի բարեխնամ
Ու սիրալիր, հյուրամեծար պատվի, հարգի, մինչև որ ես

ես դառնամ, գամ»:

Ասաց այդպես նա բարձրաձայն, մինչդեռ խոսքն այդ իր մոր սրտից
դուրս չթափվեց:

Նա փութապես անդ լվացվեց, հագավ հագուստն իր մաքրափայլ,
Ուխտեց բոլոր աստվածներին զոհ կատարել հարյուրանգ ու մեծափառ,
60 Եթե Չևսը աղոթքն հարգի, և կատարվի վրեժի գործն արժանավոր:
Մինչ դուրս եկավ ապարանքից Տելեմաքոսն արագաքայլ՝
Տեգ-նիզակը ձեռքին բռնած, իսկ հետևից վազում էին երկու ժիր շուն:
Նրա մարմինն այնժամ ծածկեց Աթենասը գեղեցկությամբ մի գերհրաշ,
Եվ, անցնելիս, ժողովուրդը նրան նայում, հիանում էր սքանչանքով:
Ամբարտավան խոսնայրները, նրա շուրջը հավաքվելով,
Խոսում էին բարյացակամ, թեպետ սրտանց սարքում էին

դաժան դավանք:

Բայց խույս տվեց Տելեմաքոսն այդ ամբոխից խառնիճաղանջ
Եվ այն կողմը ուղղվեց, գնաց, որտեղ նստած էին Մենտորն,

Հալիթերսեսն

Ու Անտիփոսն, որ վաղեմի և հայրական բարեկամներն էին նրա:
70 Նա նրանց մոտ, այնտեղ նստեց, և սկսեցին հարցուփորձը

մանրամասն,

Եվ արդ, այնտեղ, այդ միջոցին եկավ նաև Պիրեոսը նիզակափառ,
Քնդաքով դեպ հրապարակ բերում էր նա օտարական այն եկվորին:
Չարհամարհեց Տելեմաքոսն հյուրին այնժամ, այլ ընդատաջ ելավ նրան,
Բայց Պիրեոսն առաջինը նրան դիմեց և խոսք ասաց.

«Տելեմաքոս, հրամայիր, որ փութապես մեր տունն հիմա գնան կանայք,
Որ այնտեղից շուտ քեզ բերեն Մենելայի տված բոլոր ընծաները»:

Իսկույն նրան իր խոսքն ասաց Տելեմաքոսն խորհմաց.

«Ի՛նչ հայտնի չէ, ով Պիրեոս, գործը ինչպե՞ս կվերջանա.

Եթե իրոք ամբարտավան սեղեխները ինձ իմ տան մեջ գաղտնաձածուկ,

80 Նենգ պապեն և բաժանեն իրարու մեջ իմ հայրական գույքը ամբողջ,
Գերադաս է, որ քե՛զ մնան ընծաներն այդ, քան նրանցից մեկնումեկին,
Իսկ եթե ես կարողացա նյութել նրանց մահ ու կորուստ,
Այնժամ իմ տուն, ինձ կբերես ընծաներն այդ ի ցնծություն»:

Ասաց այդպես և փութապես իր տուն տարավ նա ապարախտ

այն շրջիկին,

Եվ երբ այդպես եկան հասան ու տուն մտան գեղեցկաշենն,
Պատմունանները, հանելով, բազմոցների վրա դրին

Ու ներս մտան հղկված ու կոկ լոգարանը՝ լողանալու:

Երբ անդ նրանց ստրկուհիք լողացրին և օձեցին պարարտ յուղով,
Այնուհետև հագցրին քրդեղ ծածկոց, լողիկ և բանկոններ,

90 Նրանք շուտով լոգարանից այն դուրս եկան ու բազմեցին բազմոցներին:
Աղախինը մի ոսկեղեն պերճ գավի մեջ լվացվելու ջուրը բերեց,
Ապա իսկույն լցրեց նրանց, որ լվացվեն ամանի մեջ արծաթակերտ:
Հետո քաշեց, դրեց ուղիղ նրանց առաջ հղկված սեղան.
Մտանապես հարգո կինը բերեց, դրեց հացը առատ,

Նաև պահված պաշարներից բազմապիսի այլ ուտեստներ,
Մայրը բազմեց դեմ-հանդիման, ապարանքի մուտքին ընթեր
Ու, բազմոցին աղապես հենված, ոլորում էր նա իր թելերը նրբագեղ:
Եվ ափդ, նրանք ձեռք մեկնեցին իրենց առաջ պատրաստ դրված
ուտեստներին,

Իսկ երբ արդեն կերուխումով լավ հագեցան, որքան սիրտն էր
փափագում այդ,

100 Այնժամ նրանց իր խոսքն ասաց Պենելոպեան խոհեմամիտ.
«Տելեմաքոս, լա՛վ է, որ այժմ ես բարձրանամ դեպի սենյակն իմ
վերնատան,

Եվ անդ պառկեմ այն մահիճում, որը լիքն է հատաչանքով,
Քանզի ես այն ոռոգում եմ դառն արցունքով իմ վշտալի
Այն օրվանից, երբ Ոդիսևսն Ատրիդների հետ միասին Իլիոն գնաց:
Իսկ դու, մինչև ամբարտավան խոսնայրները վերադառնան,
ես գան այստեղ,

Չե՛ս պատմի ինձ, ի՞նչ լսեցիր քո հոր մասին, ետ կդառնա՞
իսկապես նա»:

Իր մորն իսկույն պատասխանեց և խոսք ասաց Տելեմաքոսը խորիմաց.
«Ես քեզ, մայր իմ, կատեմ ահա և կպատմեմ ճշմարտացի:

Նախ մենք եկանք Պիլոս քաղաքն ու ազգապետ Նեստորի մոտ:

110 Ինձ ընդունեց նա սիրալիր ապարանքում իր բարձրաբերձ,
Հյուրափրեց ինձ հոգատար, ինչպես հայրն է խորունկ սիրով
Չերս ընդունում օտար երկրից նոր ետ եկած իր զավակին:

Այդպես ահա ինձ սրտալի ընդունեցին հայրն ու որդիք գերահոշակ:
Սակալն ասաց, որ չի լսել ինքը բնավ, մահկանացու մարդկանց մեջ
Դեռ ոչ ոքից՝ կենդանի՞ է Ոդիսևսը, թե՞ մահացած:

Բայց և այնպես՝ իր ձեռքով արագավազ, կառքի վրա ամրակատույց,
Ինձ ուղարկեց նա դեպ հերոսը քաջաղեղ, դեպ Մենելայն Ատրևտրդի:

Եվ ես ահա այնտեղ տեսա արգիացի Հեղիսենին, հանուն որի,
Արգիացիք և տրոյացիք հար կովեցին կամքով անմահ աստվածների,

120 Եվ այնտեղ ինձ, ահավասիկ, հարցմունք արեց Մենելայը

քաջամարտիկ,

Թե ի՞նչ կարիք ունեմ արդյոք, որ եկել եմ Լակեդեմոնն աստվածային:
Եվ ամեն բան այնտեղ նրան ես պատմեցի ճշմարտաբար,
Ու ապա նա, ինձ դիմելով, այս խոսքն ասաց ի պատասխան.

«Ավա՛ղ, ինչպե՞ս, մի՞թե դրանք, այդ անիրավ, անգոր մարդիկ,
Ցանկանում են պառկել շքեղ մահիճի մեջ կորովագույն մեծ դյուցազնի,
Որ ճիշտ այնպես, ինչպես եղևիկն երկու ծծկեր, նորածնունդ
իր ձագերին

Թողնում է անդ անտառապատ կաղաղի մեջ հաղթ առյուծի,
Ինքն էլ ապա, արածելով, թռչկոտում է դեպ դաշտն ու ձորը դալարուտ:

Մինչ առյուծը կորովագույն, ետ դառնալով դեպի որջն իր,
 130 Եղնորթներին այդ երկվորյակ մահ է բերում և ժանտ կորուստ,
 Այդպես էլ հենց Ռդիսևը խոսնայրներին մահ կնշուրթի մի խայտառակ:
 Ո՛հ, եթե նա օգնի՛ր Ջև հայր, ո՛վ Ապոլլոն, դո՛ւ Աթենաս,
 Գար՝ այնպիսին, ինչպիսին էր գեղեցկակերտ Լեսբոսի մեջ մի ժամանակ,
 Երբ դուրս եկավ մրցամարտի Փիլոմելյան մեծ քաջի դեմ ու քաջագոր,
 Հաղթ հարվածով նրան ուժգին գարկեց գետին, ու ցնծացին աքեացիք,
 Եթե այդպես խոսնայրների դիմաց կանգներ Ռդիսևը կորովալիր,
 Ծուռ կլափեր մահը նրանց, թանկ կը նստեր ամուսնության

գործը այնժամ,


Իսկ այն, ինչ որ խնդրում ես այժմ, կհայտնեմ քեզ
 Առանց շեղման և, բնավին չխաբելով, ես կպատմեմ:

140 Ահավասիկ, ինչ որ իրոք հայտնեց, ասաց ծովածերուկն արդարախոս,
 Ես բացեքաց, չծածկելով և ոչ մի խոսք, քեզ ամեն բան կասեմ հիմա:
 Նա ինձ ասաց, որ տեսել է Ռդիսևսին վշտերի մեջ անագորույն,
 Կղզում, տանը հավերժահարս Կալիպսոյի, որ պահում է նրան բռնի,
 Եվ չի կարող վերադառնալ, ետ գալ երկիրն իր հայրենի,
 Քանզի չունի այնտեղ ո՛չ նավ, ո՛չ ընկերներ թիավարող,
 Որոնց հետ նա ճանապարհվեր լայնատարած լանջով ծովի»:
 Այդպես ասաց ինձ Ատրիդես Մենելայը, միզակաճոճը մեծափառ:
 Գործն իմ այնտեղ ավարտելով՝ ես մեկնեցի, անմահները ինձ ծովի մեջ
 Ծնորեցին հողմ հաջողակ, որն և բերեց ինձ հայրենիքն իմ

սիրասունչ»:

150 Ասաց այդպես, հոգով խորունկ այեկոծվեց Պենելոպեն,
 Այնժամ նրան դիմեց իսկույն Թեոկլիմենն աստվածային և այս ասաց.
 «Ո՛հ, դու տիկին գերամեծար, Լաերտածին Ռդիսևսի վե՛ն թագուհիդ,
 Գործն, հիրավի, սա չգիտի, ուստի լսիր և այս խոսքն իմ.
 Ծջմարիտը կգուշակեմ և բնավին ես չեմ ծածկի քեզանից ոչինչ:
 Վկա եմ Ջևսն՝ մեծագույնը աստվածներից, այս սեղանը ինձ վանատոր
 Եվ անբասիր այս օջախը Ռդիսևսի, ուր ես եկա, ահավասիկ,
 Որ Ռդիսևսն իր հայրենի երկրի մեջ է արդեն հիմա

160 Կամ թե արդեն, իմանալով գործերը նողկ, մոտ է տանն իր և պիտի գա
 Ու իր սրտում այժմ նշուրթում է մահ և կորուստ սեղեխներին:
 Ես գուշակող մի թռչունից այդ իմացա նավի վրա
 Ու այդ մասին Տեղեմաքին իսկույն այնտեղ ես հայտնեցի»:
 Եվ փոթապես իր խոսքն ասաց այնժամ նրան Պենելոպեն խոհեմամիտ.
 «Ա՛խ, երանի, օտարական, շուտ կատարվեն խոսքերը այդ,
 Մեր մեծարանքն այնժամ իսկույն դու կիմանաս, այնքան ատառ
 ինձնից ընծա



6. Տեղեմաքոս և Պենելոպե (նկար սափորի վրա):

Դու կստանաս, որ քեզ մարդիկ, հանդիպելիս, պիտ համարեն
 գերերջանիկ»:

Մինչդեռ նրանք իրարու հետ խոսում էին այնտեղ այդպես,
 Ռդիսևսի տան հանդիման, գեղեցկակերտ, լավ հատակած գետնի վրա
 170 Խոսնայրները հրճվում էին բազմազվարճ՝ սկավառակ ու տեգ նետելով,
 Որտեղ նաև միշտ հավաքվում էին նրանք լկտիաբար:
 Երբ վերջապես ժամը հասավ հացկերույթի, և դաշտերից,
 Ամեն կողմից խաչինքն եկավ հովիվների խնամքի տակ,
 Այնժամ նրանց կանչեց Մեդոնն, որը բոլոր բանբերներից
 Ամենամեծ սիրելին էր խոսնայրների, մասնակիցը խնջույքների.
 «Բավակա՛ն է, պատանիներ, որքան սրտանց դուք հրճվեցիք

այդ մրցանքով,

Տո՛ւն եկեք այժմ, որ միասին ճաշ պատրաստենք մենք խնամքով,
 Քանզի չէ՛ որ վատ չէ բնավ ճաշ վայելել իր իսկական ժամանակին»:
 Ասաց այդպես, ու վեր կացան նրանք, եկան՝ նրա խոսքին հնազանդված:

180 Երբ որ եկան նրանք խմբով, Ռդիսևսի տունը մտան գեղեցկաշեն,
 Անդ հանեցին ծածկոցները և դրեցին բազմոցների վրա այնտեղ,
 Փողոտեցին իսկույն այժեր, հույժ պարարուն և ոչխարներ,
 Մորթոտեցին պարարտաճարպ նաև խոզեր ու դաշտաչին մի եզ նաև
 Ու սարքեցին ճոխ ճաշկերույթ: Մինչ խոզարածն աստվածային,
 Ռդիսևսը

Դաշտում, այնտեղ, պատրաստվեցին ճանապարհելու ու գալ քաղաք,
Եվ նրանցից ստացինը իր խոսքն ասաց խոզարած տերն հովիվների,
«Որեմն այդպես, ծերուկ շրջիկ, դու ուզում ես քաղաք գնալ այսօր կեթ,
Ինչպես իշխանն իմ պատվիրեց, մինչդեռ իրոք միտք ունեի
Քեզ իսկապես այստեղ պահել, իբրև պահակ մեր փարսիսին:

190 Բայց այժմ արդեն պատկառում եմ ես, երկյուղած, որ մի գուցե
այստեղան
Իմ իշխանը ինձ կշտամբի, մինչդեռ տիրոջ պարսավանքին է անհաճելի:
Արդ, եկ շուտով ուղևորվենք, քանզի անց է կեսօրն արդեն,
Եվ երեկոն կմոտենա, արդեն աստիկ ցուրտ կլինի»:

Պատասխանեց նրան իսկույն և խոսք ասաց Ռոդիսևը ամենիմաց.
«Հասկանո՞ւմ եմ և լավ գիտեմ, իսկ դու այդպես խրատում ես
ինացողին.

Սակայն գնա՛նք, և դու միայն ստաջնորդի ինձ անդադար,
Ինձ մական տուր, եթե պատրաստ կտրած ունես, որ քայլելիս
նեցուկ լինի,

Քանզի չէ՞ որ խիստ սայթաքուն է ճանապարհն և դժվարին,
հանց ասացիք»:

Ասաց այդպես և փոթապես նա հնամաշ պարկը զագիր ու ծակոտկեն
200 Գցեց ուսին: Կախված էր այն գարշ, ոլորուն մի չվանից,
Իսկ Եվսեոսն հանձնեց նրան մի մեծ մական, որը նա խիստ
փափագում էր:

Այդպես նրանք ճամփա ընկան՝ թողած փարսիսն հովիվների
Եվ շների հսկողությանն: Այդպես տանում էր դեպ քաղաք նա տիրոջն իր,
Ինչպես թշվառ մի մուրիկի, կերպարանքով նման դժբախտ մի ծերուկի,
Զեռքին մականն իբրև նեցուկ, մարմնին հագած նողկ ցնցոտի
մի քրքրված:

Այդպես ահա նրանք անցան ողջ ճանապարհը քարքարոտ
Ու, քաղաքին մոտենալով, եկան արդեն աղբյուրի մոտ
Գեղեցկահոտ, որի ջրից օգտվում էին քաղաքացիք:

Պերճ աղբյուրն այդ կերտել էին Իթակոսը, Ներիտոսը և Պոլիկոտրն,
210 Իրա չորս դին, շորջանակի, տնկել էին մի խիտ անտառ կաղամախի,
Որ սնվում էր նույն այդ ջրով: Սառն ջուրը ջինջ բարձր ժայռից
թափվում էր ցած,

Զրի վերև կար մի բազին՝ նվեր ու ձոն հավերժահարս ծովալքներին,
Որտեղ զոհեր էին բերում ճամփորդները ուխտագնաց.

Եվ հանդիպեց այնտեղ նրանց հանկարծ որդին Դոլիոսի, Մելանթևսը.
Նա բշում էր, որպես ուտեստ ամբարտավան խոսնայրների
նոխս խնջույքին,

Հոտից ջոկված ընտիր պիծերն, և հետևում էին նրան երկու հովիվ:
Մելանթևսը տեսավ նրանց ու պարսավեց եպերանքով ու չարաչար,

Նա հայհոյեց, այս խոսքն ասաց, մինչ վրդովվեց Ռոդիսևի
սիրող աստիկ.

«Եվ իսկապես ճիշտ է ասված. անզգամի՞ն անզգամն է ստաջնորդող,
220 Քանզի լատվածն է այդ անում, երբ նմանին միացնում է միշտ նմանին:
Հե՛լ, խոզարած, դո՛ւ, զգվելիդ, ո՛ր ես տանում այդ որկրամուլ
չար բկիկին,

Այդ գարշելի, նողկ մուրիկին, որ ճաշերի պնակալեզն է:
Դո՛ւներն ընկած նա բլուրավոր՝ իր ուտերով շեմքն է մաշում
Եվ մուրում է ողորմելին հացի փշրանք ու ոչ թե թուր կամ մի կաթսա:
Եթե դրան ինձ տայիր դու, կկարգեի դրան հսկիչ մեր գուներին,
Որ միշտ մաքրեր միայն փարսիսն և աղբն ու կուն կամ տերևներ
տար այժերին,

Ինքն էլ, մածուն միշտ ուտելով, պիտի ազդրերն իր հաստացնե՛ր:
Բայց քանի որ գարշ ու զագիր արարքի է դա ընդունակ և միշտ սովոր,
Մի գործ անել չի կամենա, այլ մարդկանց մեջ միայն մուրալ
կցանկանա,

230 Որ հավաքի ողորմություն ու կերակրի անկուշտ, ազահ որովայնն իր:
Բայց ես, ահա, քեզ ասում եմ, և այդ անշուշտ կատարվի.
Եթե հանկարծ դա հանդգնի տունը գնալ աստվածագարս Ռոդիսևի,
Անդ քաջագուն մարդկանց ձեռքից դրա գլխին նետվելու են
բազմաբազում

Նստարաններն, որ կոտրատեն, ջարդ ու փշուր անեն կողերն
իր գարշելի»:

Ասաց այդպես և, մոտ գալով, խելագուրկն այդ Ռոդիսևին հրեց ուժով
Ու սրունքին զարկեց ոտքով, բայց չվանեց ճամփից նրան,
Անխախտ մնաց նա իր տեղում, ու մտածեց Ռոդիսևը.
Զհարձակվե՛լ, չխորտակե՛լ արդյոք դրան ու մականով հոգին կորզել
Եվ կամ վերցնել ու ճոճելով գետնին զարկել, գանգը ջարդել,

240 Բայց Ռոդիսևն հոգին զսպեց և ամոքեց իր զայրույթը, իսկ խոզարածն
Խիստ հայհոյեց Մելանթևսին և աղոթեց՝ իր ձեռքերը վեր կարկատած.
«Հավերժահարսք աղբյուրների, դուք, դատրիկներ Զևս զգոնի,
թե Ռոդիսևն

Ոչխարների և այծերի պարարտաճարպ ազդրերն այրել է ձեզ երբեմն,
Ուրմն հիմա կատարեցեք դուք փափագն իմ և միակ ուխտը իմ սրտի.
Թո՛ղ դյուցազնն այդ վերադառնա, և թող աստված այժմ ետ բերի
նրան այստեղ»:

Այնժամ նա քո վիստությունն այդ ցրի՛վ կտա, վատարեա՛ն դու ո՛վ լկտի,
Որ ծաղրում ես մարդկանց իզուր ու քաղաքն ես դու անընդհատ,
լախրշորեն,

Գնում, գալիս, մինչ խաշինքն է զուր փշանում՝ հանձնված անպետք հովիվներին»:

Եվ Մելանթոսն՝ այդ այծարած հովիվն, այնժամ ահեղ գոռաց.
250 «Ավա՛հ, տեսա՛ք, ինչ խոսք ասաց քոստ շունն այս՝ նեղություն մեջ բազմահմուտ»:

Սպասի՛ր դեռ, ես սևաթույր նավի վրա Իթակեից կտանեմ քեզ
Դեպ հեռուներ և օգտավետ անդ կծախես, հանց ստրուկի:
Ա՛խ, երանի՛ Տեղեմաքին այսօր ևեթ վեհ Ապոլլոնն իր նետերով
Զարկի, սպանի, կամ թող ձեռքով խոսնայրների նա խորտակվի,
Ինչպես հեռվում Ռդիսուսը՝ կորցրած օրն իր վերադարձի»:

Ասաց, թողեց այնտեղ նրանց, որոնք քայլում էին դանդաղ,
Սակայն ինքը արագապես շարժվեց գնաց և տունն հասավ թագավորի:
Անդ ներս մտավ նա անհապաղ, բազմեց շարքում խոսնայրների՝
Դեմ-հանդիման Եվրիմաքին, քանզի նրա մտերիմն էր նա սիրելի:
260 Սպասարկու ծառաները նրա առաջ, իբրև բաժին, միսը դրին,
Իսկ տնօրեն կինն հարգելի քերեց նրան հաց և ուտեստ:

Մինչ խոզարածն աստվածային և Ռդիսուսը տուն հասան
Ու կանգնեցին այնտեղ մոտիկ: Լավում էին անդ հնչյունները կիթառի,
Փեմիտուն էր նվազն հնչում, և Ռդիսուսը փութապես
Խոզարածի ձեռքը բռնեց, ապա այս խոսքն ասաց նրան.
«Եվմե՛տ՝ս, սա Ռդիսուսի ապարա՛նքն է, օ՛ն անդր, օ՛ն.
Ճանաչելի է սա հեռվից, հանց հոյակապ, աչքի ընկնող մի դատիկոն
Հայտերևակ՝ բակն ընդարձակ, շուրջը պարիսպ ատամնավոր:
Տե՛ս, դարպասը երկդունանի հաստատամետ է և ամրակոտ,
270 Եվ չի՛ կարող այդ դռները բանալ ոչ ոք և ոչ մի մարդ:
Կարծեմ, բազում անդ քաջագունք խնջույքի մեջ հրճվում են արդ,
Աստ բուրում է ճենճերահոտն, և կիթառի ձայնը հնչում է քաղցրալուր,
Որը կամքով աստվածների ստեղծված է, որպես ընկեր խնջույքներին»:
Այնժամ նրան դու, Եվմե՛տս, ո՛վ խոզարած, խոսք ասացիր

ի պատասխան.
«Ոհ, որքա՛ն հեշտ դու իմացար. ինչպես միշտ՝ դու այժմ էլ անխելք չես,
Բայց եկ, հիմա լավ մտածենք՝ ինչպե՛ս արդյոք պետք է վարվենք:
Կամ նախապես դու ներս մտիր գեղեցկաշեն այս ապարանքն
Եվ անդ մի կերպ խցկվիր, խառնվիր սեղեխներին, իսկ ես այստեղ
դեռ կմնամ,

Կամ էլ, եթե ցանկանում ես, ես ինքս առաջ ներս կմտնեմ,
280 Բայց դու երկար մի հապաղիր, քեզ մի գուցե մեկնումեկը
այստեղ, դրսում,
Այժմ նկատի և հարվածի կամ վռնդի: Ի՞նչ ես կարծում, ասա՛ շուտով»:

Պատասխանեց այնժամ նրան բազմահամբեր Ռդիսուսը աստվածային.
«Հասկանո՛ւմ եմ և լավ գիտեմ. իմացողին ես խրատում.
Ոչ, նախապես դո՛ւ ներս մտիր, ես կսպասեմ այստեղ մե՛նակ:
Եվ, հիրավի, ծանո՛թ եմ ինձ հարվածները, եպերանքը.
Համբերատար սիրտ ունեմ ես. ծովում, կովում աղետն ու վիշտը

սրտակեզ
Կրել եմ միշտ: Թող մեկն էլ այժմ ավելանա, հանդուրժում ենք
մենք ամեն բան,
Բայց չենք կարող զսպել միայն մեր նզովյալ և մոլեգնող ժանտ
որովայն.
Նա է միայն մարդկանց մատնում արհավիրքի և բյուրավոր
փորձանքների,

290 Եվ նավերն են կերտվում, զինվում հաճուն նրա պահանջների
Ու անպտուղ ծովերի մեջ մահ և կորուստ են պատրաստում
չար թշնամուն»:

Այդպես ահա իրարու հետ խոսում էին նրանք այնտեղ,
Մինչ բազմատանջ Ռդիսուսի շուն Արգոսը, որ պանկած էր անդ,
մերձակա,

Վեր բարձրացրեց գլուխն հանկարծ և ցցեց իր ականջները:
Ռդիսուսն էր սենլ նրան, բայց թողել էր ու հեռացել դեպ սուրբ Լյիոն:
Նրան հաճախ տանում էին որսորդները երիտասարդ՝
Որս անելու և բռնելու վայրի այժյամ կամ եղնորթներ,
Սակայն հիմա, երբ իր տերն էր բացակայում, նա, մոռացված
ու անխնամ,

Պառկած էր անդ աղբյուրի մեջ, ջրիների ու եզների ապավառին,
300 Որը այնտեղ կուտակված էր մեծաքանակ, մինչև որ այն ծառաները,
Հավաքելով, տանեին դաշտ և ցրեին Ռդիսուսի մեծ արտերում:
Այդպես պառկած էր անդ թշվառ շուն Արգոսը, և իր վրա՝ բյուր
շնամանն,

Սակայն հանկարծ նա ճանաչեց Ռդիսուսին, մոտ գնալիս,
Ծարձեց պոչը, թափահարեց և ականջներն իր ուղղեց ցած,
Բայց ուժասպառ՝ չկարեցավ տեղից կենլ, գնալ տիրոջն իր ընդատաջ:
Երբ այդ տեսավ հեռվից, իսկույն ջերմ արտասովեց Ռդիսուսը,
Բայց իր հովիվ Եվմեոսից ծածուկ սրբեց իր արցունքը և խոսք ասաց.
«Զարմանո՛ւմ եմ, ո՛վ Եվմեոս, շունը պառկած է աղբի մեջ.
Լավագույնն է կարծես տեսքով, բայց չգիտեմ, ճի՞շտ է, թե՞ ոչ».

310 Արդյոք ունի՞՞ նա վագրի մեջ արագություն, կերպարանքին
իր համեմատ,
Թե՞ իսկ և իսկ այնպիսին է, ինչպես շները մեծ մարդկանց սեղանի մոտ,
Որոնց պահում, խնամում են տերերն հաճուն գեղեցկության
ու նոխություն»:

Այնժամ նրան, ո՛վ Եվմեոս դու խոզարած, այս ասացիր ի պատասխան.
«Ոչ, քա՛վ լիցի, դա գամիոն է հեռուներում արդեն կորած

քաջ մի մարդու,

Ավա՛դ, եթե սա իր տեսքով, այն գործով, լիներ հիմա հենց այնպիսին,
Ինչպիսին որ, դեպի Տրոյա հեռանալիս, այստեղ թողեց Ողիսևսը,

Պիտ ապշեիր դու անկասկած՝ նրա կորովն ու ժրություներ տեսնելով:

Բնա՛վ երբեք գազաններից խոյս տալ, փախչել սա չգիտեր,

Նույնիսկ խորքում խոր անտառի և գտնում էր հոտառությամբ

հետքերը միշտ,

320 Բայց մատնված է այժմ տանջանքի, և տերն է իր օտար երկրում

արդեն կորած,

Մինչդեռ անգութ ծառաները չեն խնամում սրան հիմա:

Ստրուկները, երբ որ արդեն դադարում է գործին իշխել տերը նրանց,

Էլ աշխատել չեն ցանկանում արդարաբար, ինչպես հարկն է,

Քանզի մարդու քաջարության ուղիղ կեսը որոտաձայն Ջևան է շորթում

Այն ժամանակ, երբ սկսվում է օրը նրա ստրկության»:

Այդ ասելով՝ նա ներս մտավ ապարանքը գեղեցկաշեն,

Եվ տան միջով ուղիղ գնաց, հասավ այնտեղ, խոսնայրներից,

Մինչդեռ թշվառ այն Արգոսին, երբ որ տեսավ նա տիրոջն իր՝

Ողիսևսին,

Քսան տարի անցնելուց ետ, բախտը մատնեց մահվան դաժան,

սև օրհասին,

330 Իսկ Տելեմաքն աստվածային ամենից շուտ հեռվից տեսավ

խոզարածին,

Որ մոտենում էր՝ անցնելով իր տան միջով. ուստի իսկույն

Գլխով արեց և մոտ կանչեց: Ծուրջն իր նայեց Եվմեոսը, ապա շուտով

Վերցրեց աթոռն այնտեղ դրված, որի վրա միշտ նստում էր

տան տնօրենն՝

Գահլիճի մեջ խնջույք անող սեղեխներից մտեղեններ բաժանելիս:

Նա աթոռն այդ տարավ, դրեց Տելեմաքի սեղանի մոտ,

Ինքն էլ ապա բազմեց այնտեղ դրա վրա: Բանքերն իսկույն,

Պերճ զամբյուղից հացն հանելով, տվեց նրան, այլև ուտեստ ու մսեղեն:

Այդ ժամանակ ներս մտավ տուն Ողիսևսը աստվածազարմ՝

Վերադարձնելով թշվառագույն մի մուրիկի, տեսքով դժբախտ մի ծերուկի՝

340 Մարմնին հագած գազիր, տգեղ մի ցնցոտի, ձեռքին ցուպը իբրև նեցուկ:

Եկավ, նստեց նա հացենի շեմքին՝ այնտեղ, մուտքին ընթեր,

Թիկունքն հենեց ամուր, նոճի բարավորին, որը երբեմն

հյուսնը ճարտար

Իր հյուսնական ճշգրիտ լարով չափեց, շինեց և անդ կանգնեց

հարմարորեն:

Եվ փոթապես խոզարածին Տելեմաքը կանչեց իր մոտ,

Ապա վերցրեց գեղեցկակերտ նա զամբյուղից ամբողջ հացը,

որքան որ կար,

Այլև միսը երկու ձեռքով հանձնեց նրան ու խոսք ասաց.

«Ահավասի՛կ, սա տար և տուր այնտեղ օտար հյուրին, այլև

դու պատվիրիր,

Որ աղերսի ողորմություն՝ մոտենալով խոսնայրներին,

Քանզի տնանկ և մուրացիկ մարդու համար ամոթանքը լա՛վ չէ բնավ»:

350 Ասաց այդպես, և խոզարածն հնազանդվեց նրա խոսքին,

Գնաց, կանգնեց Ողիսևսին անդ առընթեր և խոսքն ասաց այս թևավոր.

«Ա՛ն, եկվոր հյուր, Տելեմաքն է քեզ տալիս սա: Նա պատվիրեց,

Որ դու մուրառ ողորմություն՝ մոտենալով այստեղ բոլոր խոսնայրներին,

Քանզի տնանկ և մուրացիկ մարդու համար ամոթանքը լա՛վ չէ, իրավ»:

Եվ Ողիսևսն ամենիմաց պատասխանեց ու խոսքն ասաց.

«Տո՛ւր, որ, Ջևա հայր, Տելեմաքսը մարդկանց մեջ լինի հավերժ

գերերջանիկ,

Թող կատարվի այն ամենը, ինչ նա սրտով կփափագի»:

Ասաց այդպես և ընդունեց երկու ձեռքով ողորկվածն այն,

Որն և դրեց իր ոտքի մոտ, իր խայտառակ, գարշ պարկի մեջ,

բայց վերկից,

360 Եվ սկսեց հետո ուտել, քանի տան մեջ երգում էր դեռ երգասացը,

Բայց դադարեց ապա ուտել, երբ ընդհատեց երգն իր երգակն

աստվածային:

Եվ խոսնամբոխ խոսնայրները աղմկեցին տան մեջ այնժամ,

Իսկ Աթենասն եկավ, կանգնեց Լաերտածին Ողիսևսի մոտ, առընթեր

Եվ հորդորեց, որ ըսկըսի նա անհապաղ սեղեխներից անդ հաց մուրալ,

Որ իմանա՝ ո՛վ է արդյոք խոսնայրներից արդարամիտ կամ անօրեն,

Թեպետ դաժան մահ-օրհասից ազատվելու հնար չկար ամենևին:

Եվ նա գնաց, աջակողմից ամեն մեկին մոտենալով՝ սկսեց մուրալ

Ու ամենքին ձեռքն իր մեկնեց, հանց վաղեմի մի մուրացկան:

Եվ բոլորն էլ կարեկցաբար տալիս էին ողորմություն, բայց զարմացած

370 Իրարու մեջ հարցնում էին. «Ի՞նչ մարդ է սա, որտեղի՞ց է եկել արդյոք»:

Եվ այժարած Մելանթևսը հանդես եկավ ու խոսք ասաց.

«Ինձ լսեցեք, գեղեցկափայլ վեճ թագուհու ո՛վ խոսնայրներ,

Ահավասիկ՝ ինքս տեսա օտարական այս եկվորին.

Խոզարածը առաջնորդեց դրան և այժմ այստեղ բերեց,

Բայց չգիտեմ ես իսկապես, թե ո՛վ է դա կամ ո՞ր ցեղից»:

Ասաց այդպես, և կշտամբեց խոզարածին Անտիճոոսը եպերանքով.

«Հե՛ն, խոզարա՛ծ, երևելի՛դ, ինչո՞ւ ես դու սրան այսպես քաղաք բերել.

Բավական չէ՞, որքան մեզ մոտ կան պորտաբույծ շրջմուկներ,

Լիրք, ձանձրալի, խնջույքները միայն պղծող, պնակալե՛զ
մուրացկաններ:

380 Քի՛չ է գուցե քեզ նույնիսկ այն, որ քո տիրոջ գույքն են լափում,
Եվ դու այլուստ կանչել ես նոր ու որկրամոլ գարշ մի մարդու»: Այնժամ
նրան, դու Եվմենու, ո՛վ խոզարած, բարբառելով, այս ասացիր.
«Լավ, գեղեցիկ չխոսեցիր դու, Անտիճոնու, թեպետ ազնիվ

քաջն ես արանց:
Ո՛վ կուզենա այսօրինակ մի եկվորի կանչել այլուստ իր տունը հյուր.
Ո՛ւմ են կանչում մեծարելու, թե ոչ մարդկանց միշտ օգտակար,
Գուշակներին, բժիշկ մարդկանց, նավակառույց և քաջընտի՛ր
վարպետներին

Եվ կամ երգով հրճվանք քերող երգակներին աստվածային:
Դրանց են միշտ հրավիրում մարդկության մեջ, երկրի վրա անծայրածիր,
Մինչ չի կանչի ոչ ոք մուրիկ, տնանկ մարդու, որպես իրեն սուկ
մի տանջանք,

390 Սակայն դու ես այստեղ բոլոր խոսնայրներից ավելի չար,
ատավել ժանտ
Ողիսևսի ծառաների հանդեպ, և իմ, նամանավանդ,
Բայց այդ մասին ես չեմ հոգա, քանի որ դեռ կենդանի եմ
իրենց տան մեջ

Պենելոպեն խոհեմամիտ և Տելեմաքն աստվածային»: Այնժամ
նրան իր խոսքն ասաց Տելեմաքոսը խորիմաց.
«Սո՛ւս կաց, լռի՛ր և նրա հետ այդ խոսքերով դու մի վիճիր,
Զի սովոր է Անտիճոնուս խոսակցությանը չարադասան՝
Սարքել հուզմունք, խոսվություն, այլև դրդել ուրիշներին»: Ասաց
այդպես ու թևավոր նա խոսք ուղղեց Անտիճոնուին,
«Անտիճոնու, հոգատար ես դու իմ մասին, հանց հայրն ազնիվ
դեպ իր որդին

400 Եվ արդ, խոսքով, հարկադրանքով պատվիրում ես, որ այս հյուրին
Ես իմ տնից դուրս վոնդեմ, բայց քա՛վ լիցի, այդ բանն աստվածն էլ
թույլ չի տա:
Դո՛ւ էլ հիմա վերցրու մի բան և տուր նրան, իսկ ես բնավ
չեմ ափսոսա,

Այլ հորդորում եմ այդ անել: Մի՛ պատկառիր ո՛չ իմ մորից,
Ո՛չ էլ ստրուկ ծառաներից, որ տանը կան աստվածագարս՝ Ողիսևսի:
Բայց իսկապես այդ չէ հոգալ քո սրտի մեջ. դու միտք ունես
Ինքդ մե՛նակ աստ վայելել, իսկ ուրիշին չտա՛լ ոչինչ»:

Անտիճոնուս իսկույն նրան իր խոսքն ասաց ի պատասխան.
«Ի՛նչ ասացիր, ո՛վ Տելեմաք, գայրույթի մեջ գոռոզ, անգուսպ.
Եթե բոլոր սեղեխները այժմ այնքա՛ն տան, ինչքան ես եմ տալիս անա,

410 Դա այս տնից այն ժամանակ կհեռանա ու չի գա էլ երեք ամիս»: Ասաց,
վերցրեց նա սեղանի տակից աթոռն ու ցույց տվեց սպառնանքով
Ողիսևսին. խնջույքի մեջ փայլուն ոտքերն էր նա դնում դրա վրա:
Մյուսներն այնտեղ շնորհեցին ու լցրեցին հացով, մտով պարկը նրա,
Եվ Ողիսևսն, ողորմությամբ այդ ստացած, ուզեց գնալ դեպի շեմքը,
Որ շուտափույթ օգտագործի տուրքն, ընծաներն աքեացոց,
Բայց կանգ առավ Անտիճոնուի մոտ և նրան այս խոսքն ասաց.
«Տո՛ւր նաև դու, բարեկամս, կարծում եմ՝ դու աքեյանց մեջ
վատթա՛րը չես,

Այլ լավագույնն, ու փառավոր թագավորի ես դու նման,
Ուստի և դու, ավելի շուտ, քան մյուսները, պիտ շնորհես մի փշուր հաց,
420 Իսկ ես անշուշտ քեզ կսկսեմ փառաբանել երկրում անեզր և ամենուր:
Երբեմն և ես մահկանացու մարդկանց մեջ տուն մի ունեի գեղեցկաշեն,
Հարուստ ու լի և երջանիկ, և ես հաճախ տալիս էի ողորմություն
Միշտ այսպիսի շրջիկներին, ով որ լինեք, ինչ կարիքով էլ ինձ դիմեք:
Ես էլ, հարկավ, ունեի բյուր ժիր ծառաներ և ա՛յն ամենը գերազանց,
Որով մարդիկ ապրում են ճոխ և կոչվում են հարստությանը երանելի:
Զևար սակայն, Կրոնոսյանն, ինձ կործանեց, քանզի ինքն է ամենագոր,
Եվ ինձ դրդեց, որ գող, շրջիկ մարդկանց հետ ես ճանապարհվեմ,
Գնամ, հասնեմ ես Եգիպտոս, որպեսզի անդ ես կործանվեմ:
Անդ կանգ առանք մենք նավերով, Եգիպտոսի հորդ հոսանքի
քերանի մոտ:

430 Այնտեղ իսկույն պատվիրեցի ես սիրելի համհարզներիս՝
Մնալ կողքին մեր նավերի և անվրդով ու բարեհույս հսկել դրանք,
Իսկ մյուսներին հորդորեցի՝ բարձր տեղից շուրջը դիտել, հետախուզել,
Մինչդեռ նրանք, ամբարտավան, խիզախությանը ոգեշնչված,
Հարձակվեցին, ավերեցին եգիպտացոց դաշտն ու արոտը պերճագույն
Ու փախցրին նրանց կանանց և անպաշտպան մանուկներին
Եվ իրենց էլ՝ տղամարդկանց, կոտորեցին: Բարձրացավ ճի՛չ
և աղաղա՛կ,

Որը գնաց, քաղաք հատավ: Քաղաքացիք, այդ լսելով, առավոտյան,
Արշալույսին, դուրս վազեցին: Դաշտում զնգաց սուր պղինձը հեծյալների
Եվ հետիոտն անթիվ մարդկանց: Սակայն Ջևար շանթազվարճ՝
ընկերներին

440 Մատնեց ահեղ ու խայտառակ խուճապի, չը կարողացավ թշնամու դեմ
Կանգնել ոչ ոք: Որոտացին շուրջը աղետն, արհավիրքը,
Ծառ շատերը անդ մերոնցից սուր պղինձով կոտորվեցին,
Ծատերին էլ գերի տարան, որ աշխատեն ստրկաբար:
Արդ, հանդիպեց այնտեղ անդեմ Դմետրը Իսսոսյան, որ Կիպրոսի
Իշխանավոր տիրակալն էր: Ահա նրան ինձ հանձնեցին, և նա տարավ

Ինձ դեպ Կիպրոս: Այնտեղից եմ այժմ ես եկել՝ ժանտ աղետներ
կրելուց ետ»:

Նրան այնժամ Անտիոնոսը, գոռոռալով, իր խոսքն ասաց
ի պատասխան.

«Ո՞ր աստվածը այստեղ բերեց ժանտախտը այս, մեր խնջույքին
հանց պատուհաս,

Կորի՛ր, լպի՛րձ, այն կողմ կանգնիր, իմ սեղանից հեռո՛ւ գնա,
450 Թե ոչ՝ դաժա՛ն մի Եգիպտոս և կամ Կիպրո՛ս դու կտեսնես

այստեղ իսկույն.

Եվ որքա՛ն գարշ մուրիկ ես դու, խիստ անամոթ, ժանտ ու մախիգ.

Արդ, բոլորին ձանձրացրիր և բոլորին արդեն այցի դու գնացիր,
Ու սրանք դեռ անմտաբար տալիս են քեզ, չեն ափսոսում գույքն օտարի:

Հեշտ է, այո՛, լավության տեղ՝ գուր բաժանել ձեռքը ընկած
կայքն ուրիշի»:

Եվ Ոդիսևսն ամենիմաց, ետ քաշվելով, նրան ասաց.

«Ավա՛ղ, բնավ կերպարանքիդ նման չէ քո դաժան հոգին.
Քո տանն անշուշտ նույնիսկ չնչին աղ չէիր տա դու աղբատին,

Երբ, ուրիշի ճոխ սեղանին այսպես բազմած, չկամեցար
Գեթ մի փշուր հաց գցել ինձ, մինչ ամեն ինչ աստ կա առատ

և լիովի՛»:

460 Ասաց այդպես, և զայրացավ Անտիոնոսը սրտով սաստիկ.

Նա խեթ՝ նայեց իսկույն նրան և թեավոր այս խոսքն ասաց.

«Հիմա՛ արդեն, կարծում եմ ես, դու այս տնից ետ չես գնա ողջ և ստողջ,
Քանի որ ինձ, դարովելով, վիրավորիչ խոսք ասացիր»:

Այդ ասելով՝ Ոդիսևսի վրա նետեց աթոռակն իր
Եվ աջ ուսին նրա զարկեց, թիկունքից վեր, բայց դիմացավ

նա հանց մի ժայռ՝
Պի՛նդ, անդեղև տեղն իր կանգնած. չսասանեց նրան հարվածն

Անտիոնոսի:

Նա գլուխն իր շարժեց անխոս և մտածեց ժանտ վրեժի մասին միայն,
Ապա կրկին դարձավ, գնաց դեպի շենքը, նստեց այնտեղ,
Լիքը պարկը դրեց կողքին և խոսք ուղղեց խոսնայրներին.

470 «Արդ, ի՛նձ լսեք, մեծահոշակ, վեհ թագուհու դուք խոսնայրներ,
Ես ձեզ կասեմ, ինչ որ փրտն է իմ կրծքի տակ ներշնչում ինձ:
Հոգին բնավ չի վշտանա և ափսոսանք նա չի գգա,
Երբ որ մարդուն հարվածում են մարտակովում՝ իր գույքերը

պաշտպանելիս,
Հանուն ճերմակ ոչխարների կամ կորեղջյուր իր եզների:
Մինչդեռ զարկեց ինձ Անտիոնոսն հանուն թշվա՛ռ և նզովյալ որովայնի,
Որը մարդկանց միշտ բերում է բյուր-բյուրավոր վիշտ ու փորձանք,

Բայց եթե կա՛ն նաև մուրիկ մարդկանց համար Էրիհիսներ
ու աստվածներ,

Թող մահ-օրհասն Անտիոնոսին շոտո՛ւմ հասնի, նախքան նրա
ամուսնանալն»:

Այնժամ նրան կրկին ասաց Եվափթածին Անտիոնոսը.

480 «Տեղդ նստիր ու կեր հանգիստ, օտարական, կամ դուրս կորիր
շուտ այստեղից,
Թե ոչ՝ ծառայք, ամբարտավան խոսքիդ համար, տնից քեզ

դուրս կշարտեն
Եվ քա՛րձ կտան՝ ձեռքից, ոտքից քեզ բռնելով, և ողջ մարմնով
կջախջախվե՛ս»:

Ասաց այդպես, բայց մյուս բոլոր ամբարտավան սեղեխները
խիստ զայրացան.

Այսպես էին խոսում ոմանք երիտասարդ խոսնայրներից.

«Հարվածելով թշվառագույն այս շրջիկին՝ վատ վարվեցիր, Անտիոնոս,
Կկործանվե՛ս, թե սա մեկն է աստվածներից երկնաբնակ,

Քանզի հաճախ անմահները, նմանվելով շրջիկներին օտարագգի,
Ծեր կամ ջահել մարդու տեսքով ման են գալիս քաղաքներում,
Որ իմանան, թե մարդկանցից ո՞վ է նպերտ, ո՞վ է խոհեմ, բարեհոգի»:

490 Այդպես էին խոսում բոլոր սեղեխները, բայց Անտիոնոսն անտեսեց այդ,
Մինչ մեծ վիշտն էր կրծում փրտը Տեղեմաքի՛ իր հոր ստացած

զարկի համար,

Բայց չթափեց գետնի վրա նա իր աչքից արտասուքի ոչ մի կաթիլ,
Այլ գլուխն իր անխոս շարժեց՝ մտածելով ժանտ վրեժի մասին միայն:

Երբ որ լսեց խոհեմամիտ Պենելոպեան, որ ծեծված է իր հարկի տակ
Հյուր եկվորն այդ օտարական, բացականչեց և խոսք ասաց ծառաներին.

«Ա՛խ, երանի՛ հենց քեզ այդպես զարկեր հզոր Ապոլլոնը
աղեղնափառ»:

Նրան իսկույն ի պատասխան իր խոսքն ասաց կին-տնօրեն Եվրիանոսեն.

«Եթե մեզնից կախված լիներ կատարումը մեր փափագի կամ անեծքի,
Ապա ոչ ոք էլ սրանցից չէր ապրի մինչ Արշալույսը ոսկեաթոռ»:

500 Եվ բարբառեց ու խոսք ասաց նրան նորից խոհեմամիտ Պենելոպեան.

«Մայրիկ, դրանք բոլորեքյան ատելի են և ոճրագործ ու դավադիր,
Եվ մանավանդ՝ Անտիոնոսն է չարադաժան, ինչպես սև մահն

անագորույն:
Չարաբախտ ու հեզ մի մուրիկ՝ նա շրջում է այժմ ամենուր ու տնից տուն
Եվ, ստիպված իր կարիքից, աղերսում է մարդկանց մեջ նա

ողորմություն:

Բոլորն այստեղ շնորհել են մի-մի պատսոս և լի լցրել են պարկը իր,
Իսկ դա աթոռն է շարտել և գուր զարկել նրա ուսին աջակողմյան»:

Այդպես խոսում էր նա, նստած իր սենյակում, ստորուկ կանանց
 հետ միասին,
 Իսկ Ողիսեսն աստվածազարմ վայելում էր իր հավաքած
 ուտեստն այնտեղ:
 Այնժամ կանչեց Պենելոպեան խոզարածին աստվածային և այս ասաց.
 510 «Գնա շուտով, ո՛վ Եվմենու աստվածային, և պատվիրիր այն շրջիկին
 օտարական՝
 Թող գա ինձ մոտ, որ նրա հետ ես աստ խոսեմ, հարցմունք անեմ.
 Գուցե իրոք լսել է նա բազմահմուտ Ողիսեսի մասին մի բան
 Կամ տեսել է գուցե աչքով, քանզի կարծես բազմաթափառ
 մի մարդ է դա»:
 Եվ դու այնժամ, խոզարածո, ո՛վ Եվմենու, խոսք խոսեցիր
 ի պատասխան.
 «Ո՛հ, թագուհիս, եթե, իրավ, անդ լռեին արեացիք,
 Եվ պատմությունն իր նա պատմեր, մեծ հիացմունք պիտի ազդեր
 նա քո սրտին.
 Երեք գիշեր ինձ մոտ էր նա, և երեք օր իմ խրճիթում ես պահեցի,
 Քանզի, նավից փախուստ տալով, ինձ մոտ եկավ նա նախապես,
 Բայց չավարտեց նա իր կրած աղետների պատմությունը:
 520 Ինչպես հաճախ աստվածային, ոգևորված երգիչի երգն է լսում մարդ,
 Որ հնչում է մարդկանց սրտին երգն ու նվագը մեծաքանակ,
 Եվ լսում են նրան անվերջ, վախենալով, որ չընդհատի երգն
 իր հանկարծ,
 Այդպես էլ սա, տանն իմ բազմած, խոր հիացմունք պատճառեց ինձ:
 Արդ նա հայտնեց, որ իբրև թե իր հայրական հյուրն է եղել Ողիսեսը,
 Իսկ ինքն, իրավ, բնակիչ է Կրետե կղզու, որտեղ ապրում էր Մինոսը:
 Այնտեղից է նա դուրս եկել, այստեղ հասել՝ կրելով բյուր աղետ ու ցավ,
 Եվ պնդում է, համոզելով, որ լսել է Ողիսեսի մասին նույնպես,
 Իբրև թե նա կենդանի է, թեապրոտացոց բերրի երկրում է մերձակա
 Եվ գալիս է ու բերում է նա բազմաբյուր գանձ և գույքեր զեսլի
 իր տուն»:
 530 Նրան իսկույն իր խոսքն ասաց Պենելոպեան խոհեամամիտ.
 «Գնա՛, կանչի՛ր, որ ինքն անձամբ ինձ դեմ առ դեմ այդ պատմելու
 շո՛ւտ այստեղ գա,
 Իսկ խոսակցներն այնտեղ, դռան ետև, նստած և կամ տան մեջ
 թող դեռ հրճվեն,
 Քանզի նրանց հոգին միայն զվարճանքի է ընդունակ,
 Մինչ գույքն իրենց, հացն ու գինին քաղցրանուշիկ գտնվում են
 իրենց տան մեջ՝
 Անմատչելի և անվնաս, իսկ տնեցիք վայելում են դրանք չափով:

Սակայն այստեղ, իմ տունը միշտ նրանք գալիս են անդադար
 ու ամեն օր,
 Փողոտում են անվերջ եզներ ու ոչխարներ, նաև այծերը պարարուն,
 Խնչոյքներ են աստ կատարում, քաղցր ու փայլուն գինին ըմպում
 խելացնոր:
 Եվ ամեն ինչ փչանում է, և ամեն բան լափլփո՛ւմ են այժմ անխնա.
 540 Զկա տերը՝ Ողիսեսը, որ դուրս վանի նա իր տնից ժանտախտը այդ:
 Ա՛խ, եթե այժմ գար Ողիսեսն, վերադառնար նա իր երկիրը հայրենի,
 Իր որդու հետ նա միասին աղի մարդկանցից կտունե՛ր վրեժն
 այս բռնության»:
 Ասաց այդպես, և այդ պահին Տելեմաքոսը բարձրաձայն անդ
 փորշտաց,
 Եվ տունն ամբողջ թունդ որոտաց: Իսկույն ևեթ Պենելոպեան
 ուրախ ժպտաց,
 Ապա դիմեց նա Եվմենու խոզարածին և խոսքն ասաց այս թևավոր.
 «Գնա՛ շուտով, ո՛վ Եվմենու, կանչիր, թող գա շրջիկը այն օտարական.
 Տես, փորշտաց արդեն որդիս, որպես նշան՝ թե ճշմարիտ էր խոսքը իմ,
 Եվ անկասկած գլուխ կգա մահ-տարածամն այս անիրավ սեղեխների,
 Ու նրանցից այնժամ ոչ ոք չի խուսափի օրհասից իր չարաբաստիկ:
 550 Քեզ ես կատնեմ և այլ մի բան, և քո սրտում պահիր դու այն.
 Եթե իրավ ես իմանամ, որ ճշմարիտն է ինձ պատմում այդ
 շրջիկն իրոք,
 Կհագցնեմ նրան բաճկոն և պատմունան, հագուստեղեն մի պերճափայլ»:
 Ասաց այդպես, և խոզարածն, այդ լսելով, շուտ դուրս եկավ,
 գնաց իսկույն
 Ու, կանգնելով անդ, առնձեթ, խոսքերն ասաց այս թևավոր.
 «Օտարական դու հայր շրջիկ, կանչում է քեզ խոհեամամիտ Պենելոպեան՝
 Տելեմաքի մայրը վսեմ. նրա սիրտը այժմ փափագում է, ապաքեն,
 Իր ամուսնու մասին հարցնել, թեպես խորունկ վշտացած է նա
 դառնադառն:
 Իսկ երբ որ նա ճիշտ իմանա, որ դու նրան ճշմարիտն ես պատմում
 իրոք,
 Բաճկոն, լողիկ կհագցնի, որոնց կարիքն զգում ես դու ամենից շա՛տ,
 560 Սակայն հացը կհայթայթես դու մարդկանց մեջ, հանց մորացկան,
 Եվ ամեն մարդ, որքան ինքը այդ ցանկանա, մի բան կտա
 ու չի մերժի»:
 Պատասխանեց այնժամ նրան բազմաչարչար Ողիսեսը աստվածային.
 «Ո՛վ Եվմենու, պատրաստ եմ ես ճշմարիտը և ամեն բան պատմել նրան,
 Իկարիոսի խոհեամամիտ Պենելոպե վե՛հ դատրիկին, քանզի գիտեմ
 Հաստատապես նրա մասին, տանջանքն ու վիշտը կրել ենք մենք
 միասին:

Սակայն աստիկ երկյուղած եմ, վախենում եմ նրա դաժան

խոսակցներից,

Որոնց անեղ մոլեգնությունը հասել է մինչև երկինք երկաթակերտ:
2Է՞ որ հենց նոր քաջն այդ անգուսպ ինձ, այս տան մեջ մեղմ քայլելիս,
Երբ ոչ ոքի ոչ մի վատ բան չէի արել, հարված հասցրեց

խիստ ցավալի,

570 Եվ ինձ ոչ ոք չսպաշտպանեց, ոչ Տելեմաքն, ոչ մեկնումեկն ուրիշներից,
Ուստի հիմա դու համոզիր, որ իր տանը Պենելոպեան դեռ սպասի,
Թեպետ և խիստ փափագում է, մինչև արևը մայր մտնի:
Այն ժամանակ իր ամուսնու վերադարձի մասին թող ինձ հարցում անի,
Բայց նստեցնի կրակի մոտ, քանզի հագուստն է իմ վատթար:
Այդ նաև դու շատ լավ գիտես, որովհետև քեզ մոտ եկա ես նախապես»: **Ասաց այդպես, այդ լսելով՝ խոզարածը վերադարձավ,
Մինչդեռ նրան, երբ շեմքը դեռ նա չէր անցել, Պենելոպեան**

հարցրեց իսկույն.

«Ինչո՞ւ չեկավ, ո՞վ Եվմենու, որտե՞ղ է նա, գուցե մերժում է շրջիկն ինձ,
Գուցե իրոք վախենում է մեկնումեկից, կամ գուցե նա, իբր անծանոթ,

580 Ամաչում է անցնել տան մեջ, մինչդեռ վատ է, երբ որ մուրիկն է

ամաչկոտ»:

Ո՞վ Եվմենու դու խոզարած, այնժամ նրան այս ասացիր ի պատասխան.

«Նա խելացի խոսք ինձ ասաց, և նրա տեղ մեկ ուրիշը նույնը կատեր.

Խույս է տալիս նա դժնաբարք, ամբարտավան սեղեխներից

Ու խնդրում է, որ սպասես, մինչև արևը մայր մտնի:

Եվ քեզ համար էլ, թագուհիս, շատ ավելի լավ կլինի,

Եթե մեճակ շրջիկի հետ խոսքդ խոսես, նրան լսես»:

Նրան կրկին իր խոսքն ասաց Պենելոպեան խոհեմամբ.

«Այո, սխալ չի մտածում շրջիկը այդ, ով որ էլ նա իրոք լինի,

Մինչ մարդկանց մեջ մահկանացու մեկը չկա, որ նմանվի այդ անօրեն,

590 Ամբարտավան սեղեխներին, որ չափազանց ոճրագործ են և դավադիր»:

Ասաց այդպես, իսկ խոզարածն աստվածային արագապես,

Երբ ամեն բան սրտմեց նրան, գնաց, խառնվեց խոսակցների

խումն ամբոխին:

Անդ, գլուխն իր Տելեմաքի կողմը թեքած, որ ուրիշներն այդ չլսեն,

Նրան այսպես նա բարբառեց ու թեավոր այս խոսքն ասաց.

«Ո՞հ, սիրելիս, ես գնում եմ, որ պահպանեմ խոզերն այնտեղ,

Նաև գուցքը մեր երկուսիս, իսկ դու եղիր ամեն բանին աստ հոգատար:

Զգո՞ւյշ եղիր, քեզ լա՞վ պահիր, որ չտուժես, քանզի այստեղ աքեացիք

Մտածում են և հորինում շատ դավանքներ, անօրեն գործ ու ոճիրներ,

Թող կործանի Զևսը նրանց, նախքան նրանք ժանտ աղետներ

մեզ պատճառեն»:

600 Պատասխանեց իսկույն նրան և խոսք ասաց Տելեմաքոսը խորիմաց.

«Հենց այդպես էլ պետք է լինի, բայց դու ընթրի՛ր և ընթրի՛քից

հետո գնա,

Իսկ առավոտը, շուտավույթ, դու պետք է գաս և սրբազան գոհեր բերես,

Մինչ այլ գործերը այստեղի կհոգանք ես և աստվածները երկնային»:

Ասաց այդպես, և խոզարածն իսկույն բազմեց ողորկագույն անդ

բազմոցին,

Ապա կերավ ու լիառատ կերուխումով հագուրդ տվեց նա իր սրտին

Ու վեր կացավ, դեպի խոզերն հապճեպ գնաց՝ անդ թողնելով

լայն բակն ու տունն՝

Լցված բազում խնջույք անող, անվերջ հրճվող մարդկանցով ցոփ

ու շամբշագույն,

Որ թնդում էր նվազ ու պար մինչև մթին, ուշ երեկո:

Երգ տառնութերորդ

ՈՂԻՍԵՎՍԻ ԵՎ ԻՐՈՍԻ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԸ

Այնժամ եկավ համազգային մտրացկանը, որը մտրում էր մշտապես Քաղաքի մեջ Իթակեի: Հոչակված էր նա իր անկուշտ որովայնով, Անվերջ ուտում ու խմում էր, հանց որկրամու, և նա չունէր ուժ ու կորով, Բայց տեսք ունէր աչքի ընկնող, մեծամարմին և հաղթանդամ: Արնետու էր իր անունը, գերամեծար մայրը այդպես կոչեց նրան Ծնված պահին, սակայն Իրոս էին կանչում պատանիներն՝ առհասարակ: Գործ էր անում նա բաների՝ կատարելով պատվերները շատ շատերի: Այնտեղ եկավ նա, ահա, ու Ռոխսուսին արտաքսում էր յուր իսկ տնից: Արդ, կշտամբեց նրան նա խիստ ու թևավոր այս խոսքն ասաց.

10 «Ծերո՛ւկ, կորի՛ր դու այստեղից, որ քարշ չտան քեզ՝ բռնելով
քո ոտքերից-
Մտակո՛ւյր ես, չե՛ս նկատում, տե՛ս, աչքով եմ արդեն անում
բոլորը ինձ,

Որ քարշ տալով դուրս գցեմ քեզ, ամաչում եմ ես այդ անել:
Վեր կաց, կորի՛ր, որ աստ մեր մեջ զուր չծագի կոճի ու կագ»: Խեթ նայելով՝ նրան իսկույն իր խոսքն ասաց Ռոխսուսը ամենհիմաց.
«Բարեկա՛մս, քեզ վատ մի բան ես չեմ արել կամ վատ մի խոսք
չեմ ասել քեզ.
Չեմ նախանձում ես քեզ բնավ, մույր հավաքիր, թեկուզ անբավ,
Մինչդեռ այստեղ, այս շենքի մոտ, երկուսովս էլ տեղավորվել
կարող ենք մենք:

Կարիք չկա ուրիշներին նախանձելու, և դո՛ւ, կարծեմ, ինչպես և ես,
Մտրացկան ես. հարստության բախտն աստվածներն են լոկ տալիս:
20 Զուր ես լեզվիդ դու գո՛ւն տալիս, կովի՛ կանչում. քեզն իմ իզուր
մի՛ բորբոքիր,
Թե ոչ՝ արչամբ, թեպետ ծեր եմ, կը ոռոգեմ շրթունքներդ.
ու կուրծքդ լայն,
Եվ ես եզուց այս շենքի մոտ ինձ յապահով, հանգիստ կզգամ,

Իսկ դու, կարծեմ, Լաերտածին Ռոխսուսի տանը, այստեղ,
Չես հանդգնի այլևս լինել ու երևալ մի անգամ էլ»: Այնժամ իսկույն Իրոս մտրիկը, զայրացած, պատասխանեց
և խոսք ասաց.

«Ավա՛ղ, տեսե՛ք, որքա՛ն կտրուկ այստեղ հաչում, քարբաւջում է
որկրամուլն այս,
Մի բորբոքված պատավի պես, բայց սպասի՛ր, զայրույթ ու քեզ
ցույց կտամ քեզ,
Տե՛ս, կզարկեմ զույգ բռունցքով և կջարդեմ աստամների քերանիդ մեջ
Ու կթափեմ գետնի վրա, ինչպես շարդում եմ յատամներն արտն
աղարտող մի լիրք խոզի:

30 Դեհ շո՛ւտ, ծերուկ, գոտեպնդվի՛ր, որ բոլորը մեր մեծամարտն
այստեղ տեսնեն,
Թե ինչպե՛ս դու պիտի կովես քեզնից ջահել մի մարդու հետ»:

Այդպես, հղկված այն շենքի մոտ ու բարձրակերտ դռան առաջ,
Գծովում էին նրանք հուժկու և կատաղի ու իրար հետ վիճում սաստիկ,
Մինչ կորովի Անտիոնոսի զորությունը անտես չարեց հանգամանքն այդ.
Ուրախացավ նա չափազանց և փութապես այսպես ասաց խոսնայրներին.
«Միրելի՛նե՛ր, առաջ երբե՛ք չէր պատահել մի այսպիսի գործ

բացահայտ,
Նայե՛ք, տեսե՛ք, թե որպիսի՛ զվարճանք են աստվածները առաքել մեզ.
Ահա գծովում և կովում են իրարու հետ օտարականն ու Իրոսը.
Լավ ծեծկոտոց պիտի տեսնենք: Եկե՛ք դրանց այստեղ մի լավ
մենք գրգռենք»:

40 Ասաց այդպես, և վեր կացան բոլորեքյան ու անհապաղ
Հավաքվեցին շուրջը կովող ցնցոտավոր մտրիկների:
Այն ժամանակ նրանց դիմեց և խոսք ասաց Անտիոնոսը Եվափթածին.
«Ակա՛նջ դրեք և լավ լսեք, ինչ որ կասեմ, ո՛վ խոսնայրներ հզորագոր.
Այժմ այժի փորոտիքը՝ արյունախառն ու ճարպապատ,
Մենք դրել ենք կրակի մեջ, որ մեզ հիմա սարքենք ընթրիք

փարթամաճոխ:
Արդ, սրանցից ով այժմ հաղթի և հանդես գա իբրև հզոր հաղթանակող,
Թող մոտենա և ընդերքից, որն ուզենա, վերցնի իրեն, հանց մրցանակ,
Այսուհետ էլ թող միշտ լինի նա մասնակից մեր խնջույքին,
իսկ մյուս անտուն
Մտրացկանին մենք թույլ չենք տա, որ այստեղ գա և աղերսի
ողորմությունն»:

50 Ասաց այդպես, և խորհուրդն այդ նրանք բոլորն հավանեցին:
—283—

Մինչ Ռդիսևսն ամենիմաց, իր նենգությունը թաքցնելով,
այս խոսքն ասաց.
«Ո՛հ, սիրելի մեծամեծներ, մի՞թե կարող է այս ջահել խիզախի հետ
Թշվառագույն և տարաբախտ, տանջված ծերուկ մարդը մրցել,
Բայց չարագործ որովայնն իմ ստիպում է հոժար լինել ծեծկոտուքի:
Սակայն հիմա գեթ երդվեցեք դուք երդումով ամենագոր,
Որ ձեզանից ոչ ոք, ձեռքով իր գորավոր, իբրև պաշտպան Իրոսին վես,
Ինձ անարդար չի հարվածի. ստանց այդ էլ ինձ կհաղթի

նա քաջաբար»:

Այդպես ասաց, ու երդվեցին նրանք բոլորն, ինչպես որ ինքն
այդ պահանջեց:

Երբ որ նրանք անդ երդվեցին և երդումը կատարեցին արդարացի,
60 Հանդես եկավ գորությունը Տեղեմաքի ու նրանց դեմ այսպես խոսեց.
«Եթե քո սիրուն և քո հոգին, օտարակա՛ն, քաջախիզախ դրդում են քեզ,
Կովիր հուժկու և ոչ ոքից արեյանց մեջ մի՛ վախենար.
Ով ձեռք տա քեզ, աստ նրա դեմ կովով բոլորը դուրս կը գան:
Հյուրընկալը ես եմ այստեղ, ու իմ խոսքին համաձայն են և փառահեղ,
Զույգ իշխաններն՝ Անտիհոռոսն ու Եվրամաքը, այդ հերոսները
իմաստուն»:

Ասաց այդպես, և բոլորը հավանեցին: Գոտեպնդվեց Ռդիսևսը,
Նա իր մեջքին կապեց գոտին՝ ամրացնելով իր ցնցոտին
Եվ փութապես հայտնաբերեց իր ազդրերը հաղթ, գեղեցիկ,
Ուները լայն ու թիկնավետ, կուրծքը ուժեղ և բազուկները քաջամուր:
70 Աթենասը, մոտիկ կանգնած, բազմապատկեց շուքն ու շնորհքն
ազգապետի,

Իսկ սեղեխներն ամբարտավան խիստ ապշեցին, զմայլվեցին.
Տեսնելով այդ՝ ամեն մեկը այս խոսքն ասաց հարևանին իր մոտ նստած.
«Իրոսն իսկույն կկործանվի իր իսկ նյութած այս կովի մեջ.
Ցնցոտիի տակից ծերուկն որքա՛ն ամուր ազդրեր հանեց»:
Այդ ասացին, մինչ անհ ընկավ Իրոսի ջանն, և զարգանող տիրեց սրտին,
Բայց բռնեցին ծառաները և ակամա, գոտին կապած մոտ բերեցին:
Սարսափած էր, դողդողում էր ահից նրա մարմինն ամբողջ,
Եվ Անտիհոռոսն անվամբ կոչեց ու կշտամբեց, այս խոսքն ասաց
գոռոռալով.

«Լա՛վ է, էթե գետի՛ն մտնես կամ թե սատկես, ո՛վ սնապարծ
դու պորտաբույծ.
80 Ո՛հ, գեթ բնավ չծնվեիր, երբ դողում ես դու անարեկ ու վախենում ես,
անամոթ,
Զախորդությամբ խիստ վշտահար և ավեր այս խեղճ մարդուց,
Բայց տե՛ս. ես քեզ մի խոսք կասեմ, և դա անշուշտ կկատարվի»:

Եթե նա քեզ հաղթի հիմա և ավելի քաջ ու հզոր հանդիսանա,
Ես անհապաղ քեզ կօգնեմ սև նավի մեջ և կողարկեմ դեպ Էպիրոս,
Դեպ էքետոս ժանտ թագավորն, որը մարդկանց չար կործանիչն է
ահավոր»:

Քո ականջներն, այլև քիթդ կկտրաստի նա անողոք, սուր պղինձով,
Իսկ ամոթանքդ կպոկի և այն հում-հում շներին կեր նա կնետի»:
Ասաց այդպես, է՛լ ավելի ողջ մարմնով նա դողդողաց:
Արդ, բերեցին նրան մեջտեղ, ու երկուսն էլ վեր բարձրացրին
ձեռքերն իրենց,

90 Եվ մտածեց այդ ժամանակ բազմաշարժար Ռդիսևսը աստվածային.
Արդյո՞ք զարկել ու տապալել, որ նույնհետայն աստ իր հոգին
նա ավանդի,

Թե՞ թույլ զարկել և միմիայն գետնաթավալ փռել գետին»:
Ահավասիկ նրան, այդպես մտածելիս, շատ ավելի բարվոք թվաց՝
Թեթև զարկել, որ իր մասին արեացիք չհարուցեն զուր կասկածանք:
Երբ որ պատրաստ կանգնած էին, նախ Իրոսը զարկեց նրա աջ ուսին,
Մինչ Ռդիսևսն հուժկու զարկեց նրա վզին՝ ականջի տակ:
Խորտակվեցին ներքուստ ոսկորքն, և բերանից ժայթքեց իսկույն
կարմիր արյունն.

Նա բղավեց ու վայր ընկավ անդ փոշու մեջ, ատամներն իր կրճտացին,
Իսկ ոտքերով հողը թակեց, և դյուցազուն խոսնայրները,
100 Ձեռքերը հաղթ վեր կարկատած, հրոհուացի՛ն և ծիծաղից
անդ թուլացան,

Իսկ Ռդիսևսն, ոտքից բռնած, դրան մոտից քաշեց, տարավ բակի միջով
Եվ դուրս հանեց տան դարպասից ու անդ նրան հենեց բակի
ցանկապատին.

Արագապես վերցրեց, դրեց նա նրա ձեռքը գավազան,
Հետո դարձավ ու բարձրաձայն այս թևավոր խոսքերն ասաց.
«Դու այստեղես նստիր այստեղ և շներին ու խոզերին վանիր միայն:
Արդ, լինելով ինքդ թշվառ, քեզ չհաշվես մոտիկ մարդկանց գլխին արքա,
Թե ոչ՝ գլխիդ ավելի մեծ փորձանք, աղետ թերևս գա»:

Այդպես ասաց, ուսին գցեց իսկույն իր պարկը զազրեղի ու անվայել,
Խիստ ծակոտկեն, որ կախված էր ծալքին ոլոր մի չվանի
110 Եվ շուտափույթ գնաց նստեց նորից շենքին: Անդ ներս եկան
և սեղեխներն,

Որոնք նրան ուրախալի ողջունեցին, ապա այսպես բարբառեցին.
«Քե՛զ, ով եկվոր, թող տան Չևսը և այլ անմահ աստվածները
երկնաբնակ:
Այն, ինչ որ դու ամենից շատ կփափագես, ինչ քո սրտին
հաճո է միշտ:
Էլ այս անկուշտ որկրամուլը չի հանդգնի մեր քաղաքում շրջել անվերջ»:

Սրան Էպիբոս կոչարկենք, դեպ Էքետոս ժանտ թագավորն,
Որը բոլոր մահկանացու մարդկանց համար չար կործանիչ է ահավոր»:
Այդպես նրանք անդ ասացին, ուրախացավ Ռոփսուսը աստվածային,
Մինչ Անտիոնոսն այնժամ դրեց նրա առաջ ախոնդանքի մի մեծ բնօրինակ՝
Արյունախսուն ու ճարպասպատ, իսկ Անտիոնոսը փութապես

120 Պերճ զամբոյտի միջից վերցրեց, նրան տվեց ամբողջապես
երկու հատ հաց
Ու, մեկնելով ոսկի բաժակը դեպի նա, ողջույնի խոսք բարձր ասաց.
«Ողջո՛ւյն, հայրի՛կ օտարական, խնդա սրտանց, քեզ կցանկանա՞ս
երջանիկ կյանք,

Թեպետ և այժմ դու կրում ես բյուրաբազում վիշտ ու փորձանք»:
Պատասխանեց իսկույն նրան և խոսք ասաց Ռոփսուսը ամենինաց.
«Ով Անտիոնոս, դու գերազանց ես ինձ թվում իմաստությամբ,
Ինչպես նաև քո հայրն էր միշտ՝ վեհ Նիսոսը Գուլիքիոնցի.
Լսել եմ ես նրա վեհ փառքի մասին, հարուստ էր նա և բարեմիտ,
Ասում են՝ դու նրա որդին ես, հիրավի, և նման ես նրան իրոք,
Ուստի ահա դիմում եմ քեզ. ինձ լավ լսիր և մտածիր ինքդ քո մեջ:
130 Իրավ, բոլոր էակներից, որոնք շնչում և շարժվում են երկրի վրա,
Մարդն է միայն ամենից շատ ողորմելի՛, թշվառագո՛ւյն,
Եվ քանի դեռ աստվածները շնորհում են նրան կորով, կյանք երջանիկ,
Չի մտածում նա, որ հետո կրելու է նաև տանջանք ու պատուհաս:
Իսկ երբ տալիս են աստվածներն արդեն փորձանք և աղետներ

չարաբաստիկ,
Այդ կրում է նա ակամա և փորձանքը չի հանդուրժում նա անվրդով:
Այդ, այդ է սիրուն ու հոգին մահկանացու բոլոր մարդկանց,
Նրան այդպես է ստեղծել Հայրը մարդկանց, այն անմահ աստվածների:
Երբեմն և ես մարդկության մեջ հարուստ էի ու երջանիկ.
Բայց իմ ուժով, այն իմ հոր իշխանությանը ես կուրացած,
140 Շղթայրներին վրա վատահ, շա՛տ շատ գործեր կատարեցի ես անօրեն:
Բայց չպետք է մարդը լինի կյանքում դաժան կամ ամբարիշտ

ու դժնաբարք,
Այլ պարզեմունք, որ տալիս են աստվածները, պիտ վայելի լուռ և հոժար,
Բայց ոչ այնպես, ինչպես ահա խոսնայրներն են աստ դավադիր
և դժնդակ,
Որ անօրեն վատնում են այժմ գույքն ուրիշի, նրա կնոջը անարգում,
Այն դյուցազնի, որը, կարծեմ, հայրենիքից և մարդկանցից իր սիրելի
Հեռու այլևս չի մնա, այլ մոտ է նա և պիտի գա: Թող տա՛ աստված,
Որ դու շուտով քո տուն գնաս ու աստ նրան չհանդիպես,
Երբ ետ դառնա նա իր երկիրն հայրենավանդ և տունը զա
իր սիրաւենչ,
Քանզի, գիտեմ, գործն այդ առանց հորդ արյունի չի վերջանա,

150 Երբ որ մաքրի իր հաշիվը խոսնայրների հետ նա աչտեղ,
իր հարկի տակ»:
Ասաց այդպես, հեղում արեց, ապա խնեց քաղցր գինին այն մեղրանուշ-
Եվ փութապես նա բաժակը վերադարձրեց, ձեռքը դրեց ազգավարի:
Մինչ Անտիոնոսն անցավ տան մեջ, սիրուն էր նրա սաստիկ տխուր
և չարագույժ.

Նա գլխիկոր տատանվում էր, քանզի հոգով արդեն զգաց
զալիք աղետը ահավոր,
Բայց օրհասից խույս չտվեց. նրան արդեն կաշկանդել էր Աթենասը,
Որ անխուսափ պիտ կործանվի նա հաղթ ձեռքով և նիզակով .
Տելեմաքի:

Նա ետ եկավ, բազմեց ապա այն բազմոցին, որտեղից նա վեր էր կացել:
Մինչ Աթենասն՝ աստվածուհին պաշտառաչյա, այն ժամանակ
Միտք ներշնչեց Իկարիոսի դստեր սրտին, խոհեմամիտ Պենելոպին՝
160 Գալ, երևալ խոսնայրներին, որ առավել անդ բորբոքվի սիրտը նրանց,
Եվ որպեսզի իրեն հարգեն ու մեծարեն էլ ավելի ու գերազանց,
Քան թե առաջ իր սիրելի ամուսինը և զավակն իր:
Արդ, նա ժպտաց անմտաբար և շուտափույթ այս խոսքն ասաց.
«Եվրիանոն, փափագում է սիրտս հիմա (այդ կարոտը առաջ չկար),
Գնալ այնտեղ և երևալ սեղեյաններին, թեպետ նրանց ասում եմ ես,
Եվ իմ որդուն անդ խոսք ասել, որ պիտանի նրան լինի և օգտակար:
Թող մտերիմ ու շատ մոտիկ նա չդառնա խոսնայրներին ամբարտավան,
Քանզի նրանք խոսում են լավ, բայց սրտի մեջ մտքեր ունեն չարադավ»:
Պատասխանեց այնժամ նրան Եվրիանոն տանտիրուհին.

170 «Օրինավո՛ր խոսք ասացիր դու, իմ զավակ, ճիշտ ասացիր և համոզիչ.
Գնա, ասա ասելիքդ անդ քո որդուն և մի ծածկիր բնավ ոչինչ,
Բայց նախ պետք է դու լվանաս քո մարմինը և լավ օժես աչտերը քո,
Իսկ առանց այդ դու չգնաս, քանզի դեմքդ արտասուքով է ռոռոված.
Լա՛վ չէ անվերջ լավ ու ջաղել կականալիր և անդադար
արցունք թափել:

Իսկ քո որդուն այդ հասակում, որի համար անմահներին աղերսեցիր,
Ահավասիկ տեսնում եմ ես՝ նա չափահաս է այժմ արդեն»:
Նրան նորից իր խոսքն ասաց Պենելոպեն խոհեմամիտ.
«Եվրիանոն, դու ինձ այդպես մի համոզիր, շատ ես թեպետ
դու հոգատար,

Որ մարմինն իմ ես լվանամ, այն օժվեմ անուշաբուր.
180 Պերճությունն իմ կործանեցին աստվածները Օլիմպակյաց
Այն օրվանից, երբ կորակոր նալի վրա նա լող տվեց ու հեռացավ:
Բայց պատվիրիր, որ ինձ հետ գան Ավտոնոեն, Հիպպոդամիան,
Որպեսզի անդ ապարանքում իմ առջև կամ իմ կողքին
կանգնած լինեն,

Քանզի ամոթ է ինձ համար. տղամարդկանց առաջ մենակ
դուրս չեմ գա ես»:

Ասաց այդպես, և դուրս գնաց պառավն իսկույն այդ սենյակից
իր թագուհու,

Որպեսզի շուտ հայտնի կանանց և հորդորի, որ գան հապճեպ:
Մինչդեռ այլ բան անդ մտածեց Աթենասը՝ աստվածուհին պաշտառաչաւ.
Իկարիոսի աղջկա վրա նա բուն ցանեց մի քաղցրանուշ, և նա, թեքված
Իր մահիճին, քնեց հանկարծ, իսկ անդամներն անկողնու վեջ
ողջ թուլացան:

190 Այնժամ նրան գեղեցկափայլ, անմահական, պերճ պարզեներ
Անդ շնորհեց աստվածուհին հրաշալի, որ հիանաւն արեւացիք.
Նախ նա նրա չքնաղ դեմքին քսեց վսեմ, նուրբ ամբրոսիա,
Որով միայն օծվում է միշտ պերճապսակ Ափրոդիտեն Կիթերուհի,
Երբ գնում է սիրահոծար նա վեհաշուք պարահանդեսն Քարիսների,
Ապա դարձրեց նրա կազմվածքն առույգ, լիքը, քաջահասակ և մեծաշուք.
Ծերմակագույն դարձրեց նրան, ուղիղ ինչպես փղոսկրը կոկ

ու ողորկված:

Երբ գործն այդպես անդ ավարտեց, անհետացավ աստվածուհին:

Այնժամ տնից աղմկալի եկան դեպի Պենելոպեն խոհեմամիտ՝
Նածիշտները լուսաթևիկ, մինչ քաղցրաբույր բունն հեռացավ
անդ նրանից.

200 Ձեռքով սրբեց նա իր այտերն և խոսքն ասաց այս բարձրաձայն.

«Ո՛հ, ի՞նչ անուշ բուն էր գրկել ինձ, թշվառիս այս տարաբախտ.

Ա՛խ, երանի՛ ինձ այժմ ևեթ մի քաղցրալից մահ շնորհեր

սուրբ Արտեմիսն,

Որպեսզի ես կակամալի այս ջալլանքով չխորտակեմ միշտ իմ հոգին՝
Կործանելով կյանքս ամբողջ, մեծափափագ կարոտելով իմ ամուսնուն,
Որն արեւյանց մեջ գերհուշակ էր քաջությամբ ամեն տեսակ

և իմաստուն»:

Այդ ասելով՝ շուտ դուրս եկավ նա վերնատան շողշողեմի իր սենյակից,
Բայց ոչ մենակ, քանզի նրան հետևեցին երկու նածիշտ սպասուհի:

Դեպ խոսնայրները գնաց նա, կանանց հրաշք այդ դիցունիին:

Գնաց, կանգնեց դրանդու մտ ամրակառույց տան դահլիճի՝

210 Այտերը լուր նուրբ շղարշի գեղեցկափայլ բողով ծածկած,

Եվ կանգնեցին նրան ընթեր չքնաղագեղ նածիշտները երկու կողմից:

Այդ տեսնելիս՝ նրանց ծնկները թուլացան, նրանք սրտով սքանչացան,

Եվ բոլորն էլ խիստ ցանկացան՝ պտկել նրա մահիճի մեջ,

հանց կողակից:

Մինչ նա դիմեց և խոսք ասաց Տելեմաքին, սիրատենչիկ իր զավակին.

«Տելեմաքոս, բնավ չունես դու քո սրտում անդեղև ու խելացի միտք,

Իբրև մանուկ, դու առավել խոհուն էիր, պատշաճորեն միշտ հոգատար:

Մինչդեռ հիմա մեծ ես արդեն և հասել ես պերճ հասակին քո չափահաս:
Եթե տեսնի օտար մի մարդ վայելչակազմ քո կերպարանքն

ու պերճությունն,

Անշուշտ կասի, որ զավակն ես դու երջանիկ, գերահուշակ մի դյուցազմի,
220 Սակայն չունես դու քո սրտում խորհուրդ արդար և ոչ էլ խելք

քաջահամար:

Ի՞նչ անօրեն գործ է արված մեր տանն, այստեղ, մեր հարկի տակ,
Ինչպե՛ս է, որ թույլ ես տվել աստ անպատվել օտար մարդուն:

Եվ ի՞նչ, ասա. չէ՞ որ էթե եկվորը այդ, գտնվելով այստեղ, մեր տանն,
Այդպես կրի դարովանքը չար ու պատիք անպատվության,
Այդ կը բերի մարդկության մեջ քեզ քարվակյանք ամոթալի

ու խայտառակ»:

Եվ Տելեմաքը խորիմաց պատասխանեց իր մորն իսկույն և այս ասաց.

«Մա՛յր իմ, բնավ չեմ վրդովվում ես քո արդար գայրույթի դեմ,

Բայց ես, իրավ, խոհուն եմ այժմ, հասկանում եմ բավն ու վատը

Եվ ամեն գործ, մինչդեռ առաջ մանուկ էի ես մի անփորձ:

230 Սակայն, հարկավ, դեռ չեմ կարող հմուտ լինել, ամեն գործում

ողջախորհուրդ,

Հալածում եմ ինձ ամենուստ շուրջս պատած թշնամիները դժնաբարք,

Որոնք նյութում են դավանքներ, մենակ եմ ես և անպաշտպան:

Արդ, վերջացավ մեծամարտը օտարական այն շրջիկի և Իրոսի,

Բայց ոչ կաժքով խոսնայրների. հաղթանակեց շրջիկն եկվոր,

որ ուժեղ էր:

Ո՛հ, երանի՛, Չևս-զգոն հայր, դուք Աթենաս և Ապոլլոն,

Եվ սեղեխները մեր տան մեջ, թույլ ծնկներով և տապալված,

Ոմանք այստեղ, այս հարկի տակ, ոմանք էլ անդ, մեր բակի մեջ,

Չախջախվելով այնպես՝ անվերջ օրորեին գլուխն իրենց,

Ինչպես հիմա Իրոսն այնտեղ, դարպասի տակ, մեր բակի մոտ,

240 Նստած է թույլ ու գլխիկոր, մի հարբեցող թշվառական մարդու նման

Եվ չի կարող ոտքի վրա կանգնել անգամ, որ գեթ իր տուն

վերադառնա

Կամ թե մի կերպ շարժվի, գնա, քանզի շարդված եմ անդամներն

իր սիրելի»:

Այդպես անա իրարու հետ խոսում էին նրանք այնտեղ,

Մինչ Ելլիմաքն այնժամ դիմեց և խոսք ասաց Պենելոպե վեհ թագուհուն.

«Դո՛ւ, ով դառնիկ Իկարիոսի, Պենելոպե խոհեմամիտ, էթե իրոք,

Յատասկան Արգոսի մեջ արեւացիք քեզ տեսնեին ուղիղ այսպես,

Այս տունն այնժամ էլ առավել պիտ լցնեին բլուր հոմանի

և քաջ խոսնայր,

Պիտ հրճվեին անդուրեան, քանզի դու ես վեհն, գերազանցը
կանանց մեջ՝
Թե՛ պերճությամբ, թե՛ կազմվածքով քո մեծաշուք և թե՛ խելքով
բաջահանճար»:

250 Իսկույն նրան պատասխանեց և խոսք ասաց Պենելուպեան խոհեմամիտ.
«Եվրիմաքոս, իմ պերճությունն, իմ տեսքն ու շուքն, իմ արժանիքն
Անմահները կործանեցին, երբ դեպ Իլիոն արշավեցին արգիացիք,
Իսկ նրանց հետ գնաց նաև իմ ամուսին Ռոդիսուսը:

Ավա՛ղ, եթե նա ետ դառնար և իմ կյանքը պահպաներ հաղթ
ու հոգատար,

Փառքս ավելի մեծ կլիներ, և ամեն բան ավելի՛ լավ ու գեղեցիկ:
Այժմ ես անվերջ ցավի մեջ եմ, ինձ այսպիսի տանջանքի մեջ
զցեց աստված:

Մինչ երբ որ նա, հեռանալիս, թողեց երկիրն իր հայրենի,
Բռնեց, սեղմեց աջ ձեռքը իմ ու բարբառեց և խոսք ասաց.
«Ա՛յ կին, բնավ ես չեմ կարծում, որ Տրոյայից ողջ ու առողջ և անվնաս՝

260 Իրոք ետ գամ բոլորեքյան արեացիք՝ գեղասրունք,
Քանզի, ինչպես ճիշտ ասում են, հզորագոր մարտել գիտեն տրոյացիք,
Նիզակալոր մարդիկ են քաջ ու բաջավարժ նետածիգներ՝
Արագավազ նծուզներով լավ արշավող: Նրանք կարող են հաջողակ՝
Հեշտ որոշել գորքի ուժով ամբոխների պատերազմի էլքն ահավոր,
Ոստի և այժմ ես չգիտեմ, արդյոք աստված թույլ կտա՝ ինձ
եւ դառնալ տուն,

Թե՛ պիտ կորչեմ ես Տրոյայում, իսկ դու այստեղ այս ամենը
լավ խնամիր,
Հիշի՛ր միայն իմ հորն ու մորն, մեր տանն, այստեղ, նրանց հոգս
և պահպանիր,
Ինչպես հիմա կամ թե նույնիսկ ավելի լավ, երբ ես քեզնից հեռու լինեմ:
Երբ որ որդին իմ մեծանա, և մեծի պես արդեն մորուք նա ունենա,

270 Դու կարող ես մարդու գնալ, ում ցանկանաս և հեռանալ իմ այս տնից»:
Այդպես խոսեց նա, մեկնելիս, և այժմ արդեն կատարվում է ամենը այդ:
Մոտալուտ է, կգա շուտով մութ գիշերը, կկատարվի
Անհիծյալիս ամուսնությունն, որից Չեսը խլեց, ավա՛ղ, երջանիկ օրն:
Կա նաև այլ մի դաժան վիշտ, որ մաշում է միշտ իմ հոգին.
Խոսնայրները մի ժամանակ բնավ այնպես չէին վարվում, ինչպես հիմա.
Ով իր համար չբնադագեղ և ազնվագույն կին ցանկանար
Կամ դասերը երևելի, հարուստ մարդու, խիստ մրցելով ուրիշի հետ՝
Նա բերում էր իր հետ եզներ և պարարուն հույր ոչխարներ, իբրև նվեր
Իր խնամու խրախճանքին, նա տալիս էր և ընծաներ պերճ ու վսեմ,

280 Եվ բնավին անպատիժ չէին կործանում ստացվածքը, գույքն ուրիշի»:

Այդպես ասաց, խորունկ խնդաց աստվածագարմ Ռոդիսուսը
բազմահամբեր,
Չի նրանցից նա նենգաբար, ճարտար խոսքով, հմայելով նրանց հոգին՝
Ընծանե՛ր էր միշտ ստանում, բայց որոճում էր իր սրտում

նա այլ մտքեր»:
Եվ թագուհուն այդ ժամանակ իր խոսքն ասաց Անտիանոսը Եվպիթաձին,
«Դու, ով դասրիկ Իկարիոսի, Պենելուպե խոհեմամիտ,
Ընդունիր քո նվերներն այժմ, որ արելանք քեզ կը բերեն մեծափափագ
Անվայել է չընդունել այն ընծաները, որ տալիս են մարդիկ սրտանց,
Իսկ այստեղից այժմ այլ գործի, մեր տուն կամ այլ տեղ չենք գնա,
Մինչև չընտրես արելանց մեջ քեզ ամուսին, ում գերազանց
դու համարես»:

290 Այդպես ասաց Անտիանոսը, և այդ խոսքերն հավանեցին բոլորն այնտեղ,
Ու ամեն մեկը անհապաղ բանքեր կանչեց, որ բերի նոր,
պերճ ընծաներ:

Բերեց բանքերն Անտիանոսի գեղեցկափայլ, նկարագարող ու երփներանգ
Մի քղամիդ, որի վրա կային ոսկի տասներկու շքեղ ճարմանդ,
Որ հեղուավում, կոճկվում էին կեղիկներով գեղեցկափայլ:
Այնուհետև բերեց բանքերն Եվրիմաքի բառամանյակ մի գեղեցիկ,
Ոսկեկառույց, դեղին սաթով ընդելուզված, արևի պես շողշողենի:
Չույզ ծառաներն Եվրիդամի բերին, տվին երեք պաշտոն օղեր ու գինդ՝
Հրաշակերտ, լուսանշույլ, եռականի չքնաղ հակիկնք:
Եվ Պոլիկտոր քաջի որդի Պիսանդրոսի բանքեր ծառան

300 Վզնոց բերեց պերճապանույճ, հանց զարդարանք մի թանկարժեք,
Նաև շքեղ այլ ընծաներ անդ բերեցին մյուս արելանք,
Բայց բարձրացավ դեպ վերնատուն Պենելուպեան՝ չքնաղ կինը,
Եվ նրա հետ նածիշտները վերցրին, տարան նվերներն այդ շքեղաշուք:
Մինչ սկսեցին սեղեխները երգն ու պարերն հրապուրիչ, սրտին հաճո:
Հրճվում էին նրանք այդպես՝ սպասելով, որ գա գիշերը մթնշաղ:
Այդպես անվերջ անդ հրճվելիս՝ վրա հասավ և գիշերը սև ու մթին,
Իսկույն նրանք պատրաստեցին գավթում երեք կրակարան լուսացայտ,
Որ լույս սփռեն սպարանքին, և շարեցին դրանց շուրջը
Վաղուց արդեն լավ չորացած, սուր պղնձով նոր կտրատված
վառելիք փայտ

310 Ու խցկեցին կրակի մեջ նաև կարոտ մարխ ու տաշեղ:
Ռոդիսուսի ստրկուհիք այնտեղ հերթով հսկում էին այդ կրակին,
Եվ մոտեցավ այնժամ նրանց աստվածագարմ Ռոդիսուսը ու խոսք ասաց.
«Դո՛ւք, ստրկուհներ Ռոդիսուսի, բացակայող թագավորի,
Գեթ գնացեք գերասեճար ձեր թագուհու սենյակն, այնտեղ,
Թե՛ ոլորեք աղեկատով, որ գեթ այդպես ձեր տիրուհին մխիթարվի,

Կամ վերնատանն, այնտեղ նստած, ձեռքով աշխույժ գգեք, սանրեք
բուրդը պես-պես:

Իսկ կրակին ես կհսկեմ՝ լույս սփռելով աստ ամենքին:
Եթե նույնիսկ այժմ ցանկանան սրանք մնալ մինչ Արշալույսը ոսկեգահ,
Հոգնածությունն ես չեմ գգա, քանզի չե՞ որ բազմահամբեր
մի մարդ եմ ես»:

320 Ասաց այդպես, և նայեցին ստրուկները իրար դեմքի ու ժպտացին,
Մակայն նրան հայհոյական խոսքեր ասաց գեղեցկուհի Մելանթոն.
Դստրիկն էր դա Դոլիոսի, որին սակայն խնամել էր Պենելոպեան,
Սնուցել էր, հանց իր որդուն, տվել գգեստներ, զարդարանքներ,
Բայց և այնպես նա սրտագին չէր մտածում Պենելոպե տիկնոջ մասին,
Այլ սիրում էր Եվրիմաքին, նրա հետ էր սիրով կապված:
Ահավասիկ, Ռդիսեսին նա նախատեց, հայհոյական խոսքեր ասաց.
«Խելակորո՞ւյս դու հեզ մտրիկ, գուցե կորցրել ես խելքդ դու.
Ինչո՞ւ, ասա, չես գնում դու գիշերելու դարբնոցում
Կամ չես գնում դեպի պանդոկ, այլ ձավրում ես այստեղ լկտի
ու բացքերան,

330 Հանդգնաբար, առանց վախի, խոսք ես խոսում հավաքի մեջ
բլուր քաշերի:
Գուցե գինին խելքդ ցրեց, գուցե այդ է քո իսկական էությունը,
Եվ շնորհիվ դրան դու միշտ ունայնախոս բարբաջում ես
այդքան անփույթ:
Հպարտացել ես գուցե դու, որ հաղթեցիր այժմ Իրոսին աղբատ ու խեղճ,
Տե՛ս, որ քո դեմ աստ չկանգնի այժմ Իրոսից շատ ավելի հզոր մի քաջ,
Որն հաղթական իր ձեռքերով կջախջախի քո գլուխն այդ անբարեհաճ
Ու քեզ տնից դուրս կգցի, քեզ, թշվառիդ՝ արյունի մեջ խիստ
թաթախված»:

Խեթ նայելով նրան իսկույն՝ իր խոսքն ասաց Ռդիսեսը ամենիմաց.
«Արդ, կգնամ և քո լուտանքն ես կհայտնեմ Տելեմաքին, վայրահաջ շուն,
Որ տեղնուտեղը քեզ գզի, պատառ-պատառ անի իսկույն»:
340 Այդպես ասաց և իր խոսքով ահաբեկեց բոլոր կանանց,
Եվ հեռացան նրանք տան մեջ, քանզի անից նրանց ծնկները ծալվեցին:
Կարծում էին, որ մտրիկը պատմելու է այժմ ամեն ինչ ու ճշգրիտ,
Մինչ կանգնած էր կրակներից անդ առընթեր Ռդիսեսը լուռ, անքթիթ
Եվ հսկում էր հանդարտ վառվող շողշողեցի այն լույսերին,
իսկ իր հոգին

Ալեկոծվում էր այլ մտքով, որն անխուսափ պիտ կատարվեր:
Աթենասն էլ սեղեխներին անդ չգապեց ամենևին
Եվ չընդհատեց լուտանքն ստոր, սրտակոտոր, որ ավելի խիստ բորբոքի
Վիշտն ու վրեժը սրտի մեջ Լաերտածին Ռդիսեսի:

Այսպես ահա անդ բարբառեց և խոսք ասաց Ռդիսեսյան Եվրիմաքուն՝
350 Ռդիսեսին խիստ ծաղրելով, ու հարուցեց հրոհրոցը ընկերների.
«Ի՞նձ լսեցեք, գերահոչակ վեհ թագուհու դուք խոսնաչոյներ,
Ահավասիկ, ձեզ խոսք կասեմ, որ ներշնչում է ինձ սիրտս
իմ կրծքի տակ.

Աստվածների կամքով է լոկ Ռդիսեսի տունն եկել այս մութացկանը,
Եվ լույսը այս, որ կա այստեղ, կրակներից չէ բնավին, այլ միմիայն
Նրա գլխից, կունդ ճակատից, քանզի վրան չկա նույնիսկ
մի հատ մագիկ»:

Ասաց այդպես և անհապաղ խոսքը ուղղեց Ռդիսեսին քաղաքավեր.
«Օտարակա՛ն, եթե ինձ մոտ ես քեզ վերցնեմ, արդո՞ք կուզե՛ս
ծառայել ինձ.

Քեզ կառաքեմ ես կարվածքիս ծայրամասերն և բավական
վարձ կտամ քեզ,
Կհավաքես անդ փշեմիք և կտնկես բարձրասաղարթ այնտեղ ծառեր:

360 Ես այստեղից հաց ու ոտեստ կհասցնեմ քեզ հանապազ և անաղարտ,
Կհագցնեմ քեզ հագուստներ, կտամ նաև ոտքի համար ոտնամաններ:
Մակայն գուցե դու չե՛ս ուզում գործ կատարել, գնալ ազնիվ
աշխատանքի,

Այլ լավ գիտես վատ արարքներ և ցանկանում ես դու անշուշտ
Մութալ, շրջել միշտ դռներդ, որ կերակրեն քո որովայնը
միշտ անկուշտ»:

Պատասխանեց այնժամ նրան և խոսք ասաց Ռդիսեսը ամենիմաց.
«Եվրիմաքոս, եթե իրոք աշխատանքով մեներ դիմեմք մի մրցանքի,
Խոտ հնձեմք գարնան պահին, երբ օրերն են դառնում արդեն
երկարատև,

Եվ ես ձեռքիս ունենայի գեղեցկակերտ, կոր գերանդի,
Նույնը և դու ունենայիր, ու լինեմք երկուսովս էլ անդ անոթի,

370 Մենք փորձեմք խոտը հնձել առավոտից մինչ իրիկուն,
Եվ կամ եթե չորս օրավար մեծ արտի մեջ, ուր հլու է հողն արօրին,
Մեզ հանձնեին քշել եզներն ընտիր ու մեծ և շիկագեղ ու գերազանց,
Նույն զորությունն և նույն հասակը ունեցող, բայց կուշտ կերած,
Կարողությամբ իրենց ուժեղ, դեռ ուժասպառ բնավ չեղած,
Այնժամ անշուշտ կտեսնեիր, թե ինչպե՛ս եմ անվերջ ճեղքում
եւ ակոսներ:

Կամ, վերջապես, եթե հիմա, այսօր նեթ Կրոնոսյանը բորբոքեր
Ժանտ պատերազմ, և ես իրոք ունենայի երկու միգակ ու լավ ասպար,
Պղնձակոտ նաև կորդակ, հարմարագույն գլխիս համար,
Այնժամ դու ինձ կտեսնեիր նախահարձակ շարքերի մեջ
քաջ մարտելիս

380 Եվ ինձ բնավ չէիր կարող անկուշտ, ազամ փորի համար դու սրարապիլ:

Մինչ նայե՛րս ես դու չափազանց և չարանենգ հոգի ունես
Եվ դու միայն նրա համար մեծագույն ես քեզ համարում ու կորովի,
Որ միշտ այստեղ գտնվում ես հավաքի մեջ այս դժնարարք,

չնչին մարդկանց:

Ա՛յս, եթե գար, վերադառնար հայրենավանդ իր երկիրը քաջ Ողիսևան,
Դռները այս այն ժամանակ, թեպետ և շատ լայնալիք են և ընդարձակ,
Քեզ մեղ, անձուկ պիտ թվային, երբ փախչեիր դու խուճապով,

ահաբեկված»:

Ասաց այդպես, խիստ կատաղեց Եվրիմարուն իր սրտի մեջ,
Ուստի և նա, Ողիսևսին խեթ նայելով, այս խոսքն ասաց իր թևավոր.
«Ո՛հ, դու թշվա՛ռ, քեզ արժանի ժանտությունն իմ ես ցույց կուսս

ահա իսկույն:

390 Հանդգնագո՛ւյն, որ քաջերիս հավաքի մեջ մրթմրթում ես

այդպես դատարկ.

Չե՛ս վախենում, գուցե գիճի՞ն խելքդ ցրեց, կամ ա՞յդ է քո էությունը,
Եվ շնորհիվ դրան դու այժմ վատաբերան բարբաջում ես փուշ

և անփույթ:

Հպարտացել ես գուցե դու, որ հաղթեցիր այժմ Իրուսին այն մուրացկան»:

Այդպես գոռաց նա բարձրաձայն և կատաղի վերցրեց, մետեց աթոռակը:
Ողիսևսը, վախենալով, իսկույն չոքեց դուլիքիոնցի Ամփինոսի

Ծնկների մոտ: Չարկվեց աթոռը աջ թևին գիճեքաշխի,

Գավն ահարկու, մեծ բոմբյունով, թեղաց, ընկավ իսկույն գետնին,

Իսկ գիճեքաշխն աղաղակեց և փոշու մեջ ցած գորովեց քերանքսիվայր,

Խոռվասույզ սեղեխները աղմրկեցին ապարանքում ստվերամած,

400 Եվ ոմանք էլ, իրար դեմքի խիստ նայելով, այսպես էին խոսում այնտեղ.

«Ո՛հ, երանի՛ թափառման մեջ, նախքան գալուստը իր այստեղ,

Այս մուրացկանը կործանվեր, որ չհուզեր մի այսպիսի

հուզմունք մեր մեջ:

Հանուն դժբախտ մի շրջիկի՛ լի գծտությամբ վիճում ենք մենք,

ահավասիկ.

Էլ ի՞նչ խնջույք, էլ ի՞նչ հաճույք սրտի համար, երբ հաղթում են

ստոր մարդիկ»:

Եվ բարբառեց այնժամ նրանց սուրբ գորությունը ազնվագույն

Տելեմաքի.

«Բարեկամնե՛ր, մոլեգնում եք կատաղորեն և չեք թաքցնում

դուք ազդեցիկ

Ուժն ուտեստի կամ խմիչքի: Աստվածն է ձեզ խիստ գրգռում.

Խնջույքն արդեն ավարտեցիք, ուստի հիմա տուն գնացեք քուն մտնելու

Եվ կամ ինչպես ցանկանում եք. չեմ վրձում ես ոչ ոքի»:

410 Այդպես ասաց, բոլորն իսկույն շրթունքները ատամներով կրծոտեցին

Եվ զարմացան, որ Տելեմաքն այդպես խոսեց քաջախիզախ ու խելացի:

Մինչ Նիսուսի՝ Արեւոսյան թագավորի փառավոր զարմն՝ Ամփինոսը,

Այնժամ դիմեց խոսնայրներին և, ճառելով, այս խոսքն ասաց.

«Միրելիճե՛ր, թող որ ոչ ոք, վիրավորված, չզայրանա ամենևին

Արդարացի և ճիշտ ասված խոսքի համար և թող ոչ ոք

Չհանդգնի ձեռք տալ այստեղ այս շրջիկին, ոչ էլ նույնիսկ

ստրուկներից

Մեկնումեկին, որ ապրում են ապարանքում աստվածազարմ Ողիսևսի,

Եվ թող հիմա գիճեքաշխը այս բաժակները շուտափույթ գիճով լցնի,

420 Որպեսզի մենք հեղում անենք և այնուհետ քուն մտնելու

մեր տուն գնանք:

Իսկ մուրիկին մենք կթողնենք Ողիսևսի տանը, կողքին Տելեմաքի,

Քանզի չէ՞ որ նա կել է նրա տունը և օթևանը սիրելի»:

Այդպես ասաց, և բոլորը ասված խոսքը հավանեցին:

Մինչդեռ իսկույն բանքեր հերոսն՝ Մուլիոսը դուլիքիոնցի,

Որ ծառան էր Ամփինոսի, խառնարանում խառնեց գինին

Եվ ծրածիռ մատուցակեց անդ բոլորին: Հեղում արին աստվածներին,

Ապա իրենք ճաշակեցին քաղցր գինին մեղրամուշիկ:

Երբ հեղումը կատարված էր, և խմեցին, որքան սիրտն էր

փափագում այդ,

Շուտ դուրս եկան ու գնացին քուն մտնելու, ամեն մեկը դեպի իր տուն:

Ե Ր Գ տ ա ս ն ի ն ն ե ռ ո Ր Ղ

ՈՂԻՍԵՎՍԻ ԵՎ ՊԵՆԵԼՈՊԵՒ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.
ՈՏՆԱԼՎԱ.

Անդ, մնալով տան մեջ մեռակ, Ողիսևը աստվածակերպ Աթենասի հետ, մտահույզ, սեղեխների մահն էր հյուսում իր սրտի մեջ: Եվ արդ, այնժամ Տելեմաքին փութանակի իր խոսքն ասաց նա թևալոր. «Անհրաժեշտ է, Տելեմաքոս, արեսական բոլոր գեները դուրս տանել: Եթե հանկարծ խոսնայրները հարցմունք անեն քեզ այդ մասին, Դու համոզիր նրանց մի կերպ, խոսքեր խոսիր քաղցր ու մեղմ, Այսպես ասա. «Տարել, դրել եմ ծխից դուրս, զի այնպիսին չեն այժմ դրանք,

Ինչպիսին որ Ողիսևը թողեց Տրոյա հեռանալիս, Այլ ժանգոտել են լիովին՝ գունկելով կրակի մոտ, գոլորշու տակ:

10 Նամանալանդ, որ իմ սրտին այժմ ներշնչեց ինքը աստված, որպեսզի ես Չգույշ լինեմ, որ մի գուցե դուք, զինովցած, կագ ու կոհվ բորբոքեք աստ Եվ արյունը թափեք միմյանց՝ զոր պղծելով խրախճանքը, Այլև ձեր այս խնամությունն, քանզի երկաթն ինքն է իր կողմ քաշում մարդուն»:

Ասաց այդպես, հնազանդվեց Տելեմաքոսն իր սիրելի հոր պատվերին, Ելրիկլիս իր դայակին մոտ կանչելով՝ նրան այսպես նա խոսք ասաց. «Մարիկ, պահիր սենյակի մեջ մեր այդ նածիշտ բոլոր կանանց, Մինչև որ ես անդ, վերնատուն տեղափոխեմ իմ հոր զենքերը գեղապանծ,

Քանզի իմ հոր գնալուց ետ, տան մեջ անհոգ մրճոտել են դրանք ծխից: Իսկ ես, իրավ, այն ժամանակ շատ փոքր էի, իբրև մանուկ,

20 Այժմ ուզում եմ դրանք պահել, որպեսզի զոր չծխոտվեն կրակի մոտ»: Պատասխանեց իսկույն նրան սիրած դայակ Ելրիկլիսն. «Ո՛հ, երանի՛ զգոնության հասնես, որդյակ, դու վերջապես Եվ լինես քո տանն հոգատար, որ քո գույքը գեթ պահպանես:

Սակայն հիմա ո՛վ պիտի գա, որ լույս տա՝ քեզ գործիդ համար, Քանի որ դու պատվիրում ես, որ դուրս չգան ստրկուհիք»: Պատասխանեց իսկույն նրան և խոսք ասաց Տելեմաքոսը խորինաց. «Արդ,՝ այս եկվորն օտարական, քանզի քնավ չեմ հանդուրժի ես, իսկապես, Որ մեկն այստեղ իմ հացն ոտի, պարսպ նստի, թեկուզ լինի եկած հեռվից»:

Ասաց այդպես նա բարձրաձայն և համոզեց նրան խոսքով. 30 Գնաց իսկույն դայակն ալխարդ, փակեց դուռը գեղեցկաշեն նա սենյակի: Ու վեր կացան փութանակի Ողիսևը և իր որդին մեծահոշակ, Վերցրին, տարան սաղավարտներն ու վահանները բոլորչի Եվ սայրատուր միգակները, իսկ առջևից անցավ Պալլաս Աթենասը, Որը, բռնած ուկի նրազը իր ձեռքին, լույս էր տալիս շքեղափայլ: Մինչ Տելեմաքը փութապես իր հորն ասաց այդ ժամանակ. «Հայր իմ, մի տե՛ս, հրաշք է սա, որ իմ աչքով տեսնում եմ ես. Ապարանքի պատերն ամբողջ, կամարները շքեղազարդ, Եղևակերտ պերճ պահանգներն և բարձրաբերձ պուները այս Ծողշողում են իմ աչքերին, կարծես սուզված են բոցալստ կրակի մեջ»:

40 Անշուշտ այստեղ կա մեկնումեկն լայնատարած երկնքի տեղ աստվածներից»: Պատասխանեց իսկույն նրան և խոսք ասաց Ողիսևը ամենիմաց. «Մո՛ւս կաց, լիր և քո սրտում դու այդ պահիր, հարցեր մի՛ տա. Այդպիսին է սովորույթը օլիմպակյաց աստվածների: Իսկ դու հիմա գնա, պատկիր, որ քնես անդ, իսկ ես այստեղ կմնամ դեռ, որպեսզի գեթ նորից փորձեմ հոգին քո մոր և այլ բոլոր ստրուկների: Կարծեմ հիմա ինձ մանրամասն հարցմունք կանի մայրդ վշտոտ»: Ասաց այդպես, և սենյակից Տելեմաքոսը դուրս եկավ Ու նրազի շողունի տակ գնաց դեպի իր ննջարանն, Որ պատկում էր նաև առաջ, երբ իր աչքին իջնում էր քունը քաղցրաբույր:

50 Եվ նա այդպես պատկեց այնտեղ՝ սպասելով Արշալույսին: Տանը այնժամ մնաց միայն Ողիսևը աստվածալին՝ Սեղեխների կործանունը հորինելով Աթենասի հետ միասին: Այնժամ իջավ ննջարանից Պենելոպեան խոհեմամիտ, Որ նման էր Արտեմիսին, այլև չքնաղ Ափրոդիտին ուկեղմիկ: Եվ դահլիճում, օջախի մոտ, ուր նստում էր նա մշտապես, Իսկույն դրին մի պերճ բազմոց արծաթազարդ և փղոսկրով նրբադրվագ: Ծիկել էր այն Իկմալիոս մեծ վարպետը գերասոչակ և կցել էր Ոտքի համար մի պատվանդան: Արդ, փուեցին դրա վրա մեծ օղեմին,

Եվ բազմոցին նստեց ապա խոհեմամբ Պենելոպեան:
 60 Մինչ վերևից եկան իսկույն ստրկուհիք լուսաթևիկ,
 Որոնք հապճեպ հավաքեցին հացը առատ, պերճ սեղաններն
 ու գավաթներն,
 Որոնցով անդ խնել էին մարդիկ նպերտ և չափազանց ամբարտաւան:
 Օջախներից կրակն իսկույն դուրս թափեցին ու դարսեցին
 Նոր դրանց մեջ փայտ լիովի, որ տաքանա և լույս լինի:
 Մինչդեռ նորից լիրք Մելանթոն Ռոփսուսին անարգեց ու աղաղակեց.
 «Հե՛ն, ծեր շրջիկ, օտարական, այստե՛ղ ես դեռ, գիշերն անգամ
 Չես հեռանում դու այս տնից և կանանց ես այստեղ նայում
 դու հետախույզ:
 Հայդա՛, կորի՛ր, թշվառական, բա՛վ է, որքան աստ լափելով
 դու օգտվեցիր.
 Կորի՛ր, թե ոչ՝ խանձողով այս կհարվածեմ, որ դու այդպես
 դուրս շարտվես»:

70 Խեթ նայելով՝ նրան այնժամ իր խոսքն ասաց Ռոփսուսը ամենիմաց.
 «Ինչո՞ւ ես դու, չարագոյն, ցատումնայի վարվում ինձ հետ,
 Նրա՛ համար, որ մաքուր չեմ, որ հագուստն է իմ ցնցոտի,
 զազիր ու վատ,
 Որ մուրում եմ այս քաղաքում ես դռնեդուռ: Բայց կարիքն է
 ստիպում ինձ,
 Եվ աշխարհն է լցված ամբողջ խեղճ մարդկանցով ինձ պես մուրիկ
 և տարաբախտ.
 Երբեմն և ես մարդկության մեջ տուն ունեի գեղեցկաշեն,
 Հարուստ էի ու երջանիկ, և ես հաճախ ողորմություն էի տալիս
 Այսպիսի խեղճ շրջիկներին, ով որ լինեք, ինչ կարիքով էլ ինձ մոտ գար:
 Եվ ես այնժամ շատ ունեի լավ ստրուկներ և այն ամենը գերազանց,
 Որով մարդիկ ապրում են ճոխ և գերապանծ են այդ փառքով
 հարստության:

80 Չևսը սակայն ոչնչացրեց ամենը այդ, քանզի այդպես էր կամքը յուր:
 Եվ դու, ա՛յ կին, զգո՛ւյշ եղիր, որ չզրկվե՛ս պանծանքից,
 Որով դու այժմ գերազանցում ես մյուս կանանց սրտկուհի,
 Կամ մի՛ գուցե տանտիրուհին այժմ քո վրա խիստ գայրաճա
 և պատժի քեզ:
 Գուցե նույնիսկ Ռոփսուսը վերադառնա, և դեռ հույս կա, որ նա կգա,
 Իսկ եթե նա մահացել է արդեն վաղուց կամ կորած է անվերադարձ,
 Այդուհանդերձ, ողորմությամբ Ապոլլոնի, կա Տելեմաքը՝ իր որդին,
 Եվ նրանից ու սրատես նրա աչքից չար գործերը ստրուկ կանանց
 Բնավ ծածուկ, գաղտ չեն մնա, քանզի արդեն անչափահաս
 չէ նա հիմա»:

Մասց այդպես, և խոսքերն այդ լսեց հանկարծ Պենելոպեան խոհեմամբ
 90 Ու չարաչար նա կշտամբեց չար նածիշտին, անվամբ կոչեց
 և խոսք ասաց.

«Ո՞հ, լրբեճիդ հանդգնագույն, դո՛ւ անզգամ, անամոթ շուն,
 Զո արարմունքն և վատ գործերն ես լավ գիտեմ, այդ ամենը
 գլխիդ կգա.
 Մինչ ամեն ինչ քաջատեղյակ դու գիտեիր, լսել էիր ինձնից անգամ,
 Որ միտք ունեմ հարցմունք անել ես շրջիկին, որ իմ տանն է՝
 Իմ ամուսին քաջի մասին, որի համար տանջվում եմ միշտ
 ու չարաչար»:

Մասց այդպես, ապա դիմեց Եվրիմոնե տնօրենին և այս ասաց.
 «Եվրիմոնե, մի բազմոց քեք, նրա վրա նաև փոքր դու օղեճի,
 Որ հյուր եկվորն վրան նստի և խոսք ասի ու ինձ պատմի,
 Այլև լսի սսելիքն՝իմ: Ես ուզում եմ հարցմունք անել հիմա նրան»:
 100 Մասց այդպես, հնազանդվեց տնօրենը, հապճեպ քերեց, որեց այնտեղ
 Պերճ բազմոցը հղկված ու կոկ, մորթի փռեց, ինչպես հարկն էր,
 Նրա վրա բազմեց իսկույն քազմաչարչար Ռոփսուսը աստվածասուն,
 Եվ սկսեց խոսքն իր այնժամ Պենելոպեան խոհեմամբ.
 «Եկվո՛ր շրջիկ, ահալասիկ հարց կտամ քեզ նախ և սուսջ.
 Ի՞նչ մարդ ես դու և ո՞ր ցեղից կամ որտե՛ղ եմ քո քաղաքն
 ու ծնողներդ»:

Պատասխանեց այնժամ նրան և խոսք ասաց Ռոփսուսը ամենիմաց.
 «Ա՛յ կին, իրավ մահկանացու մարդկանց մեջ այժմ, երկրի վրա
 անծայրածիր,
 Էլ ոչ մի մարդ չի հանդգնի քեզ կշտամբել. փառքդ երկինք է
 այժմ հասել,
 Ինչպես փառքը գերահոշակ մի արքայի, որն իշխում է ասործու պես
 110 Իր քաջարի ու քազմամարդ ազգի վրա արդարադատ ու ճշմարիտ,
 Ու սև երկիրն իր ձեռքի տակ առատ ու լի քերում է միշտ ցորեն, գարի.
 Ծանրաքեռնված են բլուր ծառեր պտուղներով փարթամ ու լի
 և սկաղձուն,
 Բազմաքեղուն, են նախիրներն, հոտն ու խաշիճքն, ծովը առատ
 ձուկ է տալիս,
 Եվ իր արդար իշխանությամբ ազգն է աճում միշտ երջանիկ
 ու բարգալիս:
 Բայց բարվոք է, որ, ինձ այստեղ, քո հարկի տակ, այլ քան հարցնես
 դու բարեհաճ,
 Սակայն ազգիս, հայրենիքիս մասին բնավ, աղաչում եմ,
 հարց մի տուր ինձ,
 Բանզի սիրտս լցնելու եմ վիշտն ու ցավը, եթե հիշեմ ես ամեն ինչ:
 Ես վատաբախտ մարդ եմ, իրավ, և կրել եմ բլուր տառապանք,

Եվ վայել չէ տանն ուրիշի ջայլանք անել ու հեկեկալ արտոտարալիր:
120 Լա՛վ չէ, երբ մարդ, վշտերով լի, միշտ տոչորվում է շարունակ

և անընդհատ:

Թերևս այդպես են հարուցեմ վրդովմունքը ստրուկների, նույնպես և քո.
Պիտի ասեն՝ լող եմ տալիս արցունքի մեջ, և գինով է միտքս գերված»:
Պատասխանեց այնժամ նրան և խոսք ասաց Պենեդուպեն խոհեմամիտ.
«Օտարական, իմ պերճությունն, իմ տեսքն ու շուքն և արժանիքն
Աննահները կործանեցին, երբ դեպ Իլիոն արշավեցին արգիացիք,
Իսկ նրանց հետ գնաց նաև իմ ամուսին Ռոդիսուր:

Ավա՛ղ, եթե նա ետ դառնար և իմ կյանքը պահպաներ հեշտ
ու հոգատար,

Փառքս ավելի մեծ կլիներ, և ամեն ինչ ավելի լավ ու գեղեցիկ:
Այժմ ես անվերջ ցավի մեջ եմ, ինձ այսպիսի տանջանքի մեջ

զգեց աստված:

130 Ինչքան որ կան իշխանագոր և մեծանուն դյուցազուններ կղզիներում՝
Դուլիքիոնում և Սամեում, Չաքիթոսում անտառախիտ,
Իթակեում ապառաժոտ՝ խոսնայրներ են և իմ ձեռքն են խնդրում հիմա,
Բայց հակառակ իմ ցանկության և կողոպտում ու վատնում են

գույքերը մեր:

Էլ ես բնավ հոգատար չեմ ոչ հյուրերի, ոչ աղերսող մարդկանց հանդեպ,
Ոչ էլ նույնիսկ ժողովրդյան գործ կատարող քանքերների:

Վշտահար եմ ես չափազանց, Ռոդիսուսի ցավն է մաշում սիրտս անվերջ:
Նրանք շտապ պահանջում են ամուսնություն, իսկ ես դիմում եմ

աննզանքի,

Եվ ինձ աստված նախ աներջնչեց մանածագործ ու մեծագույն
հաստոց սարքել

Մեր տանն, այստեղ և գործել պերն, չքնաղագեղ մի մեծ սավան՝

140 Անչափելի լայն ու երկար, ուստի նրանց ես դիմեցի և ասացի.
Երիտասարդ իմ խոսնայրներ, երբ մեռած է Ռոդիսուր աստվածազարմ,
Երբ աշխարհում նա էլ չկա, մի՛ շտապեք, հետաձգե՛ք մեր հարսանիքն,
Մինչև սավանն ես ավարտեմ, թող հյուսվածքը և թելերն իմ

գուր չկորչեն.

Պատանքն է դա հերոսասիրտ ծեր Լաերտի: Երբ նրան բախտը
դժընդակ,

Ծակառագիթն հաճճի մահվան հավերժավիշտ ժանտ վիճակին,
Պիտ ավարտեմ ես այդ գործը, որ ինձ կանայք արեացոց չկշտամբեն,
Թե պսոկած է այդ ունևոր, հարուստ մարդը իր դագաղում,

բայց անպատանք:

Այնժամ այդպես ես ասացի, հնազանդվեց նրանց հոգին ամբարտավան,
Եվ սավանն այդ հաստոցի մոտ գործում էի միշտ ցերեկով,

150 Իսկ գիշերը հյուսվածքն ամբողջ քանդում էի՝ վառ նրազը դեմս դրած:

Այդպես ուղիղ երեք տարի, համոզելով, խաբիբեցի են արեյանց,
Բայց երբ եկավ չորրորդ տարին, պտտվեցին ժամանակներն,
Անցան, կորան շատ ամիսներ, և սլացան բազմաբազում

շատ-շատ օրեր,

Իմ շնացած ու դավաճան ստրկուհիք, անկարեկից իմ վիճակին,
Գործն հայտնեցին, և, ներս գալով, խոսնայրները գաղտնի գործում

ինձ բռնեցին,

Ստիպեցին ու, հակառակ իմ ցանկության, ավարտեցի գործն ակամա:
Ես այդպիսով ո՛չ կարող եմ ամուսնության գործից մի կերպ

խույս տալ հիմա,

Ո՛չ էլ մի այլ հնարք գտնել: Ծնողներս հորդորում են ամուսնանալ,
Իսկ իմ որդին, երբ տեսնում է, որ իր գույքը վատնում, լափում են

անխնա,

160 Վրդովված է ցասումնայի: Նա կարող է տունն իր հիմա լավ խնամել,
Քանզի արդեն չափահաս է, և տալիս է Ջևըր նրան փառք ու պատիվ,
Բայց դու հիմա քո ծագումը ճիշտ ինձ ասա. որտեղի՞ց ես

դու իսկապես,

Քանզի չէ՞ որ մի հին կաղնուց և կամ ժայռից դու չես ծնված»:
Պատասխանեց նրան այնժամ և խոսք ասաց Ռոդիսուր ամենհիմաց.

«Ո՛հ, գերագնիվ դու թագուհիդ Լաերտածին Ռոդիսուսի,
Իմ տարաբախտ ծագման մասին չես դադարում հարցմունք անել

դու տակավին.

Արդ, կպատմեմ, թեպես այդպես դու ցավերն իմ միայն պիտի
բազմապատկես,

Քանզի այդպես է ամեն մարդ սովորաբար, ով մշտապես, ինչպես որ ես,
Հայրենիքից իր հեռացած, թափառել է աղետալի և վշտահար,

170 Ով շրջել է բյուր մարդկանց մեջ, բյուր քաղաքներ ու երկիրներ:
Այո՛, պատմեմ, երբ հարցնում ես, որ իմանաս քաջատեղյակ:

Անդ, մթագույն լայն ծովի մեջ կա մի երկիր՝ Կրետե կղզին չքնաղագեղ.
Ծրջակայքով իր ծովածիր հարուստ է այն, հողը՝ բերրի ու պտղավետ,

Եվ կան այնտեղ անթիվ ազգեր, կա իննսուն քաղաք այնտեղ՝
Այլաբարբառ, ամեն տեսակ լեզուներով խոսում են անդ:

Ծատ կան այնտեղ արեացիք քաջամարտիկ, կրետացիք արիասիրտ,
Կիդոններ ու դորիացիք իրենց երեք ցեղախմբով և պելասգներ:

Քաղաքներից մեծագույնն է չքնաղ Կնոսոսն, ուր իշխում էր մեծ Մինոսը՝
Խոսակիցը Ջևս-զոգնի, որ այդ երկրում թագավորեց ինը տարի:

180 Դա էր ահա ծնող հայրը իմ ազնիվ հոր՝ մեծահոգի Դեկալիոնի,
Եվ ծնունդն ենք Դեկալիոնի մենք երկուսով, ես և արքա Իդոմենևսն:

Նա կորակոր նավերի մեջ, Ատրիդների հետ միասին, շարժվեց, գնաց
Դեպ արբազան Իլիոն քաղաք: Հայտնի անունն իմ՝ Էթոն է,

Կրտսերն եմ ես, իսկ նա մեծն էր և գորավոր էր ինձանից:

Այնտեղ տեսա Ռդիսևսին, որպէս հշոյրի, ընդունեցի այն ժամանակ:
Նրան այնտեղ, դեպ Կրեոն, քշել էին քամիները աստուկաշունչ.
Դեպի Տրոյա արշավելիս Մալիայի մոտ շեղվել էին ճանապարհից,
Եկել էին դեպ Ամնիսոս, ուր գտնվում է քարանձավը Իփիթիայի:
Վտանգավոր նավակայան. այնտեղ հագիվ էր խուսափել նա փոթորկից:
180 Ժամանելով այդ քաղաքը՝ նա փնտրում էր Իդոմենևս թագավորին,
Որն, ասում էր, իր սիրելի հշոյրն է եղել և ծանոթը գերամեծար:
Մինչ տասներորդ, տասնմեկերորդ առափոռն էր անգամ արդեն,
Երբ եղբայրն իմ իր գոգավոր նավերի մեջ արշավել էր դեպի Իլիոն:
Ռդիսևսին, որպէս հշոյրի, իմ ասարանքը ես տարա սիրահոծար,
Նրան սրտանց մեծարեցի լավ ուտեստով, որ կար իմ տանն

իբրև պաշար:

Եվ բացի այդ՝ նրան և իր ընկերներին, աջակցությամբ իմ անձնական,
Ժողովրդի մեջ հալաքված հաց և այլոք, կարմիր գինի նվիրեցի,
Այլև եզներ գեմման համար, որ հագեմա սիրող նրա կորովալիր:
Արդպէս ահա տասներկու օր անդ մնացին արեացիք աստվածազարմ.
200 Արգելում էր Բորեասի շունչն ուժգնագույն, որի սուսջ
Երկրի վրա կանգնել անգամ չէր կարելի: Աստվածն հուզեց

այդ ժանտ քամին:

Երբ տասներկու օր լրացավ, հողմն հանդարտվեց, և մեկնեցին
նրանք իսկույնն:

Այդպէս իր կեղծ պատմությանը Ռդիսևսը ձևեր տվեց ճշմարտության:
Այդ լսելով՝ Պեներոպեան, դեմքն հալումաշ, հեղում էր դառն արտասուք:
Ինչպէս ձյունը քարծր լեռանց կատարներին, դիզված ուժով

Զեփյուռ քամու,

Հանկարծ հալվում է շատ արագ՝ հոսանքի տակ Եվրոս հողմի
Ու, հալվելիս, լի լցնում է գետերը հորդ, որ հոսում են արագորեն.
Այդպէս նրա պերճ այտերով հորդ հոսում էր դառն արտասուքը

աղեխարշ:

Նա լայիս էր հանուն սիրած իր ամուսնու, որ քազմած էր
հենց իր դիմաց:

210 Ռդիսևսը, կակամալիր իր կնոջը անդ նայելով, խղճաց հոգով,
Բայց աչքերն իր, ինչպէս եղջյուր, ինչպէս երկաթ, թարթիչների

միջև այնժամ

Անշարժ էին և անդեղև. այդքան հիմուտ թաքցնում էր նա արտասուքն իր:
Իսկ երբ արդեն Պեներոպեան քազմարտոտ հատաչանքով իր հագեցավ,
Նորից նրան պատասխանեց և թեւալոր այս խոսքն ասաց.

«Այժմ, ո՞վ շրջիկ օտարական, ես ուզում եմ աստ քեզ փորձել,
որ իմանամ՝

Ո՞ր՞շտ է արդյոք, որ իմ մարդուն, աստվածակերպ ընկերների
հետ միասին,

Անդ, քո տան մեջ, հշոյրամեծար պատվել ես դու, ինչպէս այստեղ
ինձ պատմեցիր:

Արդ, ինձ ասա, ի՞նչ հագուստ կար այնժամ նրա մարմնի վրա,
Կամ ինչպիսի՞ տեսք ուներ նա. նաև նրա ընկերները անդ ուղեկից»:

220 Պատասխանեց նրան իսկույն և խոսք ասաց Ռդիսևսը ամենիմաց.
«Ո՞հ, թագուհիդ, այդքան երկա՞ր, մեծ ժամանակ անցնելուց ետ,
դժվար է հույծ

Մի բան ասել, քանզի չէ որ արդեն անցել է քսան տարի,
Երբ հեռացավ նա ինձանից և երբ մեկնեց հայրենավանդ նա իմ երկրից:
Սակայն ես քեզ կպատմեմ այն, ինչ իմ սրտում դեռ մնում է,
որպէս մի հույծ:

Դիուցազնն այդ հագած ուներ կրկնակի լայն, ծիրանագույն բրդե թիկնոց,
Որ կոճկվում էր ճարմանդներով երկկեռանի ու ոսկեկոտ,
Իսկ առջևից նրա վրա կար ձեռագործ, ոսկեշողիկ մի զարդարանք:
Ծարմանդների վրա կերտված էր ժանտ մի շուն՝ իր առաջին

թաթերի մեջ

Բռնած եղնիկ մի դողդոջուն: Եվ զարմանում էր տեսնողը,
թե շունն ինչպե՞ս,

230 Թեպետ ոսկուց էր այն շինված, դաժան խեղդում է եղնորթին.

Իսկ եղնիկը, գալարելով ոտքերը իր, ճիգ էր թափում խոյս տալ
մի կերպ:

Ես, բացի այդ, տեսա նրա մարմնի վրա մի նուրբ բաճկոն շողշողենի,
Պերճ մի հյուսվածք, որը, կարծես, մի չոր սոխի գոս կճեպին էր
նմանվում,

Նրբագույն էր դա և բարակ ու փաչում էր շողշող, ինչպէս վառ արեգակ:
Հրաշալիք էր բաճկոնն այդ, որին նայող բազում կանայք

Սքանչանում էին սրտանց: Բայց քեզ ասեմ, և քո սրտում թող մնա այդ.
Լավ չգիտեմ, ա՞րդ զգեստով էր Ռդիսևսը, երբ հեռացավ նա իր տնից,
Թե՞ նալի մեջ ընկերներից մեկնումեկը նրան նկերն այդ ընծայեց
Կամ որևէ հշոյր դիուցազուն, զի Ռդիսևսն հարգելի էր շատ շատերին:

240 Եվ հիբալի, արեչանց մեջ քշերն էին նրան նման ու հալաասար:
Նրան և ե՛ս նվիրեցի պղնձակոտ մի սուրասայր սուր, մի պատմունճան
Ծիրանագույն, կրկնակի լայն, չքնադագեղ ու երփներանգ,

Եվ դեպի նավն իր ամրակոտ ես ճամփեցի մեծարանքով արժանագույ:
Ողեկցում էր նրան բանքերն, որ նրանից փոքր-ինչ մեծ էր
իր հասակով:

Արդ, կարող եմ հայտնել նաև, թե որպիսի՞ մարդ էր բանքերն
այդ իսկապէս.

Ոսերն էին կոր, թիկնավետ, թխագույն էր նա արտաբուստ
և գանգրահեր,
Վերիբառես էր անունն իր և հարգված էր Ողիսեսից ավելի շատ
Իր սյուս բոլոր ընկերներից, քանզի իրեն համախոհ էր նա իր հոգով»:
Այդպես ասաց, էլ առավել ուժգին ջալեց ու հեկեկաց Պենելոպեան.

250 Նա ճանաչեց նշանները, որ Ողիսեսը թվարկեց:
Երբ, վերջապես, նա հագեցավ լաց ու կոծով քաղմարտասուք,
Այնժամ իսկույն պատասխանեց Ողիսեսին և այս ասաց.
«Օտարակա՛ն, կարեկցաբար էի ես քեզ նաչում առաջ,
Մակայն հինա դու իմ տան մեջ լինելու ես գերամեծար ու սիրելի:
Ավա՛դ, նրան ե՛ս հանձնեցի այն հագուստը, որի մասին դու հիշեցիր՝
Ծավված ու պերճ, դուրս քերելով ննջարանից, նաև ճարմանդն

այն լուսալիր
Ես կցեցի, հանց զարդարանք: Վա՛յ ինձ, նրան էլ չեմ տեսնի
այս հարկի տակ.
Երբեք, երբեք ետ չի գա նա հայրենավանդ իր երկիրը սիրահալեր:
Ինչո՛ւ, ավաղ, ճակատագրի կամքով դաժան Ողիսեսը նավով իր լայն
260 Ծարժվեց, գնաց դեպի դժբախտ, նույնիսկ անվամբ իր անիծյալ,
Իլիոն քաղաքն»:

Պատասխանեց այնժամ նրան և խոսք ասաց Ողիսեսը ամենիմաց.
«Ազնվամեծար դու թագուհիդ Լաերտածին Ողիսեսի,
Մի՛ խորտակիր պերճ մարմինդ, զուր հալումաջ մի անիր քեզ
և քո հոգին,
Թեպետ, հարկավ, դրա համար դատապարտել չեմ կարող քեզ.
Բնակա՛ն է, երբ ողբում է կինն ամուսնուն իր կործանված, որքան էլ նա
Նվաստ լինի, որ զավակներ ունի արդեն, իբրև սիրո քաղցր պտուղ:
Մինչ, ասում եմ, Ողիսեսն էր աստվածակերպ և գերհրաջ:

Բայց դու վե՛րջ տուր լացուկոծին և ականջ դիր այժմ իմ խոսքին.
Ծշմարիտը քեզ կասեմ ես, քեզնից ոչինչ ամենևին ես չեմ ծածկի,
270 Ինչ որ իրոք և՛ արդարև ես լսել եմ դարձի մասին Ողիսեսի:
Կենդանի է՛ նա տակավին, գտնվում է թեսպրոտական ազգերի մեջ,
Այդ մարձակա քերթի երկրում, և քերում է իր հետ նա բլուր գույքեր,
գանձեր,

Որ ստացել է հանց նվեր: Բայց զրկված է նա սիրելի ընկերներից
Ու խորապոր: իր նավերից, որ մթագույն սև ծովի խորքը սուզվեցին,
Թրինակիե կղզու կողքին, երբ գայրացան ահագնակի Ջևան ու Հելիոսն,
Որի չքնաղ արջառները այնտեղ նրա՛ ընկերները փողոտեցին:
Ուտի՛ նրանք բոլորն այդպես կործանվեցին խորքում ծովի

հավերժագոյ:
Ողիսեսին, նավափայտի վրա նստած, այիքները դուրս նետեցին

Այնտեղ, երկրում փեակների, որ ծագումով ազգակից են աստվածներին:
280 Դրանք նրան աստվածապես, քաղմամեծար և արտառույ ընդունեցին,
Ծնորեցին քյուր ընծաներ և կամեցան իրենք նրան ողջ և առողջ
Ու անվտանգ տուն քերել աստ, և Ողիսեսն վաղուց արդեն աստ կլիներ:
Մակայն նրա խոհուն սրտին ավելի լավ և օգտավետ թվաց այնժամ
Ծրջել քաղում դեռ երկրներ և հավաքել ամենուրեք գույքեր, գանձեր.
Ողիսեսի պես՝ սեփական շահն իմացող և չափազանց օգտախնդիր
Եվ այդ գործի մեջ մրցակից՝ մահկանացու մարդկանց մեջ

ոչ մի մարդ չկա:
Ահավաքել, ինձ ինչ ասաց նրա մասին թեսպրոտացի Փիդոն արքան:
Նա ջերմ երդվեց, զոհեր զոհեց ասպարանքում իր լուսալիր,
Ինձ համոզեց, որ պատրաստ է նավը արդեն, հավաքված եմ
նավորդները.

290 Որպեսզի շուտ Ողիսեսին տանեն երկիրն իր հայրենի և սիրասուն:
Բայց նախ նա ինձ ճանապարհեց, քանզի նավը թեսպրոտացոց
Այդ միջոցին ի դեպ մեկնում և գնում էր դեպ Դուլիքիոն քաղմացորչան:
Նա ցույց տվեց նաև ամբողջ գույքն ու գանձը, որ հավաքել էր
Ողիսեսն,

Եվ այնքա՛ն շատ ու քաղմաթիվ, որ մեկ մարդուն հերթք կանի
տասը սերունդ:
Այդքան ահա թանկարժեք գույք հավաքված էր այնտեղ, տան մեջ
թագավորի:

Ողիսեսը ինքը անձամբ այդ ժամանակ գնացել էր դեպ Դողոնե,
Որ անդ լսի բարձրակատար կաղնի ծառից, ինչպես պատմեց
արքա Փիդոնն,
Ջևա աստըծո խորհուրդն անթուր՝ ինչպե՛ս ինքը, երկարամյա
մի տարագիր,
Պիտ նա դառնա իր հայրենի սիրած երկիր. գաղտնածածո՛ւկ,
թե՛ քացահայտ:

300 Պարզ է, որ նա կենդանի է, ողջ և առողջ, որ մոտ է նա և պիտի գա:
Հայրենիքից և մարդկանցից իր սիրելի՛ զրկված, հեռու, տարաշխարհիկ
Այլև երկար նա չի մնա, այլ պիտի՛ գա: Այդ, երդվում եմ
քեզ այդ մասին,

Վկա է Ջևան, աստվածներից ավագագույնն, ամենագորն
ու բարձրագույնն,
Վկա է վե՛հ Ողիսեսի օջախը այս, որտեղ ահա գտել եմ ես ինձ ապավեն,
Որ այդ ամենն, ինչպես արդեն քեզ հայտնեցի, կկատարվի.

Կասկած չկա, ետ կդառնա հենց այս տարի Ողիսեսը,
Երբ որ ամիսն այս վերջանա, կամ մյուս ամիսը սկսվի»:
Այնժամ նորից նրան դիմեց և խոսք ասաց Պենելոպեան խոհեմամիտ.
«Ա՛խ, երանի՛ կատարվեին խոսքերը քո, օտարական դու շրջմովիկ,

310 Եվ դու շոտով կտեսնեիր իմ ջերմ հարգանքն և այնպիսի՝

ընծաներ բյուր,
Որ ամեն մարդ քեզ, ամենուր հանդիպելիս, պիտ անվաներ

գերերջանիկ:
Սակայն սիրոսն անխազգում է, ահավասիկ, որ այդ բնավ գրոխ չի գա,
Ո՛չ Ռոփսուսն էտ կրտունա, և ո՛չ էլ քեզ էտ կողարկենք մենք այստեղից,
Քանզի չկան այլևս այստեղ, այս մեր տաճ մեջ, խոհեմամիտ,

քաջ իշխողներ,
Որպիսին էր Ռոփսուսը մարդկության մեջ... ա՛խ, ո՞ր էր թե

նա լիներ այժմ,
Որ հյուրերին ընդունում էր սիրահոծար և հարգանքով ճամփա գցում:
Չե՛՛ն, Աածիշունե՛ր, շոտ լվացեք սրա ոտքերն, պատրաստեցեք

սրա համար

Փափուկ մահին, փոե՛ք ծածկոց և դոշակները մաքրափայլ,
Որ սա պառկի ու տաքանա, մինչև ծագի վառ Արշարույսը ոսկեգահ:

320 Առավոտյան՝ վաղվաղակի, լավ լողացրեք և մարմինն իր օժեք լողով,
Որպեսզի աստ, մեր տանը, նա ճաշի նստի Տելեմաքի հետ միասին,
Եվ վա՛՛ն նրան, ով մեր ներկա ծառաներից գեթ հանդգնի
Լկտիաքար վիրավորել որևէ կերպ, վիշտ պատճառել սրան այստեղ,
Էլ նա իմ տանը ոչ մի գործ չի ունենա, թեկուզ անչափ իսկ զայրանա:
Եվ կամ ինչպե՛ս դու, եկվորդ օտարական, պիտ կարենաս

դասել անթյուր,
Թե ես իրոք գերազանց եմ այլ կանացից իմաստությամբ ու հեզ խելքով,
Եթե լինես դու իմ տանը, ճաշկերույթին՝ կեղտոտ հագնված

ու անմաքուր:
Մինչդեռ մարդկանց կյանքն է այստեղ, երկրի վրա, շոտանցողիկ
ու կարճատև.

Ով դաժան է ու չարասիրտ կամ մտածում է չարամիտ,

330 Նրան կյանքում, դեռ կենդանի, կնզովեն բոլոր մարդիկ,
Այնուհետ էլ, մահից հետո, ծաղրելու են նրան կծու հայհոյանքով,
Իսկ ով կյանքում բարեգործ է և անբասիր, այլև միտքն է
յուր անաղարտ,

Նրա փառքը շրջիկները կհոչակեն երկրե երկիր ու մարդկանց մեջ,
Եվ բյուր բյուրերը կանվանեն նրան վսեմ ու ազնվագույն:
Նրան իսկույն պատասխանեց և խոսք ասաց Ռոփսուսը ամենիմաց.

«Գերամեծար դու թագուհի Լաերտածին Ռոփսուսի,
Փայլուն բարձերն ու վերմակներն այժմ ատելի են իմ սրտին
Այն օրվանից, երբ Կրեստի սեզ լեռներից ձյունապաճույճ
Ես հեռացա, և ճանապարհն իմ ընթացավ երկայնաթի նավի վրա:



7. Էվիկլեա սպաստիին լվանում է Ռոփսուսի ոտքերը
(Ոկար սասիրի վրա):

340 Ես կպառկեմ, այնպես, ինչպես անցկացրել եմ առաջ անքուն
գիշերներն իմ.

Քանի՛, քանի՛ բյուր գիշերներ տատապել եմ անկողնու մեջ անվայելու՛՛ջ՝
Սպասելով գեղեցկագահ, աստվածային Արշարույսին:
Նույնպես սրտանց չեմ ուզում ես, որ լվանան ոտքերը իմ,
Ամենեին թող ձեռք չտա իմ ոտքերին այստեղ ոչ որ
Եվ ոչ մեկը այս կանանցից, որոնք քո տան ծառաներն են, ահալասիկ:
Եթե տանդ կա խելացի պտուավ մի կին, որը լինի այնքան վշտոտ,
Աղետակիր ու ցավագար, որքան ես եմ կրել ջալեր ու տատապանք,
Միայն նրան ես չեմ մերժի, որ մոտենա իմ ոտքերին»:
Նրան կրկին պատասխանեց և խոսք ասաց Գեներուպեն խոհեմամիտ.

350 «Ո՛հ, սիրելիդ օտարական, մինչև հիմա մեր տան եղած բյուր այլազգի
Եկվորներից և ոչ մեկը դեռ չի եղել այնքան խելոք ու սիրալիր,
Որքան որ դու ես խորիմաց ու խոտում ես իմաստալիր:
Այո, ունեմ ես մի ալվարդ, ծերունի կին, խոհեմ ու հեզ, բարեհոգի,
Որը սնել է իսկապես և մեծացրել չարաբաստիկ այն թշվառին
Եվ իր ձեռքով իսկ ընդունել, երբ, ծնվելով նա իր մորից, աշխարհ եկավ:
Արդ, նա, թեպետ ուժասպառ է և գտնամյալ, թող քո ոտքերը լվանա:

Վեր կաց շուտով և այստեղ եկ, Եվրիկլիս խոհեմամիտ
Եվ աստ լվա դու ոտքերը քո արքային հասակակից եկվոր մարդու,
Գուցե նաև Ողիսևսը յուր ձեռքերով ու ոտքերով այսպես է այժմ,
360 Բանգի մարդիկ մահկանացու ցավերի մեջ շուտ ծերանում են
վաղաժամ»:

Ասաց այդպես, իսկույն դեմքը իր ձեռքերով ծածկեց պառավն,
Ապա նա ջերմ արցունք թափեց և խոսքն ասաց այս արտառուչ.
«Ա՛խ, որդյակ իմ դու տարաբախտ. քո ցավն է ինձ այսպես մաշում:
Մարդկության մեջ ամենից շա՛տ Ջևան ատեց քեզ, սիրող բարի,
աստվածավախ.

Մինչ մարդկանցից մահկանացու կայծակնացոյ Ջևան համար
ոչ ոք այնքան
Պարարտ ազդրեր դեռ չի այրել և չի բերել հարյուրաեզ զոհեր այնքան,
Որքան դու ես զոհ կատարել՝ աղոթելով աղերսանքով ու ջերմեռանդ,
Որպեսզի դու հասնես անդորր ծերությանը և կրթես պերճ քո զավակին,
Բայց նա քեզնից, միայն քեզնից խեղ օրը վերադարձի:

370 Եվ ո՛վ գիտի, գուցե նաև նրան հիմա օտար երկրում,
հանց պանդուխտի,
Երբ մեծաշուք, հարուստ մարդու տուն նա գնա, ահա այսպես
ծաղրեն կանայք,
Ինչպես այստեղ քեզ են ծաղրում և նախատում այս անամոթ,
շուն լրբենիք:
Ուստի և դու, խուսափելով հայհոյանքից, թույլ չես տալիս
որ աստ նրանք

Քո ոտքերը այժմ լվանան, իսկ ես պատրաստ եմ կատարել
Հրամանը խոհեմամիտ Պենելոպի՝ Իկարիոսի վեհ դատրիկի:
Կլվանամ ես քո ոտքերն հանում տիկնոջն, այլև հանում
Քեզ, ո՛վ եկվոր, սակայն ներքուստ իմ վշտակիր սիրտը հուզված է
սաստկապես:
Լսիր, ա՛յ մարդ. ես քեզ հիմա մի խոսք կասեմ, որ պատճառն է
իմ հուզմունքի.

Առհասարակ այստեղ գալիս են բազմաթիվ հեզ շրջիկներ,
380 Բայց չեմ տեսել ես ոչ ոքի, որն իր տեսքով, ձայնով,
այլև իր քայլվածքով
Իրոք այնքան նման լիներ Ողիսևսին, որքան դու ես նրան նման»:
Իսկույն նրան պատասխանեց և խոսք ասաց Ողիսևսը ամենիժաց,
«Ո՛հ, պատավի գերամեծար, ճիշտ է, այո, և բոլորն են ասում այդպես,
Ով տեսել է մեզ երկուսիս, գտնում է, որ շատ նման ենք մենք իրարու,
Ինչպես և դու ինքդ հիմա արդարացի այդ ասացիր»:
Ասաց այդպես, և պատավի քերեց կոնքը շողշողենի,

Այն, որի մեջ ոտքեր էին լվանում միշտ, և պաղ ջուրը լցրեց շուսպ,
Ապա քերեց, ավելացրեց նա տաք ջուրը: Ողիսևսը,
Որ նստած էր օջախի մոտ, շուտով դեպի մթամած կողմը շուտ եկավ,
390 Բանգի հոգով իսկույն զգաց, որ գուցե իր ոտքի վրա եղած սպին
Տեսնի պառավն ու ճանաչի, և գործն այդպես բացվի հանկարծ:
Նա մոտեցավ և սկսեց տիրոջ ոտքերը լվանալ, ապա հանկարծ
Ծանաչեց նա ոտքի սպին: Մի ժամանակ կինճն էր նրան վիրավորել
Ծերմակագույն իր ժանիքով, երբ նա գնաց Ավտոլիկի մոտ,
դեպ Պառնաս:

Ավտոլիկը՝ նրա մոր հայրն հոչականուն, գերազանցում էր
միշտ մարդկանց
Որպես քաջ գող, երդմնազանց: Չիրքն՝ այդ նրան շնորհել էր
Հերմես աստվածն,
Որին նա միշտ հաճոյական զոհ էր բերում և այրում էր ոչխարների
Ու այժերի պարարտ ազդրեր, ուստի Հերմեսն ողեկցում էր
նրան արտանց:

Ավտոլիկն այդ մի ժամանակ հարուստ Իթակե ժամանեց:
400 Ահավասիկ, այնտեղ տեսավ իր դատրիկի նորածնունդ նա զավակին:
Երբ որ ընթրիքը վերջացավ, իսկույն դայակ Եվրիկլիսան
Դրեց նրա ծնկան վրա նոր մանկիկին, անխամբ կոչեց և այս ասաց.
«Գու ինքդ, հապա, ով Ավտոլիկ, ինչպես սիրող կցանկանա,
մի լավ անուն

Գտիր հիմա թոռիդ համար, որի մասին աղոթել ես դու եռանդուն»:
Եվ Ավտոլիկը բարձրաձայն ասաց իսկույն ի պատասխան.
«Գո՛րք, իմ դատրիկ և իմ փեսա, այն անունը տվեք նրան, որ կասեմ ես:
Երբ որ այստեղ էի գալիս, ծանրացաւսում ես զայրացա տղամտոդկանց,
Կանանց վրա, որ այրում են բազմաանունդ այս աշխարհում,
Ուստի կոչեք այս մանուկին դուք Ողիսևս, որ ասել է «ծանրացաւսում»:
Ու հաճույք»:

410 Իսկ երբ արդեն հասակն առնի, դառնա արքուն երիտասարդ,
Թող տունը գա իր մայրական, որտեղ ունեմ ես գանձ ու գույք:
Ծատ ընծաներ կտամ նրան, որ ետ դառնա՝ արտի մեջ լի խինդ

Եվ Ողիսևսն այցի գնաց, որ ստանա ընծաները այդ գեղեցիկ:
Ահավասիկ, Ավտոլիկուն, այլև որդիք Ավտոլիկի, նրան արտանց
Ընդունեցին, ձեռնատարած ողջունեցին, գորովանքի խոսք ասացին՝
Այնժամ տատը Ողիսևսի՝ Ամփիթենն սիրատենչիկ,
Նրան գրկեց և համբուրեց նրա գրուխն ու գեղեցիկ աչքերը զույգ,
Իսկ Ավտոլիկն այն ժամանակ պատվեր տվեց զավակներին
իր փառաշուք՝
Ծաշկերույթը սարքել հապճեպ: Հնազանդված հրամանին՝

420 Նրանք շուտով եզ քերեցին, մի հնգամյա պարարուն եզ,
Ռիմ իսկույն անդ քերթեցին, պատրաստեցին. ամբողջ միսը
չերտակոտոր,

Ճարտարակի կտրատեցին ու զարկեցին շամփորներին,
Զգուշորեն և խնամքով խորովեցին, բաժինների բաժանեցին,
Եվ ամբողջ օրն, մինչև մայր մտալ, վայելեցին խնջույքի մեջ:
Այդպես բոլորը լիացան, և վայելքից ոչ ոք այնտեղ զուրկ չմնաց:
Իսկ երբ արևը մայր մտալ, ու տարածվեց խախարը մույթ,
Այնտեղ բոլորը քնեցին և մեղմ քնի հմալքներով հրճվեցին:
Մինչ երբ ծագեց ճանաչազեղ Արշալույսը վարդամասն,
Ավտոլիկի զավակները շուտ դուրս եկան ու գնացին շների հետ

430 Գազանների որս անելու, և նրանց հետ՝ Ռոփսուսը աստվածային:
Այդպես նրանք վեր բարձրացան Պառնաս լեռը անտառախիտ
Եվ շատ շուտով նրանք եկան, հասան մի տեղ, մի հողմաշունչ
գողտրիկ հովիտ:

Արեգակը, դուրս ելնելով հանդարտահոս ու խորախոր օվկիանոսից,
Իր առաջին ու նորածագ ճանաչներն էր նետում դեպի դաշտ ու արոտ,
Երբ որսորդներն, ընթանալով, հովիտն հասան: Մինչ բարակները
առջևից

Վազում էին հոտոտելով ու հետախույզ, զավակները Ավտոլիկի
Գրանց հետքով էին գնում, բայց շներին ավելի մոտ
Ընթանում էր Ռոփսուսը: Նա ճոճում էր նիզակը իր երկայնասուլվեր,
Իսկ թանձրախիտ ճյուղերի մեջ անդ պտկած էր մի մեծ վարազ,

440 Որտեղ քնալ չէր թափանցում շունչն հողմերի խոնավարար,
Նույնպես այնտեղ չէին ընկնում և շողշողուն ճառագայթները արևի,
Այնտեղ նույնիսկ չէր թափանցում հեղեղն անդուլ, տեղատարափ
հորդ անձրևի,

Քանզի խիտ էր անտառաթուփն այդ ամենի, ծածկված էր
բլուր տերևներով:
Երբ մոտեցան որսորդները և շները, ոտքի դոփյունն հասալ նրան.
Թփի տակից նա դուրս թռավ արագապես ու կանգ առավ նրանց մոտիկ,
Դեմ-հանդիման՝ մազերը հույժ քրտորմնափուշ և աչքերը
հանց բորբ կրակ:

Եվ Ռոփսուսն աստվածագարս փութանակի, տեղնուտեղը
Կորովալիք ձեռքով իր հաստ վեր բարձրացրեց տեզ-նիզակը
ու կամեցավ
Խիտ հարվածել ու սպանել, բայց նախապես կանխեց նրան
կինձը դաժան

450 Ու ժանիքով իր շեղակի գարկեց նրան, ծնկից վերև,
Եվ միս պոկեց մի մեծ կտոր, բայց ոսկորին քաշ հերոսի նա չհասավ:

Մինչ Ռոփսուսն տեգով հուժկու, հաղթ հարվածեց աչ ուսին այդ
մեծ գազանի,

Եվ նիզակի շողշողուն աայրն ուղիղ վարավեց միջաթափանց,
Խանչեց գազանն ահագնաձայն ու տապալվեց, և իր մարմնից
թռավ հոգին:

Հավաքվեցին նրա շուրջը Ավտոլիկի պերճ զավակները սիրալիր,
Մեծահմուտ, լավ կապեցին վերքն անբասիր, աստվածագարս Ռոփսուսի,
Եվ արյունն էլ՝ սև, ապաժույժ, շուտ կտրեցին հմայանքով:
Այնուհետև նրանք հապճեպ վերադարձան, տունը եկան սիրելի հոր,
Եվ Ավտոլիկն ու զավակներն Ավտոլիկի նրան այնտեղ բժշկեցին,

460 Ասքս սրտանց շնորհեցին նրան հարուստ շատ ընծաներ գեղեցկափայլ:
Այդպես ուրախ սրտով նրանք Ռոփսուսին, որը նույնպես ուրախ էր խիստ,
Ստաքեցին դեպ Իթակե, և տեսնելով վերադարձը սիրած որդու,
Ուրախացան հայրն ու մայրը մեծապատիվ ու մանրամասն
հարցմունք արին ոտքի մասին,

Թե ինչպե՞ս էր, որ պատահեց: Ռոփսուսը պատմեց նրանց,
ինչպես վարազն

Կծեց ձերմակ իր ժանիքով այն ժամանակ, երբ որդոց հետ Ավտոլիկի
Գնացել էր նա դեպ Պառնաս գազանների որս անելու:

Ահա սպին այդ հին վերքի պատավն այնժամ ձեռքի ափով
Լավ շոշափեց ու ճանաչեց: Նա իր ձեռքից ոտքը գցեց իսկույններ.
Սրունքն ամուր դիպավ կոնքին, շաչեց պղինձը մեծաձայն,

470 Եվ շուտ եկավ ամանն հանկարծ, շուրջ գետնին թափվեց իսկույն,
Մինչ պատալի հոգու խորքը թափանցեցին վիշտն ու բերկրանքը
միասին,

Ու լցվեցին նրա աչքերն հորդ արցունքով, խեղդվեց նրա
ձայնը փարթամ:

Ձեռքով բռնեց նա կզակը Ռոփսուսի և խոսքն ասաց այս սրտագին.
«Ա՛խ, զավակս, դո՛ւ ես անշուշտ, Ռոփսուսը, և ինչպե՞ս դա ես նախօրոք
Չհասկացա, մինչև որ այժմ շոշափեցի ամբողջովին տիրոջը իմ»:
Սուսց այդպես և իր հայացքն ու աչքերը ուղղեց դեպի Պեներոպե՛ն՝
Փափագելով հայտնել նրան, որ այստեղ է ամուսինը իր սիրատենչ,
Բայց թագուհին չնկատեց ու չտեսավ, չէր էլ կարող նա հասկանալ,
Քանզի այնժամ նրա միտքը խառնակել էր Աթենասը: Մինչ Ռոփսուսն

480 Իր աչ ձեռքով իսկույն նեթ սեղմեց կոկորդը պատալի,
Իսկ ձախ ձեռքով իր կողմ քաշեց նրան իսկույն ու ձայն տվեց
և այս ասաց.

«Մայրիկ, մի՞թե ուզում ես ինձ դու կործանել, դու, որ սնել ես ինձ իրոք,
Ծիծ ես տվել ինձ քո կրծքով: Մինչ, կրելով բլուր աղետներ
ու տառապանք,

Քսան տարուց ետ, ահավասիկ, վերադարձել եմ սիրելի իմ հայրենիք,

Իսկ դու այժմ ինձ ճանաչեցիր, քանզի աստվածը ներշնչեց
այդ քո սրտին:

Սակայն լռիր, որ այս տան մեջ այդ շիմանա բնավ ոչ որ,
Թե ոչ՝ անա հալոսնում եմ քեզ, և այդ անշուշտ կկատարվի:

Եթե Ձեան ինձ օծանդակի ոչնչացնել խոսնայրներին ամբարտաւան,
2նւ խնայի ես նաև քեզ, թեպետ և դու իմ դայակն ես շատ սիրելի,
490 Այնժամ, երբ որ իմ տանն, այստեղ, ես կործանեմ այլ անարժան
սորուկ կանանց»:

Եվ խելացի Ելիկիկիան նրան այսպես իր խոսքն ասաց և առարկեց.
«Ո՛հ, զավակս, ի՞նչ խոսք էր այդ, որ դուրս թռավ քո շուրթերից.Դու լավ գիտես, թե որպիսի՝ ոգի ունեմ ես անդեղև ու հաստատուն
Եվ գաղտնիքն այդ ես կպահեմ ամուր, ինչպես քար կամ երկաթ:
Սակայն կասեմ ես քեզ մի բան, և քո սրտում այդ թող մնա.
Եթե օգնի քեզ ինքն աստված, և կործանեմ սեղեխներին ամբարտաւան,
Ես քեզ ապա կթվարկեմ, թե կանանցից այս հարկի տակ
Ո՛վ էր քեզ միշտ անարգում, կամ ո՛վ է իրոք անքասիր և արդարամիտ»:
Իսկույն նրան ի պատասխան իր խոսքն ասաց Ռոփսեսը ամենիմաց.

500 «Ինչո՞ւ, մայրիկ, դու պիտ պատմես նրանց մասին, կարիք չկա.
Ես ինքս լավ այդ կփորձեմ և կիմանամ ամեն մեկին,
Իսկ դու լռիր, խոսք մի խոսիր, և մնացյալն աստվածների
գործն է միայն»:

Ասաց այդպես, և դուրս գնաց տնից այնժամ պտուղն հարպնեայ
Ու ջուր բերեց, քանզի թափվել էր նախկինը ամբողջովին:
Իսկ երբ լվաց նա իր տիրոջ ոտքերն այդպես և երբ օծեց
պարարտ յուղով,

Քաշեց արթուն Ռոփսեսը օջախի մոտ, որ տաքանա
Եվ ցնցոտի հագուստով իր ծածկեց ծնկան սպին իսկույն:
Մինչ սկսեց նորից խոսել այդ ժամանակ Պենելոպեան խոհեմամիտ.
«Օտարական, քեզ վերըստին հարց պիտի տամ ես մի փոքրիկ,
510 Թեպետ անա մոտենում է քուն մտնելու ուրախատիթ ժամը արդեն:
Ամեն մի մարդ, որքան էլ նա տխուր լինի, փափագում է քունն անուշիկ,
Իսկ ինձ աստված շնորհել է միայն տանջանք և անչափ վիշտ,
Ցերեկները ինձ անփոխանք տալիս են դեռ լացն ու կոծը կականալիս,
Երբ անընդհատ հետևում եմ ես տան գործին, ծառաների
աշխատանքին,
Բայց երբ գալիս է լուռ գիշերն, և ամեն մարդ վայելում է
մահիճն անդորր,
Պառկում եմ ես անկողնու մեջ, ինձ մաշում են սրտակոտոր
ցավերն անվերջ,
Եվ տոչորում, տանջում են ինձ մանր հոգսերը դառնակակիծ:

Իսկ դու լռիր, խոսք մի խոսիր, և մնացյալն աստվածների
գործն է միայն»:

Ասաց այդպես, և դուրս գնաց տնից այնժամ պտուղն հարպնեայ
Ու ջուր բերեց, քանզի թափվել էր նախկինը ամբողջովին:
Իսկ երբ լվաց նա իր տիրոջ ոտքերն այդպես և երբ օծեց
պարարտ յուղով,

Քաշեց արթուն Ռոփսեսը օջախի մոտ, որ տաքանա
Եվ ցնցոտի հագուստով իր ծածկեց ծնկան սպին իսկույն:
Մինչ սկսեց նորից խոսել այդ ժամանակ Պենելոպեան խոհեմամիտ.
«Օտարական, քեզ վերըստին հարց պիտի տամ ես մի փոքրիկ,
510 Թեպետ անա մոտենում է քուն մտնելու ուրախատիթ ժամը արդեն:
Ամեն մի մարդ, որքան էլ նա տխուր լինի, փափագում է քունն անուշիկ,
Իսկ ինձ աստված շնորհել է միայն տանջանք և անչափ վիշտ,
Ցերեկները ինձ անփոխանք տալիս են դեռ լացն ու կոծը կականալիս,
Երբ անընդհատ հետևում եմ ես տան գործին, ծառաների
աշխատանքին,
Բայց երբ գալիս է լուռ գիշերն, և ամեն մարդ վայելում է
մահիճն անդորր,
Պառկում եմ ես անկողնու մեջ, ինձ մաշում են սրտակոտոր
ցավերն անվերջ,
Եվ տոչորում, տանջում են ինձ մանր հոգսերը դառնակակիծ:

Իսկ դու լռիր, խոսք մի խոսիր, և մնացյալն աստվածների
գործն է միայն»:

Ասաց այդպես, և դուրս գնաց տնից այնժամ պտուղն հարպնեայ
Ու ջուր բերեց, քանզի թափվել էր նախկինը ամբողջովին:
Իսկ երբ լվաց նա իր տիրոջ ոտքերն այդպես և երբ օծեց
պարարտ յուղով,

Քաշեց արթուն Ռոփսեսը օջախի մոտ, որ տաքանա
Եվ ցնցոտի հագուստով իր ծածկեց ծնկան սպին իսկույն:
Մինչ սկսեց նորից խոսել այդ ժամանակ Պենելոպեան խոհեմամիտ.
«Օտարական, քեզ վերըստին հարց պիտի տամ ես մի փոքրիկ,
510 Թեպետ անա մոտենում է քուն մտնելու ուրախատիթ ժամը արդեն:
Ամեն մի մարդ, որքան էլ նա տխուր լինի, փափագում է քունն անուշիկ,
Իսկ ինձ աստված շնորհել է միայն տանջանք և անչափ վիշտ,
Ցերեկները ինձ անփոխանք տալիս են դեռ լացն ու կոծը կականալիս,
Երբ անընդհատ հետևում եմ ես տան գործին, ծառաների
աշխատանքին,
Բայց երբ գալիս է լուռ գիշերն, և ամեն մարդ վայելում է
մահիճն անդորր,
Պառկում եմ ես անկողնու մեջ, ինձ մաշում են սրտակոտոր
ցավերն անվերջ,
Եվ տոչորում, տանջում են ինձ մանր հոգսերը դառնակակիծ:

Իսկ դու լռիր, խոսք մի խոսիր, և մնացյալն աստվածների
գործն է միայն»:

Ասաց այդպես, և դուրս գնաց տնից այնժամ պտուղն հարպնեայ
Ու ջուր բերեց, քանզի թափվել էր նախկինը ամբողջովին:
Իսկ երբ լվաց նա իր տիրոջ ոտքերն այդպես և երբ օծեց
պարարտ յուղով,

Քաշեց արթուն Ռոփսեսը օջախի մոտ, որ տաքանա
Եվ ցնցոտի հագուստով իր ծածկեց ծնկան սպին իսկույն:
Մինչ սկսեց նորից խոսել այդ ժամանակ Պենելոպեան խոհեմամիտ.
«Օտարական, քեզ վերըստին հարց պիտի տամ ես մի փոքրիկ,
510 Թեպետ անա մոտենում է քուն մտնելու ուրախատիթ ժամը արդեն:
Ամեն մի մարդ, որքան էլ նա տխուր լինի, փափագում է քունն անուշիկ,
Իսկ ինձ աստված շնորհել է միայն տանջանք և անչափ վիշտ,
Ցերեկները ինձ անփոխանք տալիս են դեռ լացն ու կոծը կականալիս,
Երբ անընդհատ հետևում եմ ես տան գործին, ծառաների
աշխատանքին,
Բայց երբ գալիս է լուռ գիշերն, և ամեն մարդ վայելում է
մահիճն անդորր,
Պառկում եմ ես անկողնու մեջ, ինձ մաշում են սրտակոտոր
ցավերն անվերջ,
Եվ տոչորում, տանջում են ինձ մանր հոգսերը դառնակակիծ:

Իսկ դու լռիր, խոսք մի խոսիր, և մնացյալն աստվածների
գործն է միայն»:

Ասաց այդպես, և դուրս գնաց տնից այնժամ պտուղն հարպնեայ
Ու ջուր բերեց, քանզի թափվել էր նախկինը ամբողջովին:
Իսկ երբ լվաց նա իր տիրոջ ոտքերն այդպես և երբ օծեց
պարարտ յուղով,

Քաշեց արթուն Ռոփսեսը օջախի մոտ, որ տաքանա
Եվ ցնցոտի հագուստով իր ծածկեց ծնկան սպին իսկույն:
Մինչ սկսեց նորից խոսել այդ ժամանակ Պենելոպեան խոհեմամիտ.
«Օտարական, քեզ վերըստին հարց պիտի տամ ես մի փոքրիկ,
510 Թեպետ անա մոտենում է քուն մտնելու ուրախատիթ ժամը արդեն:
Ամեն մի մարդ, որքան էլ նա տխուր լինի, փափագում է քունն անուշիկ,
Իսկ ինձ աստված շնորհել է միայն տանջանք և անչափ վիշտ,
Ցերեկները ինձ անփոխանք տալիս են դեռ լացն ու կոծը կականալիս,
Երբ անընդհատ հետևում եմ ես տան գործին, ծառաների
աշխատանքին,
Բայց երբ գալիս է լուռ գիշերն, և ամեն մարդ վայելում է
մահիճն անդորր,
Պառկում եմ ես անկողնու մեջ, ինձ մաշում են սրտակոտոր
ցավերն անվերջ,
Եվ տոչորում, տանջում են ինձ մանր հոգսերը դառնակակիծ:

Ինչպես դուստրը Պանդարևսի, դարարասեր երգիչ տխուսկ Աեդոնը,
Նոր գարունը սկսվելիս՝ երգն է հնչում գեղեցկաձայն ու սքանչելի,
520 Նստում է նա սարարթախիտ ծառերի բյուր տերևներին և անընդհատ
Օրորվում է այս ու այն կողմ, ողբում է միշտ սիրատենչիկ իր զավակին՝
Իտիրոսին,

Որդուն Ձեթի, որին սպանեց ինքը, ավա՛ղ, սուր պղինձով, անակնկալ,
Այդպես և ես հուզված եմ միշտ՝ մտքերով իմ խիստ երկակի.
Արդյոք մնա՞մ իմ որդու մոտ և պահպանե՞մ ես ամեն ինչ
աստ հոգատար.

Բարձրակտուր, մեծ ապարանքն, սորուկներին, գանձն ու գույքը՝
Մեծարելով անկողիներ իմ ամուսնու, այլև շշուկն ամբողջ ազգի,
Թե՛ հետևեմ խոսնայրներից մեկն ու մեկին, ով լավագույն քաջն է իրոք
Եվ իմ ձեռքն է խնդրում սրտանց ու տալիս է անթիվ ընծա:
Մինչ իմ որդին, քանի դեռ նա մանուկ էր լուկ, մտքով տհաս
ու աղքատիկ,

530 Թույլ չէր տալիս, որ ես, իրավ, մարդու գնամ, ամուսնանամ:
Սակայն հիմա մեծ է արդեն և հասել է նա չափահաս իր հասակին,
Ու ցանկանում է ինքն արդեն, որ ես տնից այս հեռանամ:
Նա գայրացած է չափազանց գույքի համար, որ լափում են արեացի:
Սակայն լսի՛ր, օտարական, այս երազն իմ և այն մեկնի՛ր հիմա դու ինձ:
Սագերն իմ տան, թվով քրսան, ուտում էին աստ ջրի մեջ
թափված ցորենն:

Հանկարծակի սեզ լեռներից թռավ, եկավ կորամագիլ մի մեծ արծիվ.
Նա ջախջախեց վզերն ամբողջ այդ սագերի և բուրդին էլ սպանեց,
Ու թափվեցին դրանք տան մեջ, իսկ արծիվը սավառնեց վեր,
դեպի եթեր:

Հեծում էի ես լալագին, թեպետ երազ էր այդ միայն ու քնի մեջ,
540 Եվ իմ շուրջը հավաքվեցին արեացի գեղազանգուր քազում կանայք
Ու ջայեցին սրտանց ինձ հետ, քանզի արծիվը կոտորեց իմ սագերին:
Սակայն արծիվն եկավ կրկին, ապա նստեց մեր քարձրաբերձ
տան կտորինն
Ու մարդկային ձայնով խոսեց և սփոփելով այս ինձ ասաց.
«Քաջալերվիր դու, դատրիկը հոշակավոր Իկարիոսի,
Երազ չէր այդ, այլ մեծասքանչ իրողություն, որն և անշուշտ կկատարվի:
Սագերն էին քո սեղեխներն, իսկ ես, արծիվն, ամուսինն եմ քո
դյուցազուն,
Թեպետ առաջ թռչում էի, քո ամուսինն եմ ես, այդ՛, իմ տուն եկած,
Եվ այժմ նպերտ խոսնայրներն մատնելու եմ ես խայտառակ,
ծանոտ օրհասի»:

Այդպես ասաց, մինչ հեռացավ իմ աչքերից քունն անուշիկ,
550 Ես նայեցի շուրջս իսկույն և բակի մեջ առողջ տեսա մեր սագերին,
Իսկ դու լռիր, խոսք մի խոսիր, և մնացյալն աստվածների
գործն է միայն»:

Ասաց այդպես, և դուրս գնաց տնից այնժամ պտուղն հարպնեայ
Ու ջուր բերեց, քանզի թափվել էր նախկինը ամբողջովին:
Իսկ երբ լվաց նա իր տիրոջ ոտքերն այդպես և երբ օծեց
պարարտ յուղով,

Քաշեց արթուն Ռոփսեսը օջախի մոտ, որ տաքանա
Եվ ցնցոտի հագուստով իր ծածկեց ծնկան սպին իսկույն:
Մինչ սկսեց նորից խոսել այդ ժամանակ Պենելոպեան խոհեմամիտ.
«Օտարական, քեզ վերըստին հարց պիտի տամ ես մի փոքրիկ,
510 Թեպետ անա մոտենում է քուն մտնելու ուրախատիթ ժամը արդեն:
Ամեն մի մարդ, որքան էլ նա տխուր լինի, փափագում է քունն անուշիկ,
Իսկ ինձ աստված շնորհել է միայն տանջանք և անչափ վիշտ,
Ցերեկները ինձ անփոխանք տալիս են դեռ լացն ու կոծը կականալիս,
Երբ անընդհատ հետևում եմ ես տան գործին, ծառաների
աշխատանքին,
Բայց երբ գալիս է լուռ գիշերն, և ամեն մարդ վայելում է
մահիճն անդորր,
Պառկում եմ ես անկողնու մեջ, ինձ մաշում են սրտակոտոր
ցավերն անվերջ,
Եվ տոչորում, տանջում են ինձ մանր հոգսերը դառնակակիծ:

Իսկ դու լռիր, խոսք մի խոսիր, և մնացյալն աստվածների
գործն է միայն»:

Ասաց այդպես, և դուրս գնաց տնից այնժամ պտուղն հարպնեայ
Ու ջուր բերեց, քանզի թափվել էր նախկինը ամբողջովին:
Իսկ երբ լվաց նա իր տիրոջ ոտքերն այդպես և երբ օծեց
պարարտ յուղով,

Քաշեց արթուն Ռոփսեսը օջախի մոտ, որ տաքանա
Եվ ցնցոտի հագուստով իր ծածկեց ծնկան սպին իսկույն:
Մինչ սկսեց նորից խոսել այդ ժամանակ Պենելոպեան խոհեմամիտ.
«Օտարական, քեզ վերըստին հարց պիտի տամ ես մի փոքրիկ,
510 Թեպետ անա մոտենում է քուն մտնելու ուրախատիթ ժամը արդեն:
Ամեն մի մարդ, որքան էլ նա տխուր լինի, փափագում է քունն անուշիկ,
Իսկ ինձ աստված շնորհել է միայն տանջանք և անչափ վիշտ,
Ցերեկները ինձ անփոխանք տալիս են դեռ լացն ու կոծը կականալիս,
Երբ անընդհատ հետևում եմ ես տան գործին, ծառաների
աշխատանքին,
Բայց երբ գալիս է լուռ գիշերն, և ամեն մարդ վայելում է
մահիճն անդորր,
Պառկում եմ ես անկողնու մեջ, ինձ մաշում են սրտակոտոր
ցավերն անվերջ,
Եվ տոչորում, տանջում են ինձ մանր հոգսերը դառնակակիծ:

Որո՞նք այնտեղ, տաշտին ընթեր, կոցում էին ցորենի կուտն:՝
Նրան իսկույն պատասխանեց ու խոսք ասաց Ռդիսևը ամենիմաց.
«Ո՛հ, թագունիդ, պետք չէ բնավ այլ կերպ մեկնել երազը այդ,
Այլ մեկնելի է նա այնպես, ինչպես ինքը, Ռդիսևը, ցույց տվեց քեզ,
Եվ այդ անշուշտ կկատարվի, կգա բոլոր խոսնայրների մահը դաժան,
Ու նրանցից աստ ոչ մեկը չի խուսափի կործանումից»:
Այնժամ նրան ի պատասխան այսպես ասաց Պենելոպեն խոհեմամբ.
«Օտարական, երազները լինում են միշտ սին, անպտուղ.
Դրանք բոլորն ամենևին չեն կատարվում մարդկանց համար:

560 Կա երկու դուռ, ուստեք գալիս են այս աշխարհ այդ երազները
ամմարմին,

Մեկն եղջյուրից է կառուցված, իսկ երկրորդը փղոսկրից է.
Նրանք, որոնք դուրս են գալիս փղոսկրակերտ, ողորկ դռնից,
Խարուսիկ են, անիրական և մնում են միշտ անկատար,
Սակայն նրանք, որ ելնում են կոկ դռներից եղջյուրակերտ,
Կատարվում են ճշմարտացի, եթե տեսնի դրանց մի մարդ մահկանացու:
Բայց այնտեղից, կարծում եմ ես, չի դուրս եկել այս իմ երազը
ծանրագին.

Որքա՞ն հաճույք պիտ գգայինք ես և որդիս, եթե իրոք կատարվեր այդ,
Բայց այլ մի բան ես քեզ կատեն, և քո սրտում դու այդ պահիր:
570 Մոտ է արդեն օրն անիծյալ, որը պետք է ինձ անջատի
Ապարանքից Ռդիսևի, բայց ուզում եմ առաջարկել ես մի մրցանք:
Հաճախակի նա ցցում էր բակի գետնին տասներկու հատ մեծ
տապարներ

Միմյանց կողքի ու մերձընդմերձ, ուղիղ ինչպես նավակողեր:
Ինքն էլ սպա, հեռուն կանգնած, անցկացնում էր դրանց միջով
սլաքը իր:

Ահավասիկ, այդ մրցանքը կառաջարկեմ ես իմ ներկա մեղեխներին.
Ով առավել հաջող ձգի իր աղեղով ու հաղթ ձեռքով և սրբնթաց
Սլացող նետն անցկացնի տասներկու տապարների անցքի միջով,
Ես հենց նրան կհետևեմ՝ դուրս գնալով ասպարանքից այս պերճագույն,
Որ անցել է կյանքն իմ ջահել ու խանդավառ՝ լի բերկրանքով
ու սիրատենչ,

Որը, կարծեմ, դեռ շա՛տ հաճախ ես կհիշեմ, թեկուզ նույնիսկ
երազիս մեջ»:

580 Նրան իսկույն ի պատասխան այսպես ասաց Ռդիսևը ամենիմաց.
«Գերամեծար դու թագունիդ Լաերտածին Ռդիսևի.
Մի՛ դանդաղիր դու այլևս, առաջարկիր այդ մրցանքը դու քո տան մեջ,
Քանզի նախքան կարողանան նրանք ձեռք տալ, սպա շարժել
հղկված աղեղն,
Նախքան ձգեն նրանք լարը, որ սլաքը թոչի անցքով երկաթների,

Գերիմաստուն Ռդիսևը ետ կդառնա, կգա այստեղ»:
Կրկին նրան ի պատասխան այսպես ասաց Պենելոպեն խոհեմամբ.
«Ա՛խ, եթե դու, օտարական, ցանկանալիք այսպես նստած մնալ այստեղ
Եվ ինձ այսպես զվարճացնել, էլ չէր իջնի քունը երբեք իմ աչքերին,
Բայց չեն կարող մարդիկ, ավա՛ղ, անքուն մնալ միշտ ու անվերջ.

590 Մահկանացու մարդկանց համար, ամեն մեկին երկրի վրա
այս կենարար,

Հավերժակյաց աստվածները սահմանել են չափ ու սահման,
Իսկ ես, ավա՛ղ, արդեն պիտի վեր բարձրանամ ննջարանը
իմ վերճատան,

Որ պսոկեմ անդ իմ անկողնում, այդ վշտալի ապաստանում
հառաչանքիս,

Որ արցունքով միշտ ռոռոված ջալլում եմ ես այն օրվանից,
երբ Ռդիսևն

Թողեց, գնաց դեպ նողկ Իլիոն՝ անունով իր միշտ անիծված:
Այնտեղ, այդ, ես կպսոկեմ, իսկ դու քնիր սենյակի մեջ,
որ ցանկանաս

Կամ աստ, գետնին պսոկիր մի կերպ, կամ թող սարքեն
քեզ այլ մահին»:

Այդ ասելով՝ նա բարձրացավ դեպ վերճատան իր ննջարանը շողշողուն,
Բայց ոչ մեռակ, այլ նաժիշտները գնացին անդ նրա հետ:

600 Երբ բարձրացավ, ծառաների հետ միասին, սենյակը իր, երկար այնտեղ
Նա լաց եղավ, խորունկ ողբաց սիրատենչիկ իր ամուսին Ռդիսևին,
Մինչև խաժակն Աթենասը անուշ քնով փակեց աչքերն իր ճորագեղ»:

ՆԱԽՔԱՆ ԿՈՏՈՐԱԾԸ ՍԵՂԵՆՆԵՐԻ. ԶԵՎՍԸ ՔԱԶԱԼԵՐՈՒՄ Է ՈՂԻՍԵՎՍԻՆ

Գավթում սարքեց անկողինն իր Ողիսւսը աստվածագարմ.
Փռեց գետնին արաջտեմնի լիված կաշին և վերեկից
Ծածկեց ձեռքով սեղեխների արդեն մորթած ոչխարների շատ օղիկներ:
Երբ նա պսակեց, Եվրիանունն բերեց փռեց նրա վրա մի պատմունճան,
Բայց չքնեց Ողիսւսը, այլ խորհում էր խոսնայրների մահվան մասին:
Մինչդեռ տնից այնժամ ելան ու գնացին ստրուկ կանայք,
Որ և առաջ լիրք, անառակ կապ ունեին սեղեխների հետ գազրելի.
Հըրհըրոցով և խայտառակ զվարճանքով գնում, խոսում էին զավզակ:
Եվ, քինահույզ, խիստ բորբոքվեց Ողիսւսի սիրած սիրտը

10 Ոստի հուզված մտածում էր նա ինքն իր մեջ և իր հոգով
խորաթափանց.
Արդյոք իսկույն չհարձակվե՞լ և չմատնե՞լ դաժան մահվան այդ բորբոքին,
Թե՞ դեռ թույլ տալ, որ անզգամ և շնաբար այդպես լկնեն վերջին անգամ
Սեղեխների հետ վիսացող: Մարմաջում էր սիրուն իր ներքուստ
և գիլ հաչում,
Ողիդ ինչպես շունն է հաչում և հարձակվում մի անձանոթ մարդու վրա՝
Իր նորածին լակոտների շուրջը արագ և հոգաւար պտտովելիս,
Այդպես հաչում էր նա ներքուստ և վրդովվում այդ անամոթ
գործի համար:
Ողիսւսը կործքն իր թակեց և իր սրտին այս խոսքն ասաց
նախատական.

«Մի՛րտ իմ, տոկա՛ և հանդործի՛ր քարվականքն այս, քանզի
չէ՞ որ համբերեցիր
Դու ավելի վատթարագույնն, երբ կիկլուպի գորոջյունը զարհուրելի

20 Լափլիեց քաջ ընկերներիս. այնտեղ տոկում դու դիմացար, և խելքը քո
Քարսնճափից քեզ դուրս հանեց, թեպետ մահն էր քո անխուսափ»:

Այդպես ասաց կշտամբանքով՝ սիրած սրտին իր դիմելով.
Եվ սիրուն իսկույն հնազանդվեց, որ քաջաբար կհամբերի անդ ամեն ինչ:
Բայց դիցագուն Ողիսւսը մահիճի մեջ շոտումուտ էր գալիս անվերջ,
Ինչպես հաճախ խիստ բոցավառ կրակի մեջ մարդն անդադար
Պտույտ տալով, զալարում է՝ պարարտաճարպ և արյունով լի փորոտիճ՝
Փափագելով, որ խորովածը խորովվի ավելի շո՛ւտ, փութանակի,
Այդպես ահա անկողնու մեջ Ողիսւսն էր շոտ-մուտ գալիս

խիստ մտահոգ.

Միտք էր անում՝ ինչպե՞ս արդյոք ինքը մեռակ ձեռք բարձրացնի
30 Ընդդեմ բազում և անամոթ խոսնայրների, մինչ երկնքից իջավ այնժամ
Ու մոտեցավ նրան այնտեղ Աթենասը, որ անանվել էր մի կնոջ:
Նա սնարին նրա կանգնեց ու ձայն տվեց և այս ասաց.
«Ինչո՞ւ արդյոք դու չես քնում, դու, բոլորից վատաբախտը

մարդկանց մեջ:

Քո տունն է սա, և քո տան մեջ են, ավադիկ, քո ամուսինն ու քո որդին,
Որին, որպես որդի, շատերը չափազանց կցանկալին»:
Պատասխանեց իսկույն նրան և խոսք ասաց անդ Ողիսւսը քաջիմաց.
«Այդ ամենը ճիշտ է, իրավ, աստվածուհիդ, հանց ասացիր

պատշաճաբար,

Բայց ես, ահա, մտատանջված, միտք եմ անում իմ սրտի մեջ
և իմ հոգով՝
Ինչպե՞ս արդյոք ինքս մեռակ ձեռք բարձրացնեմ սեղեխների
դեմ բազմաթիվ,

40 Որոճք այստեղ, այս հարկի տակ, հավաքվում են միահամուտ,
բազմաժողով,
Եվ բացի այդ՝ ես իմ սրտում էլ առավել ավելոծվող մի միտք ունեմ.
Եթե Ջևսի և քո բարի ողորմությամբ դրանց հիմա ես կոտորեմ,
Ո՛ր պիտ փախչեմ, որ ես փրկվեմ: Աղայում եմ, գեթ այդ մասին
դու մտածիր»:

Կրկին նրան իր խոսքն ասաց Աթենասը պայծասաչա.
«Թե՛րահաւրա՛տ. վտանգի մեջ մարդն ընկերոջն է հավատում,
թեկուզ լինի

Նա ավելի թույլ ու նվաստ, նույնիսկ խելքով իր անկարող:
Մինչդեռ, ահա, աստված եմ ես և ամենուր պահպանել եմ քեզ մշտապես
Բոլոր ծանր գործերիդ մեջ, ուստի լսիր, այժմ հայտնում եմ քեզ
բացեքաց.

Եթե նույնիսկ մեզ պաշարի հիսուն ջոկատ կազմող հզոր զորք
մահապարտ

50 Եվ մարտատենչ, արեսական կրքով լցված, մեզ սպանել
աստ ցանկանա,

Այդ դեպքում էլ մենք կհաղթենք և կշորթենք նրա եզներն
ու ոչխարներն,
Բայց թող քունը քեզ նվաճի, քանզի իրոք տանջալից է ամբողջ գիշեր
Անքուն մնալ, աչք չփակել. շուտով արդեն փրկվելու ես աղետներից»:

Այդպես ասաց և աչքերին նրա ցանեց քաղցրամուշիկ, հանձխտ մի քուն
Եվ ինքն ապա, աստվածների վեհ դիցուհին, դեպ Օլիմպոս թուավ, գնաց:
Այդպես նրան գրկեց քունը, որ սիրտը միշտ ազատում է
ծանր հոգուերից,
Եվ թուլացրեց մարմինն ամբողջ: Մինչ արթնացավ նրա կինը
այդ ժամանակ,

Նստեց ապա մահճակալի վրա փափուկ և հեծեծաց,
Իսկ երբ արդեն լացուկոծով նրա սիրտը լավ հագեցավ,
Նա, այդ կինը աստվածային, նախ աղերսեց և խոսքն ուղղեց
Արտեմիսին.

60 «Ախ, Արտեմիս, աստվածուհիդ գերամեծար, դուստր Ջևսի, երանի՜ թե
Դու վարսելիր քո սուր սլաքն իմ կրծքի մեջ և կորզելիր դու իմ հոգին,
Կամ գեթ մրրիկն ահեղաձայն հափշտակեր ինձ անհապաղ
Եվ ինձ արագ վերցներ, տաներ դեպ հեռուներ, ճանապարհով
անդնդային,

Տաներ այնտեղ և ինձ նետեր քերանի մեջ խոր, շրջահոս օվկիանոսի,
Ինչպես երբեմն այդպես տարավ գոռ մրրիկը Պանդարևսի
դատրիկներին:

Ավա՛ղ, նրանց ծնողներին աստվածները կործանեցին, ուստի նրանք
Որք մնացին հայրենական իրենց տան մեջ: Ափրոդիտն էր,
աստվածուհին,

Նրանց սևում միշտ պանիրով, քաղցր մեղրով, այլև գինով անուշահամ:
70 Եվ պարզեց Հերան նրանց խելք ու հանճար, գեղեցկությունը
գերազանց,

Իսկ Արտեմիսն օժտեց նրանց քաջահասակ, վաղելչակազմ
տեսքով չքնաղ.

Աթենասն էլ սովորեցրեց հրաշակերտ ու ոսկեշող ձեռագործ:
Եվ Ափրոդիտն աստվածահաղթ վեր բարձրացավ մի օր Օլիմպ
երանավետ՝

Ծանթավարճ Ջևսին այնտեղ աղերսելու, քանզի նա է ամենագոր,
Նրա կանքն է մահկանացու մարդկանց տալիս դժբախտություն
ու բախտ փայլուն,

Որ թույլ տա նա կատարելու այդ կույսերի պերճ հարսանիքը
ծաղկավետ:

Բայց կույսերին Հարպիաները հափափեցին հանկարծակի
Ու հանձնեցին անագորոյն Էրինիսին՝ ստրկական ժանտ վիճակի:

Ախ, երանի ինձ էլ այդպես ոչնչացնեն աստվածները Օլիմպակյաց,
80 Կամ Արտեմիսը վարսագեղ թող ինձ զարկի փոքսանակի,
Որպեսզի ես Ոդիսևսի հետ տեսնվելու իջնեմ անդունդը, երկրի տակ,
Որ չդառնամ ես հրճվանքի միայն աղբյուր ավելի վատ մարդու համար:
Սակայն հաճախ հանդրբծում եմ մարդիկ աղետն ու վշտերը,

երբ ցերեկով
Կյանքն է անցնում ջալլանքի մեջ, սիրտը տխուր, արցունքով լի,
Իսկ գիշերը նրանց արտին քունն է տիրում, որ վատն ու լավը փոփին
Մոռացության է միշտ տալիս, երբ փակվում են աչքերը և թարթիչները,
Բայց ինձ աստվածն առաքում է ցնորամիտ և չարագույժ վատ երազներ:
Հենց այս գիշեր, երագումս, ինձ գրկել էր մի մարդ՝

նրան աստիկ նման.
Այդպիսին էր նա, երբ գնաց գորքերի հետ, ուրախացավ
սիրտս խորունկ,

90 «Զանգի կարծես երագ չէր այդ, այլ իսկակա՛ն իրողություն մի ճշմարիտ»:

Ասաց այդպես, մինչդեռ ծագեց արդեն շողշող և ոսկեզահ Արշալույսը:
Լացուկոծի ձայնը նրա լսեց հանկարծ Ոդիսևսը աստվածագարմ,
Եվ ինքն իր մեջ խոր մտածեց, ապա նրա արտին թվաց,

Որ ճանաչեց տիկինն իրեն և կանգնած է հիմա նա յուր գլխի վերև:
Նա վեր կացավ, վերցրեց վերմակն ու օրենիք, որոնց մեջ
ինքը պատկել էր,

Ծալեց, դրեց անդ բազմոցին, եզան կաշին տարավ, դրեց դռան ետև,
Ապա դարձավ և, ձեռքերը վեր կարկառած, ջերմ աղոթեց
Ջևս աստծուն.

«Ջևս հայր, եթե դու կամեցար ինձ ծովերով ու ցամաքով
հեռել, հասցնել իմ երկիրն այս, երբ կրեցի ես աղետներ բազմաչարչար,
100 Թող մեկն ու մեկն, ով արթուն է, այստեղ, ներքուստ, ինձ խոսք ասի
բարենշան,

Իսկ արտաքուստ թող հանդես գա ու երևա քո նշանը, Ջևս երկնագով»:
Այդպես ասաց աղերսելով, և Ջևսն զգոն լսեց նրան.

Թնդաց իսկույն և որոտաց որոտն անեղ Օլիմպական բարձունքներից
Անդ, խոսազույն ամպերի մեջ: Ուրախացավ Ոդիսևսը աստվածագարմ.
Խոսեց նաև տան մեջ, այնտեղ, հաց աղացող ստրուկ կինը,

Քանզի ուներ ազգերի տեր Ոդիսևսը շատ, բազմազան, աղորիքներ,
Որոնց շուրջը տասններկու կանաչ էին անդ աշխատում միշտ ծրածիր:
Աղում էին նրանք գարի, ոսկի ցորեն, որը մարդկանց ուղեղն է ճիշտ:
Մյուսներն այնժամ քնած էին, քանզի իրենց գործն ավարտել էին արդեն,

110 Իսկ սա իր գործը տակավին չէր ավարտել, որպես մի թույլ և տկար կին:
Արդ, աղալը ընդհատելով, նա խոսք ասաց, բարի նշան տիրոջ համար.
«Ջևս հայր, դու, որ գերիշխողն ես աստվածների, այլև մարդկանց,

Այսքան հուժկու որոտացիր այժմ երկնքից անծայրածիր և աստղագարդ,
Որտեղ չկար և ոչ մի անպ: Ո՞ւմ համար էր, որ հայտնեցիր

քո նշանն այդ:

Այս խոսքը իմ, տարաբախտիս, գեթ կատարիր դու, ողորմած.
Թող որ այս օրն սեղեխների համար լինի օրը վերջին,
Նրանց, որոնք Ռդիսուսի տանն անում են խնջույքը այս մեծափափագ:
Տե՛ս, խոնջանքից սրտակոտոր՝ իմ թույացած ծնկներն են այժմ

ծալվում արդեն,

Այսքան գարի միշտ աղայիս, թող սա լինի վերջին խնջույքն ու նվագը»:

120 Ասաց այդպես, Չևսի հզոր որոտումից և այս կնոջ նոր ասածից
Ռդիսուսը խնդաց, խորհեց, որ վրեժն իր չար թշնամուց նա կրածի:
Մինչ այլ բոլոր ստրկուհիք հավաքվեցին Ռդիսուսի շքեղ տան մեջ
Եվ անհասպող անդ օջախի մեջ վառեցին կրակն անշեջ:
Իր մահիճում անդ արթնացավ և Տելեմաքն աստվածակերպ.
Հասցնեալ հագավ նա իր հագուստն, այսա ուսին կախեց թուրը
իր սայրասուր

Եվ ոտքերին կապեց մուկերն իր գեղեցիկ ու շողշողուն,
Հետո վերցրեց նիզակն ամուր ու սրածայր, պղնձակուռ:
Այդպես գնաց, կանգնեց շենքին ու բարբառեց և խոսք ասաց
Եվրիկլիային.

«Դու, մայրիկդ իմ սիրելի, հյուր եկվորին դուք պատվեցի՞ք
մեծարանքով,

130 Արդյոք տո՞ւի՞ք պատշաճ ուտեստ կամ անկողին, թե՞ նա մնաց
տանն անխմամ:
Գիտե՞մ, մայրն իմ, թեպես և նա ողջախոհ է և իմաստուն,
Մահկանացու մարդկանցից աստ երբեմն պատվում է այն մարդուն,
որը սակայն
Նվաստագույնն է իսկապես, իսկ լավերին դուրս է անում
սուանց պատվի»:

Իսկույն նրան պատասխանեց և խոսք ասաց Եվրիկլիա կինը քաջիմաց.
«Ո՞հ, գավակս, գոր ես այդպես ամբաստանում քո մորն անմեղ.
Հյուր եկվորը խմեց գինին, որքան իր սիրուն էր փափագում,
Իսկ ուտելը, երբ որ մայրդ հարցրեց նրան, մերժեց, ասաց, որ չի ուզում,
Մակրայն երբ որ նա քունն հիշեց և ցանկացավ պատկել այստեղ,
Մայրդ իսկույն հրամայեց ստրուկ կանանց մահիճ սարքել
պատշաճաբար:

140 Բայց անկողնում և դռակի վրա քնել ինքը անձամբ չկամեցավ,
Որպես դժբախտ թափառական, տառապահար և անարժան,
Այլ գավիթում պատկեց, քնեց եզան մորթուն չմշակված
Եվ ոչխարի օղիկներին, իսկ վերնից մեկը փռեցինք մի պատմունճան»:
Ասաց այդպես, և Տելեմաքն այնժամ տնից ժիր դուրս եկավ՝

Տեգ-նիզակը ձեռքին բռնած. հետևեցին նրան շներն արագարշավ:
Գեղասարունք աքեացոց ատյանը նա շտապ գնաց:
Այն ժամանակ Եվրիկլիան աստվածային՝ դուստրը Օպսի Պիսենորյան,
Անմիջապես հրամայեց ապարանքի ստրուկ կանանց.
«Օ՞հ, շուտափույթ գործի էլեք. տունն ու տեղը հավաքեցեք

դուք ծրագրամ

150 Եվ հատակին ջուր ցանեցեք, բազմոցները գեղեցկակերտ և շառագույն
Սփռոցներով լավ ծածկեցեք: Դուք էլ՝ անս սեղաններն այս
Սպունգներով նորը սրբեցեք և մաքրեցեք սարկարաններն
ու գավաթներն,

Որոնք շինված են կրկնականթ, իսկ դուք ջրի շուտ գնացեք
դեպի աղբյուր

Եվ այնտեղից փոփանակի լցրեք, բերեք ջուրը մաքուր,
Քանգի երկար էլ բացակա չեն լինելու խոսնայրները ապարանքից,
Այլ շատ շուտով այստեղ կգան, որովհետև տո՞ն է այսօր մի ընդհանուր»:
Ասաց այդպես, և անսացին նրանք իսկույն, կատարեցին պատգամը աղ-
Արդ, նրանցից քրսան հոգի հապճեպ գնաց դեպի աղբյուրը սևաջուր,
Իսկ մյուսները տան մեջ, այնտեղ, մեծ խնամքով, ուշի-ուշով
աշխատեցին:

160 Եկան նաև աքեացոց ծառաները աշխատասեր,
Որոնք ճարտար կտրատեցին փայտը այնտեղ, և աղբյուրից
եկան կանայք,

Իսկ դրանցից հետո միայն խոզարածը եկավ արդեն,
Որ բերել էր երեք խոզեր, ընտիրները այնտեղ եղած խոզերամից,
Որոնց թողեց նա բակի մեջ բարձրապարիսպ ու պերճակերտ,
որ արածեն,

Իսկ ինքն այսա Ռդիսուսին այնտեղ դիմեց և խոսք ասաց գորովալիր.
«Հը՛, ինչպե՞ս է, օտարական, հարգանքո՞ւյ են աքեացիք
վարվում քեզ հետ,
Թե՞ այս տան մեջ, այստեղ, քեզ գոր անպատվում են առաջվա պես»:
Պատասխանեց իսկույն նրան և խոսք ասաց Ռդիսուսը ամենիմաց.
«Ո՞ր էր թե՛ ճիշտ, ո՞ւյ Եվմետոս, պատիժ տային աստվածները
քարվականքի

170 Այս լիրբ գործին, որ վիսացող այս լրբեմիք կատարում են, անավասիկ,
Օտարի տանն՝ այսքան լսիրշ և անօրեն, նույնիսկ առանց ամոթանքի»:

Այդպես նրանք այդ առիթով խոսում էին իրարու հետ,
Մինչդեռ եկավ ու մոտեցավ անդ Մելանթուսը այժարած.
Իր հետ բերել էր նա այժեր, քաջընտիրները հորանից,
Որպես ընծա խրախճանքին սեղեխների. իր հետ կային երկու հովիվ:
Այդ այժերին իսկույն կապեց նա գավիթում աղմըկահույզ

Եվ ինքն ապա Ռդիսևսին իսկույն դիմեց ու խոսքն ասաց այս կծվակիծ.
«Դեռ այստե՛ղ ես, լայիրջ մորիկ, և տան մարդկանց դեռ ձանձրո՛ւյթ
եւ պատճառում դու՛

Ողորմություն մուրալով: Դեռ չե՛ս գնա կամ չես կորչի դուրս այս դռնից.
180 Կարծես իրոք մենք իրարից չենք բաժանվի հեշտ ու թեթև,
Մինչև որ դու ուժն իմ ձեռքի այժմ չփորձես. գա՛րջ, անվայել
մուրալ գիտես:

2Է՞ որ այլուր խնջույք անող այլ արեյանք շատ կան նաև»: Այդպես խոսեց, ոչինչ չասաց նրան այլևս ամենագետ Ռդիսևսը,
Այլ լուռ գլուխը լոկ շարժեց՝ վրեժառու մտքերի մեջ խորասուզված:
Հետո եկավ և մոտեցավ հովիվն երրորդ՝ Փիլեսոխոս իշխանն արանց:
Խոսակցրեցին նա թերե՛լ էր պարարտ այժեր, նաև ամուլ, ստերջ մի կով-
Նավորդները, որ դեպ կղզին փոխադրում են և այլ մարդկանց,
Հիմա սրանց փոխադրեցին, որոնք եկան ու տեղ հասան:

Նա իր թերած անասուններն ամուր կապեց աղմկահույզ գավիթի մեջ,
190 Ինքն էլ ապա շուտ մոտեցավ խոզարածին ու հարց տվեց նրան այսպես.
«Ասա դու ինձ, ո՛վ խոզարած, ո՛վ է արդյոք այս շրջիկը օտարական,
Որ եկել է մեր տունն, այստեղ: Ո՞ր ազգով է հպարտանում,
Եվ ո՞րտեղ է ցեղը նրա, կամ երկիրը լուր հաչրեցի:

Ավա՛ղ, դժբախտ. տեսքով որքա՛ն մեր մեծագոր արքային է
սա նմանվում,

Մինչ աստվածներն անչափ վշտեր են շնորհում թափառակյան
թշվառ մարդկանց,

Ինչպես նաև արքաներին մատնում են միշտ անագորույն տառաբանքի»: Ասաց
այդպես, Ռդիսևսին մոտենալով՝ շերմ ողջունեց իր այ ձեռքով
Ու բարձրաձայն, բարյացակամ իր խոսքն ասաց այս թեալոր.

«Ողջո՛ւյն քեզ, հայր,— պանդուխտ եկվոր, իցի՛վ գտնես կյանք երջանիկ
գեթ այստե՛տ,

200 Մինչդեռ հիմա տանջում են քեզ բյուրաբազում վիշտ ու աղետ:
Ձե՛ս հայր, չկա աստվածների մեջ քեզանից ավելի ժանտ ու մահաբեր,
Չես խնայում դու հեզ մարդկանց, որոնց իրավ դու ինքդ ես

կոչում կյանքի,

Այլ, խառնելով աղետ ու վիշտ, թափում ես այն դժբախտների
գլխին միայն:

Քեզ տեսնելով՝ եկվո՛ր, սիրոսս փշաքաղվեց, արցունքն իջավ
իմ աչքերին,

Ռդիսևսին ես հիշեցի: Գուցե և նա, մտածեցի, այժմ, հիրավի,
Քեզ պես հազած ճողկ ցնցոտի, թափառում է հեռու, օտար ազգերի մեջ,
Եթե միայն կենդանի է նա տակավին ու տեսնում է լույսն արևի:
Իսկ եթե նա մահացել է և իջել է տունն Հադեսի,

Վա՛յ ինձ, ավա՛ղ, առանց ազնիվ Ռդիսևսի: Չէ՞ որ նա էր,
որ ինձ մանկուց

210 Կեփալլեմյանց երկրում, այնտեղ, նախորդ կարգեց իր եզներին,
Եվ այդ նախիրն այնքան է այժմ անել, դարձել բազմաթյուխ,
սերընդով շատ,

Որքան երբեք չի բազմացել մի այլ մարդու հոտն եզների լայնաճակատ:
Ինձ այժմ օտարն է պատվիրում՝ իրեն թերե՛լ այդ կովն ու եզը

գերազանց,

Որ աստ լափի: Չեն պատկառում նույնիսկ որդուց թագավորի՝
նրա տան մեջ,

Ոչ էլ նաև սարսափում են աստվածներից, այլ միտք ունեն
մի չարատենչ-

Գույքն ու կայքը հար հեռացած մեծ արքայի աստ բաժանել իրարու մեջ:
Ա՛խ, իմ հոգին այս կրծքիս տակ մի այլ հոգսով է մտահույզ,

ալեկոծված,
Սակայն անչափ վատ կյիներ և անօրեն, քանի դեռ կա նրա որդին,
Թողնե՛լ, գնալ մի այլ երկիր, քշել, տանել նաև նրա նախիրները

220 Դեպի մարդիկ օտարազգի, բայց ավելի վատ է մնալ ու տեսնել միշտ՝
Ինչպես մորթում են ուրիշի եզներ ու կով, և գուր կրել տանջանք
ու վիշտ:

Ո՛հ, ես վաղուց, փախուստ տալով, կգնայի դեպ մեծափրոս
մի այլ արքա,

Քանզի այլևս հնար չկա հանդուրժել գործն այսքան ժպիրի:
Բայց կմնամ ես տակավին, հուսով եմ դեռ, գուցե դժբախտ իմ տերը գա
Եվ շամբշագույն սեղեխների դաժան ոհմակն արտաքսի դուրս
և ցրիվ տա»:

Այնժամ նրան պատասխանեց և խոսք ասաց Ռդիսևսը ամենիմաց.
«Հուլի՛վդ քաջ, նման չես դու լիրբ ու պանդույր մի այլ մարդու,
Եվ զգում եմ ես ինքս ահա, որ սիրտ ունես դու ողջախոս և խորագետ,
Ուստի ես այժմ հայտնում եմ քեզ և երդվում եմ ես երդումով
արդ մեծագույն.

230 Վկա է Ձեան, ավագագույնն աստվածների և վանատուր սեղանը այս,
Վկա է և օջախն անբիծ Ռդիսևսի, ուր գտել եմ ինձ ապավեն,
Որ Ռդիսևսը քո այստեղ եղած պահին ետ կդառնա, կգա իր տուն,
Եվ կտեսնես դու քո աչքով նրան այստեղ, հարկավ, եթե այդ կամենաս,
Երբ կոտորի նա նախահիրում խոսակցրեցին, որ իշխում են
աստ անօրեն»:

Նրան կրկին իր խոսքն ասաց իսկույն հովիվն այն եզնարած.
«Ա՛խ, ո՞ր էր թե, օտարակա՛ն, այդ խոսքն իրավ գլուխ թերեք
Կրոնույսանն,

արդ մեծագույն.

արդ մեծագույն.

արդ մեծագույն.

արդ մեծագույն.

արդ մեծագույն.

արդ մեծագույն.

արդ մեծագույն.

Այնժամ անշուշտ կիմանայիր դու զորությունն իմ ձեռքերի»:
Այդպես նաև Եվրիմեոսը հավերժ անմահ աստվածներին ջերմ աղոթեց,
որ Ռդիսեան ամենիմաց շուտով իր տուն վերադառնա:

240 Ահա այդպես իրարու մեջ նրանք խոսում էին այնտեղ,
Մինչ խոսակցութեանը պատրաստում էին այնժամ կործանումը Տելեմաքի,
Սակայն նրանց ձախակողմից մի մեծ թռչուն թուավ անցավ

հանկարծակի,

հարձրաթռիչ արծիվ էր դա և ճանկերում իր՝ վեհերոտ մի աղավձի:
Ու Ամիհինոմն իսկույն այնտեղ նրանց դիմեց և այս ասաց.
«Սիրելիներ՛ր, գլուխ չի գա, չի հաշողվի խորհուրդը մեր
Տելեմաքի մահվան մասին, ուստի եկեք հիշենք նորից մեր խրախճանն»:

Ասաց այդպես Ամիհինոմը, խոսքն այդ բոլորն հավանեցին
Եվ փութապես աստվածազարմ Ռդիսեաի տունը եկան:

250 Բազմոցներին, նստիքներին վերարկուներն ու հագուստները դրեցին
Եվ սկսեցին անդ մորթոտել մեծ ոչխարներ ու պարարուն, սիրուն այծեր:
Փողոտեցին պարարտաճարպ նաև խոզեր ու նախալիկ կովը ստերջ,
Եվ խորովված ընդերքն հապճեպ բաժանեցին իրարու մեջ:
Գինին խստնվեց սարկարանում, խոզարածը քերեց, դրեց
պերճ բաժակներն.

Փիլետիոսն, իշխանն արանց, զամբյուղներով գեղեցկակերտ
Մատրովակեց հացն ամենքին, իսկ Մելանթեան արագ լցրեց
առատ գինին:

Այդպես նրանք ձեռք մեկնեցին իրենց առաջ պատրաստ դրված
ուտեստներին,
Իսկ Տելեմաքն իր հոգու մեջ հղացավ միտքը խորամանկ
նոր նենգության.

Իր հոր տան մեջ ամրակառույց նա, վիմակերտ շենքին ընթեր,
Մի սեղանիկ և անվայել նստիք դրեց, բազմեցրեց անդ Ռդիսեաին,
260 Նրա առաջ դրեց պատրաստ ընդերքներից մի լավ բաժին,
Գինին լցրեց ոսկի բաժակ, ապա դիմեց իսկույն նրան և խոսք ասաց.
«Նստիր այստեղ, խմիր համեղ դու այս գինին սույն քաջերի
հետ միասին,

Իսկ եպերանքն և ձեռքերը խոսակցութեան քեզնից հիմա կվանեն ես,
Քանզի չէ՞ որ սա իսկապես մի պանդուկ չէ և ոչ էլ տուն մի հանրային,
Այլ միմիայն Ռդիսեաի ապարանքն է, և ինձ է այժմ նա թողել այդ:
Իսկ դուք այստեղ, ո՛վ սեղեխներ, սանձե՛ք ձեր կիրքն ու դարովանքն,
նստե՛ք հանդարտ

Եվ զսպեցե՛ք ձեր ձեռքերը, որ չծագի մեր մեջ հանկարծ կազ ու կոխվ»:

Ասաց այդպես, այդ լսելով՝ ամենքն իրենց շրթունքները կրծոտեցին
Ու զարմացան Տելեմաքի վրա սաստիկ, քանզի խոսեց շատ համարձակ:
270 Մինչ նրանցից անդ բարբառեց ինքն Եվսիթյան Անտիճոսը
այդ ժամանակ.

«Տելեմաքի այդ խոսքերը կհանդուրժենք, արեացիք,
Թեպետ դրանք ցավալի են, քանզի նետեց սպառնանք նա մեզ.
Կրոնոսյան Ջևան է միայն արգելքը մեր, թե ոչ՝ նրան վերջ կտայինք
Մենք այս տան մեջ, թեկուզ և նա ճառել գիտի վսեմ ու վես»:

Այդպես ասաց Անտիճոսը, բայց նա թողեց նրա այդ խոսքն
անուշադիր,

Մինչ քաղաքով բանբերները հարյուրաեզ զոհը տարան աստվածներին,
Ուստի շուտով հավաքվեցին գեղազանգուր արեացիք
Անդ, նետաձիգ Ապոլլոնի անտառի մեջ սովորածիր:
Սեղեխները միտք արդեն խորովեցին ու կրակից դուրս հանեցին

280 Եվ, բաշխելով իրարու մեջ, հրճվում էին խրախճանքով՝ այդ ազդեցիկ:
Մատրովակող ծառաները Ռդիսեաի դեմ դրեցին

Այնքան բաժին, որքան ամենքն անդ ստացան, քանզի այդպես
Պատվիրել էր աստվածազարմ Ռդիսեաի սիրած որդին Տելեմաքը,
Աթենասն էլ՝ չարգելակեց և չզսպեց սեղեխների կիրքը անսանձ
Եվ քարվականքն ամբարտապան, որ ավելի խիստ բորբոքի
Լաերտածին Ռդիսեաի սրտում ցատումը բազմամաղձ:
Խոսակցութեան մեջ կար մի մարդ, մի չարագործ, իր վիսուսյամբ
հոշականում,

Կոչվում էր դա Կոնեսիպպոս և բնակվում էր Սամեոն, իր հարկի տակ:
Արդ, սա, իր հոր բյուրաբազում հարստությամբ քաջալերված,

290 Մրցակից էր հար բացակա Ռդիսեաի կնոջ համար:
Եվ այժմ նպերտ սեղեխներից նա բարբառեց և խոսք ասաց եպերայից.
«Ինձ լսեցեք, ո՛վ խոսակցութեան մեծահոշակ, ահա թե ինչ էս ձեզ կասեմ.
Այս եկվորը բաժին ստացավ, ինչպես հարկն է, մեզ հավասար,
Եվ իսկապես վայել չէ մեզ, լա՛վ չի լինի, ոչ էլ արդար՝
Տելեմաքի հյուրին զրկել, ո՛վ որ էլ գա տունն այս վսեմ:
Ուստի և ես նրան տալիս եմ պարգևն այս, որպեսզի նա ինքը արդեն
Նվերն այս տա բաղնեպանին և կամ ստրուկ ծառաներից մեկնումեկին,
որ կան այստեղ, աստվածակերպ Ռդիսեաի ապարանքում
այս քարեշեն»:

Ասաց այդպես և շուտափույթ ձեռքով հուժկու, հաստաբազուկ,
300 Վերցրեց այնտեղ նա զամբյուղից եզան մի ոտք ու շարտեց
Ռդիսեաի վրա ուժգին, բայց, իր գլուխը թեթելով,

Նա խոյս տվեց, ապա ժպտաց, իսկ ոսկորը զարկվեց պատին
 ամրակառույց,
 Բայց նախատեց Կոնստանդին Տելեմարուն այնժամ արտով ցատումնալի.
 «Բախտդ բերեց, Կոնստանդին, ուրախ եղիր և գոհունակ,
 Որ չդիպավ զարկդ հյուրին, քո հարվածից այժմ խոյս տվեց
 նա անվնասեր,
 Թե ոչ՝ իսկույն քո կրծքի մեջ պիտ վարսեի ես ապրաստոր իմ նիզակը,
 Հայրդ այնժամ հարսանիքիդ փոխարեն քեզ պիտի թաղեր:
 Թող էլ ոչ ոք չհանդգնի լրբություններ կատարել սատ, իմ հարկի տակ,
 Կամ անվայել մի այլ վարմունք, քանզի արդեն հասկանում եմ
 ես ամեն բան
 310 Եվ լավ գիտեմ չարն ու բարին, մինչդեռ առաջ մանուկ էի ես մի անգետ:
 Բա՛վ է, որքան ես ամեն բան հանքերեցի մինչև այսօր և լավ տեսա՝
 Ինչպես մորթում եք իմ մալը, հացն եք լափում, խմում գինին
 իմ ատրաշեկ,
 Իսկ ինձ համար դժվարին է մեռումենակ կուլել այստեղ
 բազմության դեմ,
 Ոստի այլևս չհանդգնեք թույլ տալ վարմունք մի անվայել ու չարանենգ
 Կամ հարուցել նոր գծտություն, իսկ եթե դուք այժմ, հիրավի,
 Փափագում եք և միտք ունեք սուր պոլիմեծով սպանել ինձ,
 Այդ առավել կցանկանա ես, քանզի չե՞ որ ավելի լավ է՝ մահանամ,
 Քան թե տեսնեմ միշտ քարվականք, գործ անվայել ու զազրելի,
 Վիրավորանքն իմ հյուրերի, բռնաբարումն ստրուկ կանանց,
 320 Ստոր ու պիղծ անպատվությունն այստեղ, այս տանը գեղեցիկ»:
 Ասաց այդպես, և բոլորը մունջ մնացին, խոսք չասացին.
 Միայն որդին Դամաստորի՝ Ագելասը, բարբառեց անդ անազան.
 «Բարեկամներ, Տելեմարուն արդարացի խոսեց այստեղ,
 Հարկավոր չէ հիմա նրան պատասխանել թշնամաբար կամ անբարտիվ,
 Եվ թող ոչ ոք անարգ չսանի ու ձեռք չտա օտարական այս շրջիկին
 Կամ այլ մեկին ստրուկներից, որ դյուցազուն Ռոդիսեսի պալատում են,
 Բայց ես, ահա, Տելեմարին և իր մորը մի խոսք ունեմ գորովալի,
 Որը, կարծեմ, արտահան պիտի թվա նրանց արտին:
 Քանի դեռ ձեր հոգիներում, ձեր կրծքերում հույս կար իրոք,
 330 Որ Ռոդիսեսն ամենիմաց ետ կդառնա և իր տունը կգա մի օր,
 Զեզ բնավին չէր կարելի դատապարտել դանդաղման մեջ,
 Որով դուք մեզ, խոսնայրներին, այս տանն երկար պահում էիք,
 և արդարև՝
 Լավ կլիներ, եթե հանկարծ Ռոդիսեսը վերադառնար ու գար իր տուն,
 Բայց պարզ է այժմ և անկասկած, որ էլ երբեք նրա դարձը գոյս չի գա,
 Ոստի և դու հիմա գնա անդ քո մոր մոտ և համոզիր նրան արտանց՝
 Ամուսնանալ այն քաջի հետ, ով ամենից ազնվագույնն է, ով ավելի

Պոույզ կտա: Այնժամ և դու ուրախասիրտ կտիրանաս քո հոր գույքին
 Եվ կհրճվես կերուխտնով, իսկ մայրը քո ուրիշի տանն իր նոր գործը
 պիտի հոգա»:
 Այնժամ նրան պատասխանեց և խոսք ասաց Տելեմարսը խորիմաց.
 340 «Երդվում եմ քեզ, Ագելաս, հանուն Զևսի, հանուն հորս աղեւաների»
 Որն, երևի, Իթակեից հեռու և գուրկ կործանվել է կամ տարագիր
 Ծրջում է դեռ. ամուսնությունը ես իմ մոր չեմ արգելում, հակառակը,
 Դորդում եմ ես՝ մարդու գնալ, ում կցանկանա, ով անհամար ընձա կտա:
 Մինչ հակառակ իր ցանկության և կամ խոսքով՝ հարկադրական՝
 Ես չեմ կարող քշել տանից, աստվա՛ծ չանի, . . . այդպիսի գործ
 կատարեն»:
 Այդպես ասաց Տելեմարը, սակայն Պալլաս Աթենասը սեղեխներին
 Թաղեց անգուսպ ծիծաղի մեջ, խելքից հանեց, դարձրեց նրանց
 խելացնոր:
 Եվ սկսեցին նրանք անգուսպ մի հրոհրոց. դեմքերն իրենց
 այլանդակված՝
 Ոստում, լափում էին նրանք հում միսն անեփ, արյունաթոր,
 350 Աչքերն իրենց արցունքով էր լցված, սիրտը զգում էր վիշտ
 ու արհավիրք:
 Այդ վիճակում նրանց այնտեղ իր խոսքն ասաց Թեոկլիմենն
 աստվածատես.
 «Ո՛հ, թշվառներ, ի՞նչ ահեղի աղետ է արդ կամ արհավիրք
 վիճակվել ձեզ.
 Խոր խավարն է պատել ձեր դեմքն ու ճակատը, ձեր մարմինը
 ոտից-գլուխ:
 Ծուրջը թեղում է հատաչա՛նք, ձեր այտերն են արցունքի մեջ
 ու վշտածոր,
 Արյունով են ցողված պատերն, ամուր քիվերն ու բարավորն,
 Եվ ուրվական սուվերներով լիքն են գավիթն ու բակն ամբողջ,
 Որ սուրում են դեպ Էրեբոս անդնդախոր, իսկ երկնքից արևն արդեն
 Անհետանում է վերջապես, և տիրում է խավարն ահեղ ամենուրեք»:
 Ասաց այդպես, նրանք բոլորն հրոհրոցիցին ու ծաղրեցին նրան աստտիկ,
 360 Եվ նրանցից սկսեց խոսել Եվրիմաքը Պոլիբուլան.
 «Խելազա՛ր է շրջիկը այս՝ օտար երկրից դեռ նոր եկած,
 Պատանիներ՝ ու ծառաներ՝, պետք է դրան դորս վնդել իսկույն տնից,
 Թող որ գնա հրապարակ, երբ տեսնում է այստեղ միայն մույթ
 ու խավար»:
 Եվրիմաքին պատասխանեց ու խոսք ասաց Թեոկլիմենն
 աստվածափառ.
 «Ո՛վ Եվրիմաք, կարիք չկա, որ դու ինձ տաս ասաջնորդող՝ ուղեկիցներ,
 Փա՛ռք աստծո, ես աչք ունեմ, այլև ականջ, ունեմ նաև ոտքեր մի գույզ».

Կրօքունս կա վայել հոգի, որ տակաւի՛ն անվնաս է, նույնիսկ առույգ:
Ես դրանց հետ դուրս կգնամ, իսկ ձեր գլխին թափվելու է

Ժանտ արհավիրք,

Որից ոչ ոք սեղեխներից էլ չի կարող խույս տալ մի կերպ և կամ

փրկվել,

370 Քանզի նայիրտ, ամբարտաւան մարդիկ եք դուք և կատարում եք

շարունակ

Ողիսեսի ապարանքում մի խայտառակ, հանցավոր գործ

ու քարվականք»:

Այդպես ասաց և դուրս եկավ իսկույն տնից գեղեցկաշեն,
Պիրեոսի տուն նա գնաց, որ ընդունեց նրան սրտանց ու սիրավիր:

Մինչ սեղեխներն Տելեմաքին դարովելու նպատակով սկսեցին,

Իրար դեմքի անդ նայելով, ծաղրել նրա խեղճ հյուրերին:

Այդպես ոմանք ամբարտաւան ջահելներից խոսում էին կատակելով.

«Տելեմաքո՛ւ, մեկը չկա քեզ հաւասար՝ լկտի, լպիրշ իր հյուրերով,

Եվ ո՞վ է սա, որ մոտդ կա, շրջմովիկը այս մուրացկան,

Մի հարքեցող ու որկրամուլ, որ չգիտի և ոչ մի գործ, ոչ մի արհեստ,

380 Ինքը իսպառ եռանդազուրկ, բեռ է միայն երկրի համար.

Եվ կամ ո՞վ էր այն երկրորդը, որ գուշակող աստ ձեացավ լիրք ու լկտի:

Ե՛կ դու, լսի՛ր, ինձ հաւատա. բյուրապատիկ լավ կլինի և շահաւէտ,

Եթե գցենք այդ հյուրերին նավի վրա մեր բազմաթի

Եվ առաքենք դեպ Սիկելիա, դրանց համար վարձ կատանաս

դու ահագին»:

Այդպես նրանք խոսում էին, բայց Տելեմաքն արհամարհեց ամենը այդ

Եվ միմիայն, լուռ նայելով իր հոր դեմքին, սպասում էր նա անհամբեր,

Թե ե՞րբ պիտի ձեռք բարձրացնի լիրք, անամոթ սեղեխների գլխի վրա:

Այնժամ դատրիկն Իկարիոսի, Պենելոպեն խոհեմամիտ,

Դահլիճի մեծ մուտքին մոտիկ, նստած շքեղ իր բազմոցին,

390 Լսեց խոսքն ու ճոշանն ամբողջ, որ խոսեցին խոսնայրները

իր հարկի տակ:

Սեղեխները խնջույքի մեջ ճաշում էին հոհոալով,

Փարթամաճոխ ու ցնծաւէտ, քանզի չէ՞ որ մորթել էին շատ անասուն,

Սակայն ոչինչ չկար այնքան անհաճելի և ահավոր,

Որքան ընթրիքն, որ պիտ տային նրանց շուտով աստվածուհին

և քաջն հզոր,

Հանց հատուցում անդ կատարված լիրք գործերի ու մոլութանց:

Երգ քաւնմեկերորդ

ԱՂԵՂՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Աթենասը՝ պայծառաշյա աստվածուհին, Իկարիոսի չքնաղ դատրիկ

Խոհեմամիտ Պենելոպի սրտին դրդեց, ահավասիկ՝

Առաջարկել սեղեխներին շողշող երկաթն ու պերճ աղեղն,

որպես մրցանք,

Որ պիտ լինէր Ողիսեսի ապարանքում իբրև սկիզբ կոտորածի:

Եվ բարձրացավ Պենելոպեն օթևանի սանդուղներով այն բարձրաբերձ,

Այնուհետև փարթամ ձեռքով վերցրեց նա կոր, մեծ բանալին,

Պղնձակոտ և գեղեցիկ, կոթը կերտված վառ փղոսկրից,

Ապա գնաց ծառաների հետ միասին վերջին սենյակ,

Որտեղ պահված էին բազում և թանկարժեք գույքն ու գանձը թագաւորի՝

10 Ոսկի, պղինձ ու երկաթի անարարակերտ անթիվ գործեր:

Անդ կար աղեղ մի լայնալիճ և մի կապարճ նետերով լի,

Կային այնտեղ և վշտաբեր բյուրաբազում այլ փքիներ:

Ողիսեսին դրանք ընծա էին տրված Լակեդեմոն երկրում երբեմն՝

Պատահաբար այնտեղ եղած աստվածակերպ, քաջ Իփիտոս

Եվրիտյանից:

Նրանք միմյանց հանդիպեցին Մեսսենեում, քաջակորով Օրիսիլոքի

Գեղեցկակերտ ապարանքում: Ողիսեսը եկել էր հանց պարտահաւաք-

Մեսսենական ամբողջ ազգը պարտավոր էր վճարել պարտքն

առանց վեճի,

Քանզի երբեմն մեսսենացիք Իթակեից սև նավերով բազմաթիակ

Հափշտակել, տարել էին երեք հարյուր գլուխ ոչխար և հովիվներ:

20 Ողիսեսը, իբրև ջահել պատգամավոր, անցավ երկար ճանապարհն այդ,

Քանզի նրան առաքեցին իր հայրն և այլ խորհրդական ծերունիներն:

Իսկ Իփիտոսը փնտրում էր կորած ձիերն տասներկու շքեղ ճայիկ՝

Քուտակների հետ գեղեցիկ, նաև տոկուն շատ ջորիներ,

Որոնք հետո դարձան նրա եղերական մահվան պատճառ,

Երբ նա եկավ կորովալիր, գերահոջակ մեծ Հերակլես դյուցազնի մոտ,

Որ զավակն էր Ջևս զգոնի և գործել էր շատ սխրանքներ:
Նա ընդունեց իր մոտ նրան, բայց սպանեց իր հարկի տակ դաժանորեն՝
Չակնածելով ոչ երկյուղից աստվածների, ոչ տեղակից, որի վրա
Մեծարել էր նա իր հյուրին: Երբ սպանեց նրան այդպես,
Նա իր տանը ապօրինի յուրացրեց նրա ձիերն ամրամբակ:
Արդ, Իփիտոսն, իր ձիերին որոնելիս, անդ հանդիպեց Ողիսեսին
30 Եվ ընծայեց նրան աղեղն, որը առաջ կրում էր ինքն՝ Եվրիտը մեծ,
Բայց մեռնելիս թողեց աղեղն իր զավակին ապարանքում

իր բարձրաբերձ,

Իսկ Ողիսեսը իր կողմից տվեց նրան մի սուր սուսեր և մի նիզակ,
Որպես սկիզբ հյուրամեծար ծանոթության: Բայց իրար հետ այնուհետև
Սեղանակից չեղան նրանք, քանզի կանխեց Հերակլեսը՝ Ջևսի որդին,
Եվ սպանեց ապովածակերպ Իփիտոսին՝ Եվրիտոսի ազնիվ որդուն:
Նա էր տվել աղեղը անդ, բայց չվերցրեց Ողիսեսը աստվածազարմ
Այդ աղեղը, երբ սևաթույր նավի վրա մեկնում էր նա պատերազմի,
Այլ պահվում էր դա միշտ տան մեջ, հանց ընկերոջ լավ հիշատակ
մի սրտատենչ,

Եվ այն կրում էր Ողիսեսն միայն երկրում իր հայրենի:

40 Երբ թագուհին՝ չքնաղ կինը, խորդանցող եկավ հասավ,
Ելավ, կանգնեց կաղնի շենքին, որ շինել էր հյուսնը ճարտար.
Նա հոկել էր կոկ, հարթեցրել, լարով չափել ճշգրտորեն,
Դրել էր և պինդ դրանովք ու կախել էր դռներն ամուր և շողշողուն:
Այնտեղ ահա Պենելոպեն կտրեց չվանը օղակի,
Անցքը կոխեց պերճ բանալին, շարժեց, քաշեց դռան նիզը
Ու բաց արեց դռան փեղկերն, որոնք հանկարծ ահագնակի ճրճըռուսցին,
Ինչպես ցուլը բառաչում է մարգերի մեջ. այնժամ այդպես
Ծառաչեցին պերճ դռները պինդ բանալու այդ շարժումից:
Պենելոպեն կանգնեց բարձր պատվանդանին, որտեղ կային
պերճ սնդուկներ,

50 Իսկ դրանց մեջ պահված էին անուշաբույր շատ հագուստներ:
Եվ թագուհին պարզեց ձեռքը, վերցրեց աղեղն, որ կախված էր
այնտեղ սեպից

Ու փաթաթված պատյանի մեջ մի շողշողուն և գեղեցիկ:
Նստեց տիկինն իսկույն այնտեղ, իր ծնկներին դրեց աղեղն այդ սիրելի,
Ապա հանեց լայն աղեղը իր պատյանից և հառաչեց նա լայագին
Ու դառնադառն, իսկ երբ արդեն նա հագեցավ լաց ու կոծով,
Ծուռ վեր կացավ, գնաց դեպի ամբարտավան սեղեխները,
դեպի դահլիճն՝

Ջեռին բռնած ճկուն աղեղն ու պահոցը լրաքների՝ կապարճն ամուր,
Որտեղ կային բազմաբազում սուր պաքներ օրհասաբեր,
Իսկ նրա հետ նաժիշտները տանում էին մի մեծ սնդուկ,

Վ Որի մեջ կար բազմապիսի երկաթ, պղինձ, գեղք-գրահը թագավորի:
Երբ թագուհին՝ չքնաղ կինը, եկավ, հասավ խոսնայրներին,
Կանգնեց այնտեղ, ամրակառույց, բարձր դահլիճի շենքին մոտիկ.
Այտերն էին նրա ծածկված մի լուսափայլ, նուրբ շղարշով,
Երկու կողմից կանգնած էին նաժիշտները բարչացական:
Եվ փութապես բարբառելով՝ սեղեխներին անդ նա դիմեց և խոսք ասաց.
«Ինձ լեցեք, ով խոսնայրներ կորովալիր, դուք որ այստեղ

ու այս տան մեջ,

Երբ իմ սիրած ամուսինը բացակա է արդեն երկար, շատ ժամանակ,
Դուք հանապազ գբաղված եք կերուխոսում, խրախճանքով անօրինակ:
Եվ պնդում եք, թե այլ առիթ չկա դրան, այլ միմիայն այստեղ անվերջ
70 Դուք մրցում եք, թե ո՞վ ձեզանից ինձ հետ պիտի ամուսնանա

և ինձ տանի:

Ահավասիկ, կանչում եմ ձեզ մի մրցության, որ գործն իսկույն կորոշի.
Ես դնում եմ այստեղ ահա մեծ, լայնաղեղն աստվածազարմ Ողիսեսի.
Ով ձեզանից կարողանա ամուր ձեռքով լարը ձգել, թողնել ուժգին
Եվ պաքը շեշտ անցկացնել անցքով բոլոր, տասներկու տապարների,
Ես հենց նրա հետ կգնամ և կթողնեմ օթևանն իմ, այս տունը պերճ,
Թեպետ անչափ չքնաղ է սա, որտեղ, ավա՛ղ, անցել է իմ

կյանքը մատաղ,

Եվ դեռ, կարծես, տունն այս երկար պիտի հիշես, թեկուզ նույնիսկ
երազիս մեջ»:

Ասաց այդպես և պատվիրեց Եվմենուսին՝ խոզարածին աստվածային,
Սեղեխների առաջ հապճեպ դնել աղեղն և երկաթներն վառ, գեղեցիկ:
80 Խիստ արտասովեց Եվմենոսը, սակայն իսկույն նա կատարեց

հրամանն այդ,

Սրտանց ջայլեց և մյուս հովիվն, երբ որ տեսավ չքնաղ աղեղն
իր արքայի,

ու այս ասաց.

«Դո՛ւք, գոեհիկ ով պանդույրներ, որ միմիայն միշտ հոգում եք
ձեր առօրյան,

Ո՛հ, թշվառներ, ի՞նչ եք թափում արցունքն այդպես և թագուհու

սիրուն աղեկեզ

Չուր բորբոքում իր կրծքի տակ: Առանց այդ էլ նրա հոգին
Վշտահար է հիմա սաստիկ, քանզի կորել է ամուսինն իր սիրելի,
Ուստի և դուք լուռ նստեցեք, կերեք կամ դուրս կորեք իսկույն
Եվ անդ, դրսում, ջայլանք արեք: Գետնին դրեք աղեղը հարթ,
Որ աստ մրցեն խոսնայրները, բայց չեմ կարծում, որ այժմ հեշտիվ
90 Հնար գտնենք ձգել, լարել աղեղն հղկված ու ամրապինդ.

Քանզի բոլոր դյուցազնասիրտ քաջերի մեջ բնավ չկա այնպիսի մարդ,
Որպիսին էր Ռդիսևը: Նրան երբեմն ինքս տեսա
Եվ հիշում եմ, թեպետ իրոք ես մի մանուկ էի այնժամ»:

Ասաց այդպես, մինչդեռ ինքը իր սրտի մեջ նա հույս ուներ,
Որ ինքն անշուշտ կձգի լարն և կանցկացնի նետն անցքերով
վառ երկաթի,

Մինչ առաջինն հենց ինքը նա անդ իր վրա պիտի փորձեր
Հարվածն հուժկու ձեռքից ազնիվ Ռդիսևի, որին, նստած նրա տան մեջ,
Այնքան լսիրջ անարգել էր՝ գրգռելով նաև բոլոր ընկերներին:
Եվ բարբառեց այնժամ այնտեղ գործությունը Տելեմաքի.

100 «Ավա՛ղ, Չևսը Կրոնոսյան ինձ, կարծես թե, խելքահան է արել արդեն.
Ահավասիկ, գերահռչակ ու խորագետ մայրն իմ հայտնեց
աստ բացարձակ,

Որ նոր մարդու կմիանա և կթողնի նա տունը այս, գեղեցկաշեն,
Իսկ ես այստեղ հրճվում եմ արդ ծիծաղելով, հոգիս կարծես խելացնոր:
Օ՛ն անդր, շո՛ւտ, ժամն է հասել, դուք, խոսնայրներ, սկսեցեք
մրցանքը այդ.

Չէ՞ որ չկա այսպիսի կին երկրում ամբողջ աքեական,
Ո՛չ Արգոսում, Միկենեում, ո՛չ Պիլոսում ավազածիր ու սրբազան,
Ո՛չ ծովաշուրջ Իթակեում, ոչ Էպիրում սև ու ցամաք.

Դուք այդ գիտեք, կարիք չկա, որ դրվատեմ ես մորը իմ արժանագով:
Մի դանդաղեք այլևս հիմա և զանց արեք պատրվակներն ուշացնելու,

110 Բավական է, որքան այստեղ ձգձգեցիք դուք մրցության գործը վսեմ,
Ես ինքս ահա իմ ուժերը այս աղեղի մրցանքի մեջ պիտի փորձեմ:
Ա՛խ, եթե ես լարը ձգեմ, նետեմ սլաքն անցքի միջով երկաթների
Էլ այսուհետ ես բնավին չեմ վշտանա, որ մայրը իմ գերամեծար
Տունն այս թողեց և միացավ այլ մարդու հետ, այլ կմնամ
իմ հարկի տակ,

Եթե պարզվի, որ կարող եմ ես հայրական գեները շարժել
այժմ քաջաբար»:

Ասաց այդպես ու վեր թռավ, կանգնեց ուղիղ, ասպա հանեց իր վրայից
Ծիրանագույն ծածկոցն, ասպա ուսից գցեց սուտերը սուր:

Արագ փորեց նա մի խանդակ, մեջը ցցեց տապարները,
Որոնք հողում ամուր պնդեց, չափեց լարով, ուղիղ շարեց

120 Ու կոխ տվեց հողը ոտքով: Երբ այդ տեսան, շատ զարմացան,
Քանզի կարգին նա կատարեց այնպիսի գործ, որը երբեք չէր տեսել նա:
Կանգնեց ասպա նա շենքի մոտ և սկսեց փորձել աղեղն իր հայրական.
Ցնցեց աղեղն երեք անգամ՝ ճիգ թափելով մի կերպ լարել,
Երեք անգամ ձեռքից պոկվեց լարը ուժգին, բայց դեռ սիրտն էր
իր հուսալիր,

Ու կարծում էր, որ կձգի և կանցկացնի սլաքն անցքով երկաթների.
Գուցե իրոք չորրորդ անգամ աղեղի լարը նա ձգեր լարվածությամբ,
Եթե գլխով չաներ հայրը և ցույց չտար, որ աշխույժն իր նա ընդհատի:
Եվ բարբառեց այնժամ նրանց սուրբ կորովը Տելեմաքի.
«Վա՛յ ինձ, ուրեմն անգոր եմ ես ու հանապազ անփառունակ
պիտի մնամ

130 Եվ կամ գուցե դեռահաս եմ ու վստահ չեմ ես զորությանն իմ ձեռքերի,
Որ կվանեմ ես թշնամուն, երբ իմ վրա կովով նա գա նախահարձակ:
Այժմ արդեն դուք, որ ինձանից գերազանց եք կարողությամբ
ձեր քաջագոր.

Փորձե՛ք ահա լայն աղեղն այս, որ շուտ վերջ տանք մենք մրցույթին»:

Ասաց այդպես և լայն աղեղն իսկույն դրեց այնտեղ գետնին՝
Հենելով այն դռան հղկված ու ամրակոտ այն փեղկերին:

Ապա հապճեպ պերճ աղեղի ծայրին տնկեց արագաթիռ նա մի սլաք
Եվ շուտափույթ նորից նստեց այն բազմոցին, ուստեք առաջ
նա վեր կացալ:

Այնժամ նրանց անդ բարբառեց Անտինոսը Եվպիթածին.
«Բարեկամներ՛, մենք բոլորս այժմ կըսկսենք. ամեն մեկը թող վեր կենա

140 Եվ իր հերթին աջակողմից թող մոտենա, ուստեք լցնում են արդ գինին»:
Այդպես ասաց Անտինոսը, և այդ խոսքը հավանեցին բոլորնեքյան:
Հանդես եկավ նախ և առաջ Լիոդետը Էնոպածին:
Խոսնայրների գուշակն էր նա, նստում էր միշտ ընթեր շքեղ
սարկարանին,

Անդ բոլորից միայն սրան խիստ ատելի էին ոճիրն ու քարվականքն:
Չայրանում էր սեղեխների դեմ նա հանախ և նրանց գեխ արարքի դեմ:

Ահավասիկ, նա նախապես վերցրեց աղեղն ու սլաքը պղնձասուր,
Կանգնեց այնտեղ, շենքին մոտիկ, և սկսեց լայն աղեղը փորձել այդպես:
Լարը ձգել չկարեցավ. անփորձ էին նրա ձեռքերը նրբագույն

Եվ հոգնեցին այնտեղ շուտով, ուստի դիմեց և խոսք ասաց սեղեխներին:
150 «Բարեկամներ՛, չեմ կարող ես լարը ձգել. մեկ ուրիշը թող գա, վերցնի,

Մինչ աղեղն այս դեռ բազմաթիվ դյուցազունների սիրտն ու հոգին
Կխորտակի ու կկորզի, և բացի այդ՝ շատ ավելի լավ կլինի

Աստ մահանալ, քան կենդանի սնալ, իբր անհաջողակ այն գործի մեջ,
Հանուն որի հավաքվում ենք մենք ամեն օր և սպասում աստ օրնիրուն:

Գուցե շատերն իրենց սրտում հույս ունեն և հափուզված են,
Որ կտանեն Պենելոպե վե՛հ ամուսնուն Ռդիսևի,

Բայց երբ փորձեն լայնաղեղն այս և հասկանան՝ ի՛նչ քան է դա,
Ապա շուտով, պերճ ընծաներ խոստանալով, պիտի փնտրեն աքեացի
Գեղեցկազգեստ այլ հարսնացու, իսկ տիկինն այս կամուսնանա
այն քաջի հետ,

160 Ով գերազանց ընծաներ տու և ում բախտն է վիճակել այդ արդարացի»:
Ասաց այդպես և լայնադեղն իսկույն դրեց այնտեղ գետնին՝
Հենելով այն դուռն հղկված և ամրակոտ այն փեղկերին:
Ապա հապճեպ ծանր աղեղի ծայրին տնկեց նա մի սլաք
Եվ շուտափույթ նստեց նորից այն բազմոցին, ուստեք առաջ

նա վեր կացավ:
Եվ Անտիոնոսն աղաղակեց զայրագնարար, անվամբ կոչեց
ու խոսք ասաց.

«Ո՛վ կողես, այդ ի՞նչ խոսք էր, որ դուրս թոսավ քո շորթերից.
Սարսափելի և դաժան խոսք, որն ես, իրավ, ամաչում եմ լսել անգամ:
Ինչպե՞ս է որ այս աղեղը մեծ քաջերի սիրտն ու հոգին
Պիտ խորտակի և կամ կորզի, նրա՞ համար, որ դու ձգել չկարեցար:

170 Ոչ, չի ծնել քեզ քո մայրը գերամեծար, իբր այնպիսի մի զավակի,
Որ քաջաբար օգտագործես դու աղեղն ու սուր սլաքը.
Բայց կան այստեղ այլ սեղեխներ մեծահոշակ, թող գան,
ձգեն լարը ընտիր»:

Ասաց այդպես և պատվիրեց նա այժարած Մելանթեսին.
«Ո՛վ Մելանթես, վեր կաց շուտով, կրակ վառիր դու թեժ և թունդ
Եվ առընթեր դիր մի նստիք, որի վրա մորթը փոխիր դու լայնալիր,
Այլև գնա և պահեստից փութապես բեր ճարպի մի գունդ:
Թող ճարպն հաղեն պատանիներն, թող տրորեն աղեղի լարն,
Որ լայնալիճն ապա փորձենք և ավարտենք այս մրցույթը հաղթանակով»:
Ասաց այդպես, և Մելանթեսը անհապաղ վառեց այնտեղ կրակն անշեշ,

180 Իսկ առընթեր բերեց դրեց նա մի նստիք, դրա վրա մորթը փռեց
Եվ շուտափույթ նա պահեստից վերցրեց, բերեց ճարպի մեծ գունդ:
Արդ, հայեցին ճարպն հոմանիք և սկսեցին փորձել հերթով աղեղը այն,
Սակայն ձգել չկարեցան, թեպետ անչափ ճիգ թափեցին, ուժ և կորով:
Մինչ տակալին հանդես չեկան ո՛չ Եվրիմաքն աստվածային,
ո՛չ Անտիոնոսն,

Որ առաջնորդ էին բոլոր սեղեխներին՝ դիրքով հզոր ու գերազանց:
Այդ միջոցին խոզարածը և եզնարածն աստվածազարմ Ռոփսուսի
Տնից հանկարծ դուրս գնացին՝ մեկը մյուսին հետևելով,
Եվ դուրս գնաց նույնպես ինքը՝ Ռոփսուսը աստվածակերպ:
Երբ դուրս եկան նրանք այնտեղ, բակի ետև, դարպասից դուրս,

190 Ռոփսուսը նրանց դիմեց և խոսք ասաց գորովալիր.
«Դո՛ւք, եզնարած և խոզարած, ուզում էի խոսք ասել ձեզ,
Սակայն առե՞մ, թե՞ չասեմ այդ, թեպետ սիրտս ներշնչում է, որ ես ասեմ:
Ինչպե՞ս արդյոք դուք կօգնեիք Ռոփսուսին, եթե հանկարծ
նա այստեղ գար,
Եվ կամ եթե մի ոմն աստված նրան բերեր, և նա կանգներ
հիմա ձեր դեմ,

Խոսնայրների՞ն դուք կօգնեիք անխարդախ, թե՞ Ռոփսուսին:
Արդ, ասացեք, ինչպե՞ս է այդ ձեր սրտի մեջ այժմ ներշնչում
ձեզ ձեր հոգին»:

Եվ եզնարած նախորդն իսկույն պատասխանեց ու խոսք ասաց.
«Ո՛հ, իցի՛վ թե, դո՛ւ Ջև՛ս մեր հայր, այդ թեք փափագը կատարես.
Թող որ նա գա, դյուցազունն այդ, կամ թող աստվածն այստեղ բերի
մեր արքային,

200 Եվ դու այնժամ նոր կիմանաս իմ կորովը և գորոթյունն իմ ձեռքերի»:
Նույնպես և նա, Եվմեոսը, ջերմ աղոթեց իսկույն անմահ աստվածներին,
Որ ետ բերեն ամենիմաց Ռոփսուսին դեպի իր տուն:
Երբ որ նրանց միտքն ու հոգին լավ իմացավ անդ Ռոփսուսը իմաստուն,
Կրկին նրանց, այդ երկուսին, այնտեղ դիմեց և խոսք ասաց.
«Ե՛ս եմ, որ կամ, իմ տանն եմ ես՝ բյուր-բյուրավոր ժանտ աղետները
հանդուրժած,

Քսան տարի անցնելուց ետ՝ վերադարձա ես իմ երկիրն հայրենավանդ,
Բայց տեսնում եմ, որ իմ բոլոր ծառաներից դուք եք միայն,
որ սրտատենչ

Փափագում եք իմ գալստյան, իսկ մյուսներից դեռ չեմ լսել ամենևին,
Որ աղոթքով ցանկանային իմ գալուստը, իմ վերադարձը դեպի տուն:

210 Արդ, ես կասեմ ձեզ երկուսիդ, թե ի՞նչ է պետք, ի՞նչ կլինի այսուհետև:
Եթե աստվածն իմ ձեռքով այս հաղթահարի սեղեխներին ամբարտալան,
Կամ ուսնացնեմ ձեզ երկուսիդ ու ձեզ կտամ նաև առատ գույքեր
ու գանձ,

Տուն կշինեն ես ձեզ համար առանձնակի, իմ տան կողքին,
Եվ դուք կապրեք, ինձ հարազատ, իբրև ընկեր՝ կամ հանց եղբայր
Տելեմաքին,

Իսկ որպեսզի դուք ինձ հիմա լավ ճանաչեք և համոզված լինեք սրտով,
Ահավասիկ, կհայտնեն ձեզ և ցույց կտան մի այլ նշան.

Ահա սպին, որ ինձ ճերմակ իր ատամով հացրեց վարազն,
Երբ որդոց հետ Ավտոլիկի որս անելու ես գնացի դեպի Պառնաս:
Այդ անկող՝ մի կողմ քաշեց նա ցնցոտին, նշեց սպին իր հողանի,

220 Եվ երբ տեսան նրանք սպին, ճանաչեցին բացեիքաց,
Հեծեծացին անդ լալազին ու ձեռքերով փաթաթվեցին Ռոփսուսին
ամենիմաց

Եվ գրկեցին, նրա գլուխն և ուսերը համբուրեցին սիրակարոտ:
Ռոփսուսը նույնպես հուզված ջերմ համբուրեց նրանց գլուխն ու ձեռքերը:
Այդպես նրանց ջաչլանքի մեջ սխտի թողներ մայր մտնող լույսը Արևի,
Թե Ռոփսուսը ձայն չտար և չընդհատեր լացուկոծը այդ ընդհանուր.

«Ծո՛ւտ վերջ տվեք հեծեծանքին ու ջաչլանքին, մի գուցե այժմ
մեկնումեկը
Դուրս գա տնից, մեզ նկատի և ներս գնա ու բոլորին գործը պատմի:

Արդ, ներս գնանք, բայց ոչ մեկտեղ ու միասին, այլ միասնի.
Նախ ես, ապա ներս եկեք դուք, բայց ուշադիր դուք հետևեք իմ նշանին:
280 **Բողոքեքյան այստեղ դրանք՝ սեղեխները մեծահոշակ,**
Չեն ցանկանա, հարկավ, ինձ տալ լայն աղեղը և կապարճն
իր պաքներով,
Ուստի աղեղն, ով խոզարած աստվածային, վերցրու և բեր
դու տան միջով
Եվ ինձ հանձնիր ու այս ձեռքիս, նաև կանանց փութանակի
դու պատվիրիր,
Որ ամրապինդ փակեն, կողպեն նրանք այնտեղ իրենց դռները սենյակի:
Եթե հանկարծ ներսից լսեն ճիչ, աղաղակ կամ հեծեծանք
տղամարդկանց՝
Մեր գավիթում կամ բակի մեջ, թող դեպի բակը դուրս չգան,
Այլ թող այնտեղ մունջ ու լռիկ նստած մնան շուրջը իրենց աշխատանքի:
Իսկ քեզ, ահա, Փիլեսոնու աստվածակերպ, պատվիրում եմ. դուռը բակի
Դու սողնակով շուտով փակիր և չվանով այն փութաթիր,
ամուր կապիր»:

240 **Այդպես ասաց, քայլեց, գնաց նորից տունն իր գեղեցկաշեն,**
Ապա նստեց այն նստիքին, ուստեք առաջ նա վեր կացավ,
Եվ ներս եկան հետո հովիվ ծառաները աստվածագարն Ողիսուսի,
Մինչդեռ աղեղն էր իր ձեռքում շարժում, փորձում Եվրիմաքոսը
անդադար,
Տաքացնում էր այստեղ-այնտեղ վառ կրակով, քամսում էր ճարպը լարին,
Բայց և այնպես չկարեցավ լարը ձգել. հուզվեց սրտով նա իր ազնիվ
Եվ գայրացած աղաղակեց ու այս խոսքը սրտակոտոր ձայնով ասաց.
«Վա՛յ ինձ, ալվա՛դ, վշտացած եմ և՛ իմ բախտի, և՛ բողոքիդ.
բախտի համար.
Ոչ թե միայն նրա համար եմ ես հուզված, որ զրկվեցի հարսանիքից,
Թեպետ և դա ցախլալի է (չստ կան, իրավ, աքեացի չքնաղ կանաչք
250 **Ծովապարփակ Իթակեում ու այլևայլ քաղաքներում մեզ հարակից)**
Այլ նաև որ կարողությամբ այնքան ենք մենք նվաստագույն,
թույլ ու տհաս,
Քան Ողիսուսն աստվածային, որ չենք կարող ձգել այս պինդ
աղեղի լարն,
Ուրեմն այս մեր քարվականքը պիտ իմանան սերունդները
հետագայում»:
Եվ Անտիոնոսն Եվափթածին այսպես նրան իր խոսքն ասաց.
«Ո՛չ, չի կարող այդ պատահել, Եվրիմաքոս, այդ նաև դու
չստ լավ գիտես:
Դու տե՛ս, այսօր ողջ ազգի մեջ տոն է, մի սուրբ, ընդհանուր տոն.
Եվ, հիրավի, ինչպե՛ս պիտի այս վիճակում լարը ձգե՞ք լայն աղեղի:

Հանգիստ թողնենք աղեղն այստեղ, տապարներն էլ թող աստ մնան,
 Քանզի պարզ է, կարծում եմ ես, որ ոչ մի մարդ այստեղ չի գա
 և չի տանի

260 **Այդ ամենը ասարանքից Լաերտածին Ողիսուսի:**
Ուրեմն՝ օն ա՛դր, թող որ լցնի գինեմատույցն այժմ բաժակները
լեւի-լեցուն,
Որպեսզի մենք հեղում անենք, իսկ աղեղը բոլորածն առայժմ թողնենք:
Սոսալոտյան թող այժարած Մելանթոսը փութանակի
Այժեր բերի, հանց պատրուճակ, լավագույնները հորանից:
Մենք կզոհենք թիկնամսելը քաջաղեղ Ապոլլոնին
Եվ կսկսենք փորձել աղեղն ու կավարտենք այս մրցությունն»:

Անտիոնոսն այդպես ասաց, նրանց այդ խոսքն հավանելի ու լավ թվաց:
 Բանբերները ջուր բերեցին և ձեռքերին նրանց հապճեպ անդ լցրեցին,
 Պատանհները խմիչքով լի լցրեցին սարկարանը մինչև բերան,
270 **Հեղում արին և ըմպակները ամենքին բաժանեցին:**
Այդպես, հեղումն ավարտելով, կուշտ խմեցին, որքան որ սիրտն էր
փափագում,
Բայց Ողիսուսն ամենիմաց, լի նենգանքով, դիմեց նրանց և խոսք ասաց.
«Արդ, ինձ լսեք, մեծահոշակ, վե՛հ թագուհու դուք խոսնալուներ,
Չե՞զ կասեմ այն, ինչ որ սիրտն է ինձ ներշնչում իմ կրծքի տակ.
Աղերսում եմ, մանավանդ ձեզ, ո՛վ Եվրիմաք, ո՛վ Անտիոնոս
աստվածակերպ,
Դու որ այդպես այդ ասացիր և հայտնեցիր աստ քո խորհուրդը
իմաստուն՝
Թողնել մրցանքը աղեղի և գործն հանձնել աստվածների
կամքին միայն,
Որ հաղթությունն առափոտյան նա՛ վաստակի, ում որ կտա
ինքը աստված:
Բայց նաև ինձ դուք տվեք այժմ աղեղն հղկված, որպեսզի գեթ
ձեր առաջ արդ
280 **Եվ ես փորձեմ ուժը ձեռքիս ու կորովն իմ, որ իմանամ՝ դեռ կա՞ արդյոք**
Չորությունն այն, ինչպես առաջ դա կար մարմնիս անդամներում,
Թե՞ անխնամ, իմ տանջալից թափամտան մեջ, խորտակված է
իմ ուժն իրոք».
Ասաց այդպես, վրդովվեցին նրանք բոլորն ամբարտապան,
Խիստ վախեցան, որ մի գուցե հանկարծ ողորկ աղեղի լարը նա ձգի,
Իսկ Անտիոնոսը գոռոռաց ու խոսք ասաց հայհոյանքի.
«Ո՛հ, դու շրջիկ թշվառական, հիմա՛ր, քո մեջ խելքի նշույլ անգամ չկա,
Եվ մի՞թե քեզ բավական չէ, որ այժմ այստեղ, քաջերիս հետ
մեծահոշակ,

Հանգիստ հրճվում էս խնջույքում ու քո բաժինն էլ ստանում էս լիովի:
Եվ բացի այդ՝ լսում էս մեզ, մեր ճառերը: Մինչդեռ երբեք ոչ մի մտրիկ
290 Չի լսել մեզ և մեր խոսքը և չի բազմել մեր մեջ այսպես ու դեմատդեմ:
Այդ մեղրածոր գինի՛ն՝ քեզ այժմ խելքից հանեց, հանց կուրացնում է
չատերին,

Ով ազատ է և որկրամուլ, ով խմում է քաղցր գինին շատ անկանոն:
Նույն այդ գինին մի ժամանակ խելքից հանեց կենտավրոսին
փստապսակ՝

Եվրիտիոնին՝ մեծահոգի Պիրիթոոսի ապարանքում:
Լապիթներին՝ հշուր էր եկել, մինչ մտակույր արեց նրան քաղցր գինին,
Նա մոլեգնեց ու բորբոքեց Պիրիթոոսի տանը հուժկու կոխով ու կազ:
Վիշտը տիրեց հերոսներին, հարձակվեցին, դուրս քաշեցին նրան տնից,
Ապա հապճեպ սուր պղնձով քիթն ու ականջը կտրեցին,
Եվ, խելագուրկ, նա հեռացավ այդ հյուրընկալ ապաստանից,

300 Գնաց՝ սիրտը շամբշանքով լի և խենթի պես հոգետոշոր:
Այդպես ծագեց թշնամանքը կենտավրոսների ու այդ հոգոր քաշերի մեջ:
Գինեմուլ էր նա չափազանց, և իր գլխին ինքն էլ թափեց
մահ ու փորձանք:

Եվ քեզ նույնպես ժանտ աղետներ գուշակում եմ էս չարագույժ,
Եթե ձգես լարն աղեղի, աստ օգնություն կարեկցական էլ չես գտնի,
Քեզ սև նավով էս կողարկեմ դեպ Էքետոսն, այն թագավորը
խուժադուժ,

Որ մահապարտ մարդկանց համար արհավիրք է կործանարար.
Նրա ձեռքից դու էլ երբեք չես ազատվի: Տեղդ նստիր դու այժմ
հանգիստ,

Գինին խմիր և մի մտիր մրցության մեջ քաշերի դեմ այս պատանին»:
Բայց առարկեց նրան այնժամ Պենելոպե՛ն խոհեմամիտ և այս ասաց.

310 «Ո՛չ, Անտինոոս, լա՛վ չես անում, անարդար էս վարվում այստեղ,
Որ անարգում էս հյուրերին Տելեմաքի, որոնք գալիս են նրա տուն,
Կամ կարծում էս, որ եթե սա, իր ձեռքերի ուժին վստահ,
Ողիսեսի մեծ աղեղի լարը ձգել կարողանա,
Ապա ուրեմն ինձ կտանի նա իր տունը, և կլինեմ էս կրան կին,
Մինչդեռ այդ միտքը նա չունի, չի մտածում նա այդ մասին:
Թող որ բնավ ձեզնից ոչ ոք այս առիթով չվշտանա.

Ծարունակեք խնջույքը ձեր, այդ անվայել գործը երբեք գլուխ չի գա»:
Այնժամ նրան իր խոսքն ասաց և առարկեց Պոլիքոսյան Եվրիմաքը.

«Ո՛հ, դատրիկդ Իկարիոսի, Պենելոպե դու խելացի,
320 Մենք չենք կարծում, որ իրոք նա քեզ կտանի. գործ կլինեք
դա անարժան,

Այլ միմիայն ամաչում ենք մենք ճոշանքից տղամարդոց ու կանացի.
Թերևս մի օր աքեչանց մեջ ստոր մի մարդ, մի լրբեճի, խոսի այսպես.

Նվաստագույն բազում մարդիկ խոսնայր դարձան մի դյուցազուն
քաջի կնոջ,

Սակայն նրանք անգոր եղան լարը ձգել նրա հղկված, մեծ աղեղի,
Մինչդեռ եկավ մի շրջմուխկ, մի խեղճ մտրիկ, լարը ձգեց,
Այլև վաքն հեշտ անցկացրեց անցքի միջով երկաթների,
Այդպես կասեմ, և մեզ համար դա կլինի մի առականք ամոթալի»:

Եվ խելացի Պենելոպե՛ն այսպես նրան անդ առարկեց ու խոսք ասաց.
330 «Եվրիմաքո՛ս, ազգերի մեջ ավելի շուտ փստագուրկ են նրանք, ովքեր
Չեն ամաչում անվերջ վատնել տուն ու տեղը մեծահոշակ մի հերոսի,
Իսկ այստեղ այժմ ի՞նչ էս տեսնում դու խաջտատակ կամ անարժան,
Մինչ այս շրջիկն է, հիրավի, քաջահասակ և պնդակազմ,
Եվ ասում է նա, ինքնաբանձ, որ գավակն է ինքը ազնիվ ծնողների,
Ուստի նաև նրան տվեք աղեղն հղկված, տեսնենք՝ գործից
ի՞նչ դուրս կգա,

Սակայն անա հայտնում եմ ձեզ, և այդ խոսքը կկատարվի.
Իրոք, եթե այժմ նա ձգի լարն աղեղի, և Աստլոնն փառք տա նրան,
Փարթամ զգեստ կհագցնեն իսկույն նրան, կտամ բաճկոն
ու պատմունճան,

Կնվիրեմ սուր մի նիզակ, իբրև սրաշտպան ընդդեմ մարդկանց ու շների,
Կտամ նրան երկապոյրի սուր և ոտքերի համար մույկեր գեղեցկափայլ

340 Եվ կառաքեմ նրան այնտեղ, ուր փափագում է նա սրտանց»:
Մինչ իր մորը պատասխանեց և խոսք ասաց Տելեմաքոսը խորինաց.
«Մա՛ր իմ, ոչ ոք աքեչանց մեջ այժմ չի կարող տիրել, իշխել
այս աղեղին.

Ում կամենամ, էս այն կտամ կամ կմերժեմ, ինձնից բացի,
իրավունքն այդ

Ոչ ոք չունի, ո՛չ քարքարոտ Իթակեի իշխանները արժանավոր,
Ո՛չ էլ նրանք, որ իշխում են Էլիսի լայն ու ձիաբույժ կղզիներին:

Ոչ, դրանցից բնավ ոչ ոք ինձ չի կարող արգելք լինել, եթե էս տամ
Կամ նվիրեմ Ողիսեսի մեծ աղեղը այս շրջիկին, թեկուզ ամառիշտ,
Բայց դու գնա քո սենյակը, գործդ հոգա այնտեղ հիմա

Եվ հետևիր քո գործվածքին ու ուսույնին, հրամայիր ծառաներին,
350 Որ աշխատանքը կատարեն, իսկ աղեղը տղամարդկանց գործն է
միայն,

Մանավանդ իմ, և իմ տան մեջ էս եմ միայն իշխող տերը իրավագոր»:
Ասաց այդպես, Պենելոպե՛ն, խիստ զարմացած, իր սենյակը
իսկույն գնաց.

Որդու ազդու և խելացի խոսքը խորունկ նրա հոգու մեջ թափանցեց:
Երբ որ այդպես նա բարձրացավ անդ, վերևատուն, նածիշտ կանանց
հետ միասին,

Ջայլեց սրտանց և ջերմ ողբաց սիրակարոտ իմ ամուսին Ողիսեսին,

Մինչև որ քունն անուշաբույր նրա աչքին ցողեց խածակն Աթենասը:

360 Իսկ կոր աղեղն վերցրեց տարավ Ռոյսուսին խոզարածը աստվածային,
Գոռգոռացին տան մեջ իսկույն սեղեխները բոլորեքյան,
Եվ ոմանք էլ՝ պատանհներն ամբարտավան, աղմուկելով այս ասացին.
«Ո՛ր ես տանում կոր աղեղը, ո՛վ խոզարած դու առեղի և գո՛հիկ.
Վայրենամի՛տ, քեզ կլափեն խոզերիդ մոտ քո շները արագավազ,
Որոնց այնտեղ դու ես սնել, մինչ օգնություն հովիվներից քեզ չի լինի,
Եթե միայն Ապոլլոնի, աստվածների ողորմությունը մեզ հասնի»:
Այդ ասացին, աղեղն իսկույն խոզարածը դրեց գետնին,

ուր կանգնած էր.

Ահաբեկվեց նա բազմամբոխ գոռգոռոցից, որը տան մեջ
թնդաց այնտեղ,
Բայց մյուս կողմից Տելեմաքոսն աղաղակեց և խոսք ասաց սպառնալից.
«Հայրիկ, աղեղն առաջ տար շուտ և մի լսիր դու ամենքին,
Թե ոչ՝ իսկույն, թեպետ քեզնից կրտսեր եմ ես, կվորնդեմ

քեզ դեպի դաշտ

Ու քարերով կհարվածեմ, քանզի քեզնից զորավոր եմ ես իսկապես.

370 Ա՛յս երանի այս իմ ձեռքով ու զորությամբ նույնքան լինեմ

ես գերազանց

Սեղեխներից բոլորեքյան, որոնք լցված են, ավադիկ,
մեր տանն այսպես.

Այնժամ անշուշտ զայրագնաբար մեր տնից դուրս կքշեի ես շատերին,
Որոնք այստեղ արդ մոլեգնում են խայտառակ և հորինում միշտ
քարվականք»:

Ասաց այդպես, խոսնայրները նրա վրա հրոհրոացին ծանակելով,
Բայց մեղմացավ նրանց դաժան վրդովմունքը Տելեմաքի արարքի դեմ,
Մինչ խոզարածը տան միջով վերցրեց տարավ աղեղն այնժամ,
Տարավ, կանգնեց նա առընթեր և խելացի Ռոյսուսի ձեռքը դրեց,
Ինքը ապա կանչեց դայակ Եվրիկլիային և խոսք ասաց.

«Տելեմաքն է պատվիրում քեզ, ով Եվրիկլիա դու խորիմաց,

380 Որ ամրապինդ փակես, կողպես իսկույն դռները սենյակի.
Եթե մեկը ներսից լսի ճիչ ու աղմուկ մեր բակի մեջ կամ հառաչանք
Տղամարդկանց, թող դեպի բակը դուրս չգա բոլորովին,
Այլ թող այնտեղ մուկն ու լոկն նստեն միայն շուրջը իրենց

աշխատանքի»:

Նա բարձր ասաց, խոսքը այդ այն դայակի սրտին ազդեց,
Փակեց դռները սենյակի, և բազմաթիվ ծառաները անդ մնացին:
Փիլետիոսն էլ վեր կացավ անդ սուսուփուս և շուտ տնից թռավ դուրս,
Հապճեպ փակեց նա ամրապինդ պարսպապատ բակի դարպասն:
Գավիթում կար մի պինդ չվան, կոր նավերի կտռանն էր պիրկ.

Փիլետիոսը դրանով բակի դուռը ամուր փակեց ու ետ դարձավ,
390 Գնաց նորից նստեց այնտեղ, այն բազմոցին, ուստեք առաջ

նա վեր կացավ,

Ռոյսուսին ուղեց հայացքն իր անբթիթ: Մինչ Ռոյսուսը մանրախույզ
Ջննում, քննում էր աղեղը, շուտ էր տալիս այս ու այն կողմ, որ իմանա՝
Արդո՞ք եղջյուրն որդ չի կերել, քանի տերը բացակա էր հար ու երկար:
Սեղեխները նայում էին միմյանց դեմքին, և ոմանք էլ խոսում էին.
«Սա, երևի, այսօրինակ աղեղների մի հին վարպետ է քաջավարժ,
Եվ կամ գուցե սա իր տանը ճիշտ այսպիսի մի լայնաղեղ պահած ունի,
Կամ միտք ունի սուկ այդպիսին ինքը սարքել: Տեսե՛ք՝ ինչպես,

ահավափկ,

Ծարտարակի ամեն կողմից զննում է այն. քաջատեղյա՛կ է շրջմովիկն»:
Իսկ ոմանք էլ, պատանհներն ամբարտավան սեղեխներից, ծաղրում էին.

400 «Իցի՛վ թե սա, օտարականն այս մուրացիկ, միշտ այսպիսի

բախտ ունենա,

Ինչպես հիմա լարն աղեղի անշուշտ ձգել կկարենա»:

Այդպես ահա խոսում էին խոսնայրները, մինչ Ռոյսուսը խելացի,
Վերցրած աղեղն հզոր ու մեծ, զննում էր այն ճարտարակի

ու խորիմաց,

Եվ ճիշտ ինչպես վարպետն հմուտ, որը երգում և նվագում է կիթառով՝
Ծարտարակի ոլորելով պիրկ աղիքը գեր ոչխարի,
Հեշտով կապում է կիթառի նոր սեպերին՝ երկու կողմից լարերը ձիգ,
Այդպես հեշտով Ռոյսուսը ձգեց լարը այն մեծագույն, լայն աղեղի,
Իսկ երբ իր աջ ձեռքով բռնեց, փորձեց լարը նա փութապես,
Ջնգաց լարը և զի հնչեց, ինչպես հնչել երգն է հնչում ծիծեռնակի:

410 Վիշտը պատեց սեղեխներին, և այլալվեց, փոխվեց գույնը նրանց դեմքի,
Իսկ Ջևան համկարժ հայտնաբերեց իր նշանը. նա որոտաց որոտաձայն:
Խորունկ խնդաց Ռոյսուսը աստվածագարն, բազմաշարշար,

Քանզի տեսավ և հասկացավ նա նշանը նենգ Կրոնոսի հզոր որդու:
Եվ նա վերցրեց անդ, սեղանի վրա ընկած, սուր սլաքը արագաթիտ,
Թեպետ այն խոր կապարճի մեջ լցված էին այլ սլաքները բազմաթիվ,
Որոնց ուժը իրենց վրա խոսնայրները պիտ փորձեին այնտեղ շուտով:
Արդ, սլաքն այդ ձեռքով վերցրեց, լարը դրեց ակոսի մեջ
Եվ տեղնուտեղն, իր նստիքին նույնիսկ նստած, նա արձակեց՝
Նետն ուղեղով դեպի նշանն և բնավին չվրիպեց,

420 Այլ սլաքը պղնձակուտ թռավ, անցավ անցքի միջով տապարների,
Առաջինից մինչ վերջինը: Ռոյսուսը Տելեմաքին այնժամ ասաց.
«Տելեմաք՛ս, տե՛ս, շրջիկը քեզ խայտառակ չարեց՝ տանդ

հար նստելով,

Չշեղվեցի ես թիրախից ու նշանին զարկեցի ճիշտ և բացի այդ՝
Աղեղի լարը ձգելիս չտանջվեցի. ուրեմն ողջ է իմ կորովը,

Ուստի իրոք արժանի չեմ անարգանքին, որ տալիս են ինձ հոմանիք:
Սակայն արդեն ժամն է հասել, արեւոցոց պիտ ընթրիք տանք

դեռ արևով,

Որպեսզի գեթ այնուհետև, առաջվա պես, կրկին հրճվենք սիրատենչիկ
Երգ ու պարով և կիթառով, որ պատմում ենք խնջույքի»:

Սասց այդպես և հոնքերով նշան արեց փութանակի Տելեմաքը՝

430 Աստվածագարս՝ Ողիսևսի սիրած որդին, գոտեպնդվեց իր սուր թրով,
Ջեռքը առավ տեգ-նիզակը երկայնաստովեր, ապա իսկույն
Կանգնեց կողքին իր ծնողի՝ հագած գեներ պղնձակուռ և շողշողուն:

Ե Ր Գ Ք Ա Վ Ն Ե Ր Կ ՈՒ Ե Ր Ո Ր Դ

ՍԵՂԵՆՆԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Եվ Ողիսևսն ամենիմաց հանեց, գցեց իր ցնցոտին,
Վերցրեց աղեղն ու կապարճը, որը լիքն էր պաքներով,
Թուսվ, կանգնեց բարձրը շենքին, պաքները թափեց գետնին,
Անդ իր առաջ, ոտքերի մոտ, ապա դիմեց խոսնայրներին

ու բարձր սասց.

«Ուրեմն այսպես, կատարված է հիմա արդեն մրցությունը դժվարագույն.
Արդ, կփորձեմ մի այլ թիրախ, որին երբեք և ոչ մի մարդ

չի զարկել դեռ.

Գուցե դիպցնեմ ես անվրեպ, եթե միայն Ապոլլոնը փառքը տա ինձ»:

Սասց, ոտդեց նա դառնավեր սուր սլաքը Անտիոնոսին.

Սա այդ պահին, ոսկի բաժակը գեղեցիկ ու կրկնականթ

10 Ջեռքին բռնած, բարձրացնում էր, տանում դեպի բերանը յուր,
Որ մեղրածոր գիճին խմի և բնավին չէր մտածում մահվան մասին:

Ո՞վ կարող էր խորհել նույնիսկ, թե դյուցազուն, խնջույք անող

բազում մարդկանց

Բազմության դեմ սուկ մի անհատ, թեկուզ լինի նա գերազոր

և քաջասիրտ,

Կհանդգնի սփռել սև մահ և հորինել դաժան օրհասը ամենքի:

Նշան բռնած Անտիոնոսի հենց կոկորդին՝ Ողիսևսը նետն արձակեց.

Սուր պղինձը նրա փափուկ վզի մեջը խորունկ վարավեց ու դուրս թռավ.

Նա խորտակվեց, թեքվեց մի կողմ, ձեռքից բաժակն իսկույն ընկավ,

Ու մարդկային հոժ արյունի վարար շիթերն իսկույն կեթ

Դուրս ժայթքեցին ըռունգերից, ոտքով զարկվեց նա սեղանին,

20 Որ դըրրդաց ու շուտ եկավ: Գետնին թափվեց ուտեստն ամբողջ,

Միսն ու հացը կեղտոտվեցին. տան մեջ թնդաց իրարանցում,

աղմուկ ու ճիչ:

Գոռգոռացին սեղեխները, երբ որ տեսան ինչպես քաջը

ընկավ տապաստ.

Բազմոցներից շուտ վեր թռան և ահաբեկ վազվզեցին դահլիճի մեջ: Որոնելով՝ նայում էին գեղեցկակերտ այն պատերին և ամենուր, Սակայն չկար և չգտան այնտեղ վահան, սուր ու միզակ,

տեղ ամրակոտ,

Ուստի խոսքով ծանրացաւում դարովեցին Ռոխուսին ամենիմաց. «Հե՛ն, շրջվո՛ւի՛կ, լսի՛ր՝ զգործ է՛՝ նետահարել դիցասնունդ մեծ իշխանի, էլ մրցոյթյուն դու չես տեսնի, մոտեցել է արդեն մահո՞ օրհասաբեր, Մեր մարդկանցից սպանեցիր դու հերոսին ամենամեծ և անվանի.

30 Տե՛ս, ինչպե՛ս կը դառնաս բաժին դու գիշակեր անգղներին»:

Այդ էր ասում ամեն մեկը, կարծում էին՝ միամտաբար, այլև չկամ Նա սպանեց այդ դյուցազնին, և չիմացան, ավա՛ղ, նրանք,

այդ անմիտներն,

Որ և իրենց, բոլորեքյան, արդեն պատել է իր ցանցով մահտարածամն, Մինչ բարբառեց Ռոխուսը ամենիմաց՝ խեթ նայելով իսկույն նրանց. «Ո՛հ, շնացող դուք լրբեմիք, կարծում էիք, որ ետ չեմ գա

իմ տունն այլևս

Տրոյական հեռու երկրից, ուստի և ժանտ վատնում էիք գույքն իմ,

զանձը,

Բռնաբարում էիք մախիզ դուք մեր կանանց ստրկուհի

Եվ տակափին ես կենդանի՝ տենչում էիք և իմ կնոջն այստեղ զավթել՝ Չակնածելով անծայրածիր երկնքի տեր աստվածներից:

40 Չվախեցաք իսկ, որ մարդիկ նգովելով ձեզնից կտռեն վրեժն հետո.

Արդ, բռնել է ձեզ բոլորիդ իր ցանցի մեջ մահ-օրհասը»:

Ասաց այդպես, և կաշկանդեց դարուկ սարսափն իսկույն նրանց.

Իրար անցան, պտտվեցին բոլորն այնտեղ՝ էլք փնտրելով

ինչպե՛ս արդյոք

Փրկվել մահից, և միմիայն Եվրիմաքը պատասխանեց ու խոսք ասաց.

«Եթե իրոք իթակեցի Ռոխուսն ես և եկել ես տունդ արդեն,

Ապա ուրեմն արդարացի դու խոսեցիր: Աքեացիք, ճիշտ որ, իրոք

Կատարել են թե՛ քո տանը, թե՛ դաշտերում շատ խայտառակ,

ստոր գործեր,

Բայց մեղավորն այդ ամենի Անտիհոտն էր, որ տապալված է

այժմ այստեղ:

Նա էր սարքողը քո տան մեջ ամեն տեսակ չար գործերի,

50 Սակայն ոչ թե նրա համար, որ փախազում էր հարսանիք

քո կնոջ հետ.

Ա՛յլ բան էր նա խորհում իր մեջ, բայց կատարել թույլ չտվեց

Կրոնույանն:

Նա միտք ուներ գեղեցկաշեն Իթակետում դառնալ արքա և ազգապետ,

Իսկ քո որդուն նա մտադիր էր սպանել զաղտոտոգայթ, դարանամուտ,

Եվ նա հիմա խոշոջված է արդարացի: Սակայն եղիր դու բարեգույթ,

Այժմ խնայիր մեզ բոլորիս, իսկ մենք իրոք կհատուցենք Բո վնասներն, որքան լափել ու խմել ենք մենք քո տան մեջ, Եվ քացի այդ ամեն մեկս քեզ տույժ կտանք, արժեքն ուղիղ քսան եզան, Կտանք նաև ոսկի, պղինձ, որ մեղմանա քո սիրուն այդպես, Մինչդեռ հիմա արդարացի զայրույթով ես դու բորբոքված»:

60 Եվ Ռոխուսը խելացի, խստահայաց, խեթ նայելով, այս խոսքն ասաց.

«Ոչ, Եվրիմաք, եթե ինձ տաք ձեր հայրականն ամբողջովին Եվ այն, որ դուք անձամբ ունեք, նաև այլ գույք, հանց հավելյալ, Եվ այդ դեպքում ձեռք չեմ քաշի կոտորածից արյունահեղ,

Նախքան վրեժն իմ ես լուծեմ սեղեխներից նրանց զազիր գործի համար: Ձեզ մնում է այժմ երկու էլք. կա՛մ աստ կովել դեմ-հանդիման,

Կա՛մ փախուստի դիմել շուտով, փրկվել մահից և օրհասից, Բայց ձեզանից, կարծեմ, ոչ ոք չի խուսափի իր ժանտածուտ

կործանումից»:

Ասաց այդպես, և թուլացան նրանց ծնկներն, այլև սրտերը սիրեցյալ: Մինչ Եվրիմաքն այնժամ նրանց երկրորդ անգամ իր խոսքն ասաց.

70 «Բարեկամներ՝, այս քաջն էլ չի զսպի բնավ անպարտելի ձեռքերը յուր, Եվ քանի որ արդեն վերցրել է սա հղկված աղեղը և պատկանդարանն, Ողորկ շեմքից մեզ նետահար կանի անշուշտ, մինչև որ աստ

Մեզ, բոլորիս, ժանտ կոտորի: Հիշե՛նք, տակայն, մենք կոփվը Եվ դուրս քաշենք մեր սուր սրերն, պաքների դեմ մահաբեր

Սեղանները դարձնենք վահան և խմբովի, միահամուռ

Թունդ հարձակվենք սրա վրա, դուան միջից վանենք սրան,

շարտենք դուրս,

Վազ տանք ապա դեպի քաղաք ու բարձրացնենք ճիչ, աղաղակ, Եվ կիմանա քաջն այս շուտով, որ արձակեց նետն իր հիմա

վերջին անգամ»:

Այդպես ասաց ու գոռոռաց, ապա իսկույն իր պատյանից

80 Նա դուրս քաշեց պղնձակոտ և երկաայրի սուսերը սուր

Ու շեշտակի, ահեղագոչ, նետվեց ուղիղ նրա վրա,

Բայց Ռոխուսն ուղղեց պաքն, զարկեց կրծքին, ստիճքին մոտ,

Սուր պղինձը լեղը խրվեց, նրա ձեռքից սուսերն իսկույն

գետնին ընկավ,

Նա գալարվեց սեղանի շուրջն ու, դրա հետ պտտվելով,

Ցած գլորվեց գետնատարած: Գետնին թափեց ուտեստն ամբողջ,

Ընկավ բաժակը կրկնականթ, նա հատակին զարկվեց դեմքով,

Աղաղակեց սրտակոտոր, զույգ ոտքերը թափահարեց,

Թակեց աթոռն ու աչքերն իր հավերժ պատեց մույթը խալար:

Եվ Ամփինոմն անապարեց՝ դուրս քաշելով սուսերը սուր,

90 Փութանակի նա հարձակվեց Ռոխուսի դեմ մեծափառ,

Որ դուրս վանի նրան մի կերպ դուան միջից, մինչ ետևից



Ռդիսուք ջարդ է աստի
Ֆեսացուներին (նկար սափորի վրա)

Պղնձասուր տեգ-նիզակով զարկեց նրան Տելեմաքոսը քաշաքար,
 Զարկեց ուղիղ ուսերի մեջ, կրծքում իսկույն վարակեց նիզակն.
 Նա թնդունով գլորվեց ցած ու իր դեմքով զարկվեց գետնին:
 Երկայնաստվեր տեգն իր թողած Ամփիկնոմի մարմնում ցցված՝
 Տելեմաքոսը ետ քաշվեց. նա վախեցավ՝ գուցե մեկը սեղեխներից,
 Երբ որ ինքը, այնտեղ կրված, երկայնաստվեր տեգը բռնի և դուրս քաշի,
 Իր ետևից աճապարհի, ապա սրով իրեն զարկի և խոշորի:
 Նա վազելվազ եկավ իսկույն և շուտ հասավ իր սիրելի հորը այնտեղ,
 100 Կանգնեց կողքին և առընթեր ու խոսքն ասաց այս թեւավոր.
 «Հայր իմ, ես քեզ արդ կրերեմ գեներ՝ վահան, երկու նիզակ
 Եվ սաղախարստ պղնձակոտ, որը գլխիդ հարմար կգա,
 Զենք կհագնեմ նաև ինքս, զենքեր կտամ խոզարածին և հովիվին,
 Քանզի չէ՞ որ զինված լինել շատ ավելի լավ է, անշուշտ»:
 Նրան իսկույն պատասխանեց և խոսք ասաց Ռդիսուքը մեծնագետ.
 «Ծո՛ւտ, վազելվազ գնա՛ և քե՛ր, քանի դեռ այս պաքները
 չեմ վատնել ես.

Մի գուցե ինձ դռան միջից դուրս վանեն այժմ, եթե մնամ
 ես մեն-մենակ»:
 Ասաց այդպես, և Տելեմաքն անսաց իսկույն իր սիրելի հոր պատգամին,
 Վազեց, գնաց նա այն սեկչակն, որտեղ զենքերն էին պահված
 փստապասակ.
 110 Այնտեղ վերցրեց նա չորս վահան, պղնձակոտ ութ գեղարդներ
 Եվ խոսքաշ, պղնձակերտ ու գեղեցիկ չորս սաղախարստ:
 Նա բոլորն այդ հապճեպ քերեց և շուտ հասցրեց անդ ծնողին
 իր սիրեցյալ,
 Նաև ինքը զինվեց իսկույն, հագավ պղինձը շողշողուն:
 Նույնպես երկու ստրուկ հովիվն հագան զենքը գեղեցկափայլ
 Ու կանգնեցին իսկույն կողքին քազմահնար և խելացի Ռդիսուսի,
 Եվ քանի դեռ անդ նա ուներ կովի համար սուր պաքներ,
 Նա անդադար, նշան բռնած ու միտամի, կոտորում էր իր հարկի տակ
 Խոսնայրների, և տապալրում էին նրանք իրար կողքի, գետնաթավալ:
 Իսկ երբ արդեն սպառված էին պաքները թագավորի,

120 Նա աղեղը այնժամ հենեց ամրակառույց ապարանքի բարավորին
Եվ թողեց անդ, դրանդուն կից, շողշողենի պատին մոտիկ:
Ինքն էլ ապա ծածկեց ուտերն իր՝ ապարով այն քառաշերտ,
Փառավոր իր գլխին դրեց սաղավարտը հրաշակերտ,
Որի վրա ծածանվում էր ձիու մագից մի անավոր, մեծ գարգամանակ.
Այնուհետև ձեռքն իր առավ պղնձապատ երկու նիզակ:
Պինդ պատի մեջ գեղեցկակերտ կար գաղտ մի դուռ,
Որը կից էր և առընթեր ամրակառույց, պերճ դահլիճի բարձր շենքին,
Անձուկ և մութ, հանց ետնամուտք, դա տանում էր դեպի փողոց,
Դրա միջով դժվարությամբ մի մարդ կանցներ: Աստվածային

խոգարածին

130 Հրամայեց Ռոյիսը՝ կանգնել այնտեղ և պահպանել դուռն այդ ամուր:
Ագեղառան այնժամ դիմեց սեղեխներին և խոսք ասաց.
«Բարեկամներ, մեկը չըկա, որ գեթ անցնի այս նեղ անցքով

դեպի բաղաք,

Որ ամենքին այնտեղ հայտնի, հարուցանի ճիշ, աղաղակ,
Եվ այդ դեպքում կտոհանա նետահարելն այս քաջն առմիշտ»:
Նրան իսկույն պատասխանեց և խոսք ասաց այն այծարած Մելանթևը.
«Հնար չկա, դիցանունդ Ագեղառու. բակի շքեղ, մեծ դարպասին
Ծառ մոտիկ է նեղ դուռը այդ, և այնքան է անհատչելի կածանն անձուկ,
Որ բյուրերին մի մարդ անգամ անդ կարգելի, եթե գորեղ է հիրավի,
Բայց սպասեք, ձեզ պահեստի ես սենյակից զենք կբերեմ, որ
զինվեք դուք,

140 Եվ կարծում եմ, որ իսկապես միայն այնտեղ, ոչ այլուրեք,
Պետք է զենքը պահած լինեն Ռոյիսը և իր զավակը փառաշուք»:
Այդպես ասաց Մելանթևը այն այծարած ու դահլիճում եղած անցքով
Մի կերպ անցավ ու բարձրացավ անդուղքներով դեպի պահեստն
Ռոյիսուհի:

Այնտեղ շտապ տասներկու վահան ընտրեց, նույնքան նիզակ
Եվ նույնքան էլ մեծ սաղավարտ՝ պերճ, պղնձափայլ ու գիսավոր,
Ապա շուտով նա ետ եկավ և ամենն այդ հանձնեց այնտեղ սեղեխներին:
Եվ թույլացան Ռոյիսուհի փրտը փրած ու ծնկները, երբ նա տեսավ՝
Ինչպես նրանք զենքերն հագան ու ճոճեցին նիզակները երկայնատվեր:
Համկացավ, որ ծանր է գործը, որ կոնվը լինելու է դաժանագույն,

150 Ոստի իսկույն Տեղեմաքին դիմեց այնտեղ և խոսքն ասաց այս թևավոր.
«Տեղեմաքո՛ւ, տան մեջ անշուշտ մեկնումեկը ստրկուհի այդ կանանցից
Կամ Մելանթևսն անհա մեր դեմ բորբոքում են արդեն կոնվը
այս չարադավ»:

Նրան իսկույն պատասխանեց և խոսք ասաց Տեղեմաքը խորիմաց.
«Ո՛հ, իմ հայրիկ, մեղավորը ես եմ այստեղ, և ոչ ոքի մեղքը չէ դա.
Խորդանոցի ամրակառույց դուռը իրոք ես եմ թողել անդ կիսաբաց,

Ու երկի այդ նկատեց սեղեխների հատուկ լրտեսը աշարտը:
Ո՛վ Եվմեոս դու խոգարած, գնա՛, ամուր փակիր դուռը խորդանոցի
Եվ լավ նայիր, գուցե և անդ մեկնումեկը մեր կանանցից կատարեց այդ-
Կամ Դոյիոսյան Մելանթևը, նրան եմ ես ավելի շուտ կասկածում
այժմ»:

160 Այդպես նրանք իրարու հետ խոսում էին այդ առիթով,
Մինչ այծարած Մելանթևը կրկին գնաց դեպ խորդանոց,
Որպեսզի զենք բերի նորից, բայց նկատեց խոգարածը աստվածային,
Նա փոքրապես դարձավ, ասաց Ռոյիսուհին, որ կանգնած էր
անդ, մերձակա...

«Դիցանունդ Լաերտածին, ո՛վ Ռոյիսու ամենիմաց, արդ, սրիկա
Այդ լրբենին, որի մասին մեք կասկածում էինք իրոք,
Նորից գնում է խորդանոց, բայց ճշմարիտ դու ինձ ասա.
Արդյոք նրան ես սպանե՞մ, եթե ուժով գերազանցել կարողանամ,
Թե՞ նրան ես քարշ տամ, բերեմ, որպեսզի աստ քստծես նրան
դու անխնա՛

Այն բազմազան ոճիրների, մեղքի համար, որ կատարեց քո տանը նա».
170 Նրան այսպես պատասխանեց և խոսք ասաց Ռոյիսը ամենիմաց.
«Տեղեմաքոսն ու ես մի կերպ խոսակցություն մեծահոշակ
Դահլիճի մեջ, աստ, կզույգենք, թեպետ և խիստ մոլեգնում են
անհա նրանք»:

Դուք, երկուսդ, բռնեք նրան, գցեք մատան, ոլորեցեք ձեռ ու ոտը,
Ապա կապեք անգթորեն պինդ չվանով այն ոլորուն,
Սյունին գամեք անդ բարձրաբերձ, քաշեք, հասցրեք առաստաղի
գերանի մոտ»:

Այդպես նրան այնտեղ կապեք և փակեք դուռը ամրապինդ.
Թող կենդանի հար ու երկար այստեղ մնա, տանջանք կրի
նա չարաշար»:
Ասաց այդպես, տիրոջ խոսքին հնազանդված, գործը իսկույն
կատարեցին:

Ծուռ խորդանոցը գնացին. այնտեղ էր նա, սակայն սրանց չը նկատեց,
180 Այլ մտաւնում մեկնումեկակ գաղտնի փնտրում էր նա զենքեր,
Բայց կանգնեցին այնտեղ սրանք ու թաքնվեցին դրանդու մոտ,
Երբ այծարած Մելանթևը, հեռանալով, հապճեպ շենքին
անդ մոտեցավ.

Նա մի ձեռքով բռնած տանում էր գեղեցիկ մի սաղավարտ,
Իսկ մյուս ձեռքում ուներ մի լայն ու մեծ վահան, խիստ հնամաշ
ու բորբոսնած...
Լաերտ քաջն էր մի ժամանակ, երիտասարդ իր օրերին, գործածում այն.
Այժմ ընկած էր բարձրթողի, և փոկերի կարերն էին արդեն փտած:

Մրանք հանկարծ հարձակվեցին և, մագերից պինդ բռնելով,
նրան այնտեղ
Ցած գցեցին, քարշ տվեցին, թեպետ սաստիկ գողգոռում էր
ահարելված:

210 Ձեռ ու ոտը պինդ կապեցին խիստ կապանքով հոգեկործան,
Որորեցին ու ետևից հանցուցեցին, ինչպես ուղիղ պատվիրել էր
Լաերտածին բազմաչարշար Ռոփսեսը աստվածագարս,
Եվ ոլորուն, պիրկ չվանով բարձր պունին կապեցին պինդ,
Ապա, չվանը քաշելով, վեր հանեցին առաստաղի գերանին մոտ,
Իսկ դու նրան անդ ասացիր, ո՛վ խոզարած, խոր հեզանքով.
«Հինա արդեն ամբողջ գիշեր դու արթուն աստ պիտի հսկես,
ո՛վ Մելանթես»

Հանգիստ պառկած քեզ արժանի ու փափկագույն անկողնու մեջ:
Երբ ոսկեզահի Արշալույսը վաղը ելնի հորդահոտան օվկիանոսից,
Դու, երևի, չես մոռանա շուտ արթնանալ, որ գեթ կանոխ աչծեր քշես,
Շուտով տանես սեղեխներին՝ խրախճանքի գործը նրանց լավ հոգալով»:
200 Այդպես նրան անդ թողեցին կապանքի մեջ ու կաշկանդված,
Եվ իրենք էլ լավ գիևվեցին, պինդ փակեցին մատանի դուռը շողշողուն,
Իջան, եկան դեպ Ռոփսեսը բազմափորձ և իմաստուն
Եվ կանգնեցին նրա կողքին: Այժմ չորս հոգի, խիզախությամբ
ոգեշնչված,

Արդեն կային անդ, շենքի մոտ, իսկ դահլիճում քաշերն էին
բյուրաբազում:
Այնժամ ճրանց անդ մոտեցավ Աթենասը՝ դուռտորը Ջևաի՝
Նոնանվելով կերպարանքին, այլև ձայնին քաշ Մենտորի,
Երբ որ նրան Ռոփսեսը տեսավ, խնդաց և խոսք ասաց.
«Օգնիր, Մենտոր, քո քաջությամբ և ճիշիր այժմ ընկերոջը քո սիրելի,
Որ քեզ բարիք է միշտ արել. դու, բացի այդ, հասակակից ես
ինձ իրոք»:

210 Ասաց այդպես, քայց հասկացավ, որ ինքն է դա՝ Աթենասը
մարտահարույց,
Մինչ մյուս կողմից ամբարտախան խոսնայրները գողգոռացին
դահլիճի մեջ,
Եվ առաջինը բղավեց սպանակից Ագելասու Դամաստորյանն.
«Մենտոր՛ր, բնավ չհանդգնես, ինչպես խոսքով Ռոփսեսն է
համոզում քեզ,
Մարտել ընդդեմ սեղեխների ու այդպիսով աստ գորավիզ
դառնալ նրան:
Տե՛ս, թե ինչ կա մեր մտքի մեջ, և այդ անշուշտ կկատարվի.
Երբ այժմ նրանց մենք սպանենք, Ռոփսեսին և իր որդուն,

Տե՛ս, նրանց հետ կկործանենք մենք նաև քեզ, եթե միայն
դու ցանկանաս
Տան մեջ, այստեղ, այդ գործն անել, և գլխովդ կհատուցես,
հանց պատուհաս:

Եվ հետո էլ, երբ որ կյանքից մենք ձեզ գրկենք սուր պղնձով,
220 Քո գույքն ամբողջ, որքան ունես այստեղ, այլուր և քո տան մեջ,—
Մենք կհատնենք, իբրև ավար, Ռոփսեսի գույքերի հետ,
Որ իրար մեջ այն բաժանենք, և թույլ չենք տա մենք քո որդոց,
քո դատերին

Եվ քո կնոջն ասրել այստեղ, այս Իթակե քաղաքի մեջ»:
Ասաց այդպես, էլ ավելի խիստ գայրացավ Աթենասը իր սրտի մեջ
Ու կշտամբեց Ռոփսեսին ծանրացասում իր խոսքերով և այս ասաց.
«Ռոփսես, քո մեջ էլ չկա այն հաղթ կորովն, ուժն անդերև ու քաշ ոգին
Որով երբեմն, Տրոյացի մոտ մարտում էիր ինը տարի դու շարունակ՝
Չքնադագեղ, լուսաթևիկ և քաջահայր Հեղինեի համար միայն,
Եվ անողոր ակասաներում կոտորեցիր բյուրաբազում այնտեղ մարդոց:
230 Քո խորհրդով հենց նվաճվեց Պրիամոսի սուրբ քաղաքը լայնափողոց:
Ի՞նչ եղավ քեզ, որ դու, արդեն վերադարձած, քո հարկի տակ,
գույքերիդ մոտ,

Հեծեծում ես ու վախենում կովել ընդդեմ խոսնայրների:
Օ՞հ անդր, շո՛ւտ, բարեկամս, ինձ մոտեցիր և իմ կողքին
կանգնիր այստեղ,
Նայի՛ր ու տե՛ս՝ ինչպես Մենտոր Ավկիմյանը այս կովի մեջ
թշնամաշարդ

Իր ընկերոջ պարտքը կտա, նրա բարի գործի համար»:
Ասաց, սակայն չընդհեց նա հաղթանակը վերջնական,
Այլ կամեցավ փորձել դեռևս քաջախիզախ ուժն ու ոգին
Աստվածագարս Ռոփսեսի և ազնվագույն նրա որդու:
Ինքն էլ ապա վեր բարձրացավ դեպ ծխամած առաստաղը ասարանքի:
240 Ու մարդակին նստեց այնտեղ՝ նմանվելով կերպարանքին ծիծեռնակի:
Խոսնայրներին այդ միջոցին քաջալերեց Դամաստորյան Ագելասուն,
Եվ նրա հետ ու միասին՝ Եվրիկոնոսն, Ամփիթեդոնն, Դեմոպտոլեմն,
Պոլիբոսը խոհեմամիտ, Պիսանդրոսը Պոլիկտորյան:
Խոսնայրներից, ահավասիկ, քաջագույններն էին դրանք,
Որ տակավին, պաշտպանելով իրենց կյանքը, մարտում էին
դեռ կենդանի.

Իսկ մյուսներին խորտակել էր հաղթ աղեղը սլաքների տարափի տակ:
Այնժամ դիմեց անդ բուրիկն Ագելասուն և խոսք ասաց քաջալերիչ.
«Բարեկամներ, շուտով քաջն այս զայերու է անպարտելի ձեռքերը յուր»:
Եվ Մենտորն էլ արդ չքացավ, թեպետ խոսեց նա սնապարծ
ու ինքնագով»

250 Դռան առաջ, նախաշեղքում, նրանք ահա միայնակ են արդ մնացել,
Ուստի և այժմ գեղարդները դուք չնետեք աստ բոլորը միանգամից,
Պետք է որ այժմ մենք նախ նետենք նիզակներից վեցը միայն:
Թե Զևար տա, փառք կշահենք, եթե զարկենք Ողիսուսին,
Իսկ մյուսներից երկուդ չկա, երբ տապալվի նա խորտակված»:
Ասաց այդպես, նրանք բոլորն, հանց պատվիրեց, շեշտ նետեցին,
Բայց Աթենասն հարվածները նրանց բոլոր ունայն դարձրեց,
Մեկը այնտեղ ամրակառույց ապարանքի շենքին դիպավ գուր,

անտեղի,

Իսկ մյուսը, զարկվեց, խրվեց անդ հաստ դռան դրանդու մեջ.

Մեկն էլ, որպես ծանր պղինձ, դիպավ պատին գուր վզգալով.

280 Երբ որ այդպես սեղեխների գեղարդները սլացան գուր և ապարդյուն,
Անդ իր մարդկանց այս խոսքն ասաց բազմաշարժար Ողիսուսը

աստվածագարմ.

«Սիրելիներ՛ր, ահա ինձ եմ ձեզ հորդորում, եկեք և մենք

հուժկու նետենք.

Սլաքները խոսնայրների խոուն ամբոխին, որոնք ահա,
Բացի իրենց կատարած այլ ոճիրներից, ցանկանում են սպանել մեզ»:

Ասաց այդպես, և բոլորը, նշան բռնած, շեշտ նետեցին սուր նիզակներն,
Եվ խորտակեց Ողիսուսը Դեմոպոտլեմ քաջ սեղեխին,

Տեղեմաքը՝ Եվրիադին, խոզարածը՝ Էլաստսին,

Իսկ եզների քաջ նախորդը Պիսանդրոսին գետնին զարկեց:

Տապալվեցին դրանք բոլորն և կրծեցին ատամներով գետինը լայն,

270 Իսկ նմացյալ խոսնայրները նահանջեցին դեպի խորքը մեծ դահլիճի:
Սրանք, ասկայն, վրա հասան, դուրս քաշեցին նիզակները դիակներից:
Երկրորդ անգամ խոսնայրները, նշան բռնած, գեղարդները

նետեցին շեշտ,

Բայց մեծ մասամբ վրիպեցին, Աթենասը ունայն դարձրեց

հարվածներն այդ,

Մեկը նորից ամրակառույց ապարանքի շենքին զարկվեց զո՛ւր,

անտեղի,

Մյուսը վարավեց գեղեցկակերտ, ամուր դռան դրանդու մեջ,

Մեկն էլ, որպես ծանր պղինձ, դիպավ պատին գուր վզգալով:

Ամփիմեդոնն զարկեց միայն, վիրավորեց Տեղեմաքի ձեռքի դաստակն,

Սուր պղինձը քերեց միայն, պոկեց ձեռքի մաշկը վերուստ,

Կտեսիպոսը երկար տեղով քերծեց ուսը Եվմեոսի, ասպարից վեր.

280 Մինչ նիզակը, վեր թռչելով, գետնին ընկավ անհետևանք:

Նրանք նորից, կողքին կանգնած բազմննար Ողիսուսի,

Ծեշտ նետեցին տեգերն հուժկու դեպի խումբը սեղեխների:

Զարկեց հիմա Ողիսուսը քաղաքավեր Եվրիդամաս խոսնայր քաջին,

Տեղեմաքոսը՝ սեղեխին Ամփիմեդոն, խոզարածը՝ Պոլիբոսին,

Իսկ եզնարած հովիվն հզոր խիստ հարվածեց ուղիղ կրծքին

Կտեսիպոսի

Եվ, հարվածով իր խորխուսացած, բացականչեց նա մեծապանծ.

«Դու, ծաղրաբան և չարախոս Պոլիթեսյան, էլ չխոսես այսուհետև

Դու մեծապարծ, հիմար խոսելն անվայել է, դու խոսելը վերապահիր

Աստվածներին, քանզի նրանք չէ՞ որ քեզնից գերազոր են,

290 Իսկ սա, որ այժմ դու ստացար, հաւուցումն է այն ուկորի,

որ, հանց պարզև,

Դու նետեցիր այս շրջիկին՝ իր տուն եկած աստվածագարմ Ողիսուսին»:

Այդպես ասաց այնժամ հովիվը կորեղջյուր արջառների,

Մինչ Ողիսուսն դեմ-հանդիման տեղով երկայն ջախեց որդուն

Դամաստորի,

Տեղեմաքուն Եվմեոսյան Լիոկրիտի փորը վարսեց նիզակն անգութ,

Եվ միջանցով պղինձը սուր իսկույն հերծեց և դուրս թռավ:

Նա գլորվեց բերանքսիվայր, ամբողջ դեմքով զարկվեց գետին:

Աթենասը տան մեջ վերուստ պարզեց հանկարծ իր ասպարը

մարդակործան,

Եվ անդ իսկույն զարհուրանքի դողը բռնեց խոսնայրների դաժան հոգին.

Խունապանքով վազվզեցին նրանք տան մեջ, ինչպես ցուլերը

նախրային,

300 Որոնց վրա հարձակվում են դաժան բռները հույլիհույլ և հալածիչ՝

Վաղ գարունքին, երբ օրերն են դառնում արդեն երկարատև:

Հանց ցիները կորամագիլ, կորակտուց, լեռների մեջ հանկարծ թռչող,

Հարձակվում են թռչունների վրա անօգ, որոնք, դողող ու անաբեկ,

Դաշտերից շուտ թռչում են վեր, դեպ ամպերը, դեպ հովիտը թաքնվելու,

Մինչ անգղներն հալածում են և կոտորում նրանց անգութ ու մահակուր.

Էլ ապավեն նրանք չունեն, և հրճվում են որսը դիտող քազում մարդիկ,

Այդպես նրանք, հարձակվելով, խոսնայրներին տան մեջ այնտեղ

Եվ աչ ու ձախ ջարդում էին և ջախջախում գլուխները բազմաբազում:

Թնդում էր խուլ մի հառաչանք, ճիչ, աղաղակ, հատակն արյամբ էր

հեղեղված:

310 Հանկարծ ելավ Ողիսուսի դեմ Լիոդեսն, որ ծնկներին փարվեց նրա

Եվ աղաչեց մեծապաղատ ու խոսքն ասաց այս թևավոր.

«Աղերսում եմ քեզ, Ողիսուս, խղճա դու ինձ և խնայիր,

Ա՛խ, հավատա, տան կանանցից ես ոչ ոքի ոչ մի վատ բան ոչ ասել եմ,

Ոչ կատարել, այլ մյուսների՞ խոսնայրներին, հակառակը,

Ես անդադար զսպում էի և հորդորում, որ վերացնեն այդ քարվականքն,

Բայց ինձ, ավա՛ղ, չլսեցին ու ձեռք քաշել զագիր գործից չկամեցան,

Ուստի և այդ ոճիրների համար հիմա մահ-օրհասին այսպես հասան:

Գուշակող եմ ես մի անմեղ, մի՞թե պիտի ես տապալվեմ նրանց կողքին,

Մի՞թե չկա երկրի վրա գնահատող առաքինի գործը հետո»:

320 Նրան այնտեղ խեթ նայելով՝ իր խոսքն ասաց Ռոփսուսը ամենիմաց.

«Եթե դու ճիշտ գուշակող ես եղել նրանց, հանց ասացիր այժմ
ինքնապարծ,

Որքանն և դու աղոթել ես ապարանքում այս մերթ ընդ մերթ,
Որ վերադարձն իմ դեպի տունը հետանա և անկատար միշտ էլ մնա,
Որպեսզի իմ կնոջ հետ դու ամուսնանաս, ու քեզ զավակ նա պարզևի,
Ուստի և դու չես խուսափի քո վերահաս դաժան մահից»:

Այդպես ասաց նա բարձրաձայն, կարող ձեռքով վերցրեց սուտերն
այնտեղ ընկած,

Որ գցել էր գետնի վրա իր ձեռքով իսկ անդ սպանված Ագեղաունց,
Տեղնուտեղը վարսեց այդ սուրը վզի մեջ նրա իսկույն,
Ու գլուխը պոկվեց, ընկավ գետնի վրա՝ դեռ քերանով խոսք ասելիս,

330 Բայց խույս տվեց սև օրհասից իր դժնդակ Տերպիսայան
Փեմիտուն երգակ,

Որը այնտեղ խոսնայրների համար երգում և նվագում էր ակամա:
Ահավասիկ, ձեռքին բռնած բարձրահնչուն կիթառը յուր,
Մտորում էր տարակուսած՝ կանգնած այնտեղ, ետնամուտքի
դռան կողքին,

Դո՛ւրս գալ արդյոք և անդ չոքել մեծն Ջևաի Բագիճի դեմ,
Որ Լաերտը և Ռոփսուսն այրում էին զոհված եզան թիկնամուտերն,
Թե՛ վազելվազ ծնկներն ընկնել և աղաչել մեծապաղատ:
Եվ արդ, այդպես մտածելիս, ավելի լավ և օգտավետ նրան թվաց՝
Իսկույն ևեթ փարվել ծնկին Լաերտածին Ռոփսուսի:

Ահավասիկ, նա սևամեջ իր կիթառը փոքրանակի դրեց գետնին,

340 Մեջտեղն այնտեղ սարկարանի ու բազմոցի արծաթապատ,
Ու ինքն ապա արագ վազեց, ծնկներն ընկավ Ռոփսուսի,
Այդպես նրան նա պաղատեց և խոսքն ասաց այս թևավոր.
«Աղաչում եմ, ո՛վ Ռոփսուս, խղճա դու ինձ և խնայիր,
Ինքդ հետո շատ կցավես, որ անտեղի սպանեցիր դու երգիչին,
Որն իր երգով խիճո՞ ու հրճվանք է ներշնչում աստվածներից,

այլև մարդկանց:

Գուսան եմ ես ինքնուսույց, և աստվածն է իմ արտի մեջ
Ներշնչել տեճը երգերի. ես պատրաստ եմ երգել և քեզ,

հանց աստրծո:

Դու իմ մահը մի փափագիր և ինձ, ավա՛ղ, մի գլխատիր.
Տելեմարտն էլ քեզ կասի, կհատուտտի քո այդ զավակը սիրալիր,

350 Որ աստ, քո տուն, երգ երգելու խոսնայրների խնջույքներից,
Ես ակամա էի գալիս, ոչ ինքնակամ, այլ միմիայն
Նրանք, ինձնից հզորագույն ու բազմամարդ, կանչում էին
ինձ բռնաբար»:

Աղաչանքի ձայնը լսեց անդ սրբազան գործությունը Տելեմարի,
—354—

Նա մտտեցավ հորը իսկույն և այս խոսքը ասաց նրան.

«Հա՛յր, սպասի՛ր, սուր պղինձով մի հարվածիր դու անմեղին,
Այլ ազատենք նա բանքեր մենք Մեդոնին, քանզի մեր տանն
այս գեղակա

Նա մշտապես եղել է ինձ ջերմ հոգատար իմ մանկության իսկ օրերից:
Ո՛ր է, չկա, գուցե արդեն սպանեցին Փիլետիոսն ու խոզարածն,
Գուցե տան մեջ ընկավ նա քո հարվածի տակ, երբ որ սիրուն էր
քո բորբոքված»:

Այդպես ասաց, և այդ խոսքը լսեց Մեդոնը խորիմաց,
360 Որ այդ պահին, խուսափելով սև օրհասից, պսոկել էր անդ
բազմոցի տակ՝

Խիստ կրծկված և իր վրա դեռ նոր քերթված արջառենի մորթը քաշած:
Արդ, դուրս թռավ նա բազմոցի տակից իսկույն, մի կողմ գցեց
մորթը արագ,

Վազեց ապա և ծնկները Տելեմարի բռնեց ամուր
Եվ աղերսեց նրան սրտանց ու խոսքն ասաց այս թևավոր.

«Այստեղ եմ ես, սիրելիդ իմ, խնայիր ինձ, ասա նաև քո հորը այժմ՝
Թող գերագոր կարողությամբ և պղնձով ինձ չզարկի և չսպանի:
Ընդդեմ մոլի խոսնայրների նա զայրացած է և ցասկոտ,
Նրանք, անմիտ, լափում էին գույքը նրա, նեղում էին քեզ անամոթ»:

Եվ Ռոփսուսը իմաստուն իսկույն ժպտաց, ապա նրան այս խոսքն ասաց.

370 «Վստա՛հ եղիր, Տելեմարը քեզ կյանք տվեց ու փրկություն,
Որ այսուհետ լավ իմանա, նաև պատմես ուրիշներին դու օրհիբուն,
Որքա՛ն լավ է ու գերադաս առաքինի, քարի գործը չար արարքից,
Բայց գնացեք հիմա բակը և դուրս ելեք հիմա տնից,
Հեռացեք այս ժանտ նախճիրից, դու և գուսանն այս երգասաց,
Իսկ տանը դեռ ես գործ ունեմ, որը հիմա պիտ կատարեմ»:

Ասաց այդպես, իսկույն երկուսն էլ փոքրապես դուրս գնացին
նրանք տնից

Եվ նստեցին հզորագոր Ջևա աստրծու բազինի մոտ,
Բայց տակավին, իրենց մահվանն ապաստելով, նայում էին շրջահայաց:
Նայեց շուրջը Ռոփսուսը, որ իմանա՝ արդյոք ոչ ոք չի՞ մնացել
380 Անդ թաքնված ու կենդանի՝ խուսափելով մահից դաժան,
Բայց բոլորն էլ արյունթաթախ ու փոշեպատ թափված էին գետնի վրա,
Անշարժ ընկած ու մահացած. ինչպես ձկներն, որոնց հաճախ
ձկնորս մարդիկ

Բազմահանգույց ուռկաններով դուրս են քաշում ներմակ ծովից
Ու թափում են ավազածիր լայն ծովափին, և ձկներն այդ բոլորեքյան,
Ադի ջրին կարոտակեզ, թափված մնում են ավազում իրար վրա,
Մինչև լույսից արեգակի նրանց կյանքն է ոչնչանում,
Արդ, այդպես էլ միմյանց վրա թափված էին սեղեխները չարաբաստիկ:

—355—

Եվ Ռդիսեսն ամենիմաց իր զավակին՝ Տելեմաքին այս խոսքն ասաց.
«Տելեմաքո՛ւ, կանչիր այստեղ մեր դայակին՝ Եվրիկլիային,
390 Խոսք եմ ուզում ասել նրան, այն, որ սրտումս հիմա կա»:
Այդպես ասաց, և Տելեմաքն իր սիրելի ծնողի խոսքը կատարեց.
Արդ, բոթելով դուռը իսկույն, նա ձայն տվեց ու խոսք ասաց
Եվրիկլիային.

«Վե՛ր կաց շուտով, ծեր դայակդ, դու, իմ մայրիկ տարիքավոր,
Որ հսկողն ես մեր տան եղած բոլոր ծառա ստրուկ կանանց.
Դո՛ւրս եկ, հայրս կանչում է քեզ. նա խոսք ունի քեզ ասելիք»:
Այդպես կանչեց, ու թեևթափ խոսքը մնաց սրտում ազնիվ այն պատասխի:
Եվրիկլիան բացեց դուռը գեղեցկաշեն սենյակների
Եվ, դուրս գալով, շտապ եկավ: Տելեմաքը նրան տարավ դեպի դահլիճ,
Որ հոգեզուրկ դիակների կույտերի մեջ գտնվում էր Ռդիսեսը՝

400 Ամբողջովին արյունթաթախ, ուղիղ ինչպես սույունն ահեղ,
Որ, լափելով նախարային եզն, վերադառնում, ետ է գալիս դեպի իր որջն.
Արյունոտ են և արյան մեջ նրա բաշը, այլև քերանն ու կուրծքն ամբողջ,
Այդ վիճակում նրա դեմքին նայելն անգամ արհավիրք է մի ահավոր:
Այդպես ծածկված էին արյամբ արնաշաղախ ձեռքն ու ոտքը Ռդիսեսի:
Երբ Եվրիկլիան տեսավ կույտը դիակների և տունն ամբողջ
արյունոտված,

Ցնծաց սրտով և պատրաստ էր ճի՛շ արձակել, ճի՛շն ու գոռոցը
քերկրանքի,

Բայց Ռդիսեսն իսկույն զայեց այդ հուզմունքը հիացմունքի
Եվ, ձայն տալով, նրան դիմեց ու խոսքն ասաց այս թեալով.
«Պատավ, սրտանց ուրախացի՛ր, սակայն կամաց և քերկրանքից
մի գոռոտս,

410 Բանգի մե՛ղք է, մեռյալների գլխին կանգնած, աղաղակել
խորխտապանծ:

Աստվածային ճակատագիրն այսպես սրանց պատժեց ահեղ
ու դժնարար.

Մահկանացու մարդկության մեջ սրանք բնավ չէին հարգում
ոչ մի մարդու,

Թեկուզ լիներ նրանց դիմողն առաքինի կամ չարագործ:
Այդ անօրեն գործի համար սրանք ահա այս վիճակին արժանացան,
Մակայն դու ինձ ա՛յս բանն ասա ու մեր կանանց այժմ թվարկիր.
Ո՞վ էր այստեղ իմ պատիվը անարգ անում, ո՞վ էր մեղսոտ
կամ անբասիր»:

Եվ բարբառեց սիրած դայակ Եվրիկլիան ու այս խոսքը նրան ասաց.
«Քեզ, զավակս, արդ կարտմեմ ես ճշմարիտը, ապաքեն.

Ապարանքի ողջ այս տան մեջ կային հիսուն ստրուկ կանայք,
420 Որոնց այստեղ ուտուցել ենք մենք այլևայլ ձեռագործի,

Որպեսզի աստ, ստրկությունն հանդուրժելով, միշտ բուրդ գզեն
և ասրեղեն.

Եվ դրանցից տասներկուսը ճանապարհին են լրբության
Ու չեն հարգում ոչ ի՛նձ, ոչ էլ Պենելոպե ամենիմաց մեր թագուհուն:
Տելեմաքն էլ նոր է դարձել դեռ չափահաս, նոր է հասել
կյանքին արքուն,

Մայրը նրան թույլ չէր տալիս գործն այդ հոգալ, կատարել
ստրուկ կանանց:

Թո՛ւյլ տոր՝ գնամ վերնատունը շողշողենի, գեթ արթնացնեմ քո կնոջը

Եվ խոսք ասեմ ավետավոր. այժմ քնած է նա աստրծու կամքով
այնտեղ»:

Ու Ռդիսեսը գերիմաց կրկին նրան իր խոսքն ասաց.
«Ոչ, տակավին մի՛ արթնացրու, այլ դու կանչիր, որ այստեղ գան
բոլոր կանայք,

430 Որոնք մինչ այժմ իմ հարկի տակ կատարել են գործեր լսիրջ
ու անամոթ»:

Այդպես ահա նա պատվիրեց, և սենյակից շուտ դուրս գնաց
պատավը ծեր,

Հայտնեց կանանց կամքը տիրոջ և հորդորեց հապճեպ գնալ
արքայի մոտ:

Ռդիսեսը Տելեմաքին, խոզարածին և նախորդին եզնահովիվ
կանչեց իր մոտ, դիմեց նրանց և թեալով այս խոսքն ասաց.

«Նախ այդ կանանց պատվիրեցեք, որ դիակները դուրս տանեն:
Այնուհետև թող որ նրանք մաքուր ջրով և ծակուկեն սպունգներով
լավ լվանան, սրբեն, մաքրեն սեղաններն ու բազմոցները

գեղեցկակերտ:

Իսկ երբ որ դուք լավ հարդարեք, կարգի բերեք տունը ամբողջ
ըստ պատշաճի,

Նոր ցոփ կանանց դուք դուրս հանեք ապարանքից ամրակառույց,
440 Տարե՛ք այնտեղ, բակի ամուր ցանկի ետև, ձեղճահարկի տակ բոլորակ,
Հարվածեցեք դուք սրերով երկարասայր, խողխողեցեք,
Մինչև կորզեք իրենց հոգին, որ մոռանան Ափրոդիտի կիրքը լկտի,
Որով այստեղ տոփում էին՝ միանալով սեղեխների հետ գաղտնաբար»:
Ասաց այդպես, մինչդեռ եկան այդ միջոցին կանայք բոլոր.
Լալիս էին նրանք աստիկ և ջերմաջերմ թափում արցունքը
դառնադառն:

Նախ վերցրին ու դուրս տարան դիակները սպանվածների
Ու դարսեցին միմյանց վրա բոլորաձև ծածկույթի տակ,
Գավիթից դուրս, անդ, ամրապինդ ցանկապատած բակի խորքում:
Ռդիսեսը, կանգնած, անձամբ պատվիրում էր և ստիպում խստադաժան,

Որպեսզի աստ, ստրկությունն հանդուրժելով, միշտ բուրդ գզեն
և ասրեղեն.

Եվ դրանցից տասներկուսը ճանապարհին են լրբության
Ու չեն հարգում ոչ ի՛նձ, ոչ էլ Պենելոպե ամենիմաց մեր թագուհուն:
Տելեմաքն էլ նոր է դարձել դեռ չափահաս, նոր է հասել
կյանքին արքուն,

Մայրը նրան թույլ չէր տալիս գործն այդ հոգալ, կատարել
ստրուկ կանանց:

Թո՛ւյլ տոր՝ գնամ վերնատունը շողշողենի, գեթ արթնացնեմ քո կնոջը

Եվ խոսք ասեմ ավետավոր. այժմ քնած է նա աստրծու կամքով
այնտեղ»:

Ու Ռդիսեսը գերիմաց կրկին նրան իր խոսքն ասաց.
«Ոչ, տակավին մի՛ արթնացրու, այլ դու կանչիր, որ այստեղ գան
բոլոր կանայք,

430 Որոնք մինչ այժմ իմ հարկի տակ կատարել են գործեր լսիրջ
ու անամոթ»:
Այդպես ահա նա պատվիրեց, և սենյակից շուտ դուրս գնաց
պատավը ծեր,
Հայտնեց կանանց կամքը տիրոջ և հորդորեց հապճեպ գնալ
արքայի մոտ:
Ռդիսեսը Տելեմաքին, խոզարածին և նախորդին եզնահովիվ
կանչեց իր մոտ, դիմեց նրանց և թեալով այս խոսքն ասաց.
«Նախ այդ կանանց պատվիրեցեք, որ դիակները դուրս տանեն:
Այնուհետև թող որ նրանք մաքուր ջրով և ծակուկեն սպունգներով
լավ լվանան, սրբեն, մաքրեն սեղաններն ու բազմոցները
գեղեցկակերտ:
Իսկ երբ որ դուք լավ հարդարեք, կարգի բերեք տունը ամբողջ
ըստ պատշաճի,
Նոր ցոփ կանանց դուք դուրս հանեք ապարանքից ամրակառույց,
440 Տարե՛ք այնտեղ, բակի ամուր ցանկի ետև, ձեղճահարկի տակ բոլորակ,
Հարվածեցեք դուք սրերով երկարասայր, խողխողեցեք,
Մինչև կորզեք իրենց հոգին, որ մոռանան Ափրոդիտի կիրքը լկտի,
Որով այստեղ տոփում էին՝ միանալով սեղեխների հետ գաղտնաբար»:
Ասաց այդպես, մինչդեռ եկան այդ միջոցին կանայք բոլոր.
Լալիս էին նրանք աստիկ և ջերմաջերմ թափում արցունքը
դառնադառն:

450 Եվ նրանք էլ դիակները կրում, տանում էին արագ և ակամա:
Այնուհետև իսկույն ջրով ու ծակոտկեն սպունգներով անդ մաքրեցին,
Լավ սրբեցին սեղանները և բազմոցները գեղեցիկ:
Ապա իսկույն եզնարածը, խոզարածն ու Տելեմաքն այդ ժամանակ
Սուր բահերով լավ քերեցին ամրաշեն տան հատակն ամբողջ,
Իսկ քերուցքը ստրուկները հապճեպ տարան ու թափեցին

դրսում, հեռու:

Երբ այդպիսով, ինչպես հարկն էր, հարդարեցին ամրակառույց
դահլիճը ողջ,

Ստրուկ կանանց դուրս հանեցին ապարանքից գեղեցկաշեն
Ու քշեցին մի անձուկ տեղ՝ նեղ արանքը բակի և պինդ ձեղնահարկի,
Ուստեք խույս տալ չէր կարելի, և անդ խոսեց Տելեմաքոսը խորիմաց.

460 «Ո՛չ, հեշտ մահով, ազնի՛վ կերպով չեմ սպանի այստեղ սրանց,
Որոնք իմ սուր և իմ գլխին անարգանքներ են միշտ թափել
Ու տուփամոլ լրբության մեջ խոսնայրների հետ շնացել»:
Ասաց այդպես, վերցրեց ապա սևակտուց նավի ամուր ու մեծ կառանն
Եվ մեծագույն պունին կապեց ու պատատեց անդ բարձրաբերձ
Գմբեթի շուրջ, այնպես արեց, որ ոչ ոքի ոտքը գետնին էլ չհասնի:
Ուղիղ ինչպես արագաթև շատ տորդիկներ, սրաթոփչ աղավնիներ,
Ընկնում են թավ թփերում գաղտնածածուկ սարքավորված

նենգ վարմի մեջ,

Բոլորն այնտեղ կաշկանդվում են, և դառնում է վարմը նրանց
մահվան թակարդ,

Այդպես հանգույցն ընկավ վիզը անդ ամեն մի ստրկուհու, ապա նրանք

470 Անդ կախվեցին գլուխներով, որ մահանան մահով թշվառ
ու խայտառակ,

Ու ցնցվեցին ոտքերն իրենց, բայց ոչ երկար, այլ միմիայն
մեկ ակնթաթ:

Հերթը հասավ Մելանթեային. նախագավթով նրան բակը դուրս բերեցին,
Սուր պղնձով կտրատեցին նրա պնչներն ու ականջներն և պոկեցին
Անդամները ամոթանքի ու նետեցին շներին գեշ, որպես հում կեր,
Եվ բացի այդ, խիստ գայրացած, նրա ոտքերն ու ձեռքերը

ջախջախեցին,

Ապա իսկույն անդ մաքրվեցին՝ լվանալով իրենց ձեռքերն ու ոտքերը,
Ու տուն եկան Ոդիսևսի: Այդպես ահա կատարվեց գործը ահավոր,
Եվ Ոդիսևսն այն ժամանակ ասաց սիրած իր դայակին՝ Եվրիկլիային.
«Շուտ ծծումբ բեր, դու, իմ մայրիկ, դարմանը այս գարշանքի դեմ,
քեր և կրակ,

480 Որ դահլիճը ծխահարեմ, իսկ հետո դու գնա կանչիր,
Թող գա այստեղ Պենելոպեն նածիշտ կանանց հետ միասին,

Բայց հորդորիր, որ հավաքվեն ու այստեղ գան տանը եղած
բոլոր ծառայք»:

Եվ Եվրիկլիան՝ սիրած դայակն, այսպես ասաց այնժամ նրան.
«Ո՛հ, որդյակս, ճիշտ է, այո՛, դու վայելուչ խոսք ասացիր,
Սակայն հիմա նախ քեզ բերեմ հագուստ՝ բաճկոն ու պատմունան,
Քանզի չէ՞ որ անպատշաճ է, որ դու քո տանն հագած լինես մի ցնցոտի,
Որն հագիվ է ծածկում նույնիսկ այդ քո ուտերը թիկնավետ»:

Կրկին նրան պատասխանեց և խոսք ասաց Ոդիսևսը ամենիմաց.
«Նախ դու գնա՛ և կրա՛կ բեր, որ դահլիճում այդ կրակը հիմա լինի»:

490 Ասաց այդպես, լսեց նրան սիրած դայակն, հնազանդված:
Գնաց, բերեց հուր և ծծումբ, իսկ Ոդիսևսը անհապաղ
Վստեց ծծումբն և շուտափույթ ծխահարեց մեծ դահլիճը
ու բակն ամբողջ:

Մինչդեռ գնաց պառավն արագ Ոդիսևսի շքեղաշոր մեծ տան միջով,
Համբավ տարավ բոլոր կանանց և հորդորեց, որ հավաքվեն
ու գան շուտով,

Դուրս թափվեցին սենյակներից և շուտ եկան՝ խանձողները
ձեռքով բռնած,

Օղակեցին Ոդիսևսին, փաթաթվեցին ու գրկեցին նրան սիրով
ու սրտագին,

Ողջունելով՝ համբուրեցին նրա գլուխն և ուտերը
Ու սեղմեցին նրա ձեռքը, իսկ Ոդիսևսն գորովանքով,
Սիրակարոտ, ջերմ լաց եղավ ու հեծեծաց, լա՛վ ճանաչեց նա բոլորին:

Ե ր գ ք ս ա ն է ր ե ք ե ր ո ր դ

ՊԵՆԵԼՈՊԵՆ ԾԱՆԱԶՈՒՄ Է ՈՂԻՍԵՎՍԻՆ

Որախ սրտով ու ցնձալից վազեց պատալը վերնատուն,
Որ տիրուհուն հայտնի շուտով, թե ամուսինն իր եկել է, տանն է արդեն:
Ծարժվում էին նրա ծնկներն արագորեն, աճապարում էին ոտքերն:

Անդ նա թեքվեց նրա գլխին ու խոսքն ասաց իր սրտագին.
«Վե՛ր կաց, որդյակ իմ սիրելի, Պենելոպե, որ աչքովդ դու տեսնես այն,
Ինչ որ սրտանց միշտ փափագում էիր այստեղ դու օրնիրուն:
Տե՛ս, ժամանեց Ողիսևսը, իր տուն եկավ, թեպետ գալուստն է անագան.
Նա կոտորեց արդեն նախտ սեղեխներին, որոնք այստեղ

ամբարտալյան

վատնում էին իր տուն-տեղը, գույքը լափում և հալածում իր զավակին»:

10 Պատասխանեց և խոսք ասաց իսկույն նրան Պենելոպեյն խոհեմամիտ.
«Ո՛հ սիրելիդ, դու իմ մայրիկ, աստվածները խելքից հանել են
արդեն քեզ,

Եվ կարող են խելքից հանել նրանք նույնիսկ խելոք մարդուն,
Նույնպես կարող են հիմարին դարձնել խելոք և իմաստուն:
Դու էլ արդեն մտակույր ես, թեպետ իրոք խելոք էիր մինչև այսօր.
Ինչո՞ւ ես ինձ այդպես ծաղրում, երբ սիրուն է իմ բազմաթախիժ,
Մինչ հայտնում ես դու սուտ մի լուր: Տե՛ս, դու ինձ գուր

արթնացրիր քաղցր քնից,

Որ փակել էր արտևանունքն իմ խորախոր, քնած էի անդորրալետ:
Այդպես երբեք քաղցրանուշիկ ես չեմ քնել այն օրվանից, երբ Ողիսևսն
Թողեց, գնաց դեպի Իլիոնն այն անհիճյալ, հորջորջանքի միշտ անարժան:

20 Իջիր շուտով և ցած գնա, վերադարձիր սենյակը քո,
Քանզի եթե մեր կանանցից մեկ ուրիշը այդպես ինձ մոտ
գար ու հայտներ

Մի այդպիսի անհետք լուր և արթնացներ քաղցր քնից,
Ետ քշելով՝ ես սաստկաբար կարտաքսեի նրան նորից դեպի դահլիճ,

Իսկ քեզ հիմա քո զառամյալ ծերությունը փրկեց մի այն»:
Եվ Եվրիկլիան՝ սիրանվեր այն դայակը, նրան նորից իր խոսքն ասաց.
«Ո՛չ, քա՛վ լիցի, քեզ, զավակս, ես չեմ ծաղրում, այլ խոսում եմ
ճշմարտացի,

Ողիսևսն է, հանց ասացի, արդեն եկել: Նա այստեղ է, իր հարկի տակ
Այն շրջիկն է Ողիսևսը, որին բոլորն աստ անարգում էին տան մեջ,
Մինչդեռ այստեղ Տելեմաքոսն վաղուց արդեն այդ լավ գիտեր,

30 Բայց թաքցնում էր զգուշաբար իր հոր մտքերն ու միտումներն,
Որ վիսացող խոսնայրներից լուծի վրեժն իր ահավոր»:
Ասաց այդպես, ցնձաց սիրտը Պենելոպեի, իր մահիճից նա դուրս թռավ,
Գրկեց սրտանց նա պատալին և աչքերից թափեց արցունքը աղեկեզ,
Ապա նորից նա ձայն տվեց ծեր դայակին և խոսքն ասաց այս թևավոր.
«Ա՛խ, մայրիկ ջան, դու, սիրելիդ, ճշմարիտը ինձ այժմ ասա.
Եթե իրոք նա եկել է արդեն իր տուն, ինչպես հիմա դու հայտնեցիր,
Ապա ինչպե՞ս նա կարեցավ մե՞ն ու մե՞նակ դուրս գալ ընդդեմ

խոսնայրների,

Որոնք չէ՞ որ միշտ հավաքվում էին այստեղ մե՞ծ բազմությունը
ու խմբովի»:

Եվ Եվրիկլիան, ծեր դայակը, նրան կրկին իր խոսքն ասաց և առարկեց.

40 «Ես չտեսա և չգիտեմ, բայց լսեցի անդ կոտորվող մարդկանց հեծե՛ծն:
Նստած էինք մենք շատ հեռու, ահաբեկված, դողողալով.
Հրաշակերտ մեր սենյակում, դռներն էին փակված ամուր և քաշակոտ,
Մինչև որ անդ հանկարծ եկավ Տելեմաքոսը՝ քո որդին,
Եվ դուրս կանչեց ինձ սենյակից: Հայրն էր հղել նրան, որ գա

և ինձ կանչի,

Ու ես նրան գտա հանկարծ դիակների կույտերի մեջ այնտեղ կանգնած,
Դիակների, որոնք ամուր այն հատակին թափված էին իրար վրա:
Եվ, հիրավի, անդ մեծապես պիտի խնդար քո սիրուն ուրախ
ու ցնձալետ,

Թե տեսնեիր նրան այնտեղ արնաշաղախս, որպես առյուծ:
Հիմա բոլոր այդ դիակներն հավաքված են այլուր, բակի դռան ետև,

50 Իսկ Ողիսևսն անդ մեծագույն կրակ վառեց դահլիճի մեջ,
իր հարկի տակ,

Ծծումբն այրեց ապարանքում, ինձ էլ հղեց, որ կանչեմ քեզ:
Վե՛ր կաց, գնա՛նք, ինձ հետևիր, ժամն է հասել, երբ սրտերը
ձեր երկուսի

Պիտի լցվեն խոր բերկրանքով, քանզի շա՛տ եք դուք հանդուրժել
վիշտ և աղետ:

Հիմա արդեն կատարված է երկարամյա ձեր մեծ փափագը պատարուն,
Քանզի եկավ նա կենդանի, իր օջախի մեջ է արդեն,

Այժմ իր տան մեջ նա գտավ քեզ և իր որդուն: Սեղեխներին էլ
չարամույց,
Որ խայտառակ գործեր արին, նա կոտորեց, վրեժն առավ
իր հարկի տակ»:

Այնժամ նրան նորից ասաց Պենելոպեան իմաստասիր.
«Ա՛խ, սիրելիդ, դու իմ մայրիկ, հարկավոր չէ դեռ շատ ցնձալ,
ուրախանալ,

60 Ինքդ գիտես, բոլորն էին խիստ փափագում արտանց նրա վերադարձին,
Մանավանդ ես ամենից շատ, այլև որդիս ինձնից ծնված:
Այնուհանդերձ՝ համոզիչ չէ այն, որ դու ինձ հաղորդեցիր,
Այլ երևի գերահռչակ խոսնայրներին անդ կոտորեց ինքը աստված՝
Չարադատան նրանց գործից և դժնաբարք արարքներից
խիստ վրդովված:

Մահկանացու մարդկության մեջ նրանք բնավ չէին հարգում
ոչ մի մարդու
Եվ ոչ ոքի, թեկուզ լիներ նրանց դիմողը բարեմիտ կամ չարագործ,
Ու պատժվեցին նրանք որպես ոճրագործներ: Մինչ Ռոֆսուսն
անվերադարձ

Կործանված է, ա՛խ, նա կորավ օտարության մեջ հեռավոր»:
Եվ Եվրիկիան, դայակը այն սիրատենչիկ, կրկին նրան
իր խոսքն ասաց.

70 «Ո՛հ, զավակս, այդ ի՞նչ խոսք էր, որ դուրս թռավ քո շուրթերից,
Դու կարծում ես՝ ամուսինդ, որն այստեղ է, նույնիսկ իր սուրբ
օջախի մոտ,
Իր տունն այլևս ետ չի՞ դառնա. թերահավատ ես դու դեպ ինձ,
Ահավասիկ՝ քեզ ես կասեմ մի այլ նշան հաստատական ու բացահայտ.
Սպին նրա, որը նրան վարազն հասցրեց իր ատամով ճերմակափայլ,
Որն ես տեսա ոտքերը յուր լվանալիս և կամեցա հայտնել քեզ այդ,
Բայց նա ձեռքով իմ քերանը սեղմեց, փակեց այնժամ իսկույն
Եվ, որպես խիստ զգուշավոր, խորամանկ մարդ, արգելեց ինձ
պատմելն անգամ:

Գնա՛նք ուրեմն, ինձ հետևիր, իսկ այդ հարցում ես գլուխս գրավ կտամ.
Եթե իրոք խաբում եմ քեզ, ինձ սպանիր դու ժանտ մահով ապերջանիկ»:
80 Պատասխանեց այնժամ նրան Պենելոպեան խոհեմամիտ.
«Ո՛հ, սիրելիդ, դու իմ մայրիկ, միտումները հավերժակց
աստվածների

Դժվար թե դու լավ իմանաս, թեպետ և դու խոհական ես ու խերահաս,
Սակայն գնանք իմ որդու մոտ, որպեսզի գեթ տեսնեմ այնտեղ
Խոսնայրներին այն սպանված, այլև քաջին, որ կոտորեց իրոք նրանց»:
Այդպես ասաց, վերնատնից իջավ, գնաց, բայց արտում իր
տարակուսանք,

Միտք էր անում նա խորասույզ. արդյոք հեռվի՞ց հարց տավ
սիրած իր ամուսնուն,
Թե՞ մոտենալ ու փաթաթվել և համբուրել նրա գլուխն ու ձեռքերը:
Եկավ, մտավ նա դահլիճը, անցավ շենքը այն վիմակերտ,
Ասրա նստեց Ռոֆսուսին դեմ-հանդիման, կրակի մոտ և պատի տակ,

90 Մինչդեռ նստած էր Ռոֆսուսը առնթոյն բարձր պուրձի:
Գլուխը կախ՝ նայում էր ցած՝ սպասելով, որ գեթ լսի,
Թե ի՞նչ կասի կինն ազնվագույն, երբ իր աչքով տեսնում է այժմ
իր ամուսնուն,
Բայց կինն այդպես նստած էր լուռ, քանզի սիրուն իր կաշկանդված էր
խոր զարմանքից.

Մեկ ուզում էր ճիշտ ընդունել, որ ինքն է նա իր ամուսինն,
Մեկ էլ, կարծես, չէր ճանաչում նրան՝ հագած այն քրքրված
գարշ ցնցոտին:

Եվ նախատեց Տեղեմաքոսն այնժամ նրան, անվամբ կոչեց ու այս ասաց.
«Մա՛յր իմ, կամ դու չմայրն ես իմ, կամ սիրտ ունես ժանտ ու դժկամ:
Ինչո՞ւ ես դու ստոն և օտար դեպի հայրըս: Նստած այստեղ նրա դիմաց՝
Խոսք չես ասում, հարց չես տալիս, չես էլ ուզում խոսել անգամ:

100 Ո՛հ, չէր կարող ոչ մի այլ կին, արտով թեկուզ շատ անողորմ,
Վատ ընդունել իր ամուսնուն, որն, հանդուրժած բյուր-բյուր աղետ,
Վերադառնար իր երկիրը հայրենավանդ քսան տարի անցնելուց ետ:
Մինչ քո սիրուն է քո կրծքի տակ ավելի՞ պիճդ, քան ասպտած
ամուր մի քար»:
Իսկույն նրան պատասխանեց և խոսք ասաց Պենելոպեան խոհեմամիտ.
«Ո՛հ, իմ որդյակ, սիրտս, ահա իմ կրծքի տակ, կաշկանդված է
խոր զարմանքից,
Չգիտեմ՝ ի՞նչ ի՞նչ պատահեց, ո՛չ կարող եմ մի խոսք խոսել,
հարցմունք անել,

Ո՛չ էլ նայել նրա դեմքին, դեմ-հանդիման: Եթե, սակայն,
Ռոֆսուսն է սա իսկիսկ վերադարձած, որն իր տունն է արդեն եկել,
Մենք իրարու ավելի լավ կճանաչենք, քանզի մեր մեջ կա մի նշան՝

110 Այլ մարդկանցից կաղտնածածուկ, որը միայն մենք լավ գիտենք»:
Ասաց այդպես, ժպտաց այնժամ բազմաչարչար Ռոֆսուսը
աստվածային
Եվ փոթապես Տեղեմաքոսն իր խոսքն ասաց այս թևավոր.
«Տեղեմաքո՛ս, թույլ տուր մորդ, որ իր տան մեջ նա ինձ փորձի.
Նա ինձ շուտով ավելի լա՛վ, հաստատապես կճանաչի,
Մինչդեռ հիմա խորշում է խիստ, զանց է առնում ինձ ընդունել,
ինչպես ես կամ,

Քանզի ես այժմ կեղտի մեջ եմ, գարշ ցնցոտի ունեմ հագած:
—363—

Իսկ մենք հիմա լավ մտածենք՝ ինչպե՞ս անել, որ մեր գործը
լավ ընթանա:

Երբ մեկնումեկն իր երկրի մեջ սպանում է այնպիսի մարդ,
Որ մահից ետ չունի նույնիսկ պատվախնդիր, վրիժառու ազգականներ,
120 Մարդասպանն այդ, թողած երկիրն իր հայրական, իսկույն դիմում է
փախուստի:

Մինչ մենք այստեղ կոտորեցինք այս քաղաքի պատվարն ամբողջ,
Իթակեի գերահռչակ, մեծ քաջերին: Արդ, այդ մասին դու հոգատար,
լա՛վ մտածիր»:

Պատասխանեց իսկույն նրան և խոսք ասաց Տելեմաքոսը խորիմաց.
«Հա՛յր սիրելիդ, այդ ի՛նքն տես, դո՛ւ լավ գիտես. հանց ասում եմ՝
մարդկության մեջ

Դու խելքովդ գերազանց ես ու իմաստուն, և չի կարող մրցել քո դեմ
Յորենակեր ու երկրածին և ո՛չ մի մարդ, ո՛չ մի անհատ: Մենք աննկուն
Կը հետևենք քեզ համարձակ, և քաջության ոչ մի պակաս չի զգացվի:
Հանց գորավիզ՝ մենք քեզ կօգնենք, որքան կորով և ուժ ունենք»:
Նրան իսկույն պատասխանեց և խոսք ասաց Ռոխևալը ամենիմաց.

130 «Ահա թե ես ի՛նչ եմ ասում, այն, որ թվում է լավագույն և վայելուչ.
Լվացվեցե՛ք նախ և առաջ, հագե՛ք ապա պատմունքներ
Եվ պատվիրե՛ք ստրուկ կանանց՝ զգեստ հագնել գեղեցկազարդ:
Թող երգիչը աստվածային, ձեռքը առած կիթառն հնչուն,
Որսխալվես երգեր երգի, թող թնդան աստ պար ու նվագ
և կաքավանք,

Որ ամեն մարդ, ով անցնում է ճանապարհով կամ ապրում է
չրջակայքում,
Լսելով այդ՝ կարծիք կազմի ու մտածի, թե այստեղ մի հարսանիք կա,
Որպեսզի գեթ խոսնայրների այս մեծագույն կոտորածի համբավը այժմ
Քաղաքի մեջ չտարածվի, մինչև գնա՛նք մենք այստեղից,
Հեռանա՛նք դաշտ, գնանք այգին մեր ծառաշատ, որ այնուհետ
մենք միասին

140 Խորհորդ անենք, թե որպիսի՞ լավագույն էք մեզ կառաքի Օլիմպացին»:
Ասաց այդպես, և անասցին նրանք, պատվերն այդ լսեցին:
Լվացվեցին նախ և առաջ, ապա հագան պատմունքներ,
Զարդարվեցին ստրուկ կանայք: Այնժամ երգիչն աստվածային
Վերցրեց կիթառն իր սնամեջ, քաղցր երգեց և բորբոքեց նրանց հոգի՞ն
Վառ տենչանքով անուշ երգի, նուրբ նվագի և մեծասքանչ
պարերգության,

Եվ կաքավող տղամարդկանց, պերճագոտի այն կանանց
Բյուր ուրբերի դոփյուններից ողջ ապարանքը դրդրոյաց,
Եվ ամեն մարդ, ով այդ լսեց, այս էր խոսում դրսում, այնտեղ.

«Հարսանի՛ք է, մեկը անշուշտ ամուսնացավ քազմախոսնայր
թագուհու հետ:

150 Անպիտա՛ն կին. էլ չսպասեց իր ամուսնուն օրինական ու դերակա,
Որ պահպանի այս մեծաշուք տունը նրա, մինչև որ նա ետ դառնա, գա»:
Այդպես էին խոսում դրսում, չգիտեին, թե իսկապես ի՞նչ կատարվեց,
Մինչ մեծապիրտ Ռոխևալն մատուցող կինը տնօրեն, Եվրինոսեն,
Տան մեջ այնտեղ լավ լողացրեց, օժեց նրան յուղով փայլուն,
Բերեց, հագցրեց նրան բանկոն և պատմունքան մի պերճաշուք:
Աթենասը նրա գլխին ցողեց պաշտոն և գերագույն մի պերճություն,
Դարձրեց տեսքով շատ հաղթանդամ, քաջահասակ և ամրակազմ,
Ծածկեց գլուխն իր մազերով գեղազանգուր, հանց հակվեցի
մի վառ ծաղիկ:

Ինչպես ոսկին ու արծաթն է իրար կցում ճարտարագործ
վարպետն հմուտ,
160 Որին քազում արվեստների ձիրքն են տվել ինքն Աթենասն ու
Հեփեստոսն,
Որպեսզի նա իր կերտվածքին ձև տա շքեղ, հանց գերհրաշ սքանչելիք,
Այդպես այնժամ նրա գլխին և ուսերին նա շնորհեց շուք և պերճանք,
Եվ դորս եկավ լոգարանից Ռոխևալը՝ տեսքով նման անմահներին.
Նա ետ եկավ, նստեց կրկին այն քազոցին, ուստեք առաջ

նա վեր կացավ,
Անդ, իր կնոջ դեմ-հանդիման, ապա դարձավ և այս խոսքը ասաց նրան.
«Տարօրինակ է, որ անգոր կանանց մեջ քեզ աստվածները Օլիմպակյաց
Սիրտ են տվել անդորովելի և ամենից ավելի ժա՛նտ, անագորույն:
Ո՛չ, չէր կարող ոչ մի այլ կին, թեպես սիրող նրա լիներ դաժանագույն,
Վառ ընդունել իր ամուսնուն, որն հանդուրժած բյուր-բյուր աղետ,

170 Վերադառնար իր երկիրը հայրենավանդ քան տարի անցնելուց ետ:
Դեհ, ինձ համար ա՛յլ անկողին ասրթիր շուտով, դալա՛կ մայրիկ,
Գեթ մե՛ն-մե՛նակ պատկեմ հիմա, ճիշտ որ սիրուն է սրա կրծքում
երկայթաճույլ»:
Նրան իսկույն պատասխանեց և խոսք ասաց Պենելոպեն խոհեմամիտ.
«Զարմանալին դո՛ւ ես, կարծեմ, նպե՛րտ չեմ ես, ոչ էլ հպարտ,
Արհամարհել քեզ չեմ կարող: Լավ հիշում եմ՝ ինչպես էիր
դու այն պահին,

Երկայնաթի նստի վրա Իթակեից հեռանալիս այն ժամանակ:
Լա՛վ, Եվրիկիա, մահնակալին այն հաստամետ ու ամրապինդ՝
Սրա համար հիմա շուտով այնտեղ ասրթիր դու անկողին,
Բայց չսարքես անջարանում, դորս քեր և դիր մահնակալը,

180 Որը անձամբ սա է շինել, փոփր օղիկ և վերկից փայլուն վերմակ»:
Այդպես ասաց նա՝ ամուսնուն իր փորձելով, քայց վրդովվեց Ռոխևալը,
Հուզված սրտով պատասխանեց իսկույն նրան և խոսք ասաց.

«Ա՛յ կին, այդ ի՞նչ խոսք խոսեցիր սրտակոտոր և անհաճո,
Ո՛վ է դրել իմ մահճակալը ուրիշ տեղ, և դժվար թե այդ կատարեր
Նույնիսկ գորեղ վարպետ մի մարդ, և միմիայն ինքը աստված,
Եթե իրոք նա կամենար, հեշտ կարող էր փոխադրել այն ուրիշ տեղ,
Իսկ մարդկանցից այդ չէր կարող անել ոչ ոք: Երիտասարդն

անգամ հզոր

- 219 Երբ կարենա տեղից շարժել այն մահճակալը քաջարվեստ,
Որն առանձին նշան ուներ, ես ինքս էի կառուցել այն, և ո՛չ այլ ոք:
Մեր բակի մեջ կար մի բարձր, բազմատերև թուփ՝ թզենի,
Ամբարձուղեշ, ծաղկափթիթ, և նման էր դրա թունը մի հաստ պուճի:
Դրա շուրջը ես շինեցի մի ննջարան և կերտեցի այդ ամբողջը
Խիտ, պնդագույն՝ վեճ քարերից, այլև վերուստ կառուցեցի ես մի կտոր,
Նաև դռներ ես կախեցի՝ կերտված շքեղ ու հույժ ամուր:
Այնուհետև ես կտրեցի այդ թզենու բազմատերև, պերճ ճյուղերը
Եվ, կտրելով թունն արմատից, սուր պղինձով տաշեցի կոկ
Ու հղկեցի այն գեղաղեշ, ճարտարակի, լարով չափված ու ճշգրիտ,
Պինդ գշիրով ծակծկեցի, պատրաստեցի մահճակալին մույթ ու նեցուկ:
Երբ այդպիսով ավարտեցի գործն սկսված՝ մահճակալը այդ անաղարտ
- 200 Զարդարեցի ես փղոսկրով՝ արծաթապատ, ոսկեճամուկ,
Ասրս վրան ես քաշեցի շողշողենի ու շառագույն՝ եզան կաշի:
Արդ, դրանք են նշանները մահճակալի, որ հայտնեցի, բայց չգիտեմ,
Ա՛յ կին, դե՞ռ կա՞ իմ մահճակալը անվնաս, թե՞ մեկնումեկը

մարդկանցից,

Բռնն հերձելով այն թզենու, փոխադրել է մի ուրիշ տեղ»:
Ասաց այդպես, իսկույն կնոջ սիրտն ու ծնկները դողացին,
Ծիշտ հարմարեց նա նշաններն, որ Ողիսեսը թվարկեց այդքան

հաստատ,

- Արտասուկեց նա, վրա հասավ, վզով ընկավ Ողիսեսի, փարվեց նրան,
Ջերմ, խանդակաթ նա համբուրեց նրա գլուխն ու խոսք ասաց.
«Մի՛ տրտմե՛ս դու ինձ վրա, ո՛վ Ողիսես, մարդկության մեջ
210 Գերազանցն ես դու թո խելքով: Աստվածները մեզ մատնեցին
աղետների.

Նախանձահույզ՝ չկամեցան, որ միշտ լինենք մենք իրար հետ
Ու, ցնծավետ ապրելով կրակքը մեր ջահել, հասնենք շեմքին՝

մեր ծերության,

Իսկ հիմա դու մի՛ գայրանա, իմ դեմ բնավ մի վրդովվիր,
Որ, նախապես տեսնելով քեզ, չգգվեցի այսպես սրտանց ու սիրալիր,
Քանզի սիրտն իմ արասփում էր միշտ սիրեցյալ իմ կրծքի տակ՝
Միգուցե ինձ մեկնումեկը եկվորներից խաթի հանկարծ:
211 Դր որ շատ կան խարդախ մարդիկ միտումներով նենգ ու դաժան,
Եվ Հեղինեն արգիացի, որ ծնունդն էր Ջեսս գգոնի,

- 212 Եր միանա անկողնու մեջ սիրով օտար եկվորի հետ,
220 Եթե կանխավ նա իմանար, որ աքեյանց քաջ զավակները մարտաշունչ
Կրկին կռվով ետ կբերեն իրեն իր տունն, հայրենական սիրած երկիրն:
Աստվա՛ծն այդպես նրան դրդեց, որ կատարի նա գործը այդ

քարվականքի,

- Բայց նախապես իր հոգու մեջ չհասկացավ նա այդ ոճիրը խուժադուժ,
Որից նաև սկիզբ առան աղետները մեր տանջանքի:
Եվ այժմ ահա, երբ նշանները մահիճի թվարկեցիր դու քացահայտ,
Որո՞նք բնավ մարդկության մեջ դեռ չի տեսել և ոչ մի մարդ,
Այլ միմիայն այդ գիտեհնք լոկ դու և ես, այլև մեկը նաժիշտներից,
Ակտորիսը, որին հայրս ինձ շնորհեց, որպեսզի լաւ այստեղ ինձ հետ,
Նա որ դուրը ննջարանիս պահպանում էր անվերջ արթուն:
230 Դու, Ողիսես, համոզեցիր սիրուն իմ արդեն, որ տոկուն էր և անվկանդ»:
Այդպես ասաց և առավել հուզեց նրա սրտում փափագը ջայլանքի,
Նա լաց եղավ, գրկեց կնոջն իր սիրատենչ և անբաւիր:
Ինչպես երկիրն է բերկրալի՛ հանկարծ թփում նավորդներին,
Որո՞նց նավը գեղեցկակերտ խիստ խորտակեց Պուսիդոնը ծովերի մեջ՝
Բորբոքելով անեղագոջ հուժկու ալիք և փոթորիկ,
Ծատ քչերը խուսափեցին անդունդներից ճերմակ ծովի
Եվ, թաթախված ամբողջ մարմնով աղի ջրում, լող տվեցին

դեպի ցամաք

- Ու ցնծացին, որ, աղետից խուսափելով, դուրս են գալիս երկրի վրա,
Այդպես ցնծաց Պենելոպեն, երբ նայում էր իր ամուսնուն,
240 Եվ չէր կարող ամենևին նրա վզից պոկել ձեռքերն իր սպիտակ:
Եվ վարդամատն Արշալույսը նրանց այդ հորդ արցունքի մեջ
պիտ երևար,

Եթե նոր բան չմտածեր Աթենասը, աստվածոմիճն պայծառաշյա.
Նա աշխարհի սահմանի մոտ կանգնեցրեց Գիշերն երկար ժամանակով,
Ուշացրեց օվկիանոսում ելքը պայծառ ու ոսկեգամ Արշալույսի
Եվ արգելեց լծել ձիերն արագաշու և կորովի՝
Մարդկանց համար միշտ լուսաբեր Փաեթոնին ու Լամպուսին:

Եվ կնոջն իր այնժամ դիմեց ու խոսք ասաց Ողիսեսը ամենհիմաց.

«Ա՛յ կին, ավա՛ղ, դե՞ռ չենք հասել մենք սահմանին աղետալից
մեր փորձության,

- Ինձ տակափին դեռ սպասում են քյուր ժանտալի, ծանր գործեր,
250 Որո՞նք բոլորն են անխուսափ պիտ հանդուրժեն և կատարեն,
Ինչպես ասաց և գուշակեց երբեմն հոգին Տիրեսիասի,
Այն օրը հենց, երբ որ իջա և գնացի ես օթևանը Հադեսի,
Որ գեթ հարցնեն ընկերներիս, նույնպես և իմ վերադարձի
մասին այնտեղ:

Բա՛վ է սակայն, Պենելոպե, ժամանա՛կն է. գնանք արդեն
Պր, իրար մոտ այնտեղ պսակած, հրճվենք քնով քաղցրանուշիկ»:
Եվ թագուհին՝ խոհեմամիտ Պենելոպեն, այնժամ նրան այսպես ասաց.
«Քեզ անկողին աստ կլինի՛, երբ քո հոգին այդ փափագի,
Քանի որ այժմ աստվածները այդ կամեցան, և դու կրկին
Վերադարձար, եկար քո տունը բարեկարգ և քո երկիրը հայրենի,
260 Բայց քանի որ այժմ հայտնեցիր գալիք գործը, որ աստվածն է

Պատմի՛ր դու ինձ այդ ապագա պայքարը քո, թեպետ գիտեմ,
Պիտի հայտնի այդ լինի ինձ: Վատ չէ սակայն, եթե հիմա այդ իմանամ»:
Եվ Ոդիսևսն ամենիմաց պատասխանեց այնժամ նրան և խոսք ասաց.
«Ո՛հ, դու դժբախտ, ինչո՛ւ կրկին դու ինձ այդպես ստիպում ես
Որ պատմեմ այդ: Լա՛վ, կասեմ քեզ ու չեմ ծածկի ես ոչ մի բան,
Բայց քեզ համար ուրախալի չի լինի այդ, ցնծալու չեմ նույնպես և ես:
Նա ինձ ասաց, որ դեռ մարդկանց շատ քաղաքներ ես պիտ անցնեմ,
Որ տակավին, ձեռքիս բռնած ամբասիկնդ թին, պիտի երկար

Մինչև որ գամ, հասնեմ մարդկանց, որոնք ծովին անձանոթ են,
Ծով չգիտեն

270 Եվ կերակուրն ուտում են միշտ սուսնց աղի, որոնք նաև
Անտեղյակ են ու չգիտեն՝ ի՞նչ է նալը արագաչու և կարմրակող,
Եվ չեն տեսել թեթև թիեր, որոնք թևերն են սև նավի:
Ասաց, որ ինձ նա ցույց կտա մի լավ նշան, որն ես երբեք չեմ մոռանա.
Երբ, շրջելիս, ես հանդիպեմ որևիցե մի ճամփորդի,
Որն հարց տա ինձ՝ «այդ ի՞նչպիսի հացի թիակ կա քո ուսին

Սյդ ժամանակ թեթև իմ թին պիտի ցցեմ, տնկեմ գետին ես փոթթապես,
Պիտի հարուստ զոհ մատուցեմ երկրասան Պոսիդոնին գերերջանիկ.
Մի խոչ, մի եզ և խոզերին բեղմնավորող մի մեծ վարազ
Եվ, այնտեղից ետ գալով տուն, զոհ պիտ քերեմ հարյուրաեզն
280 Անծայրածիր երկնքի տեր աստվածներին հավերժակյաց,
Եվ բոլորին, ինչպես հարկն է: Մինչ մահը ինձ հասնելու չէ ծովի վրա,
Այլ կլինի այն շատ թեթև և անտանջանք, ինձ կտանի
Իմ լուսավոր ծերության մեջ, երբ որ լինեմ շրջապատված
Ես հանրային երջանկությանը ժողովրդի: Ասաց, որ սա կկատարվի»:
Նրան նորից իր խոսքն ասաց Պենելոպեն խոհեմամիտ.
«Եթե իրոք աստվածները սահմանել են այդ ծերությունը երջանիկ,
Ապա ուրեմն հույս կա, որ մենք աղետներից խույս պիտի տանք»:

Այդպես նրանք այդ գործերից խոտում էին իրարու հետ,
Մինչդեռ արդեն Եվրինոմեն և դալակը, նրագների վառ լույսի տակ,
290 Նրանց մահիճն հարդարեցին, պերճ անկողինը փափկագույն:
Երբ, ծրածիր աշխատելով, ննջարանում մահճակալը լավ սարքեցին,
Դալակն ավսարդ քուն մտնելու իր սենյակը գնաց կրկին:
Եվրինոմեն, վառ նրագը ձեռին բռնած, իբրև ծառա-սենեկապան,
Պենելոպի, Ոդիսևսի առաջն ընկած, տարավ նրանց դեպ ննջարան,
Իսկ երբ քերեց, հասցրեց այնտեղ, ննջարանը, ինքը դարձավ
ու ետ գնաց:

Ուրախասիրտ նրանք մտան իրենց սույոր ու վաղեմի մահիճի մեջ:
Այդ ժամանակ Տեղեմարուն, եզնարածը և խոզարածն
Ընդհատեցին ոտքի դոփյունն ու պարերը, դադարեցին նաև կանաչք,
Եվ քուն մտան բոլորեքյան ասարանքում սովերամած:
300 Երբ երկուսով նրանք սիրո խոր տարփանքը վայելեցին,
Ակնեցին իրար պատմել, զրույց անել հոգեզվարճ:
Պատմեց կինը չքնադազեղ, որքա՛ն կրեց ինքը իրոք
Իր հարկի տակ դաժան վշտեր՝ միշտ նայելով սեղեխներին
ամբարտաւան,
Ինչպե՛ս գույքը վատնում էին և լափլիսում բյուրաբազում եզ ու ոչխար,
Որքա՛ն նաև քաղցր գինի կարասներով դատարկեցին:
Պատմեց նաև Ոդիսևսն իր գլխով եկածն և այն, որքա՛ն ժանտ աղետներ
Նա պատճառեց իր թշնամյաց, որքա՛ն ինքն էր կրել վշտեր
ու տառապանք:

Եվ լսում էր Պենելոպեն հոգեզվարճ, և քունն անգամ նրա աչքին,
Թարթիչներին, բնավ չիջավ, մինչև որ նա լսեց ամբողջ պատմությունը:
310 Նախ սկսեց պատմել նա այն՝ ինչպես ինքը հաղթահարեց կիկոններին,
Ինչպես եկավ այնուհետև նա լուսոփազ ազգի երկիրը պողատու,
Ի՛նչ կատարեց կիկլոպն ահեղ, ինչպե՛ս նրան ինքը պատժեց
դաժանորեն՝

Հանուն սիրած ընկերների, որոնց հրեշն այդ լափլիսեց անդ անողոք,
Ինչպե՛ս հասավ Էդոսին, որն ընդունեց իրեն սիրով և ջերմեռանդ
Ու արտալի ճանապարհեց, բայց չթողեց բախտը, այլա՛դ, որ գա, հասնի
Միրատենչիկ իր հայրենիք, ինչպե՛ս ապա թնդաց ահեղ մի փոթորիկ,
Քշեց, տարավ իրեն, խորունկ հառաչելիս, դեպի ծովերը ձկնավետ,
Ինչպե՛ս հետո եկավ հասավ Տեղեպիլոս, քաղաքը այդ լեատրիգոնյանց,
Որոնք նավերն ու գեղեցկուտն ընկերներին ջախջախեցին անդ չարաղետ,
320 Բայց խույս տվեց այնժամ մահից Ոդիսևսը, իր սևաթույր նավի վրա,
Պատմեց գործերը Կիրկեի խիստ խորամանկ, հնարագետ ու գերհրաշ,
Ինչպե՛ս հասավ իր բազմաթի նավի վրա տունն Հադեսի այն հեղձուցիկ,
Որպեսզի անդ հարցմունք անի թեքեացի Տիրեսիասի սուվեր-հոգուն,

Որ և տեսալ ինքը բոլոր ու բազմաբնուր ընկերներին իր ուղեկից
Եվ իր մորը, որ ծնել էր և սնել էր իրեն մանուկ իր հասակից,
Ինչպե՛ս լսեց նա այնուհետ ծովալքների երգն ու նվագն հրապուրիչ,
Ինչպե՛ս հասալ նա ժայռերին այն շարժըվող, Քարիքոխին
այն ահավոր

Եվ Ակիլլային, որից երբեք չեն ազատվել մարդիկ բնավ,
հանց բախտավոր,

330 Ինչպե՛ս Զևսը բարձրադողորդ զարկեց շանթով հրաբորբոք
Եվ խորտակեց նավը արագ ու ծովակուր եղան ազնիվ իր ընկերներն,
Մինչդեռ ինքը անդ խույս տվեց ժանտ օրհասից և սև մահից
իր վերահաս,

Ինչպե՛ս պապա նա Օգիգիե կղզին եկալ, դեպ Կալիպսոն հավերժահարս,
Ինչպե՛ս իրեն պահում էր նա քարաչրի մեջ իր խորափոր,
Սնում էր միշտ և փափագում, որ ամուսին դառնա իրեն ինքն հավիտյան,
Խոստանում էր անմահ դարձնել և մշտապես երիտասարդ,
Բայց այդպիսով չհամոզեց սիրուն իր բնավ իր կրծքի տակ,
Ինչպե՛ս հետո, բյուր աղետներ կրելուց ետ, երկիրն եկալ փեակների,
Որոնք իրեն, հանց աստըծու, մեծարեցին սիրով, արտանց,

340 Ինչպե՛ս նրանք սուաքեցին իրեն նավով դեպ սիրելի իր հայրենիքն՝
Ընորհեղով բյուրաբազում ոսկի, պղինձ և հագուստներ, իբրև նվեր,
Եվ հենց որ նա արտասանեց խոսքն այդ վերջին, Քունը իջալ
նրա աչքին,

Քունն հոգու դեղ, որ թողացնում է անդամներն և ցրում է
սրտի ցավերն,
Մինչդեռ մի այլ բան մտածեց Աթենասը, պայծառաչյա աստվածուհին,
Երբ որ սրտանց նա համոզվեց, որ Ոդիսևսը լիովին
Արդեն հրճվեց իր խոր քնով և իր կնոջ անկողինով:
Փոթաճանկի նա հորդորեց, որ հորդահոս Օվկիանոսից շոտով

դուրս գա
Եվ իր լույսը սփռի մարդկանց մահկանացու պերճ Արշալույսը ոսկեգամ:
Այնժամ փափուկ իր մահիճից Ոդիսևսը ելալ, կնոջն այս խոսքն ասաց.

350 «Ա՛յ կին, արդեն մենք երկուսովս լավ հագեցանք՝ կրելով բյուր
ցավ ու փորձանք,
Դու աստ անվերջ և հոգեբոխ ողբում էիր իմ վերադարձը տխրալի,
Իսկ, ես կամալ Զևսի և այլ աստվածների, վշտերի մեջ ու կաշկանդված,
Մաշվում էի հայրենագուրկ, թեպետ և միշտ ձգտում էի ետ գալ
իմ տուն:

Եվ քանի որ մենք երկուսովս հիմա արդեն արժանացանք
մեր մահիճին փափագելի,

Դու այժմ հոգա և պահպանիր մեր գույքն ու գանձն, որքան որ կա
մեր հարկի տակ,
Իսկ պակասը նախիրների, որ վատնել են սեղեխները ամբարտավան,
Ես պմեն կերպ կհայթաջթեմ՝ ինքս կովով, և կամ իրենք աքեացիք
Հոծարակամ կտան մասամբ մինչև լցվեն մեր փարսխները լիովին,
Իսկ ես հիմա պիտի գնամ ծառաշատ մեր այգին ու մեր արտաները՝
360 Տեսնելու անդ իմ ազնիվ հորն, որ հոգեհույզ վշտանում է

միշտ իմ համար:
Եվ քեզ, ա՛յ կին, պատվիրում եմ, թեպետ և դու խելացի ես
ու խորագետ.

Հենց որ ծագի լույս Արևը, համբավն իսկույն կտարածվի
Խոսնալքների մասին անշուշտ, որոնց այստեղ սպանեցի
ես մեր տան մեջ.

Նածիշտ կանանց հետ միասին դու վերնատունը բարձրացիր,
Նստիր այնտեղ և ոչ ոքի էլ չերևաս և ոչ մի խոսք էլ չխոսես:
Ասաց, ապա իր ուսերին գցեց իսկույն գեներն ու զրահը պերճագույն,
Ծոսալ քնից արթնացրեց Տելեմաքին, խոզարածին, եզնարածին,
Հրամայեց, որ և նրանք շոտով հագնեն գեներն արեպան:

Նրանք նրան չհեստացան, այլ զինվեցին հապճեպ գեներով սղնձակուր
370 Եվ, քացելով դռներն ապա, դուրս գնացին, սուաջնորդում էր Ոդիսևսն:
Լույսը քացվեց ու տարածվեց երկրի վրա, Աթենասը պայծառաչյա
Խիտ խավարով պատեց նրանց և քաղաքից հանեց, տարալ արագորեն:

ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Կիլեանական Հերմեսն ահա, ձեռքին ոսկի իր մականը գեղեցկափայլ,
 Որով դյուրութեամբ քննեցնում էր մահկանացու մարդկանց աչքերն,
 Ում կամենար կամ թե նրանց արթնացնում էր խոր քնից,
 Կանչեց իսկույն ու ձայն տվեց խոսակցողների հոգիներին,
 Բոթեց նրանց գավազանով: Մորտապով նրանք նրան հետևեցին:
 Հանց երանք չղջիկների քարանձավի խորքերի մեջ սրբազնաբույր,
 Սերտ իրար հետ և խմբովի, աչ ու ձախ են այնտեղ սուրում,
 Երբ ինչ-որ բան հանկարծակի պոկվի ժայռից և ընկնի ցած,
 Այդպես նրանք ճղրտացին ու պացան: Երախտագործ Հերմեսն իրենց

10 Առաջնորդում ու տանում էր ճանապարհով մի հեղձուցիկ:
 Այդպես անցան դեպ Օվկիանոսն հորդահոսան, դեպի ժայռերը
 Լակաղյան,
 Որտեղ բունն է երազների, ուր Հելիոսի դարպասներն են
 հաստատական,

Այդպես եկան, շոտով հասան ասփոդեյան դաշտավայրը,
 Բնակավայրն հոգիների, ուր ապրում են մեռյալների ուրվականներն:
 Այնտեղ ահա նրանք գտան հոգիներին Պելասսիին Աքիլլեսի,
 Պատրոկլոսի, Անտիոքի ազնվաբարո՝ և անբասիր,
 Մեծ Էասի, որ իր տեսքով գերազանցն էր դանայանց մեջ,
 Բացի միայն գերահոշակ, դիցազնասիրտ Պելասյանից,
 Որի շուրջը անդ հավաքված էին նրանք այդ միջոցին:

20 Եվ մտնեցավ Ագամեմնոն Ատրիդեսի տխուր հոգին:
 Օրջապատել էին նրան հոգիները այն բոլորի, որոնք իր հետ
 Սպանվեցին այնտեղ՝ տան մեջ Էգիսթոսի և օրհասին դարձան քաժին:
 Ահավասիկ, նրան դիմեց այնտեղ հոգին Պելասյանի և խոսք ասաց,
 «Մե՛նք, Ատրիդես, կարծում էինք, որ քաջագոր հերոսներից ամենից շատ
 Դու ես իրոք շանթազվարճ Չեսի սրտին գերհաճելի,
 Ոստի և դու իշխողն էիր բյուր մեծամեծ և գերազոր դյուցազների

Տրոյական երկրավայրում, ուր կրեցինք մենք աղետներ
 բյուր-բյուրավոր,
 Սակյան և քեզ վիճակված էր քաժին դառնալ ժանտ օրհասին,
 Որից չէ՞ որ չի խուսափում միշտ մահապարտ ծնվածներից
 և ոչ մի մարդ,
 30 Բայց ավելի՛ լավ կրիներ, եթե հանդերձ իշխանությամբ քո վեհաշուք,
 Դու տրոյական այն երկրի մեջ մահվան վիճակն ընդունեիր
 առոք-փառոք,
 Եվ քեզ այնտեղ աքեացիք բոլորեքյան կկանգնեին դամբան-բլուր,
 Իսկ դու այնժամ կթողնեիր քո գավակին մեծարելի փառքը հապալս,
 Մինչ այժմ, ավա՛ղ, թշվառ մի մահ քեզ վիճակեց ճակատագիրը,
 ժանտ օրհաս»:

Այն ժամանակ այսպես նրան ասաց հոգին Ատրիդեսի.
 «Ո՛հ, Աքիլլես գերերջանիկ, աստվածակերպ դու վե՛հ գավակդ Պելեսի,
 Դու մահացար Տրոյայի մոտ, այնտեղ, հեռու մեր Արգոսից,
 Եվ քո շուրջը, մարմնիդ հատար մաքառելիս, կոտորվեցին
 քաջ գավակներն
 Աքեացոց և տրոյացոց: Հաղթ կովամարտը մոռացած՝
 40 Ի՛նքդ, հզոր և մեծագույն, ընկած էիր անդ փոշու մեջ փոթորկալից:
 Մինչ մարտեցինք մենք ամբողջ օրն ու կոխվն այդ ընդհատելու
 միտք չունեինք
 Ամենևին, եթե Չեսը չընդհատեր այն՝ բորբոքելով մի փոթորիկ:
 Սակայն մենք քեզ մարտամբոխից դուրս քերեցինք ճավերի մոտ
 Ու դրեցինք պերճ մահիճում: Օճելիքով և գոլ ջրով մենք լվացինք
 Անդ մարմինդ չքնադագեղ, քո շուրջն այնժամ բյուրաբազում
 դանայացիք
 Հորդ թափեցին ջերմ արտասուք և կտրեցին վարսերն իրենց,
 Մայրդ, լսած բոթը՝ մահվան, հավերժակյաց նայադների հետ միասին,
 Ծովից ելավ, հնչեց ջալլանքն, ու բռնկվեց ծովում հանկարծ
 մի ահազանգ,
 Չարհուրելի թեղյուն, աղմուկ. ահաբեկված աքեացիք դողողացին,
 50 Ու քիչ մնաց, որ փախչելով շոտ թափվեին ճավերի մեջ
 այն լայնանիստ,
 Եթե նրանց անդ չզսպեր ծերն իմաստուն, բազմահմար գիտության տեր
 Վե՛հ Նեստորը, որն և առաջ մարդկանց տալիս էր իմաստուն
 միշտ խորհուրդներ:
 Եվ նա ճառեց աքեյանց դեմ ու խոսք ասաց բարեխորհուրդ.
 «Օ՛հ, կանգնեցե՛ք, արգիացիք, մի՛ փախեք դուք, աքեյանց
 քաջ պատանիներ,
 Մայրն է սրա, անմահական նայադների հետ միասին ծովից ելած՝

Այս ծովափին, ահավասիկ, այժմ գալիս է իր մահացած որդուն այցի»:
Ասաց այդպես, և զայնցին փախուսուն իսկույն արեացիք մեծահոգի,
Ու կանգնեցին քո շուրջն այնժամ չքնաղ դասերք ծովակենցաղ

մեծ ծերուկի

Եվ լաց եղան կականալիր, քեզ հագցրին հագուսուն անեղծ,
անմահական:

60 Ինն մուսաներն այնտեղ հերթով երգում էին քաղցր ձայնով
ու սրտատենչ,

Եվ այնքան էր նրանց ողբը հոգետոչոր ու սրտահույզ,
Որ էլ ոչ ոք արեչանց մեջ անդ չմնաց առանց լացի և արցունքի,
Ու շարունակ, տասնկոթ օր գիշեր-ցերեկ, վայելչապես և անընդհատ
Ողբում էին քեզ աստվածներն հավերժակյաց և մահապարտ
անթիվ մարդիկ:

Երբ օրն հասավ տասնութերորդ, մենք հանձնեցինք քեզ խարույկին,
Կոտորեցինք, որպես գոհեր, հույր ոչխարներ և կորեղջյուր
շատ արջառներ,

Քաղցր մեղրով և նուրբ լուղով փարթամ օծված աստվածային
հագուստի մեջ

Հրկիզվեցիր դու խարույկում, իսկ արեչանց մեծ հերոսները բազմաթիվ
Պտույտ եկան ու շրջեցին խարույկիդ շուրջը բոցավառ,

70 Ծորջը թեղաց աղմուկն ահեղ: Երբ վերջապես հեփեսության բոցն
հրկիզեց քեզ,

Մյուս առավոտ հավաքեցինք մենք սպիտակ ոսկորներդ, ո՛վ Աքիլլես,
Որոնք իսկույն մենք լվացինք օձեկիքով, այլև գինով անապական:
Մայրդ տվեց ոսկի կնուճ, Դիոնիսի նվերն էր այդ պերճապաճույճ,
Հեփեսոտոսի կերտվածքն էր դա գեղեցկափայլ, ինչպես հայտնեց
այնտեղ քո մայրն:

Դրա մեջն եմ քո ոսկորները սպիտակ, ո՛վ Աքիլլես դու գերափառ,
Վաղամտիկ Մենետածին Պատրոկլոսի ոսկորների հետ միասին,
Բայց քաջագոր Անտիլոքից առանձնակի, որին բոլոր ընկերներից,
Պատրոկլոսի մահից հետո, հարգում էիր դու առավել ու գերադաս:
Այնուհետև մենք, արգիլանք, ամբողջ գորքով աշտեավոր,

80 Հեղլեսպոնոսի լայնատարած այն ծովափին, ոսկորներիդ վրա այնտեղ,
Քեզ կանգնեցրինք շքեղ դամբան, մեծ ու բարձրիկ և փառահեղ,
Որ երևա, հայտերևակ, այն միշտ հեռուստ, ծովի միջից,
Արդի մարդկանց, նաև գալիք սերունդներին հավիտյանս հավիտենից:
Մայրդ հանեց աստվածների տված շքեղ մրցանակները գեղեցիկ,
Ապա դրեց դրանք իսկույն, հանց ընծաներ, քաջերի դեմ մրցանքի մեջ:
Դու շատ անգամ մասնակցել ես, ո՛վ Աքիլլես, բազմաբազում
թաղումներին

Գերամեծար հերոսների կամ մահացած արքաների,

Երբ պատանիք, գոտեպնդված, կատարում եմ մրցությունը այդ քաջարի,
Սակայն դու խի՛ստ, սրտանց պիտի զարմանայիր, եթե իրոք
տեսնեիր անդ,

90 Թե՛ որպիսի՛ մրցանակներ էր դուրս բերել արծաթաոտ Թետիսն
այնժամ քո մեծ պատվին,

Քանզի չէ՞ որ դու սիրելին էիր անմահ աստվածներին:
Այդպես ահա քո անունը չի վերանա, թեպետ արդեն մահացել ես,
Եվ քո փառքը մարդկության մեջ կմնա միշտ, հավերժորեն,
ո՛վ Աքիլլես,

Իսկ ես, ավա՛ղ, ի՞նչ սուսցա, ի՞նչ մի՛ բերկրանք, երբ պատերազմն
ավարտեցի,
Բացի նրանից, որ Չևսը ինձ, վերադարձիս, Էգիսթոսի ձեռքով դաժան
Եվ դավանքով իմ չար կնոջ, պատրաստեց մահն օրհասական»:

Այդպես նրանք այդ առիթով խոսում էին իրարու հետ,
Մինչ մոտեցավ այնտեղ նրանց բամբերն հանկարծ Արգոսասպան .
Եվ անդ բերեց Ոդիսևսի ձեռքով ջարդված խոսնայրների հոգիներին:

100 Ծառ զարմացան Ագամեմնոնն և Աքիլլեսն՝ այդ տեսնելով,
Ու ընդառաջ անդ գնացին: Այնժամ հոգին Ագամեմնոն Ատրիդեսի
Լավ ճանաչեց Մելանևսի ազնիվ որդուն՝ Ամփիմեդոն քաջ հերոսին,
Քանզի երբեմն հյուր էր եղել Իթակեոն նրա տանը ու հարկի տակ,
Եվ նախ նրան դիմեց հոգին Ատրիդեսի ու խոսք ասաց.
«Ամփիմեդոն, ի՞նչ պատահեց, որ դուք եկաք այս մուտք երկիրը
խավարչուտ,

Գուք, բոլորդ այդքան արի, հասակակից և փառավոր:
Եթե նույնիսկ մարդ ցանկանար մեծ քաղաքում ընտրել մարդիկ
ականավոր,

Այսպիսիներ նա չէր գտնի: Գուցե ծովում Պոսիդոնը կործանեց ձեզ՝
Բորբոքելով ձեր նավի դեմ ժանտ փոթորիկ և մեծագոյ թունդ ալիքներ,

110 Գուցե նույնիսկ ձեզ ցամաքում կոտորեցին թշնամիները ռիսերիմ
Այն ժամանակ, երբ դուք շորթում էիք նրանց նախորդներից
եզ ու խաշիճք,

Եվ կամ գուցե տապալվեցի՞ք քաղաքի դեմ կանանց համար
խիստ մարտելիս:
Պատասխանիր դու իմ հարցին, ես քո հյուրն եմ և դրանով էլ՝
ինքնապանծ:

Իրավ, մի՞թե դու չես հիշում, ինչպես ձեր տուն ես հյուր եկա
մի ժամանակ՝

Աստվածազարմ Մենելայի հետ միասին հորդորելու Ոդիսևսին,
Որ արշավի և գա մեզ հետ գեղեցկակերտ նավի վրա դեպի Իլիոն:
Ամբողջ ամիս մենք շրջեցինք լայնատարած ծովում այնժամ,

Մինչև որ մեծ դժվարությամբ համոզեցինք Ռոփսուսին քաղաքավեր»:
Այնժամ նրան պատասխանեց և խոսք սասց Ամփիմեդոն քաջի հոգին.

120 «Ո՛վ գերափառ Ասորեսորդի, Ագամեմոն, մարդկանց արքա,
Հիշում եմ ես այդ ամենը, հանց ասացիր, դիցասնո՞ւնդ դու գերակա,
Եվ ամեն բան, ահափասիկ, քեզ կպատմեմ ճշմարտացի՝
Ինչպես իրոք անդ կատարվեց մեր կործանումը չարաբաստ:
Մենք խոսնալըներ էինք կնոջ Ռոփսուսի, երբ նա չկար, բացակա էր,
Բայց ո՛չ մերժեց Պենելոպեան ժանտ հարսանիքն և ո՛չ էլ նա
կատարեց այն՝

Մտածելով և նյութելով մեզ համար մահ ու սև օրհաս,
Եվ իր սրտում նա հղացավ խարդախությունն այս խորամանկ.
Իր տանը նա սարքեց ոստայն և սկսեց գործել սավան՝

Անշափելի, լայն ու երկայն, ապա նա մեզ այնտեղ դիմեց և այս սասց.
130 «Դո՛ւք, դեռահաս իմ խոսնալըներ, երբ մեռած է Ռոփսուսը
աստվածագարմ,
Երբ աշխարհում նա էլ չկա, մի՛ շտապեք, հետաձգեք մեր հարսանիքն,
Մինչև սավանն ես ավարտեմ. թող հյուսվածքը և թելերն իմ
գուր չկորչեն,
Պատանքն է սա հերոսասիրտ ծեր Լաերտի: Երբ նրան
բախտը դժնդակ՝

Շակատագիրն, հանձնի մահվան հավերժավիշտ ժանտ վիճակին,
Պիտ ավարտեմ ես այդ գործը, որ արեյանց կանայք այնժամ
չկշտամբեն,
Թե պսակած է այդ ունեոր, հարուստ մարդը իր դագաղում,
բայց անպատանք»:

Այդպես նա մեզ այնժամ սասց, ու մեր ոգին հնազանդվեց նրա խոսքին:
Եվ սավանն այդ, հաստոցի մոտ, նա գործում էր լոկ ցերեկով,
Իսկ գիշերը հյուսվածքն ամբողջ քանդում էր նա՝ վառ ճրագը
իր դեմ դրած:

140 Այդպես ուղիղ երեք տարի նա խաբիքեց մեզ, արեյանց,
Բայց երբ եկավ չորրորդ տարին, պտրտվեցին ժամանակներն,
Անցան, կորան շատ ամիսներ, և պացան բազմաբազում
չատ-չատ օրեր.

Այնժամ նրա ստրկուհիք, անկարեկից իր վիճակին,
Գործն հայտնեցին, ու մենք նրան, ներս մտնելով, գաղտնի գործի
մեջ բռնեցինք:
Ստիպեցինք, որ, հակառակ իր ցանկության, գործն ավարտի
նա ակամա,

Իսկ երբ որ մեզ Պենելոպեան ցույց տվեց մեծ, գեղեցկարիպալ
գործվածքը այդ՝
Այն, մաքրափայլ, շողշողում էր արևի պես, ասես լուսինը լուսացալու:

Շուտով հանկարծ Ռոփսուսին աստվածներից մեկն անհրաժեշտ
հերեց, հասցրեց իր ազարակն, ուր ապրում էր իր խրճիթում
խոզարածը:

150 Այնտեղ եկավ սիրահոծար նաև որդին աստվածագարմ Ռոփսուսի՝
Ավագածիր սուրբ Պիլոսից նավի վրա ետ դառնալով,
Եվ արդ, նրանք, մտածելով սեղեխների մահն ու կորուստը
ժանտաժուտ,

Անդուստ եկան, ժամանեցին հանկարծ քաղաքը փառավոր:
Նախ ժամանեց Տելեմաքը, իսկ Ռոփսուսն եկավ հետո և անագան,
Խոզարածը բերեց նրան, որն իր մարմնին հագած ուներ նողկ ցնցոտի,
Իբրև մուրիկ թշվառական, ծերուկի պես և հասակում խոր ծերության,
Ցուպը ձեռին, որպես նեցուկ: Այդպես նրան, որ ցնցոտի ուներ հագած
Եվ հանկարծուստ հանդես եկավ, չճանաչեց մեզանց ոչ ոք,
Ոչ էլ նրանք, որ հասակով երիցագույն էին նույնիսկ:

160 Մենք անարգում էինք նրան հարվածներով ու խոսքերով հայհոյանքի,
Բայց և այնպես՝ նա իր տան մեջ վիրավորանքն հանդուրժում էր
սոժամանակ
Եվ սրտասպինդ համբերում էր հարվածներն ու եպարանքը
ամեն տեսակ,

Բայց երբ նրան անդ ներշնչեց կամքը Ջեսի ասպարակիր,
Տելեմաքի հետ միասին վերցրեց բոլոր նա իր զենքերը մարտական,
Տարավ, թաքցրեց այլ սենյակում և դռները փակեց ամուր,
Ապա, սիրուն իր լեցված դաժան մի նեղությունք, նա ստիպեց
անդ կնոջն իր՝

Առաջարկել մեզ՝ տարաբախտ սեղեխներիս, հանց մրցություն,
Փայլուն երկաթն ու աղեղը, որ սկիզբն էր և աղբյուրը կոտորածի:
Մինչդեռ մեզանց և ոչ մեկը չկարեցավ ձգել մի կերպ լարն աղեղի,

170 Քազնի ամուր էր չափազանց և դա բարձր էր մեր ուժերից:
Եվ աղեղն այդ բազմահնար Ռոփսուսի հաղթ ձեռքն ընկավ,
Թեպետ և մենք խոզարածին արգելեցինք, գոռոռալով պատվիրեցինք,
Որ աղեղը նրան չտա: Հայհոյեցինք ու ճտեցինք մենք այդ մասին,
Բայց Տելեմաքն հրամայեց խոզարածին, որ աղեղը հանձնի նրան,
Եվ լայն աղեղն իր ձեռքն առավ բազմաչարչար Ռոփսուսը աստվածային,
Նա հեշտ ձգեց լարն աղեղի, երկաթների անցքով սուրաց
պաքն իսկույն,

Այնուհետև եկավ, կանգնեց նա շենքի մոտ, շորջը նայեց ահեղասաստ,
Ապա թափեց նա պաքներն արագաթիռ, զարկեց արքա Անտիհոռուսին
Եվ արձակեց մյուսներիս գլխին նետերը վշտաբեր,

180 Ու բոլորս տապալվեցինք, թափվեցինք ցած իրար վրա ու խիտառխիտ.
Պարզ երևաց, որ օգնում էր նրան այնտեղ մեկնումեկը աստվածներից:

Նա հարձակվեց՝ շորջն, աչ ու ձախ պտույտ գալով, անդ բոլորին
զարկեց նետով.
Գլուխները ջախջախվեցին, և հատակը արյամբ ծածկվեց ամբողջովին,
Թնդաց տան մեջ զարկվածների ճիչն, հառաչանքն, աղմուկն հուժկու
ու այլանդակ:

Արդ, մենք այդպես կոտորվեցինք, Ագամեմոնն, Ռոդիսեպի
տան բակի մեջ

Մեր մարմինները տակալին թափված մնում են դեռ անթաղ,
Ու չգիտեն դեռ այդ մասին մեր սիրելիք, ազգականները մեր մոտիկ.
Նրանք դեռ մեզ չեն հավաքել, չեն լվացել սև արյունը մեր վերքերի,
Դեռ մեզ վրա ողբ չեն արել, որ մեռելոց շոքն ու պատիվն է
լով վերջին»:

190 Եվ բարբառեց այնժամ հոգին Ատրիդեսի և խոսք ասաց.
«Երջանիկ ես դու, Ռոդիսեպ բազմահնար, ո՛վ իմաստուն Լաերտածին,
Որ այդպիսի առաքինի կին ընտրեցիր, որպիսին է Պենելոպեան,
Եվ ինչպիսի՝ արժանագով, ազնվաբարո վեհ սիրտ ունի
Իկարիոսի դուստրը վեհ՝ իր ամուսնուն հավատարիմ և անբասիր.
Իսկապես որ հավերժորեն կշողշողա երկրի վրա փառքը նրա:
Խոհեմամիտ Պենելոպի փառքի մասին սերունդները միշտ, ապաքեն,
Կամքով անմահ աստվածների վեհ երգեր պիտի երգեն:
Մինչ այդպես չէր դաժան դուստրը Տինդարեսի. գործ կատարեց
նա չարանեզ

Եվ ապանեց օրինական իր ամուսնուն, ու միմիայն նզովքի երգ
200 Պիտի երգեն նրա մասին մարդկության մեջ: Խայտառակեց
նա հավիտյան
Նաև կանանց թույլ ու անզոր, թեկուզ լինեն նրանք բարի,
անմեղապարտ»:

Այսպես նրանք իրարու հետ խոսում էին այն ժամանակ
Տանն Հադեսի, այնտեղ, երկրի անդունդների մեջ խորխորատ:
Մինչդեռ խոսքը Ռոդիսեպի, քաղաքից շուտ հեռանալով,
Ծեր Լաերտի դաշտը եկավ: Ինքը՝ ծերուկն էր ձեռք բերել
այդ ագարակն

Եվ այն անձամբ մշակել էր անդուլ ջանքով, աշխատանքով:
Տունն էր նրա կանգնած այնտեղ, շորջը գալիթ, տաղավարներ,
հյուղ ու խրճիթ,
Որտեղ իրենց նիստուկացով ապրում, սնվում և գիշերում էին կանայք,
Որոնք, որպես ստրկուհիք, անդ աշխատում էին դաշտում նրա համար:

210 Գտնվում էր այնտեղ նաև պառավ կինը սիկելիացի, որ ժրաջան
Խնամում էր այդ ծերուկին ագարակում, քաղաքից դուրս:
Ռոդիսեպ այդ ժամանակ այսպես ասաց հովիվներին և իր որդուն.
«Ծո՛ւտ գնացեք և ներս մտեք ահա տունը այդ բարեշեն,

Մի ընտրովի ու լավագույն խոզ մորթեցեք և ճաշկերույթ
ասրքեք շուտով,
Իսկ ես այսպես դեռ կգնամ և կփորձեմ իմ հորն այնտեղ.
Կճանաչի՞՞ արդյոք նա ինձ, երբ այժմ տեսնի ինձ իր աչքով
և դեմառդեմ,

Թե՞՞ այլևս չի ճանաչի, զի հեռու եմ եղել երկար ժամանակով»:
Ասաց այդպես, հանձնեց իսկույն ծառաներին նա զենքերը արեսական,
Եվ փոթապես նրանք այնտեղ տունը մտան: Իսկ Ռոդիսեպ
220 Հապճեպ գնաց փորձն անելու դեպի այգին բազմապտուղ,
Բայց ընդարձակ այդ այգու մեջ նա չգտավ ո՛չ Դոլիոսին,
Եվ ո՛չ նրա զավիակներին, ո՛չ էլ նույնիսկ ծառաներից մեկնումեկին,
Զի գնացել էին քարեր հավաքելու, որ ցանկ շինեն այգու համար:
Գնացել էր և Դոլիոսը, որ դաշտերում քարերի տեղ ցույց տա նրանց:
Ահավասիկ, նա այգու մեջ այդ պերճատունկ գտավ միայն իր հորը ծեր,
Որը փորում, թուփ էր տնկում: Նա իր հագին զգեստ ուներ մի անվայել,
Խիստ կարկատված և անմաքուր, իսկ ոտքերին արջառենի
սնուպաններ,

Որ քերծվածքից գեթ պաշտպանլի, իր ձեռքերին հագած ուներ
նա ձեռնոցներ,

Որ փշերը չծակծկեն: Գլխին ծածկել էր այժեհի մի հին գլխարկ,
230 Որով շեշտվում էր տարաբախտ և տանջալից կեցվածքը յուր:
Ահավասիկ, երբ Ռոդիսեպ բազմափորձ, աստվածային,
Տեսավ նրան ծերությունից այդպես ընկճված, վշտերի մեջ
հոգեկորույս,

Կանգնեց իսկույն անդ բարձրաբերձ տանձենու տակ և արտասուլեց
նա դստնադառն,

Ապա իսկույն տարակուսեց, սրտով, հոգով նա մտածեց ինքը իր մեջ.
Նետվե՞լ արդյոք դեպի հայրն իր, գրկել նրան, համբուրել ջերմ
ու սիրատենչ,

Բացե՞իքաց պատմել՝ ինչպե՞ս ինքը եկավ, հասավ երկիրն հայրենական,
Թե՞՞ նախապես հարցմունք անել ու ծերուկին փորձել խոսքով
մի խորամանկ:

Եվ արդ, այդպես մտածելիս, ավելի լավ ու գերադաս թվաց նրան՝
Նախ և առաջ ծերին փորձել խոսքով խարդախ, նախատական:
240 Այդպես ահա մտադրված՝ Ռոդիսեպ դեպի ծերուկն ուղղվեց, գնաց,
Մինչ Լաերտը, գլուխը կախ, փորփորում էր և տնկում էր
ինչ-որ մի բույս:

Եվ արդ, նրան մոտիկ կանգնեց ու խոսք ասաց նրա որդին մեծահոշակ.
«Մի՛շտ որ, ծերուկ, դու անգետ չես այգեստանիդ մշակման մեջ,
Եվ խնամքն է քո գերազանց, երևում է, որ ամեն ինչ՝ տունկն ու թփերն
Խաղողն ու որթը, թզենիք, թմբերն, ածուն, տանձենիներն ու ձիթենիք

Իրոք առանց խնամքի չեն այս այգու մեջ, ահավասիկ:

Բայց այլ մի բան ես քեզ ասեմ, և դու արտանց չգայրանաս.

Հոգատար չես դու քո մասին, ինչպես հարկն է. ծերության մեջ
այդ հայրամաշ՝

Հագուստ ունես դու անվայել, կեղտոտ ես դու և անմաքուր,

250 Եվ հագիվ թե քո տերը քեզ լավ չի պահում քո ծովությունս
իսկ պատճառով,

Քանզի, այսպես քեզ նայելով, ոչինչ քո մեջ ես չեմ տեսնում
ստրկական.

Իրավ, տեսքով ու հասակով նման ես դու արքայազոր մի մեծ մարդու,
Ավելի շուտ նման ես դու այն ծերուկին, որ, կուշտ կերած և լվացված,
Պառկում, քնում է գիրգ մահճում, ինչպես որ այդ պատշաճ է ծեր,

գառամ մարդկանց:

Բայց հիմա ինձ դու այս ասա, ճշմարիտը պատմիր միայն.

Ո՛վ է տերդ, ո՞ւմ ծառան ես, ո՞ւմն է այգին, որ խնամում ես
դու այսպես:

Մի բան ես դու ինձ ասա ճշմարտացի, անկեղծ խոսիր, որ իմանամ.

Մի՞շտ է միթե, որ ընկել եմ ես Իթակե, ինչպես մեկը ինձ այժմ ասաց,
Հենց նոր, մի մարդ, մի անծանոթ, որին այստեղ պատահեցի:

260 Բայց նա բնավ սիրալիր չէր, քանզի ինձ հետ չհանդուրժեց
խոսել անգամ,

Նույնիսկ լսել չցանկացավ, երբ ես նրան հարցնումք արի

Իմ վաղեմի հյուրի մասին՝ կենդանի՞ է նա տակալին և կա՞ արդյոք,

Թե՞ մահացել է նա արդեն և Հանդեսի տանն է վաղուց:

Ես կարող եմ և քեզ ասել, դու ինձ լսիր և լավ հիշիր,

Որ իմ տանը, հայրենիքում, մի ժամանակ ընդունեցի հյուր մի մարդու.

Մինչև հիմա իմ տունն եկած տարաշխարհիկ մահկանացու
մարդկանց մեջ

Մի այդպիսի վե՛հ, իմաստուն, սիրալիր մարդ դեռ չեմ տեսել:

Պարծենալով պատմում էր նա, որ ծնված է Իթակեում ապառաժուտ

Նա ասում էր, որ իր հայրն է Արկիսիոսի որդի Լաներտն:

270 Արդ, ես նրան մեր տուն տարա, ընդունեցի հյուրամեծար
Ու պատվեցի սիրով, արտանց մեր տան եղած պաշարներով

առատագույն:

Նրան ես շատ պերճ ընծաներ նվիրեցի, ինչպես վայել էր այդ հյուրին.

Նախ յոթ տաղանդ անտարակերտ ոսկի նրան տվեցի ես,

Նվիրեցի նրան նաև մի սարկարան արծաթակերտ ու ծաղկազարդ,

Տասներկու հասարակ ձորձ և նույնքան էլ գորգ ու ծածկոց,

Նույնքան լողիկ գեղեցկափայլ և նույնքան էլ սիրուն բաճկոն,

Եվ բացի այդ՝ չորս սարուկ կին չքանդատես ու անաղարտ,

Պերճապաճույն ձեռագործը լավ իմացող, որոնց ընտրեց

ինքն անձնապես:

Պատասխանեց այնժամ նրան հայրը նրա՝ հորդ արտատուքն

իր թափելով.

280 «Օտարակա՛ն, հենց այն երկիրն ես դու եկել, որի մասին

հարց ես տալիս,

Մինչ այս երկրին այժմ իշխում են մարդիկ նպերտ ու չարագործ:

Իզուր ես դու առատ ըստնել այդքան ընծա, հանց մեծարանք,

Սակայն եթե այդ քո հյուրին Իթակեում այժմ կենդանի դու գտնեիր,

Քեզ փոխադարձ նա կընդուներ հյուրամեծար, կնվիրեր պերճ ընծաներ

Ու պատվարժան քեզ կտաքեր քո հայրենիք, ինչպես վայել է հյուրերին,

Բայց դու հիմա ա՛յս ինձ ասա, ճշմարիտը միայն պատմիր.

Ավա՛ղ, ե՞րբ էր, ո՞ր տարին էր, երբ պատվելով, հանց հյուրընկալ,

Ընդունեցիր դու այդ անբախտ եկվոր հյուրին, իմ զավակին,,

եթե երբեմն

Եղել է ճիշտ նա իմ որդին: Արդեն, հեռու սիրած երկրից իր հայրական,

290 Նրան լսվել են ձկները ծովում մի տեղ, կամ որևէ մի ցամաքում

Կեր է դարձել նա հավքերին, գազաններին: Ո՛չ իր մայրը ողբաց նրան՝

Մահվան պատանքը հագցնելիս, ո՛չ էլ հայրը: Ավա՛ղ, նրան ողբալու չէ

Նաև կինն իր բազմաօժիտ, Պենելոպեան խոհեմամբ:

Էլ չի դնի նա, մահամերձ, մահիճի մեջ նրան, որպես իր ամուսնուն,

Էլ չի փակի նրա աչքերն մահվան ժամին, ինչպես պատշաճ է մեռյալին:

Բայց դու պատմիր ճշմարիտն ինձ, որ ստուգապես ես իմանամ.

Ի՞նչ մարդ ես դու կամ ո՞ր ցեղից, և որտե՞ղ են ծնողներդ, քաղաքը քո,

Որտե՞ղ կանգնեց այն նավն արագ, որ քերեց քեզ և ուղեկից

Ընկերներիդ աստվածակերպ: Գուցե եկար դու մի օտա՛ր նավի վրա,

300 Որը այստեղ քեզ ափ հանեց, ապա իսկույն վերադարձավ ու ետ գնաց»: Պատասխանեց իսկույն նրան և խոսք ասաց Ռիսուսը ամենիմաց.

«Ես քո հարցին ի պատասխան կասեմ ահա ճշմարտացի և ամեն ինչ.

Քաղաքից եմ ես Ալիքսաս և ապրում եմ այնտեղ, իմ տանը փառահեղ,

Որդին եմ ես Ափիդասի, Պոլիպեմիդ թագավորի.

Իմ անունն է Էպերիտոս: Արդ, այսպես ինձ մի ոմն աստված

Միկանիեից քշեց, քերեց հիմա այստեղ, բայց ցանկությունն իմ

հակառակ,

Եվ նավն է իմ կանգնած հեռու ձեր քաղաքից, բայց մոտ է այս

ազարակին:

Հինգ տարի է անցել ողիդ այն օրվանից, երբ Ռիսուսն

այդ փառաբախտ

Անդուստ մեկնեց ու հեռացավ իմ այն երկրից հայրենավանդ:

310 Ո՛հ, տարաբախտ. նույնիսկ կային թռչունների լավ նշաններ

աչ կողմից, երբ

Նա հեռացաւ: Ես ճանապարհ դրի նրան ուրախասիրտ,
Այո, և նա սաստիկ ուրախ էր մեկնելիս: Հուշ ունեինք մենք

Պահպանել մեր մտերմությունն և իրարու միշտ ընծաներ տալ գեղեցիկ»: ^{արտաստենչ՝}
Ասաց այդպես, և խոր վշտի սևաթուր ամպն իսկույն ծածկեց ^{հեզ ծերունիին.}

Երկու ձեռքով վերցրեց հապճեպ նա ծխահար մոծիր-փոշին
Եվ այն իսկույն իր ալետր գլխին ցանեց ու հեկեկաց նա հոգեհուզ:
Հուզվեց սիրտը Ռդիսեսի, և կծվակիծ շնչատությունն, ասես մի բոց,
Ժայթքեց նրա ըռուկներից, երբ որ տեսավ հոր հեծեծանքն ու կակամը:
Ցատկեց իսկույն, գրկեց նրան, ջերմ համբուրեց և հոգեբուխ ^{բացականչեց.}

320 «Հա՛յր իմ, հա՛յր իմ, ես այստեղ եմ, ես, քո որդին, որին այդքան ^{կարոտ ես դու,}
Ռդիսեսն եմ, որ ետ եկա հայրենիքն իմ քսան տարի անցնելուց ետ:
Թո՛ղ այդ ջայլանքը դառնադառն, լաց մի՛ լինի արտոսրախառն:
Քեզ կպատմեմ ես ամեն ինչ, թեպետ պետք է, որ մենք սաստիկ ^{անապարենք.}

Սպանեցի ես մեր տան մեջ այն հոգետանջ սեղեխներին,
Վրեժն առա նրանց դաժան ոճիրների և խաչտառակ արարքների»: ^{որ համոզվեմ:}
Եվ Լաերտը, այնժամ նրան առարկելով, այսպես ասաց.
«Եթե իրոք Ռդիսեսն ես, իմ գավակը, որ այժմ ահա վերադարձար,
Ցույց տուր դու ինձ մի ապացույց կամ բացահայտ գեթ մի նշան,

Պատասխանեց իսկույն նրան և խոսք ասաց Ռդիսեսը ամենհիմաց.
330 «Ահա, նայիր, տես քո աչքով սպին ոտքիս. վերքն այս մի օր
Ինձ Պառնասում իր սպիտակ, սուր առամով հացրեց վարազն,
Երբ որ այնտեղ ինձ հղեցիք դու և մայրս գերամեծար:
Ես գնացի դեպ Ավտոլիկն, դեպի հայրը իմ սիրած մոր,
Որ ստանամ ընծաները, որոնք երբեմն Ավտոլիկն էր խոստացել ինձ,
Իսկ այժմ ահա քեզ թվարկեմ այն ծառերը այս այգու մեջ,
Որոնք երբեմն այստեղ դու ինձ նվիրեցիր: Մանուկ էի ես մի փոքրիկ
Եվ վազվզում էի այգում քո ետևից, խնդրում էի, որ հաչունես ինձ
Անունները այս ծառերի: Հայտնելով այդ՝ դու ինձ այստեղ նվիրեցիր
Տասններեք տանձեհներ ու քառասուն թզենիներ,

340 Ապա տաք խնձորենի և խոստացար ինձ տալ հիսուն խաղողի որթ,
Որոնց վրա աճում են միշտ և շողշողում են ողկույզները պտղաճոխ:
Այժմ էլ ահա աստ աճում են բազմապիսի շատ պտուղներ,
Երբ որ լույսի շողքը առատ վերուստ թափում են Ժամերը՝ ^{Ջևաի դատրերք»:}
Ասաց այդպես, և ծերունու սիրտն ու ծնկները թուլացան.

Ծիշտ համարեց նա նշաններն, որ թվարկեց եկվորն այնտեղ,
Դեպ իր որդին ձեռքերն ողողեց բազկատարած, բայց ուշաթափ էր ^{նա արդեն:}
Եվ փութապես գրկեց նրան բազմաչարչար Ռդիսեսը աստվածային,
Երբ ծերն արդեն ուշքի եկավ, երբ շողացին գիտակցությամբ ^{սիրտն ու հոգին,}

Պատասխանեց նրան իսկույն և հետևյալ խոսքը ասաց.
350 «Փա՛ռք քեզ, Ջևա հայր, դեռ կան ուրեմն վեհ աստվածներն ^{Օլիմպոսում բարձրակատար,}
Որ պատժեցին խոսնայրներին ոճիրների, ամբարտալան գործի համար:
Սակայն, ալա՛ղ, սիրտս սաստիկ սարսափում է, մի գուցե այժմ
Իթակեցիք բողոքեքյան աստ հավաքվեմ և մի գուցե համբավն համայն
Ամենուրեք շուտ տարածեն և բորբոքեն քաղաքները Կեփալենյան»:
Այնժամ նրան ի պատասխան այսպես ասաց Ռդիսեսը ամենհիմաց,
«Հանգի՛տ եղիր, և այդ մասին թող մտահոգ էլ չլինի այժմ քո հոգին,
Գնա՛նք շուտով ապարանքն այն, որ գտնվում է այգու մոտ,
Այնտեղ արդեն ողորկել եմ Տեղեմաքին, խոզարածին ու նախորդին,
Որ շուտափույթ անդ հարդարեն և պատրաստեն մեզ համար ^{մի ճոխ ճաշկերույթ»:}

360 Եվ գնացին նրանք, այդպես խոսակցելով, դեպի տունը գեղեցկաշեն,
Իսկ երբ եկան, շուտով հասան ապարանքը այն բարեկարգ,
Այնտեղ գտան Տեղեմաքին, խոզարածին ու նախորդին եզնահովիվ,
Որ կտրատում էին միսը, այլև խառնում սարկարանում քաղցր գինին
Մինչ պատավը սիկելիացի տան մեջ իսկույն մեծահոգի ծեր Լաերտին
Պառնասապես, լավ լողացրեց, նրա մարմինն օժեց լողով,
Ապա քերեց ու հագցրեց չքնաղազեղ մի պատմունճան:
Եվ մոտեցավ այդ ժամանակ ազգապետին Աթենասը աստվածուհի,
Դարձրեց նրան բարձրահասակ, այլև տեսքով իր մեծաշուք:
Երբ այդպիսով նա դուրս եկավ լոզարանից, խիստ զարմացավ ^{սիրած որդին,}

370 Քանզի տեսավ, որ նա տեսքով աստվածներին էր նմանվում,
Ուստի նրան նա ձայն տվեց և խոսքն ասաց այս թևավոր.
«Հա՛յր իմ, անշուշտ մեկնումեկը հավերժակյաց աստվածներից
Տեսք շնորհեց քեզ ավելի քաջահասակ, հաղթ, ամրապինդ»:
Պատասխանեց իսկույն նրան և խոսք ասաց ծերուն Լաերտը խորհմաց.
«Ո՛հ, երանի՛ թե լինեի, Ջևա զգո՛ն հայր, դուք, Աթենաս և Ապոլլոն,
Ես այնպիսին, ինչպիսին որ իշխում էի մի ժամանակ Կեփալենյան ^{կղզիներին}
Եվ տիրեցի ես ծովափնյա գեղեցկակերտ հարուստ քաղաք Ներիկոսին
Ու երանի՛ հենց այդպիսին ես լինեի երեկ մեր տանն,՝ մեր հարկի տակ,
Որ գեներն հագած մասնակցեի կովին ընդդեմ խոսնայրների.

380 Պիտի անշուշտ ջախջախեի ես ծնկները շատ շատերի,
Որպեսզի անդ, մեր դահլիճում, տեսնելով այդ՝ ցնծար, խնդար
և քո հոգին»:

Այսպես, սրանք իրարու հետ խոսում էին այդ առիթով,
Մինչդեռ նրանք, աշխատանքը ավարտելով, ճոխ ճաշկերույթը
սարքեցին,

Ու նստեցին բազմոցներին, նստիքներին, իրար կողքի ու շարեշար,
Ապա շուտով ձեռք մեկնեցին ուտեստներին: Այնժամ եկավ
ու ներս մտավ

Ծերուկ Դոլիոսը յուր որդոց հետ միասին՝ ետ դառնալով
աշխատանքից:

Նրանց հապճեպ գնաց կանչեց սիկելիացի կինը պառավ.
Նա էր սենյ նրանց իրոք, նամանավանդ միշտ հոգատար
Խնամում էր նա ծերուկին այն օրվանից, երբ նա հասավ ծերությանը:

390 Մինչ, երբ նրանք այնտեղ տեսան Ողիսեսին, իսկույն հոգով
ճանաչեցին

Ու տեղնուտեղը, զարմացած, անդ կանգ առան սենյակի մեջ:
Ողիսեսը դիմեց նրանց ու խոսք սասց գորովալիք.

«Դե՛հ, ծերունիդ, նստիր, ճաշենք, արմանք-զարմանքը մոռացիր.
Վաղուց է մենք սաստիկ ուտել ենք ցանկանում այս հարկի տակ,
Սակայն միայն մենք ձեզ էինք աստ սպասում, այսպես նստած»:

Այդպես սասց Ողիսեսը, բայց Դոլիոսը բազկատարած
Վազեց իսկույն, բռնեց ձեռքը Ողիսեսի և համբուրեց թաթը ձեռքի
Ու ձայն տվեց ապա նրան և խոսքն սասց այս թևավոր.

«Բարեկամս սիրակարոտ, վերադարձա՛ր դու վերջապես,
400 Բոլորովին հույս չուներեմք. ճիշտ որ քեզ այժմ աստվածներն են
քերել այստեղ:

Ո՛հ, ողջույն քեզ, խնդա՛ր սրտանց, թող աստվածները կյանք տան քեզ
գերերջանիկ,

Բայց այս սաս դու ինձ հիմա, ճշմարիտը հայտնիր միայն, որ իմանամ.
Գիտի՞ արդյոք գործն իսկապես Պենելոպեն իմաստնագույն,
Որ դու արդեն վերադարձար, ապա թե ոչ՝ ես կողարկեմ
բանքեր իսկույն»:

Պատասխանեց այնժամ նրան և խոսք սասց Ողիսեսը ամենիմաց.
«Արդեն գիտե՛, գիտե՛, ծերուկ, պետք չէ, որ դու այդ բանն հոգաս»:

Ուստի իսկույն կոկ բազմոցին նստեց Դոլիոսը գերազնիվ,
Նույնպես նրա զավակները օղակեցին Ողիսեսին,
Ձեռքը նրա պինդ սեղմեցին, ողջունեցին քաղցր խոսքով ու սրտալի,

410 Ապա, որպես սեղանակից, իրենց հոր մոտ նստոտեցին:
Այդպես նրանք, սեղան նստած, այնտեղ, տան մեջ ճաշում էին
հրճվանքով լի,

Մինչդեռ արագ շշուկն, համբավն, բանքերի պես, մտավ քաղաքն
և ձախ ու աջ,

Ամենուրեք անդ տարածեց խոսնայրների օրհասն ահեղ և մահը ժանտ:
Բյուր-բյուր մարդիկ, բոթն իմացած, եկան հապճեպ ու ամբոխով,
Հեծեծանքով, տրտունջով լի, հավաքվեցին Ողիսեսի դռան առաջ:

Դուրս քերեցին դիակները, և ամեն մարդ տարավ, թաղեց իր մեռյալին,
Սակայն նրանց, որոնք ուրիշ քաղաքներից էին եկած,
Ծուռ հանձնեցին ձկնորսներին և նավերով իրենց տներն առաքեցին,
Ապա տխուր ու սրտահույզ՝ ամբոխալից հրապարակն եկան իսկույն:

420 Երբ բոլորը միահամուռ հավաքվեցին ժողովի մեջ,
Եվսիթն հապճեպ ոտքի կանգնեց և նրանց դեմ այսպես ճանեց.
Նրա սիրտը որդու համար կրծում էր վիշտը չարատանջ,
Անտիճոտսին էր նա ողբում, ում Ողիսեսն անդ սպանեց առաջինը,
Նրա համար դառն արտասուք հեղեղելով՝ այսպես ճանեց

արդ նա այնտեղ.
«Բարեկամներ՛ր, այդ քաջն իրոք չար սղետներ թափեց գլխին
աքեացոց.

Մեծահոջակ շա՛տ քաջերի իր հետ տարավ բյուրաբազում նավերի մեջ,
Մինչ խորտակեց ծովում նավերը խորափոր, իսկ այն մարդկանց էլ
կործանեց:

Այդբա՛ն էլ այժմ, տուն դառնալով, նա կոտորեց Կեփալլեցի
դյուցազմների:

Գործի դիմենք, բանի շուտ է, նախքան հապճեպ դեպի Պիրոս
նա հեռանա,

430 Նախքան փախչի դեպի Էլիս աստվածային, որի իշխողն են Էպիացիք:
Օն ա՛նդր, շո՛ւտ, գեթ հարձակվենք, որ ամոթանք չվաստակենք
մենք մեր պատվին,

Քանզի ստոր մի քարվականք պիտ համարեն սերունդները
մեր գործն հետո,
Եթե չառնենք մենք վրեժը մեր սպանված եղբայրների ու մեր որդոց:

Ես, օրինակ, այլևս ապրելը հաճեի չեմ համարի, ավելի շուտ
Կցանկանամ ես մահանալ, որ միանամ մեռյալներին այդ շուտափույթ:
Ծարժվե՛նք շուտով, բարեկամներ՛ր, որ չկանխեն նրանք և շուտ
փախուստ չտան»:

Ասաց այդպես ու արտասուք, կարեկցությամբ հուզվեց սիրտը
աքեացոց,

Մինչ մոտեցան այնտեղ նրանց ինքը՝ Մեդոնն և երգիչը աստվածային,
Որ արքայի տնից եկան, երբ որ քունը նրանց թողեց ու հեռացավ:
440 Նրանք եկան ու կանգ առան մեջտեղն ողիղ, և բոլորը
խիստ զարմացան:

Մեդոնն այնժամ, որ խելացի մտքեր ուներ, դիմեց նրանց ու խոսք սասց.
—385—

«Դուք ինձ հիմա ականջ դրեք, իթակեցիք: Ողիսևար, ահալափիկ, Կատարեց գործն այդ ահալոր ոչ հակառակ կամքին անմահ

աստվածների:

Ես ինքս անդ տեսա անմահ մի աստծու, որն ստընթեր Ողիսևսին Կանգնած էր անդ՝ նմանվելով վեհ Մեհտորի կերպարանքին, Եվ այդ աստվածն այն ժամանակ, Ողիսևսի առաջն ընկած,

հանց առաջնորդ,

Քաջալերում էր նրան խիստ, վազվզելով դահլիճի մեջ՝ խոսնաչրներից Ահաբեկում, շփոթում էր, որոնք ընկնում, թափվում էին իրար վրա»: Ասաց այդպես, և բոլորին դալուկ սարսափն իսկույն տիրեց,

450 Եվ բարբառեց այնժամ այնտեղ Մաստորածին Հալիթերսեսը ծերունի. Միակն էր նա, որ տեսնում էր ու լավ գիտեր և՛ անցյալը, և՛ ապագան: Արդ, սա արտանց, բարեխորհուրդ նրանց դիմեց ու խոսք ասաց. «Հիմա դուք ինձ ականջ դրեք, իթակեցիք, թե ի՞նչ պետք է ասեմ
ես ձեզ.

Ձեր սեփական մեղքից է այդ, որ կատարվեց դաժան գործը, աղետը այս, Քանզի ոչ ինձ, ոչ ազգապետ վեհ Մեհտորին չլսեցիք, Որ գուպիք գեթ ձեր որդոց, թույլ չտալիք արարքները չար ու դժնի. Գործեր արին նրանք անչափ մոլկ, անօրեն, կատարեցին շար ոճիրներ Եվ վատնեցին ու լափեցին գույքն ու զանձը վսեմագույն դյուցազունի, Ահարգեցին նրա կնոջն՝ գոր կարծելով, թե ետ չի գա նա հավիտյան: Եվ այժմ, ահա, ինձ լսեցեք, թող կատարվի այն, ինչ կասեմ
ես հիմա ձեզ.

460 Ո՛չ, չգնանք. թող որ ոչ ոք ինքն իր մեղքով մահտարածամն իր չգտնի»: Ասաց այդպես, և ժողովուրդը խստմամբոխ աղմկեց խիստ, Նրա մեծ նասը վեր կացավ ու հեռացավ, բայց մնացին մյուսներն
այնտեղ միահամուռ, Քանզի բնավ նրանց արտին խոսքն այդ չազդեց, այլ Եվսիթին
հետևեցին,

Ուստի շուտով վազ տվեցին, որ գեևք հագնեն պղնձակոտ, Իսկ երբ արդեն լավ զինվեցին, հագան պղինձը շողշողուն, Ամբոխախիտ հավաքվեցին քաղաքի մոտ լայնատարած: Առաջնորդում էր Եվսիթը՝ անմիտ մի գործ որոնալով. Կարծում էր նա, որ կլուծի վրեժն՝ որդու սպանության, բայց չգիտեր, Որ այլևս ետ չի դառնա ինքը իր տուն, այլ կգտնի մահն իր դաժան:

470 Աթենասը այն ժամանակ Կրոնոսյան Չևսին դիմեց և խոսք ասաց. «Ո՛վ ծնող հայր Կրոնոսյան, որ մեծագույնն ես միշտ իշխող
արքաներից, Հայտնիք դու ինձ, այս իմ հարցին. ի՞նչ միտք ունես դու քո արտում
գաղտնի պահած,

Արդյոք ուզո՞ւմ ես նախճիրը շարունակել, այս ահալոր մարտը հուժկու, Թե՞ հարկավոր է հաստատել հաշտության սերը կողմերի մեջ

այս երկուս:

Պատասխանեց նրան Չևսը անպահալած և իր խոսքը այսպես ասաց. «Ո՛հ, զափակս, ինչո՞ւ ես դու հարցմունք անում ինձ այդ մասին, Չե՞ որ ինքդ, հե՛նց դու անձամբ, մտածեցիր այն խորհուրդը իմաստալից, Որ Ողիսևսն, հայրենիքն իր ետ դառնալով, լուծի վրեժն իր նրանցից, Ուստի վարվիր, ինչպես կուգես, բայց ասեմ քեզ, ո՞րն է այստեղ
ալիքի լավ.

480 Արդ, քանի որ Ողիսևսը աստվածագարս սեղեխներից վրեժն առավ, Թող որ երդմամբ հավատարիմ դաշինք կնքեն, որ միշտ լինի
նա թագավոր, Իսկ ես մահը նրանց որդոց, եղբայրների, այսուհետև Մոռացության կտամ առմիշտ, թող նրանց մեջ առաջվա պես
սերն հաստատվի,

Թող երկիրը լիության մեջ հաշտ ու խաղաղ բարգավաճի»: Այդպես ասաց, քաջալերվեց Աթենասը, քանզի ինքն էր ցանկանում այդ. Ուստի նետվեց ու պացավ օլիմպական գագաթներից դեպի երկիր, Մինչդեռ նրանք Լաերտի տանն, ինչպես հարկն է, ճաշում էին
արտահան:

Եվ խոսք ասաց այնտեղ այնժամ բազմահնար Ողիսևսը աստվածագարս. «Թող մեկն հիմա դուրս գա, տեսնի, մոտենո՞ւմ են արդյոք նրանք,
մեր դեմ ելած»:

490 Ասաց այդպես, ու Դոլիոսի որդին վազեց, որ իմանա: Գնաց, կանգնեց նա շենքի մոտ և լավ տեսավ, որ շատ մոտ են
նրանք արդեն, Ուստի իսկույն նա ձայն տվեց Ողիսևսին ու խոսքն ասաց այս թևավոր. «Այո՞, մոտ են նրանք արդեն, օ՛հ ա՞՛նր, շո՛ւտ, զենքերն հագնենք
մեզը շուտափույթ»:

Ու վեր թռան բոլորն իսկույն, զենքերն հագան փութանակի՝ Ողիսևսի հետ չորս հոգի և բացի այդ՝ վեց քաջ որդիք Դոլիոսի: Նաև Լաերտն ու Դոլիոսը զենքերն հագան հոծարակամ, Թեպետ և ծեր էին իրենք, բայց զինվեցին, հանց մարտիկներ: Իսկ երբ արդեն այդպես հագան պղնձակոտ զենքն ու զրահը լուսաշող, Դուրք բացվեց, և դուրս եկան բոլորն հապճեպ, Ողիսևսն էր
առաջնորդող:

500 Եվ մոտեցավ այդ ժամանակ դուստրը Չևսի՝ Աթենասը, հանց զորավիգ, Որն իր ձայնով, կերպարանքով, նմանվել էր քաջ Մեհտորին: Նրան տեսավ ու խոր խնդաց բազմաշարշար Ողիսևսը աստվածալից Եվ փութապես իր խոսքն ասաց Տելեմաքին, իր զափակին սիրատենչիկ.

«Տեղեմաքո՞ւ, քանի որ դու դուրս ես եկել ասպարեզն այս մարտակովի,
Ինքդ գիտես, որ այժմ այստեղ մրցելու ես քաջարության քաջերի հետ:
Ո՞հ, խաչատուակ չանես տոհմը իմ պապերի, որոնք համայն երկրի վրա,
Ճակատներում քաջարության և զորության գերազանցել են բոլորին»:
Պատասխանեց իր հորն իսկույն և խոսք ասաց Տեղեմաքոսը խորիմաց.

«Ո՞հ, սիրելիդ, իմ ծնող հայր, եթե սիրոդ ցանկանա այժմ,
դու կոտեսնես,

510 Որ պապերիդ տոհմը բնավ աստ խաչատուակ ես չեմ անի»:

Ասաց այդպես, խնդաց Լաերոն ու բարբառեց իսկույն և եթ.

«Ո՞հ, աստվածներ սիրանվեր, ի՞նչ օր է սա, որին հասա: Ցանձում եմ ես,
Երբ իմ թողը և իմ որդին մրցում են այժմ քաջարության

փառքի համար»:

Այնժամ նրան, մոտենալով, այսպես ասաց Աթենասը պայծառաչյա.

«Ո՞վ Արկիսյան, որ ամենից ավելի շատ սիրելի ես դու իմ սրտին,

Արդ, օգնության կանչիր Ջեսին և դատրիկին նրա խաժակն

Եվ ուժգնակի ճոճիր նիզակն երկնայնասուվեր, ապա նետիր»:

Այդպես ասաց նրան Պալլաս Աթենասը և ներշնչեց մեծագույն ուժ,

Եվ նա իսկույն Ջեսի դատերն անդ աղոթեց սրտանվեր ու ջերմեռանդ,

520 Ապա, նիզակն երկնայնասուվեր հաղթ ճոճելով, նետեց ուժգին,

Չարկեց այդպես նա Եվսիթի պղնձակերտ սաղավարտին,

Չվրիպեց տեգը, հարկավ, այլ միջանցուկ պղինձն ուժգին

ծակեց, անցավ.

Ցած գորվեց Եվսիթն հուժկու, ու շառաչեց պղինձ գեները նրա վրա:

Ողիսեսն, իր ազնիվ որդին հարձակվեցին նախամարտիկ թշնամու դեմ

Եվ սկսեցին նրանց սրով և երկսայրի նիզակներով ջախել, շարդել:

Արդ, բոլորին պիտ շարդեին, և ոչ մի մարդ տուն չէր դառնա

այդ ժամանակ,

Եթե իսկույն Աթենասը՝ դուստրը Ջեսի ասպարակիր,

Չաղաղակեր անեղագոչ և չզապեր ժողովրդին ամբոխասատ.

«Ծո՛ւտ կանգ առեք, իթակեցիք, դադար տվեք մարտակովի

արվահիրքին,

530 Որ շուտափույթ և անարյուն վերջ տանք մարտին այս անողորք»:

Աթենասը այդպես գոռաց, և դավադեմ զարհուրանքը տիրեց նրանց.

Սարսափահար նրանց ձեռքից գեներն անգամ ցած թափվեցին,

Ու ամեն ինչ աստվածոտնու անագնագոչ աղաղակից ընկավ գետին:

Ետ դառնալով՝ նրանք փախան դեպի քաղաք, որ գեթ այդպես

փրկվեն մի կերպ,

Մինչ բազմափորձ աստվածագարմ Ողիսեսը այնժամ գոռաց

անեղաձայն

Եվ հարձակվեց ու հարածեց, հանց արծիվը բարձրաթռիչ:

Բայց այդ պահին Կրոնոսյանն իր հրաշեկ շանթը նետեց ծծմբախառն,

Որ և ընկավ Ջեսի անհաղթ, զորավոր հոր դատեր սուաջ:

Այդ միջոցին Ողիսեսին պայծառաչյա Աթենասը այսպես ասաց.

540 «Իրցանունդ Լաերտածին, ո՞վ Ողիսես ամենիմաց,

Ծո՛ւտ դադարիր, այլև զապիր կազն ու կոփվը չարաղետ,

Որպեսզի այժմ չզայրանա քո դեմ Ջեսը, Կրոնոսյանն որոտաձայն»:

Այդպես ասաց Աթենասը, Ողիսեսը հեռագանդվեց ուրախասիրտ:

Այդպես Պալլասն՝ վեհ Աթենասն, դուստրը Ջեսի ասպարակիր,

Որ նմանվել էր Մեհտորին կերպարանքով և իր ձայնով,

Թագավորի և ազգի մեջ անխախտ երդմամբ կնքեց դաշինք:

Ծանոթագրություններ

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Տող 8— Եզներն Արև— Հիպերիոնի— արևի աստված Հելիոսը Հիպերիոնի որդին էր, սակայն ինքն ևս, իր հոր անունով, կոչվում էր «Հիպերիոն»: Հիպերիոնը տիտան էր, Ռրանոսի որդին:

Տող 12— Բոլոր շաշերը— այսինքն՝ այն արեալները (նույնը), որոնք արշավել էին Տրոյա քաղաքը նվաճելու, այլ կերպ՝ «Ելիականի» մեջ հանդես եկող, Տրոյայի դեմ պատերազմող արեական հերոսները:

Տող 25— Հարյուրեզնյա— բնագրի «ճեկատմքե» հասկացությունն է, որ բառացի նշանակում է հարյուր եզներից բաղկացած («հարյուրաեզ») զոն, սակայն իրականում «ճեկատմքե» միշտ բառացի նշանակություն չունի, այլ արտահայտում էր գոհարարությանը վերաբերող «հարուստ», «նոխ», «փարթամ» անականները, այլ կերպ՝ «հարուստ զոն», «փարթամ զոն»:

Տող 51— Որք կենտրոնն է ծովերի— բնագրում կենտրոնի փոխարեն ասված է «սպորտը», այսինքն՝ ծովերի մեջտեղը:

Տող 55— Գուստրը կախարդ և դավադիր Ատլասի— այսինքն՝ դիցուհի Կալիպսոն: Ատլասը տիտաններից մեկն էր, Կալիպսոյի և հավերժաճարս Մետայի հայրը: Ատլասի կամիկական ֆունկցիան արտահայտված է սույն հատվածի 54—55-րդ տողերի մեջ. «պահում է իր ուսերին երկինքն, երկիրը բաժանող պոները»: Երկրագնդի այն կեսը, որտեղ Ատլասը իր ուսերի վրա պահում էր երկինքն ու երկիրը միացնող վիթխարի պոները, Աֆրիկայի հյուսիսային ափն է, Ջիբրալթարի շրջակայքը, Ատլանտյան օվկիանոսի ափը, որտեղ գտնվում էին Հերկուլեսյան պոները:

Տող 101— Պղնձն ապր— հոմերոսյան վիպերգությունների մեջ հիշատակված գեները «խափորալյես պղնձից են «պղնձակոտ», «պղնձակերտ», «խալկոտ», «խալկոնա» և այլն: «Ելիականն» ու «Ողիսականը» համարյա չգիտեն երկարյա գործիչներ, զենքեր, և միմիայն երբեմն հիշատակվում է «սիդրոտ» (երկաթ) հասկացությունը:

Տող 102— Դասրիկը անպարտելի մեծ աստծու— այսինքն՝ Աթենասը, որը Ջևի աղջիկն էր համարվում և, ըստ ստասակի, զոհաբերված դուրս էր եկել իր հոր զանգից:

Տող 111— Հոմերոսյան հույները մարտ, զուտ և անխառն գինի չէին խմում, այլ խառնում էին ջրի հետ և այնպես խմում: Գոյություն ունեւ դրս համար հատուկ անոթ, անձն, որ կոչվում էր «կրատեր», խառնարան, սարկարան:

Տող 153— Կիթառը («կիթարա») երաժշտ. յարավոր գործիչ էր, բնաթի անձն:

Տող 202— Հավաննա գործեր— այսինքն՝ գուշակության գործեր: Բնագրում ասված է՝ «բուշակագուշակություն», այսինքն՝ «թոշուկներով գուշակելը»: Թոշակագուշակությունը («ճակնագուշակություն») գուշակության ամենատարածված ձևն էր հոմերոսյան Հունաստանում:

Տող 239— Հնադարյան Հունաստանի ամենագրեղ և իշխող ջեղն էին կազմում արեալները (դանայացիները): Հոմերոսը, «արեալի», «դանայացի» կամ «արգիացի» ասելով, հասկանում է առհասարակ հույներին, իսկ «հույն» հասկացությունը, որպես հանացեղական ընդհանուր, էթնիկ հասկացություն, Հոմերոսը չգիտե:

Տող 241— Նրան Հարպիաները փակցրին— Հարպիաներ, դիցաբանական հափշտակող, գիշատիչ էակներ: Մի այլ մեկնությամբ՝ մրրիկների, քրաբեր հողմերի դիցուհիներն էին: Երբ հույներն ասում էին «հարպիաները հափշտակեցին» կամ «հարպիաները լսվեցին»՝ դա ժողովրդական դարձվածք էր, որ կնշանակեր «անհայտ կորավ», ինչպես հայ ժողովուրդն է ասում՝ «գրողը տարավ», «չարքերը տարան», «սատանան տարավ»: Հոմերոսյան Հունաստանի և հայ ժողովրդի մեջ գործածվող տվյալ տվորությունների հնգրդանական գաղափարների նույնությունը վկայում է նրանց էթնիկական մերձությունն ու միակերպությունը:

Տող 248— Համաձայն հնադարյան Հունաստանի տվորություններիցնաանեկան իրավունքի՝ այրի կինը, այսինքն՝ անուսնու բացակայության պատճառով մեռակ մնացած (κολομενησα βδοβα) կինը իրավունք ուներ մարդու գնալ և փեսացուներ ունենալ: Այդ վիճակում էր ԵսեՊենելուպեն, բանգի նրա ամուսինը՝ Ողիսեսը, համարվում էր անհայտ կորած, անհետացած: Իրավական տեսակետից՝ էսեՊենելուպեն իրավունք ուներ փեսացուներ, խոսնայրներ ունենալ, ապա նեւ այդ փեսացուները իրավունք ունեին խնդրել Պենելուպեի ձեռքը: Այս իմաստով՝ Ողիսեսի տանը հավաքված խոսնայրների բարոյական դիրքը անշուշտ օրինական էր: Սակայն ապօրինի, անբարոյական և լսիք էր նրանց վարմունքը, որիչի գույքը, «տունն ու տեղը» վատնելը և անբարոսական վերաբերմունքը: Հունական տվորություններիցնաանեկան իրավունքի վերոհիշյալ սկզբունքը որոշ չափով համապատասխան է և մեր, հայկական տվորություններիցնաանեկան իրավունքին. հայ այրի, ամուսնագուրկ կինը տվյալ պայմաններում իրավունք ունի փեսացուներ ունենալ, խոսնայրների մեջ ընտրություն անել և մարդու գնալ:

Տող 283— Ջևի լուրը— բնագրում ասված է «օսաս», որ նշանակում է «համբավ», «լուր». Հոմերոսը, հետևելով գաղափարների հիպերբոլիզմին, շատ հաճախ վերացական հասկացությունները անձնավորում, մարմնավորում է գերբնական էակների, աստվածների մեջ: Այդպիսի անձնավորումը պետք է ճանաչել որպես բանաստեղծական արտադրության յուրատեսակ մեթոդ, որով գաղափարներն ավելի ցայտուն և տարավորիչ են դառնում: Տեղյալ լեպորում «Ջևի լուրը», «օսաս էլ դիտ»՝ նշանակում է «Ջևից ծնվող լուրը», «Ջևի գաղանկ» լուրը, այսինքն՝ մի իրական երևույթ, որը տարածվում է անխուսափելիորեն, ինքնաբերաբար և անհավանալի ու խորհրդավոր կերպով:

Տող 300— Էզիպոսը Ազամեմոնի հորեղբայր Թիեստեսի որդին էր. Թիեստեսն ու Ատրեսը (Ազամեմոնի հայրը) եղբայրներ էին: Ազամեմոնի բացակայության ժամանակ, նրք նա գտնվում էր Տրոյական պատերազմում, Էզիպոսը սիրալին կապով միացել էր Ազամեմոնի կին Կլիտեմնեստրայի հետ: Իսկ երբ, տրոյական պատերազմից հետո, Ազամեմոնը վերադարձավ, Էզիպոսը, դավաբության մեջ մտնելով իր սիրուհի Կլիտեմնեստրայի հետ, սպանեց Ազամեմոնին: Այս ոճազործությունը պատկերված է Էսքիլոսի «Ազամեմոն» ողբերգության մեջ: Ազամեմոնի սպանության փոխը լուծեց նրա որդին՝ Օրեստեսը:

Տող 320— Երդկից թաավ— պատեղ ակնարկվում է սեկյակի, տան կտորի մեջ շինված անցքը, ավելի «իշտ»՝ «լուսանցքը», որը մեր հայկական գյուղական տներում կոչվում է երդիկ: Այսպիսով՝ պարզվում է, որ հնադարյան հոմերոսյան դարաշրջանի Հունաստանում բնակարանները, հայկական գյուղական տների նմանությամբ, երդիկ ունեին, կտորի մեջ շինված երդիկ: Այս հանգամանքը ևս վկայում է Հոմերոսյան Հունաստանի և հայ ժողովրդի տվորությունների նույնությունը:

Տող 432— Հոմերոսյան դարաշրջանի Հունաստանում փոխանակության միավոր էր մա-
նաչվում էրը, ըստ որում ստրուկի արժեքը հավասար էր 8—20 եզան:

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԳ

Տող 22— Մինչ երկուսը վարում էին գործերը հոր— այս միտքը հետագոտողները
մեկնում են այն իմաստով, որ «երկուսը մշակում էին հայրական հողերը»: Հոմերագետ-
ները այս կապակցությամբ շեշտում են, որ «Ուլիսականի» մեջ հաճախակի հիշատակվող
ֆիզիկական աշխատանքը մեծարելի էր համարվում և կապվում էր մարդու բարձր արժա-
նիքների հասկացության հետ, սակայն նրանք աշխատող են անում այն, որ այդ հանգա-
մանը առհասարակ ընդհանուր երևույթ էր հնադարյան աշխարհի թողարակության կա-
մաններում, երբ ֆիզիկական աշխատանքը առհասարակ գերազանցող ու առավել նշանա-
կալից էր մտավորի համեմատությամբ:

Տող 28— Նրա ձեռքը մական դրեց— մականը, գավազանը, հին աշխարհում առհա-
սարակ, մասնավորապես հոմերոսյան հասարակարգում, իշխանության, իշխանավոր հեղի-
նակության խորհրդանիշ էր համարվում: Գավազանը ձեռքին հանդես էին գալիս թագա-
վորները, առաջնորդներն ու դատավորները, և բանի որ հնադարյան իրավահայեցողության
տեսակետից թագավորների և առհասարակ իշխանավորների իշխանությունն ու առանձնա-
հատկությունը թուրքատիկ բնույթ ուներ և «աստվածային» ծագում, գավազանները հա-
ճախակի որակվում էին որպես աստվածային պարգև: Այսպես, օրինակ, «Միսականի» մեջ
շեշտված է, որ Ագամեմնոնի գավազանը տրված էր Ջևսի կողմից: Ժողովրդական առյա-
նում հանդես եկող առեմախոսի ձեռքը անմիջապես գավազան (մական) էր գրվում որպես
տվյալ դիրքում նրան վերապակվող իշխանության (խոսքի իրավունքի) նշան: Գավազանը
նույն դերն ունեցել է նաև հին Հայաստանում:

Տող 53— Իր աղջկան գին արշել օրհնավոր— այս տողը ցույց է տալիս, որ հոմե-
րոսյան հասարակարգում կնոջը գնում էին, որ կինը առ ու ծախի առարկա էր, սակայն
նույն այս երկրորդ երգի 198—199 տողերում շեշտված է օժիտի գաղափարը, հետևապես՝
հայրերը կարող էին իրենց դստերին վաճառել, երբեմն էլ մարդու տալ օժիտով: Կին
ձեռք բերելու այս երկու կարգերն էլ հավասարապես գոյություն են ունեցել նաև հին Հա-
յաստանում:

Տող 121— Տիրոն Սարմեսի դստրիկն էր, որ Պոսիդոն առածու հետ սիրով կապվեց
և ձեռք էրկու եղբայրների՝ Նելեպի (Նեստոր ծերունի հորը) և Պելիասի, իսկ Միկենեն
ինարքայի դստրիկն էր:

Տող 135— Եկարիսին տալ մեծ տուգանք— Հոմերոսի վիպերգությունների մեջ աք-
տացելված սովորությանին իրավունքի տեսակետից՝ անուսինը կամ, նրա բացակայության
դեպքում, նրա չափահաս որդին տուգանքի էին ենթարկվում, եթե առանց հարգելի և օրի-
նական պատճառների կնոջը կամ մորը ետ տալին, վերադարձնեին նրա հորը:

Տող 131— Քաջարանիկ հավանման— այսինքն՝ իմաստունն ու բազմափորձը թաշնա-
գուշակության մեջ:

Տող 232— Կարաներում հեղեն գինի— բնագրում «ամֆիֆորես», որը միանգամայն
համապատասխանում է հայկական կարասին:

Տող 237— Խոսնայրները մտադիր էին Տիեմաքոս կործանման դեպքում նրա ամբողջ
գույքը շահանել իրարու մեջ:

Տող 368— Ողիսակը աստվածագարմ— Հոմերոսի շատ հերոսներ, ինչպես և նրա ա-
րաշրջանի ազնվական մեծամեծներն ու իշխանավորները ներկայացվում էին որպես «աստ-
վածային ծագում ունեցողներ», մի բան, որ դարաշրջանի իրավահայեցողությանը հաս-
կանշական երևույթ էր:

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԳ

Տող 2— Երկինքն արհմափայլ— Հոմերոսը սովորաբար երկինքը որակում է «պղնձյա»,
«պղնձափայլ» մակդիրներով: Գիտնականները այս հանգամանքը բացատրում են նրանով,
որ երկինքը դիտողի աչքին սովորաբար էրևում է որպես մի պղնձյա կամ երկաթե կիսա-
շրջան: Հայերեն «երկինք» բառը Նիկ. Մառը, հավատարմիվ բազմաթիվ այլ լեզվագետ-
ների մեկնություններին (Էմին, Բուպ, Մյուլլեր, Հյուբշման և այլն), բացատրում է «եր-
կաթի» գաղափարով: Այսպիսով՝ հաղոց «երկինքը», իր մեջ պարունակելով «երկաթյա» կամ
«պղնձյա» հատկանիշները, համագոր է հոմերոսյան «պղնձյա» կամ «պղնձափայլ» մակ-
դիրներով օժտված գաղափարին:

Տող 5— Թուխ եզներից փարթամ զոհեր— սև կամ թխագույն անասունները զոհա-
բերվում էին ստրերերկրա (խափաշուտ աշխարհում գտնվող) աստվածներին, բանգի նը-
բանը խափարի, մթության ու սևի աստվածներն էին: Ծովը նույնպես պատկերվում էր որ-
պես մթագույն գանգված, ուստի նաև ծովի աստված Պոսիդոնին զոհվում էին թխագույն
անասուններ:

Տող 43— Ինչպես երևում է «Ողիսականի» և «Միսականի» բովանդակությունից առ-
հասարակ և հատկապես տվյալ տողից, հոմերոսյան դարաշրջանում, բացի անասունների
զոհաբերումից, հույները գիտեին նաև անասուն զոհեր, օրինակ՝ ջրի, գինու կամ կաթի
հեղումը:

Տող 72— Ծովախեղ ավազակներ— հոմերոսյան դարաշրջանում ավազակությունը, կո-
ղուպտոն ու թալանը և նույնիսկ սպանությունը, երբ դրանք կատարվում էին այլազգի-
ների հանդեպ, համարվում էին անպատժելի գործողություններ, ոչ թե հանցանք կամ ոճ-
բազործություն: Վերջինիս գաղափարը, որպես պատասխանատվություն առաջ բերող, ար-
գելված, պատժարժան գործողություն, ծագում և զարգանում էր միայն տվյալ տոհմական
կազմակերպության մեջ և նրա անդամների համար:

Տող 130— Այստեղ ակնարկված է այն առասպելը, համանուն որի Տրոյա բաղաբն ա-
վերելուց հետո հայրենիք վերադարձող արեական հերոսները, իրենց կատարած անօրեն
գործերի համար, աստվածների կամքով ճանապարհին ենթարկվեցին աղետների:

Տող 166— Տրոյականը— այսինքն՝ Դիոմիդեսը: Հոմերոսյան հույները ազգանունով
չէին կոչվում, այլ հայրանունով, մի հանգամանք, որով շեշտվում էր հայրիշխանության
նշանակությունը և հոր գերիշխող դերը սերնդի ծագման մեջ:

Տող 188— Ազնիվ որդին Աքիլլեսի— այսինքն՝ Նեստորյանը:

Տող 192— Ատրիդեսի— այսինքն՝ Ագամեմնոնի:

Տող 230— Հին հույների պատկերացմամբ՝ ծաղկահասակ մարդու հանկարծակի մահը
տեղի էր ունենում Ապոլլոնի կամ նրա քույր աստվածուհի Արտեմիսի թելթև կոչվող հար-
վածներով, ըստ որում Ապոլլոնը մահացնում էր տղամարդկանց, իսկ Արտեմիսը՝ կանանց:

Տող 332— Այստեղ հիշատակված գործողությունը կազմում էր զոհաբերության վեր-
ջին, եզրահանկիչ մասը:

Տող 378— Ավարաբաշխ, տրիտոնածին դուստրը Ջևսի— այսինքն՝ աստվածուհի Աթե-
նասը, որը, որպես բաղաբաշխ (բաղաբները կործանող), հանդիսանում էր նաև «ալա-
բաբաշխ», այսինքն՝ ալաբ վերցնող ու բաշխող, իսկ «տրիտոնածին» անվանի իմաստը,
որ նույնպես Աթենասի մակդիրն է, գիտնականները վիճելի են համարում. բնագրում աս-
ված «տրիտոնոգենիս» բառը թերևս նշանակում է «ծովածին» ծովից, ջրից ծնված, որով-
հետև Տրիտոնը Պոսիդոնի որդին էր և ծովային մի աստված: Այս մեկնության համա-
կանությունը ապացուցվում է Ամֆիտրիտեի անվան ստուգաբանությամբ, որը ծովային ստա-
վածուհի էր և Պոսիդոնի կինը:

Տող 446— Այստեղ նկարագրված է զոհաբերության հատուկ մի ծես, որի կրոնական
նշանակությունն այն էր, որ աստվածները տեղյակ լինեին կատարվող արժանապատիվ
զոհի մասին:

ԵՐԳ ՉՈՐՐՈՐԳ

Տող 5— Աքիլեոսի որդին Նեոպոլիտոսն էր:

Տող 11— Մեգապեներեսը Մենելաոսի և Երա ստրկուհու զավակն էր:

Տող 14— Հերմիոնեն Մենելաոսի և Հեղինեի զտղիկն էր:

Տող 18— Կիթաոսով— բնագրում ստված է «ֆորմինգա», որ նշանակում է մի այլ գործիք, կիրառից ավելի մեծ ու տարբեր:

Տող 73— Քահիրիարին— բնագրում «էլեկտրոն», որ նշանակում է ա) մետաղ, որի շորս մասը ոսկի էր, իսկ մի մասը՝ արծաթ և բ) սաթ, բահրիբար, որն անոսիկ աշխարհում մեծ արժեք ուներ:

Տող 129— Տասը տաղանդ մաքուր ոսկի— «Ռիխականի» և «Լիլիականի» մեջ հաճախակի է հիշատակվում որոշ բանակությանը «տաղանդ ոսկի», սակայն անկատար է, որ ոչ տաղանդը և ոչ ոսկին փոխանակության միավորի ֆունկցիա չէին կատարում:

Տող 208— Հունական դիցաբանության հիմնական սկզբունքներից մեկը այն էր, որ մարդու «կյանքի թելերը» մանու էր բախտը, «ճակատագիրը» (Մորթա), բայց այստեղ կյանքի երջանկությունը սահմանողը Ջևան է:

Տող 348— Ծովածերունկն արդարախոս— այսինքն՝ Պրոտեսը:

Տող 367— Որ ձուկ էին որսում այնտեղ— հոմերոսյան հույները ձուկ չէին ուտում առհասարակ, միայն տղի և ծայրահեղ կարիքի ժամին էր ձուկը գործածվում որպես ուտելիք:

Տող 400— Ծովի դատերը գեղեցիկ— այսինքն՝ ծովային աստվածուհի Ամփիտրիտեի դատրիկները:

Տող 473— Անձրևածին հզոր գետի ջրերի մոտ— խոսքը վերաբերում է Նեղոս գետին, որը, իբրև անձրևածին գետ, Ջևան ծնունդն էր համարվում, քանզի անձրևները Ջևանի էին:

Տող 502— Ծռածանին— Պոսիդոն աստծու զորության խորհրդանիշը, դրանով նա բորբոքում էր ծովային փոթորիկները կամ խաղաղեցնում էր հուզվող ծովը:

Տող 559— Դաշտերը էլիպան— հոմերոսյան պատկերացմամբ աշխարհի սահմաններից դուրս գտնվում էին երջանկությանը լցված «էլիպան դաշտերը», որ ուղարկվում էին անձախորտի արժանացած հերոսները:

Տող 758— Գարին այստեղ գոհ է՝ հանուն Պենելոպեի:

Տող 831— Հա՛խսի տուն— այսինքն՝ մահվան աշխարհ, ստորերկրյա աշխարհ:

ԵՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԳ

Տող 1— Բնագրում՝ Էոս, Արշալույս: Համաձայն դիցաբանության՝ Էոսը (այսինքն՝ Արշալույսը), որն, իբրև աստվածուհի, Արևի նախակարապետն էր, փախցրել էր տրոյական թագավոր Լաոմեդոնի փահրանացու որդուն՝ Տիթոնոսին ու դարձրել էր իր ամուսինը:

Տող 48— Արգոսասպան— Արգոս հարյուրակն հրեշը Հերա աստվածուհու կամքով պահապան էր կարգված Ջևան սիրուհի Իոի վրա, որին Հերան, իր խանդի դրոշմամբ, կոծ էր դարձրել, իսկ Հերմեսը սպանել էր այդ հարյուրակն հրեշ Արգոսին:

Տող 272— Խոսքը այստեղ վերաբերում է Մեծ Արք համաստեղությանը: Բնագրում ստված է «արկոտոս», այսինքն՝ արջ, իսկ տղիպ կոնտեքստում՝ Մեծ Արք համաստեղություն, որը կոչվում էր նաև Սպյ: Այդպես էր տղիպ համաստեղությունը անվանվում այն պատճառով, որ Հունաստանում հունձը սպյերով հավաքելու ժամանակ միշտ գտնվում էր իր նվազագույն բարձրության վրա:

Տող 309— Այստեղ հիշատակված է այն անեղ մարտակոխիվը, որը բորբոքվել էր արեւացիների և արույացոց միջև՝ սպանված Աքիլեոսի դիակի շուրջը:

Տողեր 330—331— Հոմերոսն իր փյախեղությունների մեջ հիշատակում է միայն չորս չորանաստուկ հողմեր, որոնք համապատասխանում են երկրի աշխարհագրական չորս կող-

մերին. ա) Բորեասը՝ հյուսիսային ցուրտ, ձմեռվա քամին, բ) Չեֆիուոը՝ արևմտյան հողմը, գ) Նոտոսը՝ հարավային հողմը և դ) Եփրոսը՝ արևելքի հողմը: Այս չորս հողմերին հրամադող իշխանավորն է Էոլոսը:

Տող 395— Քանգի դևն էր տկարության մասնել Երան— Հոմերոսի հայեցողությանը՝ «ողեր» համագոր է «աստված» գաղափարին և, ինչպես նաև աստվածներից յուրաքանչյուրը, կարող է լինել և՛ շարագործ, և՛ բարեգործ:

ԵՐԳ ՎԵՑԵՐՈՐԳ

Տող 5— Հիպերիայում լայնատարած— Հիպերիան, հավանորեն, այն երկիրն է, որտեղ առաջ ապրում էին փեակները: Մինչև այժմ չի պարզված, թե որտե՞ղ էր գտնվում փեակների այդ հայրենիքը:

Տող 94— Լվացքի հագուստները կանաչ տրորում ու կոխ էին տալիս, հավանաբար, բարակերտ փոսիկների մեջ:

Տող 161— Այստեղ հիշատակված «նվերները», որոնք փեսացուների կողմից տրվում էին աղջկա հորը, ոչ այլ ինչ էին, եթե ոչ աղջկա գինը, արժեքը, որը վճարվում էր նրա ծնողներին Երան գնելու, ձեռք բերելու համար: Այլապես՝ դա այն գլխագինն էր, որը գոյություն ուներ նաև հայ ժողովրդի մեջ: Կիևը առ ոչ ծախի առարկա էր, և Երան ձեռք բերելու համար համապատասխան գին էր տրվում:

Տող 209— Ջևաը, հոմերոսյան իրավահայեցողությանը, համարվում էր մորիկների, նշոճիների և թափառականների պաշտպան-հովանավորը:

Տող 235— Աթենան ու Հեփեստոսը ճանաչվում էին որպես մի շարք արհեստների հովանավորներ:

Տող 269— Ընդարձակ հրապարակ— բնագրում «ազորա», այսինքն ժողովրդական ստյանքի տեղը: Հայերեն այդ գաղափարը կարելի է արտահայտել «ստեղծալար» հասկացությամբ: Ատենավայրը անոսիկ աշխարհում հսկայական նշանակություն ուներ, քանզի այնտեղ էր անցնում հասարակական կյանքը իր ամբողջ էությանը: Բնորոշ է և այն, որ «ստեղծալար», «հրապարակ» («ազորա») գաղափարից հույն ժողովրդի լեզուն անտեղծել է նաև համապատասխան բայը՝ «ազորեն», այսինքն՝ խոսել՝ հրապարակում, հրապարակորեն, ճանկ ժողովրդական առջանում, ասենախոսել:

Տողեր 288—290— Այս տողերում արտահայտված է ընտանեկան իրավունքի այն սկզբունքը, որը ընդհանուր էր և հայ ժողովրդի, և հոմերոսյան հասարակարգի համար, սկզբունք, համաձայն որի աղջիկը փողոցում, իր հայրական օջախից դուրս, չէր կարող և իրավունք չուներ շփվել, մոտենալ կամ հաղորդակցություն ունենալ կողմնակի և օտար տղամարդու հետ:

Տող 312— Չեղբերով... ծնկներն իմ մոր— ծնկները գրկելը ազդեցիկ աղերսանքի, խոհեմ ու արտառույ խնդրանքի անհրաժեշտ մի ձևն էր, որը ընդհանուր էր և հոմերոսյան հնադարյան հասարակության, և հայերի համար:

Տող 326— Անպարտելի— բնագրում «ատրիտոնե». նշանակում է «անպարտելի», «անհաղթելի»: Դա Աթենաս աստվածուհու մականունն է: Մեր մեկնությունը, բառի ստուգաբանության և իմաստի տեսակետից, վիճելի է համարվում:

ԵՐԳ ՅՈԹԵՐՈՐԳ

Տողեր 54—56— Ալկիանոն ու Երա կին Արեոնն սպյունակից ազգականներ էին: Այլունակցական ամուսնությունը, որ տվորական էրևույթ էր հոմերոսյան հասարակության համար, գերծաղրվելիս է եղել նաև հայ ժողովրդի մեջ:

Տող 138—139— Խոսքը վերաբերում է Հերմես աստծուն, որին քննուց առաջ հույ-
ճերը սղոթում էին, որովհետև նա համարվում էր «քուն ներշնչող»:

Տող 153— Ապա նստեց... փոշու վրա— փոշու վրա նստելը նույնպես նվաստության,
խանարհության և սրտառուչ աղերասների մի ձև էր, բացի այդ, օջախի մոտ, կրակի դեմ
նստելը նշանակում էր նստել տվյալ տան մեջ սրբազան համարվող տեղում:

Տող 197— Մոյրաները— ճակատագրի աստվածուհիները, որ մահում էին մարդու կյան-
քի թեկերը:

Տող 319— Եվբեան Էգեյան ծովի մեծագույն կղզիներից մեկն է:

ԵՐԳ ՈՒՅԵՐՈՐԳ

Տող 65— Հոմերոսը, համաձայն ժամանակի առասպելներին, գուսանին կույր է պատ-
կերում: Ենթադրվում է, որ նույնիսկ ինքը՝ Հոմերոսը, եղել է կույր երգիչ: Այս հանգա-
մանըը հիշեցնում է և մեր հայ ժողովրդական կույր աշուղներին:

Տող 80— Ապոլլոնի գուշակավայր տաճարը գտնվում էր Դելփիքում (Փոկիս երկրա-
մասում), որտեղ Ապոլլոնի անունից գուշակությունն անում էր տաճարի քրմուհին:

Տողեր 112—114— Փեսկների համարյա բոլոր անունները այնպիսի ստուգաբանություն
ունեն, որը որևէ կերպ կապված է «ծովի», «ծովայինի», «ծովագնացության» գաղափարի
հետ, օրինակ՝ «Պրիմնևս» նշանակում է դեկ բունող, «Պոնոսևս» նշանակում է «ծովային»,
«Նավոսևս» նշանակում է «նավոր» և այլն: Այս հանգամանքը ցույց է տալիս այլ առաս-
պելական ժողովրդի կապը ծովի հետ:

Տող 167— «Օտարական»— բնագրում «քսելնուս», որ հավասարապես նշանակում է
օտարական, տարագրի, հյուր, հյուրընկալ և այլն:

Տող 225— Եվրիտոսն ու Հերակլեսը, տրոյական պատերազմի հերոսների համեմա-
տությամբ, ավելի վաղ դարաշրջանների հերոսներից էին: Եվրիտոսը մեծահոշակ նետա-
ձիգ էր, որից նրա աղեղը անցավ Իփիտոսին, իսկ սրանից՝ Ողիսեսին:

Տող 283— Լեմնոս կղզին, որպես հրաբխային կղզի, գտնվում էր Հեփեստոսի, իբրև
կրակի ու հրաբխային երևույթների աստծու, հովանավորության տակ:

Տող 289— Կիթերուհի— սիրո և գեղեցկության աստվածուհի Ափրոդիտեի մյուս ա-
նունը: Կիթերան մի կղզի է, որտեղ տարածված էր Ափրոդիտեի պաշտամունքը:

Տող 300— Կրկնակաղ— այսինքն՝ երկու ոտով կաղ, կրկնակաղ: Հեփեստոսի մակդիրը:

Տող 318— Ամուսինը, տվյալ դեպքում Հեփեստոսը, հնադարյան սովորությանին իրա-
վունքով, կարող էր իր աներոջից, իր անհավատարիմ կնոջ հորից, ետ պահանջել վեր-
ջինին համար վճարված փրկագինը:

Տող 322— Երախտագործ— Հերմես աստծու մակդիրն է:

Տող 348— Այստեղ հիշատակված «վճարը» ոչ այլ ինչ է, եթե ոչ տուգանք անձնա-
կան վիրավորանքի, անպատվության համար:

Տողեր 359—363— Արեսն ու Ափրոդիտեն Հեփեստոսից փախուստ տվին՝ հեռանալով
դեպի իրենց անձնական սրբավայրերը:

Տողեր 491—493— Փայտյա ձիու պատմությունը և նրա կատարած դերը Տրոյա քա-
ղաքի գրավման մեջ բերված է այսպես կոչված Կիկլիկ պոեմներից «Լիոնի ավերումը»
և «Կրոստեր Իլիական» պոեմներում:

ԵՐԳ ԻՆՆԵՐՈՐԳ

Տող 39— Ողիսեսի առաջին ճակատագրական արկածը, նրա Տրոյայից ետ վերադառ-
նալիս, տեղի ունեցավ կիկլոնների երկրում: Իլիականի մեջ (երգ 2-րդ, 845 և մյուս տո-

ղերը) կիկլոնները հիշատակված են որպես տրոյացոց դաշնակիցներ: Նրանք, լինելով թրա-
կիական ցեղերից, բնակվում էին Էգեյան ծովից դեպի հյուսիս:

Տող 65— Մեռյալների հոգիներին երեք անգամ կանչելը ծիսական սովորություն էր:

Տող 80— Մալիա— հրվանդան՝ Լակոնիկե մարզի հարավում:

Տող 81— Կիթերա, մի փոքրիկ կղզի, որի բնակիչները պաշտում էին Ափրոդիտե աստ-
վածուհուն: Համաձայն առասպելի՝ սիրո և գեղեցկության այդ աստվածուհին ծագել էր
փրփուրից Կիթերա կղզու ափերին, ուստի Ափրոդիտեի անուններից մեկը Կիթերուհի էր:

Տող 84— Լոտոփագուներ— առասպելական ժողովուրդ, որ սնվում էր լոտոսի ծա-
ղիկներով: Հոմերոսներից շատերը ենթադրում են, որ նրանք ապրում էին Աֆրիկայում:
Եթե ճիշտ համարենք այս ենթադրությունը, ապա պիտի ընդունենք, որ Ողիսեսն իր նա-
վերով շատ տարածություն էր անցել՝ կիկլոնների երկրից (Էգեյան ծովի հյուսիսային մա-
սերից) մինչև Աֆրիկայի ափերը:

Տող 126— Սևակտոց, կարմրալանջ— հոմերոսյան նավերի մակդիրներն են: Հավա-
նաբար այն ժամանակի նավերի գլուխն ու կողերը ներկվում էին այլ գույներով:

Տող 155— Ասպարակիր— Ջևախ մակդիրն է:

Տող 182— Կիկլուպները, ըստ Հոմերոսի, վայրենաբնակ, միայն մեկ աչք ունեցող հըս-
կաններ էին, որոնք ապրում էին քարանձավներում և օտար էին հասարակական կյանքի
վարք ու բարքին, օրենքներին: Նրանց համար, որոնց Հոմերոսը բնութագրում է մարդա-
կերությանը և անվանում է հրեշներ, անհայտ էին հողագործությունն ու հողի մշակումը:

Տող 199— Իսմարոսը գտնվում էր Թրակիայում, որտեղ ապրում էին կիկլոնները, և
հռչակված էր գինեգործությանը: 7-րդ դարի (մ. թ. ա.) մեծանուն բանաստեղծ Արքիլոքոսը
իր ոտանավորներից մեկում հիշատակում է Իսմարոսը «Ես հացս միշտ նիզակով եմ հաչ-
թայթում, նիզակով էլ ձեռք եմ բերում Իսմարոսից իմ գինին ու խմում եմ ես նիզակիս
հենվելով»:

ԵՐԳ ՏԱՍՆԵՐՈՐԳ

Տող 1— Էոլոսը, հողմերի իշխանագոր տերը, ապրում էր Էոլոսյան կղզու վրա (Սիկե-
լիայից դեպի հյուսիս-արևելք գտնվող Լիպարյան կղզիներից մեկը): Էոլոսի վեց որդոց
ամուսնությունը նրա վեց դստրիկների (հարազատ քույրերի) հետ ցույց է տալիս ամու-
սնության հնագույն ձևը:

Տող 81— Քաղաքը Լամոսի, Տելեպիլոս— Լամոսը լեսոթիզոնների նախահայրն էր և
Տելեպիլոս քաղաքի հիմնադիրը:

Տողեր 136—138— Կախարդ Կիրկե դիցուհին, որը բնակվում էր Էակոս կղզու վրա,
Ողիսեսի հետ սիրով միանալով, դարձավ Տելեգոնոսի մայրը, իսկ Տելեգոնոսը, ըստ կիկ-
լիկ «Տելեգոնիս» պոեմի, հետագայում Իրակե կղզին եկավ և, չճանաչելով իր հայր Ողի-
սեսին, կռվի բռնվեց ու սպանեց նրան:

Տող 179— Ողիսեսի ընկերները, տվյալ պայմաններում, մինչև Ողիսեսի վերադարձը,
սգավոր էին, սգում էին իրենց չարաբաստիկ վիճակը, իսկ երբ նկատեցին վերադարձող
Ողիսեսին, որպես նշան այդ սգո վերացման, «բաց արին» իրենց դեմքերը:

Տող 491— Տիրեսիասը, այդ մեծանուն գուշակը, որը հիշատակված է նաև Սոփոկլեսի
«Էդիպոս արքա» ողբերգության մեջ, միակն էր, որը ստորերկրյա աշխարհում տակավին
պահպանել էր իր գիտակցության ուժը, մինչև մյուս բոլոր մեղայների հոգիները, որպես
սովերներ, ըստ Հոմերոսի աշխարհայացքի, միանգամայն զրկված էին գիտակցելու կամ
մտածողության ընդունակությունից:

ԵՐԳ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԳ

Տող 291— Քաջ գուշակը— այսինքն՝ Մերամարտը, գերափոշակ մի գուշակ, որը հասանում էր՝ գազանների լեզուն:

Տող 300— Պոլիդևեան ու Կաստորը Սպարտայի թագավոր Տինդարեայի և Լեդայի գավակներն էին, որոնք այլ կերպ կոչվում էին դիուկուրոսներ, այսինքն՝ «Ջևի (սեռ. «Դիուս») որդիներ», որովհետև իրականում նրանք ծնված էին Ջևի և Լեդայի սիրային կապից: Դրանցից Կաստորը մահկանացու էր, իսկ Պոլիդևեանը՝ անմահ, սակայն նրանք նվիրված էին միմյանց անձնուրաց սիրով և մտերմությամբ: Երբ Կաստորն սպանվեց, Ջևը կատարեց Պոլիդևեայի աղերսանքը, և այնուհետև երկու եղբայրները փոխարինում էին իրար: Երբ Կաստորն էր հանդես գալիս լույս աշխարհում, Պոլիդևեան իջնում էր Հադեսի տունը և, ընդհակառակը, երբ Պոլիդևեան էր բարձրանում լույս աշխարհ, Կաստորն էր իջնում Հադեսի տուն:

Տողեր 321—325— Այստեղ Կրեստ կղզու թագավոր Մինոսի դստրիկ Արիադնեի առասպելը Հուներուց բերում է յուրատեսակ վերջավորությամբ: Համաձայն ընդհանուր առասպելի՝ Արիադնեին, երբ նրան Թեսեսը դավաճանաբար թողեց անմարդաբնակ կղզու վրա ու հեռացավ, ընդունեց Դիոնիսոս աստվածն ու յարձրեց իր տաճարի թրմուհի, մինչդեռ, Հուներուսի մեկնությամբ, Արիադնեին, հանդիպելով կղզու վրա, Դիոնիսոսի մեղադրանքով սպանեց Արտեմիս աստվածուհին:

Տող 409— «Եվ անիծյալ իմ ծանա կնոջ»— Ազամեմնոնը այստեղ անիծյալ է անվանում Կլիտեմնեստերին:

Տող 469— Էակլանի— այսինքն՝ Աքիլլեսի:

Տող 489— «Որդուս մասին»— այսինքն՝ Նեոպտոլեմոսի մասին:

Տող 520— «Որովպանում երիվարի»— խոսքը փայտյա միտ մասին է:

Տող 534— Դաշտավայրով ապիտղեկյան— հնադարյան հույները հավատում էին, որ ստորերկրյա աշխարհում կան առանձին դաշտավայրեր, որտեղ աճում են ապիտղեկու ծառիկները, որոնք մեռյալների հիշատակին կատարվող ծեսերում մեծ նշանակություն ունենին: Այդ ծառիկների անունով էլ այդ դաշտավայրերը կոչվում էին «ապիտղեկյան»:

Տող 539— Ստորերկրյա աշխարհում Էասի հողին ոչ միայն չմտնեցավ Ռիսեսին, այլ նրանից խուսափեց: Այս հանգամանքով շեշտված է Էասի և Ռիսեսի հայտնի թշնամանքը, որ ծագեց սրդյական պատերազմում: Աքիլլեսի մահից հետո նրա մայր Թետիսը հայտնել էր, որ իր որդու աստվածային զենք ու գրամիջ պիտի հասնի արեական այն մեծ հերոսին, որն իր քաջարությամբ Աքիլլեսից հետո ստաչիճճ էր արեական բանակի մեջ: Այդպիսին էր իսկապես մեծ Էաս Տելամոնյանը, սակայն զենք ու գրամիջ տիրացավ Ռիսեսը: Այդ պատճառով պատվագորկ եղած Էասը խելագարվեց և ինքնասպանությամբ մահացավ (տե՛ս Մովսիսի «Էաս» ողբերգությունը):

Տողեր 590—622— Տվյալ հատվածում Հուներուց ընդհանրացրել ու միացրել է քաջ հերոս Հերակլեսի մասին եղած՝ գանազան ծագում ունեցող և տարբեր տարբերակներ ներկայացնող առասպելները: Հերակլեսի հողին, որպես ստվեր, մյուս մեռյալների հետ գտնվում էր Հադեսի տանը, մինչդեռ ինքը, անմահացած ու հավերժացած, մյուս աստվածներին հավասար, երջանիկ կյանք էր վարում Օլիմպոսի գագաթին:

Տող 617— Ստոր ու ճողի մարդու կամքին— խոսքը վերաբերում է Եվրիսթեսին, որի կամավատարն էր Հերակլեսը իր անխառնագրական ծննդի հետևանքով:

Տող 618— Ծունն անաբեր— խոսքը երեք գլխանի Կերքերոս շան մասին է, որին Հերակլեսը, Եվրիսթեսի հրամանով, դուրս բերեց Հադեսի տնից:

ԵՐԳ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԳ

Տող 39— Ծովալքներ— կիսակին և կիսաթռչուն առասպելական էակներ, որոնք բնակվում էին Սիկելիայի և Էական կղզու միջև:

Տող 60— Ամփիտրիտե— ծովակենցաղ Ներեսի դստրիկներից մեկը, Պոսիդոնի կինը:

Տող 127— Թրիհակիե— առասպելական մի կղզի, որի վրա արածում էին Հելիոսի (Արևի) ճախիրները:

ԵՐԳ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԳ

Տողեր 14—15— Ալկիմոսի հայտարարությունը ցույց է տալիս, թե ինչպես այնպիսի պատրվակներով թագավորը կեղեքում ու շահագործում էր ժողովրդին:

Տող 77— Ծակված քարից— դա այն քարն էր, որին կտաններով կապում, ամրացնում էին նավը:

Տող 140— Երկրատատան— Պոսիդոնի մակդիրն է. Պոսիդոնը հունական մեծագույն աստվածներից մեկն էր, Ջևի եղբայրը:

Տող 270— Այստեղ խոսքը վերաբերում է փյունիկյան վաճառականներին, որոնք հոմերոսյան դարաշրջանում զբաղվում էին առևտրական գործերով:

Տող 387— Այս տողը բնագրում բառացի այսպես է ձևավորված. «Երբ Տրոյայից մենք սրկեցինք նրա գլխի փայլուն ծածկոցն», որի իմաստն է՝ «երբ մենք խորտակեցինք Տրոյայի պարիսպները»: Տողը մենք թարգմանեցինք ըստ իմաստի:

ԵՐԳ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԳ

Տող 233— Ռագմական ավարը սովորաբար բաժանում էին վիճակով, սակայն գորպիսին իրավունք ուներ ավարի որոշ մասը ստանալ ստանց վիճակի, որպես արտոնություն:

Տողեր 247—248— Պատմական տվյալները ցույց են տալիս, որ դեռ միկենյան ու կրետական քաղաքակրթության դարաշրջանում եգիպտոսի և կրետե կղզու միջև գոյություն ունեին առևտրական հարաբերություններ և հաղորդակցություններ:

Տող 325— Տվյալ տողը հաճախակի է կրկնվում Հուներուսի վիպերգությունների մեջ, ըստ որում ամեն անգամ երկաթը հատկանշված է որպես դժվարությամբ մշակվող: Այս հանգամանքը վկայում է, որ մետաղագործության զարգացման սկզբնական շրջանում ոսկին, պղինձն ու, նամանավանդ, երկաթը հազվագյուտ էին ու դժվարությամբ ձեռք բերվող:

Տող 400— «Ժարի գլխից ա.դր.դ ճետելը» հայտնի է պատմության մեջ որպես հնագույն և անհնուրեք տարածված պատիժ: Այդպիսին գործադրվում էր Հուներուսյան Հունաստանում:

ԵՐԳ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԳ

Տող 104— Չեռագործ հագուստները— բնագրում՝ «պեպլոս», որ նշանակում է ծածկույթ, երկար ու լայն կանացի հագուստ, պատմության և այլն, իսկ բանաստեղծության, վիպերգության մեջ՝ առհասարակ զգեստ:

Տող 133— Հուներուսյան դարաշրջանում հյուրերն, առհասարակ, խնջույքի մեջ նստում, բազմում էին և ոչ թիկնում, հենվում կամ կողքի վրա պտկում, ինչպես այդ ընդունված էր հետագա Հունաստանում:

Տող 159— Հավանմանության արհեստն ու թույնագուշակությունը հիմնվում էր քաղ-

մաթիվ նշանների վրա, որպիսիք էին, օրինակ, թույնների միջև ու աղաղակը, նրանց թոնչքն ու թոնչքի ուղղությունը, նրանց մանկերի մեջ եղած առարկան և այլն, ըստ որում թույնների չուն աջ կողմից համարվում էր բարի և հաջող, իսկ ձախ կողմից՝ ձախորդության նշանակ:

Տող 273— Առանց քաշվելու և բացեիքաց Ռդիսեսը հայտնում է, որ ինքը, որպես մարդասպան, հայածվելիս է եղել վրեժխնդիրների կողմից:

Տող 297— Այստեղ ակնարկվում են Ակարնանիացի շրջակայքի կղզիները:

ԵՐԳ ՏԱՍՆՎԵՅԵՐՈՐԳ

Տող 223— Բանաստեղծն այստեղ քերում է հունական ժողովրդական ասույթ. «բայց այդ գործը գտնվում է (ընկած է) աստվածների ծնկների մոտ», այսինքն՝ գործի հաջողությունն ու անհաջողությունը տակավին անհայտ են ու պայմանավորված միայն աստվածների կամքով: Ասույթի հասարակական իմաստը, որպես թեոկրատիկ սկզբունք, որոշ չափով համապատասխան է հայկական դարձվածքին՝ «աստված գիտե, ինչ կլինի» և ռուսական ասույթին՝ «Бог знает, что будет или как будет?»:

Տող 288— Հույների բնակելի տան որոշ մասում ծուխ էր լինում վառվող օջախի պատճառով, որով լուսավորում և տաքացնում էին բնակարանը:

ԵՐԳ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԳ

Տողեր 543—544— Ինչպես հայ ժողովրդի մեջ, փոշտոցը բարի ու հաջողության նշան էր համարվում նաև հոմերոսյան հասարակարգում:

ԵՐԳ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԳ

Տող 1— Համագային մուրացկան— այսինքն՝ մուրացկան, որը հայտնի է ամբողջ ազգին և որը ողորմության է խնդրում բոլորից:

Տողեր 5—6— Ռդիսեսի տանը գտնվող երկրորդ մուրիկի անունն էր՝ Արնեսու: Նա, բացի մուրացկանություն անելուց, իբրև բանբեր, կատարում էր սրա-նրա հանձնարարությունը, ուստի նրան կատակով անվանում էին Իրոս: Այս հեզնանունը ստուգաբանորեն ծագել էր օլիմպական աստվածների բանբեր դիցուհի Իրիսի անունից: Այլապես առած՝ հասկացության ծագումը հիմնված է դերի նույնության վրա:

Տող 263— Հոմերոսը հաճախ, «նժույզներ», «ձիեր» ասելով, հասկանում է ձիերով լրծված մարտակառք: Այն ժամանակ հեծելազոր, հեծյալ զորք չկար, այլ մարտակառքերով էին կռվում պատերազմի դաշտում:

Տողեր 323—329— Տար դարբնոցը հաճախ հարմար սպաստան էր մուրացկանների համար, նամանականդ՝ ձմեռը: Բնագրում, բացի դարբնոցից, կա և «լեսիսե», նշանակում է պանդոկ, ու այդպես էլ մենք թարգմանել ենք:

Տող 368— Կոր գերանդի— այստեղ՝ մանգաղ, քանզի հոմերոսյան հույները հունձն անում էին մանգաղով:

ԵՐԳ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԳ

Տող 34— Հոմերոսն առհասարակ հիշատակում է ջահերն ու օջախները որպես լուսավորության միջոցներ, իսկ այստեղ խոսքը վերաբերում է նրազին:

Տողեր 317—319— Հյուրերի և առհասարակ մեծերի ոտքերը լվանալը, սովորությանը իրավունքի տեսակետից, պարտականություն է: Հայկական նահապետական ընտանիքում հարսները լվանում են տան մեծերի, ախագների ոտքերը: Հյուրի համար լավագույն ու մարտախալ անկողին պատրաստելը, որը Հոմերոսի վիպերգության մեջ համարյա միշտ կրկնվում է, նույնպես համապատասխանում է հայ ընտանիքների սովորությանը:

Տող 473— Խոսակցի կզակը փաղաքշարար բռնելը սիրո կամ ազդեցիկ տղերսանքի նշան է:

ԵՐԳ ՔՍԱՆԵՐՈՐԳ

Տողեր 25—27— Խորված անելը, շամիրները կրակի վրա շոռոտնոտ տալը և դրա բոլոր մանրամասնությունները համապատասխանում են հայկական ընտանիքի սովորույթներին:

Տող 281— Հյուրը, ինչպես շեշտված է վերևում, գտնվում էր Ջեսի հովանավորության տակ. հյուրընկալը պարտավոր էր իր հյուրին պաշտպանել փորձանքից և ամեն տեսակ վտանգից: Մա հոմերոսյան հասարակարգին հատուկ սովորույթ էր, որ հատուկ է նաև հայերին:

Տող 356— Թեոկլիմենոսը, «ուրվական ստվերներ» ասելով, նկատի ունի սպանված խոսնայրների հոգիները:

ԵՐԳ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԳ

Տող 413— Նշանը նենգ Կրոնոսի հզոր որդու— Կրոնոսի հզոր որդին Ջեսն է, իսկ Կրոնոսը որակված է «նենգ» անվանումով, քանզի խորամանկությամբ աշխատում էր խույս տալ այն գուշակությունից, համաձայն որի ինքը պիտի կործանվեր իր զավակներից մեկի ձեռքով:

ԵՐԳ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԳ

Տողեր 54—59— Սովորությանը իրավունքի տեսակետից խոսնայրները կարող էին իրենց գործողություններով Ռդիսեսին հասցրած վնասի և վիրավորանքի փոխարեն ստաջարկել տուգանք: Այդ առաջարկը անում է Եվրիմաքոսը՝ խոստանալով վնասը հատուցել և անսպասելիության համար տուգանք վճարել 20 եզան արծեքի չափ: Ռդիսեսը, համաձայն նույն այդ սովորությանը օրենքների, պարտավոր էր ընդունել այդ պայմանը, որով ստեղծված կոնֆլիկտը կվերանար, սակայն նա արհամարհեց այդ առաջարկը և սխեց խոտորել խոսնայրներին, ուստի վերջինների ծնողներն ու ցեղակից ազգականները իրավունք ունեին վրեժ լուծելու:

Տող 297— Ասպարը— բնագրում՝ «էգիս», այսինքն՝ վահան, ասպար: Ստուգաբանորեն բառի նշանակությունն է՝ այծենի: Հնագույն գրահը, որով մարտիկը ծածկում էր իր կոպծքը կամ թիկունքը, այծի մորթի էր, և այդտեղից՝ «էգիս» հասկացությունը: Ըստ առասպելի՝ առաջին ասպարը (էգիսը) պատրաստված էր Ջեսի համար այն այծի մորթուց, որը կնամակ էր նրան:

Տողեր 439—441— Տանտերը (ընտանիքի հայրը, մեծը), բացարձակ և միահեծան իրավունք ուներ ընտանիքի անդամներին, նաև ծառաներին ու ստրուկներին մահապատժի ենթարկել: Նույն իշխանությունը ընտանիքի հորը տալիս էր և հայոց սովորությանը ընտանեկան իրավունքը:

Տողեր 460—462— Ընտանիքի անդամներից որևէ մեկի, ծառայի կամ սպասարկող ստրկուհու պոռնկությունն ու շնամալը մահացու մեղք, մահվան արժանի ոճիր էր համար-

վում հոմերոսյան հասարակության մեջ, նույնը՝ և հայկական սովորությանին իրավունքի տեսակետից:

Տողեր 473—475— Հոմերոսյան հասարակարգը կիրառելի էր համարում անդամախնդրական պատիժները: Նույնը ընդունում էր նաև հայոց սովորությանին իրավունքը, որի օրինակը տեսնում ենք «Սասունցի Դավիթ» վիպերգության մեջ (Դավիթը պատժում է Կոզբաղիկին):

Տող 479— Անտիկ աշխարհի կրոնական ծեսերում ծծմբի գործածությունը, որպես սըրբազործման ու մաքրության միջոց, շատ էր տարածված:

ԵՐԳ ՔՍՍՆԵՐԵՔԵՐՈՐԳ

Տողեր 113—120— Հոմերոսյան հասարակության մեջ մարդասպանը, հեռանալով իր հայրենիքից, կարող էր սպաստան գտնել այլազգի մարդու տանը, որը պարտավոր էր տալ ապաստան:

Տող 119— Սպանված մարդու ժառանգներն ու ազգականները հոմերոսյան հասարակարգում պարտավոր էին նրա վրեժը լուծել: Այդ վրիժառությունը նրանցից պահանջում էր պանվածի հոգին:

Տող 150— Ամուսնու մահից հետո կամ նրա բացակայելու դեպքում՝ այրիացած կինը պարտավոր էր պատվով ու անոթով հավատարիմ մնալ իր ամուսնուն, պահել ու պահպանել նրա տունն ու տեղը: Նրանից այդ պահանջում էին և հասարակական կարծիքը, և մահացած ամուսնու հոգին: Նույնը՝ նաև հայոց սովորությանին իրավունքի տեսակետից:

ԵՐԳ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԳ

Տողեր 1—10— Հերմես աստվածը բշու, տանում է խոսնայրների հոգիները, յեպ ստորերկրյա աշխարհը, ըստ որում այդ հոգիները օժտված են գիտակցությամբ, մինչդեռ Հադեսի տանը եղած մեռյալների հոգիները, համաձայն «Ողիսականի» այլ մասերում բերված մեկնության, գիտակցությունից զուրկ ստվերներ են:

Տող 46— Պատանիները կտրում էին իրենց վարսերը և գցում մահացածի դիակի վրա: Սա մի ծես էր, որի նշանակությունն այն էր, որ ցուցաբերվի կենդանի մնացածների և մահացածի միջև եղած անբախտելի կապը:

Տող 47— Մայրը, լսած բոլոր մահվան— այսինքն՝ Արիլեսի մայրը՝ աստվածուհի Թեոխիսը:

Տողեր 432—436— Սպանված ազգականի, որդու կամ եղբոր մահվան վրեժը չլուծելը խաչատուակություն էր համարվում¹:

¹ Վերը բերված ծանոթագրությունների մեծագույն մասը ինքնուրույն է և արտականում է թարգմանչին, իսկ մնացյալ մասը կազմված է Վ. Վ. Վերեսևի «Ողիսականի» թարգմանությանը և Պ. Ա. Շուչակու կատարած նույն վիպերգության թարգմանությանը կցված ծանոթագրությունների օգտագործմամբ:

Բ ա ն ա ղ ա ն

ԳԻՅԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ

Ա.

- ԱԳԱՄԵՄՆՈՆ— Միկենեի թագավոր, Ատրևսի որդին, Մենելասի ավագ եղբայրը. սրույակի պատերազմում Ագամեմոնը արեական զորքերի գործադետն էր:
- ԱԳԵԼԱՈՍ— Դանասոսի որդին, Պենելոպեի խոսնայրներից մեկը:
- ԱԴՐԵՍՏ— Հեղինեի ստրկուհին:
- ԱԵՂՈՆ— Դուստրը Պանդարևսի, կինը թեբեական հերոս Զեթոսի: Աեղոնը ունեցավ մի-նունար որդի՝ Իտիլուսին: Նախանձելով թեբեական Ամփիոն թագավորի բազմազավակ կնոջը՝ Նիոբեին և ծաղրանքի ենթարկվելով վերջինիս կողմից՝ հարձակվեց, որ սպանի նրա սիրասուն զավակին, սակայն մեռյալներից մեկը պարսեպ սպանեց իր որդուն: Նա վշտաբեկ, գլուխը կորցրած, ընկավ որդու դիակի վրա: Աստվածները, կարեկցելով, նրան դարձրին սոխակ. «ստիոն» նշանակում է «սոխակ»:
- ԱԹԵՆԱՍ— Աստվածուհի, Զևսի դուստրը, որ ծնվել էր իր հոր գլխից, ուստի կոչվում էր կառապնածին: Աթենաը իմաստության, պատերազմի և ձեռագործի աստվածուհին էր և մշտական հովանավորը Ողիսեսի:
- ԱԹԵՆՔ— Ատտիկեի մայրաքաղաքը, Հունաստանի քաղաքակրթության կենտրոնը:
- ԱԼԵԿՏՈՐ— Սպարտացի:
- ԱԼԻԲԱՍ— Առասպելական մի քաղաք:
- ԱԼԿԱՆՈՐԵ— Կորնթական թագավոր Պոլիքոսի կինը:
- ԱԼԿՄԵՆԵ— Ամփիտրիոնի կինը. Ամփիտրիոնի բացակայության ժամանակ Զևսը սիրաչին կապով միացավ Ալկմենեի հետ, և նա ծնեց երկու զավակ՝ Իփիկլեսին և Հերակլեսին, որոնցից ստաշինը Ամփիտրիոնի այրուհից էր, իսկ երկրորդը՝ Զևսի:
- ԱԼԿՄԵՆՆ— Ամփիարասոսի որդին:
- ԱԼՈՒՎՍ— Դուստրու որդին, Իփիմեդիայի ամուսինը, Էփիարեսի հայրը:
- ԱԼՓԻՈՍ— ա) Մի գետ Պելոպոննեսում, բ) նույն գետի աստվածը:
- ԱԿԱՍՏՈՍ— Դուստրու կրգու թագավոր:
- ԱՄԲՐՈՍՐԱ— Աստվածների անմահական կերակոր:
- ԱՄԻԹԱՈՆ— Մեթանպոսի հայրը:
- ԱՄՆԻՍՈՍ— Ծովափնյա մի քաղաք Կրետե կղզու վրա:
- ԱՄՓԻԹԵՆ— Ավտոլիկոսի կինը, Ողիսեսի տատը:
- ԱՄՓԻՄԵՂՈՆ— Որդին Մելանեսի, խոսնայրը Պենելոպեի:
- ԱՄՓԻՈՆ— Զևսի և Անտիոպեի որդին, Զեթոսի եղբայրը:
- ԱՄՓԻՏՐՈՆ— Ալկմենեի ամուսինը:

ԱՆՏԻՈՒՐՈՍ— Նեստոր ծերուկի որդին, տրոյական պատերազմի ժեմագույն հերոսներից մեկը, որին, իր հորը պաշտպանելիս, սպանեց էթովպական հերոս Մեմնոնը:

ԱՆՏԻՎԻԻՍ— Ողիսևի մայրը:

ԱՆՏԻՆՈՍՍ— Եվաթթևի որդին, Պենելոպեի խոսնայրների գլխավորը:

ԱՆՏԻՊԻՆ— Աստուս գետի դուստրը, Ջեթոս և Ամփիոն եղբայրների մայրը:

ԱՆՏԻՓՈՍՏԵՍ— 1) Լեստրիգոնների արքան, 2) Մելամպուսի որդին:

ԱՆՔԻԱՆՈՍ— Մեմնոսի հայրը:

ԱՊՈՒՂՈՆ— Ջևի և Լետոյի որդին, Արտեմիս աստվածուհու եղբայրը: Ապոլլոնը, որ տրոյական պատերազմում Տրոյա քաղաքի պաշտպանն էր, համարվում էր երածշտության, լույսի աստված:

ԱՍՈՊՈՍ— Բեոտական մի գետ:

ԱՍՏԵՐԻՍ— Մի կղզի Իթակեի շրջակայքում:

ԱՍՓԱԼԻՈՆ— Մենելասի տան տնօրենը, կառավարիչը:

ԱՎՏՈՒԻԿՈՍ— Հերմեսի որդին, Ողիսևի պապը (մոր կողմից), ճարակագույն գող, խարդախության ու նեղություն վարպետ, որն այդ հատկություններն ասացել էր իր հայր Հերմեսից:

ԱՎՏՈՆՈՆ— Պենելոպեի ստրկուհին:

ԱՏԼԱՍ— Տիտան, որն իր ուտերի վրա պահում էր երկնակամարը:

ԱՐԳՈ— Այն աստուգելական նավը, որի վրա հունական արգոնավորը կոչված հերոսները, Ցասոնի գլխավորությամբ, Կոլքիս գնացին ոսկեգեղձը բերելու:

ԱՐԳՈՍ— 1) Բազմակն հրեշ, որը Հերայի կարգադրությամբ հսկում էր Իո գեղեցկուհուն և որին սպանեց Հերմես աստվածը, 2) Ողիսևի շան անունը:

ԱՐԳՈՍԱՍՊԱՆ— Հերմես աստծու մակդիրն է, որը սպանել էր Արգոս հրեշին:

ԱՐԵԹՈՒՍԱ— Մի աղբյուր՝ Իթակեում:

ԱՐԵՍ— Ջևի և Հերայի որդին, պատերազմի աստվածը, որը տրոյական պատերազմում պաշտպանում էր տրոյացիներին:

ԱՐԵՏԵ— Ալկիանոս թագավորի կինը:

ԱՐԻՄՂԵՆ— Կրետական թագավորի դուստրը, որի օգնությամբ Թեսևսը, սպանելով Միմոտավրոսին, կարողացավ դուրս գալ Լաբիրինթոսից:

ԱՐԻԲԱՍ— Առասպելական մի քաղաք, որտեղից բերված էր Եվմենոս խոզարածի հոր ստրկուհին:

ԱՐԿԻՄՈՍ— Լաերտեսի հայրը, Ողիսևի պապը:

ԱՐԿՏՈՍ կամ ԱՐԶ— Համաստեղություն, որը կոչվում է նաև Սայլ:

ԱՐՇԱԼՈՒՅՍ— Արշալույսի, այգի աստվածուհին: Նրա մակդիրներն են «վարդամատն», «ոսկեգան» և այլն:

ԱՓՐՈՂԻՏԵ— Ջևի և Դիոնեի դուստրը, Հեփեստոսի կինը, սիրո և գեղեցկության աստվածուհին: Համաձայն մի այլ առասպելի՝ նա ծնվել էր փրփուրից Կիպրոս կղզու ափերին, ուստի անվանվում էր Կիպրոսի: Առասպելը նրան համարում է նաև Արեսի կինը:

ԱՔԻԼԵՍ— Ծովալեկնցաղ աստվածուհի Թետիսի և միմիդոնյան թագավոր Պելևսի որդին, «Իլիականի» մեջ գովերգված գերազույն հերոսը, որն սպանեց Հեկտորին և որին, միակ խոցելի զարշապարին զարկելով, սպանեց Պարիսը: Աստվածներից Աթիլեաը ասացել էր գերբնական զորություն, մեծամեծ սիրահրեշների ընդունակություն, բայց և կարճ կյանք:

Բ

ԲՈՐԵԱՍ— Հյուսիսային հողմը:

Գ

ԳԵՐԵՆՈՆ— Մի քաղաք, որտեղ Նեստոր ծերուկն ասացել էր իր դաստիարակությունը, ուստի կոչվում էր Գերենացի:

ԳԵՐԵՍՏՈՍ— Մի նավակալան Եվթես կղզու վրա:

ԳԻԳԱՆՏՆԵՐ— Երկրի ծնած հրեշային, հսկա էակներ, որոնց ոտքերը օձեր էին և որոնք ահռելի զորությամբ էին օժտված: Գիգանտները կռվի դուրս եկան օլիմպական աստվածների դեմ, որպեսզի նրանցից իշխանությունը իլեն, բայց պարտվեցին:

ԳԻՐԵ ԺԱՅՈՒՐ— Ծովային ժայռեր՝ Եվթեսի հարավային ափին կամ, ըստ այլ տվյալների, Կիկլադյան կղզիներից մեկի վրա:

ԳՈՐԳՈՆ— Կին հրեշ, որի գլուխը աարսափ էր ազդում, քար էր դարձնում նրա վրա հայք գցողին:

ԳՈՐՏԻՆ— Մի քաղաք Կրետե կղզու վրա:

Դ

ԴԱՄԱՍՏՈՐ— Պենելոպեի խոսնայր Ագեասոսի հայրը:

ԴԱՆԱՅԱՆՔ կամ ԴԱՆԱՅԱՅԻՔ— Այս անունով կոչվում էր աքեական ցեղերից մեկը: Դանաչանք ... երով՝ Հոմերոսը հասկանում է առհասարակ հույներին:

ԴԵԼՈՍ— Մի կղզի Էգեյան ծովում, Ապոլլոնի ծննդավայրը և նրա պաշտամունքի տեղը:

ԴԵՄԵՏԵՐ— Հողագործության և հացաբույսերի աստվածուհին, մայրը Պերսեփոնեի, որը ծնված էր Ջևիի հետ սիրային կապից:

ԴԵՄՈՂՈՂՈՍ— Փեսկների կույր երգիչը:

ԴԵՄՈՂՈՍՈՍ— Պենելոպեի խոսնայրներից մեկը:

ԴԻԵ— Մի կղզի:

ԴԻՄԱՍ— Փեսկ, Նավսիկայի ընկերուհու հայրը:

ԴԻՈՎԼԵՍ— Փերե քաղաքի թագավոր, որը Ալփիոս գետաստծու թոռն էր համարվում:

ԴԻՈՄԵՂԵՍ— Որդին Տիդևի, տրոյական պատերազմի մեծահույն հերոս:

ԴԻՈՆՆՈՍՍ— Բնության ստեղծագործ ուժերի մարմնավորումը, խաղողի և գինեգործության աստված, Ջևի և Սեմելի որդին: Նրա պաշտամունքը կապված էր մոլեզին հրճվանքների, խճույքների հետ, որոնց մասնակիցները գլխավորապես կանաչ էին, հարսուհիները, իսկ հարսու անվամբ կոչվում էր ինքը՝ Դիոնիսոսը:

ԴՄԵՏՈՐ— Կիպրոսի իշխանավոր Ցասոսի որդին:

ԴՈՂՈՆԵ— Հնագույն սրբավայր, որ գտնվում էր Լափրոսում: Դողոնեն Ջևի պաշտամունքի տեղն էր, որտեղ, կաղնու տերևների խորհրդավոր սուսափյունի համաձայն, Ջևի գուշակը հայտնում էր իր գուշակությունները:

ԴՈՒԻՈՍ— ա) Ողիսևի ստրուկներ Մելանթևի և Մելանթոյի հայրը, բ) Ողիսևի՝ վեց որդուց հայր ստրուկը:

ԴՈՐԻԱՅԻՔ— Հունական մի ցեղ:

ԴՈՒԼԻՔՈՆ— Իթակեի շրջակայքի մի կղզի:

ԴԵՎԿԱԼԻՈՆ— Կրետական Կնոսոս քաղաքի թագավորը, որ Իդոմենեոս հերոսի հայրն էր և Միմոսի որդին:

Ե

ԵՎԱՆԹԵՍ— Դիոնիսոսի և Արիստոների որդին:

ԵՎԵՆԱ— Կղզի, որտեղ ապրում էին աքանոնները:

ԵՎԵՆՈՐ— Լիոկիսոսի հայրը:

ԵՎՄԵԼՈՍ— Թեսալական Փերե քաղաքի թագավոր, Աղմեսոսի որդին:

ԵՎԳԻԹԵՍ— Իրակեցի, Պենելոպեի խումբայր Անտիկոսի հայրը:
ԵՎՐԻԱՆՈՍ— ա) Մի փեսայ, բ) Պենելոպեի խումբայրներից մեկը:
ԵՎՐԻՊԱՍԵՍ— Ողիսևի բանբերը, որն ուղեկցել էր նրան յեպի Տրոյա:
ԵՎՐԻՊԱՄԱՍ— Իրակեցի, Պենելոպեի խումբայրներից մեկը:
ԵՎՐԻՄԵՆՈՒՍԱ— Ալկինոս թագավորի ստրկուհին:
ԵՎՐԻՄԻՂԵՍ— Կիկլոպների գուշակը:
ԵՎՐԻՆՈՍԵ— Պենելոպեի ստրկուհին:
ԵՎՐԻՆՈՍՈՍ— Իրակեցի, Պենելոպեի խումբայրներից մեկը:

ԵՎՐԻՊԻՆՈՍ— Տրոյացիների դաշնակիցը: Աստվածների նախորշումով՝ նա, եթե դուրս գար պատերազմի, պիտի կործանվեր: Նրա մայրը, ինքնազուրկ հանդերձ այդ հավաքամանքը, կաշառվեց Պրիամոսի ձեռքով և որդուն դրեց դուրս գալ պատերազմի, որտեղ և սպանվեց Ելիսիլոսը:
ԵՎՐԻՏՈՍ— Թեսալական թագավոր, որ գերեզակ աղեղնավոր էր և ստացել էր իր աղեղը Ապոլլոնից: Հետագայում նա հանդգնեց Ապոլլոնին մրցության կանչել և սպանվեց նրա ձեռքով: Հռչակավոր աղեղը նրանից անցավ իր որդի Իփիտոսին, որը հետագայում նվիրեց Ողիսևին:
ԵՎՐԻՏԻՈՆ— Կենտավրոս, որը ներկա գտնվեց Պիրիթոսի հարսանիքին:
ԵՎՐՈՍ— Արևելյան հողմը:

Ձ

ՋԱԿԻՆԹՈՍ— Կղզի՝ Էլիսի ափերին:
ՋԵԹՈՍ— Ջևախ և Անտիոպեի որդին, Ամփիոնի եղբայրը, Անդրոնի ամուսինը:
ՋԵՓՏՈՒՌ— Արևմտյան հողմը, որը Հունաստանում փչում էր Թրակիայից:
ՋԵՎՍ— Օլիմպական աստվածների հայրն ու տիրակալը: Ջևաք Կրոնոսի և Հոնայի որդին էր, երկնքի, որոտի ու կալծակի աստվածը:

Է

ԷԱԿԱՆ ԿՂԶԻ— Առասպելական կղզի, որի վրա ապրում էր Կիրկե դիցուհին:
ԷԱԿՈՍ— Ջևախ և Էգիսեի որդին, Պելևսի և Տելամոնի հայրը, Աքիլևսի և Էասի պապը: Նրա անունով Աքիլևսը կոչվում էր Էսկյան:
ԷԳԵ— Մի քաղաք Պելոպոննեսում, որտեղ տարածված էր Պուսիդոնի պաշտամունքը:
ԷԳԻՍԹՈՍ— Թիեստեի որդին, Ագամեմոնի հորեղբոր որդին, օգտվելով Ագամեմոնի բացակայությունից՝ սիրով միացավ նրա կնոջ՝ Կլիտեմնեստրայի հետ: Երբ Ագամեմոնը վերադարձավ տրոյական պատերազմից, Էգիսթոսն ու Կլիտեմնեստրան նրան սպանեցին:
ԷԴԻՊՈՒՍ— Թեբե քաղաքի Լայոս թագավորի որդին, որն, սկսած ճակատագրական անխուսափելիությամբ, սպանեց իր հորը և ամուսնացավ իր մոր հետ:
ԷԹՈՆ— Կեղծ, հորիմուխ անուն, որով իրեն անվանում էր Ողիսևը:
ԷԼԱՏՈՍ— Պենելոպեի խումբայրներից մեկը:
ԷԼԻՍ— Մարգ՝ Պելոպոննեսում:
ԷՆԻՊԵՎՍ— Թեսալական մի գետ:
ԷՈՆՈՍ— Հողմերի աստված, որն իր կնոջ և որդուց հետո ապրում էր Էոլական կղզու վրա:
ԷՊԻԱՑԻՔ— Պելոպոննեսոսի հյուսիսային մասի հնագույն բնակիչները:
ԷՊԻԿԱՍՏԵ— Թեբե քաղաքի Լայոս թագավորի կինը, Էգիսթոսի մայրը:
ԷՊԻՈՍ— Աքեացի, որ կառուցել էր հռչակավոր փայտյա ձին:
ԷՏՈՒԱՑԻՔ— Էտոլիայի (մարգ՝ Միջին Հունաստանում) բնիկները:
ԷՊԻՐԻՏՈՍ— Ողիսևի հորինած կեղծ անունը:
ԷՊԻՐՈՍ— ա) Առնասարակ՝ ցամաք, բ) Հունաստանի հյուսիս-արևմտյան մասը:

ԷՐԵՔՈՍ— Խաղաղուտ խորհարար:
ԷՐԵՄՐՆԵՐ— Առասպելական մի ազգություն, որ ապրում էր Փյունիկիայի շրջակայքում:
ԷՐԵՔԹԵՎՍ— Արեմքի հնագույն առասպելական թագավոր:
ԷՐԻՄԱՆԹՈՍ— Լեոնային մի քարձուռն Պելոպոննեսում:
ԷՐԻՆԻՍՆԵՐ— Վրեժխնայի ոգիներ, դիցուհիք, որոնք հետապնդում էին մարդասպաններին, պատժում և խեղազուրկ անում:
ԷՐԻՓԻԼԵ— Ամփիարասոսի կինը, որը, կաշառվելով Պոլիքլևսի կողմից, ստիպեց ամուսնուն դուրս գալ արշավանքի Թեբե քաղաքի դեմ: Ամփիարասոսը, որը գիտեր իր անխուսափելի կործանումը, զոհվեց: Նրա որդին հոր վրեժը լուծեց, սպանեց իր մորը և ապա Էնթարկվեց Էրիսիսների հալածանքին:
ԷՓԻԱԼՏԵՍ— Պուսիդոնի թոռը, Օտոսի եղբայրը:
ԷՓԻՐԵ— ա) Կորնթոսի հին անունը, բ) պելասգական մի քաղաք, գ) թեսպրոտական մի քաղաք:
ԷՔԵՆՈՍ— Փեակների ծերունի մի իշխան:
ԷՔԵՏՈՍ— Դաժանագույն մի թագավոր, որն, իբրև թե, ապրում և իշխում էր Էպիրոսում:
ԷՔԵՓՐՈՆ— Նեստորի որդին:

Թ

ԹԵՔԵ— ա) հեռուական յոթնադուռն քաղաք, բ) եգիպտական քաղաք:
ԹԵՄԻՍ— Արդարադատության աստվածուհին:
ԹԵՆՈՎԼԻՄԵՆՈՍ— Աքեացի գուշակ, որը Պիլոսից Տելեմաքոսի հետ եկավ Իրակե:
ԹԵՍԵՎՍ— Ատտիկական մեծահռչակ հերոս, Աթենքի առասպելական թագավոր:
ԹԵՍՊՐՈՏՏԱՆՔ— Էպիրոսի հունական մի ցեղ:
ԹԵՏՈՍ— Ծովակենցաղ դիցուհի, Ներևսի դուստրը, Պելևսի կինը, Աքիլևսի մայրը:
ԹԻԵՍՏԵՍ— Ատրևսի եղբայրը, Էգիսթոսի հայրը:
ԹՈՍԱ— Անդրեմոնի որդին, Էտոլիայի թագավոր:
ԹՈՆ— Եգիպտացի, որի տանը հյուր եղան Մենելասն ու Հեղինեն:
ԹՈՆՈՍ— Կիկլոպ Պոլիփեմոսի մայրը:
ԹՐԱԿԻԱ— Մակեդոնիային հարևան ընթարձակ երկիր:
ԹՐԱԻՄԵՆԵՍ— Նեստոր ծերուկի որդին:

Ի

ԻՊՈԹԵՍ— Պրոտևսի դուստրը:
ԻՊՈՄԵՆԵՎՍ— Կրետական Կնոսոս քաղաքի թագավոր, Դևկալիոնի որդին, կրետական գործառնների առաջնորդը տրոյական պատերազմում:
ԻԹԱԿԵ— Կղզի Իոնիական ծովում: Ողիսևի հայրենիքը:
ԻԼԻԹԻԱ— Դուստրը Ջևախ, ծննդաբերության հովանավոր աստվածուհին:
ԻԼԻՈՆ— Տե՛ս Տրոյա:
ԻՆՈՍ— Մերմերոսի որդին:
ԻԿՄԱԼԻՈՍ— Այն վարպետը, որը Պենելոպեի համար շինել էր մեծարվեստ մի աթոռ:
ԻԿԱՐԻՈՍ— Պենելոպեի հայրը, Ողիսևի անեղը:
ԻՆՈ— Կադմոսի դուստրը:
ԻՈՒԿՈՍ— Թեսալական քաղաք:
ԻՍՄԱՐՈՍ— Կիկլոնների գլխավոր քաղաքը՝ թրակիական ծովափին:
ԻՏԻՆՈՍ— Անդրոնի որդին, որ թյուրիմացաբար սպանվեց մոր ձեռքով, որին մայրը ողբում էր հավերժ:

ԻՐՈՍ— Ողիսակի տան մտքացկանը, որ մենամարտեց Ողիսակի հետ:
ԻՓԻՄԵՂԻԱ— Օտոսի և Էփիպլոսի մայրը:
ԻՓԻՏՈՍ— Տե'ս Եփիսոս:
ԻՓԹԻՄԵ— Իկարիոսի դուստրը, Պենելոպեի քույրը:
ԻՓԻՎԼՈՍ— Թեսալական արքա, որ իր նախորդ նվիրեց Մելամպոսին:

Լ

ԼԱԵՐԿԵՍ— Դարբին, որը Նեստորի զոհարեբած կովի եղջուրները ոսկեզօծեց:
ԼԱԿԵԳԵՄՈՆ— ա) մարգ՝ Պերոպոննեսոսում, բ) Սպարտա քաղաքը:
ԼԱՌԴԱՄՍԱ— Ալկինոսի որդին:
ԼԱՄՈՍ— Աեստիգոնների թագավոր, հիմնադիր Տելեպիլոս քաղաքի:
ԼԱՄՊԵՏԻՆԵ— Հալերթամարս, Հեղիոսի (արևի) դուստրը:
ԼԱՄՊՈՍ— Էոսի (Արշալույսի) անմահ նծույզը:
ԼԵԳԱ— Սպարտական Տիեզարևս թագավորի կինը, Հեղիոսի, Կլիտեմնեստրայի, Կաստորի և Պոլիդեմեդի մայրը:
ԼԵՄՆՈՍ— Մի կղզի՝ Էգեյան ծովում, Հեթեատոս աստծու պաշտամունքի սրբավայրը:
ԼԵՍՔՈՍ— Մի կղզի՝ Էգեյան ծովում, Տենեդոսի շրջակայքում:
ԼԵՍՏՐԻԳՈՆՆԵՐ— Առասպելական հսկաներ ու մարդակերներ: Նրանք ապրում էին այն երկրում, որտեղ օրերը այնքան էին կարճատև, որ Արշալույսն ու Վերջալույզը հանդիպում էին իրար:
ԼԵՎԿԱԴՅԱՆ ԺԱՅՈՒ— Առասպելական ճերմակագույն ժառ, որ գտնվում էր անդրաշխարհի (մեռյալների աշխարհի) սահմանին:
ԼԵՎԿՈՅԱ— «Ճերմակ դիցուհի», այսինքն՝ փրփրալից ալիքների աստվածուհի: Լևկոթեան մի ժամանակ մահկանացու կին էր, թեթևական Կադմոս թագավորի դուստրը՝ Ինո անունով: Հերս աստվածուհուն ներշնչմամբ Ինոն, խելագարվելով, իր մանուկ զավակի ձեռքը բռնած, ծովը նետվեց: Այնուհետև աստվածների կամքով և՛ նա, և՛ իր որդին աստված դարձան. Ինոն յարձակ փրփրալից ալիքների աստվածուհի՝ Լևկոթեա անունով:
ԼԵՏԱ— Աստվածուհի, Ապոլլոնի և Արտեմիսի մայրը:
ԼԻՈՂԵՍ— Էնոպի որդին, Պենելոպեի խոսնայրը:
ԼԻՈՂՐԻՏՈՍ— Իթակեցի Եվեոսի որդին, Պենելոպեի խոսնայրներից մեկը:
ԼՈՏՈՓԱԳՈՍՆԵՐ— Առասպելական մի ցեղ, որը սնվում էր լոտոսի ծաղիկներով:

Կ

ԿԱԴՄՈՍ— Ջևի ձեռքով առևանգված Եվրոպեի եղբայրը և Թեբե քաղաքի առասպելական հիմնադիրը: Կադմոսը գնաց որոնելու իր բրոջը, անհասարակին նրան մի կով պատահեց, որի հետքը բռնած նա եկավ, հասավ Հունաստան, Բեոտիա և ապա այնտեղ, որտեղ կովը կանգ առավ, նա հիմնեց Թեբե պատմական քաղաքը:
ԿԱՍՏՈՐ— Տիեզարևի և Լեոպի որդին, Հեղիոսի և Պոլիդեմեդի եղբայրը:
ԿԱՎԿՈՆՆԵՐ— Հնագույն մի ազգություն, որ ապրում էր Պերոպոննեսոսում:
ԿԵՓԱԼԵՆՏԻՔ— Իթակեցի շրջակայքի կղզիների բնիկները:
ԿԻՓԵՐՈՍ— Մի կղզի՝ Պերոպոննեսոսից հարավ:
ԿԻՓԵՐՈՒՆԻՆ— Ափրոդիտեի մյուս անունը: Ենթադրվում է, որ Կիթերա կղզու վրա կալին նրա պաշտամունքի սրբավայրեր:
ԿԻԼԵՆԱԿԱՆ— Հերմեսի մականունը, որ ծնված էր Կիլենե լեռնաշղթայի վրա:
ԿԻՎԼՈՂՆԵՐ— Վայրենի հսկաներ, միաչքանի հրեշներ:
ԿԻԿՈՆՆԵՐ— Թրակիական մի ցեղ:
ԿԻՄՄԵՐՆԵՐ— Առասպելական մի ժողովուրդ, որ ապրում էր հնուավոր հյուսիսում, մի

երկրում, որ հավերժ առվամ էր խավարի մեջ, քանզի արևի անուազայթներն այնտեղ չէին հասնում:
ԿԻՊՐՈՍ— Կղզի՝ Միջերկրական ծովում:
ԿԻՐԿԵ— Աստվածուհի, Արևի դուստրը, կախարչուհի, որն ապրում էր Լակամ կղզու վրա:
ԿԼԻՄԵՆԵ— Իփիկլոսի մայրը:
ԿԼԻՄԵՆՈՍ— Եվրոպեի հայրը, Նեստորի անեքը:
ԿԼԻՏԵՄՆԵՍՏՐՈՍ— Տիեզարևի աղջիկը, Հեղիոսի քույրը, Ագամեմոնի կինը:
ԿԼԻՏԻՈՍ— Իթակեցի, Պիլոսի հայրը:
ԿՏԵՄՈՍ— Եվեոսի հայրը:
ԿՏԻՄԵՆԵ— Ողիսակի քույրը:
ԿՐԱՏԵՒՍ— Ալկիլա հրեշի մայրը:
ԿՐԵԹԵՎՍ— Էոլոսի որդին, Տիրոսի ամուսինը:
ԿՐԵՏԵ— Մի մեծ կղզի՝ Միջերկրական ծովում:
ԿՐԵՈՆ— Թեբեական թագավոր:

Ղ

ՂԱԳԵՍ— Ստորերկրյա մահվան աշխարհի թագավորը: Հաղեպը Կրոնոսի որդին էր, Ջևի և Պոսիդոնի եղբայրը:
ՂԱԼԹԵՐՍՅԵՍ— Իթակեցի ծերունի հավանմա, Ողիսակի վաղեմի բնիկը:
ՂԱՐՊԻԱՆԵՐ— Մրրիկների ոգիները, կին թևավոր էակներ, որոնք աներևույթաբար սահում էին օ, ի մեջ և հափշտակում մարդկանց:
ՂԵԲԵ— Աստվածուհի, Ջևի և Հերայի դուստրը, հովանավորը ծաղկափթիթ կյանքի: Հեբե, որ սարսափողն էր օլիմպական աստվածների և քաջատղջուրյան ու կազմվածքով մարմնացումն էր ծաղկալի կյանքի, հետագայում, երբ Հերակլեսը անմահացած երկինք բարձրացավ, դարձավ նրա կինը:
ՂԵԼԻՈՍ— Արև, արևի աստվածը:
ՂԵԼԿԴՍ— Հունաստան:
ՂԵԼԼԵՍՊՈՆՏՈՍ— Դարդանեղի նեղուցը:
ՂԵՂԻՆԵ— Ջևի և Լեպայի դուստրը, Մենելոսի կինը, որին առևանգեց Պարիսը, և որի համար ծագեց տրոյական պատերազմը:
ՂԵՐԱ— Հունաստանի ավազ և գերագույն աստվածուհին, դուստրը Կրոնոսի, քույրն ու կինը Ջևի:
ՂԵՐԱԿԼԵՍ— Ջևի և Ալկմենեի որդին, անպարտելի ու մեծագույն զորության տեր հերոս, որը Հունաստանում կառուրեց քաղաքիվ սիրանքներ, ի թիվս որոց և 12 հրաշքներ:
ՂԵՐՄԻՈՆԵ— Մենելոսի և Հեղիոսի աղջիկը:
ՂԵՓԵՍՏՈՍ— Որդին Ջևի և Հերայի, ամուսինը Ափրոդիտեի, երկու ուղից կաղ աստված, օլիմպական դարբին, վարպետ ու արվեստագետ:
ՂԻՊԵՐԵՄԻՆԵ— Քաղաք՝ Պերոպոննեսոսում:
ՂԻՊԵՐԻՈՆԵ— Բուսացի՝ բարձրյալ, բարձրագույն, նույնն է՝ Հելիոս:
ՂԻՊՐՈՂՄԻՍ— Պենելոպեի ստրկուհին:
ՂՈՍԴԱՄՍԱՆԹԻՍ— Ջևի որդին, արդարագույն մարդ, Միմոսի եղբայրը:
ՂՈՒՔՄԵՆՈՐ— Ալկինոսի եղբայրը:
ՂՈՒԹՐՈՆ— Նավահանգիստ՝ Իթակեում:

Ս

ՄԱԼԻԱ— Մի հրվանդան՝ Պերոպոննեսոսի հարավում:
ՄԱՆՏԻՈՍ— Մելամպոսի որդին, Թեոկլիմենոսի պապը:
ՄԱՍՏՈՐ— Հալիթերեսի հայրը:

ՄԱՐԱԹՈՆ— Բնակավայր՝ Ատոհիկեի արևելյան կողմում:
 ՄԱՐՈՆ— Ապոլլոնի քուրմը Իսմարոս քաղաքում:
 ՄԵԱՍ— Ատլասի դուստրը, Հերմեսի մայրը:
 ՄԵԳԱՊԵՆԹԵՍ— Մենելասի և նրա ստրկուհու որդին:
 ՄԵԳԱՐԱ— Թերեական Կրեոն թագավորի աղջիկը, Հերակլեսի կինը:
 ՄԵՂՈՆ— Իթակեցի, Ոդիսևսի տան սպասարկողը:
 ՄԵԼԱՍՊՈՒՍ— Մեծահոշակ գուշակ, որ հասկանում էր գազանների լեզուն:
 ՄԵԼԱՆԵՎՍ— Իթակեցի, Անիիմեդոնի հայրը:
 ՄԵԼԱՆԹԵՎՍ— Ոդիսևսի այծարածը:
 ՄԵԼԱՆԹՈՆ— Պենելոպեի ստրկուհին, որ լքարեմ պախարակում էր Ոդիսևսին:
 ՄԵՄՆՈՆ— Եթովպական թագավոր, Արշալույսի որդին, որ սպանվեց Աքիլլեսի ձեռքով:
 ՄԵՆԵԼԱՌՍ— Ատրևսի որդին, Ագամեմնոնի կրտսեր եղբայրը, Սպարտայի թագավոր, Հեղինեի ամուսինը:
 ՄԵՆԵՏԻՈՍ— Պատրոկլոսի հայրը:
 ՄԵՆՏՈՐ— Ոդիսևսի ընկերը:
 ՄԵՆՏԵՍ— Տափոսացոց թագավորը, Ոդիսևսի ընկերը:
 ՄԻՆՈՍ— Ջևախ և Եվրոպեի որդին, Կրեոն կղզու առասպելական թագավոր: Մինոսը հուշակված էր որպես իմաստուն և արդարամիտ հերոս, նա համարամիտ Պեդալոսի ձեռքով կառուցել տվեց հայտնի լաբիրինթոսը: Իբրև իմաստուն և արդար իշխանավոր, նա արժանանում էր ամիջական հաղորդակցման Ջևախ հետ, իսկ իր մահից հետո դարձավ դատավոր մեղայների աշխարհում:
 ՄԻԿԵՆԵ— ա) Արգոսի մերձակա մի քաղաք, բ) Միկենացի մի հերոսուհի:
 ՄԻՄԱՍ— Մի լեռ Փոքր Ասիայում:
 ՄԻՆԻԱՅԻՔ— Բեռտիայի հնագույն մի ժողովուրդ, որի գլխավոր քաղաքն էր Օրքոմենոսը:
 ՄՈՒՍԱ— Արվեստի ու բանաստեղծության ոգևորիչ դիցուհի:

Յ

ՅԱՍԻՈՆ— Դեմաոնի ստրկուհու սիրելիանը:
 ՅԱՍՈՆ— Հունաստանի մեծահոշակ հերոս, արգոնավորների առաջնորդը, Մեդեայի ամուսինը:
 ՅԱՐԳԱՆՈՍ— Գեոն՝ Կրեոնում:

Ե

ԵԱՅԱԴ— Ջրաք, հավերժահարս:
 ԵԱՎՄԻԹՈՆՍ— Ալկիմոսի հայրը:
 ԵԱՎՄԻԿԱ— Ալկիմոսի դուստրը:
 ԵԵԵՐԱ— Օլկիանոսի դուստրը:
 ԵԵԼԵՎՍ— Պիլոսի թագավոր Նեստորի հայրը, Պոսիդոնի և Տիրոսի որդին:
 ԵԵՈՊՏՈՆՄՈՍ— Աքիլլեսի որդին:
 ԵԵՍՏՈՐ— Պիլոսի թագավոր, հուշակավոր ճարտասան, որը տրոյական պատերազմում պեռական հերոսների իմաստուն խորհրդակցան էր:
 ԵԵՐԻԿՈՍ— Մի քաղաք՝ Անաու կղզում:
 ԵԵՐԻՏՈՆ— Մի լեռ՝ Իթակեում:
 ԵԻՍՈՍ— Դուլիքիոնցի:
 ԵՈՆՄՈՆ— ա) Լիկիացի, բ) Իթակեցի:
 ԵՈՏՈՍ— Հարավային քամին:

ՊԱԼԼԱՍ— Աթենա սատվածուհու մականունը:
 ՊԱՆՊԱՐԵՎՍ— Անդոնի հայրը:
 ՊԱՆՈՊԵՎՍ— Քաղաք՝ Փոկիսում:
 ՊԱՌՆԱՍՈՆ— Լեո՝ Փոկիսում, նվիրական վայրը Ապոլլոնի և մուսաների:
 ՊԱՏՐՎԱՌՍ— Աքիլլեսի սիրելի ընկերը, որ սպանվեց Հելատրի ձեռքով:
 ՊԱՓՈՍ— Մի քաղաք՝ Կիպրոս կղզու վրա:
 ՊԵԱՆ— Բժշկության աստված: Նրա անունով կոչվում էին և այլ հուշակավոր բժիշկներ, օրինակ՝ Ապոլլոնը որպես բժիշկ, Ասկլեպիոսը և այլն:
 ՊԵԱՍ— Փիլոկոնտեսի հայրը:
 ՊԵԼԵՎՍ— Հանոսի որդին, Աքիլլեսի հայրը, ամուսինը Թեսիս սատվածուհու, միմիդոնցոց թագավոր:
 ՊԵԼԻՍԱՍ— Պոսիդոնի և Տիրոսի որդին, թեսալական Իոլկոս քաղաքի թագավոր:
 ՊԵՐԻՏԵՍ— Եվրիմեդոնի դուստրը, Նավսիթոսի մայրը:
 ՊԵՐԻԿԼԻՄԵՆՈՍ— Նելևսի և Բլոբիսի որդին, Նեստորի եղբայրը:
 ՊԵՐՈՆ— Նելևս թագավորի չքնաղ դուստրը:
 ՊԵՐՍԵ— Օլկիանոսի դուստրը:
 ՊԵՐՍԵՎՍ— ա) Մեծագույն հերոս, Ջևախ և Դանաուսի որդին, բ) Նեստորի որդին:
 ՊԵՐՍԵՓՈՆԵ— Դեմաոնի ստրկուհու դուստրը, Հադեսի կինը, մահվան աշխարհի թագուհին:
 ՊԻԹՈՆ— Դերիլան գուշակարանի հնագույն անունը:
 ՊԻԼՈՍ— Նելևսի հիմնած քաղաքը Մեսսենում, որ իշխում էր Նեստորը:
 ՊԻՍԱՆՊՈՆՍ— Իթակեցի, Պոլիկտորի որդին, Պենելոպեի խոսնայրը:
 ՊԻՍԵՆՈՐ— ա) Կլիտոսի հայրը, բ) Օլգի հայրը, գ) Իթակեցի մի բանբեր:
 ՊԻՍԻՍՏՐԱՏՈՍ— Նեստորի կրտսեր որդին:
 ՊԻՐԵՈՍ— Իթակեցի, Տելեմաքոսի ընկերը:
 ՊԻՐԻԹՈՆՍ— Լուսիթների թագավորը, որի հարսանիքին կենտավրոսները, գիմոլցան, հարձակվեցին լապիթների կամանց վրա: Այդ պատճառով կոխվ ծագեց լապիթների և կենտավրոսների մեջ:
 ՊԻՐԻՓԼԵԳԵԹՈՆ— Հրեղեն մի գետ մեդալների աշխարհում:
 ՊՈԼԻԲՈՍ— ա) Մեծամարտա մի եգիպտացի, որի տանը հյուրընկալվեցին Մենելասն ու Հելիենն, բ) Պենելոպեի խոսնայրը, գ) Արվեստագետ մի փեսայ, դ) Իթակեցի, Եվրիմեդոնի հայրը:
 ՊՈԼԻԿԱՍՏԵՆ— Եգիպտոսի, Թոնի կինը:
 ՊՈԼԻԳԵՎԵՎՍ— Ջևախ և Լեդայի որդին, Կաստորի և Հելիենի եղբայրը:
 ՊՈԼԻԿԱՍՏԵՆ— Նեստորի դուստրը:
 ՊՈԼԻԿՏՈՐ— Իթակեցի, սպարանքներ կատարած մի հերոս:
 ՊՈԼԻՆԵՈՍ— Մի փեսայ:
 ՊՈԼԻՓԵՄՈՍ— Կիկլոս, Պոսիդոնի որդին, որին կուրացրեց Ոդիսևսը:
 ՊՈՆՏՈՆՈՍ— Մի փեսայ:
 ՊՈՍԻՊՈՆ— Կրոնոսի որդին, Ջևախ և Հադեսի եղբայրը, ծովի աստված:
 ՊՍԻՐԵ— Փոքրիկ կղզի՝ Բիոսից ոչ հեռու:
 ՊՐՈԿՐԻՍ— Էրեբոսի դուստրը, որպես Կեփալոսի կինը:
 ՊՐՈՏԵՎՍ— Մարգարեություններ անող ծովածերուկ, որը ընդունակ էր կերպարանք փոխել դամազ գազան, կրակ, ջուր և այլն:

- ՍԱՄՈՆԵՎԱ— Էդուսի որդին, Տիրոյի հայրը:
- ՍԱՄԵ— Մի կղզի՝ Իթակեի շրջակայքում:
- ՍԱՅԼ— Համաստեղություն, այլ կերպ՝ Արջ:
- ՍԻՌՈՆ— Հնագույն փյունիկական մի քաղաք:
- ՍԻԿԱՆԻԵ— Սիկելիայի հին անունը:
- ՍԻՆՏՈՍՏԻՔ— Լեւոնոսի բնիկները:
- ՍԻՍԻՓՈՍ— Կորնթոսի թագավոր, նեւո ու խորամանկ մի հերոս, որը գիտեր աստվածների գաղտնիքները և տարածում էր մարդկության մեջ: Դրա համար նա դատապարտվեց հավերժական ծանր աշխատանքի:
- ՍԿԻԼԱ— Ծովային վեցգլխանի հրեշ, որը, հենված ժայռին, շորթում, լսփում է նավորդներին:
- ՍԿԻՐՈՍ— Մի կղզի՝ Էգեյան ծովում:
- ՍՈԼԻՄՆԵՐ— Փոքր Ասիայի ժողովուրդ:
- ՍՊԱՐՏԱ— Լակոնիկեի գլխավոր քաղաքը, Մենելաոսի տիրապետության արտանմուշ կենտրոնը:
- ՍՏԻՔՍ— Հանդեսի թագավորության գետերից մեկը:
- ՍՏՐԱՏԻՈՍ— Նեստորի որդին:
- ՍՈՆԻՆՈՆ— Մի հրվանդան՝ Ատտիկեյի հարավային մասում:
- ՍՔԵՐԻԱ— Առասպելական մի կղզի, որի վրա ապրում էին փեակները:

S

- ՏԱՆՏԱՆՈՍ— Փոյուգիական թագավոր, ագամ, նեւո և խաբերա մի հերոս: Լեւանակից լինելով աստվածների սեղանին՝ նա գողանում էր նեկտար և ամբրոսիա: Իր մեղքերի համար մեղալների աշխարհում նա դատապարտվեց անեղ տանջանքի:
- ՏԱՎՊԵՏՈՍ— Մի լեւանաշրթա՝ Պելոպոննեսում:
- ՏԱՓՈՍ— Մի կղզի՝ Ալբանիայի ափերի մոտ:
- ՏԵԼԵՊԻԼՈՍ— Լեստրիգոնների քաղաքը:
- ՏԵՆԵՐՈՍ— Կղզի՝ Էգեյան ծովում:
- ՏԻԻԵՎԱ— Դիոմեդեսի հայրը:
- ՏԻԹՈՆՈՍ— Գեղեցկագույն տղամարդ, Էոսը (Արշալույսը) նրան փախցրեց երկինք տարալ: Աստվածները նրան շնորհեցին անմահություն, ավալի՝ հավերժ երիտասարդություն չուվեցին, ուստի նա ապրում էր որպես գառամայլ:
- ՏԻՆՎԱՐԵՎԱ— Սպարտական թագավոր, Լեդայի ամուսինը:
- ՏԻՏՈՍ— Երկրի որդին, հզորագույն զորության տեր մի հսկա: Նա կամեցավ բռնաբարել Լետո աստվածուհուն, ուստի աստվածուհու զավակները՝ Ապոլլոնն ու Արտեմիսը նրան սպանեցին: Մեղալների աշխարհում, իր մեղքերի համար, նա ենթարկվում էր դաժանագույն տանջանքի:
- ՏԻՐԵՍԻԱՍ— Թեբեական կույր գուշակ, որը մեղալների աշխարհում իսկ պահպանել էր իր գիտակցությունը:
- ՏԻՐՈ— Սպարտեի դուստրը, թեսալական Կրեթևա թագավորի կինը:
- ՏՐԻՏՈՆԱՄԻՆ— Աթենասի մակդիրը:
- ՏՐՈՅԱ— Տրոյական երկրի գլխավոր քաղաքը՝ Սկամանդրոս գետի հովտում:

Փ

- ՓԱԵԹՈՆ— Արշալույսի նմուշը:
- ՓԱԵԹՈՒՍԱ— Հեյոսի դուստրը:

- ՓԱՐՈՍ— Մի կղզի՝ Եգիպտոսի ափերի մոտ:
- ՓԵԱԿՆԵՐ— Սքերիա կոչված առասպելական կղզու բնակիչները, որոնք աստվածների սիրելիներն էին գլխավորապես նավորությանը էին զբաղվում:
- ՓԵՔՈՍ— Ապոլլոնի մականունը:
- ՓԵՊԻՄՈՍ— Փյունիկեցի թագավորը:
- ՓԵՐՐԱ— Թեսալի կինը, որը սիրամարմնից իր խորթ որդի Հիպոլիտոսին: Երբ Հիպոլիտոսը մերժեց նրա սիրո առաջարկը, նա ինքնասպանություն գործեց:
- ՓԵՄԻՈՍ— Իթակեցի երգիչ:
- ՓԵՐԵ— Թեսալական մի քաղաք:
- ՓԵՐԵՍ— Արմենոսի հայրը, թեսալական Փերե քաղաքի հիմնադիրը:
- ՓԹԻԱ— Թեսալական քաղաք, Աքիլլեսի հայրենիքը:
- ՓԻՌՈՆ— Թեսալոտացիների թագավորը:
- ՓԻԼԱԿԵ— Թեսալական մի քաղաք:
- ՓԻԼԱԿՈՍ— Փիլակե քաղաքի թագավորը:
- ՓԻԼԵՏԻՈՍ— Ողիսեսի հավատարիմ հովիվը:
- ՓԻԼՈ— Հեղինեի արկունիին:
- ՓԻԼՈԿՏԵՏՏՈՍ— Մեծահռչակ աղեղնավոր, որ իր ձեռքին ուներ Հերակլեսը աղեղը: Թեսալական գործի հետ նա արշավեց դեպի Տրոյա: Մանապարհին, կղզիներից մեկում, նրան խաչեց օձը, և նա, վիրավորված, մեծ-մեծակ մնաց ամայի կղզու վրա: Բայց կար գուշակություն, որ Տրոյա քաղաքն անկարելի է նվաճել առանց հերակլեսյան աղեղի, ուստի, քաղաքը նվաճելիս, աքեացիք նրան Տրոյա բերեցին:
- ՓԻԼՈՄԵՆՏԱՆ— Լեսբոս կղզու թագավորը, որն ստիպում էր Լեսբոս այցելողներին բռնակրպի դուրս գալ իր գեմ և բոլորին սպանում էր մեհամարտի մեջ:
- ՓՅՈՒՆԻԿԻԱ— Հին երկիր՝ Միջերկրական ծովի արևելյան ափին լին:
- ՓՈՐԿԻԱ— Ծովային աստված:
- ՓՐՈՆԻՈՍ— Իթակեցի, Նեմեոնի հայրը:

Ք

- ՔԱՐԻՔՊԻԱ— Ծովային մի հրեշ, որը կլանում և զգալում էր ծովի հոսանքը: Քարիք-դիսը և Սկիլլան արտասի աղբյուր էին ծովագնացության համար:
- ՔԱՐԻՄՆԵՐ— Խնդության, գեղեցկության, հրապույթի և քնքշանքի դիցունիները:
- ՔԻՈՍ— Մի կղզի՝ Էգեյան ծովում:
- ՔԼՈՐԻԱ— Նեստորի մայրը, Նեկեսի կինը, Ամփիոնի դուստրը:

Օ

- ՕԳԻԳԻԵ— Մի կղզի, որտեղ ապրում էր Կալիստո դիցունին:
- ՕԳՍ— Պիսեոնի որդին, Եվրիկիայի հայրը:
- ՕՍՍԱ— Մի լեռ՝ հյուսիսային Թեսալիայում:
- ՕՏՈՍ— Էվրիստեսի եղբայրը, նրանք հայտնի էին իրենց գերբնական զորությամբ և ձեզտում էին երկինք հասնել: Նրանց սպանեց Ապոլլոնը:
- ՕՐԵՍՏԵՍ— Ագամեմնոնի և Կլիտեմնեստրայի որդին:
- ՕՐԻՈՆ— Առասպելական հսկա մի որսորդ, Արշալույս (Էոս) դիցունու սիրելիանը, որին սպանեց Արտեմիսը: Նույնիսկ մեղալների աշխարհում Օրիոնը շարունակում էր որսորդությունը: Կա Օրիոն համաստեղությունը:
- ՕՐՄԵՆՅԱՆ— Այլ կերպ՝ Կոեսիոս, Եվմենոս խոզարածի հայրը:
- ՕՐՏԻԳԻԱ— Կղզի, որտեղ տարածված էր Արտեմիս աստվածուհու պաշտամունքը:
- ՕՐՔՈՄԵՆՈՍ— Բեոտական քաղաք:

Բովանդակություն

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ	
Աստվածների ժողովը. Աթենասը բաջալերում է Տելեմարտին	5
ԵՐԳ ԵՐԿՐՈՐԳ	
Իթակեցոց համաժողովը. Տելեմարտի ուղևորումը	19
ԵՐԳ ԵՐՐՈՐԳ	
Պիլոսում	82
ԵՐԳ ՉՈՐՐՈՐԳ	
Լակեդեմոնում	47
ԵՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԳ	
Ողիստի լատոսնավակը	72
ԵՐԳ ՎԵՅԵՐՈՐԳ	
Ողիստը գալիս է փեակների մոտ	88
ԵՐԳ ՅՈԹԵՐՈՐԳ	
Ողիստը գալիս է Ալկինոսի տուն	99
ԵՐԳ ՈՒԹԵՐՈՐԳ	
Ողիստը ներկայանում է փեակներին	110
ԵՐԳ ԻՆՆԵՐՈՐԳ	
Ողիստի պատմությունը. Կիկլոսական	128
ԵՐԳ ՏԱՍՆԵՐՈՐԳ	
Էդոսի, Լևոսթիզոնների և Կիրկեի մասին	146
ԵՐԳ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԳ	
Մահվան աշխարհ	164
ԵՐԳ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԳ	
Մովալիցները, Ակիլան ու Քարիբդիսը. Արևի եզները	184
ԵՐԳ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԳ	
Ողիստը փեակների ուղեկցությամբ ժամանում է Իթակե	199
ԵՐԳ ՏԱՍՆՉՈՐՄԵՐՈՐԳ	
Ողիստը Մոսսի մոտ	213
ԵՐԳ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԳ	
Ողիստի որդին Լակեդեմոնից վերադառնում է Իթակե	229
ԵՐԳ ՏԱՍՆՎԵՅԵՐՈՐԳ	
Տելեմարտը ճանաչում է իր հորը	246
ԵՐԳ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԳ	
Տելեմարտը վերադառնում է Իթակե	262
ԵՐԳ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԳ	
Ողիստի և Իրոսի բռնցքամարտը	282
ԵՐԳ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԳ	
Ողիստի և Պենելոպեի տեսակցությունը. ոտնավա	296
ԵՐԳ ՔԱՆՆԵՐՈՐԳ	
Նախշան կոտորածը սելեխների. Չեսը բաջալերում է Ողիստին	316

ԵՐԳ ՔԱՆՄԵԿԵՐՈՐԳ	
Աղեղային առաջարկ	329
ԵՐԳ ՔԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԳ	
Սելեխների կոտորածը	343
ԵՐԳ ՔԱՆԵՐԵՔԵՐՈՐԳ	
Պենելոպեն ճանաչում է Ողիստին	360
ԵՐԳ ՔԱՆՉՈՐՄԵՐՈՐԳ	
Հաշտություն	372
Մանրագրություններ	390
Բառարան դիցաբանական և աշխարհագրական անունների	403

Հոմերոս

ՈՂԻՍԱԿԱՆ

Հրատարակության պատրաստեց՝ Ռ. Հ. Գրիգորյանը

Հրատարակչության խմբագիր՝ Գ. Գ. Բրուտյան
Գեղարվեստական խմբագիր՝ Ն. Ա. Թովմասյան
Տեխնիկական խմբագիր՝ Հ. Ս. Ալվրջյան
«Էքստրուզոդ սրբագրիչներ»՝ Ս. Վ. Ղազարյան
Ս. Վ. Ավետիսյան

ԻԲ 763

Հանձնված է շտրվածքի 10. 06. 1988 թ.: Ստորագրված է տպագրության 19. 09. 1988 թ.:
Չափեր՝ 70×90¹/₁₆: Թուղթ № 2: Տառատեսակը՝ «Նորք»: Տպագրության եղանակը՝ «Բարձր»:
Հրատարակչական 19,6 մամուլ: Տպագրական 26,0 մամուլ=30,4 պայմանական մամուլի:
Տպարանակ 30 000: Պատվեր 981: Գինը՝ 1 ռ. 90 կ.:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մուսիսյան փ. № 1:
Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна, № 1.

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Արուսիյան փ. № 52:
Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна, № 52.